

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

**ՄԵՐ ՏԻՐՈՋ ԵՒ ՓՐԿԻԶԻՆ՝
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՌԱԿՆԵՐՈՒՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ
(Ա. ՀԱՏՈՐ)**

«Այս գործը Աստուծոյ օգնութեամբ կատարուեցաւ»
(Նէեմեայ 6.16):

Պէյրուք
2009

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Նոր Կտակարանի ամենէն շատ բացատրութեան կարօտ բաժինները՝ առակներն են, ահա թէ ինչո՛ւ ձեռնարկեցի անոնց մեկնութեան աշխատանքին: Մեկնութիւնը կարելի եղածին չափ պարզ ու յստակ է, եւ ուստի՝ բոլորին մատչելի:

Կարելոր է գիտնալ առակներուն մեկնութիւնը, որովհետեւ անոնց միջոցաւ, Տէրը կը բացայայտէ մեզի արքայութեան սքանչելիքները, եւ կը յայտնէ՝ մեր երկնաւոր Հօր ունեցած անպատմելի սէրը մեզի հանդէպ, որ գեղեցկօրէն կ'արտացոլայ Անառակ Որդիին, Բարի Սամարացիին, Կորսուած Ոչխարին եւ Կորսուած Դրամին առակներուն ընդմէջէն:

Տակաւին, առակները մեզի կու տան երկար դարերէ ի վեր մարդկային միտքը չարչրկող հարցումներու պատասխանները: Ի՞նչ կը պատահի մարդուն իր մահէն ետք: Ո՞ւր կ'երթայ անոր հոգին: Որո՞նք կու գան հաւատացեալին հոգին դիմաւորելու, եւ որո՞նք՝ անհաւատին հոգին: Ո՞ւր պիտի ըլլայ Աստուծոյ արքայութիւնը: Տարբեր-տարբեր վարձատրութիւններ կը սպասեն մեզի: Այս եւ նման հարցումներու պատասխաններէն ոմանք պիտի գտնէք այս հատորին մէջ, եւ ոմանք ալ՝ Տիրոջ կամքով հետագային հրատարակուելիք երկրորդ հատորին մէջ:

Արտի պարտք կը զգամ շնորհակալութեան յատուկ խօսք յայտնել Միաբան Եղբօրս եւ Աստուծոյ զաւակ՝ Պարթեւ Վրդ. Կիւլիմեանին, որ Յիսուսի հանդէպ իր ունեցած սիրոյն իբրեւ արտայայտութիւն, ծնունդ տուաւ աւետարանչութեան նամբով երկրի վրայ Քրիստոսի թագաւորութեան հաստատման հաւատացողներու խմբակի մը, որ նիւթապէս զօրավիգ կանգնեցաւ այս գիրքի հրատարակութեան:

Շնորհակալութեան ու երախտագիտութեան մասնաւոր խօսք հաւատարիմ օգնականիս ու գործակիցիս՝ Մարալ Կրակեանին, որ սիրալոյսով կերպով եւ իրեն յատուկ բժախնդրութեամբ կատարեց գիրքիս վերատեսութեան աշխատանքը:

Արտի ինոր շնորհակալութիւն բոլոր գիրքերուս, ինչպէս նաեւ այս գիրքիս էջադրումի աշխատանքը կատարող աջակիցիս՝ ազնուափայլ Օր. Նուէր Շիրանեանին, որ սիրով ու կամովին կատարեց այս աստուածահանոյ գործը որ պարզ գործ մը չէ, այլ՝ առաքելութիւն:

Մեր Տիրոջ խօսած 39 առակներէն միայն 17-ին բացատրութիւնը կը գտնէք այս հատորին մէջ: Ձեր աղօթքով զօրավիգ եղէք ինծի, որպէսզի կարենամ Տիրոջ շնորհով մնացեալ 22 առակներուն պատրաստութեան աշխատանքը իր աւարտին հասցնել:

Վ.Վ.

ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՒՆ ԱՌԱԿԸ

«Մարդ մը երկու գաւակ ուներ: Կրտսերը Հօրը ըսաւ.– "Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի": Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք, կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով՝ մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներէն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ.– "Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն անելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ": Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.– "Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս քու գործաւորներէդ մէկը նկատէ": Ապա ելաւ եւ հօրը քով գնաց:

Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ.– "Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու": Հայրը իր ծառաներուն հրամայեց.– "Անմիջապէս բերէք լաւագոյն պատմունանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ": Եւ սկսան խրախֆանքի:

Մինչ այդ, երէց գաւակը ագարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՛նչ կայ: Ծառան ըսաւ իրեն.– "Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց": Երէց եղբայրը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ: Իսկ անիկա պատասխանեց.– "Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ եկաւ այդ որդիդ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը

մորթեցիր անոր համար": Հայրը ըսաւ.– "Տղա՛ս, դուն միշտ ինձի հետ ես եւ ամբողջ ունեցածս բուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ"» (Ղկ 15.11–32):

«Մարդ մը երկու գաւակ ունէր» (Ղկ 15.11): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Մարդ մը»: Հոս յիշուած «մարդ»ը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը: Արդ, ինչո՞ւ Քրիստոս մեր երկնաւոր Հօր համար կը գործածէ «մարդ» բացատրութիւնը կամ բնորոշումը, փոխանակ ուրիշ բնորոշում մը գործածելու: Օրինակ, կրնար ըսել. «Թագաւոր մը երկու գաւակ ունէր», կամ՝ «Իշխան մը երկու գաւակ ունէր», կամ՝ «Մեծահարուստ մը երկու գաւակ ունէր», կամ՝ «Հայր մը երկու գաւակ ունէր»: Նման բնորոշումներ չգործածեց, այլ պարզապէս ըսաւ. «Մարդ մը»: Ինչո՞ւ: Տոյց տալու համար քանի մը բան.–

ա.– Տոյց տալու համար որ մեր երկնաւոր Հօր աստուածութիւնը երբեք պատճառ մը չէ որ հեռու ըլլայ մեզմէ՝ մարդոցմէս:

բ.– Տոյց տալու համար որ Հայրն Աստուած մօտիկ է մարդոց, ան կը հասկնայ զանոնք, քաջատեղեակ է անոնց ամենօրեայ կեանքին:

գ.– Տոյց տալու համար որ Աստուած մաս կը կազմէ մարդկային ցեղին, եւ ուստի՝ անոնցմէ անկախ ապրող Աստուած մը չէ:

դ.– Եթէ երբեք Յիսուս մեր երկնաւոր Հօր համար կը գործածէ «մարդ» բացատրութիւնը, կը գործածէ ո՛չ թէ որպէսզի անոր խոնարհութիւնը ցոյց տայ, այլ՝ որպէսզի յիշեցնէ մարդոց թէ Աստուած բացակայ չէ իրենց կեանքէն, թէ ի՛նքն է իրենց ստեղծիչը, թէ ի՛նքն է մարդոց Աստուածը, եւ թէ՛ մարդիկ պարտաւորութիւն ունին իր նկատմամբ:

ե.– Աստուծոյ Որդիին մարմնացումն ու մարդեղացումը նոյն նշմարտութիւնը չէ՞ որ կը պարզէ: Քրիստոս մարդեղացաւ որպէսզի ցոյց տայ մեզի որ Աստուած մարդկային ցեղին կողմէն եղած է միշտ եւ պիտի շարունակէ մնալ: Քրիստոս, որով ստեղծուեցաւ ամէն ինչ (Յհ 1.4, 10), մարդեղացաւ՝ որպէսզի փրկէր մարդկութիւնն ու ստեղծագործութիւնը: Խորքին մէջ, Քրիստոսի մարդեղացումը ապացոյց մըն է որ մարդը արժէք է Աստուծոյ համար:

զ.– Երբ Աստուծոյ Որդին կը մարդեղանայ եւ երբ մեր երկնաւոր Հայրը «մա՛րդ» կը կոչուի՝ ատով, մարդկութեան պատի՛ւն է որ կը բարձրանայ, մարդկութի՛ւնն է որ կը փառաւորուի եւ կը մեծարուի: Ինչպէս երբ թագաւոր մը այցելէ պարզ մարդու մը, զայն բարձրացու-

ցած եւ պատիւի արժանացուցած կ'ըլլայ, այնպէս ալ երբ Աստուած «մա'րդ» կը կոչուի եւ երբ Աստուծոյ Որդին մա'րդ կ'ըլլայ եւ մեր միջեւ կը բնակի (Յհ 1.14), մեր՝ մարդկութեանս, փա՛ռքն ու պատի՛ւն է որ կը վերականգնի:

2.- «Երկու»: Այս բառը երկու բան կը պարզէ.-

ա.- Կը պարզէ որ սկիզբէն մարդկութեան մէջ երկու դասակարգեր կամ խումբեր կային: Մէկ խումբը՝ Աստուծոյ հնազանդող խումբն էր, իսկ միւս խումբը՝ Աստուծոյ անհնազանդ:

բ.- Կը պարզէ որ հետագային՝ դատաստանի օրը, աշխարհի համայն մարդկութիւնը երկու մասի պիտի բաժնուի: Վերջին դատաստանին մասին խօսած ատեն, Յիսուս դարձեալ մարդիկը երկու խումբի կը բաժնէ, «աջակողմեան ոչխարներ» եւ «ձախակողմեան այծեր» անունին տակ (Մտ 25.33):

3.- «Զաւակ»: Հետաքրքրական չէ՞ որ Քրիստոս «զաւակ» կոչոււմը կու տայ երկու անձերու, որոնցմէ մին հօրմէն իրեն ինկած բաժինը առնելով կը հեռանայ անկէ, իսկ միւսը՝ թէեւ հօրը հետ նոյն տանը մէջ ապրող, բայց այլամերժ եւ ստրուկ մարդու հոգեբանութեամբ յատկանշուած: Թէպէտ երկու եղբայրներէն եւ ոչ մէկը արժանի էր «զաւակ» կոչուելու, բայց Քրիստոս մղուած իր սիրագեղ բնութենէն զանոնք «զաւակ» կոչեց: Ի՞նչն է որ Քրիստոս այստեղ կը փորձէ ստրկեցնել մեզի մեր երկնաւոր Հօր մասին: Կը ստրկեցնէ այն, որ Աստուած մեզ իր զաւակները կը նկատէ, թէեւ մենք կրնանք Աստուծոյ զաւակներուն վայել կեանք մը չապրիլ, միշտ ինչպէս էր պարագան հոս յիշուած երկու որդիներուն:

4.- «Զաւակ»: Կրտսեր որդին կը ներկայացնէ հեթանոս աշխարհը, իսկ երէց որդին՝ ընդհանրապէս հրեաները, բայց մասնաւորապէս Փարիսեցիները: Ուստի, երբ «զաւակ» բառը կը գործածուի երկուքին ալ համար, կը գործածուի՝ ցոյց տալու համար որ Աստուծոյ սկզբնական ծրագիրը այն էր՝ որ բոլոր մարդիկ զաւակ ըլլային իրեն եւ ինք ըլլար բոլորին հայրը:

5.- «Ունէր»: Այո՛, «ունէր» եւ ո՛չ թէ «ունի»: Անցեալ եղանակով արձանագրուած այս բառը կը պարզէ որ սկիզբէն բոլոր մարդիկ Աստուծոյ զաւակներն էին, կամ աւելի միշտը՝ սկիզբէն Աստուած ինք բոլոր մարդիկը ունէր կամ կը ֆանջնար իբրեւ իր զաւակները, բայց մարդոց որոշ մէկ դասակարգը իրենք, իրենց ազատ կամքով հեռացան մշմարիտ Աստուծմէն, եւ ուստի՝ մշմարիտ աստուածաշտութենէն, եւ այս ձեւով խորթացան Աստուծմէ:

«Կրտսերը Հօրը ըսաւ.– "Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի"» (Ղկ 15.12): Քանի մը մատնանշումներ.–

1.– Առակը կը խօսի երկու եղբայրներու մասին: Տունէն հեռացողը՝ կրտսեր եղբայրն է: Կրտսերը կը ներկայացնէ հեթանոս աշխարհը, իսկ երէց եղբայրը՝ հրեաները, կամ Փարիսեցիները, ինչպէս Մեծն Կիրեղ կ'ըսէ: Ինչո՞ւ հեթանոսները կը կոչուին՝ կրտսեր, իսկ հրեաները՝ երէց: Հրեաներ կը կոչուին՝ երէց, որովհետեւ բոլոր ազգերէն առաջ իրե՛նք էր որ կանչուեցան հետեւելու Աստուծոյ, իսկ հեթանոսներ, հետագային՝ Քրիստոսի մարդեղացումէն ե՛տք էր միայն որ պիտի կանչուէին մշմարիտ հաւատքին: Կարծէ՛ք հրեաներէն ետք հաւատքի կանչուելուն համար է որ հեթանոսներ կրտսեր կոչուեցան, միշտ ինչպէս իր եղբայրէն ետք ծնած մանուկը կը կոչուի՝ կրտսեր:

2.– Հրեաներ մասն «երէց» կը կոչուին Աստուծոյ հետ ապրելու իրենց ունեցած խորունկ փորձառութեան համար, մինչդեռ հեթանոս աշխարհը «կրտսեր» կը կոչուի, անոր համար որ գրեթէ փորձառութիւնը չունի Աստուծոյ հետ ապրած ըլլալու: Գալով մեզի, մենք երէ՞ց ենք մեր հաւատքի կեանքին մէջ, թէ՛ կրտսեր: Այլ խօսքով, ունի՞նք Աստուծոյ հետ ապրած ըլլալու խորունկ փորձառութիւնը, թէ՛ միայն անունով քրիստոնեայ ենք (Բ.Կր 13.5):

3.– «Տո՛ւր»: Մարդ կը վտանգէ իր ամբողջ յաւիտենականութիւնը երբ դառնայ Աստուծոյ եւ ըսէ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի» (Ղկ 15.12): Ասիկա սիսլ աղաղակն էր անատակ որդիին:

«Բաժինս տո՛ւր ինծի»: Աստուծմէ անկախ ապրելու մեղաւոր մարդու մը փափա՛քն է այս:

«Բաժինս տո՛ւր ինծի»: Մէկ եւ միակ Գլուխին դէմ գլուխ ցցելու եւ ինքնագլխութիւն հռչակելու երա՛զն է այս:

«Բաժինս տո՛ւր ինծի»: Աստուծոյ բաժինը մեր ունեցած բաժինէն զատորոշելու յանդգնութիւնն է այս:

«Բաժինս տո՛ւր ինծի»: Երկնային իշխանութենէն ձերբազատելու տե՛նչ մըն է այս:

«Բաժինս տո՛ւր ինծի»: ԶԱստուած տալու պարտաւոր նկատող մեղաւոր մտածո՛ւմ մըն է այս:

«Բաժինս տո՛ւր ինծի»: Անկապելիին հետ մեր կապերը խզելու փո՛րձ մըն է այս:

«Տո՛ւր ինծի»: Երկնաւոր տիրութեան դէմ ապստամբելու հա՛րց է այս:

«Տո՛ւր ինծի»: Աշխարհասէր մարդու մը պահա՛նջքն է այս:

«Տո՛ւր ինձի»: Տրուածը սիրող բայց Տուիչէն փախչիլ ուզող մարդու մը բացականչութի՛ւնն է այս:

4.- «Հա՛յր»: Անառակ որդիին բերնին մէջ գտնուող այս բառը կը պարզէ որ ան իր սրտին ու հոգիին մէջ կը գիտակցէր թէ այն մարդը որմէ կ'ուզէր բաժնուիլ՝ պարզ մարդ մը չէր, այլ իր հայրն էր, իր սիրելի՛ ու գուրգուրացո՛ղ հայրը: Որքա՛ն յանախ մենք եւս, թէպէտ գիտենք որ Աստուած մեր հայրն է, կ'ընդունի՛նք եւ կը յայտարարե՛նք որ ան մեր հայրն է, բայց չենք քաշուիլ անառակ որդիին նման որոշումներ առնելու եւ մեր արարքներով ու ազատ կամքով հեռանալու անկէ:

5.- «Տո՛ւր ինձի»: Այս բառերը ցոյց կու տան որ կրտսեր գաւակը կը կարծէր թէ իր հօրը հետ ըլլալը ազատութեան կաշկանդում էր:

Անհամար է թիւր այն մարդոց որոնք Աստուծոյ ներկայութեան մէջ ապրիլը եւ զԱստուած իրենց կեանքներուն մէջ ընդունիլը կը նկատեն ազատութեան կաշկանդում: Անոնք կը նախընտրեն մեկնիլ «հեռու երկիրներ» քան մնալ Աստուծոյ մօտիկ: Անառակ որդիին նման մե՛նք ալ յանախ կը կարծենք որ մեր երկնաւոր Հօրմէն հեռանալով՝ մեր նշմարիտ ազատութիւնը եւ կեանքի իսկական ուրախութիւնը գտած պիտի ըլլանք: Նման մտածողութիւն ո՛չ միայն հակառակ է Աստուածաշունչ մատեանին ուսուցման, այլեւ՝ ողջմտութեան:

Քրիստոս չէ՞ ազատարարը մարդկային ցեղին: Ո՞վ Ազատարարին յանձնուելով ինքնիր ազատութիւնը կը կորսնցնէ: Ո՞վ աշխարհի Պաշտպանին ապաւինելով ինքզինք անպաշտպան եւ անապահով կը զգայ: Աստուծոյ հետ ապրիլը բանտի մէջ ապրիլ չի՛ նշանակեր: Աստուծոյ յանձնուող մարդը փորձութեանց չէ՛ որ կը յանձնուի: Աստուծոյ գիրկը նետուող մարդը դժբախտութեանց գիրկը չէ՛ որ կը նետուի: Անառակ որդին իր հօրմէն հեռանալէ ետք չէ՞ որ կը դժբախտացաւ: Հօրենական տունը լքելէ ետք չէ՞ որ խոզանոց ինկաւ:

6.- «Տո՛ւր ինձի»: Այս բառերը պէտք է յիշեցնեն մեզի որ Աստուած մարդուն ազատ կամք տուած է, այլապէս մարդը պիտի չկրնար Աստուծոյ ըսել՝ «Տո՛ւր ինձի»: Ազատ կամքը Աստուծոյ մեծագոյն պարգեւներէն է: Բայց սահաւասիկ որդին հօրը (Աստուծոյ) կողմէ իրեն պարգեւած ազատութեամբ՝ հօրը (Աստուծոյ) սի՛րտն էր որ կը խոցոտէր երբ անոր կ'ըսէր. «Տո՛ւր ինձի»:

Կրտսեր որդին, Աստուծոյ կողմէ իրեն տրուած ազատ կամքի պարգեւը կ'օգտագործէ նոյնիմէն Աստուծոյ դէմ, պահանջելով անկէ ստացածքի իր բաժինը: Քննե՛նք մեր անձերը, տեսնելու համար, թէ արդեօք մենք եւս Աստուծոյ կողմէ մեր առածները, մեր ստացած պարգեւները, շնորհքները, ձիրքերը, կարողութիւնները, առաւելութիւնները, յանախ

չե՞նք գործածել Աստուծոյ դէմ կամ Աստուծմէ անկախ: Երբ Աստուծմէ մեր առածը մեր անձերուն համար կը գործածենք՝ ասիկա Աստուծոյ տուածը Աստուծոյ դէմ գործածել չի՞ նշանակել, ասիկա Աստուծոյ երեսն ի վեր «Տո՛ւր ինձի» ըսել մը չէ՞:

7.- «Հա՛յր, բու ստացուածքէդ ինձի ինկած բաժինը հիմա՛ տուր ինձի»: Կրտսեր որդիին այս խօսքը ցոյց կու տայ որ ինք տունին մէջ որդիի ներկայութիւն էր եւ ո՛չ թէ ծառայի ներկայութիւն: Ծառայ մը չի կրնար իր տիրոջմէն պահանջել ստացուածքի բաժանում: Տունի մը ստացուածքը միայն տունին զաւակներուն միջեւ կրնայ բաժնուիլ: Ինչպէս կրտսեր որդին հօրը զաւակը ըլլալով՝ իրաւունք է իշխանութիւն ունէր ստացուածք պահանջելու անկէ, այնպէս ալ մենք, եթէ Աստուծոյ զաւակներն ենք՝ միայն այն ատեն կրնանք աղօթք մատուցել եւ որոշ բան խնդրել Տիրոջմէն: Աստուծոյ զաւակ չեղող մարդը՝ չի կրնար եւ իրաւունք չունի բան պահանջելու Աստուծմէ. իսկ եթէ պահանջէ եւ ստանայ իր խնդրանքը, թող գիտնայ որ Աստուած իրեն չէ որ պատասխանեց, այլ իրեն համար բարեխօսող սուրբերուն աղօթքին է որ պատասխանեց, եւ կամ պատասխանեց՝ որպէսզի առիթ տուած ըլլայ անոր որ դարձի գայ:

8.- Վերեւ ըսինք որ կրտսեր որդին կը ներկայացնէ հեթանոս աշխարհը: Կրտսեր որդիին, այլ խօսքով՝ հեթանոս աշխարհին «ստացուածք» կամ «բաժին» պահանջելը, ցոյց կու տայ որ սկզբնապէս բոլոր մարդիկ, բոլոր ազգեր, բոլոր ժողովուրդներ կոչուած էին Աստուծոյ զաւակները ըլլալու եւ վայելելու Աստուծոյ ներկայութիւնն ու բարիքները, բայց մանաւանդ վայելու անոր հայրութիւնը, եւ սակայն, մարդոց որոշ մէկ դասակարգը, իրենց ազատ կամքով, նախընտրեցին հեռանալ Աստուծմէ եւ անկէ անկախ ապրիլ, եւ այս ձեւով գոյութեան եկաւ կրտսեր որդին, այլ խօսքով՝ հեթանոս անհաւատ աշխարհը:

9.- «Բու ստացուածքէդ»: «Բու» բառը կը պարզէ որ ամէն ինչ եւ ամէն բան, ամէն կարողութիւն եւ ատակութիւն, ամէն պարգեւ ու շնորհք, ամէն ստացուածք եւ բարիք որ ունինք, Աստուծոյ կը պատկանի եւ Աստուծոյ կողմէ մեզի տրուած են անոնք:

«Եւ հայրը իր զաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը» (Ղկ 15.12): Քանի մը հաստատումներ.-

1.- Զարմանալի չէ՞ որ հայրը իր ունեցածը բաժնեց իր երկու որդիներուն միջեւ առանց նկատի ունենալու որ անոնցմէ մին անհոգի կերպով կը ծառայէր իրեն, իսկ միւսը՝ կը պատրաստուէր լքելու զինք: Հոս Քրիստոս կ'ուզէ սորվեցնել, թէ Աստուած կու տայ մեզի նիւթական հարստութիւն, զանազան կարողութիւններ եւ ձիրքեր, շնորհքներ եւ

պարգեւներ, թէպէտ մենք կրնանք արժանի չըլլալ այդ բոլորին, կամ կրնանք այդ բոլորը մեր անձնական հաճոյքներուն համար գործածել, ինչպէս ըրաւ կրտսեր որդին ինք:

2.- «Իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը»: Հայրը իր ունեցածը տուաւ թէ՛ իր հետ մնացող իր գաւկին եւ թէ՛ իրմէ հեռանալու պատրաստուող իր գաւկին: Ան չտուաւ միայն իր հետ մնացողին: Նոյնն է Աստուծոյ վերաբերմունքը մարդոց նկատմամբ: Աստուած կու տայ իրեն մօտիկ եւ իրմէ հեռու եղողներուն հաւասարապէս: Աստուած ֆիզիքական առողջութիւն կու տայ թէ՛ ամբարիշտին եւ թէ՛ բարեպաշտին: Նիւթական հարստութիւն կը պարգեւէ թէ՛ հաւատացեալին եւ թէ՛ անհաւատին: Յաջողութիւններ կը շնորհէ թէ՛ իր հարազատ գաւակներուն եւ թէ՛ իր խորթ «գաւակներուն»: Այս նշմարտութիւնն է որ Յիսուս բացայայտեց մեր երկնաւոր Հօրը մասին երբ ըսաւ. «Ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ» (Մտ 5.45):

Աստուծոյ տալը պայմանաւորուած չէ իրեն մատուցած մեր ծառայութիւններով: Աստուած յաճախ կու տայ ո՛չ թէ որովհետեւ մօտիկ եւ մտերիմ ենք իրեն, այլ որպէ՛սզի մօտենանք եւ մտերմանանք: Ինչպէս մայր մը ֆաղցրութիւն ցոյց կու տայ իր անհնազանդ եւ ըմբոստ գաւկին նկատմամբ որպէսզի զինք հնազանդութեան մղէ, այնպէս ալ Աստուած ֆաղցրութիւն, ներողամտութիւն եւ համբերատարութիւն կը ցուցաբերէ անզիջ մարդոց նկատմամբ որպէսզի զանոնք ապաշխարութեան բերէ (Հն 2.4):

3.- «Իր գաւակներուն»: Կարելոր իրողութիւն մը կայ որ մեր ուշադրութիւնը պէտք է գրաւէ: Քանի հաստատեցինք թէ երէց գաւակը կը ներկայացնէ հրեայ ժողովուրդը, իսկ կրտսեր գաւակը՝ հեթանոս աշխարհը, եւ քանի ըսինք թէ երէց գաւակին նման կրտսեր գաւակը ի՛նքն ալ որդի կը կոչուի, սա բացայայտ կը դարձնէ թէ ամբողջ մարդիկը (նախքան Քրիստոսի մարմնաւոր ծնունդը) կոչուած էին Աստուծոյ գաւակները ըլլալու. բայց եթէ երբեք Աստուած բոլոր ժողովուրդներէն ընտրեց հրեայ ժողովուրդը, զանոնք ընտրեց՝ անոնց հայրերուն ցուցաբերած հաւատքին համար: Միւս կողմէ, պէտք չէ մոռնալ որ Աստուած չէր որ մերժեց հեթանոս աշխարհը այլ հեթանոսները իրենք էին որ կամաւորապէս հեռացան նշմարիտ աստուածապաշտ ուղիէն: Ասոր ապացոյցը նոյնիման կրտսեր գաւակին բերնին մէջ գտնուող խօսքն է իր հօրը ուղղուած. «Ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի» (Ղկ 15.12): Այս խօսքը հեթանոս աշխարհին կամաւոր ու գիտակից բաժանումն էր Աստուծմէ: Նոյնը չէ՞ պարագան հրեայ ժողովուրդին:

Իրենք եւս գիտակցօրէն չմերժեցի՞նք Քրիստոսը: Եւ այդ ձեւով չէ՞ր որ Քրիստոսի հաւատքը դարձաւ սեփականութիւնը հեթանոս աշխարհին, այլ խօսքով՝ համայն մարդկութեան: Պօղոս առաքեալ ինքն իսկ կը հաստատէ թէ հրեաներուն «յանցանքը պատճառ եղաւ, որ Աստուած փրկութիւնը հեթանոսներուն դրկէ» (Հռ 11.11):

4.- «Իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը»: Հայրը իր ստացուածքը հաւասար կերպով բաժնեց իր երկու որդիներուն միջեւ: Յիշենք որ Հին Կտակարանին մէջ Աստուած կը յանձնարարէ երէց գաւկին տալ կրտսեր գաւկին կրկնապատիկը (Բ.Օր 21.17): Երէցին կրտսեր գաւկին կրկնապատիկը տալու Հին Կտակարանեան այս օրէնքը ջնջուեցաւ Քրիստոսով, եւ հրեայ ժողովուրդը դադրեցաւ Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը ըլլալէ: Չմոռնանք որ առակին մէջ յիշուած երէց գաւակը կը ներկայացնէ հրեայ ժողովուրդը, մասնաւորաբար Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, իսկ կրտսեր գաւակը՝ հեթանոս աշխարհը: Հետեւաբար, երէց եւ կրտսեր գաւակներուն հաւասար ստացուածք ստանալը պարզորոշ կերպով ցոյց կու տայ, որ Աստուած երբեք իստրութիւն չի դնէր մարդոց միջեւ անոնք ի՛նչ ցեղի ալ պատկանին, կը բաւէ որ անոնք Քրիստոսի հաւատքը ընդունին իրենց կեանքին մէջ:

5.- «Բաժնեց»: Այս բառին վերաբերեալ երեք նշումներ.-

ա.- Հայրը «բաժնեց», որովհետեւ չէր կրնար իր ունեցածը չբաժնել: Չէր կրնար չտալ կրտսեր որդիին ուզածը: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ ան չէր կրնար որդի իր մօտ պահել պարտադրաբար: Աստուած մարդուն ազատ կամք տուած է. եթէ մարդը ուզէ հեռանալ Աստուծմէ ըսելով՝ «Տո՛ւր ինձի», Աստուած պիտի տայ:

բ.- Աստուած երբեմն թոյլ կու տայ որ հեռանանք իրմէ, որպէսզի մեր անձնական փորձառութեամբ տեսնենք ու սորվինք թէ կեանքը առանց իրեն դատա՛րկ է, դա՛ոն է, անհա՛մ է, անապահո՛վ է, եւ ուստի, որոշում առնենք եւ ետ իրե՛ն դառնանք:

գ.- «Բաժնեց» խօսքը նաեւ կը յիշեցնէ մեզի որ Աստուած ինքն է բաշխիչն ու տուիչը ամէն բանի, ամէն պարգեւի, ամէն ձրիքի, ամէն կարողութեան: Այո՛, ի՛նքն է որ կը բաժնէ եւ ո՛չ թէ մենք է որ կը շահինք: Ի՛նքն է որ կը բաշխէ եւ ո՛չ թէ մենք է որ ձեռք կը ձգենք մեր սեփական աշխատանքով կամ ցարպիկութեամբ:

6.- «Իր ունեցածը»: Ուշագրաւ է որ հայրը իր ունեցածին որոշ մէկ մասը միայն չէ որ բաժնեց իր երկու որդիներուն միջեւ, այլ ամբողջ «իր ունեցածը»: Հոսկէ կը սորվինք, թէ մեր երկնաւոր Հայրը ժլատաբար չի՛ տար մեզի, այլ՝ առատօրէն: Ան չի տար իր աւելորդէն, ո՛չ ալ կու տայ իր

ունեցածին մէկ մասը միայն: Ան կու տայ իր ամբողջ ունեցածը, որովհետեւ ամբողջական սէր ունի մեզի հանդէպ: Սիրելի՛ս, կ'անդրադառնա՞ս թէ ի՞նչ կը նշանակէ որ Աստուծոյ ամբողջ ունեցածը քեզի՛ տրուած է եւ քեզի՛ն է: Քո՛ւկդ է իր անմահութիւնն ու յաւիտենականութիւնը: Քո՛ւկդ է իր փառքն ու շքեղութիւնը: Քո՛ւկդ է իր երջանկութիւնն ու ուրախութիւնը: Եւ քո՛ւկդ է նաեւ ի՛նք:

«Քանի մը օր ետք, կրտսեր զաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց» (Ղկ 15.13): Քանի մը հաստատումներ.–

1.– «Քանի մը օր ետք»: Կեդրոնացնենք մեր ուշադրութիւնը այս բառերուն վրայ: Ի՞նչ ցոյց կու տան անոնք: Երկու բան ցոյց կու տան.–

ա.– Նախ ցոյց կու տան որ կրտսեր որդին ստացուածքը առնելուն պէս տունէն չհեռացաւ, այլ «քանի մը օր ետք» հեռացաւ: Ան ժամանակ տրամադրեց եւ մտածեց իր առնելիք ֆայլին մասին: Հոսկէ կը սորվինք, թէ երբ նակատագրական որոշում մը պիտի առնենք, չաճապարենք մեր առած որոշումը գործադրելու, այլ մենք մեզի տանք «քանի մը օր» ժամանակ, եւ նստինք լաւ մտածենք: Անապարանքով առնուած որոշումներուն ու ֆայլերուն մէջ՝ Սատանան իր մա՛տը կը մտցնէ:

բ.– «Քանի մը օր ետք» բառերը նաեւ կը պարզեն որ հայրը իր որդիին մտածելու առիթ ու ժամանակ տուաւ: Սա ի՞նչ կը սորվեցնէ մեզի մեր երկնաւոր Հօր գործելակերպին մասին: Կը սորվեցնէ թէ երբ մարդ արարածը որոշէ հեռանալ Աստուծմէ, Աստուած ժամանակ կը յատկացնէ եւ առիթ կը ստեղծէ զինք համոզելու որ ետ դառնայ իր որոշումէն:

Սիրելի՛ ընթերցող, քեզ կը հրաւիրեմ որ ֆննդութենէ անցնես կեանքդ: Քանի՞ անգամ պատահած է որ կրտսեր զաւակին նման սխալ ծրագիրներ մշակած եւ աննիշդ որոշումներ առած ըլլաս: Քանի՞ անգամ ուզած եւ փորձած ես լքել զԱստուած եւ ինքնագլուխ ապրիլ: Քանի՞ անգամ լսած ես Աստուծոյ Հոգիին հծծիւնները սրտիդ մէջ որ քեզի ըսած է. «Զաւա՛կս, մի՛ անապարեք ինձմէ հեռանալու: Մտածէ քանի մը օր եւ յետո՛յ միայն որոշում առ: Մտածէ այն սիրոյն եւ գուրգուրանքին մասին որ ցուցաբերեցի քեզի հանդէպ: Մտաբերէ մեր հայր եւ որդիի սիրագեղ յարաբերութիւնն ու մտերմութիւնը: Արագ որոշումներ մի՛ առներ: Արագ որոշումներ առնելու ֆայլը ինձմէ չէ որ կը թելադրուի: Արագ որոշումներ առնելը Սատանային հրահրումով է որ տեղի կ'ունենայ: Ինձմէ հեռանալու եւ ինքնանկախօրէն ապրելու փափաքները Զարը ի՛նքն է որ կը դնէ սրտիդ մէջ»:

Որքան յաճախ մարդ արարածը սխալ որոշումներ կ'առնէ, եւ սակայն, Աստուած թոյլ չի տար անոր իր առած որոշումները ի գործ

դնել: Ասիկա մարդուն ազատութիւնը խանգարել չի նշանակեր եւ ո՛չ ալ անոր կամքը կաշկանդել կը նշանակէ: Աստուած շատ լաւ գիտէ որ յաճախ մարդուն ուշադրութենէն կը վրիպին իր առած սխալ որոշումներուն դժբախտ հետեւանքները, ահա թէ ինչո՛ւ ան երբեմն կը խափանէ անոր կործանարար որոշումներն ու ծրագիրները: Այո՛, «երբեմն» եւ ո՛չ թէ միշտ: Աստուած երբեմն թոյլ կու տայ որ մարդը իր անձնական փորձառութեամբ սորվի թէ իրմէ հեռանալը թշուառութեան է որ կ'առաջնորդէ, ինչպէս էր պարագան կրտսեր գաւկիին: Ան երբեմն կ'արտօնէ որ որոշ ժամանակի մը համար հեռանալի իրմէ, յետոյ առ յաւէտ մեզ իրեն մօտեցնելու եւ կապելու համար: Այս չէ՞ որ ցոյց կու տայ կրտսեր գաւկիին իր հօրենական տունէն ժամանակաւորապէս հեռանալն ու ետ դարձնելու առ յաւէտ:

2.- «Կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց»: Կրտսեր գաւակը իր հարստութեան մէկ մասը միայն չէ որ առաւ եւ հեռու երկիր մը գնաց, այլ «իւր ամբողջ հարստութիւնը»: Ի՞նչ կը սորվինք հոսկէ: Կը սորվինք այն՝ թէ ով որ կ'որոշէ հեռանալ Աստուծմէ, իր ամբողջ հարստութեամբ, այլ խօսքով՝ իր ամբողջ էութեամբ է որ հեռացած կ'ըլլայ:

3.- Նաեւ, ամբողջ հարստութիւնը կ'առնէ ու կը մեկնի, կարծէք ալ երբեք կապ չունենալու համար իր հօրը հետ, ձեռով մը անյիշատակ մնալու համար: Այլ բացատրութեամբ, ամբողջ հարստութիւնը առնել ու մեկնիլը՝ կը պատկերացնէ սրտի ամբողջական հեռացումը իր հօրմէն: Հետեւաբար, ամբողջ հարստութիւնը առնել ու մեկնիլը՝ կը պարզէ այն կապի ամբողջական խզումը որ յառաջ կու գայ մարդուն եւ Աստուծոյ միջեւ երբ մարդը Աստուծմէ հեռանալու քայլը կ'առնէ:

4.- Ի՞նչ պէտք է հասկնալ «հեռու երկիր» ըսելով: Աստուծմէ հեռու եղող ոեւէ մարդ հեռու «երկիրներու» մէջ թափառող անառակ գաւակ մը կը նկատուի: Հոն ուր Աստուած մոռցուած է՝ հո՛ն է «հեռու երկիրը»: Հոն ուր Աստուած անտեսուած է՝ հո՛ն է «հեռու երկիրը»: Հոն ուր Աստուած չի՛ պաշտուիր, չի՛ սիրուիր, չ'երկրպագուիր, չի՛ փնտռուիր, չի՛ մեծարուիր, հոն «հեռու երկիր» է: Հոն ուր մեղք գործելը հաճոյք կ'առթէ, ուր մեղքը կը սիրուի, ուր մեղքի կեանքը կը փնտռուի, հոն «երկիրը» շա՛տ, շա՛տ հեռու է:

Սիրելի՛ բարեկամ, դուն ո՞ր կը գտնուիս. Աստուծմէ հեռո՞ւ, թէ՛ Աստուծոյ մօտիկ: Ի՞նչ բանի մէջ կը փնտռես երջանկութիւնդ: «Հեռու երկիր»ներու մէ՞ջ, ինչպէս ըրաւ կրտսեր գաւակը: Այդ «հեռու երկիր»ը անապաշխարութեան երկիրն է, անհաւատութեան երկիրն է, անբարոյութեան երկիրն է, ագահութեան երկիրն է: Չես կրնար երջանկութիւն եւ

ուրախութիւն գտնել ապրուած անապաշխար, անհաւատ, անբարոյ եւ դրամասէր կեանքի մը մէջ:

5.- «Հեռու երկիր մը գնաց»: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Անտոակ որդին տեղով չէ որ հեռացաւ իր հորմէն, այլ՝ սրտով»: Այս իմաստով, սիրտ մը որ չի բաբախէր Յիսուսի սիրով՝ այդ սիրտը հեռու երկրի մէջ կը գտնուի: Հոգի մը որ չի ցանկար երկինքը, հոգի մը որ իր հայեացքը չ'ուղղեր դէպի երկինք եւ դէպի երկնայինը՝ այդ հոգին հեռու երկրի մէջ ապրող հոգի մըն է: Միտք մը որ չի՝ խորհրդածեր ու չի՝ մտածեր Յաւիտենականին ու յաւիտենականութեան մասին՝ այդ միտքը հեռու երկիրներու մէջ թափառող միտք մըն է: Կեանք մը որ լեցուն չէ Սուրբ Հոգիով եւ Քրիստոսի ուրախութեամբ՝ այդ կեանքը հեռու երկրի մէջ ապրող կեանք մըն է:

6.- Երկու որդիներուն ալ աչքը դուրսն էր: Երկուքն ալ իրենց ուրախութիւնը դուրս կը փնտռէին՝ իրենց բարեկամներուն հետ: Կրտսերը հորմէն պահանջեց իրեն ինկած բաժինը եւ գայն առնելով հեռու երկիր մը գնաց, իսկ երէցը հորը ըսաւ. «Նոյնիսկ ուլ մը չտուիր ինձի, որ ուրախանայի բարեկամներուս հետ» (Ղկ 15.29): «Բարեկամներուս հետ» բառերը կը պարզեն որ երէց որդին թէպէտ հորը հետ տունին մէջ էր, բայց իր ուրախութեան առարկան ո՛չ հայրն էր եւ ո՛չ ալ հորենական տունը, այլ՝ արտաքին աշխարհը, դուրսը ապրող «բարեկամները»:

7.- Ինչո՞ւ կրտսեր որդին հեռացաւ իր հորմէն: Հեռացաւ՝ որովհետեւ կը կարծէր որ իսկական երջանկութիւնը, իսկական ազատութիւնը եւ ուրախութիւնը կը գտնուէր իր հորենական տունէն դուրս՝ հեռու երկիրներու մէջ, աշխարհի ազարակներուն մէջ: Այլ խօսքով, կրտսեր որդին փնտոտուի մէջ էր, կ'ուզէր գտնել նշմարիտ երջանկութեան նամբան: Հայրը հակառակ չկեցաւ իրեն: Չմերժեց իր խնդրանքը եւ չճննադատեց գայն: Տուաւ իր պահանջածը եւ թոյլ տուաւ որ մեկնի եւ իր անձնական փորձառութեամբ տեսնէ ու սորվի թէ իսկական երջանկութիւնը իր տունէն ու իրմէ հեռու չի գտնուիր: Ի՞նչ է հոգեւոր դասը այս կէտին: Հոս կը գտնենք հոգեւոր երկու դաս. –

ա. – Հոգեւոր առաջին դասը մեզի ուղղուած պատգամ մըն է, եւ այն է՝ որ պէտք չէ ֆննադատենք երբ տեսնենք որ մարդիկ փնտոտուի մէջ են, երբ տեսնենք որ անոնք նիգ կը թափեն գտնելու երջանկութեան նամբան: Թէպէտ մարդիկ իրենց յատուկ կերպերով փնտոտն նշմարտութիւնը, մենք սակայն պէտք չէ ֆննադատենք զանոնք, պէտք է յարգենք զանոնք, եւ մանաւանդ, պէտք է յարգենք ու գնահատենք փնտոտուի անոնց նիգը, բայց ի հարկին, քաղցրութեամբ ցոյց տանք իրենց նիշդ նամբան:

բ.– Իսկ երկրորդ դասը գոր կը սորվինք այն է՝ որ Աստուած երբեմն թոյլ կու տայ որ հեռանանք իրմէ եւ ընտրենք տարբեր քամքներ, նոյնիսկ իրեն հանելի չեղող քամքներ, որպէսզի փորձառաքար սորվինք թէ ո՛րն է նշմարտութեան քամքն, Յիսուսի քամքն: Աստուած գիտէ թէ փորձառաքար սորվեցուած բան մը՝ հաստատուն ու վստահելի կ'ըլլայ: Ան նաեւ գիտէ որ երբ փորձառաքար գիտնանք ու համոտեսնենք նշմարտութիւնը՝ կը դառնանք քաջ վկաները այդ նշմարտութեան, ահա թէ ինչո՛ւ երբեմն թոյլ կու տայ որ իր կամեցած քամքներէն տարբեր քամքներ ընտրենք, որպէսզի փորձառաքար գտնելէ ետք նշմարտութիւնը՝ ամբօրէն կառչինք անոր: Բոլորս ալ գիտենք որ փորձառու մարդուն խօսքը աւելի օգտակար ու շինիչ է քան ուսեալ մարդուն խօսքը: Ուստի, Աստուծոյ յատուկ մէկ գործելակերպն է թոյլ տալ որ շատ բան փորձառաքար սորվինք, որպէսզի կարենանք օգտակար ու շինիչ ներկայութիւն դառնալ մարդոց կեանքին մէջ:

«Հոն անառակ կեանք մը ապրելով՝ մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը» (Ղկ 15.13-14):

Ի՞նչ էր այդ հարստութիւնը կամ ունեցուածքը որ անառակ որդին մսխեց եւ պատմութեան բոլոր անառակ որդիները յաճախ կը մսխեն երբ կը հեռանան Աստուծմէ.–

1.– Այդ հարստութիւնը Աստուծոյ ներկայութեան մէջ գտնուող ուրախութիւնն է, Աստուծոյ քաղցր ներկայութեամբ համակուիլն է:

2.– Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած շնորհքներն ու պարգեւներն են, կարողութիւններն ու ձիրքերն են:

3.– Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մարդուն հոգիին մէջ դրուած հաւատքն է, մարդուն սրտին մէջ դրուած սէրն է, մարդուն էութեան մէջ դրուած յոյսն է:

4.– Այդ հարստութիւնը աստուածատուր առաքիւնութիւններն են, որոնցմէ մարդ կը մերկանայ երբ հեռանայ Աստուծմէ:

5.– Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մեր մէջ դրուած բարի կամեցողութիւններն են, օրինակ, մեր նմանը սիրելու կարողութիւնն է, աղօթքի կանգնելու փափաքն է, չճաւորին օգնելու եռանդն է, տկարին զօրակցելու ցանկութիւնն է, թշուառին կարեկցելու պատրաստակամութիւնն է, եւ այլն:

6.– Այդ հարստութիւնը մեր անկեղծ ընկերներն ու բարեկամներն են, մեր մտերիմներն ու հարազատներն են, մեր հաւատարիմ գործակիցներն ու դրացիներն են:

7.- Այդ հարստութիւնը յաւիտեանական փրկութիւնն ու կեանքն է, Աստուծոյ կողմէ շնորհուած ապահովութեան եւ խաղաղութեան զգացումն է, հոգեկան հանգիստն ու մտքի անդորրութիւնն է:

8.- Այդ հարստութիւնը հոգեւորապէս անելու համար ընծայուած առիթներն են, շնորհուած գորութիւնն է, տրուած ժամանակն է:

9.- Այդ հարստութիւնը Աստուծոյ ընկերակցութիւնն է, անոր շնորհած պաշտպանութիւնն ու առաջնորդութիւնն է:

10.- Վերջապէս, այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մեզի եղած բարեբարութիւններն ու ողորմութիւններն են, հանգստաւէտ պայմաններն ու կացութիւններն են, մեր կեանքը լեցնող գեղեցիկ երեւոյթներն ու ընծայուած դիւրութիւններն են:

Մարդ կը կորսնցնէ այս բոլորը՝ եթէ հեռանայ Աստուծմէ: Իսկ երբ կորսնցնէ այս բոլորը՝ սովը վրայ պիտի հասնի: Ահա թէ ինչո՛ւ մեզի կ'ըսուի, թէ երբ անտակ որդին մսիսց իր ամբողջ հարստութիւնը «այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղֆատանալ» (Ղկ 15.14):

«Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղֆատանալ» (Ղկ 15.14): Քանի մը հաստատումներ.–

1.- Ի՞նչ սովի մասին է խօսքը: Այն սովը որմէ տառապեցաւ կրտսեր որդին՝ Աստուծոյ ներկայութեան սովն էր, հաւատքի սովն էր, յոյսի սովն էր, բարեգործութեան սովն էր, առաքինութեանց սովն էր: Ի՞նչ է պատգամը այս կէտին: Երբ մարդ հեռանայ Աստուծմէ որ լիութիւնն է ամէն բանի՝ կը դատարկուի ամէն բարի բանէ: Երբ մարդ հեռանայ իր հաւատքի հիմնադիրէն՝ Քրիստոսէ, հաւատքի սով կը սկսի ապրիլ: Երբ մարդ հեռանայ կեանքի Հացէն՝ հոգեւորապէս կ'անօթեանայ: Երբ Աստուած դադրի մեր վրայ տիրելէ՝ սրտի ու հոգիի սովն է որ մեր տիրակալը կը դառնայ: Սովը հետեւաբար, Կեանքի Հացէն եւ Կենաց Գետէն հեռանալն է: Ինչպէս կրտսեր գաւակը իր հօրմէն հեռանալով սովի հանդիպեցաւ, այնպէս ալ երբ մարդ արարածը հեռանայ Աստուծմէ հոգեւոր սովի տիրապետութեան տակ կ'իյնայ:

Մարդուն հոգին առանց Աստուծոյ սովամահ կ'ըլլայ նոյնիսկ եթէ ան աշխարհի ամբողջ հարստութիւնը ունի: Մարդը աստիճանական աղֆատացումէ կ'անցնի երբ լքէ աներեւակայելի գանձը՝ Քրիստոս (Եփ 3.8): Արդարեւ, աղֆա՛տ է մարդը առանց Հարուստին եւ Հարստացնողին: Դատա՛րկ է մարդուն սիրտը առանց երկինքն ու երկիրը լեցնողին:

2.- Սովը, հոգեւորապէս անպաշտպան եւ անապահով զգալն է: Այլ խօսքով, սովը, լքուած ու անտեսուած զգալն է Աստուծոյ եւ մեր սիրելիներուն կողմէ: Սովը, մեր կրած փորձութեանց դիմաց մեմք զմեզ

առանձին զգալն է: Սովը, օգնութեան կարիք զգալն է բայց օգնութիւն չգտնելն է: Սովը, Աստուծոյ բարեկամութիւնը հայցելն է, բայց անկէ զրկուած մնալն է: Սովը, կարեկցող մը փնտռելն է բայց կարեկցողի չհանդիպիլն է:

3.- «Մեծ սով մը տիրեց»: Ինչո՞ւ բնագիրը «սով»ը կը բնորոշէ իբրեւ «մեծ սով»: Հոգեւոր սովը պարզ եւ աննշան սով մը չէ, ժամանակաւոր սով մը չէ, այլ «մեծ» սով մըն է: Մեծ է, որովհետեւ աստուածադիր սով է: Մեծ է, որովհետեւ Աստուծմէ հեռանալուն արդիւնքն է: Մեծ է, որովհետեւ Աստուծմէ զատ ո՛չ ոք կրնայ լուծում բերել այդ սովին: Մեծ է, որովհետեւ Աստուծոյ ներկայութեան բացակայութիւնն է որ կը յուշէ:

4.- «Մեծ սով մը տիրեց»: Որքան հետաքրքրական է սովին համար գործածուած «մեծ» բացատրութիւնը, նոյնքան ալ հետաքրքրական է գործածուած «տիրեց» բացատրութիւնը, որ կը պատկերացնէ երկու բան. --

ա.- Նախ կը պատկերացնէ հոգեւոր սովին ծանրակշիռ ազդեցութիւնը: Հոգեւոր սովը կատարեալ տիրութիւն եւ տիրապետութիւն կը հաստատէ մեր կեանքերուն մէջ եթէ երբեք Աստուծոյ դառնալով՝ անոր առաջին չառնենք:

բ.- «Տիրեց» բառը միաժամանակ ցոյց կու տայ թէ ինչպէս Սատանան անգութ բռնակալի մը նման կը տիրէ մեր հոգիներուն մէջ եթէ անոնք տիրապետուած չըլլան Աստուծոյ Հոգիով: Աստուծոյ տիրութեան չենթարկուողը Սատանային տիրութեան ենթարկուած անձ մըն է: Կրտսեր զաւակը երբ մերժեց իր հօրը տիրութիւնը՝ ինքնաբերաբար ենթակայ դարձաւ Չարին տիրութեան:

5.- Սատանան թոյլ չի տար որ մեր սիրտերուն ու հոգիներուն մէջ զգանք ներկայութիւնը «մեծ սով»ին, այնքան ատեն երբ տակաւին չենք սպառած մեր ամբողջ հարստութիւնը: Ասիկա Սատանային յատուկ մէկ գործելակերպն է:

Այո, չէր կրնար պատահիլ որ սովը վրայ հասնէր երբ տակաւին կրտսեր որդին իր հարստութիւնը չէր մսխած: Անառակ որդին չէր գիտեր որ նման դժբախտ վիճակի մը պիտի մատնուէր եթէ երբեք հեռանար իր հօրենական տունէն: Մեզմէ ո՞վ չի՞ գիտեր որ Սատանան սկզբնական շրջանին չի՞ յայտնէր մեղքին ակերիչ բնութիւնը: Մեզմէ ո՞վ չի՞ գիտեր որ Սատանան կը ծածկէ մեղքին կործանարար բնութիւնը երբ տակաւին ասիկա չէ գործուած:

Ան չի՞ կրնար մեզ իսրայէլ առանց թաքցնելու մեղքին ոչմարիտ պատկերը: Եթէ Սատանան չթաքցնէր իր ստախօսութեան մեղքը պիտի

չկրնար խաբել Ադամն ու Եւան: Սատանան անոնց ըսաւ. «Այն օրը որ անկէ ուտէ՛ք ոչ թէ պիտի մեռնի՛ք, այլ ձեր աչքերը պիտի բացուին եւ աստուածներու պէս պիտի ըլլա՛ք...» (Ծն 6.3): Սո՛ւտ խօսեցաւ Սատանան: Ադամ եւ Եւա կերան արգիլեալ ծառին պտուղէն բայց չեղան աստուածներու պէս, ընդհակառակը՝ առնուեցաւ անոնցմէ Աստուծոյ Հոգին (Ծն 6.3): Յիսուս կը հաստատէ թէ Սատանան «սկիզբէն մարդասպան էր», եւ թէ՛ ան «նշմարտութեան կողմնակից չէ եղած բնաւ» (Յհ 8.44): Արդ, Սատանան որ «սկիզբէն մարդասպան էր», ի՞նչպէս կրնար Ադամին ու Եւային անմահ կեանք խոստանալ: Սատանան «որ նշմարտութեան կողմնակից չէ եղած բնաւ», ի՞նչպէս կրնար նշմարտութիւնը խօսիլ Ադամին ու Եւային:

Սատանան օձի նման գետնէն սողալով կը մերձենայ մեզի եւ կը փորձէ համոզել մեզ, որ եթէ այսինչ արարքը այսինչ ձեւով գործենք, մեր ուզածը եղած պիտի ըլլայ եւ յաջողութիւն ձեռք ձգած պիտի ըլլանք: Սատանան կը ջանայ մեղքը դարձնել հրապուրիչ եւ ցանկալի, այնպէս ցուցնելով որ մեղքը քաղցր է եւ գոհացուցիչ: Սատանան այդպէս վերաբերեցաւ Եւային հետ: Ասոր ապացոյցը Ծն 3.6-ին մէջ արգիլեալ ծառին համար արձանագրուած «Աղէկ... հանելի... եւ փափափելի...» բառերն են: Սատանային գործելակերպը չէ՞ անաղէկը իբրեւ աղէկ, անհանելին իբրեւ հանելի եւ անփափափելին իբրեւ փափափելի ներկայացնելը: Սատանան չէ՞ որ կեղծը իբրեւ անկեղծ եւ սուտը իբրեւ նշմարիտ կը ցուցնէ մեզի:

Մեղքը նախքան գործուիլը կրնայ հաճոյալի թուիլ մեր զգացումներուն համար, եւ սակայն, գործուելէ անմիջապէս ետք, ան իր ժանիքները կը մխրճէ մեր սիրտերուն մէջ: Ինչպէս հոտաւէտ եւ գեղատեսիլ վարդ մը, մեզ կրնայ զմայլել եւ առիւնքնել, սակայն երբ փորձենք քաղել զանիկա, ան իր փուշերով կ'արիւնէ մեր ձեռքերը, այնպէս ալ մեղքը նախքան գործուիլը կրնայ հաճոյատեսիլ ըլլալ, բայց գործուելէ ետք, ան իր իսկական գագրելի դիմագիծը հանդէս կը բերէ:

Նոյնը եղաւ անառակ որդիին պարագային: Սկզբնական շրջանին այն «հեռու երկիրը» ուր ան որոշած էր մեկնիլ, բուրեան վարդերով ու ծաղիկներով լեցուն երկիր մը կ'երեւար անոր աչքերուն, բայց երբ հասաւ այն հեռու երկիրը, երբ դարձաւ բնակիչը այդ հեռու երկրին, հոն խոզարածութեան պաշտօնէն, խոզերու ընկերակցութենէն եւ խոզերու ուտելիքէն գատ ուրիշ բան չգտաւ: Ի՞նչ ողբերգութիւն:

6.- «Սկսած էր աղփատանալ»: Այս բառերը կը սորվեցնեն մեզի նաեւ, որ հոգեւոր աղփատութիւնն ու դատարկութիւնը ժամանակի ընթացքին է որ հանդէս կու գան: Խորքին մէջ Աստուծմէ հեռու եղող

մարդուն սրտին եւ հոգիին մէջ այդ սովն ու աղփատութիւնը մի՛շտ ներկայ են, բայց մարդիկ իրե՛նք է որ շատ ուշ, հազիւ իրենց կեանքի վերջալոյսին կ'անդրադառնան ատոր եւ որոշում կ'առնեն վերադառնալու Աստուծոյ, եւ կամ, հեռու մնալու անկէ առ յաւէտ:

«Ուստի գնաց այդ երկրի ֆաղաֆացիներէն մէկուն ֆով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար» (Ղկ 15.15): Քանի մը հաստատումներ.–

1.– Այս համարին մէջ մենք կը կարդանք երկու թագաւորութիւններու մասին: Հօրը տունը ուրկէ հեռացաւ կրտսեր որդին՝ կը խորհրդանշէ մեր երկնաւոր Հօր թագաւորութիւնը, իսկ ագարակը ուր անառակ որդին սկսաւ աշխատիլ՝ կը խորհրդանշէ Սատանայի թագաւորութիւնը: Այս իմաստով, աշխարհի մէջ երկու թագաւորութիւններ կան: Անոնք մնայուն կերպով պայքարի մէջ են իրարու հետ: Անոնք երկու հակադիր թագաւորութիւններ են: Մարդ արարածը ուզէ թէ չուզէ այս երկու թագաւորութիւններէն մէկուն կը պատկանի: Երբ մարդ հեռանայ Աստուծոյ թագաւորութենէն՝ անդամ կը դառնայ Սատանայի թագաւորութեան: Երբ անառակ որդին հեռացաւ իր հօրեանկան տունէն ու թագաւորութենէն, դարձաւ անդամ չարի թագաւորութեան, դարձաւ բնակիչ այդ հեռու երկրին, դարձաւ գործակատար չարի ագարակին մէջ:

2.– «Ուստի գնաց այդ երկրի ֆաղաֆացիներէն մէկուն ֆով...»: Ո՞վ կը ներկայացնէ այդ «հեռու երկրին» մէջ ապրող «ֆաղաֆացին»: Այդ «հեռու երկրին» մէջ ապրող «ֆաղաֆացին» գոր անառակ որդին իր ագարակը կը դրկէ, կը ներկայացնէ բոլոր անոնք՝ որոնք իրենց չարագործ եւ անօրէն կեանքով դարձած են բնակիչները այն «հեռու երկրին», դարձած են բնակիչները Սատանայի ագարակներուն, ուր ո՛չ արդարութիւն եւ ո՛չ խաղաղութիւն կայ, ո՛չ սէր եւ ո՛չ բարութիւն կայ: Եւ այդպիսիներուն թիւը ֆիչ չէ, որովհետեւ, ուշագրաւ է որ «ֆաղաֆացիներ» բառը յոգնակիով յիշուած է, սա կը պարզէ որ Զարին հետեւորդները բազմաթիւ են:

3.– «Քաղաֆացի» որակումը ցոյց կու տայ, որ յիշեալ մարդը որուն «ֆով ծառայ եղաւ» անառակ որդին, հիւրի, աստանդականի, թափառականի կամ պանդուխտի դիրք չունէր այս աշխարհին մէջ, այլ դարձած էր ֆաղաֆացին այս աշխարհին: Ան իր հպատակութիւնը յայտնած էր աշխարհին: Եւ ահա անառակ որդին կամայ թէ ակամայ իր հպատակութիւնը կը յայտնէր մէկու մը որ երկնաֆաղաֆացիութեան գաղափարին վրայ ամբողջովին գիծ ֆաշած էր, եւ ան ալ զինք իր ագարակը կը դրկէր: Հոսկէ կը սորվինք երեք բան.–

ա.- Այն՝ թէ ով որ կը մերժէ դառնայ երկնաֆաղաֆացի՝ կը դառնայ աշխարհաֆաղաֆացի: Հետեւաբար, «ֆաղաֆացի» որակումը բացայայտօրէն ցոյց կու տայ, թէ ոեւէ մէկը որ կը հեռանայ Աստուծմէ՝ կ'որդեգրուի Չարին կողմէ եւ Չարին թագաւորութեան ֆաղաֆացին կը դառնայ:

բ.- «Գնաց այդ երկրի ֆաղաֆացիներէն մէկուն ֆով» բառերը նաեւ կը պարզեն, թէ ոեւէ մարդ որ կ'որոշէ հեռանայ Աստուծմէ, ինֆզինֆ ենթակայ դարձուցած կ'ըլլայ այս աշխարհի ֆաղաֆացիներուն, Սատանայի թագաւորութեան ֆաղաֆացիներուն:

գ.- «Գնաց» բառը ցոյց կու տայ թէ ոեւէ մէկը որ կը հեռանայ Աստուծմէ՝ կ'երթայ ուրիշ տեղ մը եւ այդ «ուրիշ տեղ»ը՝ Չարին տեղն է, չարերուն տեղն է, չարագործներուն տեղն է, խոզարածներուն տեղն է:

4.- «Այդ երկրի ֆաղաֆացիներէն մէկուն ֆով ծառայ եղաւ»: Ինչո՞ւ կը գործածուի «ծառայ եղաւ» բացատրութիւնը.-

ա.- «Ծառայ» որակումը յստակօրէն կը պարզէ թէ ոեւէ մէկը որ կամովին կը լֆէ զԱստուած՝ կը դառնայ ծառայ Սատանային, եւ կ'իյնայ անոր ծառայութեան լուծին տակ:

բ.- «Ծառայ» բառը նաեւ կը պարզէ որ Չարին թագաւորութեան անդամ եղող մարդը կը կորսնցնէ ամէն ազատութիւն: Յիշեցէ՛ որ Քրիստոսէ առաջ եւ Քրիստոսի ժամանակ, ծառան ոեւէ ազատութիւն չունէր. ան դրամով կը գնուէր, եւ անոր տէրը ուզածին պէս կրնար հետը վերաբերիլ եւ կրնար ոեւէ ատեն զինֆ դուրս դնել տունէն: Եթէ տրուած այս բացատրութեան լոյսին տակ դիտենֆ «ծառայ» բնութագրումը, պարզ կը դառնայ թէ ոեւէ մէկը որ գիտակցաբար կը հեռանայ Աստուծմէ՝ գնուած կ'ըլլայ Սատանային կողմէ, եւ Սատանան կրնայ իր ուզածին պէս վերաբերիլ անոր հետ:

գ.- «Ծառայ» բառը կը յիշեցնէ նաեւ որ Սատանային հետեւորդները՝ Սատանային կամֆը կատարողներն են, ճիշդ ինչպէս ծառաներ իրենց տէրերուն կամֆը կը կատարեն: Կարելոր է գիտնալ հետեւեալը.- Եթէ մէկը յանձնուի Աստուծոյ՝ ճիշդ է որ պէտք է այլեւս դառնայ Աստուծոյ կամֆը կատարող մարդ, բայց միւս կողմէն չենֆ կրնար ուրանալ թէ Աստուած կը յարգէ մարդուն ազատ կամֆը նոյնիսկ իր դարձէն ետֆ: Այդպէս չէ Սատանային պարագան: Սատանան չի յարգեր մարդուն ազատ կամֆը՝ երբ մարդը յանձնուի իրեն:

դ.- Ըսինֆ, թէ անցեալին ծառաներ դրամով կը գնուէին: Դրամով գնուած ծառային ո՛չ միայն ազատութիւնը կը խլուէր, այլեւ՝ անոր կեանֆն անգամ վտանգի մէջ կ'ըլլար, որովհետեւ, եթէ ոեւէ ատեն սիւս գործ մը կատարէր կամ իր տիրոջ կամֆին հակառակ բան ընէր՝ իր տէրը

կրնար գին՝ մահուան դատապարտել: Ճիշդ նոյնպէս ալ, Աստուծմէ հեռացող մարդուն կեանքը մնայուն կերպով վտանգի մէջ կ'ըլլայ, որովհետեւ անիկա ենթակայ կ'ըլլայ Սատանային, որ մահուան իշխանն է, եւ թշնամի՝ կեանքին:

5.- «Անիկա իր ագարակը դրկեց գին՝»: Ասկէ առաջ բացատրուեցաւ թէ ագարակը ուր անառակ որդին սկսաւ աշխատիլ՝ կը խորհրդանշէ Սատանայի թագաւորութիւնը: Բայց ընդհանուր իմաստով մը, կրնանք ըսել նաեւ որ «ագարակը» կը ներկայացնէ աշխարհը: Արդ, ինչո՞ւ Յիսուս Սատանայի թագաւորութիւնը կամ աշխարհը կը կոչէ՝ «ագարակ»: Ագարակին մէջ անասուններ է որ կ'ապրին: Հետեւաբար, Յիսուս ըսել կ'ուզէ թէ երբ մարդիկ կը մերժեն Աստուծոյ ներկայութեան մէջ ապրիլ, ճիշդ ինչպէս անառակ որդին ինձ մերժեց, այդ պարագային, աշխարհ կը վերածուի ագարակի, անբան կենդանիներու հաւաքածոյի մը:

Իսկ թէ ինչո՞ւ Սատանայի թագաւորութիւնը կը կոչուի «ագարակ»՝ կը կոչուի անոր համար որ Սատանան իր հետեւորդներուն, եւ իր թագաւորութեան անդամներուն ու հպատակներուն հետ կը վերաբերի այնպէս՝ ինչպէս մարդիկ կենդանիներու հետ պիտի վերաբերէին, եւ վստահաբար աւելի անարգական ձեւով մըն ալ, որովհետեւ շատ մը երկիրներու մէջ այսօր կենդանիներ կը յարգուին:

6.- «Անիկա իր ագարակը դրկեց գին՝»: Ինչո՞ւ անառակ որդին ագարակ կը դրկուի աշխատելու եւ ոչ թէ տուն մը կամ ուրիշ տեղ մը: Քանի մը պատմառոններով.-

ա.- Մենք գիտենք որ ագարակը այն տեղն է ուր կենդանիներ կ'ապրին, այս պարագայիս, յիշեալ ագարակին մէջ ապրողները խոզերն են: Ուստի, խորքին մէջ մեզի ըսել ուզուածը այն է՝ որ երբ մարդ արարածը գիտակցօրէն հեռանայ Աստուծմէ (ինչպէս էր պարագան անառակ որդիին)՝ անբան կենդանիներու մակարդակին կ'իջնէ, անոնց վիճակակից կը դառնայ, անոնց մակատագրակից կ'ըլլայ:

բ.- Ագարակ մը ուր խոզեր կը բնակեցուին՝ միշտ կը հոսի, եւ երբեմն ալ՝ կը գարշահոտի: Երբ Յիսուս կը խօսի անառակ որդիին խոզերու ագարակ դրկուելուն մասին, խորքին մէջ, անուղղակիօրէն մեզի կ'ուսուցանէ թէ անոնք որ կը բաժնուին Աստուծմէ՝ հոգեպէս կը գարշահոտին: Արդարեւ, մեղքը կը հոսեցնէ՝ մարդը, մինչդեռ Աստուծոյ Հոգին՝ բուրեան կը դարձնէ զանիկա: Զէ՞ք կարդացած այն սուրբերուն մասին, որոնց վերաբերեալ կ'ըսուի, թէ երբ ֆալէին, բաւական մեթր հեռաւորութեան վրայ՝ անոյշ խունկի հոտ կը բուրէին:

գ.– Անատակ որդին ագարակ կը դրկուի եւ ոչ թէ տուն մը, որպէսզի ցոյց տրուի մեզի թէ անոնք որոնք կը հեռանան Աստուծմէ՝ կը գրկուին իրենց երկնաւոր տունէն եւ կը մնան տնագուրկ:

Արդարեւ, տնագուրկ չմնա՞ց անատակ որդին երբ սովը եկաւ իր տիրապետութիւնը հոչակելու: Ո՞վ կրնար զինք այդ սովէն ազատել եթէ ոչ Կենաց Հացը՝ Քրիստոս ի՛նք: Հոն ուր Աստուած չէ որ կը տիրէ՝ հոն սովամահութիւնն է որ կը տիրէ: Առանց Աստուծոյ ապրուած կեանք մը՝ սովով յատկանշուած է: Մեր հոգիները միայն Աստուծմով կրնան կշտանալ, մեր սիրտերը միայն Աստուծմով կրնան գոհացուիլ, եւ հետեւաբար, երբ Աստուած չէ բնակիչը մեր հոգիներուն եւ սիրտերուն՝ հոգեւոր սովը կը դառնայ անխուսափելի եւ անտանելի:

7.– «Եւ անիկա իր ագարակը դրկեց զինք՝ խոզ արածելու համար»: Հրեաներուն համար խոզարածութիւնը ամենէն զգուելի գործն էր: Տուեալ բառերով, Յիսուս կ'ուզէր սորվեցնել հրեաներուն եւ մեզի, թէ Աստուծմէ հեռացող մարդը՝ կը դառնայ զգուելի մարդ, եւ հոգեւորապէս կը հասնի ամենաթշուառ եւ ամենաողորմելի մակարդակին:

Երանի՛, երանի՛ թէ բոլոր մարդիկ անդրադառնային որ Սատանան խոզարածութեան պաշտօնէն զատ մեզի տալիք ուրիշ պաշտօն չունի:

Երանի՛ թէ մարդիկ գիտակցէին որ Աստուծոյ ընկերակցութիւնը մերժողները խոզերու ընկերակցութենէն զատ ուրիշ ընկերակցութիւն պիտի չգտնէին:

Երանի՛ թէ մարդիկ ըմբռնէին որ օգնութեան համար դէպի իրենց կարկառուած աստուածային ձեռքը մերժողները՝ պիտի չգտնէին իրենց օգնող ձեռք մը՝ երբ օգնութեան կարիքը զգային:

Երանի՛ թէ մարդիկ հասկնային որ հօրեանական տունէն հեռացողները տնագուրկ պիտի մնային սովի օրերուն:

8.– «Խոզ արածելու համար»: Արագ քանի մը մատնանշումներ եւս.–

ա.– Սատանան իր թագաւորութեան մէջ ապրողներուն բարձր դիրք չի խոստանար, այլ խոզարածութեան պաշտօն կը սորվեցնէ անոնց, այլ խօսքով ամենէն ցած մակարդակին կ'իջեցնէ:

բ.– Խոզարածութիւնը չարագործ եւ մեղսալից կեանքի մը խորհրդանիշն է: Հետեւաբար, կրտսեր զակին խոզարած ըլլալը, ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ անոր միտքուիլը մեղքի տիղմին մէջ: Սա իրողութիւնը կը պարզէ այն՝ որ Աստուծմէ հեռացողը կը դառնայ ստրուկը մեղքին:

գ.– «Արածել» բառը նաեւ ցոյց կու տայ թէ Սատանան հանգիստ չի տար իր հետեւորդներուն, այլ զանոնք մնայուն կերպով գործի կը լծէ,

արածելու կը դրկէ, իրենց նմանները գայթակղեցնելու «առաքելութեան» կ'ուղղարկէ:

դ.- Վերջապէս, ագարակ մը ուր խոզեր կ'ապրեցուին, հոն մնայուն կերպով աղմուկ կ'ըլլայ, գէշ հոտ կ'ըլլայ: Այս մատնանշումը մեզի պէտք է յիշեցնէ թէ Սատանան հանգստաւէտ եւ խաղաղ պայմաններ չի' պարգեւեր իր հետեւորդներուն:

«Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներէն իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն» (Ղկ 15.16): Քանի մը հաստատումներ.-

1.- «Նոյնիսկ պատրաստ էր...»: Այս բառերը կը պարզեն որ Աստուծմէ հեռացող մարդը պատրաստ է ամէն ինչ ընելու եւ ամէն միջոցի դիմելու, միայն թէ կարենայ յագեցնել այն ծարաւը որ գոյութիւն ունի իր ներսիդին եւ գոր զինք կ'այրէ, որ սակայն բնականօրէն չի կրնար յագեցնել: Անառակ որդին ամէն բան կրնար մտքէն անցնել, բայց երբեք չէր մտածեր որ օրին մէկը կրնար խոզարած դառնալ, բան մը՝ որ ոչ միայն զինք ուրիշին համար զգուելի պիտի դարձնէր, այլեւ՝ զգուելի ինքնիր համար նաեւ: Եւ մեզմէ ո՞վ չի գիտեր թէ մեղաւոր մարդը՝ յանախ զգուանք ու ատելութիւն կ'ունենայ ինքնիր անձին հանդէպ:

2.- «Պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներէն իր փորը լեցնելու»: Անառակ որդին կը ցանկայ խոզերուն կերած եղջիւրներէն ուտել: Մենք գիտենք որ եղջիւրին մէջ պարապ կ'ըլլայ: Կրտսեր որդին կը փափաքէր եղջիւր ուտել, այսինքն՝ մէջը պարապ բան ուտել: Ըսել ուզուածը այն է՝ թէ աշխարհ ինչ որ տայ մեզի՝ պարապ է: Աշխարհ լեցուն բան, այլ խօսքով՝ սիրտը լեցնող եւ հոգին կշտացնող բան չի՝ տար իր ստրուկներուն:

3.- «Փորը լեցնելու»: Այս երկու բառերը ցոյց կու տան թէ աշխարհ ամենէն տարրական բաները անգամ (ինչպէս կերակուր) չի շնորհեր իր գաւակներուն: Խորքին մէջ աշխարհ շատ բան կը շնորհէ իր հետեւորդներուն, բայց այստեղ պարզապէս ըսել ուզուածը այն է՝ որ ինչ ալ տայ աշխարհը, չի կրնար մարդուն «փորը լեցնել», այլ խօսքով՝ անոր սիրտն ու հոգին լեցնել, անոր էութիւնն ու կեանքը լեցնել: «Փորը լեցնել» բառերը միաժամանակ կը պարզեն որ Սատանան կ'ըստրկացնէ ու սովամահ կը դարձնէ իր թագաւորութեան անդամագրուողները:

4.- «Սակայն ոչ ոք կու տար իրեն»: Այս բառերուն վերաբերեալ երեք մատնանշումներ.-

ա.- Այս բառերը կը պարզեն որ աշխարհ անկարող է տալու մեզի բան մը որով կարենայ լեցնել ու լիացնել Աստուծոյ ներկայութենէն

դատարկուած մարդուն հոգին: «Ոչ ոք կու տար» բառերը, պէտք է հասկնալ՝ «ոչ ոք կրնար տալ» իմաստով: Արդարեւ, պարապ աշխարհը՝ չի կրնար մարդոց պարապ սիրտերը լեցնել: Աշխարհին տուածը՝ աշխարհին պէս պարապ կ'ըլլայ: Ստեղծի՛չը միայն կրնայ լեցնել սիրտն ու հոգին ստեղծուածին:

բ.- «Ոչ ոք կու տար իրեն» բառերը նաեւ կը պարզեն աշխարհի մարդոց անտարբերութիւնը զրկուած մարդոց հանդէպ: Արդարեւ, աշխարհ չի գթար գթութեան կարօտ հոգիներուն: Զի պարզեւեր կարօտ-եալին:

գ.- «Ոչ ոք»: Այո՛, ոչ թէ մարդոց մէկ մասը միայն չ'օգնէր, այլ՝ «ոչ ոք» կ'օգնէ, «ոչ ոք» կը խղնայ, «ոչ ոք» կը կարեկցի, «ոչ ոք» կը միտքարէ: Աշխարհի մարդիկ եթէ անտարբեր են իրենց անձնուն փրկութեան հանդէպ՝ չեն կրնար հոգատար ըլլալ մեր փրկութեան վերաբերեալ: Բան մը որ աշխարհ չունի՝ ի՞նչպէս կրնայ տալ մեզի: Եթէ աշխարհ խոզի եղջիւր կ'ուտէ կամ միայն խոզի եղջիւրներով հետաքրքրուած է՝ ի՞նչպէս կրնայ կեանքի Հացը շնորհել մեզի:

5.- Այս համարը յստակօրէն ցոյց կու տայ մեզի թէ ինչ դժբախտ ու թշուառ վիճակի կը մատնուի մարդը երբ հեռանայ Աստուծմէ: Ան կը կորսնցնէ կեանքի Հացը, եւ անոր փոխարէն, աշխարհ իրեն խոզի եղջիւր կը պարզել: Ան կը կորսնցնէ Աստուծոյ բարեկամութիւնը, եւ անոր փոխարէն, խոզարածներ իրե՛նք կը դառնան իր բարեկամները: Աստուծմէ հեռացող մարդը, երկինքի տունէն՝ խոզանոց կ'երթայ:

«Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. "Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ"» (Ղկ 15.17): Քանի մը հաստատումներ.-

1.- «Երբ անդրադարձաւ իր վիճակին»: Երեք իմաստներ կրնանք գտնել այս բառերուն մէջ.-

ա.- «Երբ անդրադարձաւ իր վիճակին», այսինքն՝ երբ գիտակցեցաւ որ ինք հոն չէր ուր պէտք էր որ ըլլար, երբ յիշեց իր հօրենական տան հանգստաւէտ պայմանները, երբ յիշեց իր հօրը ծառաներուն երանական վիճակը, երբ մանաւանդ մտաբերեց այն ջերմ եւ խոր սէրը որ հայրը կը տածէր իր նկատմամբ, վնոց իր հօրը դառնալ, անոր գիրկը նետուիլ, անոր ոտներուն փարիլ եւ խոստովանիլ որ ինք մեղանչած էր Աստուծոյ եւ իրեն դէմ, եւ թէ ինք այլեւս արժանի չէր անոր որդին կոչուելու:

բ.- «Անդրադարձաւ իր վիճակին»: Այս բառերը նաեւ ցոյց կու տան որ գիտակցութեան եկաւ եւ սկսաւ ինքզինք տեսնել այնպէս ինչպէս

որ էր: Ան անդրադարձաւ մեղքի կործանարար բնութեան: Աշխարհի եւ մեղքի սէրը կուրցուցած էին կրտսեր զաւակը: Անոնք առիթ չէին տար անոր որ անդրադառնար իր իրավիճակին: Ան սկսաւ ճշմարտութիւնը տեսնել միայն այն ատեն՝ երբ իր սրտին մէջ փափաք մը արթնցաւ իր հօրը դառնալու: Մեզմէ քանի՞նք անառակ որդիին նման կ'անդրադառնան իրենց վիճակին: Եւ եթէ կ'անդրադառնանք, անառակ որդիին նման կ'ըստենք. «Ելլեմ երթամ հօրս բով»:

գ.- «Անդրադարձաւ իր վիճակին»: Ի՞նչ բանի անդրադարձաւ անառակ որդին: Ան անդրադարձաւ որ իր սրտին եւ հոգիին խորերը ծարաւ մը կար, դատարկութիւն մը կար, եւ թէ այդ ծարաւն ու դատարկութիւնը լեցնելու համար, ան պէտք էր իր հօրը դառնար: Անառակ որդին նախքան իր հօրեանական տունէն հեռանալը բնաւ չէր տառապեր հոգեւոր ծարաւէ մը կամ սրտի դատարկութենէ մը: Այդ հոգեւոր ծարաւն ու սրտի դատարկութիւնը հանդէս եկան իր կեանքին մէջ երբ կամովին հեռացաւ իր հայրեանական օճախէն:

2.- «Ինքնիրեն ըսաւ.- "Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին»: Քանի մը նշումներ.-

ա.- Որո՞նք են այստեղ յիշուած գործաւորները «որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին»: Յստակ է որ անոնք հրեաներն են եւ ո՛չ թէ հրեշտակները, ինչպէս ոմանք կը կարծեն: Քիչ մը խորք պիտի ըլլար հրեշտակները կոչել գործաւոր եւ անոնց վերաբերեալ ըսել, թէ «անոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին»: Այս բացատրութիւնը ակնարկութիւն է այն բոլոր բարիքներուն եւ բարեբարութիւններուն, այն բոլոր հրաշքներուն ու նշաններուն որոնցմով Աստուած շրջապատեց Իսրայէլի ժողովուրդը:

Պօղոս առաքեալ խօսելով Իսրայէլացիներուն մասին՝ կ'ըսէ. «Իրենցն են՝ թէ՛ Աստուծոյ որդիներ ըլլալու փառքը, թէ՛ Ուխտին գիրքերը, թէ՛ օրէնսդրութիւնը, թէ՛ պաշտամունքը եւ թէ՛ խոստումները: Իրենցն են նաեւ նահապետները, եւ իրենցմէ էր որ մարմնաւորապէս ծնաւ Քրիստոս, որ բոլորէն վեր եղող յաւէտ օրհնեալ Աստուած է: Ամէն» (Հո 9.4-5): Առաքեալին այս հաստատումը հրեայ ժողովուրդին վերաբերեալ, շատ յստակօրէն ցոյց կու տայ թէ անոնք «իրենց պէտք եղած կերակուրէն աւելին» ունեցան: Հետեւաբար, «պէտք եղած կերակուր»ը՝ Աստուծոյ ներկայութիւնն էր հրեայ ժողովուրդին կեանքին մէջ: «Պէտք եղած կերակուր»ը՝ Աստուծոյ կողմէ անոնց տրուած օրէնքներն ու պատուիրաններն էին: «Պէտք եղած կերակուր»ը՝ Աստուծոյ կողմէ անոնց շնորհուած առաջնորդութիւնն ու պաշտպանութիւնն էր:

Սիրելի՛ ընթերցող, պահ մը մտածէ այն բոլոր բարիքներուն մասին որ Աստուած տուած է քեզի եւ զորս կատարած է քու կեանքիդ մէջ: Դուն քեզի համար կրնա՞ս ըսել թէ պէտք եղած կերակուրէն աւելին ունիս: Այլ խօսքով, ունի՞ս Աստուծոյ ներկայութիւնը կեանքիդ մէջ, թէ՛ կ'ապրիս առանց զգալու Աստուծոյ ներկայութիւնը: Լեցո՞ւն է կեանքդ Աստուծոյ բարեբարութիւններով, թէ՛ դատարկ եղջիւրի մը նման է:

բ.- «Իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին»: Այս բառերը պէտք է մտածել տան հաւատացեալներու, թէ մեզի համար երկինքի մէջ վերապահուած է «պէտք եղած կերակուրէն աւելին», այլ խօսքով, հոն՝ երկինքի մէջ, Աստուծոյ ներկայութեան մէջ, վերապահուած ունինք մեզի համար անպատմելի հարստութիւն մը, աննկարագրելի երջանկութիւն մը, աներեւակայելի առատութիւն մը, անբացատրելի ուրախութիւն մը, որ ոեւէ ականջ չէ լսած եւ ոեւէ աչք չէ տեսած:

գ.- Վերջապէս, «աւելին» բառը ցոյց կու տայ որ Աստուած մեր ակնկալածէն աւելի՛ն կու տայ: Այո՛, Աստուած աւելի՛ն կու տայ մեզի քան ինչ որ մենք կը սպասենք: Աւելի՛ն կ'ընէ քան ինչ որ մենք կը խնդրենք: Աւելի՛ն կը շնորհէ քան ինչ որ մենք արժանի ենք: Անառակ որդին գործաւորի դիրք կ'ակնկալէր՝ բայց հայրը աւելի՛ն տուաւ իրեն, զայն որդի դարձուց: Ան յանդիմանութիւն կը սպասէր՝ բայց տաճուկ գրկի հանդիպեցաւ: Դառն մերժում կը սպասէր՝ բայց ջերմ ընդունելութիւն գտաւ: Ձեռքերը ցաւցնող ցուպ կ'ակնկալէր՝ բայց ձեռքերուն մատները զօրացնող մատանի ստացաւ: Ոտքերուն մերկութեան համար խարազան կը սպասէր՝ բայց ահա ոտքերուն մերկութիւնը ծածկող կօշիկ շնորհուեցաւ իրեն:

Յ.- «Հօրս տան մէջ քանի՛ գործաւորներ կան»: Չորս հակիրճ հաստատումներ.-

ա.- Ինչո՞ւ Յիսուս տուեալ համարին մէջ հրեաները «գործաւոր» (նոր թրգմ.) կամ «բանուոր» (հին թրգմ.) կը կոչէ: Այս երկու բացատրութիւնները գործածուեցան ցոյց տալու համար որ հրեաներ մերժեցին ապաւինիլ Քրիստոսի շնորհքին եւ նախընտրեցին փարած մնալ օրէնքի գործադրութեան եւ աւելի վստահիլ իրենց կատարած գործերուն քան այն «գործին» որ Քրիստոս կատարեց խաչին վրայ: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ «Իսրայէլի ժողովուրդը չարդարացաւ Մովսէսի Օրէնքին միջոցաւ, որ տրուած էր՝ մարդիկը արդարացնելու համար: Ինչո՞ւ: Որովհետեւ չհաւատաց Քրիստոսի, եւ կը կարծէր թէ Օրէնքին գործադրութեամբը պիտի արդարանայ» (Հռ 9.31-32): Ինքնիր փրկութիւնը օրէնքի գործադրութեան մէջ տեսնող մարդը օրէնքին

«գործաւորը» կը դառնայ, մինչ Քրիստոսի շնորհփին ապաւինող մարդը անոր շնորհալի գաւակը կը նկատուի:

բ.- «Գործաւոր» կամ «բանուոր» բառերը միաժամանակ կը պարզեն որ հրեայ ժողովուրդը չէր վերաբերեր Աստուծոյ հետ այնպէս՝ ինչպէս գաւակ մը պիտի վերաբերէր իր հօրը հետ, թէպէտ Աստուած ինք հօր մը նման հոգ կը տանէր անոնց, ինչպէս «հօրս տան մէջ» բառերը կը պարզեն: Պարզ բացատրութեամբ մը, «հօրս» բառը ցոյց կու տայ որ Աստուած հա՛յր եղած է հրեաներուն համար, մինչդեռ «գործաւոր» կամ «բանուոր» բնորոշումները, բացայայտ կը դարձնեն թէ հրեաներ իրենք զիրենք երբեք գաւակ չեն զգացած եւ իբր այդպիսին չեն ըմբռնած:

գ.- Տակաւին, «գործաւոր» կամ «բանուոր» բնութագրումները, որոշապէս ցոյց կու տան թէ հրեաներ գործաւորի կամ բանուորի ակնկալութեամբ կը վերաբերէին Աստուծոյ հետ: Իսկ ի՞նչ է գործաւորի մը կամ բանուորի մը ակնկալութիւնը, եթէ ոչ նիւթական վարձատրութիւնը: Երբ հրեայ ժողովուրդին պատմութիւնը սերտենք, պիտի տեսնենք որ անոնք մնայուն կերպով Աստուծոյ կը ծառայէին՝ անկէ բան մը առնելու կամ բան մը ձեռք ձգելու յոյսով: Անոնք Աստուծոյ սիրող սրտին նայելու փոխարէն՝ կը նայէին անոր տուող ձեռքին, իսկ ձեռքին նայիլը՝ ծառայի յատուկ է, եւ ծառայի հոգեբանութիւն է (հմմտ Սղ 123.2):

դ.- «Քանի՛»: Այս բառը կը պարզէ թէ հրեաներուն մեծ բաժինը, կամ ըսենք, ջախջախիչ մեծամասնութիւնը «գործաւորի» եւ «բանուորի» հոգի ու հոգեբանութիւն ունէր:

4.- «Մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս բով...» (15.17-18): Քանի մը ամփոփ մատնանշումներ.-

ա.- «Հոս անօթութենէ կը մեռնիմ»: Անառակ որդիին բերնին մէջ գտնուող այս հաստատումը ցոյց կու տայ թէ աշխարհ սովամահ կը դարձնէ մեր հոգիները: «Հոս» ըսելով կ'ակնարկուի աշխարհին, քանի ըսինք ագարակը աշխարհը կը ներկայացնէ: Ան որ կը սիրէ «հոս», այլ խօսքով՝ աշխարհը, կրնայ իր հոգին անօթութենէն մեռնիլ:

բ.- «Կը մեռնիմ»: Այս բառերը աշխարհի ինքնութիւնը եւ Սատանային բուն նպատակը կը բացայայտեն: Ի՞նչ է Սատանային նպատակը եթէ ոչ մեզ մեղքի առաջնորդել, եւ մեղքով՝ յաւիտենական մահուան:

գ.- Եթէ կրտսեր որդին չանօթեմար, չաղբատանար եւ չդժբախտանար՝ հօրը պիտի չդառնար: Ի՞նչ է պատգամը այս կէտին: Եթէ մարդ արարածը հոգեւորապէս անօթի ու աղբատ չզգայ, կամ եթէ հարուածի ու պատահարի չհանդիպի՝ չի՛ փնտոյր գԱստուած, չի՛ դառնար անոր, եւ բնաւ չ'ըսեր. «Ելլեմ երթամ հօրս բով»:

Յանախ չի՞ պատահիր որ փորձութեանց հանդիպել ետք միայն Աստուծոյ գանձ: Յանախ հիւանդութիւնները չե՞ն որ մեզ Աստուծոյ կր բերեն: Պէ՞տք է սպասենք որ պատահար մը մեզ ծունկի բերէ Աստուծոյ դիմաց: Աւելի լաւ չէ՞ որ մեր ազատ կամֆով ծունկի գանձ Աստուծոյ դիմաց, գոնէ ատիկա սիրոյ արտայայտութիւն կը սեպուի: Հիւանդութեան մը կամ փորձութեան մը պատճառով Աստուծոյ գալը՝ վախի արտայայտութիւն է եւ ո՛չ թէ սիրոյ:

«Ելլեմ երթամ Հօրս քով եւ ըսեմ իրեն.– "Հայր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. գիս քու գործաւորներդ մէկը նկատէ"» (Ղկ 15.18-19): Քանի մը հաստատումներ.–

1.– «Ելլեմ երթամ հօրս քով»: Ի՞նչ անոյշ կը հնչեն մեր ականջներուն այս բառերը: Անառակ որդին որոշած էր թողուլ խոզանոցը ու հօրը դառնալ, այլ խօսքով՝ ան որոշած էր իր աղբիւրին դառնալ, իր ինքնութեան դառնալ, իրեն կեանք տուողին քով դառնալ, իր կեանքն ու ուրախութիւնը եղողին մօտ դառնալ:

2.– «Ելլեմ երթամ»: Այս երկու բառերուն մասին առանցնաբար խօսինք.–

ա.– «Ելլեմ»: Այս բառը «որոշում» ցոյց կու տայ: Ինչպէս անառակ որդին որոշեց հօրը դառնալ ու դարձաւ, որոշեց իր մեղաւորութիւնը խոստովանիլ ու խոստովանեցաւ, դուն եւս, սիրելի՛ ընթերցող, որոշէ ելլել եւ ե՛լ: Մի՛ վախնար ելլելու: Ե՛լ մեղքի տիղմէն, ե՛լ անհաւատութեան հորէն, վե՛ր ել երկրէն ու երկրայիւնէն, վե՛ր ել աշխարհէն ու աշխարհայիւնէն: Ե՛լ Յիսուսի փառքին համար, ե՛լ իբրեւ վկայ ճշմարտութեան, ե՛լ իբրեւ առաքեալ Աւետարանի, ե՛լ իբրեւ Տիրոջ զինուորը, ե՛լ առանց տատամսելու, ե՛լ առանց վարանելու, ե՛լ առանց կասկածելու, ե՛լ անառակ որդիին վստահութեամբ: Ե՛լ դէպի երկնաւոր Հայրդ: Ե՛լ եւ Աստուած քեզի հետ ու քեզի համար պիտի ելլէ:

բ.– «Երթամ»: Այս բառին մէջ կամք ու վճռակամութիւն կայ: Անառակ որդին ո՛չ միայն ելաւ, այլ ելաւ ու գնաց: Ինչպէս անառակ որդին ըսաւ «ելլեմ երթամ» եւ ելաւ ու գնաց, այնպէս ալ մենք, քաջութիւնը ունենանք հետեւելու իր քայլերուն եւ ըսելու «ելլեմ երթամ» եւ ելլենք ու երթանք: Երթանք դէպի Աստուած, երթանք դէպի երկինք, երթանք դէպի անոր որ յայտարարեց թէ ի՛նքն է ճշմարտութիւնը (Յհ 14.6), երթանք դէպի անոր որ վստահեցուց մեզի թէ իրեն եկողը պիտի չմերժէ (Յհ 6.37):

«Ելլեմ երթամ»: Սիրելի՛ ընթերցող եղբայր եւ քոյր, ելի՛ր ու գնա՛ դէպի Աստուած որ կը սպասէ քեզի: Մի՛ վախնար երկինքի ցամաքան

բոնելու: Մի՛ վախճար ոտքի կանգնելու Աստուծոյ փառքին համար: Մի՛ վախճար որոշում առնելու Տէր Յիսուսին համար: Մի՛ վախճար դէպի Տիրոջ այգին երթալու: Մի՛ վախճար ելլելու: Մի՛ վախճար երթալու:

3.- «Հօրս քով»: Այս բառերուն վերաբերեալ երկու հաստատում.-

ա.- Առակին առաջին եւ հապնեայ ընթերցումով կրնանք այն տպաւորութիւնը ունենալ, որ դարձի եկող զակին միակ նպատակը պարզապէս իր հօրը տան մէջ գործաւորի դիրք մը ձեռք ձգելն էր, որպէսզի սովամահ ըլլալէ ազատէր, բայց խորաթափանց հայեացքով կատարուած ընթերցում մը հանդէս կը բերէ որ հօրը անկեղծ սէրն էր որ անառակ որդին իր հօրը առաջնորդեց: Ասոր փաստը այն է, որ երբ անառակ որդին որոշեց իր հօրենական տունը վերադառնալ, չըսաւ «Ելլեմ երթամ հօրս տունը», այլ՝ «Ելլեմ երթամ հօրս քով»:

Հօրը սէրն ու կարօտն էր որ անառակ որդին տուն վերադարձուց եւ ո՛չ թէ կարօտը տունին: Անառակ որդիին սիրոյն ու կարօտին առարկան իր հայրն էր եւ ո՛չ թէ իր հօրը կողմէ իրեն տրուելիք հարստութիւնը, դիրքը կամ պատիւը: Ան սկսած էր ապրիլ ճշմարիտ դարձ մը որ ամբողջովին փոխած էր իր վերաբերմունքն ու մտածելակերպը իր հօրը նկատմամբ: Հոսկէ կը սորվինք թէ ինչպէս երբ մարդ արարածը դարձի գայ՝ իր մէջ կը սկսի սէր ու կապուածութիւն անիլ հանդէպ Աստուծոյ:

Մեղաւոր մարդը կը վախճայ գեհեներէն բայց սէր չունի հանդէպ երկինքին, սակայն ընդունելէ ետք Յիսուսը իր սրտին մէջ՝ Սուրբ Հոգին կը սկսի գործել իր ներսիդին, եւ այն ատեն կը սկսի սիրել երկինքը, բայց յատկապէս՝ զԱստուած: Ինչպէս դարձի եկող անառակ որդին տունէն աւելի իր հօրը սիրեց, այնպէս ալ դարձի եկող մարդը երկինքէն աւելի՝ զԱստուած է որ կը սկսի սիրել: Եւ ի՞նչ է երկինքը եթէ ոչ Աստուծոյ ներկայութիւնը: Ուր որ է Աստուած՝ հո՛ն է երկինքը եւ հո՛ն է երկինքի արքայութիւնը:

բ.- «Հօրս քով»: Անառակ որդիին բերնին մէջ գտնուող «հօրս» բառը կը պարզէ որ մեղաւոր մարդը երբ դարձի գայ կամ որոշէ դարձի գալ՝ անմիջապէս կ'անդրադառնայ թէ Աստուած ո՛չ միայն իր Աստուածն է, այլեւ իր հայրն է: Այո՛, Աստուած՝ Աստուած ըլլալուն կողմին, նաեւ հայր է, սիրո՛ղ ու գուրգուրացող հայր, գթառատ ու ողորմած հայր: Այս իմաստով, Աստուծոյ դէմ մեղանշողը՝ իր հօրը դէմ մեղանշած կ'ըլլայ:

4.- «Եւ ըսեմ իրեն...»: Այս բառերը ցոյց կու տան որ անառակ որդին որոշած էր իր սիրտը բանալ իր հօրը դիմաց, որոշած էր անձնապէս խօսիլ հետը ու պատմել իրեն եղելութիւնը, յայտնել անոր իր սրտի փափաքը: Ուրիշին խօսիլը օգուտ մը պիտի չըներ իրեն: Ան պէտք

էր ուղղակիօրէն հօրը հետ խօսէր: Ուստի, ի՞նչ է պատգամը այս կէտին: Եթէ «իրեն» ըսելով՝ Աստուծոյ է որ կ'ակնարկուի, ուրեմն, «ըսեմ իրեն», կը նշանակէ անձնապէս եւ ուղղակիօրէն Աստուծոյ գալ եւ Աստուծոյ հետ խօսիլ. եւ ինչո՞ւ ուղղակիօրէն եւ ամէն անձէ առաջ պէտք է Աստուծոյ դիմել. որովհետեւ ամէն բանէ առաջ մենք Աստուծոյ դէմ է որ կը մեղանչենք, յիշեցէք որ երբ կրտսեր որդին որոշեց տունէն հեռանալ, առաջին գործը որ ըրաւ, դարձաւ իր հօրը եւ ըսաւ. «Հա՛յր, բու ստացուածքէդ ինծի ինկած բաժինը հիմա՛ տուր ինծի»: Այս խօսքը ոեւէ բան ըլլալէ կամ ոեւէ իմաստ ունենալէ առաջ՝ նախ մեղանչում է Աստուծոյ եւ անոր հայրութեան դէմ:

5.- «Եւ ըսեմ իրեն.- "Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ բու որդիդ կոչուելու. զիս բու գործաւորներէդ մէկը նկատէ"»: Կրտսեր որդիին այս բառերը խոստովանանք են: Զկա՛յ փրկութիւն առանց անկեղծ ապաշխարութեան եւ մեղքերու խոստովանութեան: Անկեղծ գոչումին ու ապաշխարութեան՝ ա՛նպայման պէտք է ընկերանայ անկեղծ խոստովանանք: Կրտսեր որդիին նման, առաջին, նախ պէտք է խոստովանիմք որ մենք մեղք գործեցինք Աստուծոյ հայրութեան դէմ: Երկրորդ, պէտք է խոստովանիմք որ Աստուած մեր հայրն է: Երրորդ, պէտք է խոստովանիմք որ մեր գործած մեղքերուն եւ ապստամբութեան համար մենք արժանի չենք Աստուծոյ զաւակները կոչուելու: Չորրորդ, պէտք է խոստովանիմք որ հազիւ թէ գործաւորի դիրք ունենալու արժանի ենք:

6.- «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ»: «Հա՛յր...»: Քրիստոս սոյն բառին գործածութեամբ կ'ուզէր սորվեցնել հրեաներուն եւ մեզի, թէ Աստուած Հա՛յրն է մարդկութեան, եւ ուստի, Աստուծոյ դէմ մեղանչողը՝ իր հա՛յրն է որ վիրաւորած կ'ըլլայ: Պատիկ ու պարզ բան մը չէ գԱստուած կոչել մեր Հայրը: Եղիշէ Պատմիչ կ'ըսէ. «Մարդոց տրուած բոլոր պարգեւներէն աւելի մեծ պարգեւ մըն է Աստուծոյ Հայր ըլլալը մարդոց: Հրեշտակները գԱստուած Հայր կոչելու իշխանութիւն չունին. անոնք թէպէտ հօր եւ հոգեւոր, սակայն սպասաւորներ են եւ ոչ՝ որդիներ: Ո՛վ մարդ, զգուշացիր անձիդ համար, տես թէ ինչպիսի պատիւով մեծարուեցար՝ մինչեւ իսկ գԱստուած քեզի Հայր կոչելու իշխանութիւն ստացար. ուստի այս եւս խորհիր, որ դուն քեզ Հօրը պատիւին համաձայն պահես, որպէսզի վերիններն ու ստորինները իմանան, թէ արդարեւ Աստուծոյ որդի ես»:

7.- Անառակ որդիին ակնկալութիւնը իր հօրը տան մէջ գեթ ծառայի մը դիրք ունենալն էր: Ան որոշած էր իր հօրը ըսել. «Արժանի չեմ բու որդիդ կոչուելու. զիս բու գործաւորներէդ մէկը նկատէ»: Ան

կ'անդրադառնա՞ր որ ոեւէ մարդ որ այնքան մեղանչած էր իր հօրը դէմ, բնականօրէն պիտի չուզէր եւ պիտի քաշուէր ինքզինք Աստուծոյ որդին կոչել: Հոսկէ կը սորվինք, թէ մեղքը մեր երկնաւոր Հօր եւ մեր յարաբերութիւնը կը դադրեցնէ հօր եւ որդիի յարաբերութիւն ըլլալէ եւ զանիկա կը վերածէ վարպետի ու գործաւորի յարաբերութեան, դատաւորի ու դատապարտեալի յարաբերութեան, իշխանի եւ իշխուածի յարաբերութեան:

Թէպէտ անառակ որդին որոշած էր իր հօրը ըսել թէ ինք արժանի չէր իր որդին կոչուելու, եւ թէ ինք լոկ գործաւոր մը պէտք էր սեպուէր, ինչպէս տուեալ համարը ցոյց կու տայ, եւ սակայն, յատկանշական է որ երբ ան հանդիպեցաւ իր հօրը եւ յիշեց որ ինք արժանի չէր անոր որդին կոչուելու, հայրը թոյլ չտուաւ որ ան շարունակէր իր նախադասութիւնը եւ ինքզինք «գործաւոր» կամ «ծառայ» կոչէր (Ղկ 15.21): Ինչո՞ւ արդեօք: Այստեղ Քրիստոս կ'ուզէ սորվեցնել մեզի, թէ Աստուծոյ դարձող մարդը ալ պէտք էր դադրէր ինքզինք Մովսիսական Օրէնքին ծառան ու գործաւորը նկատելէ: Աստուծոյ դարձող մարդը անոր որդին ըլլալու ակնկալութեամբ պէտք է դառնայ:

Անառակ որդին ինքզինք հայեացքով դադրած էր որդի ըլլալէ: Բայց իր հօր վերաբերմունքը իրեն հանդէպ բոլորովին տարբեր էր: Իր հայրը չվերաբերեցաւ իրեն հետ ինչպէս մենք պիտի վերաբերէինք մեզմէ փախած եւ մեզի դարձած մեր դաւաճան ծառային հետ: Հայրը չէր կրնար հոգեւոր դարձ ունեցած իր զակին ծառայի դիրք տալ: Ան չէր կրնար մեղքի ծառայութենէն ազատագրուած իր որդին այլ տեսակի ծառայութեան մղել: Հայրը իր հայրական պարտականութիւնն էր որ կատարեց երբ իր որդիին որդիական պատիւ ու հանգամանք պարգեւեց:

Հոսկէ կը սորվինք երկու բան.– 1) Ով որ կը դադրի մեղքի ծառայ ըլլալէ՝ կը դառնայ Աստուծոյ որդի, եւ 2) Աստուած մեզ միշտ ալ փրկութեան արժանի որդիներ կը նկատէ թէպէտ մենք կրնանք մենք զմեզ արժանի չնկատել: Աստուծոյ ակնկալութիւնը այն է, որ խստութենէ աւելի գո՛ւթ ցուցաբերենք մեր անձերուն նկատմամբ: Երբեմն մարդիկ իրենք իրենց անձերուն կամ ուրիշներուն նկատմամբ աւելի՛ խիստ են քան Աստուած ինք: Ինչպէս մեղք է ուրիշները փրկութեան անարժան նկատելը, այնպէս ալ մեղք է մեր անձերը փրկութեան անարժան նկատելը: Մեր անձերուն դէմ մեղք գործելն ու ուրիշներուն դէմ մեղք գործելը հաւասարապէս դատապարտելի են Աստուծոյ աչքին:

«Ապա ելաւ եւ հօրը քով գնաց» (Ղկ 15.20): Որոշում առաւ դառնալու իր հօրը քով եւ անմիջապէս իր որոշումը գործադրեց: Ո՛չ յետաձգելու մասին մտածեց եւ ո՛չ ալ քանի մը օր մտածելու նստաւ: Իր

այս վերաբերմունքով, կրտսեր որդին սորվեցուց մեզի որ երբ կ'որոշենք ապաշխարել, երբ Սուրբ Հոգիին ամենէն պզտիկ հպումն անգամ կը գգանք մեր սիրտերուն մէջ, պէտք չէ յետաձգենք ապաշխարութիւնը: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը» (Բ.Կր 6.2): Անհաշիւ է թիւը այն մարդոց որոնք ապաշխարութեան գործը յետաձգած ըլլալուն համար յաւիտենապէս կորսուած են:

«Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց զայն, վիզին փաթթուեցաւ եւ համրուեց» (Ղկ 15.20): Այս համարին վերաբերեալ ընդարձակ կերպով պիտի խօսինք եւ կարելոր հաստատումներ պիտի ընենք.---

1.- Առակին այս համարը ամենէն սրտառուչ եւ ամենէն սրտախօս համարն է, որովհետեւ Յիսուս տուեալ համարով, կարելոր նշմարտութիւններ կ'ուզէր սորվեցնել հրեաներուն եւ անոնց ընդմէջէն մեզի, մեր երկնաւոր Հօր նկարագիրին մասին: Հրեաներ Աստուծոյ մէջ աւելի կը տեսնէին վրէժխնդիր եւ խիստ մէկու մը ներկայութիւնը քան զիրենք սիրող եւ իրենց փրկութիւնը հետապնդող Փրկիչին ներկայութիւնը: Բրիստոս այս առակին պատումով ընդհանրապէս, եւ այս համարին բառերով մասնաւորաբար, կու գայ բացայայտելու հրեաներուն, որ Աստուած վրէժխնդիր Աստուած մը չէ, ընդհակառակը, գթառատ է, անոխակալ է, մեղաւորները ներող եւ զոջացեալները քաղող Աստուած է, վիրաւորները բուժող եւ ինկածները վերականգնող Աստուած է:

Աստուած մեզ սիրող Հայր է եւ իբր այդպիսի՛ն ան կ'ուզէ քանջուիլ, սիրուիլ, պաշտուիլ ու պատուելի մեր կողմէ: Այս է ինչ որ ցոյց կու տայ Աստուծոյ խօսքը Մաղաքիա մարգարէին միջոցաւ ըսուած. «Եթէ ես հայր եմ, իմ պատիւս ո՞ր է» (Մղ 1.6): Աստուծոյ ակնկալութիւնն է որ իրեն հետ վերաբերինք ինչպէս պիտի վերաբերէինք գուրգուրալից հօր մը հետ: Ամէն նշմարիտ հայր արժանի է պատիւի ու սիրոյ: Ան որ կ'ընդունի Աստուծոյ նշմարիտ Հայր ըլլալը՝ պէտք է ամբողջ սիրով, ամբողջ հաւատով կապուի իրեն եւ ամբողջական պատրաստակամութիւն յայտնէ լիովին իր կամքը կատարելու:

2.- «Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք...»: Եթէ երբեք հայրը տան մէջ նստած եւ տան դուռը ինքնիր վրայ կղպած ըլլար, կամ եթէ երբեք ուրիշ բանով մը զբաղած կամ մտահոգուած ըլլար, ան պիտի չկարենար նշմարել իր որդիին վերադարձը: Հայրը դուրսն էր, աչքը քամբան, կը սպասէր իր որդիին վերադարձին: Որդին ի՛նքն էր հօրը սպասումի եւ սիրոյ առարկան: Որդին ի՛նքն էր հօրը հետաքրքրութեան եւ հոգատարութեան առարկան:

Ինչո՞ւ արդեօք Քրիստոս կը ներկայացնէ հայրը իր տունէն դուրս: Ի՞նչ կը սորվեցնէ մեզի այս իրողութիւնը Աստուծոյ մասին: Կը սորվեցնէ այն, որ Աստուած ինքնիր պատեանին մէջ քաշուած՝ ինքնամփոփ եւ ինքնավախճան կեանք մը չէ որ կ'ապրի: Կը սորվեցնէ մեզի որ Աստուած պարզապէս երկինքի մէջ բնակող եւ մարդկային ցեղին հետ կապ եւ յարաբերութիւն չունեցող Աստուած մը չէ: Ան մեր առօրեայ կեանքէն անտեղեակ եղող Աստուած մը չէ: Ան դո՛ւրս կը գտնուի երկինքէն: Ան դո՛ւրս կը գտնուի իր պատեանէն: Անոր աչքը կը հսկէ մեր նամբաներուն վրայ: Ան կը սպասէ մեր տուն վերադարձին: Եւ սակայն, Աստուած պարզապէս տան դուռին առջեւ նստած սպասողական վիճակի մը մէջ չէ որ կը գտնուի, այլ՝ ան ոտքի՛ է, կը փնտռէ մեզ մեղքի փոշոտ ու փշոտ նամբաներուն վրայ, սէր եւ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ մեզի հանդէպ, կ'աշխատի ու կը տփնի մեզ իրե՛ն մօտեցնել, պատեհութիւններ եւ առիթներ կը ստեղծէ մեզ իրե՛ն դարձնելու:

Սիրելի՛ ընթերցող, նիշդ է որ Աստուած «տունէն դուրս» մեզի սպասող Աստուած է, բայց ո՛հ, ժամանակ պիտի գայ երբ Աստուած տուն պիտի մտնէ եւ դուռը փակէ: «Փեսան եկաւ, եւ պատրաստ եղողները փեսային հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ» (Մտ 25.10): Քրիստոսի փրկարար շնորհքին դուռը բա՛ց է: Մտի՛ր այդ դռնէն ներս երբ տակաւին չէ փակուած: Ժամանակ պիտի գայ երբ Քրիստոսի շնորհքի դուռը պիտի գոցուի եւ դատաստանի դուռը պիտի բացուի:

3.- Երբ կ'ըսուի որ հայրը տունէն դուրս է, ըսել կ'ուզուի որ մեր երկնաւոր Հայրը ի՛նք երկինքէն դուրս է: «Աստուած երկինքէն դուրս է» ըսելով կը հասկնանք երկու բան. –

ա.– Կը հասկնանք, ինչպէս ըսի, թէ Աստուած երկինքի մէջ բնակող եւ աշխարհին հետ կապ չունեցող Աստուած մը չէ: Աստուած ո՛չ միայն ստեղծողն է մարդկութեան ու աշխարհին, այլեւ՝ նախախնամողն ու հոգատարն է անոնց:

բ.– Աստուած երկինքէն դուրս կը ներկայացուի, որպէսզի ցոյց տրուի մեզի, որ ան տարուելով սերովբէներուն ու քերովբէներուն, հրեշտակներուն ու հրեշտակապետներուն կողմէ իրեն ուղղուած փառաբանութիւններէն ու օրհներգութիւններէն՝ չէ մոռցած ու չի մոռնար իր ստեղծած հողեղէն արարածները որոնք իր կարիքը ունին:

Մարդիկ այդպէս չեն: Մարդիկ երբ քիչ մը բարձրանան ու մեծարւին, երբ քիչ մը ծափահարուին ու փառաբանուին՝ կը մոռնան իրենց նմանները, կը մոռնան յատկապէս ինչո՞ք, աղփատները, տկարները, եւ ո՛չ միայն կը մոռնան, այլեւ՝ կ'անտեսեն զանոնք, կը նզովեն զանոնք:

4.- «Տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք»: Տունը երկինքն է որ կը պատկերացնէ: Այս իմաստով «տունէն բաւական հեռու» իսո՞ւք, պէտք է հասկնալ՝ «երկինքէն հեռու» իմաստով: Սա ցոյց կու տայ որ երբ տակաւին մեղաւորները հեռու են երկինքէն՝ մեր երկնաւոր Հայրը կը տեսնէ զանոնք: Աստուած կը տեսնէ մեղաւորը երբ տակաւին անիկա հեռու է իրմէ, երբ տակաւին իր կամքը չի կատարեր: Մենք մի՛շտ հակառակն ենք: Մենք մեզմէ հեռու եղող մարդիկը չենք տեսներ, այլ իսո՞ւքով՝ մեզի հետ չգործակցող, մեզի բարեկամ չեղող, մեր կամքը չկատարող մարդիկը չենք տեսներ, կ'անտեսենք: Պէտք է Աստուծմէ օրինակ առնենք եւ իրմէ սորվինք տեսնել թէ՛ մեզի մօտիկ եղողը եւ թէ՛ մեզմէ հեռու եղողը: Պէտք է սիրենք թէ՛ մեր կամքը կատարողները եւ թէ՛ մեր կամքին համաձայն չապրողները: Մենք չենք կրնար եւ իրաւունք չունինք ստիպելու մարդիկը որ ապրին մեր կամեցածին պէս, գործեն մեր կամեցածին պէս, կամ մտածեն մեր կամեցածին պէս: Անառակ որդիին հայրը ստիպե՞ց իր որդիին որ բովը մնայ. ստիպե՞ց որ իր կամքը կատարէ: Ո՛չ: Սա ցոյց կու տայ որ Աստուած կը յարգէ մարդուն ազատ կամեցողութիւնը, կը յարգէ անոր ապրելակերպը: Եթէ Աստուած յարգանք ունի մարդուն ազատ կամեցողութեան նկատմամբ՝ մենք ի՞նչպէս կրնանք չյարգել մարդուն ազատ կամեցողութիւնը:

5.- «Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք»: Հայրը չտեսաւ իր որդին միայն այն ատեն երբ անիկա սկսաւ տունին մօտենալ, այլ տեսաւ զանիկա նոյնիսկ երբ ան տակաւին կը գտնուէր այդ «հեռու երկրին մէջ»: Ամէն անգամ որ անտեսուած զգանք, յիշենք որ մենք ամենատես Աստուծոյ մը զաւակներն ենք, յիշենք որ Աստուած կը տեսնէ մեզ թէպէտ կրնանք մեղքի իբրեւ հետեւանք շատ «հեռու երկիրներու» մէջ ըլլալ: Աստուած չ'սկսիր մեզ տեսնելու միայն այն ատեն երբ իրեն մօտենանք եւ իր թագաւորութեան անդամագրուինք: Աստուած «ամենատես» կը կոչուի անոր համար որ ան կը տեսնէ իրեն մօտիկ եղողներն ու իրմէ հեռու եղողները:

Հայրը մօտիկ էր իր անառակ որդիին երբ ան կը գտնուէր այդ «հեռու երկրին» մէջ: Որքան ալ «տունէն հեռու» ըլլանք, որքան ալ մեղքը մեզ հեռացուցած ըլլայ Աստուծոյ թագաւորութենէն, որքան ալ սառած ու անդամալուծուած ըլլայ մեր յարաբերութիւնը Աստուծոյ հետ, որքան ալ չ'անդրադառնանք Աստուծոյ պաշտպանարար եւ օրհնեալ ներկայութեան մեր կեանքերուն մէջ, մէկ բան վստահ պէտք է գիտնանք, որ Աստուած մի՛շտ մեր կողքին է, մի՛շտ կը բաղիտ մեր սիրտերուն դուռը, մի՛շտ առիթներ կ'ընծայէ որպէսզի իրեն դառնանք,

տեսակ-տեսակ միջոցներով կը ջանայ մեր ուշադրութիւնը գրաւել, բազմաթիւ կերպերու կը դիմէ մեզ տուն բերելու, այլ խօսքով՝ հոգեւոր արթնութեան առաջնորդելու համար:

6.- «Հայրը տեսաւ զինք ու գթաց»: Մեզմէ որո՞ւն սրտին չի խօսիր «տեսաւ» բառը: Հայրը ի՞նչ բան տեսաւ: Հայրը իր որդին իբրեւ մարմին միայն չէր որ տեսաւ: «Հայրը տեսաւ» բառերը կ'ապացուցանեն որ հայրը լաւապէս ծանօթ էր անոր վշտահար հոգիին, սգաւոր սրտին, ալեկոծ միտքին, անոր խղճահարութեան եւ վարանումներուն:

Տակաւին, «տեսաւ» կը նշանակէ գիտցաւ անոր քաջած տառապանքն ու նեղութիւնը: «Տեսաւ» կը նշանակէ ցանցցաւ զանիկա իր տկարութիւններով եւ ընկրկումներով: «Տեսաւ» բացատրութիւնը ցոյց կու տայ որ ոչինչ վրիպած էր հօրը ուշադրութենէն եւ թէ հայրը տեղեակ էր ամէն բանէ ամէն իմաստով: Շատ յստակ է թէ ի՞նչ է որ կը սորվինք այստեղէն մեր սիրելի երկնաւոր Հօր մասին: Կը սորվինք այն, որ ան քաջատեղեակ է մեր կրած ցաւերուն ու նեղութիւններուն, մեր ապրած ներքին պայքարին ու խռովին: Միտքարութիւն չէ՞ մեզի համար գիտնալ, որ այն Աստուածը որուն կը պաշտենք տեսնող Աստուած է, մեզ մեր վիշտերով ու տառապանքներով ցանցցող Աստուած է, մեր գորումներուն համար մեզ չդատապարտող Աստուած է:

Եւ տակաւին, հայրը տեսաւ գթութեան կարօտ իր որդին: Ահա թէ ինչու կ'ըսուի. «տեսաւ... ու գթաց»: Մարդիկ կրնան տեսնել իրենց եղբօր կամ քրոջ դժբախտութիւնը բայց չգթալ, բայց մեր երկնաւոր Հայրը այդպիսին չէ: Աստուած տեսնող աչք ու գթացող սիրտ ունի: Հայրը մանաւանդ տեսաւ իր որդիին գոշումն ու ապաշխարութիւնը: Տեսաւ մեղքէն ձերբազատելու անոր փափաքը եւ վագեց: Այստեղ «վագեց» կը նշանակէ գնահատեց, քաջալերեց, գորավիգ կեցաւ: Ի՞նչ է պատգամը այս կէտին: Երբ Աստուած մեր մօտ տեսնէ մեղքէն ձերբազատելու փափաք ու ճիգ՝ կը գնահատէ մեզ, այլ խօսքով՝ գորավիգ ու օգնական կ'ըլլայ մեզի: Փրկութեան ձգտող ու փափաքող մարդը չի կրնար կորսուիլ:

7.- «Հայրը տեսաւ զինք ու գթաց»: Հայրը անդրադարձաւ որ իր որդին գթութեան եւ գորովալից վերաբերմունքի պէտք ունէր եւ ո՛չ թէ քննադատութեան եւ պախարակումի: Որքա՞ն կարեւոր է գիտակցիլ որ տապալած ու տագնապած մարդը, թշուառացած ու դժբախտացած մարդը, մեր միտքարութեան ու քաջալերութեան պէտք ունի, մեր յուսադրիչ ու գօտեպնդիչ խօսքին կարիքը ունի: Լոկ բառ մը կամ ժպիտ մը կրնայ յեղաշրջել վշտաբեկ մարդու մը կեանքը, կրնայ ոտքի վերականգնել իյնալու վրայ եղողը:

8.- «Հայրը տեսաւ զինք ու գթաց»: Աստուծոյ նայուածքը գթութեամբ եւ սիրով լեցուն նայուածք է: Անոր նայուածքը մարդու կեանքին մէջ սխալներ փնտոող նայուածք մը չէ: Անոր նայուածքը դատապարտեալը փնտոող դատաւորի մը նայուածքը չէ: Աստուծոյ նայուածքը ինկած մարդուն մէջ վերականգնեցուելու կարիքը ունեցող մարդը կը տեսնէ: Աստուծոյ նայուածքը օրհնեալ նայուածք է, որովհետեւ ան կը տեսնէ օրհնութեան կարօտ անձերը: Ան կը տեսնէ կոտրած հոգի ունեցողները, բուժում փնտոող սիրտերը, հանգիստ եւ խաղաղութիւն աղերսող կարեւորները:

Պախարակել թշուառութեան մէջ ապրող մարդը, պիտի նշանակէր զինք ամբողջական յուսահատութեան մատնել: Ո՞վ երբեւիցէ կրցած է դառն բառերով խաղաղեցնել դառնութեամբ լեցուն մարդու մը սիրտը: Քրիստոնեայ մարդուն կոչումը չէ՞ քաղցր ներկայութիւն մը ըլլալ իր քաղցրութիւնը կորսնցուցած այս աշխարհին մէջ: Քրիստոնեայ մարդուն ներկայութիւնը սփոփարար ներկայութիւն պէտք է ըլլայ:

Այսօր մարդիկ ամէն բանէ աւելի կարեկցողներու պէտք ունին: Կարեկցող ու գթացող մարդիկ փնտոուած են բոլոր ժամանակներուն: Ասկէ շուրջ 3000 տարիներ առաջ Դաւիթ մարգարէն ըսած է. «Գթացող մը փնտոեցի, բայց չկար: Միտիթարիչ մը փնտոեցի, բայց չգտայ» (Սղ 69.20): Որպէսզի կարենանք միտիթարել մեր նմանը, նախ մե՛նք Քրիստոնեայի գալու ենք եւ Քրիստոսով միտիթարուելու ենք: Մեղքով սգաւոր դարձած մարդ մը չի՛ կրնար միտիթարել մեղքով սգաւոր դարձածները: Աստուծոյ գաւակները դարձած մարդի՛կ միայն կրնան Աստուծոյ նման միտիթարար հոգի, տեսնող աչք եւ գթացող սիրտ ունենալ:

9.- «Վագելով դիմաւորեց գայն»: Ուշագրաւ է որ հայրը չորկեց իր ծառաներէն մին իր կրտսեր որդիին դիմաւորութեան համար, այլ ինք անձամբ գնաց: Այս իրողութիւնը ցոյց չի՞ տար որ Աստուած ինք անձամբ նորադարձներուն դիմաւորութեան կու գայ: Լսուա՞ծ բան է որ թագաւոր մը վագէ իր ծառան դիմաւորելու համար, մանաւանդ եթէ երբեք իր ծառան ապերախտ ու դաւաճան ծառայ մըն է: Անսահման պատիւ մը չէ՞ մեզի համար անսահման Աստուծոյ կողմէ դիմաւորուիլը: Միայն անառակ որդիին առակը չէ որ այս ցշմարտութիւնը կը բացայայտէ: Յիշեցէք որ մարդկութեան փրկագործութեան համար Աստուած աշխարհ չորկեց հրեշտակ մը, այլ ինք անձամբ եկաւ (Յհ 3.16): Աշխարհի վախճանին նաեւ ինք անձամբ պիտի գայ (Ա.ԹԿ 4.16): Յայտնութեան գիրքին 3.20-ի «Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղխեմ...» խօսքը նաեւ ցոյց չի՞ տար որ Աստուած ինք անձամբ կը դիմաւորէ նորադարձը, ինք անձամբ կը հետապնդէ մարդուն փրկութիւնը:

10.- «Վագելով դիմաւորեց գայն»: Վագելու գործողութիւնը ցոյց կու տայ հինգ բան.-

ա.- **ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ**: Վագելը, առաջին հերթին, ցոյց կու տայ այն անսահման ուրախութիւնը որ Աստուած կ'ապրի մեր փրկութեան համար: Ինչպէս նաեւ կը պարզէ թէ Աստուած ուրախութեամբ կը հետապնդէ մեր փրկութիւնը: Յիշեցէ՛ք որ բարի Հովիւը՝ Յիսուս, կորսուած ոչխարը գտնելէ ետք՝ գայն «ուրախութեամբ իր ուսերուն վրայ» դրաւ, եւ հրաւիրեց բարեկամներն ու դրացիները որ գան եւ հետը ուրախանան (Ղկ 15.5-6):

Մենք ուրախութեամբ կ'աշխատի՞նք եւ ուրախութեամբ կը վագե՞նք մարդոց փրկութեան համար: Ուրախութեամբ կը լեցուի՞նք երբ մարդիկ Քրիստոսի հաւատքը կ'ընդգրկեն: Կ'ուրախանա՞նք երբ մարդիկ դարձի կու գան:

բ.- **ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ**: Վագելը՝ ցոյց կու տայ Աստուծոյ պատրաստակամութիւնը փրկելու մարդը: Աստուած մի՛շտ պատրաստ է փրկելու մարդը: Զի՛ կրնար ըլլալ որ մարդը ուզէ դարձի գալ Տիրոջ եւ Տէրը անպատրաստ ըլլայ զինք փրկելու:

Մենք պատրաստակա՞մ ենք ընելու ոեւէ բան ի խնդիր մարդոց փրկութեան: Պատրա՞ստ ենք վագելու ու ֆրտնելու մարդոց փրկութեան համար: Պատրա՞ստ ենք հալածանք ու նեղութիւն կրելու մարդոց փրկութեան համար:

գ.- **ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ**: Վագելը՝ ցոյց կու տայ Աստուծոյ կարողութիւնը փրկելու մարդը: Աստուած ոչ միայն կ'ուրախանայ մեր փրկութեան համար, ոչ միայն պատրաստ է մեզ փրկելու, այլեւ՝ կարո՞ղ է մեզ փրկելու: Եթէ Աստուած անկարող ըլլար փրկելու մարդը՝ պիտի չվագէր դէպի ինկածը: Երբ Աստուած վագէ մեր փրկութեան համար՝ մեր փրկութիւնը ապահով ու անխուսափելի կ'ըլլայ:

Մենք մեր ամբողջ կարողութիւնները ի գործ կը դնե՞նք մարդոց փրկութեան համար: Մեր կարողութիւնները ի գործ կը դնե՞նք Աստուծոյ թագաւորութեան տարածման համար:

դ.- **ԿԱՐՕՏ**: Վագելը՝ ցոյց կու տայ Աստուծոյ կարօտը իրմէ հեռու գտնուող մարդոց հանդէպ: Ինչպէս երբ հայր մը կամ մայր մը նշմարէ վերադարձը տարիներէ ի վեր իրմէ հեռացած իր զակին՝ կարօտի զգացումը պատճառ կ'ըլլայ որ վագէ դէպի իր զաւակը, նոյնպէս ալ, Աստուած երբ տեսնէ իրմէ հեռու եղող մարդը՝ կը մօտենայ իրեն, կը վագէ դէպի անոր կողմը:

Ինչպէս Աստուած կը տոչորի մեղաւոր մարդոց դարձի գալուն կարօտով եւ մանաւանդ դարձի եկողներուն կարօտով, մենք եւս կը

տոչորի՞նք մեր նմաններուն կարօտով, զանոնք փրկութեան համբուն մէջ տեսնելու կարօտով, զանոնք Աստուծոյ արքայութեան մէջ տեսնելու կարօտով:

Ե.- **ՍԵՐ:** Վագելը՝ ուրախութեան, պատրաստակամութեան, կարողութեան եւ կարօտի արտայայտութիւն ըլլալէ առաջ, նախ սիրոյ արտայայտութիւն է: Վագելը հետեւաբար, ցոյց կու տայ Աստուծոյ անչափ սէրը չափաւորներուս հանդէպ, անսահման սէրը սահմանաւորներուս նկատմամբ: Սէ՛րն է որ զԱստուած կը վագեցնէ մեղաւորներուն փրկութեան համար:

Ունի՞նք մեք աստուածային այն սէրը որ կրնայ մեզ վագեցնել մեր նմանին փրկութեան համար: Կը սիրե՞նք մեր նմանը: Կը սիրե՞նք զայն փրկուած տեսնել: Ան որ չի սիրեր իր նմանը փրկուած տեսնել՝ չի կրնար ինք փրկուած մէկը ըլլալ: Աստուած չի փրկեր մէկը որ ուրիշներուն փրկութեան հանդէպ անտարբեր է:

11.- «Վագելով դիմաւորեց զայն»: Հայրը ո՛չ միայն «տեսաւ», ո՛չ միայն «գթաց», այլեւ՝ «վագեց»: Բայց ինչո՞ւ վագեց: Զվագե՛ց որպէսզի երթար եւ խեղդէր ցաւերու մէջ խեղդուած իր որդին: Զվագե՛ց որպէսզի երթար եւ յանդիմանէր զանիկա: Զվագե՛ց նոյնիսկ որպէսզի երթար եւ ապերախտ ու դաւաճան կոչէր զայն: Այլ վագե՛ց, որպէսզի երթար եւ միտքարէր անոր անմիտքար հոգին, բուժէր անոր տառապած սիրտը եւ խաղաղեցնէր անոր ալեկոծ խիղճը:

Հոսկէ կը սորվինք այն, որ Աստուած չի՛ խոցոտեր բուժուելու համար իրեն մօտեցող մարդը: Կարելի՞ քան է որ մեր ցաւերն ու վիշտերը իր վրայ Առնողը մեզ ցաւցնէ ու վշտացնէ (Ես 53.4): Կարելի՞ քան է որ մեզի համար Վիրաւորուողը մեզ վիրաւորել ուզէ (Ես 53.5): Առակը յստակօրէն ցոյց կու տայ, որ ոեւէ մէկը որ դարձի գայ Աստուծոյ, Աստուած անկէ հաշիւ պիտի չպահանջէ իր գործած մեղքերուն համար: Դարձի եկող մարդուն մեղքերը առ յաւէտ մոռցուած են: Աստուած խօսելով դարձի եկող մարդուն մասին, կ'ըսէ. «Անոր գործած յանցանքներէն ո՛չ մէկը պիտի յիշուի» (Եզ 18.22):

12.- «Հայրը... վագելով դիմաւորեց զայն»: Ի՞նչ սփոփանք գիտնալ որ Աստուած մեր դիմաւորութեան համար դէպի մեր կողմը վագող Աստուած է: Այո՛, ան մեր փրկութեան համար վագո՛ղ Աստուած է: Ան տեղեւոյ ընող Աստուած մը չէ: Ան ինքնիւր տեղը կեցած, անտարբեր եւ անփոյթ եղող Աստուած մը չէ: Ան պարզապէս անզիջ մեղաւորին համար սգացող ու ողբացող Աստուած մը չէ: Կը բաւէ որ Աստուծոյ դառնալու փափաք ունենանք, եւ ահա Աստուած պիտի տեսնէ մեզ եւ վագէ դէպի մեր կողմը՝ մեզ իր գիրկին ջերմութեան մէջ ընկղմելու:

Աստուած մեզ իր գիրկին ջերմութեան մէջ առնելու ջերմ փափաք ունի: Թոյլ տանք որ Աստուած կատարէ իր փափաքը:

13.- «Հայրը... վագելով դիմաւորեց գայն»: Հետաքրքրական է որ հայրը ի՛նքն էր դէպի իր որդին վագողը եւ ո՛չ թէ որդին դէպի իր հայրը: Որդին դէպի իր հայրը վագելու համարակութիւնը կորսնցուցած էր իր գործած մեղքերուն պատճառով: Ամօթխածութիւնն ու վարանումը լեցուցած էին անոր սիրտը: Ահա թէ ինչո՛ւ հայրը չսպասեց որ իր որդին տան մօտենար, չսպասեց նայելու թէ իր որդին ի՛նչ ըսելիք ունէր, ան նոյնիսկ չսպասեց որ իր որդին գար եւ խոստովանէր իր յանցանքը եւ ներում խնդրէր իր գործած մեղքին համար, այլ վագեց դէպի անոր, գրկեց զինք եւ սեղմեց իր կուրծքին որպէսզի ջերմացնէր մեղքի իբրեւ հետեւանք ցրտացած անոր հոգին: Հայրը իր որդիէն ուրիշ պահանջելիք չուներ եթէ ոչ միայն դարձ, ցշմարիտ դարձ, յաւիտենական դարձ:

Անիծեալ ըլլայ մեղքը որ կը դանդաղեցնէ եւ անհամարակ կը դարձնէ մեր սիրոյ վագքը առ Աստուած: Անիծեալ ըլլայ մեղքը որ պատճառ կը հանդիսանայ որ ամօթահար կանգնինք Աստուծոյ դիմաց: Եւ օրհնեալ ըլլայ Աստուած, որ մեր գործած մեղքերն է որ կ'անտեսէ եւ ո՛չ թէ մեզ: Աստուած երբե՛ք չ'ամչցներ իրեն դարձող մարդը: Ինչպէս անառակ որդիին հայրը դարձի եկող իր որդիին վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց, այնպէս ալ մեր երկնաւոր Հայրը իր գիրկը կ'առնէ ոեւէ մէկը որ դարձի կու գայ՝ առանց նայելու թէ ան որքա՛ն աղտոտած է մեղքի տիղմով եւ սեւցած՝ յանցագործութեան մուրով:

14.- «Վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց»: Կրտսեր որդին խոզանոցէն եկած է: Բոլորս ալ գիտենք որ հոնկէ եկողը գարշելի կերպով կը հոտի, մանաւանդ եթէ երբեք խոզերուն կերած եղջիրներէն ուտող մէկն է: Հակառակ ասոր, հայրը չգարշեցաւ ու չզգուեցաւ անկէ: Ընդահակառակը, վագեց ու «Վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց»:

Ի՞նչ է պատգամը այս կէտին: Մեր երկնաւոր Հայրը չի՛ գանիր մեզմէ որքան ալ գարշահոտած ըլլանք մեղքերով: Ան չի՛ նմանիր մարդոց որոնք կրնան խորշիլ մերձենալու ու փաթթուելու շարաւածածկ կամ տիղմածածկ կամ մրոտած անհատներու: Աստուած ո՛չ ոք գարշելի կը սեպէ, ո՛չ ոք փրկութեան անարժան, ո՛չ ոք հոգեւորապէս վերստին ծնելու անատակ: Մեղքի նետահարումներուն հետեւանքով մեր հոգիներուն մէջ գոյացած վերքերուն Աստուած կը մօտենայ մասնագէտ բժիշկի մը նման. բժիշկ մը՝ որուն քով չկայ յանդիմանանքի խօսքեր, բիրտ իստապահանջութիւն, կծու լեզու, մերժողական կեցուածք եւ անտարբեր վերաբերմունք:

Աստուած մեղքերով խոցոտուած մարդոց կը մօտենայ շնորհքի բալասանով եւ Քրիստոսի գիրկին կատարեալ քաղցրութեամբ: Աստուած կրկնակի կարմիրի պէս եղող մեր մեղքերը ձիւնի պէս քերտկցնող Աստուած է (Ես 1.18): Աստուծոյ հետաքրքրութեան առարկան դարձի եկող անհատն է եւ ո՛չ թէ դարձի եկող անհատին գործած մեղքերը:

15.- «Համբուրեց»: Այս բառին համար գործածուած Յունարէն բառը, կը նշանակէ՝ «երկա՛ր համբուրեց», եւ ատիկա ցոյց կու տայ Աստուծոյ սաստիկ կարօտը եւ մեծ սէրը մեզի հանդէպ: Այն սէրը որ Աստուած ունի մեզի հանդէպ՝ մենք ալ ունի՞մք իրեն հանդէպ: Մենք Աստուծոյ ներկայութեան կարօտով կը տոչորի՞մք այնպէս ինչպէս Աստուած մեր ներկայութեան կարօտով կը տոչորի:

«Որդին հօրը քսաւ.- "Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու"» (Ղկ 15.21): Քանի մը հաստատումներ.-

1.- Առաջին յատկանշական իրողութիւնը գոր մեր ուշադրութիւնը պէտք է գրաւէ այն է, որ երբ հայրը լաւապէս դիմաւորեց եւ շերմագինս ողջագութեց իր որդին, որդին երբեք չփորձեց օգտուիլ իր հօրը սիրագեղ վերաբերմունքէն եւ ծածկել իր մեղքերը: Ի՞նչ է որ կը սորվինք այստեղ անառակ որդիէն: Կը սորվինք այն՝ որ պէտք չէ շահագործենք Աստուծոյ սէրը: Եթէ երբեք Աստուած «տունէն դուրս» մեզի սպասող Աստուած է, եթէ երբեք ան մեր դիմաւորութեան համար դէպի մեր կողմը «վագող» Աստուած է, եւ մանաւանդ, եթէ երբեք մեր վիզին փաթթուիլ եւ մեզ համբուրել փափաքող Աստուած է, այս բոլորը չեն նշանակեր որ մենք կրնանք անտարբեր ըլլալ իրեն հանդէպ:

Աստուծոյ սէրը վստահելի սէր է, այո՛, բայց անխոհեմութիւն պիտի ըլլար շահագործել եւ ի գուր վատնել զանիկա: Աստուած իր սէրը ցոյց կու տայ մեզի հանդէպ որպէսզի մեզ դարձնէ իրեն, եւ ո՛չ թէ որպէսզի իր սիրով զինք խոցոտենք ու կսկծեցնենք: Եթէ շարունակենք չպատասխանել Աստուծոյ թակումներուն, ժամանակ պիտի գայ երբ ամբողջութեամբ պիտի բթանան մեր հոգեւոր գգայարանները, եւ մեր ներսիդին լիովին պիտի ցամփի ամէն բարի տրամադրութիւն եւ բարիին բացուելու ամէն կամեցողութիւն:

2.- «Հա՛յր, մեղանչեցի...»: Ի՞նչ ցոյց կու տայ «մեղանչեցի» բառը: Յոյց կու տայ որ անառակ որդին համարձակութիւնը ունեցաւ մեղքը իբրեւ մե՛ղք որակելու: Ան երբեք չմտածեց իր սխալը քողարկելու մասին, երբեք չփնտոցեց միջոցներ ինքզինք արդարացնելու, չպատրաստեց չմեղանքի բառեր, իր մեղանչումին պատճառը ուրիշին չվերագրեց, ինչպէս ըրած էին Ադամ ու Եւա, այլ որոշեց իր հօրը գալ եւ

խոստովանիլ թէ ինք մեղանչած էր անոր դէմ, անոր հայրութեան դէմ, անոր գթութեան դէմ, անոր սիրոյն դէմ:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր, որպէսզի կարենանք Աստուծոյ դառնալ, շատ կարեւոր է որ անառակ որդիին նման խոստովանիմք որ մե՛ղք է որ գործած ենք Աստուծոյ դէմ, որ մեր մեղք գործելուն պատճառը միայն ու միայն մե՛նք ենք եւ ո՛չ թէ ուրիշը: Անառակ որդիէն ստրվիմք մեղքը իբրեւ մեղք բնութագրելու: Չփորձենք մեղքը անմեղ գոյներով ներկայացնել: Մեղմաբանութեան չդիմենք երբ մեղքի մասին է որ կը խօսինք: Մեղքին ծանրութիւնը ծածկելու համար միջոցներ չփնտռենք: Կարենալ փշրելու համար լուծը մեղքին, պէտք է յանդգնութիւնը ունենալ հրապարակելու անոր կործանարար բնութիւնը:

3.- «Մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ»: Երկու մատնանշումներ.–

ա.– Քանի որ առակին մէջ յիշուած հայրը նոյնիմքն Աստուած է, ուրեմն, այստեղ յիշուած «քեզի» բառը Աստուծոյ ակնարկութիւն է, եւ հետեւաբար, երբ անառակ որդին կ'ըսէ. «Մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ», խորքին մէջ ըսած կ'ըլլայ. «Մեղանչեցի Աստուծոյ եւ մի՛այն Աստուծոյ դէմ»: Յիշեցէք որ Դաւիթ մարգարէն նաեւ նման խօսք մը կ'արտասանէ. «Քեզի, միայն քեզի՛ դէմ մեղանչեցի, Տէ՛ր» (Սղ 51.4):

Այս իրողութիւնը կը պարզէ, որ ամէն մեղք ուղղակի թէ անուղղակի կերպով Աստուծոյ դէմ գործուած կը նկատուի: Իր նմանին դէմ մեղանչողը՝ Աննմանին դէմ է որ մեղանչած կ'ըլլայ: Արարածը անարգողը՝ Արարիչն է որ անարգած կ'ըլլայ: Ինչպէս զինուոր մը նախատողը անոր զօրավարն է որ նախատած կ'ըլլայ, այնպէս ալ իր նմանը նախատողը՝ զԱստուած է որ նախատած կ'ըլլայ:

Քրիստոս անօթիին տրուած հացը կամ ծարաւին տրուած ջուրը իրեն տրուած չնկատե՞ց (Մտ 25.35): Իր հետեւորդներուն դէմ յարուցուած հալածանքը իրեն դէմ յարուցուած չ'որակե՞ց (Գրծ 9.4): Դաւիթ Ուրիային դէմ իր գործած մեղքը Աստուծոյ դէմ գործուած չնկատե՞ց (Բ.Թ՛գ 12.13): Երբ Պետափրէս դահնապետին կինը բռնադատեց Յովսէփը որ իրեն հետ քնանար, Յովսէփ անոր հետ մեղք գործելը Աստուծոյ դէմ մեղանչել իբրեւ չըմբռնե՞ց (Մն 39.9):

բ.– «Մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ»: Յաւելեալ բացատրութիւն մը եւս այս բառերուն վերաբերեալ: Չմոռնանք որ «քեզի դէմ» բառերը կը պատկանին անառակ որդիին եւ ուղղուած են իր հօրը: «Աստուծոյ» բառը արդէն յստակ է: Հետեւաբար, երբ անառակ որդին կ'ըսէ. «Մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ», խորքին մէջ նաեւ ըսել կ'ուզէ՝ «Մեղանչեցի Աստուծոյ եւ Աստուծոյ հայրութեան դէմ»: Այս

իմաստով, մեղք գործող մարդը, միայն Աստուծոյ դէմ չէ որ մեղք գործած կ'ըլլայ, այլեւ անոր հայրութեան դէմ, անոր պապայութեան դէմ:

4.- «Այլեւս արժանի չեմ թու որդիդ կոչուելու»: Անառակ որդին կ'անդրադառնար որ ինք անգամ մը որ դաւանանած էր իր հօրը սիրոյն եւ սպառած անոր ամբողջ ունեցուածքը, անգամ մը որ կոտրած ու տրտմեցուցած էր անոր սիրտը, այլեւս արժանի չէր «որդի» անունը կրելու: Անառակ որդին ի'նքն էր որ ինքզինքին «որդի» անունը տալու կը փաշուէր եւ ո'չ թէ հայրը: Հայրը ո'չ միայն անուանեց զայն «որդի», այլեւ նկատեց ու ընդունեց զայն իբրեւ «որդի»: Սա իրողութիւնը կը պարզէ որ մենք թէեւ կրնանք մենք գմեզ արժանի չնկատել Աստուծոյ զաւակները կոչուելու, բայց երբ դարձի գանք, Աստուած առանց նայելու մեր արժանաւորութեան, կը մոռնայ անցեալին մէջ մեր գործած բոլոր մեղքերը, ինչպէս մոռցաւ անառակ որդիին մեղքերը, եւ իր Որդիին արիւնով կը մաքրէ մեզ եւ կ'ընդունի իբրեւ իր սիրելի զաւակները:

«Հայրը իր ծառաներուն հրամայեց.- "Անմիջապէս բերէ՛ք լաւագոյն պատմունքներ եւ հագցուցէ՛ք իրեն. մատանի անցուցէ՛ք իր մատին եւ կօշիկ տուէ՛ք իրեն"» (Ղկ 15.22): Քանի մը հաստատումներ.-

1.- «Հայրը իր ծառաներուն հրամայեց...»: Առաջին բանը զոր մեր ուշադրութիւնը պէտք է գրաւէ այն է՝ որ կրտսեր զաւակը իր խօսքը հօրը ուղղեց, բայց հայրը իր խօսքը իրեն չուղղեց, այլ՝ ծառաներուն: Ինչո՞ւ արդեօք: Տուցնելու համար մեզի, թէ Աստուած երկխօսութեան, կամ վէճի, կամ դատի չի նստիր դարձի եկող վշտահար հոգիներուն հետ որոնք հանգիստ կը փնտոեն, գուրգուրալից հայրական գիրկ մը կը փնտոեն: Կարելոր մատնանշում մը: Ինչպէս ներկայիս, Աստուած դատի ու հաշիւի չի նստիր դարձի եկողներուն հետ, այնպէս ալ, դատաստանի օրը, ան իր զաւակներուն հետ դատի պիտի չնստի, հաշիւ պահանջելու համար անոնցմէ իրենց ըրածին ու չըրածին համար: Դատաստանի օրը մարդիկ երկու խումբի պիտի բաժնուին. մէկ խումբը՝ Քրիստոս իր մօտ՝ իր արքայութեան մէջ պիտի առնէ, իսկ միւս խումբը՝ գեհեճի պիտի դատապարտուի: Արքայութիւն առնելը կամ գեհեճի դատապարտելը՝ ինքնին դատաստան ընել կը նշանակէ, ուստի, Աստուած կարիքը չունի մէկ առ մէկ դատի կանչելու: Նոյնիսկ երբ կ'ըսուի, թէ՛ «Իւրաքանչիւրը իր գործերուն համաձայն վարձատրութիւն պիտի ստանայ», այս չի նշանակեր որ դատաստանի օրը գործերը մէկ առ մէկ պիտի յիշուին եւ Աստուած անոնց փոխարէն հատուցում կամ վարձատրութիւն պիտի տայ: Արքայութիւն առնուիլը արդէն իսկ գործերուն համաձայն

վարձատրուիլ կը նշանակէ, նոյնպէս ալ, գեհե՛ն նետուիլը, դարձեալ, գործերուն համաձայն հատուցուիլ կը նշանակէ:

2.- Հայրը դարձի եկող իր որդիին չըսաւ. «Ես քեզի ներած եմ, ես քեզ կը սիրեմ», այլ գործնապէս փաստեց որ ներած էր իրեն: Մենք ալ, միայն խօսքով չըսենք թէ ներած ենք, կամ կը սիրենք, այլ գործնապէս փաստենք որ ներած ենք ու կը սիրենք մեր նմանները, մանաւանդ անոնք՝ որոնք մեզ վշտացուցած են: Ինչպէս հայրը ներեց երբ իր որդին դարձի եկաւ եւ մեղքը խոստովանեցաւ, նոյնպէս ալ մենք, ազնիւ ըլլանք ներելու այն մարդոց որոնք վշտացնելէ ետք մեզի, կ'անդրադառնան իրենց սխալին եւ կու գան ներողութիւն խնդրելու:

3.- «Հայրը իր ծառաներուն հրամայեց...»: Որո՞նք են այստեղ յիշուած ծառաները: Անոնք հրեշտակներն են: Հարկաւ այս չի նշանակեր որ հրեշտակները իրենք են որ «լաւագոյն պատմութեանը», կամ «մատանին», կամ «կօշիկը» կը պարգեւեն դարձի եկող անհատին, կամ իրենք են որ «պարարտ հորթը» կը մորթեն: Եթէ մեզի կ'ըսուի՝ «Հայրը իր ծառաներուն հրամայեց»՝ այդպէս կ'ըսուի, պարգապէս ցոյց տալու համար թէ Աստուած իր հրեշտակները կը դրկէ օգնելու ու ծառայելու անոնց՝ որոնք դարձի եկած են եւ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն: Նոյնը չ'ըսեք Պօղոս առաքեալ. «Հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14):

4.- Դարձի եկող գաւակը իր ակնկալածէն շատ աւելին ստացաւ: Ան տունին մէջ ծառայի դիրք կ'ուզէր պարգապէս, եւ ահա որդիի դիրք տրուեցաւ իրեն: Ան գործաւորի հագուստ կ'ակնկալէր, եւ ահա «լաւագոյն պատմութեանը» տրուեցաւ իրեն: Ան ստրուկի շղթայ կը սպասէր, եւ ահա թագաւորական «մատանի» շնորհուեցաւ իրեն: Ան անօրէն ցամաքներուն վրայ մուտքած իր ոտքերուն խարազան կը սպասէր, եւ ահա իր ոտքերուն համար «կօշիկներ» տրուեցան:

Հոսկէ կը սորվինք, թէ երբ դարձի գանք, մեր երկնաւոր Հայրը մեր ակնկալածէն շատ աւելին կ'ընէ եւ շատ աւելին կու տայ մեզի: Աստուած առատաձեռնութեան Աստուած է, քանի որ ան սիրոյ Աստուած է: «Լայն բաց բու բերանդ եւ զանիկա ե՛ս պիտի լեցնեմ» (Սղ 81.10): Ասիկա Աստուծոյ խոստումն է ուղղուած իւրաքանչիւր մարդու որ Աստուծոյ դառնալու եւ անով կշտանալու ծարաւն ունի:

5.- Ան որ Աստուծոյ կը դառնայ՝ միայն հոգեւոր յագեցում չէ որ կը ստանայ, այլ նաեւ՝ աստիճանի բարձրացում: Անառակ որդիին խոգերու ընկերակցութենէն դէպի հրեշտակներու ընկերակցութեան բարձրանալը աստիճանի բարձրացում չ'ենթադրեր: Լաւագոյն

պատմունքանն ու մատանին մատնանիշ կ'ընեն այն դիրքն ու փառքը որ կը տրուի եւ պիտի տրուի հոգեւոր դարձ ապրող մարդուն, երկինքի մէջ:

6.- «Լաւագոյն պատմունքանը» խորհրդանիշ է արդարութեան եւ սրբութեան: «Մատանին» խորհրդանիշ է որդեգրութեան: Իսկ «նոր կօշիկը» խորհրդանիշ է հաւատացեալին դիմաց բացուող կեանքի այն նոր ցամբուն որ աւետարանչութեան ցամբան է, Քրիստոսի համար վկայութեան ցամբան է: Ուշագրաւ է կարգը: Դարձի եկող մարդը, նախ պատմունքանը կ'առնէ, այսինքն՝ նախ կը սրբուի իր մեղքերէն ու կ'արդարանայ եւ կը հրաւիրուի ապրելու սուրբ ու արդար կեանք մը, անկէ ետք մատանի կը ստանայ, այսինքն՝ կ'որդեգրուի՝ Աստուծոյ կողմէ, որմէ ետք նոր կօշիկ մը կը ստանայ, այսինքն՝ նոր առաքելութեան մը կը դրկուի, եւ այդ առաքելութիւնը Քրիստոսի Աւետարանը եւ փրկութեան աւետիսը տարածելու առաքելութիւնն է: Հոսկէ կը սորվինք, թէ առանց մեր մեղքերէն սրբուած, արդարացած եւ Աստուծոյ զաւակ դարձած ըլլալու, պէտք չէ ինքնագլուխ կերպով Քրիստոսի Աւետարանը տարածենք, Քրիստոսի անունով խօսինք ու գործենք: Քրիստոսի անունով խօսող ու գործող մարդը՝ պէտք է Քրիստոսի միջոցաւ երկնաւոր Հօր հետ հաշտուած, անոր կողմէ որդեգրուած եւ անոր կողմէ դրկուած անձ մը ըլլայ:

7.- «Մատանի անցուցէք իր մատին»: Ըսինք որ մատանին կը խորհրդանշէ՝ որդեգրութիւն: Աստուծոյ դառնալ ուզող ոեւէ մարդ կ'որդեգրուի երկնաւոր Հօր կողմէ: Մեր որդեգրութեան թուղթը Սուրբ Հոգին ի՛նքն է որ կը կնքէ: Պօղոս առաքեալ ասոր է որ կ'ակնարկէ երբ կ'ըսէ. «Հաւատացիք Քրիստոսի եւ խոստացուած Սուրբ հոգիով կնքնուեցաք» (Եփ 1.13): Չմոռնանք որ անցեալին կնքելու գործողութիւնը մատանիով էր որ տեղի կ'ունենար: Ինչպէս թագաւորի մը մատանիով կնքուած ոեւէ բան անխախտ կը նկատուէր, այնպէս ալ անգամ մը որ Սուրբ Հոգիով ստանանք մեր որդեգրութեան կնքումն ու փրկութեան գրաւականը, ալ պէտք չենք ունենար մտահոգուելու որ կրնանք մեր փրկութիւնը կորսնցնել: «Մատանի» հասկացողութեան վերաբերեալ յաւելեալ երկու բացատրութիւններ եւս առաջարկուած են. –

ա.- Մատանին խորհրդանիշ նկատուած է նաեւ թագաւորութեան: Ոեւէ մէկը որ Աստուծոյ կը դառնայ, իրեն կը յանձնուի մատանի մը, որ ցոյց կու տայ, որ ինք այլեւս դարձաւ թագաւորագուն զաւակը երկնաւոր Թագաւորին:

բ.- Վերջապէս, մատանին նաեւ խորհրդանիշ նկատուած է տիրութեան եւ իշխանութեան: Աստուած «մեզ խաւարի իշխանութենէն ազատեց եւ բերաւ իր սիրելի Որդիին իշխանութեան տակ» (Կղ 1.13):

Աստուծոյ դարձող ոեւէ մարդ ո՛չ միայն Քրիստոսի թագաւորութեան մէջ բնակող մը պիտի ըլլայ, այլեւ՝ իշխանութեան տէր մարդ մը: Քրիստոսի գաւակները՝ Քրիստոսի հետ միասին պիտի իշխեն եւ տիրեն իր թագաւորութեան մէջ: Անոնք կենաց ծառէն ուտելու իշխանութիւն պիտի ունենան (Յտ 22.14):

8.- «Անմիջապէս բերէ՛ք լաւագոյն պատմունանը»: Այս բառերուն վերաբերեալ երկու մատնանշումներ եւս.-

ա.- Մենք թէպէտ բնագիրին մէջ չունինք «անմիջապէս» բառը, բայց կ'անդրադառնանք անոր, քանի որ նոր թարգմանութեան մէջ դրուած է ասիկա. եւ ինչո՞ւ դրուած է. դրուած է որովհետեւ երբ հրամայական եղանակով «բերէ՛ք» կ'ըսուի, անմիջապէս բերելու մասին է որ կը խօսուի:

«Անմիջապէս» բառը ցոյց կու տայ, որ եթէ երբեք դարձի եկող մարդուն ապաշխարութիւնը անկեղծ ու նշմարիտ է՝ «անմիջապէս», այլ խօսքով՝ ակնթարթի մը մէջ, կը սրբուի, կը փառուի եւ կ'արդարացուի: Աստուած դարձի եկող մարդուն մեղքերը ներելու համար պայմաններ չի դնէր, ո՛չ ալ ժամանակ կ'ուզէ մտածելու եթէ երբեք պիտի ներէ թէ ոչ, այլ «անմիջապէս» կը ներէ:

Երբ կ'ըսեմ՝ «կը սրբուի, կը փառուի եւ կ'արդարացուի», այս չի նշանակեր՝ սուրբ եւ արդար կ'ըլլայ: Սրբուիլը ուրիշ բան է, սուրբ ըլլալը՝ ուրիշ բան: Արդարացուիլը՝ ուրիշ բան է, արդար ըլլալը՝ ուրիշ բան: Սրբուիլն ու արդարացուիլը տեղի կ'ունենան այն վայրկեանին երբ մենք իսկական դարձ կ'ունենանք: Բայց սուրբ ու արդար ըլլալը՝ ամբողջ կեանքի ընթացք մը կ'ենթադրէ: Մեր մեղքերէն սրբուելէ ու արդարացուելէ ետք, եթէ շարունակենք ապրիլ Աստուծոյ կամփին համաձայն՝ այն ատեն է որ կը հասնինք արդարութեան ու սրբութեան: Եւ պէ՛տք է ջանանք հասնիլ սրբութեան, որովհետեւ Աստուած ա՛յդ է որ կը պահանջէ մեզմէ (Ա.Պտ 1.15-16): Պէտք չէ բաւարարուինք լաւ մարդիկ ըլլալով, այլ պէտք է աշխատինք սո՛ւրբ մարդիկ ըլլալ: Շատե՛ր երկինք պիտի մտնեն առանց սուրբ ըլլալու, թէպէտ իրենց մեղքերէն սրբուած պիտի ըլլան: Բայց Աստուած կ'ուզէ որ մենք ո՛չ միայն սրբուած երկինք մտնենք, այլ նաեւ սրբացուած, որպէսզի չկորսնցնենք այն անպատմելի փառքը որ մեզի համար պատրաստուած է երկինքի մէջ: Պօղոս առաքեալ պատկերացնելու համար հաւատացեալներուն յարուցեալ մարմինները, կը խօսի արեւու, լուսինի եւ աստղերու շփեղութեան մասին (Ա.Կր 15.41-42), ցոյց տալու համար թէ հաւատացեալներ արժայութեան մէջ իրարմէ տարբեր շփեղութիւն ու փառք պիտի ունենան: Երկինքի մէջ ոմանք «արեւու պէս պիտի փայլին» (Մտ 13.43), ոմանք՝ լուսինի պէս, եւ ոմանք

ալ՝ աստղերու պէս: Աստուծոյ կամքն է սակայն, որ բոլորն ալ արեւու պէս փայլին, ահա թէ ինչո՛ւ ըսի, ջանանք սուրբ կեանք ապրիլ եւ այդպէս դէպի երկինք մեկնիլ:

բ.– Հին թարգմանութեան մէջ «լաւագոյն պատմութեան» բացատրութեան փոխարէն ունինք՝ «առաջին պատմութեան»: «Լաւագոյն» եւ «առաջին» բնորոշումները ի վերջոյ մեզ նոյն տեղը կ'առաջնորդեն: Աստուծոյ կողմէ մարդուն տրուած պատմութեանը կը կոչուի՝ «լաւագոյն պատմութեան», որովհետեւ աստիկա փրկութեան, արդարութեան եւ սրբութեան պատմութեանն է, մանաւանդ, աստիկա Աստուծոյ Գառնուկին արիւնով սպիտակացուած պատմութեանն է: Աստուծոյ կողմէ տրուածը միշտ «լաւ»ը կ'ըլլայ, եւ ո՛չ միայն «լաւ»ը կ'ըլլայ, այլեւ՝ «լաւագոյնը» կ'ըլլայ: Աստուած անպէտք կամ խոտելի բան չի տար մարդոց: Յակոբոս առաքեալ կը վկայէ թէ միայն «կատարեալ պարգեւներն են որ կու գան երկինքէն, Հօր Աստուծմէ» (Յկ 1.17):

Ինչ կը վերաբերի «առաջին» բնորոշումին, աստիկա մեզ կը հրաւիրէ մեր մտքի սլաքը կեդրոնացնելու մեր արմատներուն, մեր սկզբնաղբիւրին, մեր իսկական ինքնութեան, մեր սկզբնական ծագումին վրայ: Հետեւաբար, «առաջին պատմութեան» բացատրութեամբ, կ'ակնարկուի այն արդարութեան ու սրբութեան պատմութեանին գոր մարդ արարածը «առաջին» անգամ, այլ խօսքով՝ սկիզբէն կամ նախապէս ունէր երբ տակաւին մեղքի մէջ չէր ինկած: Քրիստոս իր գալուստով, ուզեց մարդը վերադարձնել իր «առաջին պատմութեանին», իր առաջին վիճակին, որ անմեղութեան վիճակ մըն էր, ամբասիւր ըլլալու վիճակ մըն էր, մաքրամաքուր ըլլալու վիճակ մըն էր:

«Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք» (Դկ 15.23): Քանի մը հակիրճ մատնանշումներ.–

1.– Բոլոր մեկնիչները, ինչպէս Իգնատիոս Վարդապետ, Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան, Սուրբ Ամբրոսիոս, Սուրբ Գրիգոր Նարեկացի եւ ուրիշներ, միաձայնութեամբ, կը հաստատեն թէ «պարարտ հորթը» զՔրիստոս է որ կը խորհրդանշէ: Ինչո՞ւ Քրիստոս այստեղ կոչուած է հորթ, երբ գիտենք որ այլուր ան կոչուած է՝ Գառնուկ (Յհ 1.29: Ա.Պտ 1.19): Ես կը հաւատամ որ այստեղ Յիսուս «պարարտ հորթ» կը կոչուի, ցոյց տալու համար թէ ինք կարող է բոլոր մարդիկը կշտացնել. չմոռնանք որ գառնուկ մը կրնայ քանի մը հոգիներ կշտացնել, մինչդեռ հորթ մը, մանաւանդ եթէ աստիկա «պարարտ հորթ» մըն է, կրնայ մեծ թիւով մարդիկ կշտացնել:

2.– Ինչո՞ւ Քրիստոսի խորհրդանիշը եղող հորթը կը բնորոշուի իբրեւ՝ «պարարտ»: Ան կոչուած է «պարարտ» չորս պատճառներով.–

ա.- Նախ ցոյց տալու համար որ Աստուած իր լաւագոյնը ընծայեց մարդկութեան: Արդարեւ, Աստուած հրեշտակապետ մը չղրկեց իբրեւ գոհ, այլ՝ իր Որդին: Եթէ հրեշտակապետ մը դրկած ըլլար՝ անիկա «պարարտ» պիտի չկոչուէր: Այլ խօսքով մը, «պարարտ» բնորոշումը գործածուեցաւ, ցուցնելու համար որ Աստուած տուաւ իր ամենէն թանկագինը, ամենէն գեղեցիկը, ամենէն արժէքաւորը, իր լաւագոյնը, որ իր Որդին է:

բ.- Հորթը կոչուած է «պարարտ» նաեւ ցուցնելու Յիսուսի բացարձակ կարողութիւնը փրկելու ո՛չ միայն ամբողջ հրեայ ազգը, այլեւ՝ համայն մարդկութիւնը: Քրիստոս Աստուծոյ «պարարտ հորթն է», կամ «պարարտ Գառնուկն է»: Փրկութեան ծարաւ եղող ամէն մարդ կրնայ կշտանալ իրմով:

գ.- «Պարարտ» կը կոչուի նաեւ, յիշեցնելու համար մեզի թէ ան պարարտութեան եւ առատութեան Աստուած է, եւ պատրաստ է իր պարարտութենէն՝ պարարտութիւն տալ մեզի, իր առատութենէն՝ առատութիւն շնորհել մեզի, իր լեցունութեամբ մեզ լեցնել, իր հարստութեամբ մեզ հարստացնել, իր առատ օրհնութիւններով մեզ օրհնել:

դ.- «Պարարտ հորթը» Աստուծոյ պարարտ սիրոյն արտայայտութիւնն է: Հետեւաբար, «պարարտ» բառին մէջ մենք կը տեսնենք Աստուծոյ առատ սէրը մեզի հանդէպ, որ Քրիստոսով յայտնուեցաւ:

3.- «Բերէ՛ք պարարտ հորթը»: Ըսինք, պարարտ հորթը կը խորհրդանշէ Քրիստոսը: Հայրը պիտի չըսէր «բերէ՛ք պարարտ հորթը» եթէ իր կրտսեր որդին տուն չգառնար: Որդին տուն եկաւ, եւ անմիջապէս հրահանգուեցաւ որ պարարտ հորթը բերուի: Հոսկէ կը սորվինք, թէ երբ ոտքի ելլենք Աստուծոյ գալու, Աստուած անմիջապէս մեզ պիտի ընդունի իր Պարարտ Հորթին, այլ խօսքով՝ իր Որդիին գոհագործութեան միջոցաւ: Արդարեւ, Աստուած «Քրիստոսի միջոցաւ մեզ իրեն հետ հաշտեցուց» (Բ.Կր 5.18):

Այլ բացատրութեամբ մը, Քրիստոս ի՛նքն է որ կը դիմաւորէ մեղաւոր մարդը, կ'ընդունի գայն, կը ներէ, կը քաւէ, կ'արդարացնէ եւ իր ու մեր Հօրը կը ներկայացնէ: Երբ մենք ոտքի ելլենք Քրիստոսի գալու՝ Քրիստոս ինքն ալ ոտքի պիտի ելլէ մեզի գալու. «Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Աստուած ինք պիտի մօտենայ ձեզի» (Յկ 4.8):

Ճիշդ է որ Քրիստոս իր արիւնով փրկեց բոլոր մարդիկը, բայց մարդ չի կրնար փրկուիլ եթէ Քրիստոսի չգայ: Ճիշդ է որ խաչով փրկութիւնը իրագործուեցաւ, բայց խաչով իրագործուած այդ փրկութիւնը մենք չենք կրնար ձեռք ձգել առանց դիմելու Խաչեալին եւ զինք ընդունելու իբրեւ Տէր ու Փրկիչ: Մէկ բառով, եթէ Աստուած մեզմէ չլսէ՝

«եկա՛նք» խօսքը, մենք իրմէ պիտի չլսենք՝ «բերէ՛ք» հրահանգը: Եթէ կ'ուզես «պարարտ հորթը» բերուի քեզի, նախ դուն պէտք է գաս անոր:

4.- «Մորթեցէ՛ք»: Այս բառին վերաբերեալ երկու հաստատումներ. –

ա.- «Պարարտ հորթը» բերողները ծառաներն են, այլ խօսքով հրեշտակներն են, բայց բնականօրէն այդ Հորթը մորթողները իրենք չեն: Երբ հրեշտակներուն կ'ըսուի «մորթեցէ՛ք», ըսել կ'ուզուի՝ վկայ եղէ՛ք: Եւ արդարեւ, հրեշտակները իրենք վկայ են Քրիստոսի գոհագործական մահուան. վկայ են մանաւանդ ընդդէմ անոնց՝ որոնք կը մերժեն Քրիստոսի գոհագործական մահը եւ անով իրականացած փրկութիւնը:

բ.- «Մորթեցէ՛ք» բառը որոշապէս կը պարզէ որ Քրիստոսի աշխարհ գալուն նպատակը գոհուիլն էր մարդկութեան փրկութեան համար:

5.- «Ուտենէ՛ք»: Այս բառը մէկ կողմէ ցոյց կու տայ որ միայն Քրիստոս կրնայ կշտացնել ու լեցնել մեր սիրտն ու հոգին, իսկ միւս կողմէ կը պարզէ որ ան է իսկական կեանքի Հացը (Յհ 6.35), որմէ ուտել կը հրաւիրէ մեզ մեր երկնաւոր Հայրը (Յհ 6.27):

6.- «Ուրախանանէ՛ք»: Այս բառը մէկ կողմէ, կը բացայայտէ թէ Քրիստոս իր գոհագործական մահուամբ բացաւ երկինքի ուրախութեան դուռը մեր դիմաց, իսկ միւս կողմէ, կը պատկերացնէ այն անսահման ուրախութիւնն ու հրեմուսնաբեր որ մեր երկնաւոր Հայրը կ'ապրի դարձի եկող մեղաւորի մը փրկութեան համար:

Ուշագրաւ է որ հայրը չ'ըսեր՝ «ուրախացէ՛ք», այլ՝ «ուրախանանէ՛ք», ինչ որ ցոյց կու տայ թէ Աստուած մեզի հետ միասին ուրախանալ կ'ուզէ: Այո՛, Աստուած ի՛նքն ալ կ'ուրախանայ երբ փրկուիմք: Բայց ոչ միայն Աստուած ի՛նքն կ'ուրախանայ դարձի եկող մարդոց համար, այլեւ՝ ամբողջ երկինքը, երկնային բոլոր մարմինները: Այս է որ ցոյց կու տայ յոգնակիով ըսուած՝ «ուրախանանէ՛ք» բառը: Ինչպէս անառակ որդիին տուն դարձը ուրախութեամբ լեցուց տունն ու տնեցիները, այնպէս ալ, մեզմէ իւրաքանչիւրին դարձը, երկնային ուրախութեան եւ տօնախմբութեան առիթ կը դառնայ: Յիշեցէ՛ք որ Քրիստոս ի՛նքն իսկ հաստատեց. «Երկինքի մէջ ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար» (Ղկ 15.7):

«Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ» (Ղկ 15.24): Քանի մը հաստատումներ. –

1.- «Իմ այս գաւակս»: Քանի մը նշումներ. –

ա.- Այս բառերով Աստուած դարձի եկողներուն իր հայր ըլլալն է որ կը ծանուցէ: Հայր մը, որ մեզ չի՛ մոռնար նոյնիսկ եթէ մեր մայրը մեզ մոռնայ (Ես 49.15):

բ.- «Զաւակ» բացատրութիւնը ցոյց կու տայ որ Աստուած դարձի եկող մարդը ամէն բանէ առաջ իբրեւ զաւակ կ'ընդունի, եւ ո՛չ թէ իբրեւ բանուոր կամ ստրուկ:

գ.- «Իմ այս զաւակս» խօսքը ցոյց կու տայ որ Աստուած ամօթ կամ նախատինքն չի՛ սեպեր դարձի եկող մեղաւորները իր զաւակները կոչելու, իբրեւ իրեն պատկանող դաւանելու:

դ.- «Զաւակ» բառը կը պարզէ որ երբ մեղաւոր մարդը դարձի գայ, անմիջապէս իր եւ Աստուծոյ միջեւ կը վերականգնի հայր եւ որդիի յարաբերութիւնը: Այս հաստատումը, հետեւաբար, կը պարզէ որ դարձի եկող ամէն մարդ կ'որդեգրուի Աստուծոյ կողմէ: Ասիկա պարզ խօսք մը թող չթուի մեզի: Քի՞չ բան է մեզի համար Աստուծոյ զաւակները կոչուիլ: Պատի՞կ բան է դառնալ տիեզերքի Արարիչին գործակիցները: Եթէ երբեք մեզի համար պատիւ է երկրաւոր թագաւորի մը ծառան ըլլալ, որքա՞ն անելի մեծ պատիւ է Աստուծոյ ծառան ըլլալ:

Բայց մենք ո՛չ միայն Աստուծոյ ծառաներն ենք, այլեւ՝ զաւակները, սեղանակիցները, գործակիցները: Աստուծոյ գործակիցը ըլլալն ալ քիչ բան չէ: Մեզի համար պատիւ ու պարծանք է երկինքի եւ երկրի Ստեղծիչին հետ գործակցիլը: Եթէ երբեք Աստուած կը պահանջէ մեր գործակցութիւնը, կը պահանջէ ո՛չ թէ որովհետեւ պէտք ունի մեզի, այլ որովհետեւ պատուել ու փառաւորել կ'ուզէ մեզ: Երբ իշխան մը մեր գործակցութիւնը խնդրէ պատուած չ'ըլլար մեզ: Աստուծոյ գործակիցները դառնալու համար նախ պէտք է Աստուծոյ զաւակները դառնանք, ինչպէս կրտսեր զաւակը դարձաւ: Աստուած օտար եւ խորթ «զաւակներ» իրեն գործակից իբրեւ չ'ընդունիր:

2.- «Մեռած էր՝ ողջնցաւ»: Այս բառերուն վերաբերեալ երկու հաստատումներ.-

ա.- Պէտք է ուշադրութիւն դարձնել որ այս հաստատումը կը կատարուի պարարտ հորթը մորթելէ անմիջապէս ետք: Ինչո՞ւ արդեօք: Պարարտ հորթը, ըսինք, Քրիստոս ի՛նքն է: Քրիստոս զոհուեցաւ՝ մարդը ողջնցաւ: Քրիստոս մեռաւ՝ մարդը անմահացաւ: Քրիստոս իր կեանքը տուաւ, եւ իր կեանքը տալով՝ մարդիկ կեանք ունեցան: Աշխարհային իմաստով, երբ մարդ մը մարդու մը կեանքը իլէ, մեռնողին պարագաները իրենք ալ կը փորձեն իրենց հարազատին կեանքը խլողին կեանքը իլել, այլ խօսքով, մահուան դիմաց՝ մա՛հ է որ կը պահանջեն, բայց Յիսուսի պարագան բոլորովին տարբեր է: Ան մահուան դիմաց՝ մահ չտուաւ, այլ՝ կեանք: Այլ խօսքով, մարդիկ իր մահը պահանջեցին, իսկ ինք իր մահուամբ՝ կեանք պահանջեց երկնաւոր Հօրմէն անոնց համար:

բ.- «Մեռած էր՝ ողջնցալ»: Խօսքը հարկաւ հոգեւոր մահուան մասին է: Ադամ եւ Եւա նաեւ հոգեւորապէս մեռան երբ մեղանշեցին Աստուծոյ դէմ (Ծն 2.17): Ինչպէս մեր մարմինները նիւթական ուտելիքի պէտք ունին որպէսզի կարենան ապրիլ, այնպէս ալ մեր հոգիները Քրիստոսի՝ պէտք ունին որպէսզի կարենան կենսաւորուիլ: Հեռանալ Քրիստոսէ՝ պիտի նշանակէր մեռնիլ: Երբ առիթով մը մարդիկ հեռացան Քրիստոսէ իր ներկայացուցած «դժուարամարս» մէկ վարդապետութեան պատճառով, Քրիստոս հարցուց իր տասներկու աշակերտներուն եթէ երբեք իրենք ալ կ'ուզէին հեռանալ իրմէ: Պետրոս պատասխանեց. «Տէ՛ր, որո՞ւն պիտի երթանք. յաւիտեանական կեանք տուող խօսքեր դո՛ւն ունիս» (Յհ 6.68):

Կեանքը Քրիստոսով սկիզբ առաւ (Յհ 1.4) եւ միայն Քրիստոսով կրնայ իր գոյութիւնը շարունակել: «Ով որ չունի Որդին՝ յաւիտեանական կեանք ալ չունի» (Ա.Յհ 5.12): Ինչպէս առանց արեւի լոյս չկայ, այնպէս ալ առանց Քրիստոսի կեանք չկայ: Եթէ երբեք Քրիստոս է կեանքը (Յհ 11.25, 14.6), ուրեմն, ընդունիլ զՔրիստոս մեր կեանքերուն մէջ, կը նշանակէ դառնալ կեանքով լեցուն էակներ: ԶՔրիստոս ունեցող մարդը կեանք է որ ունի: «Զիս գտնողը կեանք կը գտնէ» (Առ 8.35) կը հաստատէ Աստուած:

3.- «Կորսուած էր՝ գտնուեցալ»: Անառակ որդին ո՛չ միայն «մեռած» մը կը նկատուէր, այլեւ՝ «կորսուած» մը: Ընդհանրապէս Աստուածաշունչ մատեանը «կորուստ» կամ «կորսուած» բացատրութիւնները կը գործածէ յաւիտեանապէս Աստուծմէ հեռու ըլլալու դատապարտուած մարդոց համար:

4.- «Գտնուեցալ»: Թէպէտ որդին ցամբայ ելաւ իր հայրը գտնելու, բայց խորքին մէջ հայրը ի՛նքն էր որ գտաւ իր որդին, եւ ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «գտնուեցալ» բառը: Այո՛, որդին գտնուեցաւ եւ ո՛չ թէ գտաւ: Որդին ի՛նքն էր որ գտնուելու պէտք ունէր եւ ո՛չ թէ հայրը:

Ի՞նչ պէտք է ընել «գտնուելու» համար Աստուծոյ կողմէ: Բանալ մեր սիրտերուն դռները Քրիստոսի առջեւ կը նշանակէ «գտնուիլ»: Գտնուիլ՝ ալ առ յաւիտեան չկորսուելու համար: Քրիստոս աշխարհ եկաւ գտնելու մեղքի անապատին մէջ կորսուածներս: Հոն ուր Քրիստոս կայ՝ հոն հոգեւոր մահ կամ հոգեւոր կորուստ չի՛ կրնար ըլլալ: Միթէ կարելի՞ է կեանքի Արարիչին կողքին ըլլալ եւ մահ բուրել: Միթէ կարելի՞ է անսխալական Առաջնորդին հետ ըլլալ, եւ սակայն, կորսուելու մտավախութիւնը ունենալ: Միթէ կարելի՞ է մեծ Պաշտպանին թելերուն տակ ապաստանիլ եւ անպաշտպան զգալ: Միթէ կարելի՞ է կեանքի ցանապար-

հին վրայ տապալիլ երբ Քրիստոս ի՛նքն է մեր ֆանապարհն ու ֆանապարհորդակիցը:

«Տէ՛րը փնտոեցէ՛ք, ֆանի որ անիկա կը գտնուի» (Ես 55.6): Քրիստոս միշտ «կը գտնուի» բայց մարդիկ իրե՛նք են որ յաճախ չեն գտնուիր: Օրը ֆանի՞ անգամ Քրիստոս կը փնտոէ մեզ եւ չի՛ գտներ: «Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ: Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ՝ ներս պիտի մտնեմ եւ անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ» (Յյտ 3.20): Օրական ֆանի՛ անգամներ Քրիստոս կը բաղիսէ մեր սիրտերուն դռները եւ մենք պատասխան չենք տար անոր: Քրիստոս որ դուռն է ոչխարներուն (Յհ 10.7), ի՛ր կարգին, կը կանգնի մեր սիրտերուն դռներուն ճով եւ իր սիրոյ մականով կը բաղիսէ զանոնք յարատեւութեամբ եւ հաւատարմութեամբ: Մերժե՞նք Տանտէրը ներս՝ մեր սրտին մէջ ընդունիլ: Քրիստոս ի՛նքն է տանտէրը մեր սրտին: Կ'ըլլա՞յ Տանտէրը դուրս ձգենք իր տունէն՝ որ «մե՛նք ենք» (Եբր 3.6): Ձեզմէ ո՞վ եթէ տանտէր ըլլար, պիտի ընդունէր որ իր ծառան զինք տունէն դուրս դնէր, կամ մերժէր տունէն ներս առնել:

«Եւ սկսան խրախնամքի» (Ղկ 15.24): Երկու հաստատումներ --

1.- Նախորդ համարին մէջ երբ խօսեցանք «ուրախանամք» բառին մասին, ըսինք որ անիկա ցոյց կու տայ այն ուրախութիւնը որ մեր երկնաւոր հայրը կ'ապրի ամէն մէկ դարձի եկող եւ Քրիստոսի հաւատքը ընդգրկող անձի համար: Իսկ այստեղ արձանագրուած «խրախնամք» բառը, աւելի խորունկ իմաստ մը ունի ֆան «ուրախանամք» բառը: Ուրախութիւնը զգացումի արտայայտութիւն է, մինչդեռ խրախնամքը՝ զգացուած ուրախութիւնը գործնապէս արտայայտելու պատկերը ունի: Եւ ասիկա գիտնալը կարեւոր է, որովհետեւ կը յիշեցնէ մեզի, որ Աստուծոյ արքայութիւնը ժառանգող հաւատացեալներուն ուրախութիւնը զգացական ուրախութիւն մը պիտի չըլլայ, այլ՝ իրական ուրախութիւն, կենդանի՝ ուրախութիւն, ներքին ուրախութիւն: Մարդ կրնայ ուրախ ըլլալ եւ չարտայայտել, բայց չի կրնար խրախնամքի մէջ ըլլալ եւ չարտայայտել: Սա ցոյց կու տայ որ երկինքի ուրախութիւնը բացայայտ ուրախութիւն պիտի ըլլայ եւ ո՛չ թէ ծածուկ, անպատմելիօրէն յայտնի եւ յայտնապէս անպատմելի պիտի ըլլայ:

2.- Յաճախ երկինքը հարսնետունի եւ երկինքի արքայութիւնը՝ հարսանիքի նմանցուած է (Մտ 25.10): Նախորդ բաժնին մէջ խօսեցանք «ուրախութեան» եւ «խրախնամքի» տարբերութեան մասին: Այստեղ յաւելեալ բացատրութիւն մը եւս կը ներկայացնեմ այդ մասին: Մենք գիտենք որ երբ հարսանիք մը պիտի ըլլար անցեալին (անշուշտ ներկայիս նաեւ), ուրախութիւնը օրեր առաջ կը սկսէր, բայց հարկաւ կար

կարելու պահը՝ որ խրատնամբի պահն էր, որ կը սկսէր փեսային ժամանումով միայն: Կենթադրեմ՝ ըսել ուզուածը արդէն յստակ դարձաւ: Ինչպէս հարսնետոմարներ կ'ուրախանան եւ իրենց ուրախութիւնը խրատնամբի կը փոխուի փեսային ժամանումով, այնպէս ալ, փրկութիւնը ընդգրկած հաւատացեալներս թէպէտ ուրախութիւն ունինք մեր սրտին մէջ, բայց այդ ուրախութիւնը խրատնամբի պիտի փոխուի երբ մեր երկնաւոր Փեսան՝ Քրիստոս ինք ժամանէ այս աշխարհ: Դարձեալ, ինչպէս խրատնամբի ուրախութիւնը իր գագաթնակէտին կը հասնի այն օրը եւ ցիշդ այն ժամուն երբ հարս ու փեսայ իրար կը միանան, այնպէս ալ, հաւատացեալներուս ուրախութիւնը իր բարձրագոյն աստիճանին պիտի հասնի երբ երկնաւոր Փեսան յայտնուի եւ իր գրկին մէջ ընդունի իր հարսը՝ եկեղեցին:

«Մինչ այդ, երէց զաւակը ագարակ կը գտնուէր» (Ղկ 15.25): Քանի մը հաստատումներ.–

1.– Առակին երկրորդ բաժինը (25–31 համարներ) առաւելաբար խօսուած է Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ հրեայ ժողովուրդի բոլոր հոգեւոր ղեկավարներուն համար, որոնք չէին կրնար ըմբռնել թէ Քրիստոս ինչպէս կրնար ընկերակցութիւն ընել մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ: Անոնք կը մոռնային, որ Քրիստոսի աշխարհ գալուն նպատակը ո՛չ միայն «ատուած» մեղաւորներուն հետ ընկերակցութիւն եւ բարեկամութիւն ընելն էր, այլեւ՝ գտնուել ժողովուրդին անդամ դարձնելը: Այսպէս կ'ուսուցանէ նաեւ Աստուածաշունչ մատենը. «Ան որ իմ ժողովուրդս չէր՝ իմ ժողովուրդս պիտի կոչեմ, ան որ սիրելի չէր ինծի՝ սիրելի պիտի կոչեմ» (Հո 9.25):

2.– «Երէց զաւակը ագարակ կը գտնուէր»: Այստեղ յիշուած ագարակը, նոյնը չէ 15–րդ համարին մէջ յիշուած ագարակին հետ, որ ինչպէս ըսինք, կը պատկերացնէ աշխարհը կամ Սատանայի թագաւորութիւնը: Այս ագարակը, ուր երէց զաւակը, այլ խօսքով՝ Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները կը գտնուէին, կը պատկերացնէ Մովսիսական օրէնքներն ու տեսակ–տեսակ ծիսական արարողութիւնները: Փարիսեցիները ստեղծած էին իրենց յատուկ եւ իրենց առանձին ագարակը (աշխարհը): Անոնք կը մերժէին այդ «ագարակէն» ներս ընդունիլ, օրէնքը չճանչցող, օրէնքը բառացիօրէն ի գործ չդնող մարդիկ: Ամէն մարդ, որ կը հաւատար թէ օրէնքի գործադրութեան նամբով կրնար արդարանալ՝ այդ «ագարակին» մաս կը կազմէր եւ անդամ կը նկատուէր:

Այսօր նաեւ, բոլոր անոնք որոնք կը հաւատան թէ իրենց գործերով եւ օրէնքներու գործադրութեամբ կրնան արդարանալ, Փարիսեցիներու

փաղանգին եւ անոնց «ագարակին» մաս կը կազմեն: Մարդ ո՛չ օրէնքներու գործադրութեամբ կրնայ արդարանալ (Հո 3.20: Գդ 2.16) եւ ո՛չ ալ իր բարի գործերով (Եփ 2.9): Իսկ անոնք որոնք կը փորձեն օրէնքներու գործադրութեամբ արդարանալ՝ ա՛յ Քրիստոսի հետ իրենց կապը կտրած կ'ըլլան եւ զրկուած՝ անոր շնորհէն (Գդ 5.4): Կը տեսնէք, հետեւաբար, մեր սեփական գործերով եւ օրէնքներու գործադրութեամբ արդարանալ փորձելը՝ մեր կապը Արդարին հետ խզել է եւ ո՛չ թէ սերտացնել: Նոր Կտակարանը յստակօրէն կ'ուսուցանէ թէ փրկութիւնը Աստուծոյ շնորհքին ու պարգեւին արդիւնքն է եւ ո՛չ թէ արդիւնքը մեր գործերուն (Եփ 2.8-9):

3.- «Երէց զաւակը ագարակ կը գտնուէր»: Ինչո՞ւ արդեօք երէց զաւակը ագարակին մէջ կը ներկայացուի նիշդ այն պահուն՝ երբ կրտսեր զակին համար խրախֆանք կ'ըլլար տան մէջ: Չորս պատճառներով.-

ա.- Նախ ցոյց տալու համար որ երկինքի մէջ հոգեւոր խրախֆանքը սկսաւ Քրիստոսի երկրաւոր օրերուն իսկ:

բ.- Տուցնելու համար թէ մեր երկնաւոր Հայրը կը սպասէր նաեւ իր երէց զակին (հրեաներու) տուն դարձին, այլ խօսքով՝ իր Որդին ընդունելու արարքին: Անոնք պէտք էր դուրս գային իրենց ստեղծած «ագարակներէն» եւ անդամ դառնային ու մասնակցէին Քրիստոսով սկսած երկնային խրախֆանքին:

գ.- Բացայայտելու համար թէ Հօրը սրտին համար ցաւ էր որ իր երէց զաւակը բացակայ էր այդ խրախֆանքէն:

դ.- Ուրիշ հիմնական պատճառ մը եւս կայ թէ ինչո՞ւ երէց որդին կը ներկայացուի տունէն դուրս՝ ագարակի մէջ, երբ անդին տան մէջ խրախֆանք տեղի կ'ունենար: Երէց որդին թէպէտ ֆիզիքապէս կ'ապրէր իր հօրը հետ նոյն տանը մէջ, եւ սակայն, հոգեպէս անչափօրէն հեռու էր իր հօրմէն: Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները իրենք ալ երեսու-թապէս միայն Աստուծոյ մօտիկ չէ՞ին: Երեսու-թապէս եւ ձեւականօրէն Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները յաջողած էին ներկայացուցիչները ըլլալ Մովսիսական կրօնքին, բայց անոնք բնա՛ւ չէին յաջողած ներկայացուցիչները ըլլալ այն ոգիին որ կը բղիւրէր Մովսիսական կրօնքէն: Անոնք շրթունքի մարդիկ էին եւ ո՛չ թէ սրտի, խօսքի մարդիկ էին եւ ո՛չ թէ գործի: Ասոր չէ՞ր որ Աստուած կ'ակնարկէր երբ կ'ըսէր. «Այս ժողովուրդը ինձի բերնովը կը մօտենայ եւ զիս շրթունքներովը կը պատուէ, բայց անոնց սիրտը ինձմէ հեռու է» (Յս 29.13):

«Ագարակը» (Օրէնքը) պատուար մըն էր Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ Աստուծոյ միջեւ: Ի՞նչպէս կրնար պատահիլ որ Աստուածապարգեւ Օրէնքը զիրենք հեռացնէր Աստուծմէ: Անոնց սխալը

այն էր, որ անոնք դարձած էին ստրուկներն ու ծառաները Օրէնքին, փոխանակ դառնալու ծառաները Օրէնքի տուիչին՝ Աստուծոյ: Անոնք կառչած էին Օրէնքի տառացի գործադրութեան, փոխանակ փորձել ներթափանցելու անոր ոգիին: Անոնք չէին անդրադառնար որ «գրաւոր Օրէնքը մահուան կ'առաջնորդէ, մինչդեռ Հոգին կեանք կու տայ» (Բ.Կր 3.6): Օրէնքը որ կոչուած էր դառնալու օրհնութիւն անոնց համար՝ դարձած էր անէծք, դարձած էր զիրենք Աստուծմէ բաժնող «ագարակ»: Իսկ ի՞նչ են այն «ագարակները» որոնք մե՛զ այսօր կը բաժնեն Աստուծմէ: Ինչ բանի որ կը վստահինք եւ ինչ բանի որ մեր յոյսը կապած ենք, մեզ Աստուծմէ բաժնող «ագարակ» մըն է: Օրինակ, եթէ մէկը կը կարծէ թէ իր ըրած բարիքներով կրնայ երկինքը ժառանգել՝ պէտք է գիտնայ թէ իր ըրած այդ բարիքներն են որ կը վերածուին զինք երկինքէն հեռացնող «ագարակի»: Կամ եթէ մէկը բարերարութիւն մը ըրած է եւ իր այդ ըրած բարերարութեան մէջ կը տեսնէ իր փրկութիւնը, նոյնիման այդ բարերարութիւնը կը վերածուի զինք փրկութենէն հեռացնող «ագարակի» մը:

«Վերադարձին, երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց»

(Ղկ 15.25): Գանի մը մատնանշումներ.–

1.– Առաջին կարեւոր նշմարտութիւնը գոր մեր ուշադրութիւնը պէտք է գրաւէ, հետեւեալն է.– Երբ կրտսեր որդին տուն դարձաւ՝ հա՛յրը զինք դիմաւորեց, իսկ այստեղ երբ կը տեսնենք որ երէց որդին ագարակէն կու գայ՝ հայրը զինք չի դիմաւորեր: Ինչո՞ւ արդեօք: Երկու պատճառով.–

ա.– Հայրը շատ լաւ գիտէր որ իր երէց որդին հարազատ որդի չէր, բայց իր կրտսեր որդին՝ իր դարձի գալէն ետք այլեւս հարազատ որդի դարձած էր: Հոսկէ կը սորվինք թէ Աստուած ինք անձնապէս կը դիմաւորէ նշմարտապէս դարձի եկող մարդիկը, իսկ այն մարդիկը որոնց դարձը անկեղծ ու իրական չէ, զանոնք կը դիմաւորէ իր հրեշտակներուն ու սուրբերուն բարեխօսութեան միջոցաւ, միշտ ինչպէս առակին մէջ յիշուած հայրը ինք, դիմաւորեց իր երէց որդին իր ծառաներուն միջոցաւ:

բ.– Հայրը անձնապէս չդիմաւորեց իր երէց որդին որ ագարակէն կը դառնար, որովհետեւ ան շատ լաւ գիտէր թէ ան եկած էր ժխտական հոգիով մը, եկած էր ֆննադատելու իր պատիկ եղբայրը: Ան չէր եկած ուրախանալու իր կրտսեր եղբօր տուն դարձով, այլ եկած էր իր գայրոյթը արտայայտելու, իր սրտի մէջի եղած թոյնը դուրս թափելու: Հոսկէ կը սորվինք թէ Աստուած երբեք չի դիմաւորեր եւ չ'ընդունիր այն մարդիկը որոնք կը ֆննադատեն իրենց նմանները, իրենց կրտսեր

եղբայրներն ու քույրերը, այլ խօսքով՝ իրենցմէ աւելի տկարները, անկարողները:

2.- «Վերադարձին» բառը ցոյց չի տար հարկաւ որ երէց զաւակը, այսինքն՝ Փարիսեցիները, որոշեցին Քրիստոսի դիմել ու զինքն անհնաւ եւ ընդունիլ իբրեւ խոստացեալ Փրկիչը: Անոնք պարզապէս ուզեցին իրենց «ազարակի» նեղ պատեանէն դուրս գալ եւ հետաքրքրուիլ Քրիստոսի գործունէութեամբ, տեսնելու համար թէ ի՞նչ կ'ընէ ան: Փարիսեցիները չէին կրնար անտարբեր եւ ծալապատիկ մնալ ի տես Քրիստոսի ձեռք ձգած յաջողութիւններուն:

Երբ առիթով մը մեծ ամբոխ մը Քրիստոսի կը հետեւէր եւ կը փառաբանէր զինք, Փարիսեցիները անոր ըսին. «Վարդապետ, աշակերտներդ սաստէ որ լոեն» (Ղկ 19.40): Անոնք շատ մտահոգ էին որ ամբողջ աշխարհ Քրիստոսի կը հետեւէր (Յհ 12.19): Անոնք նոյնիսկ կը սպառնային ժողովարաններէն դուրս դնել ոեւէ մէկը որ Քրիստոսի հաւատար (Յհ 12.42): Քրիստոսի մահէն ու թաղումէն ետք անգամ Փարիսեցիները հանգիստ չէին: Անոնք խնդրեցին Պիղատոսէն որ զինուորներ տրամադրէ որպէսզի հսկեն Քրիստոսի գերեզմանին վրայ (Մտ 27.62-66): Անոնց համար Քրիստոս մղձաւանջ մըն էր. մղձաւանջ մը՝ որ ամէն գնով եւ միանգամընդմիջտ պէտք էր որ անհետացուէր:

Ոչինչ փոխուած է պատմութենէն: Այսօր ալ, անհամար է թիւը այն մարդոց, որոնք շատ պիտի փափաքէին զՔրիստոս ամբողջութեամբ անյայտացած տեսնել մարդկային ցեղի յիշողութենէն ու աշխարհի պատմութեան բեմէն: Կ'ապրին այնպիսի ժամանակի մը մէջ, ուր մարդիկ սկսած են անհանգստութեան նշաններ ցոյց տալ եւ երբեմն ալ քիչ թափաքելով, ամէն անգամ երբ լսեն ապաշխարութեան, վերածնունդի, Քրիստոսի յանձնուելու եւ այլ կարեւոր հարցերու մասին: Պողոս առաքեալ խօսելով ժամանակներու աւարտին մասին, կ'ըսէ թէ ժամանակ պիտի գայ երբ մարդիկ «պիտի չուզեն նշարտութիւնը լսել» (Բ.Տմ 4.4):

3.- «Երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց»: Հայրը տեսաւ իր կրտսեր որդին երբ «տակաւին տունէն բաւական հեռու էր» (15.20), իսկ երէց որդին տունին մօտենալէ ետք միայն «երգի ու պարի ձայներ լսեց» (15.25): Այլ խօսքով, հայրը հեռուէն տեսաւ, իսկ որդին՝ մօտենալէ ետք լսեց: Ի՞նչ ցոյց կու տայ ասիկա: Տոյց կու տայ որ մեր երկնաւոր Հայրը մեզ կը տեսնէ երբ տակաւին հեռու ենք իրմէ ու կը թաւալինք մեղքի ցեխին մէջ, բայց մենք չենք կրնար լսել իր ձայնը, փրկութեան բերած ուրախութեան ձայները, երկնային «երգի ու պարի ձայներ»ը մինչեւ որ չմօտենանք իրեն:

4.- «Երգի ու պարի ձայներ լսեց»: Տունէն լսուած «երգի ու պարի ձայներ»ը կ'արտայայտեն այն ներքին անչափ ուրախութիւնն ու երջանկութիւնը, գոհունակութիւնն ու խաղաղութիւնը, որ դարձի եկող ու փրկութիւնը ժառանգող անհատներ կ'ապրին: Աստուած լսելի կը դարձնէ «երգի ու պարի» այդ ձայները, որպէսզի իրեն դառնալ ուզող մարդիկ չմտածեն որ իրեն մօտ ցաւէն ու տառապանքէն զատ ուրիշ բան չկայ:

Այդ «երգի ու պարի» ձայները կը պատկերացնեն այն անսահման ներքին ցնծութիւնը որ Աստուած վերապահած է իւրաքանչիւր անհատի համար որ իրեն դառնալ կը փափաքի: Այդ «երգի ու պարի» ձայները փրկութեամբ մեր ձեռք ձգած յաղթանակին ձայներն են, յաւիտեանական կեանքը լեցնող հրնուանքին ձայներն են: Այդ «երգի ու պարի» ձայները, մանաւանդ, Աստուծոյ ուրախութեան ձայնն է՝ իր գաւակներուն իրեն վերադարձին առիթով:

Ո՞րք են «երգի ու պարի» ձայները մեր կեանքներուն մէջ եթէ երբեք կրտսեր գաւկին նման անկեղծ դարձ մը ապրած ենք: Ո՞րք է Աստուծոյ զօրութիւնը մեր կեանքներուն մէջ եթէ երբեք ամենագօր Աստուծոյ գաւակները դարձած ենք: Ո՞րք է Քրիստոսի յաղթանակը մեր սիրտերուն մէջ եթէ Քրիստոս է տէրը մեր սիրտերուն: Մէկ կողմէ կը յայտարարենք թէ ամենակարող Աստուծոյ մը գաւակներն ենք, միւս կողմէ, սակայն, պարտուածի մը կեանքը կ'ապրինք:

Որքա՞ն կարեւոր է որ զԱստուած չնանչցող մարդիկ տեսնեն ու լսեն մեր կեանքներուն մէջ այդ «երգի ու պարի» ձայները, ուրախութեան ու յաղթանակի ձայները, որպէսզի գիտնան, թէ այն Աստուածը որուն կը պաշտենք, սուգի ու վիշտի Աստուած չէ, այլ՝ ուրախութեան եւ ցնծութեան Աստուած (Սղ 43.4): Աշխարհի անձրացած է տրտմալից եւ պարտուած ֆրիստոնեաներ տեսնել: Ժամանակն է, որ աշխարհի քիչ մը ուրախ եւ յաղթանակող ֆրիստոնեաներ տեսնէ:

Իբրեւ ֆրիստոնեաներ, չապրինք այնպիսի կեանք մը, որ պատճառ դառնանք որ ուրիշներ խրտչին եւ չուզեն Աստուծոյ դառնալ: Վաւերական ֆրիստոնեայ մարդը, պէտք է ուրախարար ներկայութիւն ըլլայ ամենուրեք, պէտք է փնտոռող ներկայութիւն դառնայ եւ ո՛չ թէ ներկայութիւն մը որմէ ամէն ոք խուսափիլ փափաքի:

5.- Մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի հետեւեալը: Ինչպէս «երգի ու պարի» ձայներ չէին լսուեր երբ կրտսեր գաւակը տունէն չէր հեռացած, այնպէս ալ «երգի ու պարի» ձայներ չէին լսուեր անոր տունէն հեռանալէն ետք նաեւ: Ինչո՞ւ արդեօք: Պարզելու համար քանի մը նշմարտութիւններ.--

ա.- Պարզելու թե Աստուած չի՛ կրնար ուրախ ըլլալ, ո՛չ այն մարդոց համար որոնք իր (տունի) շունչին ներքե կ'ապրին, որոնք սակայն իր հարագատ գաւակները չեն, եւ ո՛չ ալ այն մարդոց համար՝ որոնք զինք լիքած ու «հեռու երկիրներ» գացած են:

բ.- Պարզելու թե Աստուած չի կրնար ուրախ ըլլալ այնքան ատեն երբ իր գաւակներէն ոմանք հեռու են իրմէ եւ կորուստի ցամբուն մէջ: Աստուած կ'ուրախանայ երբ թոյլ տանք որ փրկէ մեզ: Լսեցէ՛ք թէ ի՛նչ կ'ըսէ Սոփոնիա մարգարէն. «Անիկա քեզի համար ուրախութեամբ պիտի գուարնանայ ու իր սիրովը քեզի թողութիւն պիտի տայ եւ քու պատնառովդ ցնծութեամբ պիտի ուրախանայ» (Սոփ 3.17): Այո՛, մե՛նք ենք Աստուծոյ ուրախութեան պատնառը: Մե՛նք են Աստուծոյ ցնծութեան առարկան: Ամէն մարդ որ Աստուծոյ կը դառնայ՝ կ'ուրախացնէ զԱստուած եւ կ'ուրախանայ Աստուծով:

գ.- Աստուծմէ հեռացող մարդը ո՛չ միայն ի՛նք սգաւոր կը դառնայ, այլ նաեւ զԱստուած սգաւոր կը դարձնէ: Աստուծոյ եւ մարդուն սուգին փարատումը՝ Աստուծոյ եւ մարդուն վերամիացումով միայն կ'ըլլայ: Աստուածածարաւ մարդուն ծարաւը՝ միայն Աստուած կրնայ յագեցնել, եւ մարդածարաւ Աստուծոյն ծարաւը՝ միայն մարդը կրնայ յագեցնել: Քրիստոսի անձին մէջ էր որ իրարու կարօտով տոչորող Աստուած եւ մարդ ողջագուրուեցան ու յագեցան:

6.- Կրտսեր գաւակը իր հօրենական տունը ձգելով՝ «հեռու երկիր մը գնաց», կարծելով որ այդ հեռու երկրին մէջ պիտի գտնէր ու լսէր «երգի ու պարի ձայներ», բայց ան խոզերու խանչիւնէն զատ ուրիշ բան չլսեց: Ապերախտութիւն է փորձել «երգի ու պարի» ուրախացուցիչ այդ ձայներուն հասնիլ առանց Աստուծոյ: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր նպատակը միայն մեր անձերը ուրախացնելը չէ, այլ նաեւ ու մանաւանդ, զԱստուած ուրախացնելը: Փորձել առանց Աստուծոյ հասնիլ «երգի ու պարի» ուրախացուցիչ ձայներուն, պիտի նշանակէր փորձել փրկուիլ առանց աշխարհի Փրկիչին (Յհ 4.42), ազատիլ առանց Ազատարարին (Յհ 8.36), սրբուիլ առանց Սրբողին (Սղ 51.2), մաքրուիլ առանց Մաքրողին (Տիտ 2.14), բուժուիլ առանց Բժիշկին (Ղկ 4.23):

«Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ի՛նչ կայ» (Ղկ 15.26):
Երկու հաստատումներ.-

1.- Երբ երէց գաւակը «երգի ու պարի ձայներ լսեց», կանչեց ծառաներէն մին եւ ուզեց գիտնալ եղելութիւնը: Որո՞նք կը ներկայացնեն այն ծառաները որոնցմէ մէկուն հետ երէց գաւակը խօսեցաւ: Երեք բացատրութիւններ տրուած են.-

ա.- Ոմանք կ'ենթադրեն, որ այստեղ յիշուած ծառաները՝ գՔրիստոս ընդունող հրեաները կը ներկայացնեն: Այս իմաստով, երէց զաւակը (Փարիսեցի հրեայ մը), ուրիշ հրեաներու կը հարցնէ կրտսեր զաւկին մասին: Տան մէջ գտնուող ծառաները (հրեաները) սիրով ընդունած էին դարձի եկած իրենց հեթանոս եղբայրը, մինչ երէց զաւակը՝ ո՛չ: Այս իրողութիւնը ցոյց կու տայ, որ հրեայ ազգը խոստացեալ Փրկիչին «պատճառով» բաժնուեցաւ երկու խումբի. ոմանք ընդունեցին գՔրիստոս եւ քրիստոնեաները, իսկ ուրիշներ՝ մերժեցին:

բ.- Ուրիշներ կ'ենթադրեն որ ծառաները հրեշտակներն են, եւ իրենց այս ենթադրութիւնը հաստատող երկու պատճառներ կը ներկայացնեն: 1) Անոնք կ'ըսեն որ հրեշտակները իրենք եւս կոչուած են «ծառայ» կամ «ծառայող» (Եբր 1.14: Մտ 4.11), եւ 2), ինչպէս այստեղ յիշուած ծառաները ուրախակից եղան իրենց տիրոջ երբ անոր կրտսեր զաւակը տուն վերադարձաւ, այնպէս ալ հրեշտակները իրենք կ'ուրախանան «մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ» (Ղկ 15.10):

գ.- Վերջին եւ հաւանակագոյն ենթադրութիւնը այն է, որ այստեղ յիշուած ծառաները, կը ներկայացնեն բոլոր անոնք՝ որոնք ապաշխարութեամբ Քրիստոսի զաւակ դարձած են:

2.- Ինչո՞ւ երէց զաւակը կանչեց ծառաներէն մին: Բնագիրը կ'ըսէ, կանչեց որպէսզի իմանայ թէ ի՛նչ կայ եւ ի՛նչ կ'անցնի կը դառնայ: Առաջին հապնեպ հայեացքով մը կրնայ մեզի թուիլ թէ երէց զաւկին հարցումը պարզապէս իր հետաքրքրութիւնը գոհացնելու համար էր, կամ հարց կու տար՝ քանի բան մը կար գոր կ'ուզէր գիտնալ: Բայց այդպէ՞ս էր: Խորքին մէջ իր հարցումը, ո՛չ թէ ցոյց կու տար թէ ինք կ'ուզէր պարզապէս եղելութենէն իրագեկ ըլլալ, այլ ցոյց կու տար թէ ինք իր իրաւունքը կը սեպէր՝ տնօրինողը եղած ըլլալ պատահածին: Այլ խօսքով, ըստ իրեն, առանց իր գիտութեան բայց մանաւանդ՝ արտօնութեան, չէր կրնար այդպիսի բան ըլլալ, չէր կրնար կրտսեր զաւակը տուն դարձած ըլլալ, չէր կրնար պարարտ հորթը մորթուիլ: Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ երէց զաւակը, այլ խօսքով՝ Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, իրենց իրաւունքը կը սեպէին պարարտ հորթը, իրենց իրաւունքը կը սեպէին «լաւագոյն պատմութեան», «մատանին» ու «կօշիկը», իրենց իրաւունքը կը նկատէին տան մէջ «երգի ու պարի ձայներ» լսելը, իրենց իրաւունքը կը սեպէին տան ուրախութիւնը վայելելը, բայց հիմա կը տեսնեն թէ այդ բոլորը առնուեցաւ իրենցմէ, եւ ասիկա զիրենք զայրոյթով լեցուց, եւ ոտքի ելան հարց տալու թէ ի՛նչ կը պատահի, ինչո՞ւ կը պատահի:

«Ծառան ըսաւ իրեն.– "Եղբայրդ եկաւ, եւ որովհետեւ ողջ առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց"» (Ղկ 15.27): Քանի մը հաստատումներ.–

1.– Վերեւ ըսինք, թէ հոս յիշուած ծառաները կրնան Քրիստոսը ընդունող հրեաները ըլլալ, կրնան հրեշտակները ըլլալ, եւ կամ, կրնան ընդհանրապէս Քրիստոսը ընդունող բոլոր մարդիկը ըլլալ: Ով որ ալ ըլլայ ծառան, մէկ բան որոշ է, որ ան «եղբայր» կը նկատուի ոեւէ մէկը որ Քրիստոսի կը միանայ, ա՛յս է ինչ որ կը բացայայտէ «եղբայրդ եկաւ» բառերը:

2.– «Եղբայրդ» բացատրութիւնը նաեւ ցոյց կու տայ, թէ Քրիստոսի եկողները եղբայր եւ քույր կը դառնան իրարու: Երէց գաւկիսն եսասիրութիւնը թոյլ չտուաւ որ ան տեսնէր այս մշտնապահութիւնը եւ ուրախանար իր եղբորը դարձով: Քրիստոս իր արիւնով կը սրբէ ոեւէ անձ որ կը դիմէ իրեն՝ մաս կազմելու իր հօտին:

3.– «Ողջ առողջ վերադարձաւ» բառերը եթէ մէկ կողմէ կը պարզեն որ մեր երկնաւոր Հայրը կը սպասէ որ չկորսուած ու չփնացած՝ իրեն դառնանք, միւս կողմէ սակայն, նոյն այս բառերը մեզի կը յիշեցնեն թէ ոմանք ալ երբեք Աստուծոյ չեն դառնար:

4.– «Հայրդ պարարտ հորթը մորթեց»: Երկու նշումներ.–

ա.– Այն հրեաները որոնք կը սպասէին Խոստացեալ Փրկիչին յայտնուելուն, այս տողը լսածնուն պէս, պէտք էր անմիջապէս անդրադառնալին թէ Յիսուս ի՛նքն էր իր Հօրը կողմէ մորթուած հորթը, այլ խօսքով՝ մարդոց փրկութեան համար ընծայուած գոհր:

բ.– Երբ կ'ըսուի որ հայրը պարարտ հորթը մորթեց իր որդիին տուն դարձին առիթով, խորքին մէջ ըսել կ'ուզուի թէ ոեւէ անձ որ դարձի կու գայ, մեր երկնաւոր Հայրը պարարտ հորթին, այսինքն՝ Քրիստոսի միջոցաւ գինք կ'ընդունի: Մտաբերեցէք թէ Յիսուս ինք եւս հաստատեց թէ միայն իր միջոցաւ է որ մարդիկ կրնան Հայր Աստուծոյ գալ (Յհ 14.6):

«Երէց եղբայրը գայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ» (Ղկ 15.28): Քանի մը հաստատումներ.–

1.– Ե՞րբ գայրացաւ երէց որդին: Զայրացաւ երբ լսեց որ պարարտ հորթը մորթուած էր իր պատիկ եղբոր համար: Երէց գաւկիսն համար կարեւոր չէր որ եղբայրը ողջ առողջ դարձած էր կամ ոչ. իրեն համար կարեւորը պարարտ հորթն էր եւ այդ հորթին գեներմը: Ինչո՞ւ համար: Պարարտ հորթը գ՜րիստոս է որ կը խորհրդանշէ: Հրեաները, յատկապէս Փարիսեցիները, ինչպէս ասկէ առաջ ալ ըսի, կը հաւատային որ

խոստացեալ Մեսիան՝ Քրիստոսը, միայն իրե՛նց համար է, իրե՛նց կը պատկանի, եւ անոր թագաւորութիւնը՝ միայն իրե՛նց թագաւորութիւնն է: Բայց հիմա որ կը տեսնեն թէ ան բոլորի՛ն համար իր արիւնը կը թափէ՝ կը գրգռուին եւ այլամերժ կը դառնան:

Փարիսեցիները չէին կրնար համոզուիլ թէ ի՛նչպէս օրէնքը չնանչցող եւ ի գործ չդնող մարդիկ՝ հեթանոսներ, մաքսաւորներ եւ ամէն դասակարգի պատկանող մեղաւորներ, կրնային իրենց հետ միասին նոյն ուրախութեան բաժնեկից դառնալ: Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները կը դժուարանային հաւատալ թէ հեթանոսները որոնց հանդէպ իրենք այնքան զգուհեմ ունէին, կոչուած էին Մեսիայով իրագործուելիք հոգեւոր փրկութեան ժառանգորդները դառնալ: Ըստ Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն, հեթանոսի մը հետ գործակցիլը, անոնց հետ սեղան նստիլը, եւ նոյնիսկ անոնց բարեւ տալը՝ կատարեալ սրբապղծութիւն էր:

Փարիսեցիները ո՛չ միայն այլամերժ էին, այլեւ՝ եղբայրամերժ: Անոնք իրենք գիրենք սեփականատէրերը կը կարծէին խոստացեալ Փրկիչով իրականանալիք «ագգային» ազատագրութեան: Իրենց համար, այդ ագգային ազատագրութեան մէջ մաս եւ բաժին չէին կրնար ունենալ իրենց այն հրեայ եղբայրները՝ որոնք անդամ չէին իրենց ժողովարաններուն եւ որոնք գործադրողներն ու պահապանները չէին այդ ժողովարաններուն մէջ քարոզուող օրէնքներուն եւ իրենց հայրերու աւանդութեանց:

Ի՞նչ է պատգամը այս կէտին: Նայինք մենք մեզի, չըլլայ որ մենք եւս կը կարծենք որ Քրիստոս եւ Քրիստոսի պարգեւները միայն մեզի՛ համար են, փրկութիւնը միայն մեզի՛ համար է:

2.- «Չուզեց ներս մտնել»: Երէց որդին չուզեց ներս մտնել եւ մասնակից դառնալ ուրախութեան եւ իրախնամքին: Ի՞նչ է պատգամը այս կէտին: Աշխարհի մարդը չի հանդուրժեր երկինքի ուրախութեան ձայներուն, չ'ախորժիր անոնցմէ, չ'ուզեր ու չի կրնար զանոնք լսել կամ անոնց մասնակցիլ: Չար մարդիկ բարիներուն երգերը չեն ուզեր լսել: Ըսուած է. «Չարերը երգ չունին»:

3.- «Երէց եղբայրը գայրացաւ եւ չուզեց ներս մտնել»: Անառակ որդին իր եղբոր դէմ չէր ապստամբած, ո՛չ ալ անիրաւութիւն ըրած էր իր եղբոր դէմ. ան իր հօ՛րը դէմ ապստամբած էր, իր հօ՛րը դէմ անիրաւութիւն գործած էր: Հակառակ ասոր, հետաքրքրական է, փոխանակ հայրը ի՛նք դիրք բռնէր իր կրտսեր որդիին նկատմամբ, երէց որդին ի՛նք դիրք բռնեց իր կրտսեր եղբոր հանդէպ: Եւ ինչո՞ւ դիրք բռնեց եւ գայն մերժեց: Մերժեց գայն, որովհետեւ տեսաւ թէ ինչպէս հայրը անոր

հանդէպ բարերարութիւն ու ողորմութիւն ցուցաբերեց: Այսօր նոյնը չի՞ պատահիր: Այսօր մեր կեանքին մէջ չկա՞ն մարդիկ որոնք դիրք կը բռնեն մեզի հանդէպ, թէպէտ մենք կրնանք անիրաւութիւն մը ըրած չըլլալ անոնց: Անոնք դիրք կը բռնեն եւ կը մերժեն մեզ ընդունիլ, պարզապէս որովհետեւ Աստուած մեզի հանդէպ գթութիւն եւ ողորմութիւն կը ցուցաբերէ:

4.- «Երէց եղբայրը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել»: Երէց եղբայրը (Փարիսեցիները), ամենէն շատ Աստուծոյ անունով խօսող մարդիկն էին, բայց միաժամանակ ամենէն շատ Աստուծմէ հեռու եղող մարդիկն էին: Եւ որովհետեւ հեռու էին Աստուծմէ՝ չէին կրնար հանդուրժել ոեւէ մէկը որ կը մօտենայ կամ մօտիկ է Աստուծոյ: Ահա թէ ինչո՞ւ անոնք մերժեցին պատմութեան բոլոր կրտսեր զաւակները որոնք կը փորձէին փնտռել ու գտնել նշմարտութիւնը:

Ան որ Քրիստոսի սէրը չէ նաշակած եւ Քրիստոսը իր եղբայրը չէ դարձուցած՝ չի կրնար հանդուրժել ուրիշը Քրիստոսի հետ հաղորդակցութեան մէջ տեսնել: Աստուծոյ սէրը նանչցած եւ Աստուծոյ զաւակները դարձած մարդիկ անպայման որ պիտի ուզեն որ ուրիշներն ալ նաշակեն Աստուծոյ սէրը: Մի՛այն Քրիստոսի եղբայրներն ու բոլորքը դարձած հաւատացեալները կրնան իբրեւ եղբայր եւ բոլոր ընդունիլ իրենց նմանները:

Ո՞հ, սիրելի՛ ընթերցող, եթէ երբեք հոգեւոր մըն ես, եւ սակայն, կը մերժես իբրեւ բոլոր եւ եղբայր ընդունիլ ուրիշ հոգեւորներ, Քրիստոսի սիրող սիրտն է որ սրախողխող ըրած կ'ըլլաս: Քրիստոս խաչին վրայ իր արիւնը թափեց, որպէսզի նոր կեանք պարգեւէ նոր կեանք փնտռողներուն: Ճշմարիտ քրիստոնեայ մարդը չի՞ կրնար մերժել այդ նոր կեանքին պարգեւը ստացողը:

Ասոր գեղեցկագոյն օրինակը Պօղոս առաքեալ կու տայ Փիլիմոնին ուղղած իր նամակով: Նամակը կը խօսի Ոնեսիմոս անունով ստրուկի մը մասին որ իր տիրոջմէն՝ Փիլիմոնէն փախած էր: Ոնեսիմոս Պօղոսին ձեռքով քրիստոնեայ կը դառնայ, երբ վերջինս բանտին մէջ կը գտնուէր: Առաքեալը Փիլիմոնին նամակ մը կը դրկէ ըսելով. «Ոնեսիմոս ժամանակաւոր կերպով բաժնուեցաւ քեզմէ, որպէսզի յաւիտենապէս ունենաս զայն, ո՛չ իբրեւ ստրուկ, այլ՝ ստրուկէն շատ վեր՝ իբրեւ սիրելի եղբայր» (Փլմ 15-16):

Այս խօսքը ցոյց կու տայ, թէ ինչպէս Քրիստոսի սէրը, վարպետ եւ ստրուկ մարդիկ, իշխան եւ իշխուած մարդիկ, իրարու եղբայր կը դարձնէ: Երբ Քրիստոսի հաւատքը գորեղապէս ներգործէ մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ, այն ատեն, ստրկական հոգեբանութիւնը տեղի

կու տայ ֆրիստոնէական եղբայրսիրութեան ոգիին: Ոնեսիմոս շարունակեց մնալ «ստրուկը» Փիլիմոնին, եւ սակայն, ան անկէ աւելին դարձաւ Փիլիմոնին համար. դարձաւ եղբայր Յիսուս Քրիստոսով:

5.- «Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ»: Հայրը դուրս ելաւ եւ աղաչեց իր երէց որդիին որ ներս մտնէ բայց որդին մերժեց: Ի՞նչ ցոյց կու տայ ասիկա: Յոյց կու տայ, որ մեր երկնաւոր Հայրը հրաւիրեց հրեաները ընդառաջելու Քրիստոսի հրաւերին եւ իր թագաւորութենէն ներս մտնելու, բայց հրեաները մերժեցին: Նոյն այդ հրաւերը այսօր ալ մեր երկնաւոր Հայրը կ'ուղղէ ամէն մէկ մարդու:

6.- Մենք երէց գաւկիս վերաբերմունքին կամ կեանքին մէջ սխալ բան չենք գտներ մինչեւ իր կրտսեր եղբօր տուն վերադարձը: Իր կրտսեր եղբօր տուն վերադարձը եւ անոր համար պարարտ հորթին գենումը, իրեն համար փորձութիւն ու փորձաքար էր, եւ այս փորձութեան դիմաց իր իսկական ինքնութիւնը հանդէս եկաւ: Ասկէ կը սորվինք թէ փորձութիւնները մեր իսկական ինքնութիւնը հանդէս կը բերեն: Փորձութիւնները կու գան հրապարակելու թէ ի՞նչպիսի ֆրիստոնէայ եղբայրներ ու բոյրեր ենք:

Երբ մեր մէկ եղբօր կամ քրոջ համար «պարարտ հորթ» մը տրամադրուի, այլ խօսքով՝ երբ մեր մէկ եղբայրը կամ բոյրը յատուկ պարգեւ մը ստանայ Աստուծմէ, կ'ուրախանա՞նք, թէ՛ երէց եղբօր նման դիրք կը բռնենք անոր հանդէպ, կեցուածք կը ճշդենք եւ գայն մեր ատելութեան առարկան կը դարձնենք: Ուրիշին վայելած օրհնութիւնը պէ՞տք է մեզի համար փորձութեան առիթ ըլլայ:

Քննենք մենք զմեզ: Մենք ալ արդեօք երէց գաւկիս նման չե՞նք մերժել մարդիկ որոնք դարձի կու գան Աստուծոյ: Մենք ալ արդեօք անողորմ չե՞նք գտնուիր մարդոց հանդէպ որ Աստուծոյ ողորմութեան կ'ապաւինին: Պէ՞տք է մերժել ուրախակից ըլլալ մեր երկնաւոր Հօրը երբ իր գաւակներէն մին դարձի կու գայ: Պէ՞տք է մեր նախանձը բորբոքի երբ լսենք կամ տեսնենք որ մեր Հայրը պարարտ հորթը կամ հորթերը մորթած է մեր եղբայրներէն եւ բոյրերէն մէկուն կամ միւսին համար: Բոլոր մարդոցմէն աւելի, Աստուծոյ գաւակները իրենք չէ՞ որ իրարու նկատմամբ սիրալիր եւ զիրար ընդունող պէտք է ըլլան: Ո՛չ ոք կրնայ ընդունիլ իր նմանը եթէ երբեք Աստուծոյ կողմէ ընդունուած չգգայ: Մերժուած ըլլալու զգացումն է որ մերժել կու տայ մեզի մեր եղբայրն ու բոյրը: Երէց գաւակը մերժուած ըլլալու զգացումէն կը տառապէր:

7.- «Աղաչեց որ ներս մտնէ»: Այս բառերուն վերաբերեալ չորս հակիրճ մատնանշումներ. —

ա.- Ուշագրաւ է «աղաչեց» բառը: Հայրը իշխանութիւն ունեցող մարդ էր: Ան կարող էր ստիպել իր որդիին որ ներս մտնէ, կարող էր հրահանգել, բայց չհրահանգեց, չսպառնաց, չստիպեց, այլ՝ աղաչեց: Ի՞նչ է պատգամը այս կէտին: Մեր երկնաւոր Հայրը թէպէտ ստիպելու կարելիութիւնը ունի բայց չ'ըստիպեց, չ'ըսպառնար, բռնի ոյժով դարձի չի բերեր: Դարձի գալը մարդուն ազատ կամֆին ձգուած է:

բ.- «Աղաչեց» բացատրութիւնը նաեւ ցոյց կու տայ որ Աստուած ամէն ճիգ կը թափէ եւ ամէն միջոցի կը դիմէ իրմէ հեռացածները վերստին իրեն մօտեցնելու համար: Ինչպէս հայրը ջանաց համոզել իր զակին տուն մտնելու եւ խրախնամֆին մասնակցելու, այնպէս ալ Աստուած կ'աշխատի համոզել մարդիկը մուտֆ գործելու երկինֆի արֆայութիւն եւ մասնակցելու երկինֆի ուրախութեան:

գ.- «Աղաչեց որ ներս մտնէ»: Այս բառերը կը պարզեն թէ ինչպէս Աստուած երբեֆ չ'ուզեր որ մարդիկ կորսուին, այլ կ'ուզէ որ ներս մտնեն, այլ իօսֆով՝ արֆայութիւն մտնեն, փրկուին: Ի հարկին ան կ'աղաչէ, միայն թէ մարդիկ չկորսուին:

դ.- «Ներս մտնէ»: Այս երկու բառերը ցոյց կու տան թէ Քրիստոսի աշխարհ գալուն նպատակը ուրիշ բան չէր եթէ ոչ մարդկութիւնը ներս մտցնել՝ երկինֆ առնել:

«Իսկ անիկա պատասխանեց.- "Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոնէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ու մը չտուիր ինձի, որ ուրախանայի քարեկամներու հետ"» (Ղկ 15.29): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ»: Այս բառերը պարզապէս ցոյց կու տան որ հրեայ ազգը վաղուց Աստուծոյ կողմէ ընտրուած եւ երկա՛ր տարիներէ ի վեր Աստուծոյ ծառայող ժողովուրդ եղած է:

2.- «Քեզի կը ծառայեմ»: Երէց զակին հետաֆրֆութեան առարկան իր մատուցած ծառայութիւններն էին եւ ո՛չ թէ իր եղբօր դարձն ու փրկութիւնը: «Կը ծառայեմ» բառերը կը յայտնեն որ հրեաները, յատկապէս Փարիսեցիները, երբեֆ չէին ըմբռնած զԱստուած իբրեւ հայր եւ իրենֆ զիրենֆ իբրեւ իր զակները: Անոնֆ ծառայի հոգեբանութեամբ կը մօտենային Աստուծոյ: Քննեմֆ մեր անձերը: Չըլլար որ մենֆ եւս կը վազվզենֆ Աստուծոյ գործին համար եւ մենֆ զմեզ իր ծառաները կը զգանֆ, առանց սակայն իր զակները ըլլալու կամ զգալու:

3.- Հայրը դարձի եկող իր կրտսեր զակին աւելի բարձր դիրֆ պարգեւեց քան իր երէց զակին, որովհետեւ, ան դարձի եկող իր զակին որդիի հանգամանֆ պարգեւեց, մինչ երէց զակը՝ ծառայի դիրֆ ունէր

տան մէջ: Երէց գաւակը ինձգիմ կը ներկայացնէ իբրեւ ծառայ եւ հրահանգներ ի գործ դնող մարդ, մինչ երբ կրտսեր գաւակը ուզեց ինձգիմ ծառայ կոչել՝ հայրը թոյլ չտուաւ: Յստակ տարբերութիւն կայ երկուքին ունեցած իշխանութեանց եւ դիրքերուն միջեւ: Երէց գաւակը չէր կրնար մինչեւ վերջ մնալ իր հօրը տան մէջ, եւ ոչ ալ կրտսեր գաւակը՝ դուրս, որովհետեւ «ծառան տան մէջ մնայուն չէ, մինչդեռ որդին մնայուն է» (Յհ 8.35):

4.- «Ոեւէ մէկ հրահանգը չանտեսեցի»: Այս խօսքը եւս կը պարզէ հրեաներուն բայց յատկապէս Փարիսեցիներուն ունեցած ստրուկի ու ծառայի հոգեբանութիւնը: «Հրահանգ» բացատրութեան մէջ հարկաւ պէտք է «Օրէնք» հասկացողութիւնը կարդալ: Փարիսեցիները Մովսիսական Օրէնքին ստրուկներն էին: Նայինք մենք մեզի: Չկա՞նք կամ չե՞նք ստեղծած մեր կեանքին մէջ յատուկ օրէնքներ որոնց ստրուկները դարձուցած ենք մենք զմեզ:

5.- «Սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինձի»: Օրէնքը նոյնիսկ ուլ մը տալու կարող չէ, այլ խօսքով, օրէնքներու գործադրութեան միջոցաւ նուազագոյն օրհնութիւնն անգամ ձեռք ձգելու անկարող ենք: Օրէնքներու գործադրութեան, կամ ըսենք, իր կատարած բարի գործերուն ապաւինած մարդը՝ յետոյ քան պիտի չշահի երկինքի մէջ: Բարեգործութիւնը արժէք կը ստանայ միայն այն տեսն երբ դարձի գանձ եւ իսկական ֆրիստոնեայ կեանք ապրինք:

6.- «Նոյնիսկ ուլ մը չտուիր ինձի»: Ինչո՞ւ երէց գաւակը «ուլ» կը պահանջէ իր հօրմէն: Ի՞նչ ցոյց կու տայ ասիկա: Ան իր մատուցած ծառայութեանց փոխարէն՝ պարտաւոր կը նկատէր իր հայրը «ուլ» մը տալու իրեն: Սա կը պարզէ որ Փարիսեցիները կը կարծէին որ Մովսիսական օրէնքները գործադրելով՝ զԱստուած պարտաւոր կը դարձնէին իրենց նկատմամբ: Մենք չենք կրնար մեր օրինապահութեամբ, ո՛չ ալ մեր կատարած յետոյ քան բարի գործով, պարտաւորութեան տակ դնել զԱստուած: Երբեք չկարծենք որ բարիք գործելով կրնանք զԱստուած մեզի հանդէպ պարտաւոր դարձնել:

7.- «Նոյնիսկ ուլ մը չտուիր ինձի»: Ճիշդ էր արդեօք որ երէց որդին ուլիկի մը համար վիճէր հօրը հետ, կամ հարցականի տակ առնէր անոր անկեղծ սէրը իրեն հանդէպ: Սիրելի՛ ընթերցող, արդեօք մենք ալ երէց գաւակի նման չե՞նք վերաբերիր մեր երկնաւոր Հօր հետ: Գիտե՞ք թէ Աստուած որքա՞ն անհանգիստ կ'ըլլայ երբ հետը կը վիճինք «ուլիկի» մը համար: Մի՛ առարկէք որ Աստուծոյ հետ չէք վիճիր «ուլիկի» մը համար: Կրնայ ըլլալ որ «ուլիկի» մը համար չէք վիճիր, բայց արդեօք ուրիշ անկարեւոր եւ չնչին բաներու համար ալ չէ՞ք վիճիր Աստուծոյ հետ:

Իսրայելացիները ցորենի եւ գինիի համար չապստամբեցա՞ն Աստուծոյ դէմ (Ովս 7.14): Վարունգի, սոխի ու սխտորի համար չտրտնջացի՞ն Աստուծոյ դէմ (Թւ 11.1, 5): Հացի համար չդժգոհեցա՞ն Աստուծոյ դէմ (Թւ 21.5):

8.- «Նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի»: Թէպէտ հօրը ամբողջ ունեցուածքը իր երէց զակիին իշխանութեան ներքեւ էր, եւ սակայն, զանոնք օգտագործելու իշխանութենէն կարծէք զրկուած էր: Աստուծոյ բազմապիսի օրհնութիւնները առաջին հերթին հրեայ ազգին չէ՞ր որ տրուեցաւ, եւ սակայն, անոնցմէ քանիչն էր կրցան այդ օրհնութիւնները վայելել: Ողբերգութիւն է ըլլալ զաւակը երկինքի եւ երկրի Աստուծոյն, եւ սակայն, ուլիկի մը կարօտ ըլլալ: Տաւալի բան է ըլլալ «լաւագոյն պատմունաններ» եւ «պարարտ հորթեր» ունեցող երկնաւոր Հօր մը զաւակը, եւ սակայն, ուլիկի մը կարօտ ըլլալ: Ի՞նչ դժբախտութիւն է Կենաց Աղբիւրին հետ ըլլալ եւ ծարաւէն տոչորիլ: Այսօր նաեւ, դժբախտաբար, անհաշուելի է թիւը այն մարդոց՝ որոնք թէպէտ Աստուծոյ հետ «կ'ապրին», եւ սակայն, ուլիկի մը կարօտ կը մնան: Հրեաներ ուլիկի մը անգամ չկրցան տիրանալ օրէնքի գործադրութեամբ, որովհետեւ մերժեցին պարարտ հորթը՝ Քրիստոսը: Այո՛, ան որ պարարտ Հորթը չ'ընդունիր՝ ձեռքը ուլիկ մը անգամ չ'անցնիր, այլ իսուֆով՝ ամենէն պզտիկ օրհնութիւնը անգամ չի կրնար ունենալ, աստուածային ամենէն պզտիկ գորակցութիւնը անգամ չի կրնար վայելել:

9.- «Նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի»: Երէց զաւակը (Փարիսեցիին) չէ՛ր կրնար ըմբռնել թէ ի՞նչպէս Աստուած հորթը կու տար «հեթանոսի» մը, իսկ ուլիկը՝ օրինապահ հրեայի մը: Ան կը հաւատար որ հօրը ամբողջ ունեցուածքը իր սեփականութիւնն էր: Ան համոզուած էր որ միայն ի՛ր իրաւունքն էր վայելել հօրը հարստութիւնը: Ան կը մոռնար որ Աստուած իտրութիւն չդրաւ ու չի՛ դներ հրեաներուն եւ հեթանոսներուն միջեւ (Գրծ 15.9): Որքան յանախ կը մոռնանք որ Աստուած իր ողորմութիւնը կը թափէ ինչպէս ողորմածներուն վրայ, այնպէս ալ անողորմներուն եւ «ողորմելիներուն» վրայ հաւասարապէս: Մեզի համար անողորմ մարդը՝ Աստուծոյ համար ողորմութեան կարօտ մարդն է:

10.- «Որ ուրախանայի բարեկամներուս հետ»: Այս բառերը յստակօրէն ցոյց կու տան որ երէց որդին իր ուրախութիւնը տունէն դուրս՝ հօրմէն հեռու՝ բարեկամներուն հետ կը գտնէր: «Նոյնիսկ ուլ մը» չկրցան ունենալ Փարիսեցիները, որովհետեւ անոնք աւելի հետաքրքրուած էին ուլիկով քան ուլիկին տուիչով՝ Աստուծով, եւ ասոր

փաստը այն է, որ երեց գաւակը ուլիկ մը կը կր պահանջէր իր «բարեկամներո՛ւն հետ» ուրախանալու եւ ո՛չ թէ իր հօրը հետ: Այս գետնի վրայ, յստակ եւ հսկայ տարբերութիւն մը կայ երեց եւ կրտսեր գաւակներուն միջեւ: Երեց գաւակը իր ուրախութիւնը կը փորձէր գտնել տունէն դուրս՝ իր բարեկամներուն հետ, մինչ կրտսեր գաւակը, իր ուրախութիւնը գտաւ տունէն ներս՝ իր հօրը հետ:

Մենք ալ երբեմն չե՞նք մտածեր գէթ պահուան մը համար հեռանալ Աստուծմէ՛ եւ «ուլիկով» մը երթալ մեր բարեկամներուն անոնց հետ ուրախութիւն ընելու: Ո՛հ, անհուն ողբերգութիւն է խորհիլ թէ Աստուած հակառակ է մեզ ուրախ տեսնելու գաղափարին: Ի՞նչպէս Աստուած կրնայ հակառակ ըլլալ մեր ուրախութեան, երբ ուրախութիւն է իրեն համար մեզի բարիք ընելը (Եր 32.41): «Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ ու մենք ուրախացանք» (Սղ 126.3), բայց ան ոչինչ ըրաւ կամ կ'ընէ մեզ տրտմեցնելու համար: Մեր հոգիները միայն Աստուծմով կրնան ուրախանալ (Ես 61.10): Աստուծմէ հեռացող մարդուն սիրտը սգատունի կը վերածուի:

Երբ նման հաստատումներ կ'ընեմ, ըսել չեմ ուզեր որ Աստուծոյ միակ նպատակը մեզ ուրախացնելն է: Ճիշդ է որ Աստուած կ'ուրախանայ երբ մեզ ուրախ տեսնէ, բայց Աստուծոյ նպատակը մեզ ուրախացնելը չէ, այլ՝ սրբացնելը: Աստուած մեզ սրբութեան հասցնելու համար միշտ ալ ուրախ ցամբաներէ չէ որ կ'առաջնորդէ մեզ: Սակայն, կարեւորը այն չէ, թէ ի՛նչ ցամբաներէ կ'առաջնորդուինք, կարեւորը այն է, թէ ո՞վ է որ մեզ կ'առաջնորդէ: Եթէ Քրիստոս է մեր ցամբան (Յհ 14.6) եւ եթէ Աստուծոյ Հոգին է որ մեզ այդ ճամբայէն կ'առաջնորդէ (Հո 8.14: Գղ 5.18), ամէն տեսակի նախատիմք եւ անարգանք ուրախութեամբ կրնանք տանիլ (Գրծ 5.40-41): Նախատիմքները սիրայօժար կերպով եւ խնդութեամբ տանիլը Աստուծոյ կողմէ մեզի պարգեւուած շնորհք մըն է:

«Մինչդեռ, երբ եկաւ այդ որդիդ, որ քու ստացուածքդ պռոնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար» (Ղկ 15.30): Քանի մը ամփոփ մատնանշումներ. --

1.-- «Երբ եկաւ այդ որդիդ»: Երեց գաւակը կը մերժէ դարձի եկող իր եղբայրը՝ եղբայր կոչել: Ան հօրը կ'ըսէ. «Այդ որդիդ», փոխանակ ըսելու. «Իմ եղբայրս»: Սա յստակօրէն ցոյց կու տայ թէ ծայրայեղական հրեաները ընդհանրապէս, բայց յատուկ կերպով Փարիսեցիները, թշնամական վերաբերմունք ցուցաբերեցին բոլոր անոնց նկատմամբ՝ որոնք ընդունեցին Քրիստոսը:

2.- «Այդ որդիդ» բացատրութենէն յստակ կը դառնայ որ երէց գաւակը իբրեւ եղբայր չէր ընդուներ իր կրտսեր եղբայրը: Արդարեւ, որքան դժուար էր Փարիսեցիներուն համար, իբրեւ եղբայր ընդունիլ Աստուծոյ օրէնքը «չնանչցող» մեղաւոր դասակարգին պատկանող մարդիկը: Արդեօք մենք ո՞ր խումբի մարդոց կը պատկանինք. «այդ որդիդ» ըսողներո՞ւն խումբին, թէ՛ «մեր եղբայրը» ըսողներուն խումբին: Արդեօք երէց գաւակին նման մենք ալ յաճախ չե՞նք գլանար մեր նմանը մեր եղբայրը կոչել: Զկա՞ն մարդիկ որոնք կ'ամչնան իրենց նմանները իրենց եղբայրն ու քոյրը դաւանելու: Քանի՞ ուսեալներ անուսներուն հետ կը վերաբերին այնպէս ինչպէս պիտի վերաբերէին իրենց եղբայրներուն հետ: Մեծահարուստներէն քանի՞նք իրենք զիրենք հաւասար ու համարժէք կը նկատեն չճաշող մարդոց հետ:

3.- «Քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսիսց»։ Երէց գաւակը փորձեց մատնացոյց ընել իր կրտսեր եղբոր սխալներն ու յանցանքները, որպէսզի կարենար ինքզինք առաւել եւս արդար ու մաքուր ցոյց տալ: Ան յիշեց ու թուեց իր կատարած ծառայութիւնները բայց ոչինչ ըսաւ իր եղբոր այն ծառայութիւններուն մասին որ ան կատարած էր երբ տակաւին տունէն չէր հեռացած:

Ան իր եղբոր պակասութիւնները մատնանիշ ընելով ուզեց ինքնիր առաւելութիւնները հրապարակել: Հայրը սակայն իրմէ աւելի խոհեմ էր: Ան մերժեց իր որդիին եղբայրատեսց վերաբերմունքը: Սա բացայայտ կը դարձնէ, թէ Աստուած երբեք չի գնահատեր մեզ երբ մենք կը ստորագնահատենք մեր նմանները: Ան չի մեծարեր մեզ երբ մենք կ'անպատուենք ուրիշները: Ո՛չ ոք կրնայ բարձրանալ ուրիշները զգետնելով: Ո՛չ ոք կրնայ փայլիլ ուրիշներուն անունները մրոտելով:

4.- «Քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսիսց»։ Այս խօսքը հօրը դէմ ուղղուած մեղադրանք մը ըլլալուն կողմին, նաեւ, բամբասող մարդու խօսք է: Յակոբոս առաքեալ իր եղբայրը բամբասող կամ դատող մարդը նոյնիման Օրէնքը բամբասած ու դատած կը սեպէ: Ան կ'ըսէ. «Ով որ իր եղբայրը կը բամբասէ կամ կը դատէ գայն՝ Օրէնքը բամբասած կամ դատած կ'ըլլայ: Իսկ եթէ Օրէնքը կը դատես՝ կը նշանակէ թէ Օրէնքը գործադրողը չես, այլ՝ անոր դատաւորը: Միակ Օրէնսդիրն ու Դատաւորը, որ իշխանութիւն ունի փրկելու կամ կորուստի մատնելու՝ Աստուած է: Դուն ո՞վ ես որ քու ընկերդ կը դատես» (Յկ 4.11-12):

Ըսինք թէ բամբասանք ու զրպարտութիւն էր երէց գաւակին ըսածն ու ըրածը: Այո՛, բամբասանք էր: Ան ուրկէ՞ գիտցաւ որ իր կրտսեր եղբայրը պոռնիկներուն հետ մսիսած էր իր հարստութիւնը: Աստուածաշունչը այդպիսի հաստատում մը չ'ըներ: Նման բամբասանք կամ

սուտ, արդիւնքն է դառնութեամբ եւ եղբայրատեցութեամբ լեցուն սրտի մը: Ասիկա դաս մը թող ըլլայ բոլոր անոնց՝ որոնք դառնութենէ, ատելութենէ ու նախանձէ մղուած կը բամբասեն իրենց եղբայրն ու քոյրը: Յանախ նախանձը պատճառ չէ՞ որ սուտեր բղխեցնենք մեր սրտէն: Յանախ չար գործեր չե՞նք վերագրեր այս կամ այն մարդուն առանց մեր աչքերով բան մը տեսած ըլլալու:

5.- «Քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսիեց»: Այս խօսքը, իր նմանը անարգող մարդու խօսք է, իր նմանին վերբերուն վրայ իր մատը դնել սիրող մարդու խօսք է: Հայրը (Աստուած) շատ լաւ գիտէր թէ իր կրտսեր գաւակը ի՞նչ բաներու վրայ մսիած էր իր ստացուածքը: Ան չիշեց դարձի եկող իր գաւակին յանցանքները եւ ո՛չ ալ թոյլ տուաւ որ ան յիշէ ինքնիր յանցանքները: Եթէ հայրը չիշեց կրտսեր գաւակին յանցանքները, երէց գաւակը ի՞նչպէս յանդգնեցաւ յիշել գանոնք: Հայրը երբեք պիտի չուզէր, որ իր երէց գաւակը յանդգնութիւնը ունենար կրտսեր գաւակը որակելու իբրեւ ընկերակից պոռնիկներու:

Այստեղէն կը սորվինք շատ կարեւոր երկու բան.-

ա.- Կը սորվինք այն՝ որ դարձի եկող մարդոց մեղքերը առ յաւետ կը կորսուին: Ա՛յս է նաեւ Աստուծոյ խոստումը. «Եթէ ամբարիշտը իր գործած բոլոր մեղքերէն դառնայ..., անոր գործած յանցանքներէն ո՛չ մէկը պիտի յիշուի» (Եզ 18.21-22): Այս համարով կը հերքուի այն կարծիքը, ըստ որուն, դատաստանի օրը փրկուածներուն յանցանքներն ու մեղքերը մէկ առ մէկ պիտի յիշուին:

բ.- Կը սորվինք այն՝ որ Աստուծմէ աւելի խստապահանջ պետք չէ ըլլանք ո՛չ մեր նմաններուն նկատմամբ եւ ո՛չ ալ մեր անձերուն նկատմամբ: Մենք իրաւունք չունինք մատնանիշ ընելու կամ բարձրադասակ հրապարակելու մեր նմաններուն մեղքերը երբ Աստուած մոռցած է գանոնք:

6.- «Պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Կրտսեր որդիին ապրած անբարոյ կեանքին դիմաց՝ պարարտ հորթն է որ կը դրուի: Ասիկա մեզի պետք է յիշեցնէ Պօղոս առաքեալի խօսքը. «Ուր որ մեղքը շատցաւ՝ այնտեղ Աստուծոյ շնորհքը աւելի առատացաւ» (Հռ 5.20): Մեղքով պարարտացած կրտսեր որդիին մեղքերը՝ միայն Պարարտ Հորթը ի՛նք կրնար սրբել: Իսկ երէց որդին, այլ խօսքով՝ Փարիսեցիները, պարարտ հորթի (Քրիստոսի) կարիքը չէին գգար՝ քանի իրենք զիրենք անմեղ կը կարծէին:

7.- Երբ երէց գաւակը կը յիշեցնէր իր հօրը, որ իրեն ուլ մը չէր տուած, իսկ իր կրտսեր եղբօրը համար ան նոյնիսկ պարարտ հորթը մորթած էր, կարծէք ան իր հայրը կը մեղադրէր խտրութիւն եւ աշատու-

թիւն դնողի մը յանցանքով: Գալով մեզի, մենք ալ յաճախ չե՞նք մեղադրեր զԱստուած մարդոց միջեւ խտրութիւն դնող Աստուած իբրեւ: Չե՞ պատահած որ մեր բերաններէն դուրս եկած ըլլան հետեւեալ բառերը. «Ինչո՞ւ Աստուած անոնց կու տայ եւ մեզի չի տար: Անոնք իրենց ուզածը ունին, իսկ մենք՝ ամէն բանէ զրկուած ենք»: Այս եւ նման խօսքեր, Բարձրեալին դէմ ձայն բարձրացնել է, Անմեղադրելի մեղադրել է, անաչառն Աստուած իբրեւ աչառութիւն եւ կողմնակցութիւն ցուցաբերող հոչակել է:

Սիրելիներ, մենք չե՛ որ պիտի ըսենք Աստուծոյ թէ «պարարտ հորթը» որո՞ւ համար պէտք է մորթէ եւ որո՞ւ համար պէտք չէ մորթէ: Աստուած բան մը ընելու համար մեզմէ արտօնութիւն պիտի չառնէ:

8.- «Պարարտ հորթը մորթեցիր անոր համար»: Երէց գաւալը, «պարարտ հորթը», «լաւագոյն պատմունանը», «կօշիկը» եւ «մատանին» իր իրաւունքը կը նկատէր եւ ո՛չ թէ իր եղբօր իրաւունքը: Մենք ալ արդեօք նոյն ձեւով չե՞նք մտածեր: Մենք ալ կեանքի «պարարտ հորթերն» ու «լաւագոյն պատմունանները» միշտ մերը չե՞նք նկատեր: Առակը անուղակիօրէն մեզի չի՞ սորվեցներ որ մեր նմանները մեզմէ աւելի լաւ նկատենք, կամ գոնէ անոնց ալ մասին մտածենք: Մենք երբե՛ք իրաւունք չունինք մենք գմբզ ուրիշէն լաւ եւ ուրիշէն աւելի արժանաւոր նկատելու: Անձնուրաց առաքեալը՝ Պօղոս, կ'ըսէ. «Միայն դուք ձեզ մի՛ մտածէք, այլ նաեւ՝ ձեր ընկերոջ մասին» (Փլպ 2.4: Հո 10.24):

9.- Սիրելի՛ ընթերցող, ինչպէս առակին մէջ յիշուած հայրը կը սպասէր որ իր երէց գաւալը ներողամիտ եւ կարեկից կեցուածք ունենար դարձի եկած իր եղբօր հանդէպ, այնպէս ալ Աստուած կը սպասէ որ մենք կարեկից ըլլանք մեր եղբայրներուն եւ քոյրերուն նկատմամբ: Քրիստոսի դատաւորական հանգամանքը ցանցոյ մարդը զգոյշ պէտք է ըլլայ չդատելու եւ չճննադատելու ուրիշները: Ո՛չ հասարակ խաւին պատկանող մարդիկը ֆննադատելու իրաւունք ունինք եւ ո՛չ ալ բարձր խաւին պատկանող մարդիկը, որովհետեւ, եթէ անտեսուած ու լքուած, մեղաւոր ու յանցապարտ մարդիկն են որ կը ֆննադատենք, պէտք է յիշենք, որ միշտ այդպիսիներն են որ մեր զօրակցութեան եւ գօտեպնդիչ խօսքերուն պէտք ունին, իսկ եթէ մեր մեծաւորներն ու առաջնորդներն է որ կը ֆննադատենք, Աստուածաշունչի հրահանգին հակառակած կ'ըլլանք, քանի որ Աստուածաշունչը անոնց հնազանդիլ կը թելադրէ եւ ո՛չ թէ գանոնք ֆննադատել (Հո 13.1-2: Ա.Պտ 2.14):

«Հայրը ըսաւ.՝ "Տղա՛ս, դուն միշտ ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է"» (Ղկ 15.31): Քանի մը ամփոփ մատնանշումներ.՝

1.- Երեց գաւակը եթէ կարենար ներթափանցել հօրը այս խօսքին խորքը, վստահաբար անոր պիտի ըսէր. «Հա՛յր, իրաւունք ունիս: Ես պէտք է ուրախանամ եղբօրս վերադարձին համար: Հա՛յր, դուն միշտ ֆաղցր, գթած ու ներողամիտ եղած ես ինծի հանդէպ: Ես մի՛շտ սխալ հասկցած եմ քեզ, ինչպէս հիմա՛ ալ սխալ կը հասկնամ: Մի՛շտ կարծեր եմ որ դուն բռնակալ հայր մըն ես, պարզապէս հրամաններ ու հրահանգներ տուող: Երբեք չեմ անդրադարձած որ դուն ինծի հետ գալի պէս կը վերաբերէիր ու կը վերաբերիս: Բնաւ չեմ անդրադարձած ու դուն միշտ սիրած ես ու կը սիրես զիս: Ես կը կարծէի որ ստրուկի աչքով կը նայիս ինծի, հա՛յր: Ո՛հ, հա՛յր, ներէ ինծի, ներէ՛ քեզի հանդէպ ունեցած այս մտածումներուս համար: Ներէ՛ ինծի քու մասիդ սնուցած թիւր գաղափարներուս համար»:

2.- «Տղա՛ս»: Այս բառին կապակցութեամբ երկու մատնանշումներ.-

ա.- «Տղա՛ս» բառին համար գործածուած Յունարէն բառը ΤΕΚΝΟΝ (դեքնօն) բառն է որ բառացիօրէն կը նշանակէ՝ ով իմ ծնունդ, ինձմէ ծնած, էութենէս ծնած: Սա ցոյց կու տայ որ մեր ծագումը, մեր սկիզբը մենք ունինք Աստուծոյ մէջ: Այս բառին գործածութեամբ, Յիսուս բոլոր հրեաներուն, եւ անոնց ընդմէջէն մեզի՝ կոչ կ'ուղղէ դառնալու իրեն, այլ խօսքով՝ դառնալու մեր Արմատին՝ մեր Սկզբնաղբիւրին՝ Աստուծոյ:

բ.- «Տղա՛ս»: Այս բառին մէջ կայ սէր ու խանդաղատանք, կայ գութ ու գորով, կայ գուրգուրանք ու կարեկցութիւն, կայ ջերմութիւն ու ֆաղցրութիւն, կայ կոչ ու հրաւեր երեց գալիին ուղղուած. հրաւեր՝ դարձի գալու, հրաւեր՝ ինքնագիտակցութեան գալու եւ ընդունելու իր եղբայրը, ընդունելու տուն մտնել, ընդունելու խրախնամքի մասնակցիլ:

3.- «Դուն միշտ ինծի հետ ես»: Այո՛, «ինծի հետ ես», եւ ո՛չ թէ՛ «ինծի հետ էիր»: Յիսուս «ինծի հետ ես» բառերով կ'ուզէր Փարիսեցիներուն եւ բոլոր հրեաներուն ցոյց տալ որ տակաւին առիթը ունին զի՛նք ընդունելով իբրեւ խոստացեալ Մեսիան, յարաբերութեան մէջ ըլլալու երկնաւոր Հօր հետ, առիթը ունին անոր հետ ըլլալու, անոր կողքի՛ն կանգնելու, անո՛ր հետեւելու:

«Դուն միշտ ինծի հետ ես» խօսքը՝ մեր երկնաւոր Հօր խօսքն է ուղղուած բոլոր հրեաներուն: Անով Աստուած կարծէք անոնց ըսել կ'ուզէր. «Անցեալին մեր սկսած յարաբերութիւնը, հիմա պէտք չէ դադրի. ընդհակառակը, հիմա ալ կրնայ շարունակուիլ, եւ նոյնիսկ աւելի ամրապնդուիլ Քրիստոսի միջոցաւ»:

«Դուն միշտ ինծի հետ ես»: Սա խօսքին վերաբերեալ յաւելեալ երկու կէտեր եւս կան որոնց պէտք է անդրադառնալ.-

ա.- Մենք որ Քրիստոսի շնորհիվ Աստուծոյ գաւակները դարձած ենք, կասկած չունինք որ Աստուծոյ հետ ենք եւ Աստուած ալ՝ մեզի հետ: Այստեղ բառ մը կայ սակայն, որ մեր ուշադրութենէն պէտք է վրիպի. այդ բառը «միշտ» բառն է: Ճիշդ չէ որ երբեմն Աստուծոյ հետ ըլլանք եւ երբեմն ալ՝ ոչ: Ճիշդ չէ որ երբեմն Աստուծոյ կամքը կատարենք եւ երբեմն ալ՝ մեր: Անհամար է թիւը այն մարդոց՝ որոնք կը փառաւորեն Աստուծոյ անունը բայց ո՛չ ամէն պարագաներու մէջ, կը սիրեն զԱստուած բայց ո՛չ ամբողջ սիրտով, Աստուծոյ կը նային բայց ո՛չ անբռնկ կերպով, օգնութիւն կ'աղերսեն բայց ո՛չ բոլորին համար, հանգիստ կը խնդրեն բայց ո՛չ զիրենք անհանգստացնողներուն համար, բարին կը ցանկան բայց ո՛չ ամէն մարդու համար: Այսպիսի հաւատացեալներն են, որոնք Աստուծոյ հետ են բայց ո՛չ միշտ:

Եթէ Աստուած մի՛շտ ու մշտնջենական Աստուած է, անոր գաւակները մի՛շտ իր կամեցածն ու փափաքածը պէտք է կատարեն: Կարելի բան չէ որ երբեմն Աստուծոյ հետ աստուածավայել վերաբերմունք ցուցաբերենք, եւ երբեմն ալ, անոր հետ վերաբերինք այնպէս՝ ինչպէս պիտի վերաբերէինք պարզ մարդու մը հետ: Աստուած եւ իր կամքը մեր առօրեայ կեանքներուն մէջ առաջնահերթ տեղը պէտք է գրաւեն ամէն օր եւ ամէն պարագաներու մէջ:

բ.- «Միշտ ինձի հետ ես»: Աստուծոյ հետ ըլլալը վերացական յղացք մը չի՛ կրնար ըլլալ: Աստուծոյ հետ ըլլալը՝ անոր հետ սիրոյ յարաբերութիւն մշակելն է, անոր ներկայութեան խենդօրէն ցանկալն է, անոր սիրոյն դիմաց մեր սիրտերը լայնօրէն բանալն է, անոր կամքին առջեւ մեր կամքերը խոնարհեցնելն է: Տակաւին, Աստուծոյ հետ ըլլալը, անոր կամքը կատարելն ու զանիկա ուրիշներուն ծանօթացնելն է, մարդոց փրկութեան համար տագնապիլն ու գործելն է, զանոնք աստուածնանաչողութեան առաջնորդելն է, Քրիստոսի աւետարանը հրապարակելն ու յայտարարելն է, Աստուծոյ թագաւորութեան տարածման ի խնդիր աշխատիլն է:

Եւ ի վերջոյ, Աստուծոյ հետ ըլլալը, անոր հանդէպ բացարձակ վստահութիւն տածելն է, անոր զօրակցութեան ապաւինիլն է, անոր անդառնալի խոստումներուն հաւատալն է: Աստուծոյ հետ եղող մարդոց կեանքը հաւատքի ու հաւատարմութեան, սիրոյ եւ սրբութեան կեանք մը պէտք է ըլլայ: Աստուծոյ հետ եղող մարդոց ներկայութիւնը գօտեպնդիչ, քաջալերիչ, յուսադրիչ եւ օրհնաբեր ներկայութիւն է: Աստուծոյ օրհնուող մարդը ի՛ր կարգին օրհնութիւն կը դառնայ ուրիշներուն կեանքին մէջ:

4.- «Ամբողջ ունեցածս փուկդ է»: Իսկապէս ալ, Աստուծոյ ամբողջ ունեցուածքը կը պատկանէր հրեաներուն, բայց յատկապէս Փարիսեցիներուն ու Օրէնքի ուսուցիչներուն: Եւ ի՞նչ էր այն ունեցուածքը գործնական կը պատկանէր:

Պօղոս առաքեալ խօսելով Իսրայէլացիներուն մասին, կ'ըսէ. «Իրենցն են՝ թէ՛ Աստուծոյ որդիներ ըլլալու փառքը, թէ՛ Ուխտին գիրքերը, թէ՛ օրէնսդրութիւնը, թէ՛ պաշտամունքը եւ թէ՛ խոստումները» (Հռ 9.4): Այս բոլորը կը կազմէին «Աստուծոյ ունեցուածքը» գործնական կամովին հրեաներուն յանձնեց: Այո, այս բոլորը իրենցն էին, եւ սակայն, ոչինչ օգտուեցան այս բոլորէն: Աստուած կը սպասէր, որ անոնք Օրէնքի տառն անդին անցընէին, թափանցէին անոր ոգիին, որպէսզի անիկա կեանք դառնար իրենց կեանքներուն մէջ եւ ո՛չ թէ մահ: Անոնք չկրցան համոզուիլ ու հասկնալ, որ «Օրէնքը մահուան կ'առաջնորդէ, մինչդեռ Հոգին կեանք կու տայ» (Բ.Կր 3.6):

Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները Աստուծոյ կենսատու Հոգիով չէ որ կ'առաջնորդուէին, այլ՝ օրէնքներու տառացի գործադրութեան մարմաջով, ահա թէ ինչո՛ւ, անոնք թէպէտ Աստուծոյ «հետ էին միշտ» եւ թէպէտ Աստուծոյ կողմէ խոստացուած բոլոր օրհնութիւնները իրենցն էին, եւ սակայն, անոնք «ուլիկ» մը ձեռք ձգելու երազովը կը տառապէին:

Բոլոր մարդոցմէն աւելի, Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները իրե՛մք «իրաւունք ունէին» Աստուծոյ «ամբողջ ունեցուածքը» վայելելու, որովհետեւ անոնք առիթը ունէին մօտէն ճանչնալու եւ ըմբռնելու Աստուծոյ խօսքին փաղցրութիւնը: Անոնք իրենց օրինապահութեամբ եւ օրէնքներու ուսուցումով մի՛շտ եղան Աստուծոյ «մօտիկ» մարդիկ, բայց այդ մօտիկութիւնը չվերածուեցաւ իրական մօտիկութեան, տա՛հն'կ մտերմութեան, հայր եւ որդիի յարաբերութեան, եւ ատոր համար ալ միշտ «ուլիկի» մը, այլ խօսքով՝ նուազագոյն օրհնութեան մը կարօտ մնացին:

5.- «Ամբողջ ունեցածս փուկդ է»: Այս բառերուն վերաբերեալ քանի մը հակիրճ բացատրութիւններ եւս. -

ա.- «Ամբողջ ունեցածս»: Աստուած արձակ համարձակ գոյութիւն ունեցող ոեւէ մէկ բանի համար կրնայ ըսել. «Ունեցածս»: Աշխարհ իր ամբողջ լիութեամբ Աստուծոյ սեփականութիւնն է (Սղ 24.1): Մարդիկ որքան ալ մեծածաւալ կալուածներ ձեռք ձգեն, պէտք է յիշեն որ այդ բոլորին տէրն ու տուիչը Աստուած ի՛նքն է: Աշխարհ մեծ կալուած մըն է, իսկ կալուածատէրը Աստուած է: Ո՛չ ոք որ նիւթական հարստութեանց տիրացած է, պէտք է յանդգնի յայտարարել որ իր սեփական ջանքով

զանոնք ձեռք ձգած է: Առանց Հարստացնողին ո՛չ ոք կրնայ հարստանալ եւ առանց Բարձրացնողին ո՛չ ոք կրնայ բարձրանալ (Ա.ԹՊ 2.7):

բ.- «Ամբողջ ունեցածս» բառերուն մէջ միայն նիւթական հարստութեանց ակնարկութիւն պէտք չէ տեսնենք, այլ նաեւ ու մանաւանդ, հոգեւոր պարգեւներու եւ շնորհքներու, սիրոյ եւ սրբութեան, խաղաղութեան եւ ճշմարտութեան, իմաստութեան եւ գիտութեան ակնարկութիւն: Աստուծոյ «ունեցուածքը» կը նկատուի:

գ.- «Ամբողջ ունեցածս»: Աստուած իր ունեցուածքին միայն մէկ բաժինը չէ՛ որ կու տայ մեզի, այլ՝ իր «ամբողջ» ունեցուածքը: Ամբողջը տալը՝ ամբողջական սիրոյ արտայայտութիւն է: Աստուած հակառակ չէ որ մենք վայելենք իր պարգեւած նիւթական հարստութիւնը, բայց ան կ'ակնկալէ նաեւ, որ մենք հետապնդիչները ըլլանք այն բաժինին՝ որ բնաւ ետ պիտի չառնուի մեզմէ (Ղկ 10.42):

դ.- «Ունեցածս» բացատրութիւնը կը վերաբերի ո՛չ միայն Աստուծոյ տեսանելի ունեցուածքին, այլեւ՝ անտեսանելի: Բաներ կան որ ներկայիս մեզի տրուած են եւ մենք կը վայելենք, եւ բաներ ալ կան որ ժամանակներու աւարտին մեզի պիտի տրուին: Ահա թէ ինչո՛ւ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հո՛ն է Քրիստոս, Հօր Աստուծոյ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու» (Կղ 3.1-2):

ե.- «Քուկդ է»: Ասիկա ո՛չ միայն խոստում մըն է, այլեւ՝ յայտարարութիւն մը: Աստուած մատնացոյց ընելով մարդուն ներկայ աշխարհն ու անոր լիութիւնը, ստեղծուելիք մոր երկինքն ու երկիրը, կը բացականչէ ըսելով. «Քուկդ է»: Այո՛, Աստուծոյ գաւակներուս է ամէն բան որ կայ եւ ամէն բան որ պիտի ըլլայ: Մե՛րն է Աստուծոյ ամբողջ ունեցածը: Մե՛րն է անոր երանական վիճակն ու անսահման երջանկութիւնը: Մե՛րն է անոր հրաշալի փառքն ու անհուն գօրութիւնը: Մե՛րն է անոր յաւիտեանական կեանքն ու այդ կեանքին ցնծութիւնը: Մե՛րն է բարօրութեան այն ծրագիրը, պայծառ ապագան եւ անմար յոյսը, որ Աստուած պատրաստած է մեզի համար (Եր 29.11):

6.- Շատ հետաքրքրական է, որ հայրը ո՛չ դարձի եկող իր գաւակը յանդիմանեց եւ ո՛չ ալ իր երէց գաւակը: Հայրը ամբողջական իրաւունք ունէր յանդիմանելու իր երէց գաւակը անոր անարգական խօսքին ու բիրտ կեցուածքին համար, բայց չըրաւ: Հայրը ինչպէս սէր եւ համբերատարութիւն ցոյց տուաւ կրտսեր գաւակին նկատմամբ, նոյնպէս ալ սէր եւ համբերատարութիւն ցոյց տուաւ երէց գաւակին նկատմամբ: Սա ինքնին ցոյց կու տայ որ Աստուած մեզի հետ չի վերաբերիր այնպէս ինչպէս մենք կը վերաբերինք ուրիշներու հետ: Բայց այս իրողութիւնը

մեզ պետք չէ ֆաջալերել որ շարունակենք մեր նմաններուն հաղէպ մեր ունեցած ժխտական կեցուածքին մէջ մնալ: Ինչպէս հայրը սէր եւ համբերութիւն ցոյց տուաւ երէց գաւկիին նկատմամբ որպէսզի մեղմանար իր կեցուածքին մէջ ու հրաժարէր իր կոշտ վերաբերմունքէն, այնպէս ալ Աստուած մեզի հանդէպ իր ցուցաբերած անհուն սիրով ու փաղցրութեամբ՝ մեզ «ապաշխարութեան կը բերէ» (Հո 2.4):

«Սակայն հիմա պետք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ» (Ղկ 15.32):
Քանի մը ամփոփ մատնանշումներ.–

1.– Երկրորդ անգամն է որ այս խօսքը կը կրկնուի: Խօսքին կրկնուիլը երեք նպատակ կը հետապնդէ.–

ա.– Պատկերացնել այն անչափ ուրախութիւնը, որ Աստուած կ'ապրի դարձի եկող ամէն մէկ մարդու համար: Այս է ինչ որ ցոյց կու տայ «պետք է ուրախանանք եւ ցնծանք» բառերը:

բ.– Խօսքին կրկնութիւնը նաեւ ցոյց կու տայ որ Յիսուս իր ամէն կարելին ըրաւ հրեաները դարձի բերելու:

գ.– Խօսքին կրկնութիւնը միաժամանակ կը պարզէ որ Աստուած փրկութեան գալու կոչը անգամներ եւ անգամներ կ'ուղղէ մարդոց, մնայուն կերպով կ'ուղղէ մարդոց:

2.– Խօսքին կրկնութիւնը պատճառ պետք չէ դառնայ որ մեր ուշադրութենէն վրիպի այնտեղ գտնուող թեթեւ եւ սակայն յստակ տարբերութիւն մը: 24-րդ համարին մէջ կ'ըսուի. «Այս գաւակս մեռած էր՝ ողջնցաւ», իսկ այստեղ կ'ըսուի. «Այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ»:

Հօրը բերնին մէջ գտնուող «այս եղբայրդ» բառերը բացայայտ կը դարձնեն, որ Աստուծոյ փափաքն է իրագործուած տեսնել տիեզերական եղբայրութիւն մը: Քանի որ բոլորս ալ նոյն Քրիստոսի արիւնով գնուած ու փրկուած ենք, ուրեմն, բոլորս իրարու հաւասար ենք Աստուծոյ աչքին: Երէց գաւկիին (Փարիսեցիին) համար ասիկա անընդունելի էր: Օրինապահ Փարիսեցի մը երբեք չէր կրնար օրէնքը չհանչցող մարդը իր եղբայրը նկատել եւ ինքզինք անոր հաւասար սեպել:

Ինչ դժբախտութիւն է որ մարդ արարածը կը մերժէ իր նմանը իր եղբայրը կոչել: Միեւնոյն Հօր գաւակները ի՞նչպէս կրնան իրարու եղբայր չըլլալ: Եթէ երբեք Քրիստոս մեզ իր եղբայրները կը կոչէ, մենք ի՞նչպէս կը յանդգնինք չհանչնալ զիրար իբրեւ եղբայր: «Քանի որ թէ՛ Քրիստոս, որ մարդիկը իրենց մեղքերէն կը սրբէ, եւ թէ՛ սրբուողները՝ նոյն մէկ Հօր գաւակներն են, Քրիստոս ամօթ չի՛ համարեր իր «եղբայրները» կոչել զանոնք» (Եբր 2.11):

Սիրելի՛ս, եթէ քու ընկերդ Սրբողը, զանհկա եղբայր կը նկատէ, ո՛րքան աւելի դո՛ւն, որ սրբուող մըն ես եւ ո՛չ թէ սրբող մը, պէտք է եղբայր նկատես քեզի պէս սրբուող մարդիկը: Պղծութենէդ սրբուողդ քեզ Սրբողդ աւելի «բժախնդիր» եւ «խստապահանջ» մի՛ ըլլար քու հաւասարներուդ նկատմամբ: Դուն պիտի ուզէի՞ր որ քու նմաններդ քեզ եղբայր չնկատէին: Պիտի փափաքէի՞ր խորթ աչքով դիտուիլ ուրիշներուն կողմէ: Հանոյ՛ք պիտի զգայի՞ր եթէ անհանելի վերաբերմունք ցուցաբերուէր քեզի հանդէպ: Ինչ որ կ'ուզես որ մարդիկ քեզի ընեն՝ դուն ալ նոյնը ըրէ անոնց (Ղկ 6.31):

Ինչ ցաւալի երեւոյթ է որ Աստուած խօսելով մեր նմանին մասին, կ'ըսէ. «Այս եղբայրդ...», իսկ մարդը խօսելով իր նմանին մասին, կ'ըսէ. «Այդ որդիդ...»: Սա խօսքով, երէց գաւակը ինքզինքին է որ կը հակասէ, որովհետեւ, մէկ կողմէ կ'ընդունի կրտսեր գաւակին իր հօրը որդի ըլլալը, իսկ միւս կողմէ, կը մերժէ զանհկա իր եղբայրը կոչել, եւ այդ ձեւով, ապացուցանած կ'ըլլայ որ ինք իր հօրը հարագատ գաւակը չէ:

Ինչո՞ւ ո՛վ մարդ: Ինչո՞ւ կը գրկես նմանդ «եղբայր» կոչելու իրաւունքէն: Ինչո՞ւ դուն քեզ քու նմանէդ տաբեր բան կը կարծես: Դուն եւ ինք նոյն Փրկիչին արիւնով չէ՞ր որ գնուեցաք: «Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ գայն կ'արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք» (Հո 14.10):

Սուրբ Գիրքը չ'ո՞ւսուցաներ բոլոր դասակարգի մարդիկը եղբայր եւ բարեկամ կոչել: Քրիստոս իր մատնիչը բարեկամ չանուանե՞ց (Մտ 26.50): Պօղոս առաքեալ Փիլիմոնը իր եղբայրը չկոչե՞ց (Փլմ 20): Քրիստոս մեզմէ վշտացած մարդը մեր եղբայրը չանուանե՞ց (Մտ 5.23): Մեզ մատնողներն ու սպաննողները մեր բարեկամները չյորջորջե՞ց (Ղկ 21.16): Մեզի դէմ մեղանչող մարդը իբրեւ մեր եղբայրը չներկայացո՞ւց (Մտ 18.15): Ներումի կարիքը ունեցող մարդիկը մեր եղբայրները չնկատե՞ց (Մտ 18.35): Յակոբոս առաքեալ աղփատներուն համար եղբայր անունը չյիշե՞ց (Յկ 2.15): Աբրահամ վէնի նիւթ ստեղծող իր եղբորորդիին՝ Դովտին համար եղբայր բառը չգործածե՞ց (Ծն 13.8): Յովնաթան Դաւիթը իր անձին պէս չսիրե՞ց (Ա.ԹԳ 18.3), եւ Դաւիթ զանհկա իր եղբայրը չսեպե՞ց (Բ.ԹԳ 1.26): Դարձեալ, Դաւիթ իրեն դէմ սուտ վկայութիւն տուող մարդոց համար չ'ըսեր. «Ինչպէս իմ ընկերոջս կամ եղբորս հետ կը վարուէի, այնպէս ալ անոնց հետ կը վարուէի» (Սղ 35.11-14): Տուեալ բոլոր օրինակներէն կը սորվինք այն՝ թէ Աստուծոյ կամքն է, որ ամէն իսաւր պատկանող մարդիկ, հարուստ թէ աղփատ, ուսեալ թէ անուս, իշխանաւոր թէ ոամիկ, հանրածանօթ թէ անշուք, ընդունին եւ ցանչնան զիրար իբրեւ եղբայր եւ քոյր:

3.- «Պէտք է ուրախանանք եւ ցնծանք»: Փարիսեցիներուն մեծագոյն մեղքը այն էր, որ անոնք չէին ուրախանար Քրիստոսի ձեռնով դարձի եկող մարդոց համար: Անոնք սպառնալիք կը կարդային ոեւէ մէկուն, որ իբրեւ Մեսիա կ'ընդունէր գ'Քրիստոս: Անոնք մարդոց փրկութեամբ եւ Աստուծոյ թագաւորութեան տարածումով չէին հետաքրքրուեր: Անոնք երկինքի արքայութիւնը կը փակէին մարդոց առջեւ. իրենք չէին մտնել եւ թոյլ չէին տար նաեւ անոնց՝ որ կ'ուզէին մտնել (Մտ 23.13):

Գալով մեզի, արդեօք մենք ալ չե՞նք մերժել եւ չե՞նք հալածել գ'Քրիստոս ընդունող եւ ուրիշները Քրիստոսի հրաւիրող մարդիկը: Պէ՞տք է տրտմիմք դարձի եկող մեր եղբայրներուն եւ քոյրերուն համար որոնց պատճառով ուրախութիւն կ'ըլլայ երկինքի մէջ: Ի՞նչ էր պատճառը որ երէց գաւակը չուրախացաւ իր կրտսեր եղբոր համար: Ան չուրախացաւ որովհետեւ ան փրկութեան բերած ուրախութիւնը չունէր իր սրտին մէջ: Աստուծով ինքնիր խաղաղութիւնը չգտած մէկը չի՛ կրնար խաղաղ վերաբերմունք ցուցաբերել իր նմանին հանդէպ: Ան որ չի՛ գգար որ ընդունուած է Աստուծոյ կողմէ, չի՛ կրնար ուրիշները ընդունիլ: Զ'Քրիստոս իր կեանքին մէջ չընդունող մարդը, չի կրնար ընդունիլ ուրիշները այնպէս ինչպէս որ են:

4.- «Որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Երէց գաւակին համար այս խօսքը երկրորդական էր: Իրեն համար առաջնահերթը պարարտ հորթն ու ուլիկն էին: Ան կը նախընտրէր կորսնցնել իր եղբայրը քան պարարտ հորթն ու ուլիկը: Ան իր եղբոր դարձով չէր հետաքրքրուած, այլ՝ անոր շնորհուած պատիւով եւ դիրքով: Իրեն համար հարցը իր եղբայրը չէր, այլ իր եղբոր համար մորթուած հորթն էր: Անոր սիրոյն առարկան հօրը ունեցուածքն էր եւ ո՛չ թէ իր եղբայրը: Այսօր, որքա՛ն մարդիկ կան, որոնք կտոր մը միսի համար պատճառ կը դառնան որ կորսուի իրենց եղբայրը, «որուն համար Քրիստոս իր կեանքը տուաւ» (Հո 14.15): Որքա՛ն մարդիկ կան որոնք իրենց ունեցուածքին կողմէ ունեցուած են, եւ իրենց նմաններուն հանդէպ կաթիլ մը սէր չունին իրենց սիրտերուն մէջ: Այնպիսիներ մեծապէս կը տրտմին եթէ երբեք իրենց հարստութեան մէկ մասը կորսնցնեն, բայց բնա՛ւ չեն տրտմիր իրենց նմաններուն կորուստին համար: Այնպիսին էր երէց գաւակը:

Վերջին ֆանի մը նշումներ եւ խորհրդածութիւններ. --

1.- Անառակ որդիին առակը կիսաւարտ մնացած ըլլալու տպաւորութիւնը կը թողու մեր վրայ երկու պատճառով.-

ա.- Մեզի չ'ըսուիր թէ հայրը իր երէց գաւակը փորձել համոզելէ ետք տուն մտա՞ւ, թէ՛ ոչ:

բ.- Մեզի նաեւ չ'ըսուիր թէ երէց գաւակը հօրը խօսքերէն ազդուե-լով տուն մտա՞ւ, թէ՛ ոչ:

Ինչո՞ւ արդեօք թէ՛ հայրը եւ թէ՛ իր երէց գաւակը տունէն դուրս իբրեւ կը ներկայացուին: Ի՞նչ բան է որ Քրիստոս կը փորձէ մեզի սորվեցնել այստեղ: Կը սորվեցնէ այն՝ որ Աստուած չ'ուզեր երկնային հարսնետուն մտնել եւ դուռը գոցել երբ տակաւին իր գաւակներէն ոմանք դուրս կը գտնուին: Աստուած տակաւին կարծէք երկինքէն դուրս է, աշխարհի ցամբաներուն վրայ կը շրջի եւ կորսուած մարդիկը կը փնտռէ:

Աստուծոյ ողորմութեան եւ շնորհքին դուռը բաց է եւ պիտի շարունակէ բաց մնալ աշխարհի երեսին վրայ ապրող ամէն մէկ մարդու դիմաց: Երէց գաւակը որ իր ժամանակին կը պատկերացնէր Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, ինչու չէ նաեւ ամբողջ հրեայ ժողովուրդը, այսօր, հրեայ ժողովուրդին հետ միասին, կը ներկայացնէ համակ հեթանոս աշխարհը, ինչպէս նաեւ իւրաքանչիւր քրիստոնէայ անհատ, որ տակաւին կը յամենայ Քրիստոսի գալ:

Հարսնետան դուռը բաց է մեղքի իբրեւ հետեւանք սգաւոր դարձած ոեւէ մարդու դիմաց: Ամէն մարդ որ տակաւին գՔրիստոս չէ ցանցած իբրեւ դուռ փրկութեան, հրաւիրուած է այդ դռնէն ներս մտնելու:

Ինչպէս հայրը կը փորձէր համոզել իր երէց գաւակը որ ներս մտնէր եւ ուրախութեան մասնակից դառնար, այնպէս ալ Աստուած, այսօր, եկեղեցւոյ եւ Սուրբ Հոգիին միջոցաւ ամէն օր կը ջանայ համոզել մեզ որ իրեն դառնանք: Դարձեալ, ինչպէս հայրը չէր ուզեր տուն մտնել եւ դուռը փակել երբ տակաւին երէց գաւակը տուն չէր մտած, այնպէս ալ Աստուած չ'ուզեր իր Որդիին երկրորդ գալուստով երկինքի դուռը փակուած յայտարարել, այնքան ատեն երբ տակաւին անհամար թիւով յամառ մարդիկ կը մերժեն դարձի գալ:

Սիրելի՛ ընթերցող, ժամանակ պիտի գայ երբ Աստուած հարսնե-տուն պիտի մտնէ եւ դուռը պիտի գոցէ (Մտ 25.10): Ան տակաւին կը գտնուի հարսնետունէն դուրս: Ան չ'ուզեր ներս մտնել առանց քեզի: Աստուած քեզ կը հրաւիրէ երկնային կոչունքի մը: Եթէ տակաւին չես ընդառաջած անոր հրաւերին, այսօր պահն է որ ընդառաջես: «Հիմա՛ է այդ յարմար ժամանակը, հիմա՛ է փրկութեան օրը» (Բ.Կր 6.2): Վաղը

կրնայ ուշ ըլլալ: Վաղուան տէրը Տէրը ի՛նքն է եւ ո՛չ թէ դուն: Յոյսդ մի՛ դնէր բանի մը վրայ որուն տէրը դուն չես:

2.- Կրտսեր որդին իր կեանքին մեծ բաժինը անցուց հորմէն հեռու եւ տունէն դուրս, իսկ երէց որդին՝ իր կեանքին մեծ բաժինը անցուց հօրը հետ՝ տունին մէջ: Ինքնագիտակցութեան գալէ ետք՝ կրտսեր որդին տուն դարձաւ: Երէց որդին իր եղբօր տուն դարձին համար նախանձեցաւ եւ մերժեց տուն մտնել, եւ այս ձեւով, այս անգամ ի՛նք դուրս մնաց: Ան որ դուրսն էր՝ ներս մտաւ, իսկ ան որ ներսն էր՝ դուրս ելաւ: Ի՞նչ է պատգամը այս կէտին: Երբեք ուրիշը փրկութեան անարժան եւ մենք զմեզ փրկութեան արժանի չնկատենք: Փրկութեան անիւր կրնայ հակառակ դառնալ: Կրնանք մենք՝ արքայութիւնը ժառանգելու կոչուածներս՝ դո՛ւրս դրուիմք արքայութենէն, եւ ուրիշներ, զորս արժանի չենք նկատեր արքայութեան զաւակ ըլլալու՝ արքայութիւն մտնեն, եւ ասիկա մենք գործնապէս արտայայտուած կը գտնենք Յիսուսի կեանքին մէջ:

Օրինակ, Փարիսեցիներ եւ Օրէնքի ուսուցիչներ բացարձակապէս անարժան կը նկատէին պոռնիկները քառութիւն ստանալու եւ արքայութեան մաս կազմելու: Դուկասու Աւետարանին 7-րդ գլխուն մէջ կը տեսնենք որ Փարիսեցի Սիմոնին չափերո՛ւն դիմաց պոռնիկ մը մեղքերու քառութիւն կը ստանայ, իսկ Փարիսեցի ինք՝ մեղքերու ցանցին մէջ բռնուած կը մնայ: Փարիսեցիներուն հայեացքով, մաքսաւորներ եւս փրկութեան անարժան էին, բայց եւ ահա Յիսուս աղօթող Փարիսեցիին եւ մաքսաւորին առակով, եկաւ ցոյց տալու թէ ինչպէս Փարիսեցիներ կրնան կորսուիլ եւ մաքսաւորներ կրնան փրկուիլ (Ղկ 18.14): Եւ այլն:

3.- Սիրելի՛ ընթերցող, քեզ կը հրաւիրեմ որ ունենաս կրտսեր զակին գղջացող սիրտն ու խոնարհ հոգին եւ ո՛չ թէ երէց զակին անգիշ սիրտն ու գոռոզ հոգին: Եթէ երբեք քու ապրած կեանքովդ եղած ես մէկը որ Աստուծոյ ըսած է. «Հայր, քու ստացուածքէդ ինձի ինկած բաժինը հիմա՛ տուր ինձի», այսօր ժամանակն է, որ անդրադառնաս վիճակիդ եւ անառակ որդիին նման ըսես. «Ելլեմ երթամ հօրս քով»:

Զօրացի՛ր Տիրոջմով եւ առանց տնտնալու ելի՛ր գնա երկնաւոր Հօրդ տունը, ուր քեզի համար պատրաստուած են փրկութեան լաւագոյն պատմունքներ, թագաւորական մատանին, եւ աւետարանչութեան կօշիկը: Բայց անոնցմէ առաջ, քեզի կը սպասէ Աստուծոյ գիրկը, ջերմ սիրով լեցուն գիրկը: Յիշէ որ երբ կրտսեր զակը տուն դարձաւ նախ պարգեւատուին (իր հօրը) հանդիպեցաւ, յետո՛յ միայն անոր պարգեւներուն: Հոսկէ կը ստրվիմք այն, որ Աստուած պարգեւներով եւ նուէրներով չէ որ կ'ուզէ հրապուրել եւ շլացնել իրեն եկողները, այլ առաջին հերթին, կ'ուզէ որ անոնք արբենան իր սիրով:

4.- Սիրելի հաւատակից եղբա՛յր եւ քո՛յր.

Եթէ մինչեւ այսօր աշխարհ եղած է տէրդ, ինչպէս տէրն էր կրտսեր գաւկին, այսօր որոշէ իբրեւ Տէր ֆանչնալ աշխարհի ստեղծիչը՝ գՔրիստոս:

Եթէ երբեք ձանձրաձած ես խոզերուն կերած եղջիւրները ուտելէն, յիշէ որ պարարտ հորթը մորթուած ու պատրաստ է քեզի համար:

Եթէ երբեք կը զգաս անօգնական եւ անտէր, Աստուծոյ թելերուն տակ ապաստանիլը՝ պատասխանն է այդ զգացումիդ:

Եթէ երբեք կը մտածես որ քեզի հանդէպ սէր ցուցաբերող մարդ չկայ, քեզի համար խաչին վրայ մեռնող Քրիստոսի Սրտին նայիլը՝ անհունապէս կը մխիթարէ քեզ:

Եթէ երբեք կ'անդրադառնաս որ աշխարհ ամէն օր քեզի համար որոգայթ կը լարէ, յիշել որ աշխարհի Տէրը կրնայ խորտակել աշխարհի կողմէ լարուած որոգայթները՝ կը գօտեպնդէ քեզ:

Եթէ երբեք կը գիտակցիս որ մեղքի ովկիանոսին մէջ մեռած ու կորսուած մըն ես որ պէտք ունի փնտոտելու ու գտնուելու, Տիրոջ դառնալու առիթը օգտագործելը՝ պիտի կենսաւորէ ու փրկէ քեզ:

Ինչո՞ւ յամառիմ մնալ մեռած ու կորսուած վիճակի մէջ, երբ կոչուած ենք գաւակները ըլլալու կենսատու արարիչին՝ Քրիստոսի:

Ինչո՞ւ շրջիմք բոկոտն մեղքի փշոտ ֆամբաներուն վրայ, երբ անդին Քրիստոս մեր առջեւ բացած է արդարութեան ֆամբան:

Ինչո՞ւ ընտրեմք խոզերուն կերած եղջիւրները ուտել, երբ անդին ունիմք Հայր մը որուն քով կը գտնուի կենաց հացը՝ Քրիստոս (Յն 6.35):

Ինչո՞ւ չհրաժարիմք խոզերուն եւ խոզարածներուն ընկերակցութենէն, երբ անդին մեզի խոստացուած է հրեշտակներուն եւ սուրբերուն ընկերակցութիւնը:

Ինչո՞ւ շարունակեմք աշխարհի տեսակ-տեսակ ագարակներուն մէջ գործել, երբ պատիւը ունիմք Աստուծոյ գործակիցները դառնալու՝ Աստուծոյ թագաւորութիւնը տարածելու ի խնդիր:

Ինչո՞ւ մնանք հոգեւորապէս ծարաւ, երբ ունիմք գՔրիստոս որուն սիրտէն առատահոս աղբիւրի նման սէր եւ ներում կը հոսի :

Ինչո՞ւ հանդուրժեմք մեղքի պատճառած մերկութեան, երբ կրնանք Քրիստոսի գալ եւ լաւագոյն պատմութեանը ստանալ անկէ:

Ինչո՞ւ մէկդի չդնել Չարին կնիքը որ մեր ստրկութեան նշանն է, երբ անդին մեզի համար պատրաստուած է արքայական մատանին:

Ինչո՞ւ սգաւորի լուծը կրեմք մեր ուսերուն, երբ անդին առիթը ունիմք ուրախանալու Աստուծով եւ դառնալու Աստուծոյ եւ երկնային բոլոր զօրքերուն ուրախութիւնը:

Ինչո՞ւ ապրինք թշուառ եւ ողորմելի կեանք մը, երբ գաւակներն ենք շնորհալի եւ շնորհաբաշխ Աստուծոյ մը:

Ինչո՞ւ շրջինք անտէր ու անտերունչ, երբ հրաւիրուած ենք դառնալու գաւակները տէրերու Տիրոջ, եւ բնակիչը՝ Աստուծոյ սրտին:

Հետեւէ՛ անառակ որդիին օրինակին: Իր նման դարձի՛ եկուր ինչ մեծ եւ քեզ մեծարել ուզող Փրկիչիդ: Փարի՛ր Բարձրեալ եւ քեզ բարձրացնել փափաքող Տիրոջդ ոտքերուն: Լա՛յն բաց սիրտդ Յիսուսի փաղցրութեան դիմաց որ կրնայ քեզ մեծցնել (Բ.Թ.Գ 22.36): Անոր արիւնով հաշտուէ՛ երկնաւոր Հօրդ հետ, որպէսզի վայելես անոր սէրն ու գուրգուրանքը ինչպէս վայելեց անառակ որդին, եւ որպէսզի, երբ Քրիստոս՝ ինչ կեանքդ՝ յայտնուի, այն ատեն դուն ալ փառքով յայտնուիս անոր հետ (Կղ 3.4): Ամէն:

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՒՆ ԱՌԱԿԸ

«Մարդ մը Երուսաղէմէն Երիֆով կ'իջներ: Ճամբան աւագակներու ձեռքը ինկաւ, որոնք կողոպտելով՝ մերկացուցին զինք, վիրաւորեցին եւ կիսամահ վիճակի մէջ ձգեցին ու գացին: Պատահեցաւ որ քահանայ մը նոյն ճամբայէն կ'անցներ: Տեսաւ վիրաւորը, բայց ճամբան շեղելով՝ անցաւ գնաց: Ղեւտացի մըն ալ նոյն տեղէն անցնելու ատեն՝ տեսաւ վիրաւորը եւ ինքն ալ շրջանցեց գնաց: Բայց Սամարացի մը, որ հոնկէ կ'անցներ, տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր: Մօտեցաւ եւ վերքերը փաթեց՝ անոնց վրայ ձէք եւ գինի դնելով. ապա դրաւ իր գրաստին վրայ եւ տարաւ պանդոկ մը ու գայն խնամեց: Յաջորդ օր, երբ պանդոկէն պիտի մեկներ, պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ.՝ "Խնամէ՛ գայն, եւ ինչ ծախս որ ընես իրեն համար՝ յաջորդ գալուս կը վճարեմ":

Յետոյ Յիսուս հարցուց.

– Արդ, ինչ կարծիքովդ՝ այս երեքէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը:

Օրէնքի ուսուցիչը ըսաւ.

– Ան՝ որ հոգ տարաւ անոր:

Յիսուս ըսաւ.

– Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ՛» (Ղկ 10.25-37):

Թոյլ տուէ՛ք նախ շատ խիտ կերպով ներկայացնեմ բացատրութիւնը այս առակին, նախքան ընդարձակ բացատրութեան սկսիլս:

«Մարդ մը»: Այս մարդը ներկայացուցիչն է ամբողջ մարդկութեան:

«Երուսաղէմէն Երիֆով կ'իջներ»: Երուսաղէմը խորհրդանիշ է Աստուծոյ ներկայութեան, իսկ Երիֆովը՝ աշխարհի եւ մեղքի խորհրդանիշ: Ուստի, հեռանալ Երուսաղէմէն եւ Երիֆով երթալ, կը նշանակէ հեռանալ Աստուծոյ ներկայութենէն եւ իյնալ մեղքի տիրապետութեան տակ:

«Ճամբան աւագակներու ձեռքը ինկաւ»: Աւագակը Սատանան եւ իր չար ոգիներն են. իսկ անոնց ձեռքը իյնալ՝ կը նշանակէ անոնց իշխանութեան տակ իյնալ:

«Որոնք կողոպտելով...»: Կողոպտել բառը ցոյց կու տայ որ Սատանան իր իշխանութեան տակ ինկող մարդէն կը կողոպտէ ամէն պարգեւ, շնորհք, կարողութիւն եւ բարի ամէն բան որ ան ունի:

«Մերկացուցին»: Սատանան մեզ կը մերկացնէ արդարութեան եւ սրբութեան պատմութեանէն:

«Վիրաւորեցին»: Այս բառը ցոյց կու տայ որ մեղաւոր մարդը վիրաւոր մարդ է եւ բուժումի կարիքը ունի, եւ անոր բժիշկը Յիսուս ինքն է:

«Եւ կիսամահ վիճակի մէջ ձգեցին ու գացին»: Կիսամահ բառը մէկ կողմէ ցոյց կու տայ որ Սատանան մարդը մեռցնելու իրաւունք չունի, քանի կեանքի տէրը Աստուած ինքն է, իսկ միւս կողմէ, վերստին կենդանանալու յոյսն է որ կը յուշէ:

«Պատահեցաւ որ քահանայ մը նոյն ցամաքային կ'անցնէր: Տեսաւ վիրաւորը, քայց ցամաքն շեղելով՝ անցաւ գնաց»: Քահանային չօգնելը՝ ցոյց կու տայ որ ոեւէ մարդ, յատկապէս եկեղեցականները, իրենք չէ որ կը փրկեն կամ փրկութիւն կը բերեն ուրիշին:

«Ղեւտացի մըն ալ նոյն տեղէն անցնելու ատեն՝ տեսաւ վիրաւորը եւ ինքն ալ շրջանցեց գնաց»: Ղեւտացին տանարական կեանքին հետ կապ ունեցող մարդն է. ասիկա կը յիշեցնէ մեզի որ ամէն եկեղեցի եկող եւ ամէն եկեղեցիի մէջ աշխատող՝ չի նշանակեր որ Աստուծոյ եւ իր նմանին սէրը տեղ գտած է իր սրտին մէջ:

«Բայց Սամարացի մը»: Սամարացին Քրիստոս ինքն է:

«Որ հոնկէ կ'անցնէր»: Այս բառերը ցոյց կու տան որ հոն ուր մեղքով վիրաւորուած մարդ կայ՝ հոն ուր կարիք կայ՝ հոն է Քրիստոս, հոնկէ է որ կ'անցնի Քրիստոս:

«Տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր»: Յիսուս տեսնող աչք ու գթացող սիրտ ունի: Կը տեսնէ մեղքով վիրաւորուածները եւ կը գթայ անոնց:

«Մօտեցաւ եւ վերջերը փաթեց՝ անոնց վրայ ձէք եւ գինի դնելով»: Ձէքը խորհրդանիշ է Սուրբ Հոգիի պարգեւներուն, իսկ գինին՝ Յիսուսի արիւնին: Ան սրբել է եւ մեր մեղքերը՝ իր շնորհներով զարդարեց մեզ:

«Ապա դրաւ իր գրաստին վրայ»: Գրաստը Քրիստոսի մարմինն է: Գրաստին վրայ դնել, կը նշանակէ՝ իր մարմինով մեր մեղքերը քանդել:

«Եւ տարաւ պանդոկ մը ու գայն խնամեց»: Պանդոկը եկեղեցին է: «Խնամեց», այսինքն՝ հոգ տարաւ: Պանդոկ տանիլը՝ կոչ մըն է Յիսուսի կողմէ մեզի ուղղուած, մեղաւորները եկեղեցի առաջնորդելու եւ հոգ տանելու անոնց հոգեւոր անման:

«Ցաջորդ օր, երբ պանդոկէն պիտի մեկնէր»: Այս բառերը մեզի կը յուշեն Քրիստոսի մարմնաւոր բաժանումը եկեղեցիէն:

«Պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուալ»: Պանդոկապետը առաքելներն ու անոնց յաջորդներն են, կղերական դասն է: Իսկ երկու արծաթ դահեկանները՝ Հին եւ Նոր Կտակարաններն են:

«Եւ ըսաւ. – "Խնամէ՛ գայն»: Հովիւներ պարտին երկու արծաթ դահեկաններով, այլ խօսքով՝ Հին եւ Նոր Կտակարաններուն ուսուցումներով խնամել, այսինքն՝ հոգ տանիլ հաւատացեալներուն, եւ անեցնել ու զօրացնել զանոնք:

«Եւ ինչ ծախս որ ընես իրեն համար...»: Ծախս ընել, կը նշանակէ՝ զոհողութիւն ընել: Հոգեւոր հովիւը պէտք է պատրաստ ըլլայ ամէն տեսակ զոհողութիւն յանձն առնելու իր հօտի փրկութեան համար:

«Յաջորդ գալուս կը վնարեմ»: Վնարելը՝ վարձատրելն է: Քրիստոս իր երկրորդ գալուստին պիտի վարձատրէ իր հօտին հոգ տանող հովիւները:

«Յետոյ Յիսուս հարցուց. – "Արդ, քու կարծիքովդ՝ այս երեքէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը": Օրէնքի ուսուցիչը ըսաւ. – "Ան՝ որ հոգ տարաւ անոր"»: Յիսուս կը յիշեցնէ մեզի որ իսկական ընկերը, իսկական բարեկամը՝ մեղքի գետինը ինկած մարդիկը վերականգնողներն են:

«Յիսուս ըսաւ. – "Գնա՛, դո՛ւն ալ նոյնը քրէ"»: Յիսուս կոչ կ'ուղղէ մեզի հետեւելու իր օրինակին եւ օգնելու մեղքի ցեխին մէջ ինկածներուն՝ դուրս գալու այդ ցեխէն:

Ի՞նչ բան պատճառ եղաւ որ Յիսուս Բարի Սամարացիին առակը պատմէ:

Օրէնքի ուսուցիչ մը հարց տուաւ Յիսուսի ըսելով. «Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ յաւիտենական կեանքը ժառանգելու համար»: Յիսուս իր կարգին հարցուց Օրէնքի ուսուցիչին թէ Օրէնքի գիրքը ինք ի՞նչ կ'ըսէ այդ մասին: Օրէնքի ուսուցիչը պատասխանեց ըսելով. «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ մտքովդ» եւ «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Օրէնքի ուսուցիչին այս պատասխանին վրայ, Յիսուս անոր ըսաւ. «Ճիշդ պատասխան տուիր: Ըրէ՛ ըսածդ եւ պիտի ապրիս»: Օրէնքի ուսուցիչը ինքզինք արդարացնել ուզելով, հարցուց Յիսուսի. «Բայց ո՞վ է իմ ընկերս»: Օրէնքի ուսուցիչին այս հարցումին վրայ՝ Յիսուս Բարի Սամարացիին առակը պատմեց:

Բացատրութեան կը սկսինք Օրէնքի ուսուցիչին ուղղած հարցումէն՝ «Ո՞վ է իմ ընկերս»:

«Ո՞վ է իմ ընկերս» (Ղկ 10.29): Քանի մը հաստատումներ. --

1.- Այս հարցումին պատասխանը առակը ինք կու տայ արդէն: Ոմանք կ'ենթադրեն որ առակին մէջ յիշուած մարդը որ աւագակներու ձեռքը ինկաւ նոյնիման «ընկեր» կոչուողն է: Եւ սակայն, ընկերը աւագակներուն ձեռքը ինկող մարդուն օգնողն է եւ ո՛չ թէ աւագակներուն ձեռքը ինկողը ինք. իսկ ո՞վ էր օգնողը եթէ ոչ Բարի Սամարացին՝ Քրիստոս: Հետեւաբար, այս առակին ընդմէջէն Քրիստոս ինքզինք էր որ կը ներկայացնէր իբրեւ ընկեր, ցամաքի ընկեր, օգնող ընկեր: Արդարեւ, Քրիստոս ընկերն է իր ձեռքին գործը եղող մարդկութեան, ընկերն է տառապելիին, ընկերն է աղքատին եւ հարուստին, ընկերն է ուսելիին եւ անուսին, ընկերն է շփառը եւ անշուք մարդոց:

Առակի աւարտին Քրիստոս Օրէնքի ուսուցիչին հարցուց. «Քու կարծիքովդ՝ այս երեքէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը», Օրէնքի ուսուցիչը պատասխանեց. «Ան՝ որ հոգ տարաւ անոր» (Ղկ 10.36-37): Այս տողերը բացայայտօրէն ցոյց կու տան, որ հոգ տանողն էր ընկերը եւ ո՛չ թէ հոգածութեան կարիքը ունեցողը, իսկ հոգ տանողը Յիսուս ինքն էր:

2.- «Ո՞վ է իմ ընկերս»: Կարծէք Օրէնքի ուսուցիչը կը փնտռէր եւ կ'ուզէր գիտնալ թէ ո՞վ էր իր ընկերը: Քրիստոս առակին ցամաքով ցոյց տուաւ որ ի՛նքն էր իր եւ մեր ընկերը: Երանելի են անոնք՝ որոնք ընդունած են զՔրիստոս իբրեւ ընկեր: Քրիստոս ընկեր կը դառնայ ոեւէ մէկուն որ զինք կը դաւանի իբրեւ Տէր եւ Փրկիչ: Առանց ցանկնալու Քրիստոսի տիրութիւնն ու փրկչական հանգամանքը, կարելի չէ անոր ընկերակցութիւնը վայելել: Քրիստոսի ընկերակցութիւնը վայելող մարդը մնայուն կերպով ապահովութեան եւ վստահութեան զգացումով համակուած կ'ըլլայ:

3.- Քրիստոս իբրեւ ընկեր՝ հաւատարիմ է (Յյտ 1.5): Ան բնա՛ւ չի՛ դաւանանք, չ'ուրանար եւ չի՛ լքեր իրեն ապաւինողները: Ան իրական ընկեր մըն է, որովհետեւ մեր շահու համար է որ մեզի կը մօտենայ, մեզ փրկելու համար է որ մեզ կը փնտռէ, մեզ բարձրացնելու համար է որ կը խոնարհի:

4.- Եթէ երբեք բով-բովի բերեմք առակին սկիզբը յիշուած «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս» եւ «Ո՞վ է իմ ընկերս» խօսքերը, եւ ի մտի ունենանք որ ընկերը օգնող Սամարացին է ու ո՛չ թէ օգնութեան կարօտ

եղող մարդը, պարզ կը դառնայ որ ընկերը գոր պէտք է մեր անձին պէս սիրենք՝ նոյնիմէն Քրիստոս է:

Հարեւանցիօրէն չանցնինք «գՔրիստոս մեր անձերուն պէս սիրել» հաստատումին վրայէն: Ի՞նչ կը նշանակէ կամ ի՞նչպէս կրնանք «գՔրիստոս մեր անձերուն պէս սիրել»: Երբ մեր անձերը Քրիստոսի ձեռքերուն մէջ կը դնենք, զինք մեր անձերուն պէս եւ մեր անձերէն աւելի սիրած կ'ըլլանք: Երբ կը ջանանք Քրիստոսի կամքը կատարել փոխանակ մեր կամքը կատարելու, զինք մեր անձերուն պէս սիրած կ'ըլլանք: Երբ մեր կեանքերուն մէջ անոր կու տանք առաջնահերթ տեղը, մեր սիրտերուն մէջ ամենատաքուկ վայրը, մեր հոգիներուն քաղցրագոյն ապրումները, մեր միտքերուն կեդրոնական բաժինը, այն ատեն, միայն ա՛յն ատեն զինք սիրած կ'ըլլանք մեր անձերուն պէս:

Տակաւին, զինք սիրած ու պատուած կ'ըլլանք մեր անձերուն պէս եթէ երբեք զինք նկատենք.–

մեր ուրախութեան ակերուն գլխաւորագոյնը,
մեր գորութեան աղբիւրներուն հիմնականագոյնը,
մեր երազներուն կարեւորագոյնը,
մեր փափաքներուն էականագոյնը,
մեր տեսիլներուն գերագոյնը,
մեր նպատակներուն բարձրագոյնը,
մեր սիրելիներուն մէջ՝ առաջնակարգ,
մեր մեծարածներուն մէջ՝ առաջնահերթ,
մեր պատուածներուն մէջ՝ նախապատիւ,
մեր վստահութիւնը վայելողներուն մէջ՝ գերադիր,
մեր հարազատներուն մէջ՝ հարազատագոյն,
մեր մերձաւորներուն մէջ՝ գերադաս,
մեր բարձրացուցածներուն մէջ՝ գերակայ,
բարեգութիւններուն մէջ՝ աննման,
ողորմածներուն մէջ՝ անհաւասար,
կարեկցողներուն մէջ՝ անգուգական,
համբերատարներուն մէջ՝ անհամեմատ,
ներողամիտներուն մէջ՝ անօրինակ,
օգնականներուն մէջ՝ արագահաս,
սիրողներուն մէջ՝ հրաբորբ,
պարգեւաբաշխներուն մէջ՝ ինքնամատոյց:

5.– Կրնանք գՔրիստոս սիրել մեր անձերուն պէս եթէ փորձենք նմանիլ իրեն, սիրել եւ ներել իր նման, աղօթել եւ աշխատիլ իր ոգիով, օգնել եւ օրհնել իր պատրաստակամութեամբ: Ինչպէս երբեմն մարդիկ

կ'իտեալականացնեն որոշ անձ մը եւ իրենց անչափ սէրը անոր նկատմամբ արտայայտած ըլլալու համար կ'աշխատին անոր նմանիլ, այնպէս ալ մենք եթէ կը սիրենք զՔրիստոս մեր անձերուն պէս, պէտք է տփնիմք անոր նմանիլ:

Քրիստոսի նմանելու համար երկու բան անհրաժեշտ է. նախ յանձնուիլ անոր, եւ յանձնուելէ ետք՝ առաջնորդել ուրիշները անոր: Ուրիշները Քրիստոսի առաջնորդելը Աստուծոյ կողմէ մեզի յանձնուած պաշտօն մըն է, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Նորոգութիւնը կու գայ Աստուծմէ, որ Քրիստոսի միջոցաւ մեզ իրեն հետ հաշտեցուց եւ նաեւ պաշտօն տուաւ մեզի՝ ուրիշներն ալ հաշտութեան բերելու» (Բ.Կր 5.18):

Քրիստոսի յանձնուողը ինքնաբերաբար կը դառնայ դուռ մը ուրիշները փրկութեան առաջնորդող: Քրիստոս իրեն յանձնուողներուն վրայ առատահոս կերպով կը թափէ իր հոգիի կրակէն, իր սրտի սէրէն, իր միտքի իմաստութենէն, իր խաղաղութենէն, գորութենէն, սրբութենէն, բարութենէն, յանձնառութենէն, կորովէն եւ փառութենէն:

6.- Թափանցենք «Ո՞վ է իմ ընկերս» հարցումին ուրիշ ծալֆերուն: Թէպէտ վերեւ հաստատեցինք որ մեր ճշմարիտ ընկերը Քրիստոս ի՛նքն է, բայց կասկածէ վեր է, որ քրիստոնեայ մարդուն կոչումն է, եղբօր մը կամ ընկերոջ մը ներկայութիւնը տեսնել լճուած եւ անտեսուած մարդուն մէջ: Յիշեցէք որ Քրիստոս անօթի ու ծարաւ մարդուն մէջ եղբօր մը ներկայութիւնը տեսաւ. «Քանի որ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք...» (Մտ 25.40): Եթէ երբեք Քրիստոս ինքզինք անօթիին մէջ՝ անօթի, ծարաւին մէջ՝ ծարաւ, բանտարկեալին մէջ՝ բանտարկեալ տեսաւ, նիշդ պիտի ըլլա՞ր որ մենք իր ներկայութիւնը չտեսնէինք այս դասակարգին պատկանող մարդոց կեանքին մէջ:

7.- Դարեր շարունակ մարդիկ փնտռած են «Ո՞վ է իմ ընկերս» հարցումին պատասխանը: Սիրելի՛ ընկեր, որո՞նք կը նկատես քու ընկերներդ: Բարձր դիրք վայելող մարդի՞կը, մեծահարուստներն ու երեսելիներ՞ը, քեզմով հետաքրքրուողներն ու քեզի կարեւորութիւն տուողներ՞ը, քեզ սիրողներն ու քեզի ծառայութիւն մատուցանողներ՞ը: Կասկած չկայ որ այս բոլորը կրնան լաւ ընկեր ըլլալ: Բայց լաւ ընկեր կրնան ըլլալ նաեւ ժողովուրդին հասարակ եւ անտեսուած խաւը կազմող մարդիկը: Հակաքրիստոնէական է սիրով փարիլ ոմանց եւ անտարբեր ըլլալ ուրիշներուն նկատմամբ: Ի՛նչ ցաւալի բան է որ մարդիկ ոմանք իրենց գլխուն վրայ կը դնեն, իսկ ոմանք ալ իրենց ոտքին տակ կ'առնեն: Քրիստոսի նման քրիստոնեայ մարդն ալ պէտք է հաւասարօրէն սիրէ իր հաւասարները եւ անաչառօրէն վերաբերի անոնց հետ: Պէտք է սիրէ

զանոնք, ըլլան անոնք ողորմած թէ ողորմութեան կարօտ, գթոտ թէ անգուր:

8.- Մեր երկնաձիր կոչումն է սիրել բոլոր մարդիկը եւ զանոնք ընկեր նկատել նոյնիսկ եթէ անոնք ոչինչ ըրած են որ զիրենք մեր սիրոյն եւ յարգանքին արժանի կը դարձնէ: Այսպէ՛ս վերաբերեցաւ Աստուած մարդկային ցեղին հետ: Ան սիրեց մեզ առանց պայմանի եւ առանց ակնկալութեան: Ան սիրեց մեզ առանց մեզ կանչելու հաշուետուութեան կամ դատաստանի: Ան սիրեց մեզ առանց մեզմէ աղերսագիր, գոջումնագիր կամ խոստմնագիր պահանջելու:

Ըսէ՛ ինծի, ո՛վ բարեկամ, մենք ի՞նչ ըրինք որ արժանի դարձանք Քրիստոսի սիրոյն: Մեզմէ ո՞վ աղաչեց Աստուծոյ որ իր Որդին աշխարհ զրկէ մեր փրկութեան համար: Մեզմէ որո՞ւն աղաչանքին հիման վրայ Աստուած խաչ բարձրացուց իր անմեղ եւ սուրբ Որդին: Ինչպէս մենք սիրուեցանք Աստուծոյ կողմէ առանց բան մը ըրած ըլլալու, այնպէս ալ սիրե՛նք մեր նմանները առանց սպասելու որ նախ բարիք մը ընեն անոնք:

Մեր նմանները ըսելով չեմ հասկնար մեր հարազատներն ու դրացիները միայն: Որո՞նք են իսկապէս մեր ընկերները որոնց պէտք է սիրենք: Ի՞նչ է այն նշմարութիւնը որ Քրիստոս կ'ուզէ սորվեցնել մեզի: Քրիստոս կ'ուզէ որ սորվինք, որ մեր ընկերները մեր ազգա-կաններն ու հարազատները չ'են միայն, մեր ազգակիցներն ու հաւատակիցները չ'են միայն, մեր դրացիներն ու թաղեցիները չ'են միայն: Ընկեր պէտք է սեպեմք նաեւ բոլոր անոնք՝ որոնք տարբեր երկիրներու մէջ կ'ապրին, տարբեր հաւատքի եւ կրօնքի կը հետեւին, տարբեր դասակարգի մարդիկ են, տարբեր ցեղի եւ գոյնի կը պատկանին:

Քրիստոնէութիւնը երբեք միայն քրիստոնեաները սիրել չի փարոզեր: Քրիստոնէական կրօնքը տիեզերական նկարագիր եւ հանգամանք ունի: Ինչպէս Քրիստոս սիրեց համայն աշխարհի մարդիկը եւ իր կեանքը տուաւ անոնց համար, այնպէս ալ քրիստոնեաներ, կոչումը ունին սիրելու իւրաքանչիւր մարդ էակ որ կ'ապրի այս աշխարհի երեսին վրայ: Իրաւունք չունինք սահման դնելու քրիստոնէական սիրոյն: Քրիստոնէական սէրը սահման չի՛ փանջնար, որովհետեւ Քրիստոսի սէրը ի՛նք սահման չի փանջնար: Քրիստոնէական սէրը կ'անդրանցնի քրիստոնէական կրօնքը, կը թափանցէ ամէն կրօնքէ ներս, կը ներառնէ ամէն երկիր, կը բացուի ամէն մարդու, իր թելերուն տակ կ'առնէ ամէն ցեղ եւ կը հասնի աշխարհի ամենամութ անկիւնները՝

հոն գտնելու համար ընկերներ, սիրոյ կարօտ ընկերներ, ընկեր փնտոող ընկերներ:

9.- Տակաւին, մեր ընկերները մեզ փառաբանողներն ու պատուողները չե՛ն միայն, մեզ մեծարողներն ու փառաւորողները չե՛ն միայն, մեր կամքն ու ծրագիրները իրագործելու համար իրենց նպաստը բերողները չե՛ն միայն, մեր փափաքներուն եւ երազներուն իրականացումը հետապնդողները չե՛ն միայն, մեզի հետ համաձայն եւ համակարծիք եղողները չե՛ն միայն, մեր սրտի ուզածը ընողները չե՛ն միայն:

Նաեւ ընկեր (սիրուելու կարօտ ընկեր) պէտք է սեպեմք մեզ ատողներն ու անարգողները, մեզ զգեսնողներն ու զրպարտողները, մեր կամքն ու ծրագիրները խափանողները, մեր իղձերուն եւ տեսիլներուն խոչընդոտ հանդիսացողները, մեզի հետ համախորհուրդ եւ միաբան չեղողները, նոյնիսկ մեր կեանքը խլել ուզողները: Այսպիսի մարդիկ սիրելով է որ մենք Յիսուսի նմանած կ'ըլլանք: Այսպիսի մարդիկ սիրելով է որ մենք սրբութեան հասած կ'ըլլանք: Արդարեւ, թշնամի սիրելը, մեզ հալածողին համար աղօթելը, մեզ չարչարողին բարիք ընելը՝ կը սրբացնէ մեզ եւ Աստուծոյ Որդիին հարազատ նմանութիւնը կը դարձնէ:

Ինչպէս հիւանդը հոգածութեան աւելի կը կարօտի քան առողջը, այնպէս ալ այսպիսի մարդիկ շա՛տ աւելի պէտք ունին մեր սիրոյ դեղահատներուն քան մեզի հանդէպ սիրալիր վերաբերմունք ցուցաբերողները: Յիշեցէ՛ք որ Քրիստոս բարեկամ կոչեց ո՛չ միայն զինք չմատնող աշակերտները (Յհ 15.15), այլեւ բարեկամ կոչեց իր մատնիչը՝ Յուդա Իսկարիոտացին (Մտ 26.50): Բնաւ չե՛նք հանդիպիր աւետարաններուն մէջ, որ Քրիստոս զինք ատողներն ու իր հակառակորդները թշնամի եւ կամ սիրուելու անարժան նկատէ:

Քրիստոս իրեն մօտիկ եղողները աւելի չսիրեց քան իրմէ հեռու եղողները: Քրիստոս զինք զոհել ուզողներն ու իրեն համար զոհուիլ ուզողները հաւասարապէս սիրեց: Ան սիրեց զինք թագաւոր ընել փորձողներն ու զինք իբրեւ թագաւոր չճանչցողները: Ան սիրեց իրեն հանդէպ անտարբեր եղողն ու զինք տարբեր անձ նկատողը: Ան հաւասարօրէն սիրեց հաւատացեալն ու անհաւատը, դաւաճանողն ու դաւանողը, կասկածողն ու վստահողը:

10.- Քրիստոս գտած էր «Ո՞վ է իմ ընկերս» հարցումին պատասխանը: Ամէն մարդ որ ապրեցաւ կամ կ'ապրի այս աշխարհին մէջ՝ Քրիստոս զանիկա ընկեր կը նկատէ: Քրիստոսի համար չկա՛յ աշխարհի մէջ մէկը որ արժանի է անընկեր մնալու: Չկա՛յ մէկը որուն մասին մտածելը աւելորդ է: Չկա՛յ մէկը որուն փրկութեամբ մտահոգուիլը

Ժամանակի կորուստ է: Քրիստոսի համար ամէն մարդ պէտք ունի փրկութեան եւ Փրկիչի, ամէն մարդ արժէք է, ամէն մարդու իրաւունքն է սիրուիլը: Չսիրել մարդը՝ զանիկա իրաւագրկել է: Սիրուիլը մարդուն գերագոյն իրաւունքն է:

11.- Եղի՛ր սիրող եւ աղօթող համայն մարդկութեան վերականգնումին համար, որպէսզի դատաստանի օրը Քրիստոսի կողմէ փանչցուի եւ վարձատրուի իբրեւ իր հաւատարիմ գործակիցը, իբրեւ բարերարը մարդկային ցեղին, ընկերը մարդկութեան: Ամէն մարդու հետ կրնաս ընկերութիւն չընել, բայց ամէն մարդ կրնաս ընկեր նկատել: Նիւթապէս բոլորին կրնաս չհասնիլ, բայց վստահաբար աղօթ-ֆովդ կրնաս: Ամէն մարդու համար կրնաս բարին չգործել, բայց ամէն մարդու համար կրնաս բարին ցանկալ: Ուրեմն, բոլոր մարդոց համար ցանկա՛ բարին եւ լաւը, որպէսզի հանդիսանաս Աստուծոյ պարգեւը մարդկային ցեղին:

12.- Եթէ աշխարհասէր մարդուն հարց տաս. «Ո՞վ է քու ընկերդ», անոր պատասխանը պիտի ըլլայ. «Ինծի օգտակար հանդիսացողը, ինծի համար շահու աղբիւր եղողը»: Աշխարհասէր մարդէն տարբեր պատասխան կարելի չէ ակնկալել: Բայց քու պատասխանդ եւ վերաբերմունքդ, ո՛վ սիրելի՛ հայորդի, տարբեր պէտք է ըլլայ: Ի՞նչ բանն է որ քեզ իբրեւ ֆրիստոնեայ տարբեր կ'ընէ աշխարհի մարդէն: Քեզ աշխարհի մարդէն տարբեր ընողը այն է, որ մինչ աշխարհի մարդը ընկեր կը նկատէ իրեն օգնողները միայն, իսկ դուն ընկեր կը նկատես ո՛չ միայն քեզի օգնող մարդիկը, այլ նաեւ օգնութեանդ պէտք ունեցողները:

Հիմա կ'անցնինք առակին ֆննութեան:

«Մարդ մը Երուսաղէմէն Երիֆով կ'իջներ» (Դկ 10.30): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Մարդ մը...»: Ո՞վ է այս մարդը: 8-րդ դարու աստուածաբան եւ մեկնիչ Ստեփանոս Սիւնեցի, կը բացատրէ, որ Երուսաղէմէն Երիֆով իջնող մարդը կը ներկայացնէ Ադամը եւ բոլոր անոնք՝ որոնք Ադամին նոյն մեղքը գործեցին: Յատակ է որ Ստեփանոս Սիւնեցի «մարդ մը» բացատրութեան մէջ կը տեսնէ ամբողջ մարդկային սերունդը:

2.– «Մարդ մը...»: Բնագիրը մեզի չ'ըսեր եթէ երբեք յիշեալ մարդը հրեայ էր թէ հեթանոս, ազնուական էր թէ ուսմիկ, պարկեշտ էր թէ գոեհիկ, երեսիլի էր թէ անշուք, հարուստ էր թէ աղքատ, անու էր թէ ուսեալ: Բնագիրը նաեւ մեզի չ'ըսեր թէ ան ի՛նչ կրօնքի եւ հաւատքի կը պատկանէր, ի՛նչ գոյնի եւ նկարագրի տէր մարդ էր, ի՛նչ պաշտօն կամ

դիրք ունէր, ի՛նչ ցեղէ կամ սերունդէ կը սերէր: Ան պարզապէս կը ներկայացուի իբրեւ «մարդ մը...»: մարդ մը՝ ամէն մարդու պէս, ամէն մարդու հաւասար, ամէն մարդու ներկայացուցիչ:

Հետեւաբար, Քրիստոս «մարդ մը» բռնեցով, կը սորվեցնէ մեզի, որ ինք աշխարհ եկաւ համայն մարդկութեան փրկութեան համար: Ճի՛շդ է որ Քրիստոս ծնաւ Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ, բայց ան չծնաւ միայն հրեաներուն համար: Գործեց հրեաներուն մէջ, բայց չգործեց միայն հրեաներուն համար: Խաչուեցաւ հրեաներու դրդումով, Պոնտացի Պիղատոսին հրամանով, Հռոմայեցի զինուորներու ձեռքով, բայց չխաչուեցաւ միայն անոնց համար, այլ՝ ողջ մարդկութեան համար: Քրիստոս իր խաչելութեամբ հաստատեց թագաւորութիւն մը որուն կրնային եւ կրնան անդամագրուիլ ո՛չ միայն Հրէաստանի եւ Գալիլեայի բնակիչները, այլ նաեւ ամբողջ աշխարհի մարդիկը:

3.- «Մարդ մը Երուսաղէմէն Երիֆով կ'իջնէր»: Երիֆով կը գտնուէր Երուսաղէմի Հիւսիս-Արեւմտեան կողմը, շուրջ 20 մղոն հեռաւորութեան վրայ: Քանի մը նամբաներ կային որոնք Երուսաղէմէն Երիֆով կ'առաջնորդէին: Ամենակարն նամբան ամենավտանգալից նամբան էր ո՛չ միայն որովհետեւ ժայռոտ, քարաբերտ եւ անողորկ նամբայ մըն էր, այլ որովհետեւ գողեր, աւազակներ եւ մարդասպաններ կը վիտային այդ նամբուն վրայ: Այս նամբան աւազակներուն սպասավայրն էր: Անոնք այդ նամբուն վրայ դարանակալ կ'ըլլային եւ կը սպասէին անծանօթ եւ առանձին անցորդներու, որպէսզի անոնց վրայ յարձակէին եւ կողոպտէին գանձնք:

Այս նամբան պատմութեան մէջ քանչեւ լսուած էր «Արեան նամբայ» անունով, որովհետեւ հոն շատ մարդոց արիւն թափուած էր աւազակներու ձեռքով: Որոշ է որ առակին մէջ յիշուած մարդը Երուսաղէմէն Երիֆով կ'իջնէր այս նամբան օգտագործելով: Թէեւ գործածեցինք «մարդը» բացատրութիւնը, ինչպէս բնագիրը ի՛նք կը գործածէ, բայց յստակ է, որ ակնարկութիւնը մասնաւոր անձի մը չէ, այլ ամբողջ մարդկային ցեղին է, ինչպէս վերեւ բացատրեցինք: Նոյնիսկ եթէ իսկապէս ապրած ըլլայ այդպիսի անձնաւորութիւն մը, ոչինչ կը փոխուի առակին իմաստէն կամ մեկնութենէն:

4.- «Մարդ մը Երուսաղէմէն Երիֆով կ'իջնէր»: Մեկնիչներուն մեծ մասը Երուսաղէմը կը նկատեն խորհրդանիշ դրախտի, իսկ Երիֆովը՝ խորհրդանիշ աշխարհի: Այլ խօսքով, Երուսաղէմը կը դիտեն իբրեւ Աստուծոյ ներկայութիւնը խորհրդանշող վայր մը, իսկ Երիֆով քաղաքը՝ Աստուծոյ բացակայութիւնը խորհրդանշող վայր մը, եւ հետեւաբար, Երուսաղէմէն Երիֆով իջնելը՝ մարդկային ցեղին հեռացումն է Աստուծոյ

ներկայութենէն: Կարծէ՛ք Երուսաղէմը լքելը՝ զԱստուած լքելուն հետ է որ կը նոյնանայ: Երուսաղէմէն Երի՛ճով երթալը՝ նախընտրելն է աշխարհը քան Աստուած, ուրիշ ինչպէս Դեմաս ինք «այս աշխարհը նախընտրելով» հեռացաւ Աստուծմէ (Բ.Տմ 4.10):

5.- «Կ'իջնէր»: Ի՞նչ պէտք է հասկնալ «կ'իջնէր» բացատրութեամբ: Մարդը որուն մասին խօսեցանք եւ ըսինք որ կը ներկայացնէ մարդկային ցեղը, հակամիտութիւն ցուցաբերեց դէպի չարը, եւ «կ'իջնէր» բառը ուրիշ այդ հակամիտութիւնն է որ կը պատկերացնէ: Ուստի, «կ'իջնէր» ըսելով պէտք է հասկնալ այն՝ թէ մարդը սկսած էր կամաց-կամաց մտածել Աստուծմէ հեռանալու մասին:

6.- «Կ'իջնէր» բացատրութիւնը կը պատկերացնէ նաեւ մարդուն էջֆը բարութեան մակարդակէն դէպի չար մակարդակը: Պատահական չէ որ այստեղ «կ'երթար» բառին փոխարէն ունինք «կ'իջնէր» բառը, որովհետեւ «կ'իջնէր» բառը ինքնին բարձր տեղէ մը դէպի վար իջնելու գաղափարն է որ մատնանիշ կ'ընէ: Արդարեւ, անմեղութենէն դէպի մեղքը իջնելը՝ բարձր տեղէ մը դէպի վար իջնել չի՞ նկատուիր: Աստուծոյ ղուրբն Սատանային ղուրբն իջնելը՝ բարձր տեղէ մը դէպի վար իջնել չի՞ սեպուիր: Աստուծոյ փառքէն մերկանալը եւ մեղքի անարգանքով լեցուիլը՝ վերէն վար իջնել չի՞ նշանակեր:

«Ճամբան աւազակներու ձեռքը ինկաւ, որոնք կողոպտելով՝ մերկացուցին զինք, վիրաւորեցին եւ կիսամահ վիճակի մէջ ձգեցին ու գացին» (Ղկ 10.30): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Ճամբան աւազակներու ձեռքը ինկաւ»: Չարն ու չարերը չյարձակեցան մարդուն վրայ այնքան ատեն որ մարդը Երուսաղէմի մէջ էր եւ հեռո՛ւ այն նամբայէն որ Երի՛ճով կ'առաջնորդէր: Ի՞նչ կը պարզէ բնագիրին մէջ յիշուած «նամբան» բառը: Հոս յիշուած «նամբայ» բառը յստակօրէն ցոյց կու տայ որ մարդը քաղաքէն այնպիսի՛ նամբայէ մը որուն համար չէր ստեղծուած: Միւս կողմէ «նամբայ» բառը կը պարզէ մարդուն աստիճանական հեռացումը Աստուծմէ: Մարդուն որդեգրած այդ նամբան՝ Աստուծոյ դէմ ըմբոստութեան նամբան էր, զինք երկինքէն հեռացնող նամբան էր:

2.- «Աւազակներու ձեռքը ինկաւ»: Որո՞նք են այստեղ յիշուած աւազակները: Ստեփանոս Սիւնեցի, Սուրբ Գրիգոր Նարեկացի, Իգնատիոս Վարդապետ եւ ուրիշներ, աւազակները կը նկատեն Սատանան եւ անոր չար արբանեակները: Ինչո՞ւ անոնք «աւազակ» կը կոչուին: Աւազակը միայն գողցող մարդը չէ, այլ նաեւ՝ սպաննող մարդը: Ուստի, անոնք աւազակ կը կոչուին, որպէսզի ցոյց տրուի մեզի, թէ Սատանային

հիմնական նպատակը, գողնալ է ետ մեզմէ Աստուծոյ դառնալու ամէն առիթ՝ մեզ հոգեւորապէս սպաննելն է:

3.- «Ձեռքը ինկաւ»: Սատանային ձեռքը իյնալ, կը նշանակէ անոր իշխանութեան եւ տիրապետութեան տակ իյնալ, անոր ենթակայ ըլլալ: Մարդկային ցեղին նախահայրն ու նախամայրը՝ Ադամ եւ Եւա, եւ անկէ ետք բոլոր մարդիկ, յարձակումի ենթարկուեցան Սատանային կողմէ, եւ ինկան անոր ձեռքին մէջ, այլ խօսքով՝ անոր իշխանութեան ներքեւ:

4.- Սատանան, ինչպէս նաեւ չար ու պիղծ ոգիներն ու դեւերը չէին կրնար լուռ կենալ ի տես մարդուն վայելած աստուածապարգեւ երջանկութեան, խաղաղութեան եւ փառքին: Անոնք յարձակեցան մարդուն վրայ, եւ «կողոպտելով՝ մերկացցին զինք, վիրաւորեցին եւ կիսամահ վիճակի մէջ ձգեցին եւ գացին»: Արուեստի քերթընդէն երբ փափաքը ունեցաւ Աստուած ըլլալու եւ ինկաւ, վստահաբար մտածեց, որ եթէ նոյն փափաքը կարենայ արթնցնել Ադամին եւ Եւային մէջ, յաջողած պիտի ըլլայ զանոնք եւս զգետնել, եւ այդպէս ալ եղաւ (Մն 3.5):

Հոս կարեւոր նշմարտութիւն մը կայ որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Ե՞րբ է որ Սատանան եւ իր չար ոգիները յարձակեցան եւ կը յարձակին մարդուն վրայ: Առակը պատասխանը կու տայ այս հարցումին: Առակը կ'ըսէ. «Մարդ մը Երուսաղէմէն Երիֆով կ'իջնէր»: Երուսաղէմը, ըսինք, որ Աստուծոյ ներկայութիւնը կը խորհրդանշէ, իսկ Երիֆովը՝ Աստուծմէ հեռու վիճակ մը ցոյց կու տայ: Ուշագրաւ է, որ մարդը ոեւէ յարձակումի չ'ենթարկուեցաւ այնքան ատեն երբ Երուսաղէմի մէջ էր, այսինքն՝ Աստուծոյ ներկայութեան մէջ, բայց հագիւ որ մարդը սկսաւ հեռանալ Երուսաղէմէն (Աստուծոյ ներկայութենէն), եւ Երիֆովի (աշխարհի) ցամաքն արձակելով՝ ա'յն ատեն է որ յարձակումի ենթարկուեցաւ:

Հոսկէ կը սորվինք այն՝ որ Սատանան իշխանութիւն չունի մեր վրայ այնքան ատեն երբ կ'ապրինք Աստուծոյ իշխանութեան ներքեւ: Աղէտաբեր իրականութիւն է Աստուծմէ հեռանալը: Երեմիա մարգարէն կ'ըսէ. «Գիտցի՛ր ու տե՛ս, թէ գէշ ու դառն բան մըն է, որ քու Տէր Աստուածդ կը թողուս» (Եր 2.19): Երբ դժբախտութիւնները սկսին տեղալ մեր գլխուն, անմիջապէս չսկսինք մեղադրել զԱստուած եւ անոր ներկայութիւնը մեր կեանքերուն մէջ հարցականի տակ չառնենք, այլ փորձենք ֆննել Աստուծոյ եւ մեր յարաբերութիւնը:

Հարկաւ ըսել չենք ուզեր որ եթէ մարդ արարածը ապրի Աստուծոյ ներկայութեան մէջ, գերծ պիտի ըլլայ ամէն տեսակի փորձութիւններէ եւ նեղութիւններէ: Փորձութիւնները ապացոյց չեն Աստուծոյ բացակայութեան: Անհաւատ մարդուն նման հաւատացեալ մարդը ի՛նք եւս

ենթակայ է փորձութիւններու: Անոնց տարբերութիւնը կը կայանայ անոր մէջ՝ որ անհաւատ մարդուն համար փորձութիւնը «կողոպտող», «մերկացնող», «վիրաւորող» եւ «կիսամահ» դարձնող իրականութիւն մըն է, իսկ հաւատացեալ մարդուն համար՝ փորձութիւնը շինիչ, կրթիչ եւ բարեբար ազդեցութեամբ կը ներկայանայ:

Կրնանք Աստուծոյ մօտիկ ըլլալնու համար փորձութիւններու հանդիպիլ, բայց նաեւ կրնանք Աստուծմէ հեռու ըլլալնու համար փորձութիւններու հանդիպիլ: Նո՛յնը կ'ըսէ Նրեմիա մարգարէն. «Չէ՞ որ ասիկա դուն քու վրադ բերիր քու Տէր Աստուածդ ձգելով, երբ անիկա քամբուն մէջ քեզի առաջնորդութիւն կ'ընէր» (Նր 2.17): Նրեմն մարդիկ կը չարչարուին Աստուծոյ չհետեւելուն համար եւ երբեմն ալ կը չարչարուին Աստուծոյ հետեւելուն համար: Դո՛ւն, սիրելի՛ ընթերցող, վստահաբար գերծ չես չարչարանքներէն: Հարց կու տամ քեզի. ինչո՞ւ եւ ի՞նչ բանի համար կը չարչարուիս: Քրիստոսի՞ համար կը չարչարուիս, թէ գ՞րիստոս է որ կը չարչարես: Քրիստոսի համար չարչարուիլ մերժող մը՝ գ՞րիստոս է որ կը չարչարէ: Աստուածաշունչը երանի կու տայ Քրիստոսի համար չարչարողներուն (Ա.Պտ 4.12-16: Մտ 5.11):

5.- «Կողոպտելով՝ մերկացուցին զինք»: Նախ խօսինք «կողոպտել» հասկացողութեան մասին: Ի՞նչ կը հասկնանք երբ կը հաստատենք թէ Սատանան կողոպտեց մարդ արարածը: Քանի մը բաներ.-

ա.- «Կողոպտեց» ըսելով, կը հասկնանք այն՝ որ Սատանան կողոպտեց կամ իլեց մեզմէ աստուածային արդարութիւնը, գիտութիւնը եւ սրբութիւնը: Ան կողոպտեց մեր ձեռքէն զԱստուած գիտնալու եւ յարատեւօրէն Աստուծոյ սրբութեան հաղորդակից դառնալու ամէն կարելիութիւն եւ առիթ:

բ.- «Կողոպտեց» ըսելով, կը հասկնանք նաեւ այն՝ թէ Սատանան կողոպտեց եւ կը շարունակէ կողոպտել մեր ձեռքերէն աստուածատուր մեր կարողութիւններն ու պարգեւները, ձիրքերն ու բարի ցանկութիւնները:

գ.- «Կողոպտեց» բացատրութիւնը ցոյց կու տայ, թէ Սատանան մեզ հեռացուց Աստուծոյ ներկայութենէն, մտերմութենէն, ընկերակցութենէն, քաղցրութենէն եւ սիրալիք յարաբերութենէն:

6.- «Մերկացուցին զինք»: «Մերկացուցին» ըսելով պէտք է հասկնալ.-

ա.- Թէ՛ Սատանան մերկացուց եւ պարպեց մեզ՝ մեր գօրութենէն եւ յոյսէն, բարութենէն եւ արդարութենէն, քաջութենէն եւ համարակութենէն: Փաստօրէն, Ադամ եւ Եւա մեղանչումէն ետք, կորսնցուցին

Աստուծոյ ներկայութեան կանգնելու իրենց փառութիւնն ու համարակութիւնը:

բ.- Աստանան մեզ մեղքի առաջնորդելով, մերկացուց մեզ Աստուծոյ փառքէն, մերկացուց մեզ արդարութեան եւ փրկութեան պատմունանէն: Մեղքը պատճառ եղաւ որ Աստուծոյ փառքով ծածկուած մարդը թգենի տերեւներ փնտոելու սկսի (Ծն 3.7): Ի՞նչ ողբերգութիւն է որ երկինքի ու երկրի թագաւորին զաւակը եղող մարդ արարածը թգենի տերեւներու կարօտ ըլլայ:

գ.- Մերկ ըլլալ կը նշանակէ նաեւ անպաշտպան ըլլալ: Մերկ մարդը ենթակայ է բոլորին ծաղրանքին առարկան դառնալու: Ահաւասիկ Աստանան ա՛յս է ինչ որ կ'ընէ: Ան կը ծաղրէ Աստուծոյ սէրէն եւ պաշտպանութենէն կողոպտուած ու մերկացած մարդը: Քրիստոս յանձն առաւ ծաղրուիլ ու ձաղկուիլ (Մր 15.19-20: Յի 19.1-2) որպէսզի մեզ ազատէ Չարին ձաղկանքէն: Քրիստոս մերկացաւ խաչին վրայ (Մտ 27.28) որպէսզի մեր Ադամական մերկութիւնը ծածկէ ներմակ հագուստներով (Յյտ 3.18):

7.- «Վիրաւորեցին եւ կիսամահ վիճակի մէջ ձգեցին եւ գացին»: Այս բառերուն կապակցութեամբ քանի մը հաստատումներ.-

ա.- «Վիրաւորեցին»: Չարը չբաւարարուեցաւ մեզ կողոպտելով եւ մերկացնելով, այլ քայլ մը առջեւ գնաց եւ վիրաւորեց մեզ: Ինչո՞ւ Աստանան մեզ չմեղցուց այլ պարզապէս վիրաւորեց եւ կիսամահ վիճակի մէջ ձգեց: Աստուած Աստանային արտօնութիւն տուած է մեզ վիրաւորելու, եւ սակայն, մեզ մեղցնելու արտօնութիւն չէ տուած: Ասոր փաստը Յոբին գիրքը ի՛նք կու տայ: Աստուած Աստանային կ'ըսէ. «Ահա զանիկա (Յոբը) քու ձեռքդ կու տամ. միայն թէ անոր կեանքը պահէ» (Յոբ 2.6 Հմմտ 1.12): «Անոր կեանքը պահել» կը նշանակէ զանիկա չմեղցնել: Աստանան չի՛ կրնար մարդուն կեանքը իլել, որովհետեւ Աստուած ի՛նքն է կեանքին տէրն ու տուիչը:

բ.- «Կիսամահ վիճակի մէջ ձգեցին եւ գացին»: Մարդկային ցեղը վիրաւոր եւ կիսամահ վիճակի մէջ գետին փոռուած մնաց մինչեւ գալուստը վերականգնեցնող Բարի Սամարացիին՝ Քրիստոսի: Ի՞նչ բան մեզի կը սորվեցնէ մարդուն գետին տապալուած մնալն ու չկարենալ վերականգնիլը: Կը սորվեցնէ այն՝ որ մարդ արարածը իր սեփական նիգով չի՛ կրնար վերականգնիլ եւ վերստին ձեռք ձգել իր կորսնցուցած աստուածապարգեւ արդարութիւնն ու սրբութիւնը:

Ինչպէս ուրիշը եղաւ մարդուն կորստեան պատճառը, այնպէս ալ ուրիշը եղաւ մարդուն փրկութեան պատճառը: Եւ այդ Ուրիշը իսկապէս ուրիշ է: Այդ ուրիշը Քրիստոս ի՛նքն է: Քրիստոս ի՛նքն էր որ մեզ

փնտոնեց եւ գտաւ այնպէս ինչպէս հովիւ մը պիտի փնտոնէր իր կորսնցուցած ոչխարը (Ղկ 15.4-7): Քրիստոսի՝ արիւնով էր որ մեր երկնաւոր Հայրը մեզ հաշտեցուց իր հետ (Բ.Կր 5.19: Հո 5.10: Ա.Յհ 1.7):

գ.- «Կիսամահ վիճակի մէջ ձգեցին եւ գացին»: Իգնատիոս Վարդապետ հետաքրքրական բացատրութիւն մը կու տայ «կիսամահ» բառին վերաբերեալ: Ան կը հաստատէ, որ «կիսամահ» բացատրութիւնը կը գործածուի անոնց համար՝ որոնք իրենց սիրտերուն մէջ վառ պահեցին արդարութեան կենդանարար շունչը:

դ.- «Կիսամահ» կը նշանակէ՝ կէս մեռած: Չարը լման մեռցնել չի կրնար, ինչպէս Յոբին լման չմեռցուց, ո՛չ ալ իշխանութիւն կամ իրաւունք ունի լման մեռցնելու: Իսկապէս ալ, Չարին կողմէ խոցոտուելէ եւ տապալելէ ետք, վերստին կրնանք կանգնիլ, եթէ երբեք ունինք մեր սիրտերուն մէջ սէր հանդէպ Աստուծոյ եւ հանդէպ արդարութեան: Արդարութիւնը սիրող եւ արդար ըլլալ ուզող մարդուն վերականգնումը անխուսափելի է, որովհետեւ «արդարը թէեւ եօթը անգամ ալ իյնայ՝ պիտի կանգնի» (Առ 24.16):

Հետեւաբար, դարձեալ հարց կու տանք.- Ինչո՞ւ բնագիրը գետին տապալած մարդուն համար «կիսամահ» բացատրութիւնը կը գործածէ եւ ո՛չ թէ «մեռած» բացատրութիւնը: Բնագիրը «կիսամահ» բացատրութիւնը կը գործածէ, ցոյց տալու համար, որ մարդը վերստին կենդանանալու յոյսը ունի, եւ ցոյց տալու համար որ Աստուած մեր առջեւ միշտ բաց կը պահէ իրմով վերակենդանանալու եւ վերականգնելու ճամբան:

ե.- Սիրելի՛ բարեկամ, քանի որ Աստուծան մեղքով խորտակեց մեզ եւ կիսամահ վիճակի մէջ ձգեց, եւ քանի որ տակաւին ան զանազան հնարքներով կը շարունակէ պայքարիլ մեր հոգիներուն դէմ, եկո՛ւր մեր վրայ առնենք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի կարենանք անոր հնարքներուն դէմ դնել, «որովհետեւ մեր պատերազմը մարդոց հետ չէ, այլ՝ երկինքի տակ գտնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ» (Եփ 6.11-12):

Առանձին չենք կրնար պատերազմիլ Չարին եւ անոր արբանեակներուն դէմ: Երուսաղէմէն Երիւբով իջնող մարդը առանձին էր: Ո՛չ ոք կ'ընկերանար անոր: Քրիստոս եկաւ ընկերակիցը ըլլալու ընկերակից չունեցող մարդոց: Քրիստոսի ընկերակցութեան չվստահող եւ անոր ընկերակցութիւնը չփնտոնող մարդուն պարտութիւնը անխուսափելի է: Քրիստոսի նման պատերազմակից մը ունեցող մարդուն համար պարտութիւն չկայ: Քրիստոս մեզի «հետ է գորաւոր ախոյեանի պէս» (Եր

20.11): Զօրաւոր Ախոյեանին հետ եղող մարդը ապահովութեան եւ վստահութեան գգացումներով համակուած պէտք է ըլլայ:

Մենք չէ որ կը յայտարարենք որ պատերազմի մէջ ենք Սատանային եւ անոր չար ու պիղծ ոգիներուն դէմ, այլ Աստուածաշունչը ինք: Աստուածաշունչը չի գոհանար յիշեցնելով մեզի որ պատերազմի մէջ ենք, այլեւ օրինակը կու տայ քանի մը անձերու որոնց դէմ անոնք պայքարեցան: Սատանան պայքարեցաւ Ադամին եւ Եւային դէմ (Մն 3.1-5): Պայքարեցաւ Յոբին դէմ (Յոբ 2.7): Փորձեց դէմ դնել Յեսուս քահանային (Զբ 3.1): Ան դրդեց Դաւիթ թագաւորը (Ա.Մն 21.1): Զար ոգի մը գրգռեց Սիւլէմացիները եւ անոնք Իսրայէլի Աքիմելէթ թագաւորին դէմ ելան (Դտ 9.22): Դարձեալ, չար ոգի մը նեղութիւն տուաւ Սաուդին (Ա.Թգ 16.14): Սատանան ի՛նք եղաւ մեր բարի բնութեան մէջ որոմ ցանողը (Մտ 13.39): Սատանան ի՛նքն է որ Աստուծոյ խօսքը լսող մարդոց «սիրտէն կը հանէ Աստուծոյ խօսքը, որպէսզի չհաւատան եւ չփրկուին» (Ղկ 8.12): Ան կրնայ մտնել մարդու մը մէջ ինչպէս մտաւ Յուդային մէջ (Յհ 13.27): Զար ոգի մը 18 տարի ստրկացուց հաշմանդամ կին մը (Ղկ 13.11): Սատանան կարող է մարդիկը ցորենի պէս մաղէ անցընել ինչպէս ըրաւ առաքեալներուն (Ղկ 22.31): Ան խաբեց Անանիան եւ անոր մահուան պատճառ եղաւ (Գրծ 5.1-6): Ան տանջեց մարդիկը (Գրծ 10.38): Ան արգելք եղաւ Պօղոս առաքեալին եւ կրնայ արգելք ըլլալ մեր շատ մը ծրագիրներու իրականացման (Ա.Թս 2.18): Ան նոյնիսկ ջանաց փորձութեան մէջ ձգել մեր ազատարարը՝ Քրիստոս (Մտ 4.1-10):

Գիտնալէ ետք այս բոլորը, տակաւին պէ՞տք է ուշանանք զԱստուած հոչակելու իբրեւ մեր թիկնապահը (Ես 52.12), մեր պաշտպանը (Սղ 59.17), մեր վահանը (Առ 2.7), մեր ամրութիւնն ու Փրկիչը (Սղ 18.2), մեր ազատիչը (Բ.Թգ 22.3), մեր ասպարը (Սղ 28.7), մեր զօրաւոր բերդը (Բ.Թգ 22.33), մեր ապաստանարանը (Սղ 91.9), մեր ապաւէնը (Եր 17.17), մեր յաւիտենական վէմը (Ես 26.4), մեր աննինջ պահապանը (Սղ 121.4), մեր միակ Աստուածը (Ես 44.6), մեր գլխուն հովանին (Սղ 140.7), մեզի յաղթել տուողը (Ա.Թգ 17.47), պատերազմի ընթացքին մեզ զօրութեամբ լեցնողը (Սղ 18.39), մեր ձեռքերը պատերազմի վարժեցնողը (Բ.Թգ 22.35): Թո՛ղ տանք որ Աստուած ըլլայ մեր մարգիչը, մեզ պատերազմի վարժեցնողը, որպէսզի պատերազմինք իր եւ մեր թշնամիին՝ Սատանային դէմ: Աստուած երբե՛ք մեզ առանձին պիտի չթողու Զարին դէմ մղած մեր պայքարին մէջ, որովհետեւ ան շատ լաւ գիտէ, որ Զարը մեզի դէմ, բայց մանաւանդ մեր ընդմէջէն իր սուրբ Որդիին դէմ է որ կը պայքարի:

«Պատահեցաւ որ քահանայ մը նոյն քամբայէն կ'անցնէր: Տեսաւ վիրաւորը, քայց քամբան շեղելով՝ անցաւ գնաց» (Ղկ 10.31): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Քահանայ մը նոյն քամբայէն կ'անցնէր»: Վերել ըսինք, որ քանի մը քամբաներ կային որոնք Երուսաղէմէն Երիֆով կ'առաջնորդէին: Եւ ըսինք, որ ամենակարն քամբան ամենավտանգալից քամբան էր, որովհետեւ գողեր, աւագակներ եւ մարդասպաններ կը վիտային այդ քամբուն վրայ: Յիշեցինք նաեւ թէ այս քամբան պատմութեան մէջ քանչցուած էր «Արեան քամբայ» անունով, որովհետեւ հոն շատ մարդոց արիւն թափուած էր աւագակներու ձեռքով: Արդ, եթէ այս քամբան այսօր վտանգաւոր քամբայ մըն էր, ինչո՞ւ քահանաներ այս քամբէն կ'անցնէին:

Աստուածաշունչի մեկնիչ՝ Lightfoot դիտել կու տայ թէ շատ մը քահանաներ եւ Ղեւտացիներ կը բնակէին Երիֆովի մէջ: Անոնք տանարին վերաբերեալ իրենց պաշտօնը կատարելու համար՝ Երուսաղէմ կ'իջնէին, եւ իրենց պաշտօնը վերջացնելէ ետք՝ դարձեալ Երիֆով կը դառնային: Նման պարագայի, բնական էր որ անոնք քամբուն ընթացքին հանդիպէին թէ աւագակներու եւ թէ՛ աւագակներու ձեռքը ինկող մարդոց:

Ուստի, պատահական չէ որ Յիսուս կը խօսի Երիֆովէն Երուսաղէմ իջնող մարդուն մը մասին որ կ'իյնայ աւագակներուն ձեռքը: Յիսուս անուղղակիօրէն մեզի կ'ուզէ ցոյց տալ թէ քահանաները շատ լա՛ւ գիտէին թէ ո՛ր քամբաներուն վրայ տառապողներ կային, գիտէին թէ ո՛ր էին իրաւագրկուածները, չարչարուածները, որոնք օգնութեան կարիքը ունէին: Հոգեւոր հասկացողութեամբ մը, կրնանք ըսել թէ Յիսուս այստեղ մեզի կ'ուսուցանէ այն՝ թէ քահանաները կրնան տեղեակ ըլլալ իրենց հօտի ցաւերէն, կրնան տեսնել վիշտը իրենց հօտի անդամներուն, եւ սակայն, բան մը չընեն անոնց դարմանումին համար:

2.– Ինչո՞ւ Քրիստոս 31–32 համարներուն մէջ կը խօսի գետին ինկած մարդուն չօգնող քահանայի մը եւ Ղեւտացիի մը մասին: Հիմնական պատճառը այն է, որ Քրիստոս կ'ուզէ ցոյց տալ մեզի որ փրկութիւնը քահանայի մը կամ ոեւէ մարդուն մը գործը չէ: «Փրկութիւնը... Աստուծոյ պարգեւն է» (Եփ 2.8): Ոեւէ եկեղեցական պէտք չէ մտածէ թէ ինք իր քարոզներով ու աշխատանքներով կրնայ մարդիկը փրկել: Մարդիկը փրկողը՝ քարոզը չէ, այլ՝ Քարոզուածը՝ Քրիստոս ինք:

3.– Ողբալի բան է որ աստուածաբանական կրօնքի մը ներկայացուցիչը հանդիսացող քահանան, կը ձախողի ըլլալու սիրոյ եւ կարեկցութեան ներկայացուցիչը նաեւ: Աստուածաշունչէն կը սորվինք, որ

ֆահանան Աստուծոյ ներկայացուցիչն է ժողովուրդին դիմաց եւ ժողովուրդին ներկայացուցիչն է Աստուծոյ դիմաց: Ցաւալի է որ ամենահաս Աստուծոյ ներկայացուցիչը կը զլանայ օգնութեան հասնիլ անկեալին: Աստուած կը սգայ երբ իր ներկայացուցիչը անկարեկիր կը գտնուի մարդոց ցաւին նկատմամբ:

4.- Ըսի, ֆահանան Աստուծոյ ներկայացուցիչն է: Աստուծոյ ներկայացուցիչ ըլլալը՝ Աստուծոյ մասին խօսիլը չէ, այլ Աստուծոյ խօսնակն ու պատգամախօսը դառնալն է: Իւրաքանչիւր ֆահանայ պարտի ըլլալ Աստուծոյ խօսնակն ու պատգամախօսը: Ի՞նչ է Աստուծոյ պատգամախօսին կոչումն ու պարտականութիւնը եթէ ոչ հարցնել եւ հասկնալ Աստուծոյ կամֆը եւ գանիկա յայտնել մեր հօտի անդամներուն: Անցեալին ֆահանաները ո՛չ միայն Աստուծոյ կամֆը ժողովուրդի՛ն կը յայտնէին, այլ նաեւ թագաւորներուն (Ա.Թգ 14.36-37, 22.9-10): Այսօր, ո՞ր եկեղեցականը իր երկրին թագաւորին կամ նախագահին Աստուծոյ կամֆը կը յայտնէ: Փոխուած է աշխարհը: Այո՛, աշխարհ փոխուած է, մարդիկ իրե՛նք ալ փոխուած են, բայց ֆահանային կոչումին մէջ ոչինչ պէտք է փոխուի:

Ինչպէս Աստուած «նո՛յնն է միշտ – երէկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր 13.8), այնպէս ալ Աստուծոյ կողմէ ֆահանային տրուած կոչումն ու պարտականութիւնն ալ նոյնն է: Եթէ Սուրբ Գրային հասկացողութեամբ ֆահանաները բարեխօսներ ու միջնորդներ էին Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ, այսօրուան ալ ֆահանաները կրնան շարունակել բարեխօսի եւ միջնորդի իրենց աստուածատուր պաշտօնը վարել, եթէ երբեք Աստուծոյ կամֆով է որ ֆահանայութեան աստիճանին կ'արժանան: Հին Կտակարանը ցոյց կու տայ որ երբեմն Իսրայէլի թագաւորներ ժողովուրդին ստորին խաւին պատկանող մարդոցմէ բարձր վայրերուն ֆահանաներ կը կարգէին, այդ պաշտօնին փափաքողը կ'օրհնէին, եւ անիկա բարձր վայրերուն ֆահանայ կ'ըլլար (Գ.Թգ 13.33):

Ճշմարտութիւնը չյայտնող եւ կամ ճշմարտութիւնը խեղաթիւրող ֆարոգիչներ, ո՛չ թէ իրենց սէրն է որ յայտնած կ'ըլլան զիրենք ունկդրողներուն նկատմամբ, այլ իրենց ատելութիւնը: Ճշմարտութիւնը չյայտարարող ֆարոգիչը զինք լսողներուն յաւիտենականութիւնը լուրջ վտանգի մը առջեւ դրած կ'ըլլայ: Ճշմարտութիւնը գիտնալն ու ցանկնալը մեզ կ'առաջնորդէ ճշմարիտ ազատութեան, համաձայն Քրիստոսի խօսքին. «Ճշմարտութիւնը պիտի ցանկնաք եւ ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յհ 8.32): Հետեւաբար, եթէ երբեք իսկապէս մտահոգ ենք մեզ ունկդրողներուն յաւիտենական ազատութեամբ, անոնց ճշմարտութիւնը պէտք է յայտնենք եւ ուրիշ ոչինչ:

Բայց ճշմարտութիւնը յայտարարելը բաւարար չէ: «Տեսաւ վիրաւորը, բայց ճամբան շեղելով՝ անցաւ գնաց»: Այստեղ ունինք գետին տապալած վիրաւոր անձ մը, որ ճշմարտութեան փարոզիչի պէտք չունի, այլ բարեգործ Սամարացիի մը: Անտակ որդիին առակին մէջ կը կարդանք. «Հայրը տեսաւ զինք ու գթաց. վագելով դիմաւորեց զայն, վիզին փաթթուեցաւ եւ համբուրեց»: Անտակ որդիին առակին մէջ պատկերացուած հայրը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը: Մեր երկնաւոր Հայրը ո՛չ միայն տեսնող աչք ունի, այլեւ կարեկցող սիրտ եւ բուժող ձեռք: Ինչպէս մեր երկնաւոր Հօր համար կ'ըսուի «Տեսաւ...», այնպէս ալ Բահանային եւ Ղեւտացիին համար կ'ըսուի. «Տեսաւ...»: Բայց, ո՛հ, տեսէ՛ տարբերութիւնը Աստուծոյ եւ մարդուն հայեացքին: Աստուած «տեսաւ» եւ գործեց, իսկ մարդը «տեսաւ» եւ ճամբան շեղեց:

Սիրելի՛ ընթերցող, ունի՞ս տեսնող աչք ու գթացող սիրտ: Եթէ ունիս տեսնող աչք, բա՛ց զանիկա եւ նայիր չորս կողմը: Անհամար թիւով վիրաւորներ գետին տապալած՝ կը սպասեն Սամարացիի մը անցընելուն: Ձե՞ս ուզեր ըլլալ Բարի Սամարացի մը՝ Աստուծոյ բարութիւնը արտացոլացնող՝ Աստուծոյ փառքին համար: Բարեգործութիւնը միայն եկեղեցականներուն կոչումը չէ: Քրիստոսի ներկայացուցիչները միայն եկեղեցականները չեն, այլ բոլոր անոնք՝ որոնք Քրիստոսի մարմինին անդամները դարձած են մկրտութեամբ եւ Աստուծոյ շնորհով:

Իբրեւ Քրիստոսի ներկայացուցիչը, բու կեանքովդ եւ գործովդ Քրիստոսի պատիւ բերող եւ փառք ապահովող անձ մը պէտք է ըլլաս: Եթէ երբեք դուն զաւակն ես Աստուծոյ «որ կը հաստատէ բոլոր իյնալու վրայ եղողները եւ բոլոր վար ծոածները կը կանգնեցնէ» (Սղ 145.14), դուն ի՛նքն ալ, պէտք է բու նմանդ հաստատող եւ կանգնեցնող մը ըլլաս:

«Ղեւտացի մըն ալ նոյն տեղէն անցնելու առեն՝ տեսաւ վիրաւորը եւ ինքն ալ շրջանցեց գնաց» (Ղկ 10.32): Փանի մը մատնանշումներ. –

1.– Բահանային նման Ղեւտացին եւս անկարեկից գտնուեցաւ վիրաւոր մարդուն նկատմամբ: Թէպէտ պէտք է յիշել, որ Ղեւտացին քիչ մը աւելի մօտեցաւ գետին փոռած մարդուն քան Բահանան ինք: Բահանան հեռուէն տեսաւ վիրաւորը եւ ճամբան շեղեց, մինչ Ղեւտացին ճամբան չշեղեց երբ տեսաւ վիրաւորը, այլ մօտեցաւ անոր որպէսզի մօտէն տեսնէր զանիկա: Հին թարգմանութիւնը կ'ըսէ. «Ղեւտացի մըն ալ այնտեղ հասնելով՝ գնաց ու տեսաւ...»: «Գնաց ու տեսաւ» բառերը «շրջանցեց» բառին հետ նոյն իմաստը ունին, եւ յստակօրէն ցոյց կու տան, որ Ղեւտացին բաւականաչափ մօտեցաւ վիրաւորին: Այս ըսելով,

ըսել չենք ուզեր որ Ղեւտացին բանով մը աւելի լաւ էր քան քահանան: Երկուքին ալ վերաբերմունքը անտարբեր մարդոց վերաբերմունք էր:

Քահանային եւ Ղեւտացիին որդեգրած կեցուածքը մեզի կը սորվեցնէ կարեւոր նշմարտութիւն մը: Քահանան կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք կը լսեն լաւ կամ դժբախտ դէպքի մը պատահումին մասին, եւ սակայն, չեն փորձեր անձնական հետապնդումներով դէպքին մանրամասնութիւններէն տեղեակ ըլլալ: Անոնք հեռուէն կը դիտեն պատահածը եւ իրենց ճամբան շեղելով՝ կ'անցնին կ'երթան: Անոնք պարզապէս չեն հետաքրքրուած իրենց շուրջ անցած դարձածով: Անոնց հետաքրքրութեան առարկան իրենց անձերն են միայն: Անոնք ստեղծած են իրենց անձնական աշխարհը: Ո՛չ կ'ուզեն այդ աշխարհէն դուրս գալ եւ ո՛չ ալ կ'ուզեն այդ աշխարհէն ներս ընդունիլ ոեւէ մէկը:

Իսկ Ղեւտացին կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք երբ լսեն պատահած դէպքի մը մասին, կը հետաքրքրուին ատոր մանրամասնութիւններով, ո՛չ թէ որպէսզի օգտակար դառնան, այլ որպէսզի իրենց հետաքրքրութիւնը գոհացնեն: Ահաւասիկ երկու խումբ մարդիկ: Երկու խումբի մարդոց ալ վերաբերմունքը անաստուածահաճոյ վերաբերմունք է: Աւելի նախընտրելի է բնա՛ւ չհետաքրքրուիլ պատահած դժբախտ դէպքի մը մանրամասնութիւններով, քան թէ հետաքրքրուիլ, եւ սակայն, ոեւէ ձեռով չփորձել օգտակար դառնալ:

2.- Քահանան եւ Ղեւտացին չուզեցին օգնել վիրաւորին, որովհետեւ անոնք օրէնքի ստրուկներ էին եւ ո՛չ թէ գթութեան մարդիկ: Վստահաբար մեռած կարծեցին վիրաւորը եւ յիշեցին Օրէնքի գիրքին խօսքը. «Ով որ մեռած մարդու մը մարմինն զպչի, եօթը օր անմաքուր պէտք է սեպուի» (Թ՛ւ 19.11): Աստուած այդ պահուն կարեկցութիւն կը սպասէր իրենցմէ եւ ո՛չ թէ օրէնքի չոր գործադրութիւն: Նման օրինապահութիւն մը սիրոյ օրէնքին խախտումն է: Օրէնքի մարդ ըլլալը մեզ պէտք չէ առաջնորդէ անտարբեր ըլլալու մարդոց ցաւին նկատմամբ: Ճշմարտապէս Օրէնքը ճանչցող մարդը՝ գործի մարդ պէտք է ըլլայ: Աստուծոյ Օրէնքը անգութ ըլլալ չի՛ սորվեցնէր, վիրաւորը գետին ձգել չի՛ սորվեցնէր:

3.- Ղեւտացին որ պահապանն էր տաճարի կահկարասիներուն՝ ձախողա՛ծ էր ըլլալ պահապանը իր տառապող եղբօր: Ղեւտացին որ պարտականութիւնը ունէր Մովսէսի ժամանակներէն սկսեալ Վկայութեան Խորանը իր ուսերուն վրայ շալկելու՝ հիմա կը մերժէր իր ուսերուն վրայ շալկելու գետին տապալած ու չարչարուած իր եղբայրը:

Թէ՛ քահանան եւ թէ՛ Ղեւտացին, երկուքն ալ տաճարին ու տաճարական կեանքին հետ կապ ունեցող մարդիկ էին, որոնք սակայն ոեւէ

կապ չունեին Աստուծոյ հետ: Քննե՛նք մենք զմեզ: Հաւանաբար մենք եւս այնպիսի եկեղեցական կամ եկեղեցի յանախոյ մարդիկ ենք, որոնք կապ չունին Աստուծոյ հետ, եւ ասիկա բնականօրէն մեզ անտարբեր կը դարձնէ ուրիշին ցաւին հանդէպ:

«Բայց Սամարացի մը, որ հոնկէ կ'անցնէր, տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր վրայ» (Ղկ 10.33): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Բայց Սամարացի մը...»: Սամարացին Քրիստոս ինքն է: Ինչո՞ւ արդեօք Քրիստոս առակին մէջ ինքզինք Սամարացի կը կոչէ: Քրիստոս շատ լաւ գիտէր որ Հրէաստանի մէջ բնակող հրեաները անարգալից կերպով կը վերաբերէին Սամարիայի բնակիչներուն հետ: Ընդհանրապէս բոլոր հրեաներուն համար եւ մասնաւորաբար քահանաներուն եւ Ղեւտացիներուն համար, Սամարացիները կը նկատուէին հեթանոսներ, «չուններ», Աստուծոյ թագաւորութեան մէջ բաժին չունեցողներ, Օրէնքը չհանչցող մարդիկ, անէծքի եւ դատապարտութեան արժանի:

Հրէաստանի մէջ բնակող հրեայի մը համար, դատապարտութեան արժանի էին ո՛չ միայն Սամարիայի մէջ բնակողները, այլեւ բոլոր այն հրեաները՝ որոնք յարաբերութիւն կ'ունենային անոնց հետ: Պէտք է յիշել, որ Սամարիայի մէջ միայն հեթանոսներ չէ որ կը բնակէին, այլ նաեւ հրեաներ: Սամարիայի մէջ բնակող հրեաներն անգամ ատելի էին Հրէաստանի հրեաներուն համար: Որպէսզի գիտնանք թէ ի՞նչպէս պատահեցաւ որ հեթանոսներ եւ հրեաներ միատեղ բնակէին Սամարիայի մէջ, եւ որպէսզի գիտնանք թէ ինչո՞ւ Հրէաստանի հրեաներ չէին ուզեր յարաբերութիւն ունենալ Սամարիայի մէջ բնակող հրեաներուն հետ, անհրաժեշտ է արագ ակնարկ մը նետել պատմութեան վրայ:

Սամարիան Իսրայէլի (հիւսիսի) թագաւորութեան մայրաքաղաքն էր: Անիկա հիմնուած էր Ք. Ա. 9-րդ դարուն Իսրայէլի Ամրի թագաւորին կողմէ (Գ.ԹԳ 16.23-24): 732-722 թուականներուն Իսրայէլի թագաւորութեան վրայ իբրեւ թագաւոր իշխեց Ովսէան: Ովսէայի օրով էր որ Ասորեստանի Սաղմանասար Ե. թագաւորը (726-722) Սամարիան պաշարեց երեք տարի (Գ.ԹԳ 17.5): Երրորդ տարուայ աւարտին ան գրաւեց Սամարիան եւ անոր բնակիչներուն մէկ մասը գերի տարաւ Ասորեստան (Գ.ԹԳ 17.6) եւ անոնց փոխարէն հեթանոսներ բերաւ եւ բնակեցուց Սամարիայի քաղաքներուն մէջ (Գ.ԹԳ 17.24):

Ասորեստանի Սաղմանասար Ե. թագաւորին յաջորդեց Սարգոն Բ. թագաւորը, որ 722 թուականին գրաւեց Սամարիան ամբողջութեամբ եւ վերջ դրաւ հիւսիսի թագաւորութեան: Սարգոն Բ. թագաւորը Սամարիայի մէջ բնակող Իսրայէլի տասը ցեղերը գերի տարաւ Ասորեստան եւ անոնց փոխարէն Ասորեստանէն հեթանոս ցեղեր բերաւ

եւ բնակեցուց Սամարիայի մէջ ինչպէս ըրած էր Սաղմանասար Ե. քաղաւորը: Սամարիան այնուհետեւ դարձաւ հեթանոսներով խառն շրջան մը: Սամարիա բերուած Ասորեստանցի գաղթականներ ժամանակի ընթացքին խառնուեցան տեղաբնակ հրեաներուն հետ: Հրեաներ իւրացուցին անոնց հեթանոսական սովորութիւններէն ոմանք (Դ.Թ.գ 17.25-41): Ասիկա պատճառ մը եղաւ որ Հրէաստանի հրեաները ամբողջութեամբ իրենց կապը խզեն Սամարիայի մէջ բնակող իրենց հրեայ եղբայրներուն հետ:

Քրիստոսի ուղղուած հրեաներուն խօսքը «Իրաւունք չունի՞մք ըսելու՝ թէ դուն Սամարացի ես եւ դեւ կայ մէջդ» (Յե 8.48), պարզորոշ կերպով ցոյց կու տայ, որ Քրիստոսի ժամանակ Հրէաստանի հրեաներուն ատելութիւնը Սամարիայի բնակիչներուն հանդէպ հասած էր իր գագաթնակէտին: Քրիստոս խիզախութիւնը կ'ունենայ ինքնիր համար գործածելու ատելութեան եւ արհամարհանքի արժանացած անուն մը՝ Սամարացի:

Եւ այս Սամարացին պարզ Սամարացի մը չէր: Ան բարի ու բարեգործ Սամարացին էր: Ան Աստուծոյ միածին եւ գթառատ Որդին էր: Ան մարդկային անկեալ ցեղին վերականգնիչն ու Փրկիչն էր: Ան նորոգողն էր համայն տիեզերքին: Քրիստոս ինքնիր համար կը գործածէ ատելութեան խորհրդանիշ հանդիսացող «Սամարացի» անունը, որպէսզի սորվեցնէր հրեաներուն եւ մեզի, թէ՛ պէտք չէ ատել եւ արհամարհել ոեւէ մէկը:

2.- «Որ հոնկէ կ'անցնէր»: Ի՞նչ կը պարզեն այս բառերը: Կը պարզեն որ հոն ուր կարիքի ու տառապանքի մէջ մարդիկ կան՝ Յիսուս հոնկէ՛ կ'անցնի: Հոն ուր մարդիկ կարիքը ունին օգնութեան եւ զօրակցութեան՝ պաշտպանութեան եւ պահպանութեան՝ Յիսուս հոնկէ՛ կ'անցնի: Այո՛, հոն ուր վշտահար մը կայ՝ հո՛ն է Յիսուս: Հոն ուր փրկութիւն եւ ազատագրութիւն աղաչող մը կայ՝ հո՛ն է Յիսուս:

3.- «Տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր վրայ»: Մարդկային ցեղը մեղքի իբրեւ հետեւանք գետին փոռուած մնաց մինչեւ ժամանումը Բարի Սամարացիին՝ Քրիստոսի: Եբրայեցիներուն հայեացքով Սամարացիները անգուրք մարդիկ էին: Յիսուս ինքզինք Սամարացի կոչելով՝ ցոյց տուաւ հրեաներուն թէ անգուրք իրե՛նք են եւ ո՛չ թէ Սամարացիները: Եբրայեցիներուն կողմէ ատուած Սամարացին ի՛նքն էր որ սէր ցուցաբերեց տապալածին հանդէպ: Անաստուած նկատուած Սամարացին ի՛նքն էր որ Աստուծոյ գթառատութեան արտացոլացումը հանդիսացաւ:

Քահանաներուն հայեացքով Աստուծոյ արքայութեան մէջ բաժին ու ժառանգութիւն չունեցող Սամարացին ի՛նքն էր որ երկնքի Արքային

կամքը կատարեց: Սամարացին որ ներկայացուցիչն էր հեթանոս աշխարհին՝ դարձաւ երկնքի ներկայացուցիչը երկրի վրայ: Սամարացին որ ներկայացուցիչն էր անհաւատութեան՝ դարձաւ ներկայացուցիչը հաւատքի:

4.- Սամարացին որ օրէնքը չհանչցող մը կը նկատուէր, եղաւ միակը որ մարդասիրութեան օրէնքը ի գործ դրաւ: Աստուծոյ Օրէնքը չունենալով հանդերձ՝ փաստեց թէ ի՛նքն էր ինքնիր օրէնքը (Հո 2.14): Չբաւարարուեցաւ պարզապէս ցաւ զգալով վիրաւորին համար, այլ՝ անցաւ զգացումէն անդին եւ գործեց վիրաւորին ի նպաստ: Հոսկէ կը սորվինք այն, որ թշուառներուն համար վշտանալը բաւարար չէ, այլ բան մը պէտք է ընել զանոնք իրենց թշուառութեան նիրաններէն ազատագրելու համար:

5.- Քահանային եւ Ղեւտացիին անտարբերութիւնը եւ Սամարացիին ըրած օգնութիւնը, ցոյց կու տայ այն՝ թէ մենք կրնանք օգնութիւն գտնել մեր չակնկալած անձերէն, եւ ո՛չ մէկ օգնութիւն ստանալ անոնցմէ՝ որոնցմէ կ'ակնկալենք օգնութիւն գտնել:

Ո՞վ էր այն հրեան որ կ'ակնկալէր թէ Սամարացին կրնար օգտակար դառնալ գետին տապալած վիրաւոր ցամբորդին: Եւ սակայն, Սամարացին եղաւ միակը որ օգտակար դարձաւ: Իսկ քահանան եւ Ղեւտացին, որոնցմէ ամէն մարդ կը սպասէր բարին գործել՝ լուռ ու անտարբեր մնացին ի տես իրենց նմանին վիշտին: Ի՞նչ է այն կարեւոր դասը որ պէտք է այստեղէն սորվինք: Մեր սորվելիքը այն է, որ բնա՛ւ երբեք պէտք չէ արհամարհենք ոեւէ մէկը: Մեր արհամարհածը կրնայ միակը ըլլալ որ օգնութեան ձեռք կրնայ երկարել մեզի երբ նեղութեան մէջ իյնանք: Ո՞վ չէ ապրած այս փորձառութիւնը:

Միւս կողմէ, նայինք մեր կեանքներուն, անհամար չէ՞ թիւը մեր կեանքներուն մէջ վիստացող այն «քահանաներուն» եւ «Ղեւտացիներուն», այսինքն՝ հարազատներուն, ազգականներուն, բարեկամներուն, ընկերներուն եւ գործակիցներուն, որոնցմէ կ'ակնկալուի եւ կը սպասուի բարին գործել, եւ սակայն, երբ նեղութեան մատնուինք, անոնք յանկարծ կ'անյայտանան, կը փաշտուին հրապարակէն եւ մեզ առանձին կը թողուն մեր ցաւին մէջ, եւ մենք ստիպուած կ'ըլլանք ըսելու. «Նայեցայ, բայց օգնող չկար: Չարմացայ, որ ձեռնտու եղող մը չկար...» (Ես 63.5 Հմմտ Սղ 22.11):

Սիրելի՛ ընթերցող, եթէ երբեք դուն ալ կը զարմանաս որ քեզի օգնող մը չկայ, կ'ուզեմ յիշեցնել քեզի, որ կայ մէկը, որ ո՛չ միայն կրնայ օգնել քեզի, այլեւ կը փափաքի օգնել քեզի: Մէկը, որուն համար հաճոյք եւ ուրախութիւն է քեզի բարիք ընելը (Եր 32.41): Մէկը, որ բարի ու

բարերար է (Սղ 119.68): Մէկը, որ հոգ եւ խնամք կը տանի ինչ հոգիիդ (Յոբ 10.12): Մէկը, որ իր ողորմութեամբ եւ սիրով կը պատէ չորս կողմդ (Սղ 32.10): Մէկը, որ նեղութեան մէջ կ'իյնայ երբ կը տեսնէ ինչ նեղութեան մէջ ինկած (Յս 63.9):

6.- «Տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր վրայ»: Ձեմ ուզեր հապնեալ կերպով անցնիլ այս բառերուն վրայէն: Նոյն այս բառերը կրկնուած տեսանք անառակ որդիին առակին մէջ. «Հայրը տեսաւ զինք ու գթաց»: Երկու պարագաներուն ալ «տեսնելու» եւ «գթալու» հարց մը կայ:

«Տեսաւ վիրաւորը» բառերը ցոյց կու տան, որ Աստուած կը տեսնէ մեղաւոր մարդուն վերքը, տեղեակ է անոր կարեւոր վիճակէն, կը տեսնէ մարդը իր ցաւին ու վիշտին մէջ, իր նեղութեան ու տառապանքին մէջ: «Տեսաւ վիրաւորը եւ գթաց»: Այս բառերը բացորոշ կերպով ցոյց կու տան, որ Աստուած կը կարեկցի մեղքով վիրաւորուած մարդկային ցեղին:

Աստուած սակայն լոկ գթացող մը չէ, այլ իր գթութիւնը գործնական կերպով արտայայտող մը: Ան իր առատ գթութեան համեմատ ջնջեց մեր յանցանքները (Սղ 50.1): Մարդիկ իրենք չխնդրեցին Աստուծմէ որ ջնջէ իրենց յանցանքները եւ ներէ իրենց մեղքերը: Աստուած ի՛նքն էր որ ներումի եւ փառութեան արժանացուց մեզ թէպէտ մեզմէ ոեւէ մէկը արժանի չէր ներում եւ փառութիւն ստանալու:

«Մօտեցաւ եւ վերքերը փաթեց՝ անոնց վրայ ձէք եւ զինի դնելով. սպա դրաւ իր գրաստին վրայ եւ տարաւ պանդոկ մը ու գայն խնամեց» (Ղկ 10.34): Քանի մը մատնանշումներ.--

1.- «Մօտեցաւ»: Այս բառը ցոյց կու տայ որ Աստուած մարդուն մօտեցող Աստուած է: Աստուած է որ մարդուն կը մօտենայ եւ ո՛չ թէ մարդը Աստուծոյ: Մօտենալու նախաձեռնութիւնը Աստուած է որ կը կատարէ: Աստուած սէր է (Ա.Յհ 4.8) եւ սէրը միշտ կը նախաձեռնէ: Ուշագրաւ երեւոյթ է, որ առակը մեզի չ'ըսեր թէ գետին ինկած վիրաւոր մարդը օգնութիւն խնդրեց Բարի Սամարացիէն: Ասիկա պատահականութեան արդիւնք չէ: Ասիկա կը հաստատէ վերեւ մեր ըսածը: Վերեւ հաստատեցինք, որ Աստուած ներեց մարդոց մեղքերը թէպէտ մարդիկ իրենք չխնդրեցին Աստուծմէ որ ներէ իրենց մեղքերը: Աստուած կ'օրհնէ առանց սպասելու որ իր օրհնութիւնը խնդրենք: Ան մնայուն կերպով կու տայ, գիտնալով հանդերձ որ մենք յաճախ իր տուածները կը շահագործենք: Տալը Աստուծոյ բնութեան մաս կը կազմէ: Աստուած չի կրնար ինքնիր բնութեան հակասել դադրեցնելով մարդկային ցեղին տալը:

Սուրբ Գրիգոր Նարեկացի իր աղօթամատենանին մէջ խօսելով Բարի Սամարացիին առակին մասին կ'ըսէ. «Ըսուած չէ՛ թէ աւագակներէն սրախողխող եղած անցորդը աղաչեց քեզի, որովհետեւ կարկամած էր, ո՛չ ալ՝ թէ պաղատանքի ձայն արձակեց ետեւէդ, որովհետեւ չէր կրնար պոռալ. ո՛չ ալ՝ թէ տատանող մատներով վտանգի աղէտքը յայտնեց տեսնողիդ, որովհետեւ ջախջախուած էր. ո՛չ ալ՝ թէ կողկողագին ողբի արցունքներով Բարեբարիդ բան մը հասկցուց, որովհետեւ յանցապարտ էր. ո՛չ ալ՝ բարեխօսի մը միջնորդութեամբը Ողորմածիդ կամքը հանեցուց, որովհետեւ այցելող մը չունէր. ո՛չ ալ՝ խորտակուած մարմինին արիւնաներկ ձորձերը ցուցնելով Գթածիդ սիրտը նմլեցուց, որովհետեւ յուսահատած էր. ո՛չ ալ՝ ծունկերը իբրեւ ոտքի գարշապար գործածեց, որովհետեւ չէր կրնար վեր կենալ. զի ողջ-մեռած ըսելը մեռելութենէ տարբեր բան մը չէ: Մանաւանդ թէ քու խօսքովդ խրատուելէն, քու ողորմութիւնովդ բարեբարուելէն, եւ քու փառքովդ լուսազարդուելէն վերջը, ո՛չ միայն ետ չկեցաւ քեզի դէմ իր հակառակութենէն, այլ ապստամբ թշնամիներուդ թիւին վրայ աւելցաւ, անոնց հետ դաշնակցեցաւ, եւ քեզ ատողներուն հետ միաբանեցաւ» (Բան ԺԳ):

2.- «Եւ վերքերը փաթթեց»: Վերքերը փաթթելը մեղքը դատապարտել է (Հո 8.3), մեղքին պատճառած ցաւը փարատել է: Մարդուն սրտին մէջ գոյութիւն ունեցող վերքը հետեւանքն է մեղքին: Մեղաւոր մարդը վիրաւոր մարդ է: Քրիստոս իր վերքերով բուժեց մեր վերքերը (Ես 53.5): Այսինքն, մեղքին պատճառած վերքը ան առաւ իր վրայ, որպէսզի անով մեզ ազատագրէ մեղքի տիրապետութենէն (Ա.Պտ 2.24): Քրիստոս խոր կերպով մը վիրաւորուեցաւ երբ մեր մեղքերը իր վրայ առաւ, որովհետեւ ան կատարեալ սրբութիւն էր եւ է, կատարեալ մաքրութիւն էր եւ է: Կատարեալ Սուրբն ու Սրբութիւնը միաւորուեցաւ կատարեալ պղծութեան, այսինքն՝ մեղքին հետ, որպէսզի մեզ առաջնորդէ դէպի կատարելութիւն: Մեղքին հետ այդ միաւորուիլն էր որ խոցոտեց զՔրիստոս: Քրիստոս, որուն «մէջ մեղք չկայ» (Ա.Յի 3.5), որ բնաւ չէ մեղանչած (Եբր 4.15), որուն ո՛չ ոք կրնայ ամբաստանել ոեւէ մեղքի համար (Յի 8.46), «որ բնաւ մեղք չէր գործած» (Բ.Կր 5.21), միաւորուեցաւ մեղքին հետ, մեզ բաժնելու համար անկէ:

3.- «Եւ վերքերը փաթթեց»: Նկատի առնենք հետեւեալ իրողութիւնը: Որպէսզի կարենանք գետին ինկած մարդու մը վերքերը փաթթել, ամէն բանէ առաջ պէտք է խոնարհիմք դէպի անոր: Ըսել ուզածս այն է, որ Քրիստոս խոնարհեցաւ դէպի ինկած մարդը, իրմով բարձրացնելու համար զանիկա մեղքի տիղմէն: Իգնատիոս Վարդապետ կ'ըսէ. «Ո՛չ ոք

կրնայ խորխորատի մէջ ինկած անասունը վեր քաշել եթէ ինք անձամբ խորխորատ չիջնէ: Դարձեալ, ո՛չ ոք կրնայ գետին գլորած մանուկը վեր բարձրացնել առանց խոնարհելու դէպի անոր»: Քրիստոս ի՛նք եղաւ այն անձը որ իջաւ մեղքի ու դատապարտութեան խորխորատին մէջ եւ մեզ յաղթական դուրս բերաւ անկէ:

4.- «Անոնց վրայ ձէթ եւ գինի դնելով»: Քանի մը ամփոփ բացատրութիւններ.-

ա.- Զարեհ Արք. Ազնաւորեան կը հաստատէ, թէ «ձէթն ու գինին, անցեալին կը գործածուէին վերքերու դարմանման առեսն, ձէթը՝ ցաւերը մեղմելու, իսկ գինին՝ վերքը մաքրելու եւ մանրէները չեզոքացնելու»: Այո՛, ինչպէս գինին վերքը կը մաքրէր եւ մանրէները կը չեզոքացնէր, այնպէս ալ Յիսուս իր արիւնով մաքրեց մեր հոգիի վերքերը եւ չեզոքացուց մեղքերու մանրէները, եւ այդ ձեւով էր որ Քրիստոսապարգեւ «ձէթով», այսինքն՝ հանգիստով, մեղմացաւ մեր սրտին ու հոգիին ցաւը, որ հետեւանքն էր մեղքին:

բ.- Իգնատիոս Վարդապետ Դուկասու Աւետարանի իր մեկնութեան մէջ, կը բացատրէ, որ «ձէթը» կը պատկերացնէ մկրտութեամբ մեր ստացած շնորհներն ու որդեգրութեան շնորհքը, իսկ «գինին» կը խորհրդանշէ Քրիստոսի փրկարար արիւնը, որ «կենդանացուց մեղքերով մեռածները եւ բուժեց մեր հոգիներուն վերքերը»: Այո՛, Յիսուս իր գինիով, այլ խօսքով՝ իր արիւնով կենդանացնելէ ետք մեղքով մեռածներս, իր ձէթով, այսինքն՝ իր որդեգրութեան շնորհքով մեզ որդեգրեց եւ իր շնորհներով մեզ զարդարեց:

գ.- Ուրիշ հեղինակ մը կը բացատրէ թէ «ձէթը» կը պատկերացնէ Աստուծոյ ձրի շնորհքը, իսկ «գինին»՝ Յիսուսի արիւնը եւ արիւնով իրագործուած փրկութիւնը: Այս իմաստով, երբ կ'ըսուի թէ Յիսուս վիրաւորին վերքին վրայ ձէթ դրաւ, ըսել կ'ուզուի՝ «Աստուած շնորհք ըրաւ վիրաւորին», իսկ երբ կ'ըսուի՝ գինի դրաւ անոր վերքին վրայ, ըսել կ'ուզուի՝ «Աստուած փրկեց զայն իր արիւնով»: Պարզ բառերով, ձէթ դնել, կը նշանակէ՝ շնորհք ընել, իսկ գինի դնել, կը նշանակէ՝ փրկել: Արդարեւ, Աստուած «շնորհք ըրաւ՝ մեզ փրկելով» (Եփ 2.5):

դ.- Տ-րդ դարու մեկնիչ եւ աստուածաբան Ստեփանոս Սիւնեցի կը բացատրէ որ «ձէթը կը խորհրդանշէ Աստուծոյ ողորմութիւնը, իսկ գինին՝ այն ուրախութիւնը, զոր Քրիստոս շնորհեց գետին ինկած մարդուն՝ զանիկա փրկելէ ետք»: Ստեփանոս Սիւնեցի շեշտը կը դնէ երկու բառերու վրայ՝ «ողորմութիւն» եւ «ուրախութիւն»: Արդարեւ, այս երկուքը իրարմէ չեն բաժնուիր, որովհետեւ, մէկը որ Աստուծոյ

նորմութեամբ գտած է իր փրկութիւնը՝ անպայման որ կ'ունենայ սրտի ու հոգիի ուրախութիւն եւ խաղաղութիւն:

Ե.– Յիշեմք որ ո՛չ միայն մեր հայրերը գինին նկատած են խորհրդանիշ Քրիստոսի արիւնին, այլ նաեւ Քրիստոս ինք: Վերջին Ընթրիքի պահուն Քրիստոս առաւ գինիի բաժակը, «գոհութիւն յայտնեց Աստուծոյ եւ տուաւ իր աշակերտներուն, ըսելով.– Բոլորդ խմեցէ՛ք ասկէ. ասկա իմ արիւնս է, որով Աստուծոյ հետ նոր ուխտ կը կնքուի եւ որ շատերու համար կը թափուի՝ իրենց մեղքերու թողութեան համար» (Մտ 26.27–28: Մր 14.23–24: Ղկ 22.16–17):

Քրիստոսի արիւնէն գատ ուրիշ ո՛չ մէկ բան կրնայ սրբել մեր մեղքերը (Յյտ 1.5: Ա.Յհ 1.7: Ա.Պտ 1.19): Ա՛յդ է որ կը ստրվեցնէ Բարի Սամարացիին առակը: Պօղոս առաքեալ կը հաստատէ որ «ամէն ինչ արիւնով կը սրբուի. մեղքերու թողութիւնն ալ առանց արեան հեղումի չ'ըլլար» (Եբր 9.22): Նո՛յնը Հին Կտակարանին մէջ ալ կը կարդանք. «Հոգիին համար փառութիւն ընողը արիւնն է» (Ղւ 17.11): Այդ արիւնը պարզ մէկու մը արիւնը չէ: Այդ արիւնը մեր Աստուծոյն արիւնն է: Սհաւոր բան է մե՛ղքը, որուն ջնջման համար Աստուած «ստիպուեցաւ» իր արիւնը թափելու: Եթէ երբեք «մեղքին վարձատրութիւնը մահ է» (Հո 6.23), ուրեմն, մի՛այն անմահն Աստուած կրնայ մեզ ազատել մահէն:

5.– «Ապա դրաւ իր գրաստին վրայ»: Ի՞նչ է գրաստը: Գրաստը այն կենդանին է (ձի, էջ, եգ) որուն վրայ մարդիկ կը հեծնեն, բայց մանաւանդ, այն կենդանին է՝ որուն վրայ բեռ կը դրուի: Համաձայն Սուրբ Օգոստինոսի, այստեղ յիշուած գրաստը կը ներկայացնէ Քրիստոսի մարմինը: Ինչո՞ւ Քրիստոս իր մարմինը գրաստ կը կոչէ: Քրիստոս իր մարմինը գրաստ կը կոչէ, ցոյց տալու համար մեզի որ ինքն էր որ պիտի կրէր բեռն ու ծանրութիւնը մեր մեղքերուն, հոգիի թեթեւութիւն բերելու համար մեզի:

Ստեփանոս Սիւնեցի եւս կը հաստատէ որ «գրաստը նոյնինքն Քրիստոսի մարմինն է, որուն վրայ դրուեցաւ աշխարհի մեղքը»: Նո՛յնը Պօղոս առաքեալ կը հաստատէ. «Իր մարմինին անկրկնելի գոհագործումովը մեմք սրբուեցանք մեր մեղքերէն» (Եբր 10.10): Այլուր, առաքեալը կ'ըսէ. «Ան է մեր հաշտարարը, որ հրեայ ու հեթանոս միացուց՝ իր մարմինին գոհագործումովը փանդելով զանոնք բաժնող թշնամութեան պատը» (Եփ 2.14): Պետրոս առաքեալ նաեւ խօսելով Քրիստոսի մահուան եւ մեր արդարութեան մասին, կ'ըսէ. «Մեր մեղքերը ի՛նք կրեց, իր մարմինով՝ խաչին վրայ, որպէսզի մեղքի տիրապետութենէն ազատած՝ արդարութեան համար ապրինք» (Ա.Պտ 2.24): Քրիստոս իր մարմինով սրբեց մարմնաւորներուս մեղքերը:

Մեղքը սրբելու գործողութիւնը սկսաւ Քրիստոսի մարմնացումով ու մարդեղացումով, եւ ամբողջացաւ ու կատարելագործուեցաւ խաչին վրայ՝ Քրիստոսի արեան հեղումով եւ անոր փառաւոր յարութեամբ:

6.- «Ապա դրաւ իր գրաստին վրայ»: Այս բառերուն մէջ կարելի է ուրիշ հետաքրքրական իմաստ մըն ալ տեսնել: Մարդը պէտք ունէր բանի մը վրայ դրուելու, որովհետեւ ան գետին տապալեցուած՝ կիսամահ վիճակի մէջ կը գտնուէր, եւ բոլորովին անկարող էր փախելու կամ նոյնիսկ շարժելու: Հետեւաբար, գրաստին վրայ դնելը կը պատկերացնէ մարդուն բացարձակ անկարողութիւնը իր սեփական ուժով փախելու:

Յիշեցէ՛ք կորսուած ոչխարին առակը: Հո՛ն եւս, կորսուած ոչխարը գտնելն ու ուսին վրայ դնելը նոյն իմաստը ունի: Մեղաւոր մարդը անձնապէս փախել չի կրնար: Ան պէտք ունի Քրիստոսի կողմէ բարձրացուելու ուսի վրայ: Դարձեալ, մարդուն ամբողջական անատակութիւնն է որ կը պատկերացուի: Առանց Քրիստոսի մարդը չի կրնար պողպէտ կեանք մը ապրիլ (Յե 15.4): Ան պէտք ունի Քրիստոսի կողմէ շակուելու եւ Քրիստոսի կողմէ ու Քրիստոսի վրայ պատուաստուելու:

7.- «Եւ տարաւ պանդոկ մը ու գայն խնամեց»: Մեկնիչներ, ինչպէս Ստեփանոս Սիւնեցի, Սուրբ Որոգիւնէս, եւ ուրիշներ, կը հաստատեն որ պանդոկը Աստուծոյ եկեղեցին է: Իգնատիոս Վարդապետ նաեւ նոյն բանը կը հաստատէ ըսելով. «Քրիստոս շինեց եկեղեցին եւ անոր մէջ կարգեց առաքեալներ եւ մարգարէներ, հովիւներ եւ վարդապետներ: Քրիստոս եկեղեցի կը հաւաքէ մեղքի պատճառով ինկած եւ վիրաւոր մարդիկը»:

Արդ, հարց կու տանք թէ ինչո՞ւ Քրիստոս եկեղեցւոյ համար կը գործածէ «պանդոկ» բացատրութիւնը: Քանի մը պատճառներով.-

ա.- Մենք գիտենք որ երբ անձ մը պանդոկ կ'իջնէ, կը նշանակէ թէ տուեալ երկրին մէջ սեփական տուն չունի, այլ խօսքով՝ պանդուխտ մըն է: Քրիստոս իր եկեղեցին կը նմանցնէ պանդոկի, ցոյց տալու համար մեզի, թէ իր եկեղեցին, այլ խօսքով՝ իր հաւատացեալները այս աշխարհի մէջ պանդուխտի նման են, եւ մնայուն կայք չունին այստեղ:

բ.- Քրիստոս եկեղեցին կը նմանցնէ պանդոկի, յիշեցնելու համար, թէ ինչպէս պանդոկը այն տեղն է ուր յոգնած մարդը կ'երթայ հանգիստ ընելու, այնպէս ալ եկեղեցին ինք, պէտք է դառնայ այն վայրը ուր կեանքի փորձութիւններէն ու մեղքէն յոգնած մարդը կարենայ երթալ եւ հանգիստ գտնել:

գ.- Պանդոկը այն տեղն է ուր կերակուր հայթայթելու կարելիութիւնը կայ: Եկեղեցին՝ միշդ պանդոկի նման, պէտք է կարողութիւնը ունենայ հոգեւոր կերակուր ջամբելու իր հաւատացեալներուն:

դ.– Մենք գիտենք որ պանդոկին մէջ միշտ արթուն անձեր կ'ըլլան, որպէսզի եթէ ոեւէ մէկը՝ ոեւէ ժամու բանի մը կարիքը ունենայ, կարենայ ինդրել անոնցմէ: Այս իմաստով, Քրիստոս եկեղեցին կը նմանցնէ պանդոկի, սորվեցնելու համար մեզի, թէ եկեղեցին պէտք է միշտ արթուն եւ պատրաստ ըլլայ, որպէսզի կարենայ օգտակար դառնալ ոեւէ հաւատացեալի որ բանի մը կարիքը ունի:

8.– Վիրաւորը պանդոկ տանելու գործողութիւնը ցոյց կու տայ, որ Քրիստոս կ'ուզէ որ հաւատացեալը անպայման եկեղեցի մը յանձնէ: Քրիստոսի հետեւորդները հեռու պէտք չէ մնան եկեղեցիէն: Մենք Քրիստոսի մարմինին անդամներն ենք, իսկ Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին ի՛նքն է (Ա.Կր 12.27: Եփ 4.25: Հո 12.5): Ինչպէս ծառէն բաժնուած ճիւղը կը չորնայ, այնպէս ալ Քրիստոսի մարմինէն՝ եկեղեցիէն բաժնուած անդամը դատապարտուած է հոգեպէս մեռնելու:

9.– «Եւ տարաւ պանդոկ մը»: Թէպէտ առակը կը պարզէ որ Քրիստոս ի՛նքն է վիրաւոր մարդը եկեղեցի տանողը, բայց հարկաւ մարդիկը եկեղեցի առաջնորդելը միայն Քրիստոսի պարտականութիւնը չէ, այլ պարտականութիւնն է ամէն մէկ հաւատացեալի, ինչպէս նաեւ ու մանաւանդ, պարտականութիւնն է կղերական դասուն: Քրիստոս անկեալը պանդոկ (եկեղեցի) տանելու իր այս վերաբերմունքով, պարտականութիւն յանձնած կ'ըլլայ եկեղեցւոյ հոգեւորական դասուն՝ մարդիկը եկեղեցի բերելու: Մարդիկը եկեղեցի բերելը հոգեւոր հովիւին ազատ կամքին թողուած հարց մը չէ, այլ անոր կոչումն ու պարտաւորութիւնն է:

Այս նշմարտութիւնը կարելի է տեսնել առաջին երկու աշակերտներուն կոչումին մէջ: Մտ 4.18-ին մէջ կը կարդանք. «Մինչ Յիսուս Գալիլեայի լիճին եզերքը կը շրջէր, տեսաւ երկու եղբայրներ, որոնք ձկնորս էին. Սիմոնը՝ որ Պետրոս կը կոչուէր եւ անոր եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար»: Զարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեան խօսելով «ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար» տողին մասին կ'ըսէ. «Քրիստոս ասով կը պատկերացնէ հետագայ եկեղեցիին գործունէութեան գլխաւոր առաջին ուղղութիւնը կամ երեսը: Առաջին երեսը փարոզութեան երեսն է: Եկեղեցին Աստուծոյ արքայութեան պատգամը մնայուն կերպով պէտք է ուղղէ մարդոց եւ զանոնք հրաւիրէ որ Աստուծոյ արքայութեան մաս կազմեն: Արդ, եկեղեցին որ արքայութեան նախապատկերացումն է, նախադուռն է, մնայուն կերպով կը հրաւիրէ մարդիկը որպէսզի գան եւ արքայութեան ժառանգորդ դառնան: Այդ գործունէութիւնը ուռկանը ծով ձգած ըլլալու վիճակով կ'արտայայտուի: Եկեղեցին իր

ֆարոգութեան ուռկանը մնայուն կերպով պէտք է ձգած ըլլայ աշխարհի ծովուն մէջ, որպէսզի անհաւատ եւ հեթանոս աշխարհէն միշտ ալ մարդիկը կանչէ կամ որսայ Աստուծոյ արֆայութեան համար»:

10.- «Եւ տարաւ պանդոկ մը»: Անհրաժեշտ է բացատրութիւն մը եւս ներկայացնել որ ընդհանրապէս մեր ուշադրութենէն կը վրիպի: Որքան ալ ընդունինք որ եկեղեցականներուն պարտականութիւնն ու պարտաւորութիւնն է մարդիկը եկեղեցի բերելը, բայց խորհին մէջ, անուրանալի է որ Քրիստոս ի՛նքն է եկեղեցւոյ անդամներուն թիւը անելցնողը, ի՛նքն է մարդիկը եկեղեցի առաջնորդողը: Քրիստոս այս մէկը յստակ դարձուց երբ ըսաւ. «Միայն ինձմով կարելի է Հօրս երթալ» (Յե 14.6): Իսկ Ղուկաս կ'ըսէ. «Տէրը օրէ օր եկեղեցիին մէջ փրկուածներուն թիւը կ'անելցնէր» (Գրծ 2.47): Ուշագրաւ է որ Ղուկաս չ'ըսեր թէ Տէրը եկեղեցւոյ անդամներո՛ւն թիւն էր որ կ'անելցնէր, այլ՝ «եկեղեցիին մէջ փրկուածներուն թիւը կ'անելցնէր»:

Եկեղեցիին թիւը անեցնելն ու եկեղեցիին մէջ փրկուածներուն թիւը անեցնելը նոյն բաները չեն, բայց երկուքն ալ Քրիստոս ի՛նքն է որ կը կատարէ: Քրիստոս շատ լաւ գիտէ որ եկեղեցի եկողներէն ոմանք կորուստի ցամբուն մէջ են եւ ոմանք ալ՝ փրկութեան ցամբուն մէջ: Ահա թէ ինչո՛ւ խօսած ատեն ցորենի եւ որոմի առակին մասին՝ կ'ըսէ. «Զգեցէք որ երկուքն ալ միասին անին մինչեւ հունձի ժամանակ» (Մտ 13.30): Եկեղեցիին մէջ ներկայ են թէ՛ ցորենանման հաւատացեալը եւ թէ՛ որոմանման «հաւատացեալը»: Անոնք կողք կողքի են եւ կողքի կողքի պիտի մնան մինչեւ ժամանակներու աւարտը, երբ Տէրը պիտի գայ եւ իր հրեշտակներուն պիտի պատուիրէ որ գանոնք իրարմէ բաժնեն (Մտ 13.29-30): Այո՛, Քրիստոս շատ լաւ գիտէ որ ամէն եկեղեցի եկող մը՝ Աստուծոյ եկող մը չէ: Ճիշդ անոր համար ալ, Քրիստոս տուեալ առակով սորվեցուց մեզի, վիրաւոր մարդիկը պանդոկ (եկեղեցի) տանելէ առաջ, նախ գանոնք առաջնորդել իր գրաստին, այսինքն՝ իր մարմինին գոհագործումով իրագործուած փրկութեան, որմէ ետք է որ հաւատացեալ մարդը կը դառնայ հարագատ անդամը Քրիստոսի եկեղեցիին՝ որ Քրիստոսի մարմինն է:

Սխալ չհասկնանք իրար: Երբ կ'ըսեմ թէ մարդիկը եկեղեցի առաջնորդելէ առաջ՝ նախ Քրիստոսի՛ պէտք է առաջնորդել, ըսել չեմ ուզեր թէ մարդիկը եկեղեցիէն հեռու պէտք է պահենք մինչեւ որ Քրիստոսը ընդունին իրենց սրտին մէջ. նման բան կարելի չէ, որովհետեւ եկեղեցին ի՛նքն է որ կ'օգնէ մարդոց Քրիստոսը ցանչնալու եւ ընդունելու: Ըսել ուզածս այն է, որ եկեղեցի յաճախող մարդիկը, եկեղեցւոյ հարագատ

անդամ նկատելու համար, եւ եկեղեցւոյ հարագատ անդամ ըլլալու համար, նախ անոնք պէտք է Յիսուսի՛ն բերուին, Յիսուսը ընդունին:

11.- «Եւ տարաւ պանդոկ մը»: Վերջին խօսք մը եւս այս մասին: Եթէ երբեք նկատի առնենք որ պանդոկ (եկեղեցի) տարուող մարդը վիրաւոր մարդն է, մեղաւոր մարդն է, հոգատարութեան եւ խնամքի կարօտ եղող մարդն է, այդ պարագային պէտք է դադրինք եկեղեցի յանախող հաւատացեալներէն եւ միաժամանակ եկեղեցականներէն պահանջել կատարելութիւն եւ անմեղութիւն:

Քրիստոսի եկեղեցին մեղաւոր մարդոց ամբողջութիւնն է եւ ո՛չ թէ կատարեալ մարդոց ամբողջութիւնը: Մարդը իր նմանէն Աստուած ըլլալ թող չակնկալէ: Արարածներ Արարիչէն աւելի խիստ եւ խստապահանջ թող չըլլան իրարու նկատմամբ: Ամէն մարդ սխալական է: Ամէն անհատ ենթակայ է մեղք գործելու: Անձեռնմխելի եւ անհպելի մարդ չկա՛յ: Սա նշմարտութիւնը մեր մտքին մէջ ունենալը կ'օգնէ մեզի սանձելու քննադատութեան եւ բամբասանքի գործիք հանդիսացող մեր լեզուն: Քննադատող լեզուն կործանիչ լեզու է: Բամբասող լեզուի տէր մարդիկ գործակալներն են Սատանային:

Մե՛ծ դժբախտութիւն է Աստուծոյ գործակիցները ըլլալու կոչուած մարդիկ դառնան գործակիցները Սատանային եւ անոր չար ու պիղծ ոգիներուն: Ահաւոր ողբերգութիւն է տապալածը վերականգնելու կոչումը ստացած անհատներ դառնան կանգնածը տապալող անհատներ: Այսպիսի անձեր թող գիտնան որ Աստուծոյ Որդիին սուրբ արիւնին դէմ է որ կը պայքարին: Այսպիսիներ, մեր երկնաւոր Հօր սիրտը խոցոտողներ են, զՔրիստոս անգամ մը եւս խաչ բարձրացնողներ են, Սուրբ Հոգիին հայհոյողներ են:

12.- «Ու գայն խնամեց»: Քիչ մը վերեւ բացատրուեցաւ որ վիրաւոր մարդը պանդոկ տանիլը՝ նոյնիման եկեղեցի տանիլն է, կամ գանհկա եկեղեցիին յանձնելն է: Քրիստոս չբաւարարուեցաւ վիրաւոր մարդը եկեղեցի տանելով, այլեւ՝ եկեղեցի տանելէ ետք, «գայն խնամեց»: Հետաքրքրական է ուշադրութիւն դարձնել, որ Քրիստոս խնամեց վիրաւորը նախքան գանհկա եկեղեցի տանիլը, անոր վերբերուն վրայ ձէք եւ գինի դնելով, եւ եկեղեցի տանելէ ետք ալ շարունակեց գանհկա խնամել: Այս իմաստով, Քրիստոս խնամեց վիրաւորը գանհկա եկեղեցի տանելէ առաջ եւ եկեղեցի տանելէ ետք: Ի՞նչ կը պարզէ այս իրողութիւնը: Կը պարզէ երկու բան.–

ա.– Կը պարզէ որ Քրիստոս ի՛նքն է եկեղեցւոյ թիւր անեցնողը, ինչպէս վերեւ համառօտակի կերպով բացատրեցինք:

բ.-- Կը պարզէ նաեւ որ Քրիստոս մարդիկը եկեղեցի առաջնորդելէ ետք՝ յատուկ խնամք կը տանի անոնց:

Երբ կ'ըսեմ որ Քրիստոս «յատուկ խնամք կը տանի» եկեղեցի բերուածներուն, կը հասկնամ, որ կ'օգնէ անոնց անելու իրենց հաւատփին մէջ: Այս ուղիւն ինչպէս անառարկելի կը դառնայ եթէ երբեք նկատի առնենք, որ «գայն խնամեց» բառերը վիրաւոր մարդուն համար գործածուած են անոր եկեղեցի (պանդոկ) տարուելէն ետք: Նոր Կտակարանը նաեւ կը հաստատէ թէ «մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու կապերով Գլուխին կապուած ու միացած, անկէ՛ կ'առնէ իր անու՛մը, Աստուծոյ կամփին համաձայն» (Կղ 2.19): Իսկ Եփեսացիներուն նամակին մէջ կը կարդանք թէ Քրիստոս «ի՛նքն է գլուխը, որ մարմինը իր բոլոր մասերով ներդաշնակ միասնութեամբ մը իրարու կը կապէ, բոլոր յօդերու օգնութեամբ: Եւ երբ իւրաքանչիւր մաս պէտք եղածին պէս կը գործէ՝ մարմինը կ'անի եւ կը գործանայ սիրոյ մէջ» (Եփ 4.15-16): Քրիստոս ի՛նքն է որ կ'անեցնէ իր մարմինը՝ եկեղեցին եւ ի՛նքն է որ կ'առաջնորդէ գայն:

Սիրելի՛ ընթերցող, հոգածու վերաբերմունք պէտք է ունենալ եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամի նկատմամբ: Քրիստոսի եկեղեցիին անդամներս գթառատ պէտք է ըլլանք իրարու հանդէպ: Եկեղեցւոյ կեանքին մէջ անհատական անու՛մ կրնայ ըլլայ, բայց երբ այդ անհատը միանայ ամբողջ եկեղեցիին՝ Քրիստոսի մարմինին, անու՛մը շատ աւելի արագ եւ արմատական կ'ըլլայ: Երբ իրարու անու՛մին համար աղօթենք, աւելի՛ շուտ կ'անիմք քան երբ միայն մեր անձերուն համար աղօթենք:

«Յաջորդ օր, երբ պանդոկէն պիտի մեկնէր, պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ.-- "Խնամէ՛ գայն, եւ ինչ ծախս որ ընես իրեն համար՝ յաջորդ գալուս կը վճարեմ"»: (Ղկ 10.35): Քանի մը մատնանշումներ.--

1.-- «Յաջորդ օր, երբ պանդոկէն պիտի մեկնէր...»: Ամէն բանէ առաջ պէտք է նկատի առնել որ Քրիստոս նախ իր բաժինը ըրաւ եւ յետոյ միայն պանդոկէն (եկեղեցիէն) «հեռանալու մասին մտածեց»: Ան փաթեց վիրաւորին վերքերը, ներում շնորհեց անոր, դարձուց անդամ եկեղեցիին՝ իր մարմինին, եւ պատուիրելէ ետք պանդոկապետին որ հոգ տանի անոր՝ «մեկնեցաւ» պանդոկէն: Արդարեւ, Քրիստոս փրկագործութիւնը կիսատ չթողուց, այլ գանիկա անձնապէս ամբողջացուց եւ եկեղեցիին պարտականութիւն տուաւ տարածելու իր փրկութեան աւետիսը աշխարհի մէջ: Հետեւաբար, եկեղեցին փրկութիւնը իրագործող մը չէ, այլ իրագործուած փրկութիւնը տարածող մը:

2.- «Երբ պանդոկէն պիտի մեկնէր»: Ի՞նչպէս պէտք է հասկնալ Քրիստոսի մեկնիլը պանդոկէն (եկեղեցիէն): Բնականօրէն բառացիօրէն կարելի չէ հասկնալ: Եփ 5.23-ին մէջ կը կարդանք. «Քրիստոս գլուխն է եկեղեցիին, իր մարմինին, որուն Փրկիչն է ինք»: Քրիստոս իբրեւ եկեղեցիին գլուխը, չի՛ հեռանար եկեղեցիէն եւ չի՛ լքեր զանիկա: Ինչպէս մարմինը առանց գլուխին առաջնորդութեան ո՛չ իսկ երկվայրկեան մը կրնայ գոյատեւել, այնպէս ալ եկեղեցին առանց իր Գլուխին՝ Քրիստոսի, չի՛ կրնար իր կենսունակութիւնը պահել: Եկեղեցին չ՛անիր եւ չի՛ զօրանար առանց Քրիստոսի: Եկեղեցին դիակ կը դառնայ առանց Քրիստոսի եւ Սուրբ Հոգիին ներգործութեան:

Քրիստոսի հեռանալը եկեղեցիէն ֆիզիքական հասկացողութիւն ունի: Ուրեմն, «յաջորդ օր պանդոկէն մեկնիլ» բացատրութիւնը, ուրիշ բանի չ՛ակնարկեր եթէ ոչ Քրիստոսի ֆիզիքական հեռացումին իր եկեղեցիէն: «Առաքեալները իրենց աչքերը երկինք յառած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին» (Գրծ 1.10): Այս համարը շատ պարզ կերպով ցոյց կու տայ որ Քրիստոսի մեկնումը առաջին եկեղեցիէն՝ առաքելոց խումբէն (պանդոկէն), զուտ ֆիզիքական հասկացողութիւն ունի: Ան հոգիով չէր կրնար հեռանալ իր առաքեալներէն, այլապէս հակասած պիտի ըլլար իր խոստումին. «Ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մտ 28.20):

3.- «Պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուաւ»: Համաձայն Սուրբ Օգոստինոսի «երկու արծաթ դահեկանները» կը ներկայացնեն մեծագոյն երկու պատուիրանները՝ սիրել զԱստուած եւ սիրել մեր ընկերը (Մր 12.29-31):

Իսկ Ստեփանոս Սիւնեցի կ'ըսէ. «Պանդոկապետը առաքեալներն ու անոնց նմանողներն են, այսինքն՝ եկեղեցւոյ վարդապետները: Իսկ "երկու արծաթ դահեկան" բացատրութիւնը ակնարկութիւն է Հին եւ Նոր Կտակարաններուն»:

Հակասական բան չկայ Ստեփանոս Սիւնեցիի եւ Սուրբ Օգոստինոսի տուած մեկնութեանց միջեւ, որովհետեւ Հին եւ Նոր Կտակարանները կը խտացուին յիշեալ մեծագոյն երկու պատուիրաններուն մէջ:

4.- Եթէ պանդոկը եկեղեցին է, պանդոկապետը բնականօրէն առաքեալներն ու անոնց յաջորդներն են՝ հոգեւոր հովիւները իրենք: Ինչո՞ւ եկեղեցին, այս պարագայիս՝ հոգեւոր հովիւները, պանդոկապետ կոչուած են: Եկեղեցւոյ հովիւներուն համար կը գործածուի «պանդոկապետ» բացատրութիւնը, ցոյց տալու համար. –

ա.– Թէ՛ ինչպէս պանդոկի պատասխանատուներ մինչեւ առաւօտ արթուն կը մնան, հսկելու համար պանդոկի մէջ եղողներուն ապահո–

վութեան, այնպէս ալ եկեղեցւոյ հովիւներ, պարտին աղօթել եւ անժուն հսկել հաւատացեալներուն հոգիի փրկութեան եւ ապահովութեան համար:

բ.- Եկեղեցւոյ հովիւներուն համար կը գործածուի «պանդոկապետ» բացատրութիւնը, յիշեցնելու համար նաեւ, թէ ինչպէս պանդոկապետը՝ պե՛տն է պանդոկին, տէ՛րն է պանդոկին, պատասխանատո՛ւն է պանդոկին, այնպէս ալ հոգեւոր հովիւներ, պէտք է տէ՛ր կենան եկեղեցիին, ժողովուրդին: Իսկ տէր կենալ, չի նշանակեր տիրութիւն ընել, բռնութիւն բանեցնել, այլ կը նշանակէ պաշտպան կենալ անոնց, եւ հսկել անոնց հոգեւոր անման:

5.- «Պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ.- "Խնամէ՛ գայն»: Եթէ պանդոկապետը առաքեալներն են, եկեղեցւոյ վարդապետներն ու հովիւներն են, եւ եթէ երկու արծաթ դահեկանները Հին եւ Նոր Կտակարաններն են, ատիկա կը նշանակէ, որ Յիսուս երկու արծաթ դահեկանները եկեղեցիին յանձնելով, խորքին մէջ պարտականութիւն յանձնած կ'ըլլայ եկեղեցւոյ հովիւներուն, այլ խօսքով՝ հոգեւորական դասուն, Աստուծոյ խօսքով՝ Հին եւ Նոր կտակարաններու ուսուցումով, կրթելու, դաստիարակելու, յորդորելու, մաքրելու եւ զօրացնելու հաւատացեալներու խումբը:

Այսօր հաւատքի պակաս կը գտնենք եկեղեցի յանախողներուն կեանքին մէջ, եւ պատճառներէն մին այն է՝ որ քարոզիչներ դադրած են Աստուծոյ խօսքը՝ Աստուածաշունչը քարոզելէ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Հաւատքը ծնունդ կ'առնէ քարոզութիւնը լսելէն, իսկ քարոզութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը քարոզուին» (Հռ 10.17): Շատ կարեւոր է որ Քրիստոսի խորանէն մի՛այն Քրիստոսի խօսքերը քարոզուին: Երբ մարդկային հաշիւներէ եւ նկատառումներէ մեկնած քարոզենք, ատիկա մե՛ր խօսքը կ'ըլլայ եւ ո՛չ թէ Աստուծոյ խօսքը: Նման քարոզ ունէ՛ծելու հաւատք չ'արթնցնէր ունկնդիրներուն սրտին մէջ: Հաւատքի Հիմնադիրին խօսքերը միայն կրնան հաւատք արթնցնել լսողներուն հոգիին մէջ: Իսկ հաւատքի հիմնադիրը Քրիստոս ի՛նքն է (Եբր 12.2):

Այլուր, առաքեալը կը հաստատէ. «Երբ լսեցիք նշմարիտ քարոզութիւնը, այսինքն Աւետարանը որ ձեզի փրկութիւն բերաւ, հաւատացիք Քրիստոսի եւ խոստացուած Սուրբ Հոգիով կնքուեցաք» (Եփ 1.13): Վերոյիշեալ համարին նման այս համարը նաեւ, կը պարզէ որ հաւատքը արդիւնքն է նշմարիտ Աւետարանի քարոզութեան: Աւետարանը (Աստուծոյ խօսքը) «գրուած» իրականութիւն մը չէ միայն, այլ նաեւ ու մանաւանդ «Ապրող» իրականութիւնն է: Ան կ'ապրի Քրիստոսի

անձին մէջ եւ կ'ապրեցնէ եւ կը փրկէ ոեւէ մէկը որ Քրիստոսի կու գայ: Յակոբոս առաքեալ կը յիշէ որ Աստուծոյ խօսքը մեր հոգիները կրնայ փրկել (Յկ 1.21):

Քրիստոսն է Աստուծոյ ԲԱՆԸ՝ կենդանի խօսքը, որ սկիզբէն Աստուծոյ հետ էր եւ Աստուած էր (Յհ 1.1): Յարմար ատենին «Բանը մարմին եղաւ» (Յհ 1.14): Քրիստոսի անձը եւ Աստուծոյ խօսքը իրարմէ տարբեր բաներ չեն: Քրիստոս Աստուծոյ կենդանարար եւ փրկարար խօսքին մարմնացումն է: Հետեւաբար, Հին եւ Նոր Կտակարաններուն ուսուցումներով կրթել ու դաստիարակել հաւատացեալը, ուրիշ բան չի նշանակեր, եթէ ոչ օգնել անոր ընդունելու գՔրիստոս իր սրտին մէջ, եւ զօրանալու ու սրբուելու Քրիստոսով:

6.- «Պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ.- "Խնամէ՛ գայն»: Այս վերջին բառերը՝ «Տուաւ եւ ըսաւ.- "Խնամէ՛ գայն» Հին եւ Նոր Կտակարանները սերտելու պարտաւորութեան տակ կը դնէ եկեղեցւոյ հովիւը կամ ընդհանրապէս քարոզիչը: Հոգեւորական դասը, մանաւանդ եկեղեցւոյ հոգեւոր հովիւները իրե՛նք, պարտաւոր են լաւապէս ուսումնասիրելու Աստուածաշունչը իր ամբողջութեամբ: Եթէ երբեք հասարակ մարդ մը անուս եւ անգէտ ըլլայ, գուցէ կրնայ արդարանալ Աստուծոյ առջեւ՝ Աստուծոյ ողորմութեամբ, բայց ուրիշներուն ուսուցանելու կոչում ստացած ոեւէ մարդ ոեւէ ձեռով չի՛ կրնար արդարանալ իր տգիտութեան համար: Հասարակ մարդը կրնայ ըսել «չէի գիտեր», բայց հոգեւորական դասը չի կրնար ըսել «չէի գիտեր»:

Եթէ երբեք Աստուծոյ եւ Աստուածաշունչին գիտութեամբ չենք սպառագինուած, ի՞նչպէս պիտի կարենանք խորտակել «Աստուծոյ գիտութեան դէմ բարձրացած առարկութեանց բոլոր հպարտ պատնէշները եւ բոլոր միտքերը գերելով՝ Քրիստոսի հնազանդութեան» բերել (Բ.Կր 10.5): Ի՞նչպէս կարելի է զինել հաւատացեալը Աստուծոյ խօսքով երբ մենք չենք զինուած անով: Ի՞նչպէս կարելի է յայտարարել, որ «Աստուծոյ խօսքը քաղցր ու քաղցրացուցիչ է» երբ մենք անձամբ չենք ըմբռնուած Աստուծոյ խօսքին քաղցրութիւնը:

Առակին սկիզբը տեսանք որ երբ Օրէնքի ուսուցիչ մը հարցուց Յիսուսի թէ ի՛նչ պէտք էր ընէր որպէսզի ժառանգէր յաւիտենական կեանքը, Յիսուս պաստասխանեց անոր ըսելով. «Օրէնքի գիրքին մէջ գրուածը ի՞նչ է. ի՞նչպէս կը հասկնաս» (Ղկ 10.26): Ինչո՞ւ Յիսուս փոխանակ իրեն ուղղուած հարցումին ուղղակի պատասխան տալու, փորձեց Օրէնքի ուսուցիչին հայեացքը ուղղել եւ կեդրոնացնել Աստուծոյ Օրէնքին վրայ: Այդպէս ըրաւ.-

ա.- Սորվեցնելու համար մեզի որ առաջնահերթ տեղը պետք է Աստուծոյ խօսքին տրուի եւ ո՛չ թէ մեր խօսքերուն, մեր անձնական կարծիքներուն եւ համոզումներուն: Որքա՛ն յաճախ մեզի ուղղուած հոգեւոր բնոյթ ունեցող հարցումներուն կու տանք մեր անձնական կարծիքներն ու համոզումները, փոխանակ մեր ուշադրութիւնը կեդրոնացնելու Աստուածաշունչին վրայ՝ տեսնելու համար թէ Աստուածաշունչը ի՛նք ինչ կ'ըսէ: Երբեմն ալ աւելի գէշը կ'ընենք: Աստուածաշունչէն կ'առնենք համար մը կամ հատուած մը եւ անոր կապակցութեամբ կու տանք մեր անձնական կարծիքն ու մեկնութիւնը, մեզի միշտ թուացող բացատրութիւնը:

բ.- Յիսուս երբ Օրէնքի ուսուցիչին հայեացքը կ'ուղղէ Սուրբ Գիրքին, ատով իսկ ցոյց տուած կ'ըլլայ մեզի թէ ինք կ'ակնկալէ որ Աստուածաշունչի բարոգիչները լաւ գիտնան Աստուածաշունչը:

գ.- Տակաւին, Յիսուս Օրէնքի ուսուցիչին հայեացքը կ'ուղղէ Սուրբ Գիրքին, ցոյց տալու որ իր ուսուցումները ռեւէ ձեւով չեն հակասեր Հին Կտակարանի ուսուցումներուն, այլ ընդհակառակը, կ'ամբողջացնեն զանոնք:

դ.- Օրէնքի ուսուցիչը հարցում մը հարցուց, եւ Յիսուս ուզեց որ ան իր հարցումին պատասխանը գտնէր Սուրբ Գիրքին մէջ: Իր այս վերաբերմունքով, Յիսուս սորվեցուց մեզի, թէ Աստուածաշունչը ունի պատասխանները մեր բոլոր հարցումներուն, կը բաւէ որ սերտեմք զայն եւ գտնենք այդ պատասխանները:

7.- «Եւ ըսաւ.- "Խնամէ՛ զայն...»: Երբ խօսեցանք «պանդոկ տարաւ» բառերուն մասին, բացատրեցինք որ հոգեւորական դասուն կոչումն ու պարտաւորութիւնն է բարոգի մամբով մարդիկը պանդոկ, այսինքն՝ եկեղեցի բերել, եւ ըսինք, որ ասիկա «կը պատկերացնէ եկեղեցիին գործունէութեան առաջին գլխաւոր ուղղութիւնը կամ երեսը»: Եկեղեցիին գործունէութեան երկրորդ գլխաւոր երեսը պատկերացուած կը գտնենք «խնամէ՛ զայն» բառերուն մէջ: Չի՛ բաւեր մարդիկը եկեղեցի բերել, այլ զանոնք եկեղեցի բերելէ ետք՝ պետք է հոգ տանիլ անոնց եւ օգնել որ անին իրենց հաւատքին մէջ, իրենց հոգեւոր կեանքին մէջ, Աստուծոյ հետ իրենց մտերմութեան մէջ, Սուրբ Հոգիին հետ իրենց հաղորդակցութեան մէջ:

Ինչպէս նոր պատուաստուած միւս մը յատուկ ուշադրութեան եւ խնամքի կը կարօտի որպէսզի կարենայ ծառէն եկած հարուստ աւիշը ըմպել եւ ծառին հետ մէկ ամբողջութիւն դառնալ, այնպէս ալ Քրիստոսի եկեղեցիին նոր անդամ դարձած մարդը, մասնաւոր հոգեւոր խնամքի կը

կարօտի, որպէսզի կարենայ եկեղեցիէն հոգեւոր սնունդ ստանալ եւ եկեղեցիին Գլուխին՝ Քրիստոսի հարազատ գաւակը դառնալ:

Վերեւ յիշեցինք Ջարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեանին բացատրութիւնը, Պետրոսի եւ Անդրէասի համար ըսուած «ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար» խօսքին վերաբերեալ: Հիմա տեսնենք թէ Սրբազանը ի՞նչ բացատրութիւն կու տայ Յովհաննէսի եւ Յակոբոսի համար ըսուած «իրենց ուռկանները կարգի կը դնէին» բառերուն վերաբերեալ (Մտ 4.21): Արդէն մատնանշուեցաւ որ «եկեղեցին իր քարոզութեան ուռկանը մնայուն կերպով պէտք է ձգած ըլլայ աշխարհի ծովուն մէջ, որպէսզի անհաւատ եւ հեթանոս աշխարհէն միշտ ալ մարդիկը կանչէ կամ որսայ Աստուծոյ արքայութեան համար», բայց, կ'ըսէ Սրբազանը. «Եկեղեցին նաեւ ունի արդէն իսկ իրեն որդեգրուած կամ զինուորագրուած մարդիկը, որոնց վերաբերեալ ան աշխատանք մը ունի կատարելիք: Եկեղեցիին պարտականութիւնը միայն մարդիկ շահիլը չէ, այլեւ՝ զանոնք պահելը: Արդ, այդ պահելու աշխատանքը ի՞նչ բառով կ'արտայայտուի: «Կարկտել» բայը, որ կը նշանակէ՝ կարգի դնել, կարելի է նաեւ թարգմանել երկրորդ ձեւով մը.՝ Կատարելութեան հասցնել, ամբողջացնել: Թէ՛ առաքելները եւ թէ՛ անոնց հետեւորդները, այսինքն՝ եկեղեցւոյ հովիւները, պարտականութիւնը ունին աշխատելու իրենց հօտի անդամներուն կատարելութեան, ինամբ տանելու անոնց, զանոնք միշտ վերանորոգութեան ընթացքի մէջ դնելու, եւ առաջինը հոգեւոր վերանորոգութիւնն է, կամ անոնց ծանօթութեան վերանորոգութիւնն»:

8.- «Եւ ինչ ծախս որ ընես իրեն համար՝ յաջորդ գալուս կը վնարեմ»: «Ծախս ընել» կը նշանակէ՝ զոհողութիւն ընել: Հետեւաբար, այս համարին մէջ գործածուած «ծախս» բառը կը պատկերացնէ այն զոհողութիւնը որ եկեղեցական դասը պարտի յանձն առնել իր հօտին փրկութեան եւ հոգեւոր անման համար: Զոհողութիւնը պարզապէս Սուրբ Պատարագ մատուցանելը, քարոզելն ու Սուրբ Հաղորդութիւն տալը չէ: Այս բոլորը պարտաւորութիւն են եւ ո՛չ թէ զոհողութիւն: Ճշմարիտ զոհողութիւնը անձնագոհութիւն եւ անձնուիրութիւն կ'ենթադրէ: Անձնուէր մարդը իր կեանքն անգամ տալու պատրաստ եղող մարդն է:

Քրիստոս կը յայտարարէ որ «իրաւ հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար» (Յհ 10.11): Քրիստոս ո՛չ միայն իր կեանքը տուաւ, այլեւ ինքզինքն տուաւ իբրեւ կեանք: Դաւիթ մարգարէն նաեւ իր ժողովուրդին համար իր եւ իր գերդաստանին կեանքը տալու պատրաստակամութիւն յայտնեց: Երբ Աստուած ժանտախտով սկսաւ

սպաննել Իսրայելացիները, Դաւիթ զարնող հրեշտակին ըսաւ. «Ահա ե՛ս մեղանչեցի ու ե՛ս անօրէնութիւն ըրի, բայց այս ոչխարները ի՞նչ ըրին. կ'աղաչեմ, քո ձեռքդ իմ վրաս ու իմ հօրս տանը վրայ թող ըլլայ» (Բ.Թգ 24.17): Պէտք է մոռնալ Մովսէսին պարագան: Երբ Աստուած մտադրեց մահուամբ պատժել Իսրայելացիները իրենց շինած ոսկի հորթին համար, Մովսէս թէպէտ խոստովանեցաւ որ անոնք իրենց այդ արարքով մեղանչած էին Աստուծոյ դէմ, բայց եւ այնպէս, պաշտպանեց զիրենք Աստուծոյ ներկայութեան եւ ըսաւ. «Եթէ անոնց մեղքերը պիտի ներես՝ ներէ, եթէ ոչ՝ կ'աղաչեմ, աւրէ՛ զիս քո գրած գիրքէդ» (Ել 32.31-32):

Միտքէ պէտք է հանենք, որ արդէն իսկ եկեղեցւոյ անդամ եղողներուն համար է որ Քրիստոս կը պատուիրէ «ծախս» ընել: Եկեղեցւոյ անդամ եղողներուն համար «ծախս» ընել, կը նշանակէ յատուկ աշխատանք տանիլ եւ ցերեկ ու գիշեր տֆնիլ զիրենք վերածելու համար Քրիստոսի կատարեալ պատկերն ու նմանութիւնը:

Տեղին է յիշել Պօղոս առաքեալին խօսքը. «Իմ ձագուկներս էք դուք, բայց ահա դարձեալ մօր մը պէս երկունքի ցաւ կը քաշեմ ձեզի համար, մինչեւ որ Քրիստոսի հարազատ պատկերը դառնաք» (Գղ 4.19): Առաքեալը այստեղ չի խօսիր Քրիստոսէ եւ եկեղեցիէն հեռու եղող մարդոց մասին, այլ Քրիստոսի եւ եկեղեցիին (հաւատացեալներու բանակին) մօտիկ եղող մարդոց մասին, որոնք սակայն, Քրիստոսի հարազատ պատկերը դարձուելու կարիք ունին: Առաքեալին այստեղ մեզի սորվեցուցածը այն է, որ մեր (եկեղեցականներու) կոչումը մարդիկը եկեղեցի եւ անոր Գլուխին՝ Քրիստոսի բերելը չէ միայն, այլ զանոնք եկեղեցի բերելէ ետք, օգնելն է անոնց որ հասնին հոգեւոր անմահ եւ բիւրեղացման բարձրագոյն աստիճանին:

«Երկունքի ցաւ քաշել» բացատրութիւնը, ակնարկութիւն է այն բոլոր զոհողութեանց, նեղութեանց, հիգեբուն, աշխատանքներուն եւ չարչարանքներուն, որ հոգեւոր հովիւը յանձն պէտք է առնէ ի խնդիր իր նմանին հոգեւոր բիւրեղացումին: Ինչպէս մօր մը կոչումը միայն զաւակ բերելը չէ, այլ անոր քրիստոնէական առողջ կրթութիւն ջամբելն է, այնպէս ալ հոգեւոր հովիւները պէտք է բաւարարուին եկեղեցիէն հեռու եղողները եկեղեցի բերելով միայն, այլ պէտք է ջանան օգնել անոնց Քրիստոսի նկարագիրը առնելու իրենց վրայ:

9.- «Յաջորդ գալուս կը վնարեմ»: Ակնարկութիւնը Քրիստոսի երկրորդ գալուստին է: Աստուածաշունչը լեցուն է Քրիստոսի երկրորդ գալուստին մասին վկայող խօսքերով (Բ.Պտ 3.10-13: Եբր 9.28: Ա.Կր 1.7: Կղ 3.4: Տիտ 2.13: Ա.Պտ 5.1: Ա.Յե 3.2: Հո 8.18: Մտ 24.30: Մր 13.26: Ղկ 21.27 եւ այլն...): Կան մարդիկ որոնք կ'ուրանան Քրիստոսի

երկրորդ գալուստը եւ կը փիլիսոփայեն ըսելով. «Արքայութիւնն ալ հոս է, դժոխքն ալ հոս է»: Մենք համաձայն ենք այս հաստատումին, սակայն այն իմաստով՝ որ մարդուն ձեռքն է ինքնիր կեանքը արքայութեան կամ դժոխքի վերածելը: Մարդը կրնայ հրեշտակի կեանք մը ապրիլ եւ կամ հրէշի: Ան կրնայ օրհնաբեր ներկայութիւն դառնալ իր շրջապատին մէջ եւ կամ կրնայ անիծաբեր ներկայութիւն դառնալ: Բայց այս բոլորը արդարացի պատճառներ չեն ուրանալու Քրիստոսի երկրորդ գալուստը:

Աստուածաշունչը կը խօսի մեղքի, մահուան եւ դժոխքին վրայ տարուելիք ամբողջական յաղթանակի մը մասին (Ա.Կր 15.54-55: Յյտ 20.14), կը խօսի մեռելներու յարութեան մասին (Ա.Կր 15.35-50), կը խօսի վերջին դատաստանին մասին (Մտ 25.31-46: Յյտ 20.11-15), կը խօսի գործերու համաձայն հատուցում ստանալուն մասին (Հո 2.6), կը խօսի նո՛ր երկինքի եւ նո՛ր երկրի ստեղծագործութեան մասին (Ես 65.17: Յյտ 21.1-4: Բ.Պտ 3.10-13): Այս բոլորը Քրիստոսի երկրորդ գալուստէն ե՛տք միայն պիտի իրագործուին: Հետեւաբար, ուրանալ Տիրոջ երկրորդ գալուստը, պիտի նշանակէր ուրանալ այս բոլորը:

10.- «Կը վնարեմ»: Վնարելը՝ վարձատրելն է: Իսկ տրուելիք վարձատրութիւնը Քրիստոսի ներկայութենէն տարբեր բան չէ: Հոս՝ երկրի վրայ որքան մօտիկ եղած ենք Յիսուսի, արքայութեան մէջ, ա՛յնքան աւելի Տէրը իր ներկայութեամբ մեզ պիտի վարձատրէ: Քրիստոս իր ջերմալից ներկայութեամբ պիտի համակէ իր հաւատարիմ զինուորները որոնք ցերեկ ու գիշեր կ'աշխատին ի խնդիր իր հօտի անվթար պահպանութեան:

Ոմանք Քրիստոսի ներկայութեան կողմին այլ տեսակի վարձատրութիւններ եւս կ'ակնկալեն: Թէ Քրիստոս ինքնիր անձէն գատ ուրիշ բան պիտի տա՞յ մեզի՝ չենք գիտեր: Թէպէտ Աստուածաշունչին մէջ բազմաթիւ համարներ կան որոնք նիւթական վարձատրութեան մը պատկերացումը կրնան տալ մեզի, եւ սակայն, դժուար չէ այդ բոլորը հասկնալ հոգեւոր եւ խորհրդանշական իմաստով մը: «Վարձատրութիւն» հասկացողութեան մասին, մանրամասնօրէն խօսած եմ «Այգիի մշակներուն վարձքը» առակին մէջ, ուստի այստեղ զանց կ'ընեմ այդ մասին խօսիլը:

«Արդ, քու կարծիքովդ՝ այս երեքէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը» (Ղկ 10.36): Քանի մը մատնանշումներ.–

1.– Յիսուս առակը աւարտելէ ետք, ուզեց Օրէնքի ուսուցիչէն հասկնալ թէ առակին մէջ յիշուած երեք անձերէն «ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը»: Օրէնքի ուսուցիչը պատասխանեց. «Ան՝ որ հոգ տարաւ անոր»: Անհոգ եւ անտարբեր գտնուող

Ղեւտացիին եւ քահանան չէին կրնար ընկեր կոչուիլ կամ նկատուիլ: Օրէնքի ուսուցիչէն սորվինք արդար դատաստան ընել: Անհոգ եղողը ընկեր պէտք չէ կոչել: Երբեմն մենք բարեկամ ու բարերար կը յորջորջենք որոշ անձ մը, ո՛չ թէ որովհետեւ հոգատար վերաբերմունք ունի տանջուածին նկատմամբ, այլ պարզապէս որովհետեւ մեզի համար սիրելի անձ մըն է եւ կամ ալ շահու աղբիւր է:

2.- Օրէնքի ուսուցիչին ուղղուած Յիսուսի հարցումը մեզի նաեւ ուղղուած է. «Քու կարծիքովդ՝ այս երեքէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը»: Խորապէս մեր սիրտը կը ցաւի երբ կը տեսնենք որ «ընկեր» ու «բարեկամ» անուանումները կը տրուին չար մարդոց փոխանակ չարչարուող մարդոց օգնողներուն:

Սիրելի՛ ընթերցող, դուն ո՞վ կը նկատես ընկեր: Քեզ աղքատացնողը, թէ՛ քեզ աղքատութեան նիրաններէն ձերբազատողը: Հարուստները չե՞ն որ կը ճգմեն չփառները: Եւ սակայն, հարուստներուն չե՞ որ բարեկամ ու բարերար անունները կը տրուին: Զգո՛յշ ըլլանք: Եթէ երբեք ընկեր անուանենք մեզ կողոպտողն ու հարստահարողը փոխանակ մեզ կողոպտուէ եւ հարստահարութենէ ազատողը՝ ինքնաբերաբար եւ միանգամընդմիշտ մերժած կ'ըլլանք Քրիստոսի ընկերակցութիւնը:

3.- Առակին սկիզբը տեսնա՞ք թէ ինչպէս Օրէնքի ուսուցիչը «ինքզինք արդարացնել ուզելով» հարց տուաւ Յիսուսի. «Ո՞վ է իմ ընկերս»: Ան հիմա սորված էր այս հարցումին պատասխանը: Ան սորված էր որ Քրիստոս ի՛նքն էր ի՛ր ընկերը եւ ընկերը համայն մարդկութեան: Բարի Սամարացիին առակին պատումով, Քրիստոսի նպատակն է ինքզինք ներկայացնել իբրեւ ընկեր տառապակոծ, խոցոտեալ եւ մեղաւոր մարդկութեան: Ոեւէ մէկը որ կ'աշխատի գլորած եւ տառապակոծ մարդոց վերականգնումին ի խնդիր, ոեւէ մէկը որ կը գործէ իր նմաններուն փրկութեան համար՝ համայն մարդկութեան ընկեր կը նկատուի:

«Օրէնքի ուսուցիչը ըսաւ. "Ան՝ որ հոգ տարաւ անոր": Յիսուս ըսաւ. "Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ"» (Ղկ 10.37): Հոգեւոր խորհրդածութիւն.-

Երբ Օրէնքի ուսուցիչը պատասխանեց. «Ան՝ որ հոգ տարաւ անոր», Յիսուս եզրակացուց ըսելով. «Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ»: Սիրելի՛ հաւատակից եղբայր, մեզի շնորհուած է գեղեցկագոյն առիթը Յիսուսի նման ընկեր ըլլալու մեր շրջապատին: Զփորձենք գտնել պատասխանը «Ո՞վ է իմ ընկերս» հարցումին, այլ ըլլա՛նք պատասխանը: Ընկեր չունեցողին ընկե՛ր ըլլանք: Քրիստոսի ժպիտը ըլլանք ուրիշներուն: Թո՛ղ

տանք որ Քրիստոս մեր ընդմէջէն սիրէ սիրոյ կարօտները, վերականգնէ գլորածները, սփոփէ վշտահարները եւ միսիթարէ սգաւորները:

Ըլլա՛նք Քրիստոսի ձեռքը կարկառուած հիւանդներուն: Ըլլա՛նք Քրիստոսի տաքուկ շունչը ցրտահարներուն: Ըլլա՛նք Քրիստոսի ոտքը կեանքի քանապարհին վրայ կաղացողներուն: Ըլլա՛նք Աստուծոյ քաղցրութիւնը դառնացածներուն: Ըլլա՛նք օգնական անօգնականներուն, կարեկցող սիրտ՝ սրտաբեկներուն, քաջալերութիւն՝ վիստածներուն, ուրախարար ներկայութիւն՝ տրտմածներուն, զօրավիգ՝ անզօրներուն, բալասան՝ խոցոտուածներուն, այցելու՝ անտեսուածներուն, եւ սիրող եղբայր բոլոր անոնց՝ որոնք գիրենք սիրող եղբայր չունին:

Մանաւանդ, ըլլա՛նք երկինքի ժպիտը երկնաւորներուն: Ժպտացողներուն թիւը հետզհետէ կը նուազի: Յանձնառո՛ւ ըլլանք այդ թիւը անեցնողներէն մին ըլլալ: Պահե՛նք մեր դէմքին վրայ Յիսուսի ժպիտը: Թող մարդիկ մեր ժպիտին մէջ տեսնեն մահուան վրայ յաղթանակ տարած մարդու մը ժպիտը: Թող մարդիկ մեր ժպիտին մէջ գտնեն դժոխքը իր հիմէն սասանող զօրութիւն մը: Թող մեր ժպիտը ըլլայ յաղթող մարդու ժպիտ, ամբաստանող ժպիտ, յուսադրող ժպիտ, խաղաղութիւն սփռող ժպիտ:

«Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ»: Ընե՛նք ամէն մարդու: Ընե՛նք անխտրօրէն: Ընե՛նք սիրայօժար կերպով: Վստահաբար մեր վերաբերմունքը հանդէպ մեր նմանին հիմնովին պիտի փոխուի եթէ երբեք մտածենք, որ իւրաքանչիւր մարդ որ կը տեսնենք, որուն հետ կ'ապրինք եւ կը գործակցինք, մէկն է որուն հետ յաւիտենականութիւնը պիտի անցընենք: Պէ՞տք է անտարբերօրէն վերաբերինք մէկու մը հանդէպ որուն հետ յաւիտենականութիւնը անցնելու կոչուած ենք: Ինչպէս որ աշակերտ մը որ պարտաւորուած է սենեկակից մը ունենալու երկու-երեք տարուայ ժամանակաշրջանի մը համար, խաղաղասէր եւ սիրալիր վերաբերմունք կ'ունենայ անոր հանդէպ՝ հեզասահ կեանք մը ապրելու համար, այնպէս ալ իւրաքանչիւր ուղիւնոր հրիստոնեայ, ջանալու է սիրագեղ եւ առողջ յարաբերութեան մէջ ըլլալ իր նմաններուն հետ, որովհետեւ ոչ թէ երկու-երեք տարիներ պիտի անցընէ անոնց հետ, այլեւ՝ անվախճան եւ անաւարտ յաւիտենականութիւն մը:

«Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ»: Պէտք է վերաբերինք ուրիշներուն հետ այնպէս ինչպէս պիտի վերաբերէինք Քրիստոսի հետ: Ուրիշներուն մէջ Քրիստոսի ներկայութիւնը տեսնելը կ'օգնէ մեզի որ տարբերօրէն սկսինք վերաբերիլ անոնց հանդէպ: Մի՛ մոռնաք որ Քրիստոս ինքզինք պատկերացուց անօթի՝ անօթիին մէջ, ծարաւ՝ ծարաւին մէջ, թափառականին հետ՝ թափառական, մերկ՝ մերկին մէջ, հիւանդին հետ՝ հիւանդ,

բանտարկեալին հետ՝ բանտարկեալ (Մտ 25.35–36): Եթէ Քրիստոս ինքզինք տեսաւ նման մարդոց մէջ, նիշդ պիտի ըլլա՞ր որ մենք իր ներկայութիւնը չտեսնէինք անոնց մէջ:

Դժբախտաբար կան անթիւ քրիստոնեաներ որոնք ո՛չ միայն օգտակար չեն դառնար չճաշողներուն, այլեւ զանոնք կը կոչեն անբախտ եւ ողորմելի: Եթէ Քրիստոս երանի տուաւ չճաշողներուն եւ տառապեալներուն, մենք ի՞նչպէս կրնանք զանոնք անբախտ եւ թշուառ անուանել: Եթէ Քրիստոս անօթի ու ծարաւ, օտարական ու մերկ, հիւանդ ու բանտարկեալ մարդիկը իր եղբայրները կոչեց (Մտ 25.40), մենք ի՞նչպէս կը յանդգնինք զանոնք ողորմելի եւ տարաբախտ կոչել: Շիտա՞կ բան է որ թագաւորի մը զաւակը դժբախտ նկատենք: Շիտա՞կ բան է որ իշխանի մը բարեկամը հէգ ու խեղճ սեպենք: Ո՛չ միայն թագաւորի մը զաւակները դժբախտ չեն նկատուիր, այլ նոյնիսկ անոր ծառաները: Եթէ երբեք երանելի է երկրաւոր թագաւորի մը որդին, որքա՞ն անելի երանելի է որդին երկնաւոր թագաւորին՝ Տէր Յիսուս Քրիստոսի:

Սէրը մարդոց առջեւ կանգնելով Յիսուսի սիրոյն մասին դասախօսութիւն տալը չէ: Ասիկա պիտի նմանէր ծարաւ մարդու մը առջեւ կենալով ջուրի օգտակարութեան մասին դասախօսութիւն տալուն: Դիւրին է աւագակներուն ձեռքը ինկած, կողոպտուած, վիրաւորուած եւ գետին ձգուած մարդու մը ըսել. «Ընկե՛ր, կը ցաւին քեզի համար: Ելի՛ր նայիմ, ուժերդ հաւաքէ եւ տուն գնա՛»: Դիւրին է կիսամերկ եւ օրուան հացին կարօտ մէկու մը ըսել. «Գացէ՛ք, Աստուած ձեզի հետ ըլլայ, տա՛գցէք եւ կշտացէ՛ք» (Յկ 2.16), բայց Աստուծոյ ակնկալութիւնը այն է, որ մենք չխօսինք միայն իր անունով, այլեւ՝ գործենք:

Աստուծոյ անունով խօսիլը բայց Աստուծոյ անուան համար չգործելը՝ կե՛ղծ քրիստոնէութիւն է: Բարութեան եւ միակ Բարիին մասին նաեւ ըսելը բայց բարին չգործելը՝ սո՛ւտ բարեպաշտութիւն է: Դիւրին է ուրիշներուն ըսել որ Յիսուս սէր է, Յիսուս ձեզ կը սիրէ, բայց կարեւորը՝ ուրիշներուն Յիսուսի սէրը ըլլալն է, ուրիշները Յիսուսի սիրոյն առաջնորդելն է: Ամէն մարդ կրնայ Քրիստոսը ներկայացնել իբրեւ եղբայր տառապեալներուն, բայց արդեօք ամէն մարդ կրնա՞յ իր կարգին Քրիստոսի նման եղբայր մը ըլլալ տառապեալներուն:

Աստուած կ'ուզէ որ խօսինք իր սիրոյն մասին, բայց մանաւանդ կ'ուզէ որ իր սրտին խօսող սիրոյ կեանք մը ապրինք: Մարդիկ կ'օգտուին երբ խօսինք իրենց Աստուծոյ սիրոյն մասին, բայց շատ անելի կ'օգտուին երբ թոյլ տանք որ սէրը ի՛նք խօսի ինքնիր մասին մեր ունեցած վերաբերմունքին ընդմէջէն: Երբ աստուածային սէր ցոյց տանք

մեր նմաններուն նկատմամբ, անոնց առիթ մը տուած կ'ըլլանք դառնալու Աստուծոյ սիրոյն:

Ինչպէս ծառի մը քաղցրահամ պտուղէն քաղցրահամ անոր կը վերադառնայ, այնպէս ալ երբ օգնենք ուրիշներուն որ Աստուծոյ սիրոյն քաղցրացուցիչ պտուղներէն քաղցրահամ կ'ըլլանք զանոնք Աստուծոյ մօտենալու: Աստուծոյ սէրէն հեռու եղողը չի' կրնար ուրիշները Աստուծոյ սիրոյն մօտեցնել: Աստուծոյ սիրոյն մէջ ապրողը միայն կրնայ ապրեցնել Աստուծոյ սէրը ուրիշներուն կեանքին մէջ: Աստուծոյ քաղցրութիւնը իր ներսիդին չկրող մարդը՝ չի' կրնար քաղցր ներկայութիւն ըլլալ իր շրջապատին մէջ:

Բարի Սամարացիին սէրը ունեցող մարդը, կ'օգնէ թէ՛ բարեկամին եւ թէ՛ թշնամիին հաւասարապէս, թէ՛ ծանօթին եւ թէ՛ անծանօթին նմանապէս: «Եթէ թշնամիդ քաղցած է՝ հաց տուր իրեն. եթէ ծարաւ է՝ ջուր տուր» (Հո 12.20): Ո՞վ պիտի ուզէր կերակրել կորին մը որ հետագային իր յօշոտիչը պիտի դառնար: Ո՞վ պիտի փափաքէր ողորմիլ մէկու մը որ յառաջիկային անողորմ պիտի գտնուէր իրեն նկատմամբ: Քրիստոս կերակրեց, ծառայեց ու քարոզեց այնպիսի մարդոց՝ որոնք շուտով իր մահը պիտի պահանջէին:

Աւագակներուն ձեռքը ինկած եւ վիրաւորուած մարդը մեզ չէ՞ր որ կը ներկայացնէր: Քրիստոս կամովին չմօտեցա՞ւ մեզի եւ մեր վերքերը չփաթեց՞ց: Ան մեզի հանդէպ անչափ բարերարութիւն եւ ողորմութիւն ցոյց տուաւ, թէպէտ շատ լաւ գիտէր որ իր կողմէ բարերարուածներս բազմիցս զինք պիտի խոցոտէինք մեր ամենօրեայ մեղքերով: Ան կամովին ընտրեց իր «թշնամիները» կերակրելու ցամբան: Դիւրին բան չէ թշնամին կերակրելը: Աստուծոյ սիրով բնակուած մարդը միայն կրնայ այդպէս ընել: Թշնամին չսիրելն ու չկերակրելը ապացոյց մըն է մեր կեղծ սիրոյն՝ հանդէպ անկեղծ Աստուծոյ:

Որքա՞ն մարդիկ կան որոնց կեանքը թշնամանք է Աստուծոյ, եւ սակայն, Աստուած ամէն օր անոնց կ'ողորմի՝ անոնց հանդէպ համբերատարութիւն ցոյց տալով: Միթէ Աստուած իրեն թշնամացածներուն հանդէպ իր սէրը չէ՞ որ ցոյց կու տայ երբ անոնց վրայ իր արեւը կը ծագեցնէ եւ անձրեւը կը տեղացնէ (Մտ 5.45): Միթէ Աստուած չի՞ կրնար այնպէս ընել որ իր արեւն ու անձրեւը հասնին միայն արդարներուն: Ինչպէս Աստուած իր անձրեւը կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ, նմանապէս ալ աստուածային սէր ունեցողը՝ զանիկա պէտք է տեղացնէ թէ՛ իր բարեկամներուն եւ թէ՛ իր չարակամներուն վրայ:

Բայց սիրելի եւ օգնել կարենալու համար մեզի չարիք ու բարիք ընողներուն հաւասարապէս, նախ անպայմանօրէն գՔրիստոս ընդունելու ենք մեր կեանքներուն մէջ:

Անօթի մը կշտացնելու համար, նախ մե՛նք կշտանալու ենք աշխարհի Հացով՝ Քրիստոսով:

Ծարաւի մը յագուրդ տալու համար, նախ մե՛ր ծարաւը յագեցնելու ենք Տէր Յիսուսի կենսատու արիւնով:

Անմխիթար մը մխիթարել կարենալու համար, նախ մե՛նք վայելելու ենք վշտահար մարդկութեան Մխիթարիչին՝ Սուրբ Հոգիին մխիթարութիւնը:

Հոգեւորապէս ողորմելի ֆրիստոնեան ուրիշի մը օրհնութեան պատճառ չի՛ կրնար դառնալ. ոչ ալ կորսուած մը՝ այլոց փրկութեան առաջնորդ:

Որպէսզի մեր սէրը իր գործնական արտայայտութիւնը գտնէ մեր նմաններուն կեանքին մէջ, ամէն բանէ առաջ թոյլ տալու ենք, որ Քրիստոս իր սիրոյ կրակով եւ իր հոգիի շերմութեամբ ողորդէ մեր համակեութիւնը:

Եկէ՛ք սիրելիներ, Աստուծոյ հանդէպ մեր սէրը յայտնենք, մեր նմաններուն նկատմամբ Բարի Սամարացիին վերաբերմունքը ցոյց տալով: Ծնրադիր աղաչենք Քրիստոսի որ սիրով լեցնէ մեր սիրտերը մեր եղբայրներուն եւ քոյրերուն նկատմամբ: Աղերսենք որ մեզ հարստացնէ իր սիրով եւ մեզ աղքատացնէ իր սիրոյն: Հեռանանք ամէն բանէ որ մեզ կը հեռացնէ աստուածսիրութենէն եւ եղբայրսիրութենէն եւ մօտենանք ամէն բանի որ մեզ կը մօտեցնէ անոնց: Խնդրենք Աստուծմէ մի՛շտ ու միա՛յն իր սիրոյն մէջ մնալու եւ ապրելու բարի շնորհքը: Հայցենք Աստուծմէ, որ մեր ներսիդին կերտէ իր Որդիին՝ բարի ու բարեբար Սամարացիին նկարագիրը, եւ մեզի շնորհէ իր հոգիին նման հոգի մը, որպէսզի կարենանք մեր սիրովը ուրիշները իրեն առաջնորդել:

Թո՛ղ որ Բարի Սամարացիին աստուածսիրութեան եւ եղբայրսիրութեան կրակը բորբոքի մեր սիրտերուն մէջ, որպէսզի շտապենք օգնելու աւագակներուն կողմէ յարձակումի ենթարկուած եւ վիրաւորուած մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Թո՛ղ որ մարդոց փրկութեան հետապնդումը մեզի համար դառնայ առաջնահերթութիւն, որպէսզի ո՛չ միայն օգտաշատ եւ խրախուսիչ խօսքերով ֆաջալերենք հոգեւորապէս տապալածներն ու զգեսնուածները, այլեւ սիրայօժար կերպով զանոնք դնենք գրաստին վրայ ու պանդոկ տանինք, այլ խօսքով, զանոնք յանձնենք Քրիստոսի եւ իր եկեղեցիին հոգատարութեան:

Թո՛ղ որ Սուրբ Հոգին մեր բերանները բանայ օրհնաբանութեամբ, որպէսզի համարձակօրէն եւ սրտի ցնծութեամբ օրհներգենք երկինքի ու երկրի միակ Տիրոջ՝ Բարի Սամարացիին՝ Յիսուս Քրիստոսի, որ անարժաններս արժանի ըրաւ դառնալու սիրոյ անդամները ՍԻՐՈՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ Ամենասուրբ Երրորդութեան, որուն կը վայելէ ամէն փառք եւ փառաբանութիւն: Ամէն:

ԿՈՐՄՈՒԱԾ ՈՉԽԱՐԻՆ ԱՌԱԿԸ

«Ենթադրենք որ ձեզմե մեկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմե մեկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը (ոչխարները) արօտավայրին մէջ եւ չ'երթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ գայն: Եւ երբ գտնէ՝ ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. "Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ": Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին» (Ղկ 15.4-7):

Իր երկրաւոր կեանքի ընթացքին Յիսուս ցանցուեցաւ իբրեւ բարեկամ մեղաւորներուն (Մտ 11.19): Ան երբեք չէր գարշեր անոնց հետ սեղան նստելու: Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն համար Յիսուսի կատարածը զգուելի արարք էր: Ըստ իրենց, մէկը որ մօտիկութիւն կը ցուցաբերէր մեղաւոր մարդոց նկատմամբ՝ չէր կրնար խոստացեալ Մեսիան ըլլալ: Յիսուս կորսուած ոչխարին առակը պատմեց, ցոյց տալու համար անոնց խոստացեալ Մեսիային առաքելութեան մարդասիրական բնոյթը:

«Ենթադրենք որ ձեզմե մեկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմե մեկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը (ոչխարները) արօտավայրին մէջ եւ չ'երթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ գայն» (Ղկ 15.4):
Քանի մը հաստատումներ.–

1.– «Ձեզմե մեկը»: Ճիշդ է որ Քրիստոս «ձեզմե մեկը» բացատրութիւնը կը գործածէ, բայց խորքին մէջ, ան պատահական անձի մը կամ երկրաւոր հովիւի մը մասին չէ որ կը խօսի, այլ՝ ինքնիր անձին մասին: Երկրաւոր ոեւէ հովիւ իննսունինը ոչխարները լեռներուն վրայ կամ արօտավայրերուն մէջ ձգելով չ'երթար փնտռելու կորսուած մէկ հատիկ ոչխար մը: Ան կը նախընտրէ կորսնցնել մէկ ոչխարը քան իննսունինը ոչխարները:

2.– «Հարիւր ոչխար ունի»: Որո՞նք են այս հարիւր ոչխարները: Իգնատիոս Վարդապետ, Յովհաննէս Ոսկեբերան, Մեծն Կիւրեղ, Մեծն Գրիգորիոս եւ շատ մը ուրիշ երեսելի մեկնիչներ, կու գան ըսելու որ այստեղ յիշուած հարիւր ոչխարները կը ներկայացնեն հրեշտակներն ու մարդկութիւնը միասնաբար:

3.- Հետաքրքրական կ'ըլլայ հարց տալ թէ ինչո՛ւ մեր Տէրը թիւ 100-ով կը ներկայացնէ հրեշտակներու բանակները եւ մարդկային սերունդը: Պէտք է յիշել որ թիւ 100-ը Եբրայական մտածողութեան մէջ խորհրդանիշ նկատուած է կատարելութեան եւ ամբողջականութեան, եւ հետեւաբար, եթէ երբեք Քրիստոս թիւ 100-ով կը ներկայացնէ հրեշտակներն ու մարդիկը, այդպէս կ'ընէ, ցոյց տալու համար մեզի, որ Աստուծոյ սկզբնական կամքն ու ծրագիրն էր, որ հրեղէն եւ հողեղէն մարմինները, այլ խօսքով՝ հրեշտակներ ու մարդիկ, ըլլային եւ մնային մէկ ամբողջութիւն, մէկ եւ նո՛յն աստուածային ընտանիքին անդամները:

4.- Տուեալ առակին մէջ, Յիսուս հրեշտակներն ու մարդիկը կը կոչէ՝ ոչխար: Վերջին դատաստանին մասին խօսած ատեն եւս Յիսուս մարդիկը ոչխար կը կոչէ (Մտ 25.32-33): Յովհաննու Աւետարանին մէջ բազմաթիւ անգամներ ոչխար կ'անուանէ իր հետեւորդները (Յհ 10.1-16): Եւ այլն: Արդ, այստեղ միայն մարդոց մասին խօսելով, հարց կու տանք թէ ինչո՞ւ Յիսուս մարդիկը կը կոչէ ոչխար: Քանի մը պատճառներով.-

ա.- Ոչխարները անվնաս կենդանիներ են: Յիսուս մարդիկը «ոչխար» կը կոչէ, ցոյց տալու համար որ անոնք պէտք է անվնաս կեանք մը ապրին, այլ խօսքով՝ երբեք ուրիշին վնաս չհասցնեն, ուրիշին գայթակղութեան պատճառ չըլլան, ուրիշը չվիրաւորեն:

բ.- Ոչխարները անմեղ կենդանիներ են, եւ ուստի՝ անմեղութեան խորհրդանիշ են: Քրիստոս մարդիկը «ոչխար» կ'անուանէ, յիշեցնելու համար մեզի որ մեղքը պէտք է բոյն դնէ մեր սիրտերուն մէջ:

գ.- Ոչխարները մարդոց օգտակար կենդանիներ են: Մարդիկ կ'օգտագործեն անոնց բուրդը, անոնց միսն ու կաթը, եւ անոնց մարմինի շատ մը անդամները: Յիսուս իր հետեւորդները «ոչխար» կը յորջորջէ, սորվեցնելու համար մեզի, թէ հաւատացեալ մարդը պէտք է օգտաշատ ու օրհնաբեր ներկայութիւն դառնայ մարդոց կեանքին մէջ:

դ.- Կ'ըսուի որ ոչխարները ամենէն շատ որոնացող կենդանիներէն են, բայց հետաքրքրականօրէն, միաժամանակ կ'ըսուի թէ անոնք ամենէն շատ անօթութեան դիմացող կենդանիներն են: Ուստի, հաւատացեալներ ոչխարներու կը նմանցուին, կարծէք յիշեցնելու համար մեզի, թէ ինչպէս ոչխարները կը դիմանան անօթութեան որ իրենց համար ծանր փորձութիւն մըն է, այնպէս ալ հաւատացեալներ, պէտք է դիմանան եւ տոկուն մնան կեանքի փորձութեանց առջեւ:

ե.- Ոմանք նկատի առնելով որ ոչխարները անօթութեան դիմացող կենդանիներ են, զանոնք նկատած են խորհրդանիշ՝ համբերութեան: Այս

իմաստով, Տէրը իր հետեւորդները «ոչխար» կը կոչէ, ցոյց տալու համար անոնց, թէ պէտք է համբերատար ըլլան:

5.- Բացատրեցինք թէ ինչո՞ւ Յիսուս մարդիկը կը կոչէ՝ ոչխար: Հիմա տեսնենք թէ ինչո՞ւ մարդիկը «այծ» կոչելու փոխարէն, զանոնք կը կոչէ «ոչխար»: Մեկնիչ մը ոչխարը կը ներկայացնէ հինգ յատկութիւններով կամ խորհրդանիշներով.-

ա.- Հեզութիւն, որ քաղցր վերաբերմունքով յատկանշուած է:

բ.- Խոնարհութիւն, որ պատուիրանապահութեամբ խորհրդանշուած է:

գ.- Պարարտութիւն, որ Աստուծոյ շնորհներուն առատութիւնը ցոյց կու տայ:

դ.- Պարկեշտութիւն, որ արդարութեան հանդէպ ցուցաբերուած սէրն է:

ե.- Համեստութիւն, որ խաղաղասիրութեան արտայայտութիւն է:

Այծը եւս կը ներկայացուի հինգ յատկութիւններով կամ խորհրդանիշներով.-

ա.- Գարշահոտութիւն, որ կը պատկերացնէ մեղքին զագրելիութիւնը:

բ.- Վաւաշոտութիւն, որ նշանակ է մարմնասիրութեան, հեշտասիրութեան:

գ.- Բարձրապարանոցութիւն, որ գոռոզութեան արտայայտութիւն է:

դ.- Անհանդարտութիւն, որ անվստահութեան ցուցանիշ է:

ե.- Բարձրորոնութիւն, որ իրեն տրուածով չգոհանալուն պատկերն է որ կը յայտնաբերէ:

6.- «Զեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ...»: Որոշ մեկնիչներ, ինչպէս օրինակ Յովհաննէս Ոսկեբերան, կորսուած մէկ ոչխարը կը նկատեն «հաւատացեալ մարդը» որ կը մոլորի եւ ետ իր հաւատքին կը դառնայ: Բայց մեկնիչներուն մեծամասնութիւնը կ'ըսէ թէ կորսուած մէկ ոչխարը կը ներկայացնէ՝ մարդկութիւնը, իսկ 99 ոչխարները՝ հրեշտակները:

Ո՛չ միայն մեկնիչ հայրերը կը մատնանշեն որ իննսունինը ոչխարները կը ներկայացնեն հրեշտակները, այլեւ բնագիրն ալ անուղղակիօրէն կ'օգնէ մեզի վստահօրէն գիտնալու որ իննսունինը ոչխարները ակնարկութիւն են հրեշտակներուն: Քրիստոս կը յիշէ այս իննսունինը ոչխարները իբրեւ իննսունինը "արդարներ", «որոնք ապաշխարութեան պէտք չունին» (Ղկ 15.7): Ո՞վ է այն մարդը որ ա՛յնքան արդար է որ ապաշխարութեան պէտք չունի: Հրեշտակները իրե՛նք է որ

արդար են եւ ապաշխարութեան անկարօտ եւ ո՛չ թէ մարդիկը: Մարդոց համար կ'ըսուի. «Մէկ հատիկ արդար իսկ չկայ, չկայ իմաստուն մը որ զԱստուած փնտռէ» (Հո 3.10-11):

7.- Ինչո՞ւ Յիսուս միայն մէկ ոչխարի կորուստին մասին կը խօսի, եւ ինչո՞ւ ամբողջ մարդկութիւնը թիւ մէկ-ով կը ներկայանայ: Քանի մը պատճառներով.-

ա.- Կորսուած մարդկութիւնը թիւ մէկ-ով կը ներկայանայ, ցոյց տալու համար մեզի, որ մեղքը, եւ հետեւաբար՝ կորուստը, մէկ մարդու միջոցաւ մտաւ մարդկային ընտանիքէն ներս:

բ.- Կորսուող միայն մէկ ոչխարի մասին կը խօսի Յիսուս, ցոյց տալու համար որ ինք ո՛չ թէ կ'ուզէ որ շատեր փրկուին, այլ կ'ուզէ որ բոլորը փրկուին: Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Ես չեմ ուզեր որ շատեր փրկուին, այլ կ'ուզեմ որ բոլորը փրկուին...»:

գ.- Բնագիրը մէկ կորսուած ոչխարի մասին կը խօսի, ցուցնելու համար, թէ Քրիստոս պատրաստ պիտի ըլլար իր արիւնը թափելու նոյնիսկ եթէ միայն մէկ հոգի մեղանչէր համակ մարդկութեան մէջ:

դ.- Կորսուածը եւ Քրիստոսի կողմէ փնտրուածը իբրեւ մէկ ոչխար կը ներկայացուի, պարզելու համար թէ իւրաքանչիւր մարդ անհատ թանկագին արժէք է Աստուծոյ համար, եւ Աստուած անտարբեր չի մնար անոր հանդէպ երբ կորուստի ճամբան բռնէ:

ե.- Մէկ ոչխարի մասին կը խօսուի, յիշեցնելու համար մեզի որ Քրիստոս ամէն մէկ մարդու փրկութիւնը կը հետապնդէ: Ամէն մէկ կորսուած մարդ կը փնտրուի Քրիստոսի կողմէ, եւ ո՛չ թէ միայն ումանք:

զ.- Մէկ ոչխարի ակնարկութիւն կ'ըլլայ, յայտնելու համար որ ամէն մէկ մարդ արարած անձնապէս պէտք է գայ Քրիստոսի եւ ընդունի զայն իր սրտին մէջ: Փրկութիւնը անձնապէս պէտք է ընդունիլ Քրիստոսէ, ուրիշ մը գայն մեզի համար ձեռք ձգել չի կրնար:

է.- Վերջապէս, Յիսուս կը խօսի մէկ ոչխարի մասին, ցոյց տալու համար մեզի որ ինք բաւարարուելով 99 արդարներով, պիտի չանտեսէր եւ չմոռնար անդին գտնուող մէկ-ը:

Մարդիկ եթէ 1000 պարկ ցորեն ունենան եւ կորսնցնեն անոնցմէ մէկը, վստահաբար չեն թողուր 999 պարկերը եւ չեն երթար փնտրելու կորսուած մէկ հատիկ պարկը: Տարբեր է սակայն մեր գթառատ Տիրոջ վերաբերմունքը: Մեր Տէրը այնպիսին է, որ ո՛չ միայն կ'երթայ փնտրելու կորսուած մէկ պարկ ցորենը, այլեւ կ'երթայ փնտրելու մէկ պարկ ցորենէն կորսուած ցորենի մէկ հատիկն իսկ:

Յիշեցէք որ երբ Քրիստոս իր արիւնը կը թափէր իսաչին վրայ համայն մարդկութեան համար, անդին, երբ լսեց կորսուած ոչխարի մը

աղաղակը. «Տէ՛ր, յիշէ՛ զիս, երբ քու թագաւորութեամբդ գաս» (Ղկ 23.42), չանտեսեց զայն ու երես չդարձուց, այլ պատասխանեց անոր ինդրանքին եւ յաւիտեանական փրկութեան խոստում տուաւ անոր:

8.- Նկատի պէտք է առնել որ կորսուած ոչխարը թէպէտ կորսուած, թէպէտ շեղած, բայց Յիսուս զայն կը կոչէ «իւր ոչխարը»: Հոսկէ կը սորվինք թէ Յիսուս բոլոր մեղաւորները իր սեփականութիւնը կը նկատէ եւ կ'աշխատի անոնց փրկութեան համար: Ինչպէս Յիսուս կորսուած մարդիկը անգամ իբրեւ ի՛րը կը դաւանի, նոյնպէս ալ մենք, բոլոր մարդիկը պէտք է դաւանինք իբրեւ ժառանգութիւնը եւ իբրեւ սեփականութիւնը Աստուծոյ: Ինչպէս Յիսուս չ'ուրանար ոեւէ մէկը, նոյնը պէտք է ընենք եւ մենք:

9.- «Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ»: Հովիւը ինք չէ որ ոչխարը կը կորսնցնէ, այլ ոչխարը ի՛նքն է որ հովիւը կը կորսնցնէ, եւ զայն կը կորսնցնէ երբ կը հեռանայ անկէ եւ հօտէն: Այո՛, ոչխարը կամովին հեռացաւ իր հովիւէն եւ հօտէն: Անառակ որդին ինք եւս կամովին հեռացաւ իր հօրեանական տունէն (Ղկ 15.12-13): Բարի Սամարացիին առակին մէջ կը տեսնենք թէ աւագակներուն ձեռքը ինկող մարդը կամովին «Երուսաղէմէն Երիփով» գնաց (Ղկ 10.30): Ադամ եւ Եւա իրենք եւս իրենց ազատ կամով մեղանչեցին ու հեռացան Աստուծմէ (Ծն 3.6-7):

10.- «Զի՞՞նք ձգեց իննսունիւնը (ոչխարները) արօտավայրին մէջ եւ չ'ե՞րթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն»: Ըսինք արդէն որ 99 ոչխարները կը ներկայացնեն հրեշտակները: Քրիստոս ի՛նքն էր որ ձգեց իննսունիւնը ոչխարները (հրեշտակներու գունդերը): Ո՛ւր ձգեց զանոնք: Ղուկաս կ'ըսէ՝ «արօտավայրին մէջ» (15.4), իսկ Մատթէոս կ'ըսէ՝ «լեբան վրայ» (18.12): Ի՞նչ ցոյց կու տան այս երկու բառերը.:-

ա.- Մենք «արօտավայր» բառը կը գործածենք դալարագեղ ընդարձակ գետիններու համար, ուր կրնան կենդանիներ արածիլ եւ առատ ուտելիք գտնել: Ուստի, «արօտավայրը» խորհրդանիշ է առատութեան եւ լեցունութեան, այլ խօսքով՝ հարուստ եւ անկարօտ կեանքի մը: Այս իմաստով, հրեշտակները ձգել արօտավայրին մէջ, կը նշանակէ ձգել զանոնք երկինքի առատութեան մէջ, ձգել զանոնք հոն՝ ուր կեանքը հարուստ է ու գեղեցիկ, ուր կեանքը անպատմելի ու անմատելի է, եւ գալ կորսուած մարդուն, մեղքի մուրով սեւցած մարդուն, աղքատ մարդուն, եւ զայն իրմով սպիտակացնել, իրմով բարձրացնել մեղքի ցեխէն: Հաստատենք որ Յունարէն բնագիրին մէջ մենք չունինք «արօտավայր» բառը, այլ՝ «անապատ» (ερημω – էրիմօ):

բ.– «Լեռը» Աստուածաշունչ մատեանին մէջ խորհրդանիշ նկատուած է թագաւորութեան եւ Աստուծոյ բնակութեան ու ներկայութեան (Սղ 121.1-2: Ես 14.13: Եզ 28.14: Ել 19.18: Եւայլն): Ուստի, ձգել հրեշտակները լեռներու վրայ, կը նշանակէ ձգել զանոնք երկինքի բարձունքին մէջ, Աստուծոյ ներկայութեան ու թագաւորութեան մէջ, եւ հրաժարիլ ժամանակաւորապէս անոնց կողմէ իրեն ընծայուած պաշտամունքէն ու երկրպագութենէն, փառաբանանքէն ու փառքէն, բայց մանաւանդ, հրաժարիլ երկինքի լեռնէն, այսինքն՝ իր աստուածային փառքէն, մերկանալ իր աստուածային մեծափառութենէն, եւ գալ մեղաւոր մարդուն, ազատագրելու համար զանիկա իր ողորմելի կացութենէն եւ զայն վերստին բարձրացնելու դէպի լեռը Աստուծոյ, դէպի թագաւորութիւնը Աստուծոյ, դէպի բնակարանն ու ներկայութիւնը Աստուծոյ: Մենք ալ հետեւելով Յիսուսի օրինակին, պատրաստ ենք հրաժարելու մեր հանգիստէն եւ մեզի ուղղուած փառաբանանքներէն ու ծափահարութիւններէն, երթալ եւ տփնաջանօրէն աշխատելու համար մարդոց փրկութեան համար:

11.– «Զ'երթար կորսուածին ետեւէն»: Այս բառերը կը պարզեն որ Յիսուս ի՛նք կ'երթայ կորսուածը գտնելու: Արդ, ինչո՞ւ առակը մեզի կ'ըսէ թէ հովիւը երբ կորսնցնէ իր ոչխարներէն մէկը՝ ի՛նք կ'երթայ եւ կը փնտռէ զայն: Հինգ բան ցոյց տալու համար.–

ա.– Տոյց տալու համար թէ Քրիստոս ի՛նքն է որ կորսուած մարդուն ետեւէն կ'երթայ եւ ո՛չ թէ կորսուած մարդը՝ Քրիստոսի ետեւէն: Հաշտութեան համար դէպի երկինք կարկառուած մարդկութեան ձեռք տեսնելով չէր որ Աստուած որոշեց հաշտեցնել մարդը իր հետ: Աստուած փրկութեան խոստում տուաւ երբ տակաւին միայն երկու մարդ (Ադամ եւ Եւա) գոյութիւն ունէին աշխարհի մէջ (Ծն 3.15): Ան տուաւ փրկութեան խոստում առանց սպասելու որ Ադամ եւ Եւա խոստովանին իրենց գործած յանցանքը, եւ գղջան ու ապաշխարեն իրենց ըրածին համար:

բ.– Տոյց տալու համար թէ կորսուող ոչխարը (մարդը), չի գիտեր վերադարձի ցամբան կամ ձեւը: Այսօր անհաշիւ թիւով մարդիկ կան որոնք չեն գիտեր թէ միայն Յիսուսով կրնան ազատիլ: Եւ անհաշիւ թիւով մարդիկ ալ կան որոնք նոյնիսկ եթէ գիտեն թէ միայն Յիսուսով կրնան ազատիլ, եւ սակայն, չեն գիտեր թէ ի՛նչպէս Յիսուսը պիտի ընդունին իրենց սրտին մէջ:

գ.– Տոյց տալու համար որ կորսուող, այլ խօսքով՝ մեղքի կեանք ապրող մարդը իր սեփական գորութեան, կարողութեան կամ իմաստութեան վստահելով չի կրնար դառնալ Աստուծոյ:

դ.– Եւ մանաւանդ, ցոյց տալու համար որ եթէ Յիսուս ինք մեղաւորին ետեւէն չերթայ եւ զայն չփնտոէ ու չփրկէ՝ անիկա երբեք ալ պիտի չփրկուի: Զուր տեղ չէ որ Յիսուս ըսաւ թէ ինք «եկաւ կորսուածը փնտոելու եւ փրկելու» (Ղկ 19.10): Այո՛, եթէ Յիսուս մեզ չփրկէ՝ մենք չե՛նք փրկուիր: Եթէ Յիսուս մեզ չփնտոէ՝ մենք չե՛նք գտնուիր:

Յիսուս ի՛նքն էր որ գնաց եւ փնտոեց Ադամն ու Եւան (Ծն 3.9): Ի՛նքն էր այն Բարի Սամարացին որ գնաց եւ գտաւ գետին ինկած վիրաւոր մարդը, վերքերը փաթթեց եւ ձեթ ու գինի դրաւ անոնց վրայ (Ղկ 10.33–34): Ի՛նքն էր որ «վեր նայեցաւ» եւ գտաւ Զակէոսը ծառին վրայ եւ փրկեց զայն տունով միասին (Ղկ 19.4–5): Ի՛նքն էր որ գնաց եւ գտաւ «մաքսաւոր մը, Մատթէոս անունով» եւ զայն Աւետարանիչի վերածեց (Մտ 9.9): Ի՛նքն էր որ գնաց եւ գտաւ Պետրոս եւ Անդրէաս եղբայրները, ինչպէս նաեւ Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք «մարդու որսորդ» ըրաւ (Մտ 4.18–22): Եւ այլն:

Ե.– Վերջապէս, Յիսուս առակին ընդմէջէն կը պարզէ թէ ի՛նքն է այն հովիւր որ կ'երթայ կամ կը դրկուի գտնելու կորսուածը, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ Աստուած քերովքէ մը կամ հրեշտակապետ մը պիտի չդրկէր կորսուած մարդիկը իրեն բերելու, այլ Զի՛նք պիտի դրկէր: Եւ ինչո՞ւ: Որպէսզի ամէն փառք ու պատիւ Աստուծո՛յ երթար եւ մի՛այն Աստուծոյ: Արդարեւ, Քրիստոս ի՛նքն էր որ մարդիկը պիտի փրկէր, եւ այդ ընելուն համար, մարդոց փառաբանանքին ու պաշտամունքին առարկան պիտի դառնար: Հարկաւ ասիկա միակ պատճառը չէ թէ ինչո՛ւ հրեշտակապետ մը չեկաւ մարդիկը փրկելու: Տակաւին կան երեք պատճառներ.–

Առաջին.– Հրեշտակապետ մը չէր կրնար դրկուիլ մարդոց փրկութեան համար՝ որովհետեւ հրեշտակները իրե՛նք ալ մարդոց պէս ստեղծուած արարածներ են: Ստեղծիչին արի՛ւնը միայն ստեղծուածներուն մեղքերը կրնար սրբել:

Երկրորդ.– Հրեշտակապետ մը չէր կրնար դրկուիլ, որովհետեւ կարելի չէ պատկերացնել որ մեր գթառատ Աստուածը թոյլ տար որ իր ստեղծածներէն մէկը գոհուէր մարդոց փրկութեան համար:

Երրորդ.– Հրեշտակապետ մը չէր կրնար դրկուիլ սրբելու համար մեր մեղքերը, որովհետեւ մենք Աստուծո՛յ դէմ մեղք կը գործենք, ուստի միայն Աստուած՝ կրնար սրբել իրեն դէմ գործուած մեղքը:

12.– «Մինչեւ որ գտնէ զայն»: Ի՞նչ ցոյց կու տայ «մինչեւ» բառը: Քանի մը բան.–

ա.- Յոյց կու տայ որ մեր հովիւը՝ Քրիստոս, չի դադարի մեղաւորները փնտռել «մինչեւ» որ գտնէ գանոնք: Իր առաքելութիւնը կիսատ չի թողուր:

բ.- Յոյց կու տայ որ դժուարութիւններ եւ փորձութիւններ չեն կրնար պատճառ ըլլալ որ Քրիստոս հրաժարի մեղաւորներուն փրկութիւնը հետապնդելու աշխատանքէն, «մինչեւ» որ իրագործէ գանձիկա:

գ.- «Մինչեւ» բառը ցոյց կու տայ որ Յիսուս նպատակ մը ունի եւ այդ նպատակէն չի հրաժարիր եւ չի լքեր մեղաւորները նոյնիսկ եթէ անկամութիւն եւ անհաւատութիւն գտնէ անոնց մօտ, «մինչեւ» իրագործուի իր նպատակին:

դ.- «Մինչեւ» բառը կը պարզէ որ Յիսուս միջոցներ կ'որոնէ կորսուած մարդոց սրտին մէջ հաւատք ու սէր արթնցնելու համար Աստուծոյ հանդէպ: «Մինչեւ» բառին մասին խօսած ենք նաեւ Ղկ 15.8-ը բացատրած ատեն:

13.- «Մինչեւ որ գտնէ գայն»: Հաստատեցիմք թէ Յիսուս ի՛նքն է որ կորսուած մարդիկը կը փնտռէ եւ կը գտնէ, բայց ի՞նչպէս կը փնտռէ եւ կը գտնէ: Քանի մը ձեւերով.-

ա.- Կը փնտռէ ու կը գտնէ իր խօսքին փարոգութեան միջոցաւ: Ամէն անգամ երբ կը լսենք Աստուծոյ խօսքը, կը գգանք որ անիկա մեզի ուղղուած է եւ մեզ կը հրաւիրէ Քրիստոսի գալու: Պօղոս առաքեալ կը վկայէ թէ «հաւատքը ծնունդ կ'առնէ փարոգութիւնը լսելէն. իսկ փարոգութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը փարոգուին» (Հո 10.17):

բ.- Յիսուս մեզ կը փնտռէ ու կը գտնէ Սուրբ Հոգիին թակումներուն եւ հպումներուն միջոցաւ: Սուրբ Հոգին ամէն վայրկեան եւ ամէն երկվայրկեան կը գործէ մեր սրտին մէջ եւ կը բաղիւ մեր սրտին դուռը որպէսզի բանամք գայն Տէր Յիսուսի դիմաց: Մեզմէ որո՞նց հետ չէ պատահած որ յանկարծ աղօթելու զօրաւոր փափաք մը արթննայ իր մէջ: Ասիկա ուրիշ բան չէ եթէ ոչ Սուրբ Հոգիին հպումը մեր սրտին՝ մեզ Յիսուսի բերելու նպատակով:

գ.- Յիսուս մեզ կը փնտռէ կեանքի գանազան երեւոյթներուն, դէպքերուն, աղէտներուն ու փորձութիւններուն միջոցաւ: Յաճախ փորձութիւնները, հիւանդութիւնները, աղէտները իրենք չե՞ն որ մեզ Յիսուսի կը բերեն:

դ.- Յիսուս մեզ կը փնտռէ մարդոց միջոցաւ: Յաճախ Յիսուս մեր նմաններուն միջոցաւ կը խօսի մեզի, կ'ուղղէ, կը յանդիմանէ, կը բաշակերէ, կը մխիթարէ, կը հրաւիրէ, կը պատուիրէ, բայց մենք դժբախտաբար չենք անդրադառնար այդ բոլորին: Աստուած նոյնիսկ

երբեմն անհաւատ մարդոց միջոցաւ կը խօսի մեզի, մեզ ատող մարդոց միջոցաւ, մեզ քննադատողներուն միջոցաւ, մանուկներուն միջոցաւ, «սկանչ ունեցողը թոս լսէ» (Մտ 13.9):

14.- «Չի՞ ձգեր իննսունինը (ոչխարները) արօտավայրին մէջ եւ չ'ե՞րթար կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ զայն»: Տիրոջ այս խօսքը ըսելիք ունի մեզի՝ հոգեւոր հովիւներու: Ինչպէս Յիսուս ձգեց երկինքն ու իրեն ուղղուած երկնային փառաբանութիւնները եւ եկաւ կորսուածը գտնելու, հօտէն հեռացածը՝ հօտին բերելու, փրկութեան փարախէն հեռացածը՝ փարախ բերելու, մենք՝ հոգեւոր հովիւներս եւս, հետեւելով մեր Տիրոջ ու Հովիւին օրինակին, պատրա՞ստ ենք երթալու անոնց որոնք հեռու են եկեղեցիէն՝ որպէսզի զանոնք եկեղեցի բերենք: Պատրա՞ստ ենք երթալու կորսուածին ետեւէն՝ որպէսզի զայն Փրկիչին բերենք: Հոգեւոր հովիւներ պէտք չէ գոհանան եկեղեցի եկող 99 ոչխարներով, այլ խօսքով՝ եկեղեցի յանախող հաւատացեալներու բազմութեամբ, այլ պէտք է երթան եւ գտնեն այն մարդիկը որոնք հեռո՛ւ են եկեղեցիէն, հեռո՛ւ են Աստուծմէ ու Աստուածաշունչէն, հեռո՛ւ են հոգեւոր կեանքէն, եւ զանոնք բերեն Քրիստոսի ու միացնեն Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիին:

«Եւ երբ գտնէ՝ ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ» (Ղկ 15.5-6): Քանի մը հաստատումներ.–

1.- Նկատառելի է Յիսուսի ուրախութիւնը մեղաւորի մը դարձին առիթով: Յիսուս կ'ուրախանայ երբ կը տեսնէ որ մարդիկ ապաշխարութեամբ դարձի կու գան Աստուծոյ: Թէպէտ «դարձի գալ» բացատրութիւնը գործածեցինք, բայց պէտք է լաւ գիտնալ եւ միշտ յիշել, որ մեզ դարձի բերողը Քրիստոս ի՛նքն է: Չմոռնանք որ ի՛նքն էր կորսուած ոչխարին ետեւէն գացողը եւ զանիկա տուն վերադարձնողը:

Մէկը կրնայ հարց տալ ըսելով.– «Եթէ Քրիստոս ի՛նքն է մարդիկը դարձի բերողը, ապաշխարութեան մղողը, այդ պարագային, ինչո՞ւ դարձի չի բերեր բոլոր մարդիկը. արդեօք ան չ'ն՞ուզեր որ բոլոր մարդիկը փրկուին»: Կասկած չկայ որ Յիսուս կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին, բայց հարցը Քրիստոսի հետ չէ, այլ՝ մարդոց հետ: Մարդիկ իրենք կ'ուզե՞ն փրկուիլ, կը փափաքի՞ն փրկուիլ: Եւ եթէ կը փափաքին՝ ի՞նչպէս կ'արտայայտեն իրենց փափաքը: Եթէ Քրիստոս փրկութեան լուրջ փափաք գտնէ մարդու մը մօտ՝ իսկոյն կը հասնի անոր եւ զայն իր ուսերուն վրայ դնելով՝ «տուն» կը տանի: Քրիստոս մարդոց դրական փափաքները գնահատել գիտէ, սակայն, ան չի՛ փրկեր մէկը որ փրկութեան փափաք չունի, երկինք չ'ա՛նաջնորդեր որ հետաքրքրութիւն չունի երկինքի հանդէպ, սէր չունի՛ Աստուծոյ նկատմամբ:

Ուրիշ մը կրնայ հարց տալ՝ ըսելով. «Ինչպէս Յիսուս կորսուած ոչխարին ետեւէն գնաց, եւ փնտոնեց զայն մինչեւ որ գտաւ, ինչո՞ւ նաեւ իմ ետեւէն չի գար եւ չի փնտոներ զիս մինչեւ որ գտնէ»: Նման հարցում հարցնողին, հետեւեալը կ'ըսեմ.– Մէկ հատիկ կորսուած ոչխարը որ Յիսուսի կողմէ փնտոնեցաւ ու գտնուեցաւ, ամբողջ անկեալ մարդկութիւնն է որ կը ներկայացնէ, եւ ուստի, քե՛զ ալ կը ներկայացնէ: Միթէ դուն քեզ այդ կորսուած ոչխարը չե՞ս նկատեր: Միթէ դուն քեզ անկեալ մարդկութեան անդամ չե՞ս սեպեր: Եթէ դուն քեզ այդպիսին կը նկատես, ուրեմն, Յիսուս քե՛զ ալ կը փնտնէ: «Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղիսեմ» (Յտ 3.20): Այս խօսքը քեզի ուղղուած չե՞ս նկատեր: Այս խօսքը ցոյց չի՞ տար որ Յիսուս քեզ կը փնտնէ: Տոյց չի՞ տար որ կը սպասէ որ լսես իր թակումները եւ սրտիդ դուռը բանաս իր առջեւ:

2.– «Իր ուսերուն վրայ կը դնէ»: Ուսերուն վրայ դնելը կը պատկերացնէ քանի մը ճշմարտութիւններ.–

ա.– Տղա դարու հեղինակ՝ Ստեփանոս Սիւնեցի, կ'ըսէ. «Կորսուած ոչխարը կը ներկայացնէ այն մարդը, որ մեղքերով եւ անօրէնութեամբ կորսուած է, եւ զոր Մարդու Որդին եկաւ փնտոնելու եւ ապրեցնելու՝ զայն կրելով իր ուսերուն վրայ, որովհետեւ մեր մեղքերն ու անօրէնութիւնները կրեց մարմինով՝ իր ուսերով, որոնց վրայ խաչը կրելով գնաց դէպի չարչարանները»: Համաձայն Ստեփանոս Սիւնեցիի եւ այլ մեկնիչներու, «ուսին վրայ կրելը»՝ իր մարմինով մարդուն մեղքերը քանել կը նշանակէ: Յիշեցէք որ Պետրոս առաքեալ նաեւ նոյն բանը կ'ըսէ. «Մեր մեղքերը ի՛նք կրեց, իր մարմինով՝ խաչին վրայ, որպէսզի մեղքի տիրապետութենէն ազատած՝ արդարութեան համար ապրինք» (Ա.Պտ 2.24): Պօղոս առաքեալ եւս կը վկայէ որ Յիսուս «իր մարմինին մէջ դատապարտեց մեղքը» (Հռ 8.3):

բ.– Ոչխարը ուսերուն վրայ դնելը՝ ցոյց կու տայ թէ մեղքին մէջ կորսուած մարդը անկարող է իր սեփական ուժով քանելու Քրիստոսի ետեւէն: Ան կարիք ունի շակուելու Քրիստոսի կողմէ: Ինչպէս վիրաւոր ոչխարը չի կրնար իր սեփական ուժով քանել, այնպէս ալ մեղքով խոցոտուած մարդը չի կրնար իր սեփական զօրութեամբ Քրիստոսի հետեւիլ: Ուսին վրայ առնուիլը, հետեւաբար, կը պարզէ մարդուն անկարողութիւնն ու անատակութիւնը իր անձնական ճիգով քանելու փրկութեան նամբէն: Մարդ արարածը չի կրնար քանել փրկութեան նամբէն եթէ Քրիստոս նանապարհորդակից չըլլայ իրեն: Չվստահինք մեր ոտքերուն, այլ՝ Յիսուսի ուսերուն: Չապաւինինք մեր կամքին, այլ՝ Յիսուսի սիրոյն:

գ.– Ոչխարը ուսերուն վրայ դնելը՝ սիրոյ արտայայտութիւն է: Աստուած սէ՛ր կը ցուցաբերէ նորադարձ մարդուն նկատմամբ եւ ո՛չ թէ խստութիւն: Հովիւը կորսուած ոչխարը գտնելէ ետք, պարանը անոր վիզէն անցնելով, գայն չճաշկոտեց իր ետեւէն, ընդհակառակը, խոնարհեցաւ դէպի անոր եւ գայն գուրգուրանքով շալկեց ու գգուեց եւ ուսերուն վրայ դնելով տուն դարձաւ: Այս իրողութիւնը ցոյց կու տայ այն՝ թէ Քրիստոս խստութեամբ եւ անգութօրէն չի վերաբերիր ոչխարներուս հետ, այլ սիրով, համբերութեամբ եւ քաղցրութեամբ:

դ.– Ոչխարը ուսերուն վրայ դնելը՝ մեղաւոր մարդը աշխարհէն վեր բարձրացնել կը նշանակէ: Զայն մեղքի ստրկութենէն ազատագրել կը նշանակէ: Զայն Զարին յարձակումներուն դիմաց պաշտպանել կը նշանակէ:

ե.– Ոչխարը ուսերուն վրայ դնելը՝ մեղաւոր մարդը երկնաւոր Հօր ներկայացնել կը նշանակէ, գայն Աստուծոյ հետ հաշտեցնելու եւ հայր ու որդիի յարաբերութիւնը վերականգնելու անոնց միջեւ:

զ.– Ոչխարը իր ուսերուն վրայ դնելը՝ իր խաչելութեան նախապատկերացումն էր: Համաձայն 4-րդ դարու հեղինակ Ս. Ամբրոսիոսի. «Յիսուսի երկու թեւերը կը ներկայացնեն խաչին երկու թեւերը»: Ուստի, մեղաւորը թեւերով շալկելն ու ուսերուն վրայ դնելը՝ ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ մեր մեղքերուն շալկուիլը Քրիստոսի կողմէ եւ խաչափայտին վրայ գամուիլը:

է.– Ոչխարը իր ուսերուն վրայ դնելը՝ իր գօրութիւնը ցոյց կու տայ, միաժամանակ, ոչխարներուն իր գօրակցութիւնը կը յայտնէ: Այս մասին Matthew Henry կ'ըսէ. «Երբեմն կ'ըսուի թէ Յիսուս իր ոչխարները կը կրէ իր թեւերուն վրայ եւ կը շալկէ իր գրկին մէջ, իր գութն ու կարեկցութիւնը ցուցաբերելու համար անոնց հանդէպ, իսկ այստեղ կ'ըսուի, թէ կորսուած ոչխարը գտնելէ ետք՝ «ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ», այս անգամ, ցոյց տալու համար իր գօրութիւնը, որով ան կը գօրացնէ ու կը պաշտպանէ իր ոչխարները: Զե՛ն կորսուիր այն ոչխարները՝ որոնց Յիսուս կը շալկէ իր ուսերուն վրայ»:

Յ.– «Եւ տուն կը դառնայ»: Ի՞նչպէս պէտք է հասկնալ «տուն դառնալ» կամ «ոչխարը տուն տանիլ» բացատրութիւնը.–

ա.– Նախ պէտք է նկատի առնել որ տուն դարձողը Քրիստոս ի՛նքն է: Այս իմաստով, երբ կ'ըսենք թէ Քրիստոս մեղաւոր մարդկութիւնը գտնելէ ու փրկելէ ետք՝ տուն դարձաւ, կը նշանակէ, այն աստուածային փառքը որմէ կամաւորապէս մերկացած էր՝ գայն վերստին իր վրայ առաւ, կամ աւելի ճիշդը, վերստին իր տունը դարձաւ, կը նշանակէ՝

դարձնել իր աստուածային փառքին ու փառաւորութեանը մէջ մտաւ: Ուշադիր պէտք է ըլլայ հետեւեալին:-- Յիսուս իր աստուածային էութենէն հրաժարելով չէր որ աշխարհ եկաւ, այլ իր աստուածային փառքէն ու պատիւէն:

բ.-- Ոչխարը տուն տանիլ, կը նշանակէ մեղաւոր մարդկութիւնը վերադարձնել երկինք՝ իր Հօրեանական տունը, իր արմատներուն: Աստուած ստեղծեց մարդը որպէսզի իր ներկայութեան մէջ ապրի, իրեն զաւակ ըլլայ եւ իր ուրախութեան առարկան դառնայ: Մեղքը դադրեցուց Աստուծոյ եւ մարդուն հօր եւ որդիի յարաբերութիւնը եւ հեռացուց մարդը Աստուծոյ ներկայութենէն: Հետեւաբար, կորսուած մարդը տուն բերել, կը նշանակէ զանիկա վերստին Աստուծոյ ներկայութեան բերել, եւ վերականգնել Աստուծոյ եւ մարդուն միջեւ Հօր եւ որդիի յարաբերութիւնը:

գ.-- «Տուն» բացատրութեամբ Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի եւ սորվեցնել որ երկինքի արքայութիւնը տունի մը պատկերը պիտի ունենայ, տունի մը ջերմութիւնը պիտի ունենայ, տունի մը մտերմութիւնը պիտի ունենայ, ուր Աստուած եւ մարդ իրարու հետ պիտի վերաբերին սիրալիր կերպով, ինչպէս հայր մը իր որդիին հետ կը վերաբերի:

դ.-- Չմոռնանք նաեւ որ Յիսուս աշխարհ եկաւ 100-էն բաժնուած 1-ը վերստին 100-ին միացնելու, այլ խօսքով՝ մարդկութիւնը վերստին մօտեցնելու հրեշտակներու բանակներուն: Հետեւաբար, ոչխարը տուն տանիլ, կը նշանակէ մեղաւոր մարդիկը միացնել ու մօտեցնել անմեղ հրեշտակներուն եւ զանոնք դնել անոնց պաշտպանութեան ներքեւ: Այժմ հրեշտակներու բանակին միացած եւ հրեշտակացած ուսուցիչս՝ Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Քրիստոս եկաւ մարդիկը փնտռելու եւ հրաւիրելու զանոնք որ տեղը առնեն անկեալ հրեշտակներուն, այսինքն՝ Սատանային եւ անոր արբանեակներուն, որոնք այդ հրեշտակային դասերէն մէկն էին միայն»:

«Կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց.-- Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ» (Ղկ 15.6): Քանի մը հաստատումներ:--

1.-- Որո՞նք են հոս յիշուած «բարեկամներն ու դրացիները»: Որոշ մեկնիչներ զանոնք կը նկատեն սուրբ եւ արդար մարդիկը, որոնք հաւատքով ննջած են, եւ որոնք կը գտնուին դրախտին մէջ, այլ խօսքով՝ Աստուծոյ ներկայութեան մէջ, ուր ինչպէս աւագակը ինք գնաց Քրիստոսի հետ ըլլալու դրախտին մէջ (Ղկ 23.43): Եւ սակայն, մեկնիչներուն մեծ մասը, հոս յիշուած «բարեկամներն ու դրացիները»,

ինչպես նաև կորսուած դրամին առակին մէջ յիշուած «բարեկամուհիներն ու դրացիները» ակնարկութիւն կը նկատեն հրեշտակներուն: Երկրորդ այս բացատրութիւնը աւելի ճիշդ ու աւելի տրամաբանական է:

2.- Ինչո՞ւ Յիսուս հրեշտակները «բարեկամ» եւ «դրացի» կը կոչէ: Քանի մը պատճառներով.-

ա.- Հրեշտակները «բարեկամ» կը կոչուին որովհետեւ անոնք Աստուծոյ բարի արարածներն են, բարին գործող եւ մարդոց համար բարին կամեցող էակներ են:

բ.- Անոնք «բարեկամ» կը կոչուին որովհետեւ Աստուծոյ բարի ու սուրբ կամքը կատարողներ են:

գ.- Անոնք «բարեկամ» կը կոչուին որովհետեւ Աստուծոյ սուրբ ու բարի կամքը մարդոց յայտնողներն են:

դ.- Անոնք «բարեկամ» կը կոչուին, ոչ միայն որովհետեւ Աստուծոյ սուրբ ու բարի կամքը մարդոց յայտնողներն են, այլեւ՝ օգնողներն են մարդոց որ կատարիչները ըլլան Աստուծոյ բարի կամքին:

ե.- Անոնք «բարեկամ» կը կոչուին մանաւանդ որովհետեւ կ'ուզեն ու կը հետապնդեն մարդոց փրկութիւնը, կ'օգնեն անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժողանգեն (Եբր 1.14): Կա՞յ ասկէ աւելի բարի բան մեզի համար:

զ.- Գալով «դրացի» կոչումին: Մեր այսօրուան լեզուին մէջ, մենք դրացի բառը կը գործածենք մէկու մը համար որուն տունը մեր տան մօտ է: Այս իմաստով, հրեշտակները դրացի կը կոչուին, նախ ցոյց տալու համար որ անոնք կ'ապրին Աստուծոյ անմիջական ներկայութեան մէջ: Անոնք Աստուծոյ հետ են, անոր բով են, անոր կողքին են, մի'շտ պատրաստ կատարելու անոր սուրբ կամքն ու հրահանգները:

է.- Անոնք «դրացի» կը կոչուին, միաժամանակ յիշեցնելու համար մեզի որ անոնք ոչ միայն Աստուծոյ մօտիկ են, այլեւ՝ մեզի: Հոս կը հերքուի տեսակէտը այն մարդոց, որոնք կ'ըսեն թէ հրեշտակները չեն կրնար մեզի մօտիկ ըլլալ, որոնք կ'ըսեն թէ հրեշտակները անտեղեակ են երկրի վրայ պատահող իրադարձութիւններէն, մարդոց քաջածնեղութիւններէն, եւայլն: Այս հարցը այնքան պարզ է, - մանաւանդ Աստուածաշունչը գիտցողներուն համար, - որուն մասին խօսիլ չեմ ուզեր:

ը.- Իսկական դրացին այն մարդը չէ որուն տունը մեր տան մօտ է, այլ այն՝ որ հարկ եղած ժամանակ օգնութեան ձեռք կ'երկարէ, այլ խօսքով, այն՝ որ կ'օգնէ օգնութեան կարօտ մարդոց, նեցուկ ու պաշտպան կը կենայ իր նմաններուն: Այս իմաստով, հրեշտակները «դրացի» կը կոչուին, ցոյց տալու համար որ անոնք մարդոց օգնող

արարածներ են (Եբր 1.14), յանախ մարդիկը փորձութեանց դէմ պաշտպանող էակներ են, եւ ատիկա Աստուծոյ կողմէ իրենց յանձնուած պարտականութիւն է:

3.- «Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»: Յաջորդ համարին մասին խօսած ատեն պիտի բացատրենք թէ ինչո՛ւ հրեշտակները կ'ուրախանան մեղաւորի մը դարձին համար, բայց հոս կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել ուրիշ երկու կարեւոր կէտերու վրայ.-

ա.- Ուշագրաւ է որ մեր հովիւը՝ Քրիստոս, չ'ըսեր՝ «ուրախացէ՛ք ոչխարիս հետ», կամ՝ «ուրախացէ՛ք ոչխարիս համար», այլ կ'ըսէ. «Ուրախացէ՛ք ինձի հետ»: Սա ցոյց կու տայ որ հաւատացեալներուն ուրախութեան ու ցնծութեան առարկան Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ արքայութեան մէջ: Շեշտը Քրիստոսի անձին վրայ կը դրուի, որովհետեւ Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ ուրախութիւնը երկինքի:

Քրիստոս ոչ միայն մեր ուրախութեան առարկան է եւ պիտի ըլլայ, այլեւ ուրախութեան եւ գուարնութեան առարկան է մեր երկնաւոր Հօր (Առ 8.30), ինչպէս նաեւ երկինքի հրեղէն բոլոր մարմիններուն: Քրիստոս ուրախութեան Աստուածն է (Սղ 16.11), ուստի անոր հետ եղողը՝ յաւերժապէս ուրախ պիտի ըլլայ:

Յիշեցէ՛ք Յիսուսի խօսքը ուղղուած աւագակին. «Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ» (Ղկ 23.43): Հոս եւս Յիսուս շեշտը ինքնիր անձին վրայ կը դնէ: Ան աւագակին չ'ըսեր՝ «պիտի ըլլաս դրախտին մէջ», այլ կ'ըսէ. «**Ինձի հետ** պիտի ըլլաս դրախտին մէջ»: Դրախտը Յիսուսի հետ ըլլալն է: Դրախտը Յիսուսի ներկայութիւնն է: Յիսուս իր ներկայութիւնն է որ կը խոստանայ աւագակին եւ ո՛չ թէ լոկ դրախտը: Չկա՛յ դրախտ առանց Յիսուսի ներկայութեան եւ ո՛չ ալ Յիսուսի ներկայութիւն՝ առանց դրախտի: Ուր որ է Յիսուս՝ հո՛ն է դրախտը, հո՛ն է երկինքը, հո՛ն է արքայութիւնը, իսկ ուր որ բացակայ է Յիսուս՝ հոն դժո՛խք է, հոն գեհե՛ն է, հոն կորո՛ւստ ու տառապա՛նք է:

բ.- Երբ Յիսուս կը հրաւիրէ հրեշտակները որ ուրախանան իրեն հետ իր գտած ոչխարին համար, խորքին մէջ, ան կ'ուզէ կապ մը ստեղծել փրկութիւնը ընդգրկող մարդոց եւ հրեշտակներուն միջեւ: Արդարեւ, երբ մարդիկ դառնան հետեւորդներ Քրիստոսի՝ միաժամանակ կը դառնան ընկերներ ու բարեկամներ հրեշտակներու, եւ այնուհետեւ, կը սկսին վայելել պաշտպանութիւնը, օգնականութիւնը, գորակցութիւնը, բարեխօսութիւնը երկնային բոլոր մարմիններուն:

«Կ'ըսեմ ձեզի, երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին» (Ղկ 15.7): Քանի մը մատնանշումներ.–

1.– Որո՞նք են անոնք որոնք երկինքի մէջ ուրախութիւն կ'ընեն կամ կ'ուրախանան երբ մեղաւոր մը դարձի գայ: Բնականօրէն առաջին եւ ամենէն շատ ուրախացողը Աստուած ի՛նք կ'ըլլայ: Բայց հրեշտակները իրե՛նք նաեւ կ'ուրախանան, ինչպէս Յիսուս ինքն իսկ կ'ըսէ. «Աստուծոյ հրեշտակները... պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ» (Ղկ 15.10): Ինչո՞ւ հրեշտակները կ'ուրախանան: Քանի մը պատճառներով.–

ա.– Անոնք կ'ուրախանան, որովհետեւ Աստուծոյ կամփին կատարումն է որ կը տեսնեն, եւ Աստուծոյ կամքը այն է՝ «որ բոլոր մարդիկը փրկուին» (Ա.Տմ 2.4):

բ.– Անոնք կ'ուրախանան, որովհետեւ կը տեսնեն իրենց տարած աշխատանքին արդիւնքը, եւ ի՞նչ աշխատանք կը տանին անոնք մեզի համար: Անոնք կ'աշխատին մեր փրկութեան համար: Պօղոս առաքեալ խօսելով հրեշտակներուն մասին՝ կ'ըսէ. «Հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14):

գ.– Անոնք կ'ուրախանան որովհետեւ հրեշտակ մըն է որ կ'աւելնայ իրենց շարքին: Արդարեւ, մենք չե՞նք կոչուած հրեշտակի նման ըլլալու (Մտ 22.30):

դ.– Հրեշտակներուն ուրախանալը ցոյց կու տայ որ անոնք անտարբեր չեն մարդոց փրկութեան հանդէպ, ինչպէս որոշ հոսանքներ կ'ուսուցանեն:

2.– «Երկինքի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ»: Երկինքն ու անոր Պահակալը կ'ուրախանան երբ երկրաւոր արարածներ Քրիստոսի միջոցաւ կու գան անդամագրուելու երկինքի թագաւորութեան:

Յատկանշական է որ կորսուած ոչխարի առակին մէջ երեք անգամ ուրախութեան ակնարկութիւն կը գտնենք: Առաջին անգամ, երբ Հովիւր կը գտնէ կորսուած ոչխարը՝ գայն ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ (15.5), երկրորդ անգամ, երբ տուն կը տանի ոչխարը եւ կոչ կ'ուղղէ իր բարեկամներուն եւ դրացիներուն գալու եւ իրեն հետ ուրախանալու (15.6), եւ վերջապէս, երբ կը հաստատէ թէ երկինքի մէջ ուրախութիւն կ'ըլլայ մեղաւորի մը դարձին համար (15.7):

Թէ երկինքի մէջ իսկապէս եւ իրական ուրախութիւն կ'ըլլայ երբ կորսուած մը իր Հօրեմական տունը դառնայ՝ անոր փաստն ու

ապացոյցը Քրիստոս տուաւ անառակ որդիին առակին ընդմէջէն: Երբ կրտսեր գաւակը տուն դարձաւ, հայրը հրամայեց իր ծառաներուն բերել պարարտ հորթը, մորթել, ուտել եւ ուրախանալ (Ղկ 15.23): Բայց ասկէ աւելի հետաքրքրական եւ գորաւոր հաստատում մը կը գտնենք պատմութեան շարունակութեան վրայ: Մեզի կ'ըսուի, թէ երէց գաւակը որ ագարակ կը գտնուէր, «վերադարձին, երբ տան մօտեցաւ, երգի ու պարի ձայներ լսեց» (Ղկ 15.25): Երգի ու պարի ձայները կը պատկերացնեն Աստուծոյ եւ երկնային մարմիններուն ապրած անպատմելի ուրախութիւնը մեղաւորներու դարձին առիթով:

3.- «Քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին»: Երկու մատնանշումներ.-

ա.- Արդէն ըսինք որ հոս յիշուած «իննսունինը արդարները» կը ներկայացնեն հրեշտակները «որոնք ապաշխարութեան պէտք չունին»: Անոնք չեն կրնար մարդիկը ըլլալ, որովհետեւ մարդոց մէջ «մէկ հատիկ արդար իսկ չկայ...: Ամէնքն ալ խոտորեցան, բոլորն ալ անպէտ դարձան: Չկայ մէկը որ շիտակը գործէ. չկայ մէկը, ո՛չ իսկ մէկը» (Հո 3.10-12):

բ.- Ինչո՞ւ այստեղ կը հաստատուի թէ հրեշտակները «ապաշխարութեան պէտք չունին»: Խորքին մէջ Յիսուս ծածուկ կերպով նշմարտութիւն մըն է որ մեզի ցոյց կու տայ: Ի՞նչն է այդ նշմարտութիւնը: Երբեմն մարդիկ հարց կու տան թէ արդեօք այն բարի հրեշտակները որոնք ապստամբեցան Աստուծոյ դէմ եւ չար ու պիղծ ոգիներու վերածուեցան՝ կրնա՞ն ապաշխարել, կրնա՞ն դարձի գալ եւ ներում ստանալ: Յիսուս կու տայ պատասխանը այս հարցումին երբ կը հաստատէ թէ անոնք «ապաշխարութեան պէտք չունին»: Ճիշդ է որ այս խօսքը արդար հրեշտակներուն համար ըսուած է, բայց նաեւ անիկա, ինչպէս ըսի, ցոյց կու տայ մեզի թէ ապաշխարութիւնը հրեշտակներուն համար չէ, անոնք ըլլան բարի թէ չար:

4.- Թէպէտ անմիջականօրէն մեր նիւթին հետ կապ չունի բացատրել թէ ինչո՞ւ Սատանան եւ անոր չար արբանեակները չեն կրնար ապաշխարել, բայց ամփոփ կերպով բացատրեմ թէ ինչո՞ւ: Քանի մը պատճառներով.-

ա.- Մարդիկ գիտութեամբ կատարեալ չստեղծուեցան. անոնք փորձառաքար ամէն ինչ պիտի սորվէին եւ գիտնային. մինչդեռ հրեշտակներ գիտութեամբ կատարեալ ստեղծուեցան. անոնք փորձառաքար բան մը սորվելու հարց չունէին. ուստի երբ մեղանչեցին՝ անոնք կատարեալ գիտութիւնը ունէին իրենց գործած մեղքին, ահա թէ ինչո՞ւ անոնց համար ներում չկայ: Եզեկիէլի մարգարէութեան մէջ մեղանչող քերթիւնը համար գործածուած է «կատարելութեան կնիք», «իմաստու-

թեամբ լեցուած» եւ «նամբաներուդ մէջ կատարեալ» բնորոշումները (Եզ 28.12, 15): Այս բոլոր բացատրութիւնները կը պարզեն որ երկնային մարմինները կատարեալ գիտութիւն ունէին եւ ունին: Հարկաւ երբ կը հաստատենք թէ հրեշտակները կատարեալ գիտութիւն ունին, ըսել չենք ուզեր որ անոնք ամենագէտ են, ըսել ուզուածը պարզապէս այն է՝ որ անոնք կատարեալ գիտութիւնը ունէին իրենց պաշտօնին, իրենց դիրքին, իրենց ըրածին ու ընելիքին:

բ.– Առիթով մը ըսի. «Մարդը կրնայ փոխել իր կեանքի ընթացքը եւ ընտրել չար նամբան, բայց յետոյ գոչալ ու վերստին հեռանալ իր չար նամբէն, իսկ հրեշտակ մը, ընտրելէ ետք չար նամբան՝ ալ չի կրնար հրաժարիլ անկէ: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ մարդը փոփոխական է, իսկ հրեշտակները՝ անփոփոխ»:

գ.– Զարեհ Ա.բ. Ազնաւորեան խօսելով տուեալ հարցին մասին՝ կ'ըսէ. «Հրեշտակները իրենց ստեղծումէն ետք, իրենց վերջնական ընտրութիւնը կատարեցին, եւ այդ ընտրութիւնը յաւիտեանական ընտրութիւն մըն էր: Ոմանք հակեցան չարին կողմը, եւ ոմանք՝ բարիին կողմը: Ոմանք ընտրեցին անհնազանդութեան նամբան, իսկ ուրիշներ՝ Աստուծոյ կամքին հնազանդելու նամբան: Ընտրութիւնը միանգամընդմիջտ կատարեցին եւ այլեւս այն ընտրութիւնը անփոփոխելի է: Աստուած չի կրնար խրատել անոնց որ դառնան իրենց չար նամբէն ու որոշումներէն»:

դ.– Այլ պատճառ մը թէ ինչու անկեալ հրեշտակները չեն կրնար ապաշխարել, այն է՝ որ Աստուածաշունչը բնա՛ւ այդ մասին չի խօսիր: Առիթով մը ըսի. «Աստուածաշունչին մէջ բնա՛ւ չենք կարդար Սատանային ուղղուած ապաշխարութեան հրաւերի մը կամ դարձի գալու կոչի մը մասին: Ո՛չ Հին Կտակարանը եւ ո՛չ ալ Նոր Կտակարանը, նուազագոյն ակնարկութիւն կ'ընեն թէ մեղանշող հրեշտակները կրնան ապաշխարել եւ փրկուիլ, կամ թէ Յիսուս իր արիւնը անոնց համար ալ թափեց: Բան մը որուն մասին Աստուածաշունչը չի խօսիր՝ մենք չպահանջենք Աստուծմէ»:

ե.– Յիսուս իր մարմինով սրբեց մարմնաւորներուս մեղքերը (Եբր 10.10: Ա.Պտ 2.24): Անկեալ հրեշտակները անմարմին են, ուստի Յիսուս չէր կրնար իր մարմինով սրբել անմարմին հրեշտակներուն մեղքերը: Որպէսզի մարմնաւորներս փրկուէինք՝ Աստուած ի՛նք պէտք էր մարմին առնէր եւ մեռնէր մեզի համար, որովհետեւ մարմնաւորներուս մեղքերը միայն մարմինի մը մահացումով կրնար սրբուիլ: Իսկ որպէսի հոգի եղող հրեշտակները փրկուին՝ պէտք էր հոգի մը մեռնէր անոնց համար, բայց քանի որ հոգին չի մեռնիր, ուրեմն, հրեշտակները չեն կրնար

փրկուիլ, եւ քանի չեն կրնար փրկուիլ, ուրեմն, իրենց համար չկա՛յ
ապաշխարութիւն:

Անկեալ հրեշտակներուն ապաշխարել չկարենալուն հարցին
վերաբերեալ խօսած եմ «Աստուածաշունչին պատասխանները ժողո-
վուրդի հարցումներուն» գիրքիս մէջ: Տե՛ս պատասխանը 9-րդ
հարցումին:

ԿՈՐՍՈՒԱԾ ԴՐԱՄԻՆ ԱՌԱԿԸ

«Ենթադրենք թե կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, նրազը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'ա՞լեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. "Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ": Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ» (Ղկ 15.8-10):

Ամփոփ մեկնութիւն

Առակին մէջ յիշուած «կինը» կը ներկայացնէ Քրիստոսը: «Տասը արծաթ դահեկան»ը կը ներկայացնէ հրեղէն ու հողեղէն մարմինները, կորսուող մէկ արծաթ դահեկանը՝ մարդկութիւնը, իսկ մնացեալ ինը արծաթ դահեկանները՝ հրեշտակներուն ինը դասերը: Ճրագը Քրիստոս ինքն է, իսկ նրագին լոյսը՝ Աւետարանն է: «Տուն»ը կը պատկերացնէ աշխարհն ու անհատ մարդը, իսկ տունը «ալել»ը՝ աշխարհն ու մարդը մաքրելու ու սրբելու գործողութիւնն է որ ցոյց կու տայ: «Բարեկամուհիներն ու դրացիները» հրեշտակներն են, որոնք կը կանչուին Տիրոջ կողմէ ուրախակից ըլլալու իրեն՝ փրկութիւնը ընդգրկող մարդոց համար:

Հիմա կ'անցնինք ընդարձակ մեկնութեան:

«Ենթադրենք թե կին մը տասը արծաթ դահեկան ունի» (Ղկ 15.8):

Քանի մը մատնանշումներ.–

1.– Առակին մէջ դրամը կորսնցնողը կին է եւ ո՛չ թէ այր մարդ, եւ այդ «կինը» կը ներկայացնէ գՔրիստոս: Ինչո՞ւ Յիսուս գտնէ այս առակին մէջ ինքզինք «կնոջ» մը կամ «մօր» մը կը նմանցնէ: Քանի մը պատմառոններով.–

ա.– Մայր մը աւելի անխոնջ կերպով եւ իր ամբողջ սրտով ու հոգիով կը փնտռէ իր գաւակը եթէ գայն կորսնցնէ քան հայր մը: Ուստի, Յիսուս ինքզինք կը նմանցնէ մօր մը, կարծէք ցոյց տալու համար մեզի, թէ ինք եռանդագին կերպով եւ իր ամբողջ սրտով կը փնտռէ կորսուած մարդիկը:

բ.– Ընդհանրապես մայրը աւելի՛ գուրգուրալից կ'ըլլայ քան հայր մը, բացառութիւններ յարգելի են: Յիսուս ինքզինք կը նմանցնէ մօր մը, որպէսզի պարզէ թէ ինք գուրգուրալից ու գթառատ Փրկիչն է մարդկութեան:

գ.– Մայր մը աւելի՛ կը հասկնայ իր զակիւն քան հայր մը: Յիսուս ինքզինք մօր մը պատկերով կը ներկայացնէ, բացայայտելու համար թէ ինք մեզ շատ լաւ կը հասկնայ եւ գիտէ մեր քաջած բոլոր նեղութիւնները: Պողոս առաքեալ կը հաստատէ թէ «Յիսուս... կրնայ հասկնալ մեր տկարութիւնները եւ կարեկցիլ, քանի ի՛նչ բաներով որ մենք կը փորձուինք՝ ինք եւս փորձուած է, առանց սակայն մեղանշելու» (Եբր 4.15):

դ.– Առակը մեզի կը խօսի իր տունին հանդէպ իր պարտականութիւնը ընող կնոջ մը մասին: Կը տեսնենք թէ ինչպէս նրազը կը վառէ, տունին բոլոր անկիւնները կ'ալէ, գտնուածը կը մաքրէ, եւայլն: Եթէ նկատի առնենք այս կէտը, պարզ կը դառնայ թէ Յիսուս ինքզինք կը նմանցնէ իր պարտականութիւնը ընող կնոջ մը, որպէսզի ցոյց տայ մեզի թէ ինք իր պարտականութիւնը լիովին կատարեց ու կը կատարէ մեզի հանդէպ, բայց մե՛նք է որ կը թերանանք մեր պարտականութեանց մէջ իրեն հանդէպ: Յիսուս ի՞նչ պէտք էր ընէր կամ ի՞նչ կրնար ընել մեր փրկութեան համար եւ չըրաւ (Ես 5.4):

ե.– Տակաւին, Յիսուս ինքզինք մօր մը պատկերով կը ներկայացնէ ուրիշ կարեւոր պատճառով մը որ մեր ուշադրութենէն պէտք է վրիպի: Մենք գիտենք որ մայրն է որ ծնունդ կու տայ զակի: Այս իմաստով, Յիսուս ինքզինք մօր մը պատկերով կը ներկայացնէ, ցոյց տալու համար մեզի թէ ի՛նքն է որ հոգեւոր ծնունդ կու տայ իրեն հաւատացողներուն: Փրկութիւնը, եւ հետեւաբար՝ փրկուածները, պտուղն են խաչին վրայ մեր Տիրոջ թափած արեան:

զ.– Յիսուս ինքզինք մօր մը պատկերով կը ներկայացնէ, որպէսզի յիշեցնէ մեզի, թէ ինչպէս մայր մը տառապանք կը քաշէ մինչեւ որ իր արգանդի մանուկը լոյս աշխարհ բերէ, այնպէս ալ Յիսուս, տառապանքով ծնունդ տուաւ մեր փրկութեան: Տիրոջ տառապանքը հիմնական երկու երեսներով կը ներկայանայ: Ան նախ տառապեցաւ խաչին վրայ, եւ երկրորդ, կը տառապի այսօր, ո՛չ միայն մեզ փրկելու, այլեւ՝ մեր մէջ վերականգնելու իր պատկերն ու նմանութիւնը:

է.– Յիսուս ինքզինք մօր մը պատկերով կը ներկայացնէ, բացայայտելու համար թէ Աստուած սկիզբէն մօր մը նման վերաբերած է մեզի հանդէպ, թէ սկիզբէն մեր եւ Աստուծոյ յարաբերութիւնը՝ կը

նմաներ մօր եւ զակի յարաբերութեան, բայց մենք է որ յօժարակամ նախընտրած ենք կորսուած արծաթ դահեկանին նմանիլ:

ը.- Վերջապէս, թէպէտ փորձեցինք բաղդատական մը ընել եւ նմանութեան եզրեր գտնել Յիսուսի եւ մօր մը միջեւ, բայց պէտք է յիշել որ Յիսուս աւելի՛ն է եւ աւելի՛ն կ'ընէ քան մայր մը: Եսայի մարգարէն կը հաստատէ, թէ նոյնիսկ եթէ մայր մը «իր կաթնկեր մանուկը» մոռնայ, Աստուած ինք, մեզ չի մոռնար ու չի լքեր (Ես 49.15):

2.- «Կին մը տասը արծաթ դահեկան ունի»: Ի՞նչ կը պատկերացնէ 10 թիւը: Թիւ 10-ը կը պատկերացնէ հրեշտակներուն բանակներն ու մարդկութիւնը միասնաբար: Անոնցմէ ինն կը ներկայացնեն հրեշտակներուն բանակները, որովհետեւ անոնք ինը դասերէ կը բաղկանան, ինչպէս պիտի ըսէին Իգնատիոս Շնորհալի Վարդապետ, Մեծն Գրիգորի-նոս եւ ուրիշներ, իսկ 1-ը կը ներկայացնէ մարդկութիւնը, որովհետեւ համայն մարդկութիւնը Աստուծոյ հայեացքով մէկ ընտանիք կը կազմէ:

3.- Ուրիշ կարեւոր հարցում մը: Ինչո՞ւ Աստուած սկիզբէն երկնային մարմինները ինը դասերու բաժնեց եւ ոչ աւելի կամ պակաս դասերու: Աստուած սկիզբէն ծրագրած էր հրեղէն մարմիններու ստեղծումէն ետք՝ հողեղէն մարմիններ ալ ստեղծել, ուստի այնպէս ըրաւ, որ հրեշտակները ինը դաս ըլլան, որպէսզի յետոյ գայ եւ անոնց միանայ մարդկութիւնը, եւ այդ ձեւով ամբողջանայ 9 թիւ եւ 10-ի վերածուի, եւ հրեշտակներ ու մարդիկ մէկ ամբողջութիւն դառնան եւ մէկ ընտանիքի վերածուին: Եւ չմոռնանք որ Աստուծոյ վերջնական ու վախճանական նպատակն է նաեւ, որ ժամանակներու աւարտին երկնային ու երկրային արարածներ մէկ ամբողջութեան եւ մէկ թագաւորութեան վերածուին: Ահա թէ ինչու անոնք (հրեշտակներ եւ մարդիկ) Եբրայական մտածողութեան մէջ ամբողջականութեան ու կատարելութեան խորհրդանիշ հանդիսացող թիւ 10-ով կը ներկայացուին:

4.- «Կին մը տասը արծաթ դահեկան ունի»: Բացատրեցինք թէ ինչո՞ւ հրեշտակներն ու մարդիկը թիւ 10-ով կը պատկերացուին: Հիմա տեսնենք թէ ինչո՞ւ հրեշտակներ ու մարդիկ կը կոչուին «արծաթ դահեկան»: Քանի մը պատճառներով.-

ա.- Անոնք «արծաթ դահեկան» կը կոչուին, նախ ցոյց տալու համար որ անոնք Աստուծոյ համար թանկագին արծաթի արժէք ունին: Աստուած իր արարածները, իր սիրոյն ու ձեռքին գործը եղող երկնային ու երկրային մարմինները անպէտք բան չի նկատեր, ընդհակառակը, զանոնք մեծ ու թանկագին արժէք կը նկատէ: Եթէ Աստուած իր արարածները արժէք չնկատէր, «արծաթ դահեկան» ըսելու փոխարէն

կրնար ըսել՝ «Կին մը տասը եղեգ ունէր», կամ «Կին մը տասը թիթեղ ունէր», կամ «Կին մը տասը ասեղ ունէր», եւայլն:

բ.– Ուրիշ կարեւոր պատճառ մը եւս կայ թէ ինչո՛ւ Յիսուս իր արարածները «արծաթ դահեկան» կը կոչէ: Չմոռնանք որ անցեալին արծաթ դահեկաններուն վրայ Հոռոմայեցի կայսրեր եւ թագաւորներ իրենց պատկերները կը դրոշմէին: Յիսուս «արծաթ դահեկան» կը կոչէ մարդիկը, յիշեցնելու համար մեզի, թէ ինչպէս թագաւորները իրենց պատկերը կը դնէին պատրաստուած արծաթեայ դրամներուն վրայ, այնպէս ալ Աստուած երբ երկնային մարմինները եւ մարդիկը ստեղծեց, իր պատկերն ու նմանութիւնը դրաւ անոնց մէջ (Ծն 1.27):

Ոմանք կ'ըսեն թէ հրեշտակները Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ չեն ստեղծուած, այլ միայն մարդիկը իրենք: Այդ բացատրութիւնը յանախ տրուած է պարզապէս ընդգծելու համար մարդ արարածին կարեւորութիւնը, բայց իրականութեան մէջ հրեշտակները իրենք եւս իրենց մէջ կը կրեն Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը եւ նոյնիսկ մեզմէ աւելի՛ կը կրեն զանոնք: Ասիկա պարզ կը դառնայ մեզի համար եթէ երբեք գիտնանք թէ «պատկեր» եւ «նմանութիւն» ըսելով ի՛նչ պէտք է հասկնալ: Նիւթիս ծիրէն չեմ ուզեր հեռանալ, բայց երկու տողով ըսեմ. Եբրայերէն լեզուի մէջ «պատկեր» բառին համար գործածուած բառը կը նշանակէ՝ նկարագիր. իսկ «նմանութիւն» կը նշանակէ՝ նման, կամ նմանիլ: Հարցում, հրեշտակները իրենք Աստուծոյ նկարագիրն ու նմանութիւնը չունի՞ն, այլ ի՞նչով՝ Աստուծոյ նման մարդասէր չե՞ն, բարեգործ չե՞ն, օգնող չե՞ն, զօրացնող չե՞ն:

Հետեւաբար, Աստուծոյ նմանութեամբ ստեղծուած ըլլալ, պարզապէս կը նշանակէ՝ Աստուծոյ նման բարին սիրել, բարին գործել, բարին հետապնդել: Աստուած բարի է, իսկ հրեշտակներ ու մարդիկ՝ բարին սիրող ու գործող արարածներ: Աստուած լոյս է, իսկ հրեշտակներ ու մարդիկ՝ լոյսը փնտռող ու խաւարը մերժող էակներ: Աստուած անմահ է, իսկ հրեշտակներ ու մարդիկ՝ անմահութեան համար ստեղծուածներ: Աստուած սուրբ է, իսկ հրեշտակներ ու մարդիկ՝ սուրբ կեանք ապրելու կոչուածներ: Եւայլն:

գ.– Վերեւ ըսինք որ անցեալին արծաթ դահեկաններուն վրայ կայսրեր ու թագաւորներ իրենց պատկերը կը դնէին: Այս նշմարտութիւնը նկատի առնելով, կրնանք ըսել, թէ արծաթ դահեկանը կորսնցնել, կը նշանակէ՝ կորսնցնել Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը մեր ներսիդին:

Կարեւոր է յիշել ուրիշ կէտ մը: Անցեալին այն դրամը որուն վրայ կայսրի մը կամ թագաւորի պատկերը չէր ըլլար՝ այդ դրամը իր արժէքը

կը կորսնցնէր: Ասիկա մեզի կը յիշեցնէ նաեւ այն՝ որ իր աստուածային պատկերն ու նմանութիւնը կորսնցուցած մարդը եւս ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէ:

դ.– Պէտք է յիշել նաեւ, որ մենք «արծաթ դահեկան» կը կոչուինք ո՛չ թէ որովհետեւ արժանիքներ եւ կարողութիւններ ունինք, այլ որովհետեւ Աստուծոյ ձեռագործն ենք, Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը ունինք, Աստուծոյ անմահութիւնը ունինք, Աստուծոյ զաւակներն ենք:

Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն՝ Ամբրոսիոս կ'ըսէ. «Երանի՛ր թէ իբրեւ արծաթ դահեկաններ, գիտնանք մեր արժէքը եւ իբրեւ որդիներ՝ դառնանք մեր երկնաւոր Հօր»:

«Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, նրազը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'ա՞ւելեր, մինչեւ որ դահեկանը գտնէ» (Ղկ 15.8): Քանի մը մատնանշումներ.–

1.– Այստեղ մեզի կ'ըսուի թէ երբ կինը իր արծաթ դահեկաններէն մէկը կորսնցնէ՝ նրազը կը վառէ եւ գայն փնտոելու կը սկսի: Հոսկէ կը սորվինք թէ Յիսուս անտարբեր չէ մեզի հանդէպ: Եթէ ան տեսնէ թէ կորստեան մամբուն մէջ ենք՝ յատուկ աշխատանք կը տանի մեզ փրկութեան բերելու համար:

2.– «Անոնցմէ մէկը...»: Կորսուող «մէկը» ըսինք կը ներկայացնէ անկեալ մարդկութիւնը: Յիսուս այդ «մէկը»ին, այլ խօսքով՝ անկեալ մարդկութեան փրկութիւնն է որ հետապնդեց: Ինչո՞ւ Յիսուս միայն անկեալ մարդոց փրկութեան մասին կը խօսի եւ բնաւ ակնարկութիւն չ'ընէր անկեալ հրեշտակներու փրկութեան: Ո՛չ այս առակը, ո՛չ ուրիշ առակ, եւ ո՛չ ալ աստուածաշնչական ոեւէ հատուած կը խօսի անկեալ հրեշտակներու փրկութիւնը հետապնդելու մասին, քանի որ ինկած հրեշտակները չեն կրնար ապաշխարել ու դարձի գալ: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ անոնք կատարեալ գիտութեամբ ստեղծուած են, բան մը փորձառաքար սորվելու հարց չունին, եւ ուստի եթէ մեղանչեն՝ դարձ ու ներում չկայ իրենց համար, քանի իրենք կատարեալ գիտութիւնը ունին իրենց արարքներուն: Մինչդեռ տարբեր է մարդուն պարագան: Մարդը ամէն ինչ փորձառաքար պիտի սորվի: Փորձառութեան մամբուն վրայ մարդը կրնայ բազմաթիւ անգամներ իյնալ եւ դարձեալ ոտքի կանգնիլ, եւ Աստուած գիտէ այս մէկը: Ուրիշ պատճառներ եւս կան թէ ինչո՞ւ հրեշտակներ չեն կրնար դարձի գալ, բայց զանց կ'ընեմ, նիւթիս ծիրէն դուրս չգալու համար:

3.– «Անոնցմէ մէկը...»: Ինչո՞ւ Յիսուս կը շեշտէ «մէկը» բառը: Վերեւ ըսինք որ մարդկութիւնը «մէկը» կը կոչուի, ցոյց տալու համար որ Աստուծոյ հայեացքով մարդկութիւնը մէկ ընտանիք կը կազմէ:

Հարուստ թե՛ աղֆատ, ուսեալ թե՛ անուս, հաւատացեալ թե՛ անհաւատ, թագաւոր թե՛ գինուոր, նախագահ թե՛ ստրուկ, բոլորն ալ մէկ եւ նոյն ընտանիքին մաս կը կազմեն եւ այդ ընտանիքին անունն է՝ «Մարդկային Ընտանիք»։ Ո՛չ մէկ մարդ կրնայ ինքզինք գատել մարդկային ընտանիքէն։ Աշխարհի ամենէն սուրբ եւ աշխարհի ամենէն մեղաւոր մարդիկը հաւասարապէս մարդկային նոյն ընտանիքին մաս կը կազմեն։ Ասիկա գիտնալը կարեւոր է, որպէսզի չյոխորտանի մտածելով որ մենք տարբեր ենք ուրիշէն եւ տարբեր աշխարհի կը պատկանինք։ Երբեք ալ ուրիշէն տարբեր չենք։

4.- «Անոնցմէ մէկը...»: Նաեւ թիւ «մէկ»ը իբրեւ թուանշան կը շեշտուի, ցոյց տալու համար մեզի թէ ամէն «մէկ» մարդ անհատ արժէք է Աստուծոյ համար։ Երբ մեր Տէրը կը խօսի մէկ արծաթ դահեկանի կորուստին մասին, խորքին մէջ անուղղակիօրէն եւ ծածուկ կերպով մեզի կ'ըսէ, թէ նոյնիսկ եթէ մէկ մարդ մեղանչէր՝ ինք դարձեալ պատրաստ պիտի ըլլար գալու եւ իր արիւնը թափելու անոր փրկութեան համար։

5.- «Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ»: Երկու հակիրճ նշումներ.–

ա.- Այստեղ գործածուած «կորսնցնէ» բառը պէտք է հասկնալ «կորսուի» իմաստով, որովհետեւ Քրիստոս չէ որ կորսնցուց մարդը կամ անոր կորստեան պատճառ եղաւ, այլ մարդը ի՛նքն էր որ ինքնիր կորստեան պատճառ դարձաւ, որովհետեւ իրեն տրուած ազատութիւնը չարիք գործելու օգտագործեց, ահա թէ ինչու Պետրոս առաքեալ կ'ըսէ. «Ձեր ազատութիւնը չարիք գործելու պատրուակ թող չդառնայ» (Ա.Պտ 2.16):

բ.- «Կորսնցնէ» բացատրութիւնը հարկաւ ֆիզիքական հասկացողութեամբ պէտք չէ առնել։ Երբ մարդը մեղանչեց Աստուծոյ դէմ՝ մարմնաւորապէս չկորսուեցաւ, այլ՝ հոգեպէս։ Հետեւաբար, կորսուածը մարդուն մէջ՝ իր աստուածային պատկերն ու նմանութիւնն է, իսկ աստուածային պատկերն ու նմանութիւնը ֆիզիքական հասկացողութիւն չունին։ Ադամ եւ Եւա երբ մեղանչեցին, անոնք ֆիզիքապէս չտեղափոխուեցան, այլ պարզապէս Աստուած իր ներկայութիւնն է որ քաշեց անոնցմէ։ Անառակ որդիին առակին մասին խօսելով, Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ, թէ «կրտսեր որդին տեղով չէ որ հեռացաւ իր հօրմէն, այլ՝ սրտով»։

6.- «Ճրագը չի՞ վառեր»: Ի՞նչ կը ներկայացնէ ճրագը։ Կարգ մը մեկնիչներ «ճրագը» ակնարկութիւն կը նկատեն Քրիստոսի, իսկ ուրիշներ՝ Քրիստոսի խօսքին։ Բայց մեկնիչներուն մեծ մասը «ճրագ» բացատրութեան տակ կը տեսնեն թէ՛ Քրիստոսի անձին եւ թէ՛ իր խօսած

խօսքերուն ներկայութիւնը: Այս իմաստով, եթէ «նրագ»ը Յիսուս է, նրագին լոյսը՝ Աւետարանն է: Յիսուս իր Աւետարանին լոյսով մեզ փնտոց: Ուստի, միշտ պիտի չըլլար փորձել գտնել գՔրիստոս իր խօսքէն: Քրիստոս «արդարութեան արեգակ» է, իսկ այդ արեգակէն մտազայթող լոյսը՝ Քրիստոսի խօսքն է: Ինչպէս լոյսը արեւէն չենք կրնար բաժնել, այնպէս ալ չենք կրնար բաժնել գՔրիստոս ինքնիր խօսքէն: Եթէ Քրիստոս մեր մամբան է (Յհ 14.6), այդ մամբան լուսաւորողը Քրիստոսի խօսքն է: Սաղմոսագիրը կ'ըսէ. «Քու խօսքդ իմ ոտքերուս նրագ է ու իմ շաւիղներուս՝ լոյս» (Սղ 119.105):

Քրիստոս ի՛նքն եղաւ այն նրագը որ վառեցաւ կորսուած մարդիկը գտնելու համար: Քրիստոս իր լուսարար եւ կենդանարար խօսքով լո՛յս եւ կեանք բերաւ մարդկութեան: Ահա թէ ինչո՛ւ Մատթէոս Աւետարանիչ կ'ըսէ. «Այն ժողովուրդը որ խաւարի մէջ կ'ապրէր, մեծ լոյս մը տեսաւ. եւ մահուան աշխարհին ու շուքին մէջ ապրողներուն վրայ լոյս ծագեցաւ» (Մտ 4.16, Ես 9.2): Տուեալ համարին մէջ յիշուած «խաւարը», «մահուան աշխարհը» կամ «շուքը», կը պարզեն մեղաւոր մարդուն կորստական վիճակը: Արդարեւ, մեղաւոր մարդը մեղքի եւ մահուան խաւարին մէջ էր որ կ'ապրէր եւ դատապարտուած էր գեհեմի, բայց աշխարհի լոյսը՝ Քրիստոս, մարդեղացաւ եւ եկաւ ու փարատեց մեղքի ու մահուան խաւարը մարդկութեան կեանքէն:

Քրիստոս ի՛նքն եղաւ այն նրագը, կամ Պետրոս առաքելի բառերով՝ այն «Առաւօտեան Աստղը»՝ որ ծագեցաւ մեր սիրտերուն մէջ եւ մաքրեց ու լուսաւորեց մեզ: Աստուծոյ Որդիին մարդեղացումը նոր օրուան մը դէմ յանդիման դրաւ մեզ: Ինչպէս երբ մուտք փարատելու սկսի եւ նոր օրը բացուելու սկսի՝ մենք կը տեսնենք այն աստղը գոր կը կոչենք՝ «առաւօտեան աստղ», նոյնպէս ալ, երբ Քրիստոսի խաչելութեամբ ու յարութեամբ փարատեցաւ մեղքի խաւարը, Առաւօտեան Աստղը՝ Քրիստոս ինք (Բ.Պտ 1.19), ծագեցաւ սիրտերուն մէջ բոլոր անոնց՝ որոնք ընդունեցին Քրիստոսով իրագործուած փրկութիւնը:

Թէ Քրիստոս ինքն է այն նրագը որուն մասին կը խօսի բնագիրը, ատիկա յստակ է նոյնիման Քրիստոսի խօսքէն որ յայտարարեց ըսելով. «Ե՛ս եմ աշխարհի լոյսը» (Յհ 8.12): Քիչ մը անդին դարձեալ Յիսուս կ'ըսէ. «Ես որպէս լոյս եկայ աշխարհ, որպէսզի ով որ ինձի հաւատայ՝ խաւարի մէջ չմնայ» (Յհ 12.46):

Արդ, ինչո՞ւ Յիսուս ինքզինք նրագի կը նմանցնէ կամ «աշխարհի լոյսը» կը կոչէ: Քանի մը պատճառներով.---

ա. -- Յիսուս ինքզինք նրագի կը նմանցնէ եւ «աշխարհի լոյսը» կը կոչէ, ցոյց տալու համար որ աշխարհ չունի՝ փրկութիւն առանց իրեն,

աշխարհ անյո՛յս է առանց իրեն: Յիսուս ի՛նքն է փրկութիւնը աշխարհին:

բ.– Ինքզինք նրազ կը կոչէ, որպէսզի իր հետեւորդները հեռո՛ւ մնան խաւարի գործերէն եւ սորվին լոյսի կեանք ապրիլ:

գ.– Ինքզինք նրազ կը կոչէ, որպէսզի յիշեցնէ մեզի, թէ ինչպէս խաւարը չի դիմանար լոյսի ներկայութեան, այնպէս ալ խաւարի կեանք ապրող մարդիկ պիտի չկրնան կանգնիլ Յիսուսի ներկայութեան, դատաստանի օրը:

դ.– Ինքզինք նրազ կը կոչէ, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս լոյսը մութին մէջ ծածկուած առարկաներուն ինքնութիւնը հանդէս կը բերէ, այնպէս ալ Յիսուս ինք, իր գալստեան ժամանակ, հանդէս պիտի բերէ մութին մէջ գործուած ամէն չար արարք:

7.– Եթէ երբեք առակը կը խօսի «նրագը վառելու» մասին, սա յստակօրէն ցոյց կու տայ խաւարի «մը» գոյութիւնը: Այդ խաւարը մեղքի խաւարն է: Խաւարը մի՛այն լոյսով կրնայ փարատիլ: Լոյսը միայն մութն ու խաւարը փարատող իրականութիւնը չէ, այլ նաեւ նշմարտութիւնը յայտնաբերողն է: Ինչպէս արեւի լոյսը մութին մէջ ծածկուած մարմիններուն ինչութիւնը (անոնց գեղեցիկ եւ տգեղ բաժինները) հանդէս կը բերէ, այնպէս ալ երբ Քրիստոսի լոյսը ծագի մեր հոգիներուն մէջ՝ մեր հոգիներուն մէջ բոյն դրած մեղքին տգեղութիւնը պիտի հրապարակուի: Եւ ինչպէս երբ արեւի լոյսը ծագի խաւարը կը վերնայ, այնպէս ալ երբ Քրիստոսի լոյսը ծագի մեր սիրտերուն մէջ՝ ա՛յն ատեն է որ մեղքի խաւարը կը փախչի եւ մենք լոյսի գաւակներ կը դառնանք:

8.– «Եւ տունը ուշադրութեամբ չ՛ա՞լեր»: Այս բառերուն վերաբերեալ քանի մը մատնանշումներ.–

ա.– Ի՞նչ պէտք է հասկնալ «տուն» ըսելով: Ըստ Սուրբ Գրիգոր Նազիանզացիի, «տուն»ը կը ներկայացնէ աշխարհը: Ըստ ուրիշներուն, «տուն»ը կը ներկայացնէ մարդ արարածը: Ումանք ալ «տուն» ըսելով կը հասկնան՝ եկեղեցին: Առաջին երկու բացատրութիւնները տրամաբանական եւ շիտակ են, բայց ո՛չ երրորդը: Այլ խօսքով, «տուն»ը կրնայ ակնարկութիւն ըլլալ աշխարհին, այն իմաստով որ Յիսուս համայն աշխարհի փրկութեան համար եկաւ. կրնայ ակնարկութիւն ըլլալ նաեւ մարդ անհատին, այն իմաստով որ ան կը հետապնդէ ամէն մէկ անհատի փրկութիւնը առանձնապէս. բայց չի կրնար ակնարկութիւն ըլլալ եկեղեցիին, որովհետեւ Քրիստոս միայն եկեղեցի յանախողներուն կեանքին մէջ չէ որ իր նրագին լոյսը կը վառէ՝ անոնց սիրտն ու հոգին ալելու ու մաքրելու, այլ՝ ամբողջ աշխարհին եւ աշխարհի մէջ ապրող

ամէն մէկ մարդու կեանքին մէջ: Հետեւաբար, նիշդ չէ ենթադրել որ այստեղ յիշուած «տունը» ակնարկութիւն է եկեղեցիին, ինչպէս ոմանք կը կարծեն: Մեղաւոր եւ անապաշխար իւրաքանչիւր մարդ կորսուած «արծաթ դահեկան» մըն է որ կարիք ունի փնտոտելու Քրիստոսի կողմէ, անիկա ըլլայ եկեղեցիին մօտիկ թէ եկեղեցիէն ամբողջովին հեռու մէկը:

Ըսի, որ «տուն» ըսելով կը հասկնանք աշխարհը, եւ ասիկա շատ պարզ է, որովհետեւ ի վերջոյ այս աշխարհը ինք, նորոգուելէ ետք Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ, պիտի դառնայ տունն ու բնակարանը փրկուած հաւատացեալներուն: Եւ Քրիստոս ինք, այս տունը, այլ խօսքով՝ ամբողջ աշխարհը մաքրելու համար էր որ եկաւ, եւ որպէսզի աշխարհը մաքրուի, պէտք է աշխարհի մէջ բնակող ամէն մէկ անհատ մաքրուի, ահա թէ ինչու «տուն» ըսելով մենք կրնանք հասկնալ նաեւ մարդ անհատը, գորս Յիսուս կը մաքրէ նիշդ ինչպէս աշխատասէր տանտիկին մը իր տունը կը մաքրէ: Արդ, ինչպէս տանտիկինը իր տունը կը մաքրէ, այնպէս ալ Յիսուս մեզ կը մաքրէ, որովհետեւ «իր տունը մե՛նք ենք» (Եբր 3.6):

բ.– «Ուշադրութեամբ չ'ա՞ւլեր»: Ուշադիր ըլլանք «ուշադրութիւն» բառին: Աստուծոյ Հոգին ուշադրութեամբ եւ զգուշութեամբ կը գործէ նորադարձներուն սրտին մէջ: Աստուած երբեք չ'անապարեք վայրկեան մը առաջ սրբելու մարդը ամէն տեսակի մեղքէ ու մոլութենէ եւ սրբացնելու գանիկա: Ան բնա՛ւ չ'արտորար տաշելու նորադարձ մարդուն նկարագիրին յոռի կողմերը: Ան շատ լաւ գիտէ որ նորադարձ մը շուտով չի կրնար ձերբազատիլ իր գէշ սովորութիւններէն եւ բնաւորութենէն:

Երբե՛ք Աստուծոյ ծրագիրին մաս չի կազմեր մէկ օրէն միւսը նորադարձը վերածել հաւատքի ախոյեանի մը: Ան ուշադրութեամբ «կ'աւլէ», այսինքն՝ ուշադիր կ'ըլլայ թոյլ տալու այնպիսի ծանր փորձու-թիւններ՝ որոնք կրնան նորադարձ մարդը խրտչեցնել եւ յուսահատեց-նել: Աստուած երբե՛ք թոյլ չի տար որ նորադարձ մը հանդիպի զգետնող փորձութեան մը: Ան «ուշադրութեամբ» ալող Աստուած է: Ո՞վ է այն կինը որ արագօրէն գետինը կ'աւլէ գտնելու համար իր կորսնցուցած հագիւ նշմարելի ոսկիի մէկ կտորը:

գ.– Յունարէն բնագիրը «ուշադրութեամբ» բառին փոխարէն ունի՝ *επιμελως* բառը որ կը նշանակէ՝ ժրաջանօրէն, լաւապէս, եռանդագին: Սա ցոյց կու տայ որ Յիսուս մարդը փնտոտելու գործողութիւնը ժրաջանօրէն, լաւապէս եւ եռանդագին կերպով կը կատարէ: Տուեալ բառը կը պարզէ որ Յիսուս պաղ կերպով չի հետապնդեր մեր

փրկութիւնը, այլ՝ կրակի նման, սրտովին. երբեմն չէ որ կը փնտռէ, այլ՝ մի՛շտ:

դ.- «Ճրագը վառելը» մեզ մեղքի տիղմէն ու խաւարէն դուրս բերելն է, իսկ մեզ մեղքի տիղմէն ու խաւարէն ազատելէ ետք՝ կը սկսի մեզ մաքրելու եւ սրբելու գործողութիւնը որ այս անգամ կ'արտայայտուի «աւել» բայով: Առակին մէջ տրամաբանական ընթացք մը կայ որուն պէտք է ուշադրութիւն դարձնել: Աւելու գործողութիւնը նրագը վարելու գործողութեան է որ կը յաջորդէ եւ ո՛չ թէ նրագը վառելու գործողութիւնը աւելու գործողութեան: Ո՛չ ոք գիշերով տունը կ'աւելտանց նրագը վառելու, մանաւանդ եթէ բան մը կայ որ կը փնտռէ: Ճրագը Քրիստոսի խօսքն է, ինչպէս ըսինք, իսկ աւելը՝ Սուրբ Հոգիով սրբուիլն ու սրբացուիլն է: Ըսել ուզածս այն է, որ անգամ մը որ ականջ տանք Քրիստոսի խօսքին ու դարձի գանք, Սուրբ Հոգին կը սկսի կատարել մեզ աւելու (սրբելու եւ սրբացնելու) գործողութիւնը: Գործողութիւն մը՝ որ նեղութիւններու բովէն անցնելով միայն կ'իրականանայ:

Ինչպէս երբ անցեալին արծաթ դահեկան մը գտնուէր, անոր փոշին կը մաքրէին եւ աղտը կը ֆերթէին որպէսզի կայսրին պատկերը հանդէս բերէին, այնպէս ալ Քրիստոսի միջոցաւ դարձի գալէ ետք՝ Սուրբ Հոգին հետզհետէ կը սկսի աւել, այլ խօսքով, տաշել եւ յղկել մեզ, մինչեւ որ վերականգնէ մեր մէջ Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը:

ե.- «Չ'աւել»: Այս բառը ցոյց կու տայ որ արծաթ դահեկանը կորսուած էր փոշիի մէջ: Ի՞նչն էր այն փոշին որուն մէջ կորսուած էինք երբ Յիսուս եկաւ եւ մեզ ազատեց անկէ: Այն փոշին անհաւատութեան փոշին էր: Յիսուս եկաւ մարդիկը ուղիղ հաւատքի բերելու: Այսօր ի՞նչ են այն իրականութիւնները որոնք փոշիի նման մեզ կը ծածկեն, որոնք կ'աղարտեն մեր մէջ Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը, որոնք կը ցամփեցնեն մեր ներսիդին առաքիլութեանց տունկերը: Չկա՞ն մեր մէջ գէշ բնաւորութիւններ զորս պէտք է աւուրին եւ մեզմէ հեռացուն: Չկա՞ն մեր մէջ նկարագրային վատ գիծեր որոնցմէ պէտք է ձեռքազատիլ: Չկա՞ն մեր բերաններուն մէջ կծու լեզուներ որոնք Սուրբ Հոգիին միջոցաւ պէտք է ֆաղցրախօս դառնան: Չկա՞ն մեր մէջ աշխարհային ցանկութիւններ ու փափաքներ որոնք մեզ Սատանային ստրուկները կը դարձնեն եւ որոնցմէ պէտք է հրաժարիլ:

զ.- Ինչո՞ւ Յիսուս փոխանակ ըսելու «կ'աւել», հարցումի ձեւով կը դնէ հարցը՝ «չ'աւել»: Յիսուս «չ'աւել» բառով ըսել կ'ուզէ, թէ, այո՛, կ'աւել՝, վստահաբար կ'աւել, անկասկա՛ծ կ'աւել: Երբ Յիսուս հարցադրումի ձեւով կը դնէ հարցը՝ ստիկա վստահութիւն եւ ապահովութիւն

ներշնչելու ձեւ մըն է: Տանք տարբեր օրինակ մը: Հետեւեալ երկու տողերէն ո՞ր մէկ աւելի շիտակ կը գտնէք.–

– «Երբ մայր մը իր գաւակը կորսնցնէ՝ գայն կը փնտռէ»:

– «Երբ մայր մը իր գաւակը կորսնցնէ՝ գայն չի՞ փնտռեր»:

Անկասկած որ երկրորդ տողը աւելի ուժգին կը հնչէ մեր ականջներուն, որովհետեւ ատիկա ապահովութիւն ներշնչելու կերպ մըն է, ըսել ուզելով, որ այո՛, մայրը կը փնտռէ՛, եւ ատիկա կասկածէ վեր է, եւ հարցումի պէտք չկայ: Ահա այս իմաստով պէտք է առնել Յիսուսի բերնին մէջ գտնուող «չ՛ա՞ւլեր» բացատրութիւնը:

9.– «Մինչեւ որ դահեկանը գտնէ»: Կարեւոր բառը որուն պէտք է անդրադառնալ այստեղ, «մինչեւ» բառն է: Ի՞նչ ցոյց կու տայ «մինչեւ» բառը: Քանի մը բաներ.–

ա.– «Մինչեւ» բառը ցոյց կու տայ որ Յիսուս կորսուած մարդը փնտռելու աշխատանքը կը շարունակէ «մինչեւ» վերջ:

բ.– «Մինչեւ» բառը կը պարզէ նաեւ որ Յիսուս կորսուած մարդուն կողմին կը կանգնի «մինչեւ» որ ազատէ զանիկա իր կորուսեալ վիճակէն:

գ.– «Մինչեւ» բառը կը բացայայտէ թէ Յիսուս աշխատանք կը տանի մարդուն վրայ «մինչեւ» որ զանիկա իր նմանութիւնը դարձնէ:

դ.– Տակաւին, «մինչեւ» բառը ցոյց կու տայ որ Աստուած ամէն միջոցի կը դիմէ իրմէ հեռու եղող մարդիկը իրեն մօտեցնելու համար:

ե.– «Մինչեւ» բառը որոշապէս ցոյց կու տայ որ Յիսուս բնաւ մեզմէ չի հեռանար «մինչեւ» որ մեզ փրկութեան նաւահանգիստ հասցնէ, իսկ փրկութեան այդ նաւահանգիստը նոյնիմէն Յիսուսի անձն է: Յիշեցէք մոգերուն երեւոյցը աստղին պարագան: Աստղը (որ հրեշտակ մըն էր), մոգերը քամբուն կիսուն չթողուց, այլ «առաջնորդեց զիրենք մինչեւ որ եկաւ ու կեցաւ այն վայրին վրայ ուր երեխան կը գտնուէր» (Մտ 2.10): Նոյնը կ'ընէ Յիսուս: Ան երբեք մեզ չի թողուր «մինչեւ» որ մեզ հասցնէ ու միացնէ իր անձին եւ մեզ առնէ իր գրկին մէջ:

զ.– Եւ դեռ, «մինչեւ» բառը ցոյց կու տայ որ Յիսուս երբեք նահանջ չ'արձանագրեր դժուարութեանց դիմաց: Այլ խօսքով, մարդիկ որքան ալ փորձեն եւ ուզեն հեռանալ Քրիստոսէ, որքան ալ անոնց գէշ բնաւորութիւններն ու սովորութիւնները արգելիք հանդիսանան անոնց փրկութեան, Յիսուս տեղի չի՛ տար, չի՛ յուսահատիր, այլ կը շարունակէ հետապնդել անոնց փրկութիւնը «մինչեւ... որ գտնէ» զանոնք:

է.– Վերջապէս, «մինչեւ որ դահեկանը գտնէ» հաստատումը լոյսնայն կերպով մեզի կ'ըսէ, որ եթէ Յիսուս նրազը չվառէր եւ տունը ուշադրութեամբ չաւեր՝ արծաթ դահեկանը (մարդը) պիտի չգտնուէր:

Այո՛, եթէ Յիսուս ինք մեզ չփնտոէ եւ մեր փրկութիւնը չհետապնդէ՝ մենք չենք կրնար փրկուիլ: Ինչպէս կորսուած առարկան փնտոուելու կարիք ունի, այնպէս ալ կորսուած մարդը ինք:

«Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները» (Ղկ 15.9): Քանի մը հաստատումներ.–

1.– Որո՞նք են այն «բարեկամուհիներն ու դրացիները» գորս Յիսուս կը կանչէ երբ գտնէ իր կորսնցուցած արծաթ դահեկաններէն մին: Ոմանք կ'ենթադրեն որ հոս յիշուած «բարեկամուհիներն ու դրացիները» կը ներկայացնեն հրեշտակները, իսկ ուրիշներ, այս բառերուն ետին յաղթական եկեղեցիին, այսինքն՝ հաւատով վախճանածներուն ներկայութիւնն է որ կը կարգան: Մենք աւելի հակամէտ ենք առաջին բացատրութեան, նկատի ունենալով որ մեղաւոր մարդու ապաշխարութեան համար հրեշտակներու ուրախութեան մասին է որ կը խօսի տուեալ առակին վերջին համարը՝ «Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ»:

Սուրբ Գրիգոր Նազիանզացիին կ'ըսէ թէ հոս յիշուած «բարեկամուհիներն ու դրացիները» երկնային մարմիններն են: Թոյլ տուէ՛ք ամբողջ հատուածը յիշեմ: Ան կ'ըսէ. «Յիսուս նրազը վառեց, այսինքն՝ մարդեղացաւ, եւ տունը աւելց, այսինքն՝ աշխարհը մաքրեց մեղքէն, եւ ջանաց վերականգնել մարդուն մէջ թագաւորական պատկերը որ ծածկուած էր աշխարհային ցանկութիւններով: Ապա կանչեց բարեկամուհիներն ու դրացիները, այսինքն՝ երկնային մարմինները, որպէսզի ուրախակից ըլլան իրեն, որոնք նախապէս ալ, իր մարդեղացման ժամանակ ուրախակից եղած էին իրեն (Ղկ 2.13-14)»:

2.– «Երբ գտնէ, կը կանչէ»: Յիսուս գտնելէ ետք մարդը, այլ խօսքով՝ փրկելէ ետք մարդկութիւնը, այդ ուրախութիւնը միայն իրեն չպահեց, այլ զանիկա սեփականութիւն դարձուց ամբողջ երկինքին ու երկնային մարմիններուն: Ամբողջ հրեշտակներուն գունդերը ուրախացան Յիսուսի արեամբ իրագործուած փրկութեամբ:

3.– Ինչպէս Յիսուս «երբ գտնէ, կը կանչէ», այնպէս ալ մենք, երբ գտնենք Յիսուսը՝ պէտք է ուրիշներն ալ կանչենք ու բերենք Յիսուսի: Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ մենք հաշտուելէ ետք Աստուծոյ հետ, կոչումը ունինք «ուրիշներն ալ հաշտութեան բերելու» (Բ.Կր 5.18): Անկարելի է որ մէկը գտնելէ ետք Քրիստոսը իբրեւ Տէր ու Փրկիչ, ու մանաւանդ անոր համը առնելէ ետք՝ աշխատանք չտանի որ ուրիշներն ալ գայն գտնեն. եթէ աշխատանք չտանի, կը նշանակէ որ երբեք ալ Յիսուսը չէ գտած ու չէ վայելած անոր սէրն ու խաղաղութիւնը:

4.- Ըսինք որ «բարեկամուհիներն ու դրացիները» կը ներկայացնեն հրեշտակները: Արդ, ինչո՞ւ հրեշտակները կը կոչուին՝ «բարեկամուհի» եւ «դրացի»: Կորսուած ոչխարին առակին մասին խօսած ատեն, բացատրեցի՛նք թէ ինչու հրեշտակները կը կոչուին՝ «բարեկամ» ու «դրացի»: Կրկնութիւն չընելու համար, տե՛ս Ղկ 15.6-ին մեկնութիւնը: Միակ կէտը որուն կ'ուզեմ այստեղ անդրադառնալ, այն է, թէ ինչո՞ւ Յիսուս «բարեկամ» ըսելու փոխարէն, կ'ըսէ «բարեկամուհի»: Պէտք է նկատի առնել, որ Քանի առակը տունը աւրող կնոջ մասին կը խօսի եւ ո՛չ թէ այր մարդու մասին, բնական է հետեւաբար որ «բարեկամուհի» ըսուի եւ ո՛չ թէ «բարեկամ», եւ ասիկա շատ բնական երեւոյթ է: Պէտք է յիշել որ անցեալին, ինչպէս նաեւ այսօր, յատկապէս արեւելեան երկիրներու մէջ, տանտիկին մը երբ մէկը իր տունը պիտի հրաւիրէ որպէսզի առիթի մը համար հետը ուրախանան, կիները կը հրաւիրէ եւ ո՛չ թէ այր մարդիկը: Հետաքրքրական է որ Յիսուս այս առակը պատմած ատեն, յարգեց արեւելեան երկիրներուն յատուկ այս սովորութիւնը:

5.- Վերջին բան մը: «Բարեկամուհիներ» եւ «դրացիներ» բառերուն առջեւ մենք կը գտնենք «իր» բառը: Բառ մը՝ որ ցոյց կու տայ թէ երկնային բոլոր գործերը, բոլոր դասերն ու բանակները՝ ի՛րն են, այլ խօսքով՝ Յիսուսի՛ն են, անոր իշխանութեան ենթակայ են, անոր կամքը կատարող են, անոր փառքը հիւսողներ են: Եւ Նոր Կտակարանը բացայայտօրէն ցոյց կու տայ ասիկա: Օրինակ, կը տեսնենք թէ ինչպէս Գաբրիէլ հրեշտակը եկաւ աւետելու Մարիամին թէ ծնունդ պիտի տայ աշխարհի Փրկիչին (Ղկ 1.28-33), հրեշտակ մը հովիւներուն աւետեց Յիսուսի ծնունդը (Ղկ 8-12), հրեշտակներ օրհնաբանական երգեր երգեցին Յիսուսի ծննդեան առիթով (Ղկ 2.13-14), հրեշտակներ եկան եւ սկսան ծառայել Յիսուսի երբ Սատանան հեռացաւ անկէ (Մտ 4.11), հրեշտակ մը երեւցաւ իրեն եւ գորացուց զինք երբ տագնապի մատնուած կ'աղօթէր Զիթենեաց լերան վրայ (Ղկ 22.43), երբ Տէրը երկրորդ անգամ յայտնուի՝ «պիտի գայ... իր հրեշտակներուն հետ» (Մտ 16.27), հրեշտակներն են որ իր կողմէ աշխարհ պիտի դրկուին հաւաքելու համար չար մարդիկը եւ զանոնք գեհեմի կրակին մէջ նետելու (Մտ 13.41-42):

«Եւ կ'ըսէ անոնց.- Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ» (Ղկ 15.9): Քանի մը հաստատումներ.-

ա.- Քրիստոս կորսուած արծաթ դահեկանը գտնելէ ետք, «կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները», այլ խօսքով՝ հրեշտակները, որպէսզի խնդակից ըլլան իրեն եւ հետը ուրախանան: Յիսուս իր այս

վերաբերմունքով մեզի կը սորվեցնէ՝ մեր ուրախութիւնը բաժնել ուրիշին հետ:

բ.- «Ինծի հետ»: Ուշագրաւ որ Յիսուս մեզ չի հրաւիրեր ուրախանալու գտնուած դահեկանին հետ, այլ՝ իրե՛ն հետ, ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ՝ «Ինծի հետ» բառերը: Ինչո՞ւ արդեօք: Սորվեցնելու համար մեզի թէ ի՛նքն հրեշտակներուն ուրախութեան առարկան երկինքի մէջ եւ ի՛նք պիտի ըլլայ մեր ուրախութեան առարկան իր թագաւորութեան մէջ:

Քրիստոսի արքայութեան մէջ մեզի պիտի չտրուի բան մը որով ուրախանանք: Արքայութեան մէջ Արքան ի՛նք պիտի ըլլայ մեզ ուրախացնողը, մեր ուրախութեան պատճառը, մեր ուրախութեան աղբիւրն ու առիթը: Ինչ կ'ուզէք տուէք փոքրիկի մը, եթէ ան մայրը չի տեսներ իր կողմին՝ երբեք ալ չ'ուրախանար: Իսկ եթէ մայրը իր կողմին ըլլայ՝ ինչ կ'ուզէք առէք իրմէ՝ ան ուրախ է: Նոյնը պիտի ըլլայ մեր պարագան երբ արքայութեան մէջ ենք: Հոն, ուր մանուկներու նման, Յիսուսէն զատ ուրիշ բան պիտի չփնտռենք, Յիսուսէն զատ ուրիշ բան պիտի չուզենք, պիտի չփափաքինք, եւ Յիսուսէն զատ ուրիշ բանով մը պիտի չուրախանանք:

գ.- «Ուրախացէ՛ք ինծի հետ»: Այս բառերը կը պարզեն Աստուծոյ ուրախութիւնը կորսուած մարդուն փրկութեան համար: Աստուած կ'ուրախանայ ո՛չ թէ որովհետեւ ուրախութեան առիթ ու պատճառ կը փնտռէ, կ'ուրախանայ ո՛չ թէ որովհետեւ կարօտ է մարդուն, այլ կ'ուրախանայ որովհետեւ կը տեսնէ իր ձեռքի գործը եղող մարդուն փրկութիւնը. կ'ուրախանայ որովհետեւ կը սիրէ մարդիկը եւ չ'ուզեր զանոնք գեհեճի կրակին մէջ նետուած ու չարիքի հանդիպած տեսնել. կ'ուրախանայ որովհետեւ մեր ուրախութիւնը կը տեսնէ. կ'ուրախանայ որովհետեւ բարի ու ունեւոր է եւ կը տեսնէ բարութեան ու ունեւորութեան յաղթանակը:

Matthew Henry կ'ըսէ. «Երկինքի մէջ միշտ ուրախութիւն կայ: Աստուած իր բոլոր գործերով կ'ուրախանայ, բայց կ'ուրախանայ մանաւանդ երբ շնորհի կ'ընէ մարդու մը: Աստուած իր ամբողջ սրտով եւ իր ամբողջ հոգիով կ'ուրախանայ երբ բարի կ'ընէ դարձի եկող մարդոց: Աստուած կ'ուրախանայ ո՛չ միայն երբ ազգեր ու եկեղեցիներ դարձի կու գան, այլ կ'ուրախանայ նոյնիսկ երբ մէկ հոգի դարձի գայ»:

դ.- «Որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ»: Կորսուած դահեկանին, այլ իսո՞քով՝ կորսուած մարդուն գտնուիլն է որ կ'ուրախացնէ զԱստուած: Մենք ալ պէտք չէ՞ ուրախանանք երբ կը տեսնենք որ մարդիկ կ'ապաշխարեն եւ Քրիստոսի կը յանձնուին: Պէտք

չէ՞ ուրախակից ըլլանք Յիսուսի: «Ուրախացէ՛ք ինծի հետ» խօսքը միայն հրեշտակներուն ուղղուած չէ, այլ բոլոր անոնց՝ որոնք Քրիստոսի բանակին մաս կը կազմեն:

«Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեռով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ» (Ղկ 15.10): Ինչո՞ւ հրեշտակները կ'ուրախանան երբ մեղաւոր մարդիկ դարձի գան: Քանի մը պատճառներով.–

ա.– Հրեշտակները կ'ուրախանան «մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ», որովհետեւ անոր մէջ Աստուծոյ փրկութեան ծրագիրին իրականացումն է որ կը տեսնեն:

բ.– Կ'ուրախանան որովհետեւ գիտեն թէ մարդիկ օր մը իրենց նման պիտի ըլլան եւ իրենց բանակին միանան մէկ եւ նոյն Տէրը օրհնելու եւ օրհնաբանելու:

գ.– Կ'ուրախանան որովհետեւ կը տեսնեն Աստուծոյ ուրախութիւնը մարդոց փրկութեան համար: Անոնք միշտ ուրախակից կ'ըլլան Աստուծոյ, այլապէս Յիսուս անոնց պիտի չըսէր. «Ուրախացէ՛ք ինծի հետ»:

դ.– Կ'ուրախանան որովհետեւ կը տեսնեն Բարիին յաղթանակը ընդդէմ Չարին, լոյսին յաղթանակը ընդդէմ խաւարին, արժայութեան յաղթանակը ընդդէմ դժոխքին:

ե.– Կ'ուրախանան որովհետեւ անոնք «Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14): Քանի կ'օգնեն մեզի որ փրկութիւնը ժառանգենք, բնական է հետեւաբար որ ուրախանան երբ կը տեսնեն որ կ'ընդգրկենք Քրիստոսի փրկութիւնը:

զ.– Matthew Henry կ'ըսէ. «Հրեշտակներ կ'ուրախանան երբ Աստուած ողորմութիւն կը ցուցաբերէ մարդոց հանդէպ...», թէեւ անոնք կրնան նախապէս շատ չար եղած ըլլալ: Այո՛, հրեշտակներ կ'ուրախանան երբ չար մարդիկ դարձի գան, եւ ո՛չ միայն կ'ուրախանան, այլեւ՝ հաղորդակցութեան մէջ կը մտնեն անոնց հետ, գիտնալով որ այս մարդիկը քիչ առնեն իրենց նման եւ իրենց հաւասար պիտի ըլլան: Մեղաւորներուն դարձը հրեշտակներու ուրախութիւնն է եւ անոնք ուրախութեամբ կը ծառայեն անոնց: Մարդկութեան փրկութիւնը ուրախացուց հրեշտակները, փաստօրէն անոնք ուրախութեամբ երգեցին. “Բարձունքներուն մէջ Աստուծոյ փա՛նք, խաղաղութի՛ւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն” (Ղկ 2.13-14)»:

Սիրելի՛ ընթերցող, թոյլ տուր որ Յիսուս վառէ իր Աւետարանին լոյսը կեանքիդ մէջ, մաքրէ քեզ, սրբէ ու լոյսի գաւակ դարձնէ, հեռացնէ

Ֆեզմէ մեղֆի փոշին ու վերականգնէ մէջդ Աստուծոյ նմանութիւնը, որպէսզի պատճառ դառնաս որ երկինքի մէջ ուրախութիւն ըլլայ քեզի համար եւ քու պատճառովդ:

Դուն պիտի չուրախանայի՞ր եթէ քեզմէ հեռացած ու քեզ լքած զաւակդ քեզի դառնար: Վատահարար: Իսկ դուն, չե՞ս ուզեր ուրախացնել զԱստուած եւ երկինքի բոլոր բնակիչները:

Կաւարտեմ Տերտուղիանոս Կարթագենացիի խօսքով որ կ'ըսէ. «Քանի երկինքներն ու հրեշտակները կ'ուրախանան մէկ մարդու ապաշխարութեան համար, ուստի, ո՛վ մեղաւոր, եկուր եւ ապաշխարէ որպէսզի ուրախացնես երկինքներն ու հրեշտակները»:

ԹԹԽՄՈՐԻՆ ՕՐԻՆԱԿԸ

«Երկինքի արքայութիւնը կը նմանի այն թթխմորին, որ կին մը առնելով՝ պարկ մը ալիւրի հետ խառնեց, մինչեւ որ ամբողջ խմորը թթուեցաւ» (Մտ 13.33):

«Թթխմորը» կը ներկայացնէ երկինքի արքայութեան փարփութիւնը, կամ ըսենք՝ Աստուծոյ խօսքը: «Կին»ը կը ներկայացնէ եկեղեցին: «Պարկ մը ալիւր»ը կը ներկայացնէ թէ՛ աշխարհը եւ թէ՛ մարդ անհատը: «Խառնել»ը Աստուծոյ խօսքը տարածելու գործողութիւնն է որ կը պատկերացնէ: «Խմորին թթուիլ»ը՝ Աստուծոյ խօսքով այլակերպուիլն է:

Մեր բացատրութիւնները ամփոփենք քանի մը կէտերու մէջ.–

1.– **«Երկինքի արքայութիւնը կը նմանի այն թթխմորին...»:** Ի՞նչ է «թթխմոր»ը: Թթխմորը այն նիւթն է, որ կը դրուի շաղուած ալիւրին մէջ՝ զայն խմորելու, եփուն դարձնելու, եւ գործածութեան պատրաստ ընելու համար: Իսկ ինչո՞ւ Յիսուս երկինքի արքայութիւնը կը նմանցնէ թթխմորի: Քանի մը պատճառներով.–

ա.– Մենք գիտենք որ թթխմորը անտեսանելիօրէն եւ անզգալիօրէն կը խմորէ շաղուած ալիւրը եւ զայն եփուն կը դարձնէ: Այլ խօսքով, մարդը չի տեսներ թէ ի՛նչպէս եւ ե՛րբ տեղի կ'ունենայ խմորելու գործողութիւնը: Հետեւաբար, Քրիստոս երկինքի արքայութիւնը կը նմանցնէ թթխմորի, մեզի սորվեցնելու համար, թէ՛ ինչպէս թթխմորը անզգալիօրէն կը տարածուի եւ ամբողջ ալիւրը կը խմորէ, այնպէս ալ երկինքի արքայութիւնը լուռ կերպով կը տարածուի ամբողջ աշխարհի մէջ եւ կը խմորէ կեանքը համայն մարդկութեան:

բ.– Երկրորդ կարեւոր պատճառը թէ ինչո՞ւ Յիսուս երկինքի արքայութիւնը կը նմանցնէ թթխմորի՝ նոյնիմէն թթխմորին տարածուելու յատկութիւնն է: Արդ, ինչպէս թթխմորին գլխաւոր յատկանիշը տարածուիլն է, այնպէս ալ երկինքի արքայութեան գլխաւոր յատկանիշը տարածուիլն է: Եւ չմոռնանք որ Յիսուս ի՛նք ըսաւ թէ արքայութեան Աւետարանը պիտի տարածուի ամբողջ աշխարհի մէջ (Մտ 24.14):

գ.– Թթխմորին երրորդ գլխաւոր յատկանիշը բան մը այլակերպելն է: Թթխմորը կարողութիւնը ունի անպէտ բան մը փոխելու եւ զանիկա պիտանի դարձնելու: Ինչպէս շաղուած ալիւրը առանց թթխմորի այլակերպիչ գորութեան ոչինչ կ'արժէ, այնպէս ալ աշխարհը առանց

արքայութեան Աւետարանին հրաշակերպող գօրութեան՝ մեռած կը սեպուի: Հոսկէ կը սորվինք, թէ եկեղեցիին կոչումն է ո՛չ միայն արքայութեան Աւետարանը տարածել աշխարհի մէջ, այլեւ այդ Աւետարանով աշխարհը առաջնորդել այլակերպութեան, այլ խօսքով՝ հոգեւոր զարթօնքի եւ նորոգութեան: Արդ, ինչպէս թթիւմորը շաղուած ալիւրը խմորելու եւ գայն այլակերպելու գօրութիւնը ունի, այնպէս ալ արքայութեան Աւետարանը աշխարհը վերածնունդի առաջնորդելու եւ մարդոց կեանքը այլակերպելու բացարձակ գօրութիւնը ունի:

դ.- Թթիւմորը ուրիշ շատ կարեւոր յատկութիւն մը ունի որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Երբ թթիւմորը դրուի շաղուած ալիւրին մէջ՝ ո՛չ միայն գայն կը խմորէ, այլեւ՝ կատարելապէս իրեն նման կը դարձնէ, գանիկա իրեն հետ կը նոյնացնէ եւ մէկ ամբողջութիւն կը դարձնէ: Ըսել ուզածս այն է, որ ինչպէս թթիւմորը շաղուած ալիւրը իրեն նման կը դարձնէ, այնպէս ալ արքայութեան աւետիսը ընդունողները աստիճանաբար կը սկսին նմանիլ Քրիստոսի եւ անոր հետ դառնալ մէկ: Հետեւաբար, եկեղեցիին պարտականութիւնը չ՛աւարտիր մարդիկը եկեղեցի առաջնորդելով, այլ պէտք է նաեւ օգնել եկեղեցի յանախողներուն անելու Քրիստոսի հետ իրենց սիրոյ միութեան մէջ, եւ հետզհետէ Քրիստոսի նկարագիրը իրենց վրայ առնելու:

ե.- Կարեւոր է գիտնալ որ թթիւմորը մէկ անգամէն չէ որ կը խմորէ ալիւրը, այլ՝ աստիճանաբար, բայց յարատեւօրէն, առանց կենալու: Արդ, թթիւմորին օրինակին մէջ մենք կը տեսնենք քրիստոնէութեան յարատեւ եւ ամենօրեայ աճումը լուռ կերպով: Ինչպէս խմորումը մէկ անգամէն չէ որ տեղի կ'ունենայ, այլ աստիճանական կերպով, այնպէս ալ քրիստոնէութեան տարածումը աշխարհի չորս ծայրամասերը, յառաջատրւական ընթացքով մըն է որ կ'իրագործուի:

զ.- Տակաւին, Յիսուս երկինքի արքայութիւնը կը նմանցնէ թթիւմորի, ցոյց տալու համար, թէ ինչպէս թթիւմորը կեանք կու տայ «մեռած» եւ անգործածելի ալիւրին, այնպէս ալ Աստուծոյ արքայութեան Աւետարանը՝ Յիսուս ինք, կեանք կու տայ հոգեպէս մեռածներուն, եւ Աստուծոյ արքայութեան համար անգործածելի նկատուողները՝ գործածելի կը դարձնէ:

է.- Կարգ մը մեկնիչներ, առաքեալները նմանցուցած են թթիւմորի, որ Քրիստոսի կողմէ դրուեցաւ մարդկութեան կեանքին մէջ: Եւ անոնք՝ առաքեալները, թթիւմորի նման աշխատեցան ու գործեցին, տարածուեցան ու այլակերպեցին ամէն մարդ ու ամէն տեղ:

ը.- Հեղինակ մը կ'ըսէ. «Թթիւմորը ալիւր չէ, բայց խորքին մէջ ալիւրէն է որ կ'առնուի, ահա նոյնպէս ալ, Քրիստոս մարդկութեան

սերունդէն չէր, բայց մարդկային մեր մարմինէն առաւ: Ինչպէս թթխմորը ալիւրէն կ'առնուի՝ ալիւրը փոխելու նպատակով, այնպէս ալ, Քրիստոս մեր մարմինէն առաւ՝ մեզ փոխելու, մաքրելու եւ սրբելու նպատակով»:

բ.– Ի վերջոյ, յիշեմք որ Օգոստինոս կը բացատրէ թէ թթխմորը կը խորհրդանշէ Սէ՛ՐԸ, այսինքն՝ Քրիստոսը, որ մուտք գործեց «երեք գրիւ ալիւրին մէջ», այսինքն՝ մարդկութեան կեանքին մէջ, որպէսզի այլափոխէ ու սրբէ զանհկա եւ Աստուծոյ նուիրէ:

2.– **«Որ կին մը առնելով՝ պարկ մը ալիւրի հետ խառնեց»:** Ո՞վ է որ արքայութեան աւետիսը պէտք է տարածէ ամբողջ աշխարհի մէջ: Արքայութեան աւետիսը տարածողը նոյնինքն առակին մէջ յիշուած կինն է: Իսկ ո՞վ է «կին»ը: Մեր խօսքին սկիզբը արդէն ըսինք թէ «կին»ը կը ներկայացնէ եկեղեցին: Ուրիշներ կ'ըսեն թէ «կին»ը կը ներկայացնէ Քրիստոսը: Ես կը հաւատամ որ պէտք չէ անջատենք իրարմէ Քրիստոսը եւ Քրիստոսի եկեղեցին, որովհետեւ «եկեղեցին Քրիստոսի մարմինն է» (Եփ 1.23), եւ «Քրիստոս գլուխն է եկեղեցիին, իր մարմինին» (Եփ 5.23): Արդ, ինչպէս մարմին եւ գլուխ իրարմէ չեն կրնար բաժնուիլ, այնպէս ալ Քրիստոս եւ իր եկեղեցին իրարմէ պէտք չէ բաժնել: Քրիստոս ի՛նքն է արքայութեան աւետիսը տարածողը եւ զանհկա կը տարածէ եկեղեցիին նամբով: Ահա թէ ինչո՛ւ, «կին» բացատրութեան ետին մենք կը տեսնենք թէ՛ Քրիստոսը եւ թէ՛ Քրիստոսի եկեղեցին:

3.– Ինչո՞ւ Յիսուս ինքզինք կամ եկեղեցին կնոջ մը պատկերով կը ներկայացնէ: Քանի մը պատճառներով.–

ա.– Նախ պէտք է ըսել որ բնական կամ տրամաբանական պատճառը հետեւեալն է.– Այնքան ատեն որ Յիսուս թթխմորին օրինակն է որ կու տայ՝ բնական է որ կնոջ մասին պիտի խօսի, քանի ալիւրը շաղելը եւ թթխմորը անոր մէջ դնելը՝ կնոջ մը գործն է եւ ո՛չ թէ այր մարդուն:

Յիշեմք որ կորսուած դրամին առակին մէջ եւս Յիսուս ինքզինք կնոջ մը պատկերով կը ներկայացնէ (Ղկ 15.8-9): Եւ ինչո՞ւ: Որովհետեւ առակը մեզի կ'ըսէ թէ կինը «տունը ուշադրութեամբ» կ'աւլէ, եւ գիտենք որ աւելը կնոջ մը գործն է ընդհանրապէս եւ ո՛չ թէ այր մարդուն, ուրիշ ինչպէս ալիւր շաղելը եւ անոր մէջ թթխմոր դնելը կնոջ մը գործն է: Այսօր այր մարդիկ կրնան ալիւր ալ շաղել, տուն ալ աւել, բայց նման բան Քրիստոսի ժամանակ անկարելի էր երեւակայել:

բ.– Բոլորս ալ գիտենք որ երբ ծնողներ իրենց զաւակը կորսնցնեն՝ մայրը աւելի՛ անխոնջօրէն եւ աւելի՛ կրակոտ սրտով կը փնտռէ զայն քան հայրը: Մայրը իր զաւակը գտնելու համար կրնայ գիշերներ ու գիշերներ անփուն մնալ: Հայրը կրնայ անկարող ըլլալ նոյնիսկ մէկ

գիշեր անփուն մնալու: Ուստի, Յիսուս ինֆզինֆ եւ իր եկեղեցին կը ներկայացնէ կնոջ մը պատկերով, որպէսզի մէկ կողմէ ցոյց տայ մեզի թէ ինֆ անդադար կերպով եւ առանց յոգնելու կը փնտոէ մեղքի մէջ կորսուած իր գաւակները, իսկ միւս կողմէ, յիշեցնելու համար մեզի թէ եկեղեցին ինֆ եւս պարտի առանց ձանձրանալու եւ առանց յոգնելու, հետապնդել արքայութեան Աւետարանին տարածուիլը աշխարհի մէջ:

գ.- Տակաւին, գիտենֆ որ մայրեր աւելի՛ գուրգուրալից կ'ըլլան քան հայրեր: Ասիկա բացարձակ պայման չէ, բայց ընդհանրապէս այդպէս է: Ուստի, Յիսուս ինֆզինֆ եւ իր եկեղեցին կը պատկերէ կնոջ մը դերով, որպէսզի բացայայտէ թէ ինֆ մօր մը նման կը գուրգուրայ մեր վրայ, եւ որպէսզի յիշեցնէ եկեղեցիին, թէ ինֆ եւս գուրգուրոտ մօր մը նման պէտք է վերաբերի իր գաւակներուն հետ:

դ.- Յիշենֆ նաեւ որ Նոր Կտակարանը ի՛նֆն ալ եկեղեցիին համար կը գործածէ «կին» եւ «հարս» բացատրութիւնները (Յյտ 19.7, 21.9): Պօղոս առաքեալ խօսելէ ետք այր եւ կնոջ միանալուն եւ մէկ մարմին ըլլալուն մասին, կ'ըսէ. «Աստուծոյ ծրագիրին կապուած կարեւոր նշմարտութիւն մըն է ասիկա, որ ըստ իս՝ Քրիստոսի եւ եկեղեցիին կը վերաբերի» (Եփ 5.32):

ե.- Սուրբ Հիլարի Եպիսկոպոսը կը բացատրէ թէ թթխմորին օրինակին մէջ յիշուած կինը կը խորհրդանշէ հրէական ատեանը, որ դատապարտեց Յիսուսը (թթխմորը) թաղուելու, եւ սակայն Յիսուս յարութիւն առաւ եւ խմորեց ամբողջ ալիւրը, այլ խօսքով՝ ամբողջ աշխարհը, ամբողջ մարդկութիւնը, անոնց շնորհելով յարուցեալ կեանֆ մը:

Վերջին քան մը: Առաջքը առած ըլլալու համար սխալ անհասկացողութեանց, պէտք է հաստատել որ Յիսուս չ'ըսեր թէ ինֆ կնոջ կը նմանի: Տիրոջ ըսել ուզածը պարզապէս այն է, որ ինֆ մօր մը յատկութիւնները ունի, օրինակ, մօր մը նման կը գուրգուրայ, մօր մը նման կը փնտոէ, մօր մը նման հոգ կը տանի, կը սիրէ, կը մխիթարէ, կը կարեկցի, կը քաջալերէ: Տանֆ տարբեր օրինակ մը: Երբ Յիսուսի համար կ'ըսուի թէ Աստուծոյ գառնուկն է (Յհ 1.29), ի՞նչ ըսել կ'ուզուի: Բռնացի՞օրէն պէտք է հասկնալ այս հաստատումը: Յստակ է որ ոչ: Պարզապէս ըսել ուզուածը այն է, որ Յիսուս գառնուկի մը նման անմեղ ու անվնաս է, եւ պատրաստ գոհուելու՝ ուրիշը կշտացնելու համար: Կամ երբ կ'ըսենֆ. «Այս ինչ մարդը առիւծի նման է», ըսել կ'ուզենֆ որ գազանի՞ նման է: Յստակ է որ ոչ: Ըսել ուզուածը այն է, որ տուեալ անձը առիւծի նման քաջ ու անվախ է:

Քանի ըսինք թե առակին մէջ յիշուած կինը կը ներկայացնէ թէ՛ Քրիստոսը եւ թէ՛ Եկեղեցին, ուստի, Քրիստոսի նման Եկեղեցին ի՛նքն ալ գուրգուրալից մօր մը բոլոր յատկութիւնները պէտք է ունենայ: Զուր տեղ չէ որ ըսուած է. «Եկեղեցին մեր հոգեւոր ծնողն է», որովհետեւ անոր մկրտարանին արգանդէն է որ հոգեւորապէս կը ծնինք:

4.- **«Կին մը առնելով՝ պարկ մը ալիւրի հետ խառնեց»:** Այստեղ բառ մը կայ որուն պէտք է անդրադառնալ, եւ այդ բառը «առնելով» կամ «առաւ» բառն է: Ի՞նչ ցոյց կու տայ «առաւ» բառը: «Առաւ» բառը գործողութիւն մը, արարք մը, աշխատանք մը կատարելու պատկերն է որ ցոյց կու տայ: Ի՞նչն է այդ աշխատանքը: Այդ աշխատանքը, Աստուծոյ արքայութեան թթիւմորը «առնել»ով՝ գայն ալիւրի, այլ խօսքով՝ ժողովուրդի կեանքին մէջ դնելն է, խառնելն է: Եւ ասիկա Եկեղեցւոյ պարտականութիւնն է: Եկեղեցին կոչումը ունի «առնել»ու Աստուծոյ խօսքին սերմերը եւ գանձնի գանելու մարդոց սրտին ու հոգիին մէջ:

Արդարեւ, Քրիստոս Եկեղեցին կը ներկայացնէ թթիւմորը պարկ մը ալիւրի հետ խառնող կնոջ մը պատկերով, ցոյց տալու համար, որ Եկեղեցիին պարտականութիւնն է արքայութեան աւետիսը տարածել ամենուրեք: Եկեղեցին Աստուծոյ թագաւորութեան մանրանկարն է երկրի վրայ, եւ իբր այդպիսին, ան պարտի այդ թագաւորութեան ջահակիրը հանդիսանալ աշխարհի մէջ:

Եկեղեցին Աստուծոյ թագաւորութեան դուռն է բացուած իւրաքանչիւր մարդու առջեւ: Եկեղեցիին նամբով է որ մանուկին վերածնունդը տեղի կ'ունենայ մկրտութեան աւագանին մէջ՝ Սուրբ Հոգիին ներգործութեամբ: Եկեղեցիին միջոցաւ է որ մենք անդամ կը դառնանք Քրիստոսի մարմինին եւ բնակարան Աստուծոյ, երբ կը նաշակենք Փրկիչին փրկարար մարմինն ու արիւնը:

Երբ կը հաստատենք որ Եկեղեցիին պարտականութիւնն է արքայութեան աւետիսը տարածել ամենուրեք, ըսել չենք ուզեր որ միայն Եկեղեցականներուն պարտականութիւնն է արքայութեան աւետարանիչները ըլլալ: Եկեղեցին Եկեղեցականներու ամբողջութիւնը ըլլալէ առաջ, նախ ամբողջութիւնն է հաւատացեալներուն: Եկեղեցիին անդամ դարձած իւրաքանչիւր անհատ կոչումը ունի ուրիշներուն ալ քայլերը առաջնորդելու մեծ Առաջնորդին:

5.- **«Պարկ մը ալիւրի հետ խառնեց»:** Հին թարգմանութեան մէջ «պարկ մը ալիւր» բառերուն փոխարէն կը կարդանք «երեք գրիւ ալիւր»: Ի՞նչ խորհուրդ կը կանգնի այս բառերուն ետին, կամ ի՞նչպէս պէտք է հասկնալ այս բառերը: Քանի մը ձեւերով.–

ա.- Գրիւր արմտիքի չափ մըն է: «Երեք գրիւ ալիւր» բացատրութիւնը պատահականութիւն չէ: Իւրաքանչիւր մարդ «երեք գրիւ ալիւր» իբրեւ կը ներկայանայ: Ի՞նչ իմաստով: Թիւ երեք-ը կը ներկայացնէ մարդուն սիրտը, հոգին եւ միտքը: Ուրեմն, թթիւմորը «պահել երեք գրիւ ալիւրի մէջ», կը նշանակէ օգնել մարդուն որ Աստուծոյ արքայութեան պատգամը առնէ իր սրտին, հոգիին եւ միտքին մէջ, որպէսզի կարենայ իր ամբողջ սրտով, իր ամբողջ հոգիով եւ իր ամբողջ միտքով պաշտել զԱստուած, եւ նուիրուիլ ու ծառայել Քրիստոսի:

բ.- Չմոռնանք նաեւ որ թիւ 3-ը Եբրայական մտածողութեան մէջ կ'արտայայտէ ամբողջականութիւն եւ կատարելութիւն: Եւ հետեւաբար, թթիւմորը «պահել երեք գրիւ ալիւրի մէջ», կը նշանակէ՝ առաջնորդել մարդ անհատը ամբողջական ու կատարեալ հոգեւոր յեղափոխութեան: Այստեղ «պարկ մը ալիւր» (նոր թրգ.), կամ «երեք գրիւ ալիւր» (հին թրգ.), բառերուն վերաբերեալ մեր տուած բացատրութիւնը չի՛ հակասեր մեր խօսքին սկիզբը մեր տուած բացատրութեան: «Պարկ մը ալիւր» կամ «երեք գրիւ ալիւր» բառերով մենք կրնանք հասկնալ թէ՛ մարդ անհատը եւ թէ՛ ամբողջ աշխարհը:

Եկեղեցին կոչումը ունի Աստուծոյ արքայութեան աւետիսը հասցնելու համայն աշխարհին, բայց միաժամանակ մարդ արարածին անհատապէս: Նոր Կտակարանին մէջ բազմաթիւ են օրինակները որոնք ցոյց կու տան որ Յիսուս աշխատեցաւ թէ՛ ամբողջ աշխարհին համար եւ թէ՛ մարդ անհատին համար առանձնաբար: Նիւթէն չշեղելու համար յիշեմ միայն մէկ օրինակ: Յիսուս իր արիւնը թափած ատեն համայն մարդկութեան համար, միաժամանակ իր ուշադրութիւնը կեդրոնացուց այն մէկ հոգիին վրայ՝ աւագակին վրայ՝ որ իր գթութիւնը հայցեց եւ խնդրեց իրմէ որ զինք յիշէ երբ իր թագաւորութեամբ գայ (Ղկ 23.42-43):

գ.- Աստուածաշունչի ժամանակակից մեկնիչ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի կ'ըսէ. «Եկեղեցին պարտականութիւնը ունի արքայութեան թթիւմորը պահելու «երեք գրիւ ալիւրի մէջ», այսինքն՝ մարդուն մէջ, որպէսզի զանիկա վերածէ հացի եւ զայն նուիրէ Սուրբ Երրորդութեան: Ալիւրը առանց այս կնոջ (եկեղեցիին) գործող ու թթիւմորը շալկող ձեռքերուն, միայն կենդանիներուն դիմաց թափուելու արժանի է. բայց կնոջ ձեռքերուն մէջ եղող թթիւմորին միջոցաւ, ալիւրը (մարդը) սուրբ հաց կ'ըլլայ որուն համար կ'ուրախանայ Սուրբ Երրորդութիւնը»:

դ.- Ընդհանրական եկեղեցւոյ հայրերէն՝ Յերոնիմոս, կը բացատրէ թէ «երեք գրիւ ալիւր»ը կը խորհրդանշէ մարդուն հոգիին, մտքին ու

մարմինն միութիւնը, եւ կ'ըսէ, թէ եկեղեցին կոչումը ունի մարդը իր ամբողջութեանը մէջ՝ իբրեւ հոգի, միտք ու մարմին, սրբելու եւ զանկա Քրիստոսի ընծայելու:

ե.- Սուրբ Հիլարի Եպիսկոպոսը կը բացատրէ թէ «երեք գրիւ ալիւր»ը կը խորհրդանշէ՝ Օրէնքը, մարգարէները եւ Աւետարանը: Յիսուսի մէջ այս երեքը տարօրինակ միութեամբ մը ներկայ են: Օրէնքին նպատակը Յիսուսի մասին խօսիլն է, մարգարէութեանց նպատակը Յիսուսը յայտարարելն ու հրապարակելն է, իսկ Աւետարանին նպատակը նոյնինքն Յիսուսը պատգամելն է, քարոզելն է, հրամցնելն է: Եւ այս ձեւով հանդէս կու գայ Սուրբ Գիրքերուն մէկութիւնն ու միութիւնը՝ իր բոլոր օրէնքներով, իր բոլոր մարգարէութիւններով եւ իր բոլոր ուրախացուցիչ աւետիսներով: Յիշեցէք որ այլակերպութեան ժամանակ, Պետրոս առաքեալ ուզեց որ երեք վրաններ կանգնեցնէ, մէկը Մովսէսին համար որ կը խորհրդանշէր՝ Օրէնքը, մէկը Եղիա մարգարէին համար որ կը խորհրդանշէր՝ մարգարէները, եւ մէկն ալ Յիսուսի համար որ կը ներկայացնէր՝ Աւետարանը, բայց Աստուած ամպի երեք կտորներ չդրկեց, այլ մէկ ամպի կտոր մը, ցոյց տալու համար որ այս երեքը՝ Օրէնք, մարգարութիւն եւ Աւետարան՝ մէկ են Քրիստոսով:

զ.- Ուրիշ մեկնիչներ կ'ըսեն թէ «երեք գրիւ ալիւր»ը կը խորհրդանշէ Նոյի երեք որդիներէն՝ Սէմէն, Քամէն ու Յաբեթէն՝ յառաջացած տարբեր-տարբեր սերունդները, ազգերը եւ ժողովուրդները: Եւ եկեղեցին այն մայրն է որ երկինքի արքայութեան թթիւմորը, այլ խօսքով՝ Քրիստոսի Աւետարանը կը շնորհէ իրարմէ տարբեր եղող բոլոր ժողովուրդներուն հաւասարապէս, որպէսզի անոնք Քրիստոսի թթիւմորով մէկ ըլլան հոգիով ու միտքով:

է.- Օգոստինոս կը բացատրէ թէ «երեք գրիւ ալիւր»ը կը խորհրդանշէ մարդուն սիրտը, հոգին եւ միտքը որոնցմով մարդը կոչուած է սիրելու զԱստուած: (Արդարեւ, որպէսզի մարդը կարենայ սիրել զԱստուած իր ամբողջ սրտով, իր ամբողջ հոգիով եւ իր ամբողջ միտքով, պէտք է թոյլ տայ որ Քրիստոսի թթիւմորը բորբոքի ու վառի իր էութեան մէջ):

ը.- Տակաւին, Օգոստինոս «երեք գրիւ ալիւր» բացատրութիւնը կը բաղդատէ Սերմնացանին առակին մէջ յիշուած 30, 60, եւ 100 թիւերուն հետ: Օգոստինոս յաւելեալ բացատրութիւն չի տար այդ բաղդատութեան վերաբերեալ: Բայց մենք այս ուղղութեամբ կրնանք հետեւեալը ըսել.- Երբ Քրիստոսի արքայութեան թթիւմորը դրուի մարդոց սրտին մէջ, այլ խօսքով երբ մարդիկ ընդառաջեն արքայութեան հրաւերին, բոլորը նոյն

չափով արդիւնք չեն տար, ոմանք 30 պտուղ կու տան, ոմանք՝ 60, եւ ոմանք ալ՝ 100:

բ.– Եթէ առակին մէջ յիշուած կինը հասկնանք Քրիստոսը, որ Աստուծոյ արքայութեան Աւետարանին թթիւմորը առնելով կը խառնէ «երեք գրիւ ալիւր»ի մէջ, այդ պարագային կրնանք ըսել նաեւ որ «երեք գրիւ ալիւր»ը կը ներկայացնէ ա) Քրիստոսէ առաջ ապրող մարդիկը, բ) Քրիստոսի ժամանակակից մարդիկը, եւ գ) Քրիստոսէ ետք եկող մարդիկը: Եւ ասիկա շատ տրամաբանական բացատրութիւն մըն է, եթէ երբեք յիշենք որ Յիսուսի աշխարհ բերած փրկութիւնը համայն մարդկութեան համար է, մանաւանդ եթէ երբեք յիշենք որ Յիսուս «թէպէտ մեռաւ մարմնով, բայց կենդանի մնաց հոգիով: Եւ հոգիով ալ՝ գնաց քարոզեց բանտարկուած հոգիներուն» (Ա.Պտ 3.18-19, 4.6): Հիմնուելով այս համարին վրայ, կը տեսնենք թէ Յիսուս գնաց եւ քարոզեց ննջեցեալներուն նաեւ, եւ կարիքը չեմ գգար ըսելու թէ ան նաեւ քարոզեց իր ժամանակակից մարդոց, եւ իր համբարձումէն ետք, ան շարունակեց եւ կը շարունակէ խօսիլ եկեղեցւոյ նամբով մարդկութեան: Այս իմաստով, հետեւաբար, կրնանք ըսել թէ «երեք գրիւ ալիւր»ը արդարօրէն կը ներկայացնէ Քրիստոսէ առաջ ապրող, Քրիստոսի ժամանակ ապրող եւ Քրիստոսէ ետք ապրող մարդկութիւնը:

6.– **«Ալիւրի հետ խառնեց»:** Բացատրեցինք որ «ալիւր»ը կը ներկայացնէ թէ՛ աշխարհը եւ թէ՛ մարդ անհատը: Արդ, հարց կու տանք թէ ինչո՞ւ Յիսուս աշխարհը կամ մարդը ալիւրի կը նմանցնէ: Քանի մը հպանցիկ մատնանշումներ.–

ա.– Որոշ մեկնիչներ բացատրած են որ Յիսուս մարդը կամ մարդուն սիրտը «ալիւր»ի կը նմանցնէ, անոր համար որ մարդուն սիրտը ալիւրի նման կակուղ է, փափուկ է, եւ ուստի, պատրա՛ստ իր մէջ առնելու ոեւէ բան որ մէջը կը սերմանուի կամ կը դրուի. եւ քանի որ մարդուն սիրտը այդպիսին է, ուստի զգոյշ պէտք է ըլլալ որ միայն երկնային սերմեր այդտեղ սերմանուին: Սիրելի՛ ընթերցող, սիրտդ ինչի՞ կը նմանի: Կակուղ ու փափուկ ալիւրի՞, թէ՛ ժայռի նման հողի, որ կը մերժէ իր մէջ ընդունիլ Աստուծոյ խօսքին սերմը եւ Աստուծոյ արքայութեան թթիւմորը:

բ.– Տակաւին, Յիսուս մարդուն սիրտը «ալիւր»ի կը նմանցնէ, ցոյց տալու համար, թէ ինչպէս շահուած ալիւրը ի գօրու է խմորուելու երբ թթիւմորը մէջը դրուի, այնպէս ալ, մարդուն սիրտը ի գօրու է խմորուելու Աստուծոյ խօսքով, երբ Աստուծոյ խօսքին թթիւմորը մէջը ընդունի: Եւ դարձեալ, ինչպէս ալիւրը պէտք է շահուած ըլլայ որպէսզի թթիւմորը կարենայ գայն խմորել, այնպէս ալ մեր սիրտերը պէտք է

շաղուած ըլլան դէպի Աստուած բացուելու փափաքով, պատրաստակամութեան կրակով, որպէսզի կարենան դիրութեամբ ընդառաջել Աստուծոյ թթիւմորանման խօսքին ներգործութեան եւ ազդեցութեան:

գ.- Թէպէտ «շաղուած» բառը բնագիրին մէջ չկայ, բայց յստակ է որ Յիսուս պատահական ալիւրի մասին չէ որ կը խօսի, այլ՝ շաղուած ալիւրի մասին, այլապէս՝ ալիւրի մէջ դրուող թթիւմորի մասին պիտի չխօսէր: Կարելոր է գիտնալ որ բնագիրը շաղուած ալիւրի մասին է որ կը խօսի, որովհետեւ խորքին մէջ մարդուն սիրտը շաղուած ալիւրին է որ կը նմանցուի եւ ո՛չ թէ չշաղուած ալիւրին, որ փոշիի նման կը ցրուի: Շաղուած ալիւրը մէկ ամբողջութիւն է, հովը գայն չի կրնար ցրուել: Ուստի, մարդուն սիրտը շաղուած ալիւրի կը նմանցուի, ցոյց տալու համար որ անիկա իրարմէ անջատ եղող փոշիներու չի նմանիր, այլ մէկ ամբողջութիւն է, եւ փորձութեանց հարուածները չեն կրնար գայն ցրուել, մանաւանդ եթէ անիկա շաղուած է Քրիստոսի հաւատով, ներբնակուած է արքայութեան Աւետարանին թթիւմորով, եւ կ'ապրի ու կը բարախէ յաւիտենական կեանքին յոյսով:

դ.- Մեկնիչ մը ըսած է. «Ալիւրը իր էութիւնը չի փոխեր երբ թթիւմորի միջոցաւ խմորուի, ահա նոյնպէս ալ, երբ Աստուծոյ խօսքին թթիւմորը առնենք մեր սրտին մէջ, մեր սիրտը իր էութեամբ թէպէտ նոյնը կը մնայ, բայց տարօրինակ փոփոխութիւն եւ այլակերպութիւն կ'ապրի»:

7.- **«Պարկ մը ալիւրի հետ խառնեց»:** Այստեղ կարելոր նշմարութիւն մը կայ որ մեր ուշադրութենէն կը վրիպի եթէ հին թարգմանութիւնը նկատի չառնենք: Հին թարգմանութեան մէջ կը կարդանք. «Երեք գրիւ ալիւրի մէջ պահեց»: Արդէն խօսեցանք «երեք գրիւ ալիւր» բացատրութեան մասին: Հիմա խօսինք «պահեց» բառին մասին, որ կայ նաեւ Յունարէն բնագիրին մէջ՝ ΕΝΕΚΡΟΥΣΕΝ:

Զարեհ Արք. Ազնաւորեան այս մասին խօսելով՝ կ'ըսէ. «Աստուածաշունչին մէջ խմորը կամ թթիւմորը մի՛շտ ալ կը ներկայանայ իբրեւ խորհրդանիշ բարոյական ապականութեան: Միակ տեղը ուր թթիւմորը կը յիշուի եւ ուր կը թուի մեզի որ ատիկա գերծ է բարոյական ապականութեան մը պատկերացումը ըլլալու կարելիութենէն, այս առակին մէջ է: Եւ սակայն, չենք կրնար ուրանալ, որ եթէ երբեք խմորին տարածուիլը մէկ կողմէ ցոյց կու տայ եկեղեցիին տարածուիլը համայն աշխարհի մէջ, միւս կողմէ ցոյց կու տայ եկեղեցիին մէջ բարոյական ապականութեան տարածուիլը: Հին թարգմանութեան մէջ բառ մը կայ որ անհրաժեշտ է լուսարձակի տակ բերել: Հոն կը կարդանք որ կինը խմորը "պահեց" երեք գրիւ ալիւրի մէջ: Ի՞նչ կը նշանակէ "պահեց":

Խմորը ալիւրին մէջ պահուելիք բան չէ: Խմորը եթէ դրուի ալիւրին մէջ եւ "պահուի" իր եղած վիճակին մէջ եւ չտարածուի, կ'ապականի եւ կը գարշահոտի: Քրիստոսի ըսել ուզածը հետեւաբար, այն է, որ եկեղեցւոյ գրկին մէջ բարիին կողմին պիտի ըլլայ չար տարրը նաեւ»:

Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան խօսելով «պահեց» բառին մասին, կը բացատրէ թէ ալիւրը չի կրնար խմորուիլ եթէ երբեք թթխմորը անոր մէջ չդրուի կամ չպահուի: Յիսուս չ'ըսեր թէ կինը թթխմորը «դրաւ» ալիւրին մէջ, այլ կ'ըսէ՝ «պահեց» ալիւրին մէջ: Ինչպէս ալիւրին մէջ պահուող թթխմորն է որ կ'այլափոխէ ալիւրը եւ գայն գործածելի կը դարձնէ, այնպէս ալ, անգործածելի եւ անօգտակար, այլ խօսքով՝ անհաւատ մարդոց մէջ «պահուող» հաւատացեալն է որ կրնայ փոխել անոնց կեանքը Սուրբ Հոգիին շնորհով եւ գանձնք պիտանի դարձնել:

Եւ դարձեալ, ինչպէս ալիւրին մէջ դրուող կամ պահուող թթխմորը «յարձակումի» կամ «հրմշտկումի» կ'ենթարկուի ալիւրին կողմէ, բայց թթխմորը տեղի չի տար մինչեւ որ բոլոր ալիւրը խմորէ, այնպէս ալ, անհաւատներուն մէջ «պահուող» հաւատացեալ մարդը յարձակումներու ու նեղութիւններու կրնայ ենթարկուիլ անհաւատներուն կողմէ, բայց տեղի պէտք չէ տայ, մինչեւ որ իր միջավայրի բոլոր մարդիկը Քրիստոսի արքայութեան Աւետարանի կոչին ընդառաջեն:

8.- «Մինչեւ որ ամբողջ խմորը թթուեցաւ»: Երկու կէտեր .-

ա.- Եկեղեցին կոչումը ունի անդադար կերպով արքայութեան աւետիսին փողը հնչեցնել այդ «պարկ մը ալիւրին», այսինքն՝ աշխարհին մէջ, «մինչեւ որ ամբողջ խմորը» թթուի: «Ամբողջ խմորը թթուեցաւ» բառերը, ակնարկութիւն են արքայութեան տարածման ամբողջ աշխարհի մէջ, որուն մասին խօսեցաւ Քրիստոս եւ որուն մենք ակնարկեցինք վերեւ: Բայց որպէսզի եկեղեցին կարենայ յաջողապէս տարածել Քրիստոսի արքայութիւնը համայն աշխարհի մէջ, նախ եկեղեցին ի'նք (եկեղեցական եւ եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամ), անձնապէս պէտք է խմորուած ըլլայ Քրիստոսի հաւատով եւ սիրով: Ինչպէս լաւ չխմորուած թթխմորը չի կրնար շաղուած ալիւրը խմորել, այնպէս ալ Քրիստոսի հոգիով եւ զօրութեամբ չխմորուած, այսինքն՝ չայլակերպուած քրիստոնեան, չի կրնար Աստուծոյ արքայութեան յաջողակ տարածիչ մը հանդիսանալ:

բ.- Եթէ «ամբողջ խմորը» ըսելով մենք կը հասկանանք՝ ամբողջ աշխարհը, եւ այդ աշխարհին մէջ Աստուծոյ արքայութեան աւետիսին տարածուիլը, յստակ է ուրեմն, որ այստեղ բնագիրը ծածուկ կերպով մեզի կը խօսի Աստուծոյ արքայութեան տիեզերական բնոյթ ունենալուն մասին: Արդարեւ, Աստուածաշունչէն գիտեմք, որ ժամանակներու

աւարտին երբ Յիսուս երկրորդ անգամ յայտնուի, Աստուծոյ արքայութիւնը պիտի ընդգրկէ համայն տիեզերքը: Մենք ամէն նիգ պէտք է թափենք չգրկուելու այդ արքայութենէն: Պօղոս առաքեալ խօսելով Աստուծոյ պատրաստած հանգիստին մասին՝ կ'ըսէ. «Չափազանց զգոյշ ըլլանք որ ոեւէ մէկը անկէ չգրկուի» (Եբր 4.1):

Կ'աւարտեմ հոգեւոր երկու խորհրդածութիւններով. –

1.– Սիրելի՛ ընթերցող, հրէական մտածողութեան մէջ խմորը դարձած էր խորհրդանիշ վարակող անմաքութեան եւ բարոյական ապականութեան (Ղկ 12.1: Ա.Կր 5.6-8), Քրիստոսով սակայն, խմորը դարձաւ «վարակող» սրբութեան: Եթէ կ'ուզես «վարակուիլ» Քրիստոսի սրբութենէն ու սէրէն, զօրութենէն ու հաւատքէն, թոյլ տուր որ ան սրտիդ մէջ իր թթիւմորէն դնէ: Իր տուած թթիւմորով միայն կրնաս դառնալ զաւակ Արքային եւ ժառանգորդ արքայութեան: Այդ թթիւմորը լի է Քրիստոսի արիւնով: Ահա թէ ինչո՛ւ անհկա կարող է մաքրել ու սրբել ամբողջ աշխարհը եւ քեզ: Դուն իբրեւ ալիւր պէտք ունիս քեզ սրբող Քրիստոսապարգեւ այդ թթիւմորին:

2.– Ինչպէս թթիւմորը երբ ալիւրին մէջ դրուի՝ փոփոխութիւն յառաջ կու գայ ալիւրին մէջ, այնպէս ալ երբ մենք Աստուծոյ արքայութեան Աւետարանը մնայուն կերպով հնչեցնենք մարդոց կեանքին մէջ՝ կը փոխուի՛ եւ կ'այլակերպուի՛ անոնց կեանքը: Ուստի քեզ կը հրաւիրեմ որ ըլլաս այն ժրջան կնոջ նման, այլ խօսքով՝ ըլլաս իսկական հաւատացեալ մը, եւ ինդրես Աստուծմէ որ առատօրէն պարգեւէ քեզի երկինքի արքայութեան թթիւմորէն, եւ դուն քաջ զինուորի մը նման, տարածես այդ թթիւմորը մարդոց կեանքին մէջ, եւ բոլորին յիշեցնես, թէ հոն ուր արքայութեան Աւետարանին թթիւմորը՝ Քրիստոս ինք, մուտք կը գործէ՝ հոն փոփոխութիւն յառաջ կու գայ, նորոգութիւն ու հոգեւոր զարթօնք կ'ըլլայ:

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԻՆ ԱՌԱԿԸ

«Երկու հոգի տանար գացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր.– "Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շաբաթը երկու անգամ ծով կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տանարին կու տամ": Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր.– "Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը": Կ'ըսեմ ձեզի.– եզրակացուց Յիսուս.– մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (Ղկ 18.10-14):

Թէ ի՞նչ բանը պատճառ եղաւ որ Յիսուս այս առակը պատմէ՝ Ղուկաս կու տայ պատճառը ըսելով. «Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք իրենք իրենց համար այն համարումը ունէին թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին» (Ղկ 18.9):

«Երկու հոգի տանար գացին աղօթելու. մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր» (Ղկ 18.10): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Երկու հոգի»: Բնագիրին մէջ «հոգի» բառին փոխարէն մենք ունինք «մարդ» բառը: Մեծն Կիւրեղ խօսելով «մարդ» բառին մասին՝ կը հաստատէ. «Յիսուս կ'ըսէ թէ երկու մարդիկ տանար գացին աղօթելու: Յիսուս աղօթողները «մարդ» կը կոչէ առանց նայելու անոնց ունեցած հարստութեան կամ իշխանութեան...: Ան երկրի բոլոր բնակիչները կը դիտէ իբրեւ մարդ, առանց խտրութիւն դնելու անոնց միջեւ»: Որքան կը հանդիպինք մարդոց որոնք ասոր կամ անոր վերաբերեալ «մարդ չէ» կ'ըսեն: Յիսուսէն սորվինք մեր նմանները «մարդ» կոչել: Եթէ Աստուած որուն դէմ ամէն տեսակի մեղք կը գործենք՝ մարդ կը կոչէ մեզ, մենք ի՞նչպէս կը համարակիմք մեր նմանները մարդ չկոչել:

2.– «Տանար գացին աղօթելու»: Այս բառերով Յիսուս կ'ուզէ երեք բան ցոյց տալ մեզի.–

ա.– Նախ, կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ տանարը կամ եկեղեցին ամէն բանէ առաջ աղօթքի տեղ է, եւ մարդիկ որոնք հոն կ'երթան՝ աղօթքի՝ համար պէտք է երթան:

բ.– Փարիսեցիի մը համար անընդունելի երեւոյթ էր որ մաքսաւոր մը տանար մտնէր եւ աղօթէր: Յիսուս Փարիսեցիի եւ մաքսաւորի այս առակով, եկաւ ցոյց տալու Փարիսեցիներուն որ Աստուծոյ տանարը՝ բոլորի՛ն համար է, բոլորի՛ն տեղն է, եւ մանաւանդ տեղն է անոնց՝ որոնք կ'անդրադառնան իրենց մեղաւորութեան եւ Աստուծոյ ողորմութիւնը կը հայցեն, ինչպէս ըրաւ մաքսաւորը ինք:

գ.– «Տանար գացին»: Տանար գացողը՝ պէտք է հաշիւը ընէ որ Աստուծոյ է որ կ'երթայ, Աստուծոյ հանդիպելու՛ կ'երթայ, իր սիրտը Աստուծոյ բանալու՛ կ'երթայ: Փարիսեցին սակայն Տանար չգնաց Աստուծոյ հանդիպելու նպատակով: Անոր նպատակը ուրիշ էր: Անոր նպատակը մարդոց երեւի՛լն էր, մարդոց ուշադրութեան եւ ծափահարութեան առարկան դառնալն էր: Փարիսեցին կեղծաւոր մըն էր, եւ կեղծաւորին համար բարեպաշտ երեւելու կամ ձեւանալու լաւագոյն տեղը Տանարն էր, ահա թէ ինչու Տանա՛ր գնաց եւ ոչ ուրիշ տեղ: Կային հարկաւ Փարիսեցիներ որոնք փողոցներուն անկիւնները կամ հրապարակներուն մէջ կեցած կ'աղօթէին ու ողորմութիւն կու տային, «մարդոցմէ փառաւորուելու ակնկալութեամբ» (Մտ 6.2): Բայց լաւագոյն տեղը ուր ամէն մարդ կրնար գիրենք տեսնել՝ Տանարն էր:

3.– «Մէկը՝ Փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր»: Երեք նշումներ.–

ա.– Եկեղեցւոյ հայրերէն Մեծն Բասիլիոս եւ ուրիշներ, կը բացատրեն որ Փարիսեցին կը ներկայացնէ հրեայ ժողովուրդը որ կը հաւատար թէ Մովսիսական օրէնքներու գործադրութեամբ կրնային արդարանալ, իսկ մաքսաւորը կը ներկայացնէ հեթանոս աշխարհը, որ ցանկաց ու փնտոց փրկութիւնը, թէպէտ գրկուած էր այն բոլոր առաւելութիւններէն (ուխտերէն, խոստումներէն, օրէնքներէն, մարգարէութիւններէն, եւայլն) որ հրեայ ժողովուրդը ունէր:

բ.– Ինչո՞ւ Յիսուս բաղդատական մը կ'ընէ աղօթող Փարիսեցիի մը եւ մաքսաւորի մը միջեւ: Փարիսեցիներ չէին հաւատար որ մաքսաւորի մը աղօթքը կրնար լսուիլ Աստուծոյ մօտ, եւ սակայն կը հաւատային որ Աստուած իրենց աղօթքը կը լսէ: Յիսուս տուեալ առակով եկաւ բացայայտելու թէ ճիշդ հակառակն ալ կրնայ պատահիլ, այսինքն՝ Աստուած կրնայ լսել մաքսաւորին աղօթքը, եւ անտեսել Փարիսեցիին աղօթքը: Հոսկէ կը սորվինք թէ զգոյշ պէտք է ըլլանք անարգելու մէկը եւ կարծելու որ Աստուած անոր աղօթքները չի լսեր: Կրնայ ճիշդ հակառակը պատահիլ: Աստուած կրնայ անոր աղօթքը լսել ու պատասխանել, իսկ մեր աղօթքը՝ չլսել:

գ.– Փարիսեցին կը ներկայացնէ անգիղջ եւ անապաշխար մարդիկը, իսկ մաքսաւորը՝ զոջացող ու ապաշխարող մարդիկը: Այս երկուքին

ներկայութիւնը տաճարին մէջ, ցոյց կու տայ թէ եկեղեցւոյ կեանքին մէջ միշտ ներկայ եղած են եւ ներկայ պիտի ըլլան ապաշխարածն ու չապաշխարածը, կոտրած սիրտ ունեցողն ու գոռոզ սիրտ ունեցողը: Յիսուս որումի առակին ընդմէջէն նոյն այս իրողութիւնն է որ պարզեց: Որումի առակը յստակօրէն ցոյց կու տայ թէ Աստուծոյ խօսքին ականջ տուող մարդոց մէջ, կան որոնք կը նմանին որումի եւ կան որոնք կը նմանին ցորենի, եւ անոնք կողմ-կողմի են, միասին ու միատեղ կ'անին:

«Փարիսեցիներ մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր.-- "Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՛ որ ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքաւորին պէս ալ չեմ: Այլ՝ շարքեր երկու անգամ ծով կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ"» (Ղկ 18.11-12): Քանի մը մատնանշումներ.--

1.-- Փարիսեցիներ ամենագովելի Աստուծոյ ներկայութեան կանգնած՝ ինքզինքն էր որ կը գովէր, մոռնալով Առակաց գիրքին խօսքը որ կ'ըսէ. «Քեզ ուրիշը թող գովէ եւ ո՛չ թէ քու բերանդ» (Սո 27.2):

Փարիսեցիներ մշտագործ ու մեծագործ Աստուծոյ դիմաց կեցած՝ իր գործերուն մասին էր որ կը պատմէր, մոռնալով մեր Տիրոջ խօսքը. «Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ» (Յե 5.17):

Փարիսեցիներ Օրէնքի Տուրիչին առջեւ կանգնած՝ իր օրինապահութեան մասին էր որ կը խօսէր, մոռնալով որ «Քրիստոսով Օրէնքը իր վախճանին հասած է» (Հո 10.4):

Փարիսեցիներ արդարութեան ու արդարացնող մեր երկնաւոր Հօր առջեւ կանգնած՝ ինքնիր արդարութեան մասին էր որ կը խօսէր, մոռնալով որ «միայն Քրիստոսի հաւատացողը կ'արդարանայ» (Հո 10.4):

Ան փոխանակ Աստուծոյ մեծութիւնը ներբողելու, իր անձին մեծութիւնը կը ներբողէր:

Ան եկած էր իր «արժանիքները» ցուցնելու Աստուծոյ որ տերն ու բաշխիչն է բոլոր արժանիքներուն:

Ան եկած էր իր անարատութիւնը յայտնելու անոր որ հայրն է անարատութեան:

2.-- «Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ...»: Երկու նշումներ.--

ա.-- Ահաւասիկ մէկը որ շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ, բայց իր սրտին մէջ Աստուծոյ շնորհքին հետքը չկայ: Փարիսեցիներ կեղծաւոր մըն էր: Ի՞նչպիսին կ'ըլլայ կեղծաւոր մարդը: Կեղծաւոր մարդը մէկն է որ կը փորձէ ձեւանալ բան մը որ չէ: Փարիսեցիներ կը ձեւացնէր որ ինք շնորհակալ սիրտ ունէր, բայց իսկութեան մէջ ան ապերախ սիրտ ունէր: Ան աղօթող մէկը չէր բայց կը փորձէր աղօթո՞ղ ձեւանալ:

բ.– Թեպետ Փարիսեցիին շնորհակալութիւն կը յայտնէ Աստուծոյ, բայց չ'ըսեր թէ ինք ինչ որ է՝ Աստուծոյ շնորհով է: Սա կը նշանակէ թէ իր շնորհակալութիւն յայտնելը ձեւական էր, մարդոց երեւելու համար էր: Երբ աղօթով շնորհակալութիւն յայտնենք Աստուծոյ բայց չըսենք կամ չիշխենք թէ մենք ինչ որ ունինք՝ Աստուծմէ՝ ունինք, ինչ որ ենք՝ Աստուծմով ենք, մեր աղօթքը իր իմաստը կը կորսնցնէ:

3.– Փարիսեցիին աղօթքը խորքին մէջ աղօթք մը չէր, այլ ուրիշը «յափշտակող, անիրաւ, շնացող» կոչելու, այլ խօսով՝ ուրիշը այպանելու եւ ինքզինք արդարացնելու անյաջող փորձ մը: Անոր ըրածը ուրիշ բան չէր եթէ ոչ ուրիշը գետին գարնելով՝ ինքզինք բարձրացնել, ուրիշը անարգելով՝ իր Ես-ը փառաբանել: Ո՛չ ոք իր եղբայրը անուանարկելով կրնայ լաւ անունի տէր դառնալ: Ո՛չ ոք իր նմանը զգետնելով կրնայ մեծնալ:

4.– «Ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ»: Այս բառերէն յստակ կ'երեւի թէ Փարիսեցիին ինքնահաւան էր: Ո՞վ է ինքնահաւան մարդը: Ինքնահաւան մարդը այն մարդն է՝ որ միայն ինքզինք կը հաւնի, միայն իր կատարած գործերուն եւ իրագործումներուն մասին կը խօսի: Ինքնահաւան մարդը չի տեսներ ուրիշին արժէքն ու կարողութիւնները: Ան իր անձէն զատ ուրիշ մէկը չի տեսներ ու չի գնահատեր, չի մեծարեր ու չի պատուեր:

Ինքնահաւան մարդուն համար ուրիշը «յափշտակող» է, իսկ ինք՝ ողորմած: Ուրիշը «անիրաւ» է, իսկ ինք՝ մի՛շտ իրաւունքով: Ուրիշը «շնացող» է, իսկ ինք՝ մաքուր: Ուրիշը անպէտք է, իսկ ինք՝ պիտանի: Ուրիշը անարժէք է, իսկ ինք՝ թանկագին: Այսպիսի ինքնահաւան մէկը որքան ալ որոշ օրէնքներ պահէ, որքան ալ եկեղեցի երթայ, մոմ վառէ, խունկ ծխէ, աղօթք ընէ, ողորմութիւն տայ, ընդունելի չ'ըլլար ո՛չ ինք եւ ոչ ալ իր կատարածները Աստուծոյ մօտ:

Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետ կը բացատրէ թէ ինքնահաւան մարդը, նոյնիսկ եթէ արդար է, ծոմ կը պահէ, տասանորդ կու տայ՝ անոր կառքը դատապարտուած է կործանումի, իսկ խոնարհ ու հեզ մարդը, նոյնիսկ եթէ բռնուած է մեղքի շղթաներուն մէջ, պիտի կարենայ յաղթել Փարիսեցիի ձիուն, թեպետ գայն էշողը կրնայ աղքատ ըլլալ արդար գործերու մէջ:

5.– Անդրադառնամ երեւոյթի մը: Երբեմն երբ մարդոց խօսուի ապաշխարութեան մասին, անմիջապէս կ'ըսեն. «Մենք ի՞նչ ըրած ենք որ ապաշխարենք. ո՛չ գողութիւն ըրած ենք, ո՛չ մարդ սպաննած ենք, եւ ո՛չ ալ մէկուն իրաւունքը կերած ենք»: Այդպէս մտածողներուն կը յիշեցնեմ,

որ ահաւասիկ մենք այստեղ ունինք Փարիսեցի մը, որ «ուրիշ մարդոց նման՝ յափշտակող, անիրաւ, շնացող» չէր, այլ խօսքով՝ ան գողութիւն չէր ըրած, անիրաւութիւն չէր ըրած, շնութիւն չէր ըրած, մարդ չէր սպաննած, բայց չարդարացաւ Աստուծոյ դիմաց:

Յիշեցէք որ մեծահարուստ երիտասարդը Յիսուսի ըսած էր թէ ինք իր պատանութենէն ի վեր պահած էր Աստուծոյ բոլոր պատուիրանները: Կը նշանակէ թէ ինք եւս Փարիսեցիին նման ո՛չ գողութիւն ըրած էր, ո՛չ սուտ խօսած էր, ո՛չ մարդ սպաննած էր, եւ ո՛չ ալ մէկուն իրաւունքը կերած էր: Բայց Մատթէոս կ'ըսէ թէ երիտասարդին մեկնումէն ետք, Յիսուս աշակերտներուն դառնալով՝ ըսաւ. «Հարուստը շատ դժուար երկինքի արքայութիւն պիտի մտնէ» (Մտ 19.18-23): Տուեալ երկու օրինակներն ալ ցոյց կու տան որ ապաշխարութիւնը միայն գողութիւն, շնութիւն, ստախօսութիւն, մարդասպանութիւն ըրած մարդոց համար չէ, այլ՝ բոլորին համար:

Եւ յետոյ, ըսէք ինձի, մենք ինչո՞վ կ'օգտուինք երբ գողութիւն չենք ըրած բայց ուրիշը գո՞ղ կը կոչենք: Ինչո՞վ կ'օգտուինք երբ շնութիւն չենք ըրած բայց ուրիշը շնացո՞ղ կ'անուանենք: Ինչո՞վ կ'օգտուինք երբ կը փորձենք հեռու կենալ մեղքէն բայց ուրիշը մեղքի տիղմին մէջ միջնուած կը յայտարարենք: Ինչո՞վ կ'օգտուինք երբ կ'ուրախանանք մեր կատարած բարի գործերով բայց մեր նմանները չարագործ կը նկատենք:

6.- «Ուրիշ մարդոց նման... չեմ, այս մաքսաւորին պէս ալ չեմ»: Փարիսեցիին քննադատեց տաճարէն դուրս գտնուողները, ինչպէս նաեւ քննադատեց տաճարին մէջ եղող մաքսաւորը: Բոլոր մարդիկ՝ ներկայ թէ բացակայ, իր քննադատութեան եւ իր դատումին առարկայ եղան: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Փարիսեցիին չբաւարարուելով ամբողջ մարդկային սերունդը նախատելով՝ յարձակեցաւ նաեւ մաքսաւորին վրայ: Ան յարձակեցաւ բացականչելուն վրայ, եւ վիրաւորեց ներկայ եղողը (մաքսաւորը)»:

Նայինք մենք մեզի: Հաւանաբար մենք եւս չենք հաւնիր ո՛չ եկեղեցի եկողը եւ ո՛չ ալ չեկողը: Գուցէ մենք եւս կը դատապարտենք բոլոր մարդիկը, անոնք ըլլան եկեղեցւոյ մէջ ներկայ թէ բացակայ:

7.- «Ուրիշ մարդոց նման... չեմ»: Տակաւին, Փարիսեցիին բերնին մէջ գտնուող այս հաստատումը ցոյց կու տայ որ ան ո՛չ միայն գետին զարկաւ մաքսաւորը, այլեւ գետին զարկաւ համայն մարդկութիւնը: Չմոռնանք որ Փարիսեցիները իրենք զիրենք աշխարհի բոլոր մարդոց՝ մէն աւելի լաւ կը կարծէին: Անոնք կը կարծէին որ Աստուծոյ թագաւորութիւնը հրեաներուն համար է այո՛, բայց մանաւանդ իրենց

համար: Անոնք կը հաւատային որ օրինապահ Փարիսեցիները յատուկ տեղ պիտի ունենային Աստուծոյ թագաւորութեան մէջ:

«Ուրիշ մարդոց նման... չեմ»: Այս խօսքը նախատինք մըն է ուղղուած համայն մարդկութեան: Մաքաւորը Աստուծոյ դիմաց կանգնած ինքզինք դատապարտեց, մինչդեռ Փարիսեցին՝ ուրիշը դատապարտեց: Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետ կ'ըսէ. «Բոլոր չարիքները վերցուեցան մաքաւորէն, քանի որ վերցուեցան անկէ մայրը բոլոր չարիքներուն, այսինքն՝ փառամոլութիւնը եւ մեծամտութիւնը...: Փարիսեցին սակայն դատապարտեց համայն աշխարհը, ինքզինք նկատելով աւելի լաւ քան ամբողջ մարդկութիւնը: Նոյնիսկ եթէ ինքզինք աւելի գերադաս համարէր քան տասը հոգի, կամ հինգ հոգի, կամ երկու հոգի, կամ նոյնիսկ մէկ հոգի՝ դարձեալ ընդունելի պիտի չըլլար: Տակաւին, ան ինքզինք ամբողջ աշխարհէն գերադաս համարելով չգոհացաւ, այլ առջեւ գնաց եւ դատապարտեց ու մեղադրեց համայն մարդկութիւնը իբրեւ 'յափշտակող, անիրաւ, շնացող'»:

8.- «Այս մաքաւորին պէս ալ չեմ»: Եկեղեցւոյ հայրերէն՝ Թէոդորոս կ'ըսէ. «Երբ Փարիսեցին կ'աղօթէր եւ շնորհակալութիւն կը յայտնէր Աստուծոյ իր ունեցած առաքինութեանց համար՝ սուտ չիտեսցաւ, այլ նշմարտութիւնը ըսաւ, եւ ասոր համար չէր որ դատապարտուեցաւ, բայց երբ դարձաւ մաքաւորին կողմը եւ ըսաւ. «Այս մաքաւորին պէս ալ չեմ», ուրիշը դատելու ու դատապարտելու մեղքն է որ գործեց»: Ուրիշը դատապարտող մարդը չի կրնար Աստուծոյ դատաստանէն ազատիլ (Մտ 7.1):

9.- Ամենէն սովորական բանն է որ երբ մարդ աղօթքի կենայ՝ բան մը խնդրէ Աստուծմէ: Ոմանք օգնութիւն կը խնդրեն, ուրիշներ՝ ներում: Ոմանք առողջութիւն, ուրիշներ՝ բժշկութիւն: Ոմանք մխիթարութիւն, ուրիշներ՝ գօրութիւն: Եւ այլն: Փարիսեցին ո՛չ մէկ բան խնդրեց Աստուծմէ, եւ իր այդ վերաբերմունքով կարծէք ըսել կ'ուզէր թէ ինք պէտք չունէր Աստուծոյ օգնութեան, թէ ինք ինքնաբաւ էր, անկարօտ էր: Աստուած ոչինչ կու տայ ինքնաբաւ զգացող մարդուն: Աստուած ոչինչ կը շնորհէ ինքզինք անկարօտ նկատող անհատին: Օգոստինոս կ'ըսէ. «Փարիսեցին բան մը չխնդրեց Աստուծմէ եւ անոր համար ալ բան մը չստացաւ: Գնաց աղօթելու, բայց չմտածեց Աստուծո՛յ աղօթելու մասին, այլ՝ իր անձին փառաբանութեան մասին: Եւ այս բոլորէն աւելի, ան անարգեց աղօթող մաքաւորը»:

10.- «Շաբաթը երկու անգամ ծով կը պահեմ եւ ամբողջ եկամուտիս տասանորդը տանարին կու տամ»: Այս բառերը կը պարզեն որ Փարիսեցիին աղօթքը հպարտ եւ եսակեդրոն մարդու աղօթք էր, որովհետեւ ան

իր աղօթքին առանցֆային բաժինը դարձուցած էր իր անձն ու իր կատարած գործերը: Իրեն համար կարեւորը այն էր, թէ ո՞վ էր ինք եւ ի՞նչ ըրած էր: Ինք «յափշտակող, անիրաւ, շնացող» չէր, այլ ինք մէկն էր որ շաբաթը երկու անգամ ծով կը պահէր եւ ամբողջ եկամուտին տասանորդը տանարին կու տար: Ան փոխանակ խօսելու իր կեանքին մէջ Աստուծոյ կատարած գործերուն մասին, խօսեցաւ միայն ի՛ր կատարած գործերուն մասին: Եթէ ան չխօսեցաւ Աստուծոյ կատարած գործերուն մասին՝ ի՞նչպէս կ'ակնկալենք որ խօսի իր նմանին կատարած գործերուն մասին: Եթէ ան անտեսեց զԱստուած իր աղօթքին մէջ՝ ի՞նչպէս կ'ակնկալենք որ չանտեսէ իր նմանը: Այս կէտը երկու պատգամ ունի մեզի. —

ա.— Երբ աղօթքի կենանք՝ չխօսինք Աստուծոյ մեր կատարած գործերուն մասին, այլ խօսինք ի՛ր կատարած գործերուն եւ մեզի հանդէպ ի՛ր ցուցաբերած սիրոյն ու ողորմութեան մասին: Ո՛չ միայն աղօթքի պահուն այսպէս պէտք է ընենք, այլ՝ միշտ:

բ.— Ոեւէ մէկը որ իր մեղքերով կ'անարգէ զԱստուած՝ անկասկած որ պիտի անարգէ նաեւ իր նման մարդիկը: Որպէսզի սորվինք մարդասէր ըլլալ, նախ պէտք է սորվինք նշմարտապէս պատուել ու պաշտել Աստուած, որովհետեւ նշմարիտ աստուածպաշտութիւնը՝ մեզ կ'առաջնորդէ նշմարիտ մարդասիրութեան:

11.— Եկամուտին տասանորդը տանարին տալը Մովսիսական հրահանգ էր (Ղւ 27.30): Իսկ ծովապահութիւնը որ շատ ընդհանրացած էր կրօնասէր հրեաներուն մօտ, բայց մասնաւորաբար Փարիսեցիներուն եւ անոնց աշակերտներուն մօտ, կը պահուէր շաբթուան երկրորդ եւ հինգերորդ օրերը (Երկուշաբթի եւ Հինգշաբթի), որովհետեւ հրեաներու աւանդութեան համաձայն, Մովսէս Սինայի լեռը բարձրացաւ շաբթուան հինգերորդ օրը եւ անկէ վար իջաւ յաջորդող շաբթուան երկրորդ օրը:

12.— «Այս մաքսաւորին պէս ալ չեմ»: Փարիսեցին իր կատարելութեան չափանիշը դարձուցած էր մաքսաւորը: Եւ սակայն, մեր կատարելութեան չափանիշը Աստուած ի՛նք պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մեր նմանը: Իր նմանին նմանիլ փորձող մարդը՝ կատարեալ անկատարութեան պիտի հասնի: Քրիստոս չըսաւ. «Անկատար եղէք, ինչպէս որ ձեր նմանները անկատար են», այլ ըսաւ. «Կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է» (Մտ 5.48): Յիսուս իր այս բառերով, զԱստուած մեր կատարելութեան չափանիշը դարձնելու կոչ է որ կ'ուղղէ մեզի: Ո՛չ ոք կրնայ անկատարութիւն մը իր չափանիշը դարձնել եւ կատարելութեան հասնիլ: Ո՛չ ոք կրնայ անսրբութիւն մը իր չափանիշը դարձնել եւ սրբութիւն ձեռք ձգել:

13.- «Այս մաքսաւորին պէս ալ չեմ»: Այո՛, սիրելի Փարիսեցի, իրաւունք ունիս ըսելու թէ դուն «այս մաքսաւորին պէս ալ» չես, որովհետեւ դուն այս մաքսաւորին կոտորած սիրտն ու խոնարհ հոգին չունի՛ս, այս մաքսաւորին պէս մեղաւորութիւնդ չհրապարակեցի՛ր, այս մաքսաւորին պէս գլուխդ Աստուծոյ դիմաց չխոնարհեցուցի՛ր, այս մաքսաւորին պէս Տիրոջ գթութիւնը չհայցեցի՛ր ու ներում չխնդրեցի՛ր, եւ մանաւանդ, այս մաքսաւորին պէս արդարացած տուն չգացի՛ր:

14.- «Այս մաքսաւորին պէս ալ չեմ»: Այս բառերով, Քրիստոս կը զգուշացնէ մեզ, որ մեր անձերը ուրիշներուն հետ չբաղդատենք եւ ուրիշներէն աւելի արդար չնկատենք: Փարիսեցին իր աղօթքով կարծէք ըսել կ'ուզէ. «Ես տարբեր եմ ուրիշներէն: Ես աւելի՛ն եմ ուրիշներէն: Ես կը պատկանիմ Աստուծոյ, իսկ ուրիշներ՝ ո՛չ: Ես հաւատքի ու գործի մարդ եմ, իսկ ուրիշներ՝ երբե՛ք»:

Սիրելի՛ ընթերցող, միայն չդատապարտենք կամ չքննադատենք Փարիսեցիին վերաբերմունքը իր մաքսաւոր եղբօր նկատմամբ, այլ հարց տանք մենք մեզի, որ մենք ալ արդեօք մեզ շրջապատող մարդիկը մաքսաւորներ չե՞նք նկատեր: Մենք զմեզ անոնցմէ աւելի մաքուր եւ պիտանի չե՞նք հաշուեր: Յաճախ չե՞նք փորձեր մեր նմաններուն ցուցնել մեր յերկրածոյ արժանիքները, ինչպէս Փարիսեցին փորձեց ընել Աստուծոյ:

15.- Վստահաբար մաքսաւորն ալ իր մէջ ունէր լաւ ու գնահատելի կէտեր, բայց Փարիսեցին այնքան տարուած էր ինքնիր ես-ով, որ ամբողջապէս կուրցած էր եւ անկարող դարձած տեսնելու իր աղօթա-կիցին արժանիքները: Արդեօք մենք նաեւ այնքան չե՞նք տարուած մեր անձերով որ չկարենանք տեսնել մեր եղբօր արժանիքները: Ես-ը կը կուրցնէ մարդը: Ես-ը անարգել կու տայ ուրիշը:

16.- Փարիսեցին որոշ օրէնքներ կը պահէր, ինչպէս օրինակ իր տասանորդը տաճարին տալու օրէնքը, կամ շաբաթը երկու անգամ ծով պահելու օրէնքը, բայց անդին կային ասոնցնէ աւելի կարեւոր օրէնքներ ու պատուիրաններ որոնց մէջ լիովին թերացած էր, ինչպէս օրինակ՝ խոնարհ ըլլալ, իր նմանը սիրել, ուրիշը չքննադատել, եւ այլն, եւ միշտ անոր համար ալ, ան բանով մը չ'օգտուեցաւ իր օրինապահութենէն կամ պատուիրանապահութենէն: Քննե՛նք մեր անձերը: Գուցէ մենք եւս Փարիսեցիին նման որոշ օրէնքներ կը պահենք, բայց ուրիշ կարեւոր բաներու մէջ կը թերանանք: Օրինակ, կրնայ պատահիլ որ Զորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը պահք պահենք, բայց Փարիսեցիին նման հպարտ եւ ինքնահաւան ըլլանք: Կամ կրնայ պատահիլ որ մեր ունեցածէն բաժին

հանենք եկեղեցիին, բայց մարդասեր չըլլանք, նիշդ ինչպիսին էր Փարիսեցին:

17.- Փարիսեցիին համար օրենքը եւ մանաւանդ իր օրինապահութիւնը առաջնահերթ էր քան իր նմանը: Եթէ այդպէս չըլլար, ան գովքը պիտի չհիւսէր իր օրինապահութեան, քննադատելով իր նմանը: Նման երեւոյթ կը գտնենք Բարի Սամարացիին առակին մէջ եւս: Հոն կը տեսնենք թէ ինչպէս ո՛չ քահանան եւ ո՛չ ալ Ղեւտացին մօտենալով օգնեցին վիրաւոր մարդուն, եւ ինչո՞ւ: Որովհետեւ անոնք կարծեցին որ վիրաւոր մարդը արդէն մեռած էր եւ իրենք գիտէին որ Մովսէս կ'արգիլէր մեռած մարդուն մարմինին դպչիլ, որպէսզի չպղծուին (Թւ 19.11): Հոս եւս կը տեսնենք թէ ինչպէս օրենքը աւելի առաջնահերթ կը դասուի քան մարդը կամ մարդասիրութիւնը: Ինչո՞վ կ'օգտուի մէկը երբ օրենքի մարդ է, բայց գթութեան մարդ չէ, մարդասեր չէ:

18.- Փարիսեցիին իր տասանորդը տալով Աստուծոյ, կը կարծէր որ բարեբարութիւն է որ կ'ընէր անոր: Ան կը կարծէր որ պէտք չունէր Աստուծոյ գթութեան որպէսզի կարենար արդարանալ, քանի որ պէտք եղած գործերը կատարած էր: Ան կը խորհէր որ իր գործերով զԱստուած պարտաւոր դարձուցած էր իր անձին նկատմամբ: Զէ՛ եղած եւ պիտի չըլլայ աշխարհին մէջ մարդ մը որ կրցած է կամ կրնայ փրկուիլ իր կատարած գործերով կամ իր ապրած մահուր կեանքով: Մեր անձերուն փրկութիւնը կախեալ չէ մեր գործերէն եւ մեր լաւ վարք ու բարք ունենալէն, այլ Քրիստոսի հանդէպ մեր ունեցած հաւատքէն: Փրկութեան միակ նախապայմանը վերածնիլն է Աստուծոյ Հոգիէն: Բարեգործութիւնը սակայն բնական պտուղը պէտք է ըլլայ այդ վերածնունդին:

«Իսկ մաքսաւորը հեռուն կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու՝ կուրծքը կը ծածէր եւ կ'ըսէր.-- "Աստուա՛ծ, ներէ՛ մեղաւորիս մեղքերը": Կ'ըսեմ ձեզի.-- եզրակացուց Յիսուս.-- մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին». (Ղկ 18.13-14): Քանի մը հաստատումներ.--

1.- «Իսկ մաքսաւորը հեռուն կեցած...»: Նայեցէ՛ք մաքսաւորին վերաբերմունքին: Ան «հեռուն կեցած» էր, հաւանաբար տանարի դրան ետին, կամ անոր մօտիկ: Ան ինքզինք արժանի չէր համարեր մօտենալու խորանը ծածկող վարագոյրին, որուն ետին կը հանգչէր Սրբութիւն Սրբութեանց-ը որ Աստուծոյ ներկայութիւնը կը խորհրդանշէր: Այլ խօսքով, ան Աստուծոյ մօտենալու անարժան կը գտնէր ինքզինք: Եւ սակայն, մաքսաւորը թէպէտ մարմինով հեռու էր Աստուծոյ խորանէն

բայց սրտով ու հոգիով մօտիկ էր անոր: Օգոստինոս խօսելով այս մասին՝ կ'ըսէ. «Մաքսաւորը հեռու կեցած էր, բայց իրականութեան մէջ ան մօտիկ էր Աստուծոյ: Իր խղիճ գագացողութեամբ հեռու էր Տիրոջմէն, բայց իր բարեպաշտութեամբ՝ մօտիկ էր անոր»:

2.- «Աչքերը առանց վեր բարձրացնելու...»: Այս բառերը կը պարզեն թէ ինչպէս իր մեղքերուն անդրադարձող մարդը՝ իր աչքերը «վեր բարձրացնելու» համարձակութիւն չ'ունենար: Բայց ճիշդ այսպիսի մարդիկն են որոնք կ'օրհնուին ու կը ներուին Աստուծոյ կողմէ: Մարդիկ՝ որոնք կ'անդրադառնան իրենց մեղքերուն, եւ որոնք կ'անդրադառնան թէ նոյնիսկ իրենք արժանի չեն իրենց «աչքերը... վեր բարձրացնելու»:

3.- «Աչքերը առանց վեր բարձրացնելու...»: Մաքսաւորը թէպէտ կ'անդրադառնար թէ ինք մեղաւոր էր եւ թէ ինք արժանի չէր «աչքերը... վեր բարձրացնելու», եւ սակայն, այս մտածումը պատճառ չեղաւ որ ան Աստուծոյ գոթութիւնը չհայցէ: Ան իր այս վերաբերմունքով ստրկեցուց մեզի, որ պէտք չէ թոյլ տանք որ մեր մեղքերը մեզ հեռու պահեն Աստուծմէ, կամ արգիլեն որ մենք անոր ողորմութիւնը խնդրենք, այլ պէտք է միշտ ակնկալութեամբ եւ յոյսով դիմենք Տիրոջ: Օգոստինոս կ'ըսէ. «Մաքսաւորը չհամարձակեցաւ վեր նայելու, որովհետեւ իր խիղճը զինք դէպի վար կը ցնշէր. իր յոյսը սակայն, զինք դէպի վեր բարձրացուց»:

4.- «Աչքերը առանց վեր բարձրացնելու...»: Մեղքը անհամարձակ կը դարձնէ մարդը Աստուծոյ դիմաց: Եզրաս խօսելով ժողովուրդին յանցանքին մասին՝ կ'ըսէ. «Այս պատճառով քու առջեւդ համարձակ չենք կրնար կենալ» (Եզր 9.15): Որպէսզի համարձակութիւնը ունենանք կենալու Աստուծոյ առջեւ՝ պէտք է քաջութիւնը ունենանք մաքսաւորին նման խոստովանելու մեր մեղքերը:

Մաքսաւորին աչքերը վեր չկարենալ բարձրացնելու իրողութիւնը պէտք է մեզի յիշեցնէ դատաստանի օրը եւ այդ օրուան ահաւորութիւնը: Դատաստանի օրը ո՞ր անապաշխար մարդը պիտի կարենայ կենալ Աստուծոյ դիմաց: Եթէ անարդար մարդիկ արդար մարդոց առջեւ չեն կրնար կենալ եւ անոնց ներկայութեան չե՛ն հանդուրժեր, հապա ի՞նչ պիտի ընեն անոնք երբ Աստուծո՛յ դիմաց կենան դատաստանի օրը:

5.- «Կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր.- "Աստուա՛ծ, ներէ՛ մեղաւորիս մեղքերը": Կ'ըսեմ՝ ձեզի.- եզրակացուց Յիսուս.- մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց»: Այս բառերով Տէրը ստրկեցուց մեզի, թէ իր մեղքերը խոստովանող մարդը՝ ներում կը ստանայ: Մաքսաւորը խոստովանեցաւ իր մեղքերը եւ «արդարացած տուն գնաց»: Ինչպէս իր

հիւանդութիւնը չյայտնող մարդը՝ չ'ազատիր իր հիւանդութենէն, այնպէս ալ իր մեղքը չյայտնող մարդը՝ չի՛ կրնար ազատիլ անոր ստրկութենէն:

Զխոստովանուած մեղքը կը ստրկացնէ մեզ եւ կը տանջէ մեր հոգին, մեր սիրտը կը մեղկացնէ եւ մեր ոսկորները կը մաշեցնէ (Սղ 32.3): «Եթէ խոստովանիմք մեր մեղքերը, վստահ եղէ՛ք՝ թէ Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն» (Ա.Յն 1.9): Փաստօրէն Դաւիթ կ'ըսէ. «Իմ մեղքս քեզի յայտնեցի ու իմ անօրէնութիւնս չծածկեցի... եւ դուն ներեցիր մեղքերս եւ անօրէնութիւններս» (Սղ 32.5): Մաքսաւորը քաջ մարդ էր, որովհետեւ հրապարակեց իր մեղքերը: Այո՛, իր մեղքը հրապարակող մարդը քաջ մարդ է, յանդուգն մարդ է, աստուածահաճո՛յ մարդ է: Թոյլ չտանք որ Սատանան իլէ մեր սիրտերէն մեր մեղքերը խոստովանելու քաջութիւնը:

Սիրելիներ, ապստամբի՛նք մեղքի ստրկութեան դէմ եւ խորտակենք ատոր լուծը: Զարն ու Զարին խորհուրդները չեն կրնար մերձենալ մեղքի դէմ ապստամբող եւ ատոր ընդդիմացող հաւատացեալներուն: Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Զարը չի՛ կրնար վնասել մարդուն եթէ մարդը չվնասէ ինքնիրեն»: Աստուած կ'ուզէ որ իր գաւակները մեղքին ընդդիմացող գաւակներ ըլլան:

6.- Փարիսեցիին Աստուծոյ դիմաց դրաւ շաքաթը երկու անգամ իր ծոմ պահելու հարցը, ինչպէս նաեւ իր եկամտոտին տասանորդը տանարին տալու հարցը, մինչ մաքսաւորը, իր մեղքերէն եւ իր կոտրած սիրտէն ու հոգիէն զատ ուրիշ բան չունէր Աստուծոյ առջեւ դնելիք: Աստուած նախընտրեց ունենալ մաքսաւորին կոտրած սիրտը քան հպարտ Փարիսեցիին եկամտոտին տասանորդը: Դաւիթ մարգարէն կը յայտարարէ, որ «Տէրը մօտ է անոնց, որոնց սիրտը կոտրած է եւ հոգիով խոնարհածները կ'ապրեցնէ» (Սղ 34.18):

7.- «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»: Այս բառերը կը պարզեն որ մաքսաւորը հաւատա՛ց Աստուծոյ ներումին, հաւատա՛ց Աստուծոյ քաւութեան, հաւատա՛ց եւ ապաւինեցա՛ւ Աստուծոյ գթութեան ու ողորմութեան: Այդպիսին չէր Փարիսեցիին, որովհետեւ ան Աստուծմէ ներում չիսնդրեց եւ Աստուծոյ ողորմութիւնը չհայցեց: Փարիսեցիին իր ուշադրութիւնը կեդրոնացուց ինքնիր անձին եւ իր կատարած գործերուն վրայ, իսկ մաքսաւորը՝ Աստուծոյ եւ անոր ողորմութեան վրայ. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

Ինքնիր կատարած գործերուն մասին խօսող մարդը՝ ինքզինքն է որ պատուած ու փառաւորած կ'ըլլայ, իսկ Աստուծոյ ողորմութեան մասին

խօսող եւ Աստուծոյ ողորմութեան ապաւինող մարդը՝ զԱստուած է որ պատուած ու փառաւորած կ'ըլլայ:

8.- Փարիսեցի «արդար» էր բայց հպարտ ու գոռոզ, իսկ մաֆսաւորը մեղաւոր էր բայց հեզ ու խոնարհ. արդ, ձեր կարծիքով ասոնցմէ ո՞վ աւելի լաւ էր: Յիսուսի հայեացքով, մեղաւոր բայց խոնարհ եղող մաֆսաւորը աւելի լաւ էր քան «արդար» բայց գոռոզ Փարիսեցին: Հոսկէ կը սորվինք թէ որքան գէշ բան է հպարտ ու գոռոզ ըլլալը եւ որքան լաւ բան է հեզ ու խոնարհ ըլլալը: Այստեղ մեր առջեւ երկու կէտեր կը դրուին.-

ա.- Որպէսզի գիտնանք թէ որքան գէշ բան է հպարտ ըլլալը, մի՛շտ յիշենք եւ երբեք չմոռնանք որ Արուսեակ քերովրէն Սատանայի վերածողը նոյնինքն իր հպարտութիւնն էր: Եթէ հպարտութիւնը հրեշտակը Սատանայի վերածեց, մեզ ալ կրնայ Սատանայի զաւակներու վերածել: Սուրբ Յերոնիմոս կ'ըսէ. «Հպարտութիւնն էր պատճառը որ Արուսեակ քերովրէն կորսնցնէր հրեշտակապետի իր դիրքը... ուստի, ո՛վ եղբայր, մտածէ թէ ի՛նչ տեսակ մեղք է հպարտութիւնը որուն դէմ կը դնէ Աստուած»:

բ.- Եւ որպէսզի գիտնանք թէ որքան լաւ բան է խոնարհ ըլլալը, մի՛շտ յիշենք մաֆսաւորին օրինակը, որ թէպէտ մեղաւոր էր, բայց խոնարհ ըլլալուն համար ներում ստացաւ եւ փրկութիւն ձեռք ձգեց: Մենք ընտրենք մաֆսաւորին նամբան, որ խոնարհութեա՛ն նամբան է, փրկութեա՛ն նամբան է, երկինքի՛ նամբան է, Աստուծո՛յ նամբան է:

9.- Մաֆսաւորին աղօթքը կորսուած եւ սակայն փրկութիւն փնտոող հոգիի մը աղաղակն էր: Մաֆսաւորը իր մեղաւորութեան կատարեալ գիտակցութիւնը ունէր: Ան անդրադարձաւ որ Աստուծմէ զատ ոչ ոք կրնար զինք փրկութեան արժանացնել, ահա թէ ինչո՛ւ չիօսեցաւ իր կատարած գործերուն մասին, այլ իր աղօթքով պատմեց Աստուծոյ գթութեան եւ ներումին մասին եւ «արդարացած տուն գնաց»:

Հետեւելով մաֆսաւորին օրինակին, մենք ալ կ'անդրադառնա՞նք մեր մեղաւորութեան, կ'անդրադառնա՞նք որ Աստուծմէ զատ մէկը չի կրնար մեր մեղքերը ներել, եւ եթէ կ'անդրադառնանք, կը հայցե՞նք Աստուծոյ ողորմութիւնը, եւ մաֆսաւորին նման սրտառուչ կերպով կ'ըսե՞նք. «Աստուած, ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

10.- «Կ'ըսեմ ձեզի,- եզրակացուց Յիսուս,- մաֆսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին»: Մենք արդէն իօսեցանք այս բառերուն մասին, բայց յաւելեալ քանի մը մատնանըշումներ.-

ա.– «Կ'ըսեմ ձեզի»: Այո՛, Քրիստոս ի՛նքն պիտի ըսէ թէ ո՛վ արդար է եւ ո՛վ արդար չէ, ո՛վ կեղծաւոր է եւ ո՛վ կեղծաւոր չէ: «Կ'ըսեմ ձեզի»: Այս բառերը կը պարզեն Քրիստոսի դատաւորական հանգամանքը: Քրիստոսի՛ կը պատկանի բացարձակ իշխանութիւնը դատաստան ընելու եւ վնիռ արձակելու մարդոց յաւիտեանական ցաւատագրին վերաբերեալ:

բ.– Երբ Յիսուս կը հաստատէ թէ «մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին», ասիկա ցոյց կու տայ թէ ան կը քննչնայ մարդոց սիրտերը: Գիտէ թէ մարդիկ ի՞նչ նպատակով եկեղեցի կը յանախեն: Կը քննչնայ մարդոց հոգիները, գիտէ անոնց միտումները, մտածումները, խորհուրդները:

գ.– «Մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց, եւ ո՛չ թէ Փարիսեցին»: Աստուած «չի՛ կրնար» արդարացնել ինքզինքն արդար կարծողը: Աստուած «չի՛ կրնար» փրկել ինքզինքն փրկութեան եւ Փրկիչի կարօտ չգգացողը: Փարիսեցին ինքզինքն արդար եւ փրկութեան արժանի կը սեպէր, որովհետեւ օրէնքը կը պահէր: Փարիսեցիի մը համար, Մովսիսական օրէնքներու գործադրութիւնը բաւարար էր փրկութեան հասնելու համար: Փարիսեցիներուն համար երկինքի արքայութիւնը իրենց սեփականութիւնն էր: Անոնք չէին կրնար պատկերացնել որ Օրէնքը ի գործ չդնող մաքսաւոր մը, որ ամենագոյնի եւ մեղաւոր դասակարգին կը պատկանէր ըստ իրենց, կրնար մուտք գործել երկինքի արքայութիւն:

«Որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (Ղկ 18:14): Քանի մը արագ նշումներ.–

1.– Մաքսաւորը իր աղօթքով ստրկեցուց մեզի, թէ ան որ ինքզինքն կը խոնարհեցնէ՝ Աստուած զինքն պիտի բարձրացնէ: Մաքսաւորին աղօթքը խոնարհ սրտէ բղիսած աղօթք մըն էր: Խոնարհ մարդը կ'անդրադառնայ որ ինքն պէտք ունի Աստուծոյ ողորմութեան: Իսկական խոնարհ մարդը կը խոնարհի Աստուծոյ ձեռքին տակ, այն հաստատ հաւատքով եւ համոզումով, որ յարմար ժամանակին Աստուած զինքն պիտի բարձրացնէ:

2.– Փարիսեցին եկաւ ինքզինքն բարձրացնելու Աստուծոյ դիմաց եւ ո՛չ թէ իր աղօթքը բարձրացնելու: Այո՛, ան աղօթք չբարձրացուց, այլ՝ ինքզինքն: Ան գԱստուած չբարձրացուց, այլ՝ իր անձը: Իր աղօթքը ինքնագով եւ յանձնապաստան մարդու աղօթք էր: Ինքնագով մարդը չի կրնար Աստուծոյ գովասանքին արժանանալ: Յանձնապաստան մարդը չի կրնար ապաստան գտնել Աստուծոյ մէջ:

3.- Տուեալ համարը ցոյց կու տայ թէ Աստուած կը սիրէ խոնարհները եւ կ'ընդդիմանայ հպարտներուն: Կը սիրէ խոնարհները, որովհետեւ խոնարհները Աստուծոյ «Բարձրեալ» ու «Բարձ» ըլլալու գիտակցութիւնը ունին, մինչդեռ հպարտները այդ գիտակցութիւնը չունին, ճիշդ անոր համար ալ իրենք գիրենք կը բարձրացնեն:

4.- Խոնարհ մարդը «պիտի բարձրանայ», իսկ հպարտ մարդը «պիտի խոնարհի»: Ի՞նչ կը հասկնանք երբ կ'ըսենք՝ խոնարհ մարդը «պիտի բարձրանայ»: Ան պիտի բարձրանայ դէպի Աստուածն ու աստուածայինը, պիտի բարձրանայ դէպի երկինքն ու երկնայինը, պիտի բարձրանայ դէպի Հայր եւ որդիի յարաբերութեան, պիտի բարձրանայ հրեշտակներու ընկերակցութեան, պիտի բարձրանայ արդարներու ու սուրբերու դասերուն դասակից ըլլալու: Իսկ ի՞նչ կը հասկնանք երբ կ'ըսենք՝ հպարտ մարդը «պիտի խոնարհի»: Ան պիտի խոնարհի դէպի դժոխք ու գեհեն, պիտի խոնարհի դէպի մութ տարտարոսները, պիտի խոնարհի երկրի խորունկ ու տաք տեղերը, պիտի խոնարհի դէպի չար ոգիներու դասակցութեան:

Առակին մասին բացատրութիւնը կ'աւարտեմ Մեծն Կիւրեղի խօսքով. «Ո՛վ Փարիսեցի, սա՛նձ դիր լեզուիդ: Դուն ամէն բան գիտցող Աստուծոյ հետ է որ կը խօսիս: Սպասէ Դատաւորին վճիռին: Մէկը չի կրնար... ինքնիրեն պսակ դնել, այլ կը սպասէ արձակուելիք վճիռին:

Խոնարհի՛ր՝ քու հպարտութենէդ, որովհետեւ հպարտութիւնը ատելի է Աստուծոյ համար...: Թէպէտ ծով կը պահես, եւ սակայն, մեծամիտ ըլլալուդ համար, բան մը չես օգտուիր ծովապահութենէդ եւ յոգնութեանդ համար վարձատրութիւն չես ստանար...:

Համաձայն Մովսիսական օրէնքին, մէկը չէր կրնար արատ ունեցող արջառ կամ ոչխար մատուցել Տիրոջ իբրեւ գոհ (Ղւ 22.21):... (Եթէ Աստուած արատ ունեցող ոչխարի գոհը չէր ընդուներ, հապա ի՞նչպէս պիտի ընդունի ծովապահութիւն ընող այն մարդը որ իր մէջ կը կրէ հպարտութեան ու մեծամտութեան արատը):

Երբ տասանորդ կու տաս բայց կը դատես մարդկութիւնը, դուն մեղանշած կ'ըլլաս նոյնիմէն այն Անձին դէմ որուն տասանորդ տուիր: Նման արարք խո՛րթ կը թուի այն մարդուն համար որ կը վախնայ Աստուծմէ, որովհետեւ Յիսուս ըսաւ. «Մի՛ դատէք որպէսզի Աստուած ալ ձեզ չդատէ. մի՛ դատապարտէք, որպէսզի Աստուած ալ ձեզ չդատապարտէ» (Ղկ 6.37): Իսկ Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Միակ Օրէնսդիրն ու Դատաւորը... Աստուած է: Դուն ո՞վ ես որ քու ընկերդ կը դատես» (Յկ 4.12):

Մէկը որ առողջ է՝ չ'անարգեր անկողին ինկած հիւանդը, այլ կը վախնայ որ չըլլայ թէ ինք եւս նոյն ցաւերուն տակ իյնայ...: Ինչ կը վերաբերի մաքսաւորին, Յիսուս կ'ըսէ թէ ան հեռուն կեցաւ, չհամարձակեցաւ խօսիլ կամ նոյնիսկ աչքերը բարձրացնել դէպի վեր: Ահա դուն կը տեսնես գայն, մերկացած ամէն համարձակ խօսքէ, որպէս մէկը՝ որ իրաւունք չունի խօսելու. եւ ոչ միայն այսֆան, այլեւ ան կը զարնուէր իր խղնի յանդիմանութիւններէն:

Մաքսաւորը կը վախնար որ Աստուած իրե՛ն նայէր, որովհետեւ ինք մարդ մըն էր որ անտարբեր գտնուած էր անոր օրէնքներուն հանդէպ...: Ահա կը տեսնես թէ ինչպէս բացայայտօրէն ինքզինք կը դատապարտէ...: Կը վախնար Դատաւորէն, կուրծքը կը ծեծէր, մեղքերը կը խոստովանէր, իր հիւանդութիւնը կը յայտնէր իր Բժիշկին, եւ ողորմութիւն կը հայցէր: Եւ ի՞նչ եղաւ արդիւնքը: Լսէ թէ ինչ կ'ըսէ Դատաւորը. «Մաքսաւորն է որ արդարացած տուն գնաց» (Ղկ 18.13)»:

ՄԱՆԱՆԵՒԻ ՀԱՏԻԿԻՆ ՕՐԻՆԱԿԸ

«Երկինքի արքայութիւնը կը նմանի մանանեխի հատիկին, որ մարդ մը առնելով կը ցանէ իր արտին մէջ: Անիկա սերմերէն ամենէն փոքրն է, բայց երբ անի՝ բոլոր տունկերէն աւելի մեծ կ'ըլլայ եւ ծառ կը դառնայ, այնպէս որ երկինքի թռչունները կու գան եւ բոյն կը դնեն անոր ցիւղերուն մէջ» (Մտ 13.31-32):

Այս առակին հիմնական նպատակն է, ցոյց տալ թէ ինչպէս Աստուծոյ արքայութիւնը հատիկի մը նման սկսաւ, հատիկի մը փոքրութեամբ սկսաւ, որ սակայն ընդարձակուեցաւ ու տարածուեցաւ այս աշխարհին մէջ, եւ աշխարհի բոլոր թռչունները, այլ խօսքով՝ ժողովուրդները, եկան ապաստան ու հանգիստ գտնելու անոր մէջ:

Ընդարձակելէ առաջ այս առակին մեկնութիւնը, նախ փորձենք ամփոփ կերպով պատասխանը տալ հինգ հարցումներու. –

1.– Այստեղ «երկինքի արքայութիւն» ըսելով ի՞նչ պէտք է հասկնալ: «Երկինքի արքայութիւն» ըսելով կը հասկնանք փրկութեան այն աւետարանը որ Յիսուս իր ծնունդով, իր առաքելութեամբ եւ իր մահուամբ աշխարհ բերաւ, մարդկութեան ընծայեց:

2.– Ինչպիսի՞ն կ'ըլլայ մանանեխը: Մանանեխը իսաճաճաղիկներու ընտանիքին պատկանող բոյս մըն է:

3.– Ո՞վ էր որ մանանեխի հատիկը ցանեց իր արտին մէջ: Մարդը որ մանանեխի հատիկը ցանեց իր արտին մէջ՝ Քրիստոս ի՛նքն էր:

4.– Ի՞նչ էր այդ արտը որուն մէջ ցանուեցաւ մանանեխի հատիկը: Արտը աշխարհն է:

5.– Ի՞նչ կը պատկերացնեն երկինքի թռչունները: Անոնք կը պատկերացնեն աշխարհի տարբեր-տարբեր ժողովուրդներն ու ազգերը:

Հիմա փորձենք ընդարձակել մեկնութիւնը. –

«Երկինքի արքայութիւնը կը նմանի մանանեխի հատիկին, որ մարդ մը առնելով կը ցանէ իր արտին մէջ»: Քանի մը մատնանշումներ.–

1.– Մանանեխի հատիկին օրինակին մէջ «Երկինքի արքայութիւն» բացատրութիւնը իր վախճանաբանական իմաստով պէտք չէ առնել, այլ խօսքով, հոս «Երկինքի արքայութիւն» ըսելով չենք հասկնար աստուածակեդրոն այն թագաւորութիւնը որ Քրիստոսի երկրորդ գալուստէն ետք պիտի հաստատուի երկրի վրայ: Այստեղ «Երկինքի արքայութիւն» բացատրութիւնը կը վերաբերի Քրիստոսի խորհրդական մարմինին՝ եկեղեցիին: Եկեղեցին ի՛նքն է որ կը մարմնաւորէ Աստուծոյ արքայութիւնը աշխարհի մէջ:

2.– «Մանանեխի հատիկին»: Ուշադրութիւն դարձնենք որ երկինքի արքայութիւնը կը նմանցուի մանանեխի հատիկին եւ ո՛չ թէ մանանեխի բոյսին: Կրնանք մտածել թէ ի՞նչ տարբերութիւն կ'ընէ որ երկինքի արքայութիւնը նմանցուեր է մանանեխի հատիկին կամ մանանեխի բոյսին: Տարբերութիւնը մե՛ծ է: Դո՛ւք ըւէք, տարբերութիւն չկա՞յ երկուերեք մեթր բարձրութիւն ունեցող բոյսի մը եւ ասոր հատիկին միջեւ, որ ավի մը մէջ կը կորսուի:

Ըսել ուզուածը այն է, որ երկինքի արքայութեան ներկայութիւնը երկրի վրայ բոյսի մը կամ տունկի մը պէս գորեղ եւ հասուն չէր նախան գՔրիստոս, այլ հատիկի մը նման անյայտ, պզտիկ, անգօր եւ չնչին էր: Արքայութիւնը հատիկ մըն էր որ մեծ եւ գօրաւոր տունկի վերածուեցաւ Քրիստոսով: Այո՛, Քրիստոսով էր որ Աստուծոյ արքայութիւնը դարձաւ կենդանի եւ կենդանաբար ներկայութիւն այս աշխարհին մէջ:

3.– Ինչո՞ւ Յիսուս Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ հատիկի: Կը նմանցնէ հատիկի մը, որպէսզի գիտնանք գօրութիւնը Աստուծոյ արքայութեան աւետարանին: Ի՞նչ իմաստով: Բացատրեմ: Բաղդատեցէք իրարու հետ սերմնահատիկի մը եւ ընդարձակ արտի մը մեծութիւնը: Քանի՞ միլիաո սերմ կրնանք բաւեցնել կամ դիզել մեծ արտի մը մէջ: Հարցումս դնեմ ուրիշ ձեւով մը: Արտ մը քանի՞ միլիոն կամ քանի՞ միլիաո անգամ աւելի մեծ ու աւելի ծանր է քան սերմնահատիկը: Ըսել կ'ուզեմ, թէ ինչպէս է սերմնահատիկ մը արտի մը մէջ, այնպէս էր Աստուծոյ արքայութեան աւետարանը այս աշխարհին մէջ: Կամ ինչպէս է աւազի հատիկ մը ծովուն մէջ, այնպէս էր Աստուծոյ արքայութեան աւետարանը այս աշխարհին մէջ: Սերմնահատիկ մը չի կրնար լեցնել արտը եւ ո՛չ ալ աւազի հատիկը կրնայ լեցնել ծովը, բայց Աստուծոյ արքայութեան սերմնահատիկը կրնա՛յ լեցնել այս աշխարհը, կրնայ փոխել գայն, կրնայ հարստացնել գայն, այո՛, վստահաբար կրնայ եւ ատիկա ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ Աստուծոյ արքայութեան

սերմնահատիկին անչափ եւ այլակերպիչ գորութիւնը, անոր բացարձակ կարողականութիւնը:

4.- Ուրիշ կարելոք պատճառ մըն ալ կայ թէ ինչո՛ւ Յիսուս Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ հատիկի: Մենք չենք տեսներ հողին մէջ հատիկին անու՛մը, ո՛չ ալ գիտենք թէ ի՛նչպէս ատիկա կը ծլարձակի ու հասակ կը նետէ: Յիսուս ինքն իսկ խօսելով սերմ՝ ցանող մարդու մը մասին՝ ըսաւ. «Ինք չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան» (Մր 4.27): Ուստի, Յիսուս Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ հատիկի, ցոյց տալու համար մեզի որ արքայութիւնը աշխարհի մէջ կը տարածուի անգգալաբար, հեռո՛ւ մարդոց աչքերէն ու գիտութենէն:

Այո՛, նիշդ է որ մարդիկ իրե՛նք է որ կը փարոզեն Քրիստոսի խօսքերը, իրե՛նք է որ մարդիկը Քրիստոսի կը բերեն, բայց կասկածէ վեր է որ Քրիստոս ի՛նքն է որ կը տարածէ Աստուծոյ արքայութիւնը, ի՛նքն է որ «եկեղեցիին մէջ փրկուածներուն թիւը կ'աւելցնէ» (Գրծ 2.47): Մարդիկ կրնան Քրիստոսի խօսքերը փարոզել, բայց փարոզիչները իրենք չէ որ կը փոխեն մարդուն կեանքը, այլ փարոզուածը՝ Քրիստոս: Իսկ ո՞ր փարոզիչը կրնայ ըսել թէ Քրիստոս ի՛նչպէս կը փոխէ կեանքն ու սիրտը մարդուն: Մարդ չի գիտեր թէ ինչպէս: Սրտի այդ փոփոխութիւնը տեղի կ'ունենայ մեր գիտութենէն ու մեր տեսողութենէն բոլորովին ծածկուած կերպով մը:

5.- Վերջին պատճառ մը եւս յիշենք թէ ինչո՛ւ Յիսուս Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ հատիկի: Մենք գիտենք որ հատիկին մէջ կեանք կայ, եւ այդ կեանքը հանդէս կու գայ երբ հատիկը հողին մէջ դրուի: Ճիշդ նոյն ձեւով, Աստուծոյ արքայութիւնը ինք եւս կեանքով լեցո՛ւն է, զեղո՛ւն է, հարո՛ւստ է, բայց մենք չենք կրնար այդ լեցո՛ւն, այդ զեղո՛ւն եւ այդ հարո՛ւստ կեանքը ունենալ, եթէ մեր մէջ չընդունինք Աստուծոյ արքայութեան սերմնահատիկը:

6.- «Մարդ մը առնելով կը ցանէ իր արտին մէջ»: Այս բառերուն վերաբերեալ քանի մը հաստատումներ.--

ա.- «Մարդ մը»: Արդէն իսկ ըսինք թէ մարդը որ մանանեիս հատիկը ցանեց իր արտին մէջ, Քրիստոս ի՛նքն էր առաջին հերթին. ցանելու գործողութիւնը յետոյ առաքեալները իրենք պիտի շարունակէին. եւ այսօր, ցանելու այդ արարքը կը շարունակուի եկեղեցւոյ եւ ամէն մէկ հաւատացեալի միջոցաւ:

բ.- «Կը ցանէ»: Այս բառերը աշխատանք կ'ենթադրեն: Յիսուս «կը ցանէ» ըսելով, նախ ուզեց ցոյց տալ մեզի թէ Աստուծոյ արքայութիւնը աշխարհի արտին մէջ տարածելու համար աշխատա՛նք տարաւ, փրոհ՛նք թափեց, արի՛ւն թափեց, յոգնեցա՛ւ, տագնապեցա՛ւ ու չարչարուեցա՛ւ:

Ինչպէս երկրագործը չի կրնար սերմ ցանել առանց ֆրտնելու ու յոգնելու, Յիսուս ինք նաեւ, «չէր կրնար» Աստուծոյ արքայութեան աւետարանը եւ այդ աւետարանէն բղխող փրկութիւնը տարածել, առանց ֆրտնելու, յոգնելու, ծեծուելու, արիւն թափելու եւ յարութիւն առնելու:

գ.- «Իր արտին մէջ»: Արտը ըսինք աշխարհն է: Ի՞նչ կը պարզէ «իր»ը: «Իր» բառը ցոյց կու տայ որ Յիսուս այս աշխարհը կը նկատէ ի՛ր աշխարհը, ի՛ր սեփականութիւնը, ի՛ր ձեռքին գործը:

դ.- «Արտին մէջ»: Ինչո՞ւ աշխարհ կը նմանցուի արտի: Քանի մը պատճառներով.-

Առաջին.- Աշխարհ կը նմանցուի արտի, յիշեցնելու համար մեզի, թէ ինչպէս արտը աշխատանքի ու ֆրտնիքի կը կարօտի որպէսզի պտղաբեր դառնայ, այնպէս ալ, Աստուծոյ արքայութիւնը տարածելը այս աշխարհի մէջ աշխատանք, գոհողութիւն ու ֆրտնիք կը պահանջէ, որպէսզի տարածուի ու պտղաբեր դառնայ:

Երկրորդ.- Աշխարհ կը նմանցուի արտի, ցուցնելու համար մեզի, թէ ինչպէս արտի մը մէջ, որումն ու ցորենը, փուշն ու վարդը, միասնաբար ու միատեղ կրնան աճիլ, այնպէս ալ, Աստուծոյ արքայութեան զաւակները ըլլալու կոչուած հաւատացեալներուն շարքին, կրնան նաեւ ըլլալ անհաւատները, անմաքուրները, պիղծերը, ստախօսները, եւայլն, որոնք սակայն ժամանակներու աւարտին պիտի գատուին հաւատացեալներէն եւ գեհե՛ն նետուին, միշտ ինչպէս պարտիզպանը ինք փուշերն ու որումները կը գատէ պտղաբեր ծառերէն եւ գանձնի կրակի մէջ կը նետէ:

Երրորդ.- Յիսուս աշխարհ կը նմանցնէ արտի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս արտ մը խոպան կը դառնայ եւ փուշերով կը լեցուի եթէ չհերկուի եւ չխնամուի, այնպէս ալ, այս աշխարհ խոպան արտի կը վերածուի, մարդիկ կը դառնան անհաւատ ու պիղծ, մարդիկ կը դառնան անօրէն ու մեղսալից, եթէ երբեք եկեղեցին Աստուծոյ արքայութեան աւետարանը չֆարոգէ, չտարածէ, չպատգամէ, եւ մարդիկը անոր չհրաւիրէ եւ անով չդաստիարակէ: Կարն իսօֆով մը, ինչպէս արտը խոպան կը դառնայ առանց հոգատարի, այնպէս ալ այս աշխարհ խոպան կը դառնայ առանց Աստուծոյ արքայութեան ներգործող զօրութեան եւ բարեբար ազդեցութեան:

Չորրորդ.- Յիսուս աշխարհ կը նմանցնէ արտի ուրիշ հիմնական պատճառով մը եւս որ կրնայ մեր ուշադրութենէն վրիպիլ: Մենք գիտենք որ արտը կարողութիւնը ունի ինքնաբերաբար աճեցնելու իր մէջ նետուած սերմը: Ուստի, Յիսուս աշխարհ կը նմանցնէ արտի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս որ արտը կարողութիւնը ունի աճեցնելու իր մէջ նետուած սերմը, այնպէս ալ այս աշխարհը, Աստուծոյ

արքայութիւնը իր մէջ ընդունելու կարողութիւնը ունի, որովհետեւ Աստուած ի՛նքն զայն այդ կարողութեամբ ստեղծած է: Ոեւէ մարդ կարողութիւնը ունի ընդառաջելու փրկութեան աւետարանին: Ոեւէ մարդ կարողութիւնը ունի ընդգրկելու Քրիստոսի հաւատքը: Փրկութիւնը բոլորին համար է, ուստի բոլորը կրնան ընդունիլ Յիսուսի իրագործած փրկութիւնը:

Հինգերորդ.- Յիսուս աշխարհ կը նմանցնէ արտի, պարզելու համար, թէ ինչպէս արտը եւ արտին մէջ եղող ծառերը կ'ապրին ու կը պտղաբերին երկինքէն իջնող անձրեւով, երկինքէն նառագայթող արեւով, անոր օդով ու հովով, այնպէս ալ, Աստուծոյ արքայութիւնը այս աշխարհի մէջ կը տարածուի ու կը կ'արդիւնաւորուի Աստուծոյ միջամտութեամբ միայն: Ինչպէս արտերուն կեանքը կախեալ է երկինքէն, անոր տափէն ու անձրեւէն, այնպէս ալ, արքայութեան կեանքը մարդկութեան կեանքին մէջ՝ կախեալ է Աստուծոյ ներգործող շնորհէն ու գորութենէն:

«Անիկա սերմերէն ամենէն փոքրն է, բայց երբ անի՝ բոլոր տունկերէն աւելի մեծ կ'ըլլայ եւ ծառ կը դառնայ»: Քանի մը հաստատումներ.-

1.- «Անիկա սերմերէն ամենէն փոքրն է»: Թէպէտ Յիսուս մեզի կ'ըսէ թէ մանանեխի հատիկը «սերմերէն ամենէն փոքրն է», խորքին մէջ սակայն, սերմնահատիկներու աշխարհին մէջ մանանեխի հատիկէն շատ աւելի փոքր սերմեր ալ կան: «Սերմերէն ամենէն փոքրն է» ըսելով, Յիսուս պարզապէս ըսել կ'ուզէ որ մանանեխի հատիկը փոքրագոյն սերմնահատիկներէն մին է: Քրիստոս Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ փոքր սերմի, պարզապէս որպէսզի ցոյց տայ մեզի, որ երկինքի արքայութիւնը իր սկզբնաւորութեանը մէջ շատ փոքր էր, աննշան էր, բայց ժամանակի ընթացքին եւ աստիճանաբար պիտի մեծնար, անէր ու ընդարձակուէր: Արդարեւ, Արքայութիւնը ոչինչէն սկսաւ՝ դառնալու համար ամէն ինչ, որոշ տեղ մը սկսաւ՝ տարածուելու համար ամէն տեղ, մէկ ազգի մը կեանքին մէջ սերմանուեցաւ՝ դառնալու համար սեփականութիւնը ամբողջ աշխարհի ազգերուն ու ժողովուրդներուն:

2.- «Ծառ կը դառնայ»: Վերեւ ըսինք որ մանանեխը խաչածաղիկներու ընտանիքին պատկանող բոյս մըն է: Այո՛, բոյս մըն է եւ ո՛չ թէ ծառ մը: Հետեւաբար, մանանեխը որքան ալ մեծնայ երբեք ծառի չի վերածուիր: Ան մեծնալով կը դառնայ երկու-երեք մեթր հասակ ունեցող տունկ մը: Ինչո՞ւ արդեօք Քրիստոս անձ մանանեխին համար «բոյս» կամ «տունկ» բացատրութիւնը գործածելու փոխարէն, կը գործածէ «ծառ» բացատրութիւնը: Քանի մը պատճառներով.-

ա.- Քրիստոս տունկը «ծառ» կոչելով, չափազանցուած պատկեր մը կը գործածէ՝ որպէսզի ցոյց տայ մեզի Աստուծոյ արքայութեան չափազանց տարածումն ու անումը աշխարհին մէջ:

բ.- Ծառը հովերուն եւ հեղեղներուն դիմաց աւելի կը տոկայ քան տունկը, կամ բոյսը: Ուստի ծառը խորհրդանշիչ է տոկունութեան եւ անասանութեան: «Ծառ» բառին գործածութեամբ, Քրիստոս կ'ուզէ ցոյց տալ մեզի, թէ երկինքի արքայութիւնը եկեղեցւոյ ընդմէջէն տոկուն ու անասան ներկայութիւն է այս աշխարհին մէջ:

գ.- Մենք գիտենք որ սերմնահատիկ մը որպէսզի ծլի, անի ու ծառի վերածուի՝ երկար ժամանակ կը պահանջէ, ուստի, Յիսուս արքայութիւնը ծառի վերածուող հատիկի նմանցնելով, լոկեայն կերպով կ'ուզէ ցոյց տալ մեզի որ Աստուծոյ արքայութեան տարածուիլը այս աշխարհին մէջ ժամանակ կը պահանջէ:

դ.- Հատիկ մը որպէսզի ծառի վերածուի, յարատեւ ու երկարատեւ ինամքի կը կարօտի: Ուստի Յիսուս Աստուծոյ արքայութիւնը ծառի վերածուող հատիկի կը նմանցնէ, որպէսզի բացայայտէ մեզի, թէ Աստուծոյ արքայութեան տարածիչները պէտք է յարատեւօրէն աշխատին, երկարատեւ կերպով աշխատին, համբերութեամբ աշխատին:

«Այնպէս որ երկինքի թռչունները կու գան եւ բոյն կը դնեն անոր նիւղերուն մէջ»: Քանի մը հաստատումներ.---

1.- Արդէն իսկ բացատրուեցաւ որ «երկինքի թռչուններ» իսոյքը ակնարկութիւն է աշխարհի ազգերուն, ժողովուրդներուն, բայց մանաւանդ հաւատացեալ դասակարգին: Երբ կ'ըսենք, որ թռչունները կը ներկայացնեն ամբողջ աշխարհի ազգերն ու ժողովուրդները, այդ արդէն ցոյց կու տայ, որ երկինքի արքայութիւնը միայն հրեաներուն համար չէր, այլ աշխարհի համայն մարդոց համար: Թէպէտ Յիսուս իր առաքելութիւնը նախ հրեաներուն կեանքին մէջ իրագործեց, բայց ատիկա համայն մարդկութեան համար իրագործուած առաքելութիւն մըն էր, եւ ատիկա Յիսուս բազմաթիւ առակներու ընդմէջէն ցոյց տուաւ: Հոս կը հերքուի հրեաներուն, մանաւանդ Փարիսեցիներու դասակարգին այն համոզումը՝ թէ Աստուծոյ արքայութիւնը կամ թագաւորութիւնը միայն իրե'նց համար էր:

2.- «Թռչունները կու գան եւ բոյն կը դնեն անոր նիւղերուն մէջ»:
Թռչունները գալով ի՞նչ բանի նիւղերուն մէջ «բոյն կը դնեն»: Ասկէ առաջ բացատրեցինք որ եկեղեցին ի՞նքն է ծառի վերածուող Աստուծոյ արքայութիւնը: Հետեւաբար, թռչունները, այս պարագայիս, աշխարհի ժողովուրդները եւ բոլոր մարդիկը, եկեղեցւոյ «նիւղերուն» վրայ է որ «կու գան եւ բոյն կը դնեն»:

3.- Թեպետ երկինքի բոլոր թռչունները (աշխարհի բոլոր մարդիկը) կոչուած են մանանեխի տունկին (եկեղեցիին) մէջ բոյն դնելու, այլ խօսքով, անդամ դառնալու, բայց պէտք է ընդունինք, որ բոլոր թռչունները (մարդիկը) որոնք եկեղեցիին անդամ կը դառնան՝ իրական հաւատացեալներ չեն: Եկեղեցի յաճախող թռչուններէն (մարդոցմէ) ոմանք չար են: Մտաբերեցէք որ սերմնացանին առակին մէջ յիշուած թռչունները չարին պատկերացումն են: Ուստի, ինչպէս մանանեխի տունկին վրայ կրնան թառիլ թէ՛ աղանին եւ թէ՛ ագռաւը, այնպէս ալ Քրիստոսի եկեղեցիին անդամ կրնան դառնալ թէ՛ չար եւ թէ՛ բարի մարդիկը: Զանոնք իրարմէ բաժնելը թողունք դատաստանի օրուան:

4.- «Թռչունները կու գան եւ բոյն կը դնեն անոր ճիւղերուն մէջ»: Իմ ուսուցիչս՝ Զարեհ Արք. Ազնաւորեան, խօսելով այս տողին մասին՝ կը յիշէ թէ ինչպէս ատիկա երկու հակադիր մեկնութիւններ ստացած է.–

ա.– Առաջին եւ սովորական մեկնութիւնը այն է, որ այստեղ «երկինքի թռչունները» բացատրութիւնը բոլոր ժողովուրդներուն եւ բոլոր մարդոց համար գործածուած փոխաբերութիւն մըն է, որուն նմանը կը գտնենք ՀԿ-ի մէջ: Այսպէս, Դանիէլի գիրքին մէջ ունինք Նաբուգոդոնոսորի մէկ երազը, ուր Նաբուգոդոնոսորի թագաւորութիւնը կը ներկայանայ ծառի մը պատկերով, որուն ճիւղերուն տակ ապաստան գտնող երկինքի թռչունները կը ներկայացնեն իր տիրապետութեան ենթարկուած ժողովուրդները (Դն 4.21): Այս լոյսին տակ եթէ դիտենք առակը, իմաստը կ'ըլլայ այն՝ թէ բոլոր ազգերն ալ պիտի գան իրենց տեղը ունենալու Աստուծոյ թագաւորութեան մէջ, որ շուտով իրենց վրայ պիտի տարածէ իր օրհնաբեր հովանին:

բ.– Երկրորդ մեկնութիւնը որոմներու առակին ուղղութեամբ կ'ընթանայ, այսինքն՝ անոր մէջ կը տեսնէ ներկայ ժամանակին մէջ արքայութեան ներկայացուցած միաժամանակ դրական եւ ժիտական տարրերը, բարին ու չարը, կողմ-կողմի, նոյնիսկ չարին գերակայութեամբ: Այլ խօսքով, այստեղ «թռչունները» նկատի կ'առնուին իբրեւ չարին ներկայացուցիչը, ճիշդ ինչպէս սերմնացանին առակին մէջ Յիսուս ինք թռչունները կը մեկնէ իբրեւ «չարը» (Մտ 13.19): Այս պարագային առակին իմաստը կ'ըլլայ այն՝ թէ ամէն տեսակի «չար» մարդիկ պիտի գան եւ տեղ գտնեն արքայութեան մէջ, որ ներկայ ժամանակին մէջ՝ Քրիստոսի սուրբ եկեղեցին է: Անոնցմէ շատեր իսկական հոգեփոխութեամբ կու գան հանգստանալու եկեղեցիին հովանիին տակ, բայց շատերը այնտեղ կը պահեն իրենց գոյութիւնը՝ առանց նկարագրային փոփոխութեան, որով, դարձեալ, որոմին ու ցորենին օրինակով՝ չարն ու բարին կողմ-կողմի կը շարունակեն իրենց

գոյութիւնը, մինչեւ աշխարհի կատարածը եւ Աստուծոյ դատաստանը, թէպէտ կատարածին ու դատաստանին ակնարկութիւն չկայ առակին մէջ»:

5.- «Բոյն կը դնեն անոր նիւթերուն մէջ»: Այս բառերուն վերաբերեալ քանի մը կարեւոր մատնանշումներ.-

ա.- Հին թարգմանութեան մէջ «բոյն կը դնեն» բառերուն փոխարէն կը գտնենք, «կը հանգչին» բառերը: Եթէ երբեք թոշունները մարդիկը իրենք են, եւ եթէ երբեք անած եւ անող մանանեխի տունկը եկեղեցին ինքն է, եզրակացութիւնը կ'ըլլայ այն, որ մարդ արարածը կրնայ հանգչիլ, այսինքն՝ հանգիստ գտնել, եկեղեցւոյ գրկին մէջ միայն: Հոս եկեղեցի ըսելով կ'ակնարկեմ Քրիստոսի: Չմոռնանք որ տուեալ առակը երկինքի արքայութեան մասին է, իսկ երկինքի արքայութեան մարմնացումը կամ անձնաւորումը Քրիստոս ինքն է: Քրիստոսի գիրկէն հեռու եղող մարդուն համար հանգիստ չկայ: Ահա թէ ինչո՞ւ Քրիստոս կոչ կ'ուղղէ մեզի իրեն գալու եւ հանգիստ գտնելու (Մտ 11.28):

բ.- Հաստատեցինք թէ նոր թարգմանութեան մէջ «կը հանգչին» բառերը փոխարինուած են «բոյն կը դնեն» բառերով: Երկու թարգմանութիւններն ալ նկատի առած՝ մեկնութենէն ոչինչ կը փոխուի, ընդհակառակը, անոնք զիրար կ'ամբողջացնեն: «Կը հանգչին» բառերուն նման «բոյն կը դնեն» բառերը եւս հետաքրքրական իմաստ մը կը պարունակեն: «Բոյն կը դնեն» կը նշանակէ բնակութիւն կը հաստատեն: Արդարեւ, ճշմարիտ հաւատացեալը պէտք է կարենայ մանուկ Յիսուսին նման ըսել. «Ձեի՞ք գիտեր թէ հորս տան մէջ պէտք է գտնուիմ» (Ղկ 2.49): Իսկական հաւատացեալը Քրիստոսի մէջ բնակութիւն հաստատած մարդն է: Քրիստոնեային կոչումն է բնակիլ Քրիստոսի մէջ եւ բնակուիլ Քրիստոսով: Բնականօրէն Քրիստոսի մէջ բնակող մարդը՝ հոն հանգիստ կը գտնէ:

գ.- «Անոր նիւթերուն մէջ»: Թոշուն մը ինչո՞ւ կը թառի նիւթի մը վրայ: Թէպէտ հարցումը կրնայ աւելորդ թուիլ, որովհետեւ թոշունի մը ծառին վրայ թառիլը՝ ամենէն բնական երեւոյթն է, եւ սակայն, չենք կրնար ուրանալ որ անոնք կը թառին նիւթերու վրայ, հանգչելու, խաղալու, ապաստան գտնելու, եւ կամ ուտելիք փնտոտելու համար: Հակիրճ կերպով անդրադառնանք այս բառերուն:

.- ՀԱՆԳՉԵԼՈՒ: Թոշուններ ծառի նիւթերուն վրայ կը նստին հանգչելու: Գալով մեզի, մենք ինչո՞ւ եկեղեցի կը յանախենք: Քրիստոսի գրկին մէջ հանգիստ գտնելու համար չէ՞:

.- ԽԱՂԱՒՈՒ: Թոշուններ ծառի նիւթերուն վրայ կը նստին խաղալու: Երբ կը խօսինք եկեղեցի եկող հաւատացեալներուն մասին,

«խաղալ» բառը պետք է հասկնալ «հոգեկան հանգիստ եւ խաղաղութիւն ձեռք գտել» իմաստով: Հաւատացեալը հոգեկան խաղաղութիւն ձեռք գտելու համար չէ՞ որ եկեղեցի պետք է գայ. իսկ ան կրնա՞յ հոգեկան խաղաղութիւն ձեռք գտել առանց հաշտուելու Քրիստոսի հետ. եւ կրնա՞յ հաշտուիլ առանց անկեղծ ապաշխարութեան եւ ինքնայանձնումի:

– ԱՊՍՍՏՆՆ ԳՏՆԵԼՈՒ: Թոշուններ ծառի միւղերուն վրայ կը նստին ապաստան գտնելու: Երբ փոթորիկ պատահի կամ անձրեւ իջնէ, ամէն թոշուն իր բոյնը կը փախի՝ հոն ապահովութիւն գտնելու համար: Գալով մեզի, մենք կը հաւատա՞նք որ եկեղեցին կրնայ ապահովութիւն տալ մեզի երբ սխալ վարդապետութեանց հովերը սկսին փչել աջէն ու ձախէն, կամ երբ կեանքի փորձութիւնները ծովու ալիքներուն նման սկսին մեզ հալածել:

– ՈՒՏԵԼԻԲ ՓՆՏՈՒԵԼՈՒ: Թոշուններ ծառի միւղերուն վրայ կը նստին ուտելիք փնտռելու: Ինչո՞ւ մարդիկ եկեղեցի կը յաճախեն: Հոգեւոր կերակուր փնտռելու համար չէ՞: Եկեղեցիին կոչումն է, այլեւ պարտաւորութիւնն է, հոգեւոր ընտիր կերակուր ջամբել իր հաւատացեալներուն: Այսօր եթէ երբեք մարդիկ կը հեռանան եկեղեցիէն՝ կը հեռանան անոր համար որ հոգեւոր անհրաժեշտ եղած սնունդը չեն ստանար: Ինչպէս պտղալից ծառերը աւելի՛ թոշուններ կը քաշեն իրենց կողմը քան անպտուղ ծառերը, այնպէս ալ Սուրբ Հոգիին պտուղներով հարստացած եկեղեցիները, աւելի՛ մարդիկ կը գրաւեն քան Աստուծոյ Հոգիէն պարպուած եկեղեցիները:

Եկեղեցիներուն հովիւները փոխանակ քննադատեն ու այպանեն մարդիկը եկեղեցիէն հեռանալուն համար, թող մէյ մը իրենք զիրենք քննութենէ անցնեն եւ տեսնեն եթէ երբեք Սուրբ Հոգիով է որ կ'առաջնորդուին եւ կ'առաջնորդեն: Թող հովիւները ըլլան աղօթքի մարդ, այն ատեն պիտի տեսնեն երկինքի թոշունները (մարդիկը) որոնք մեծաթիւ խումբերով պիտի գան եւ բոյն դնեն ու հանգչին եկեղեցիին միւղերուն մէջ, այսինքն՝ պիտի մտնեն եկեղեցիին շուքին եւ հովանաւորութեան տակ, եւ այն ատեն պիտի լսուին փառաբանական երգեր:

դ.– «Անոր միւղերուն մէջ»: Մէկ-երկու հպանցիկ ակնարկներ «միւղ» բառին վերաբերեալ:

– Յիսուս Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ տարածուած միւղեր ունեցող ծառի մը, կարծէք, որպէսզի ցոյց տայ մեզի թէ եկեղեցին կոչումն ու պարտականութիւնը ունի իր միւղերը, այլ խօսքով՝ իր մայրական թեւերը երկարելու դէպի ինկածը, ընկնուածը, հանգիստ եւ խաղաղութիւն փնտռողը, հոգեւոր կերակուր եւ ապաստան փնտռողը:

.- Դարձեալ, երբ Աստուծոյ արքայութիւնը կը նմանցուի տարած-
ւած միւլեր ունեցող ծառի մը, ասիկա պէտք է յիշեցնէ մեզի եկեղեցւոյ
կոչումը՝ անելու եւ տարածուելու ամբողջ աշխարհի մէջ: Այո՛, Քրիստոս
կը պահանջէ իր եկեղեցիէն մանանեխի տունկին նման ընդարձակուելու
եւ տարածուելու դէպի ամէն կողմ եւ դէպի ամէն մարդ:

Վերջին երկու մտածումներ.:-

1.- Եթէ առակին հիմնական նպատակը ցոյց տայն է, թէ ինչպէս
Աստուծոյ արքայութիւնը իր սկզբնաւորութեանը մէջ փոքր է, եւ
ժամանակի ընթացքին է որ կը մեծնայ, կ'անի ու կ'ընդարձակուի, պէտք
չէ մոռնանք որ ասիկա նոյնքան իրական է անհատական գետնի վրայ,
այսինքն՝ մարդ անհատին կեանքին մէջ: Ըսել կ'ուզեմ հետեւեալը.:-
Ինչպէս ժամանակ կը պահանջէ մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնը
տարածուի ամէն տեղ եւ արմատ նետէ, նոյնպէս ալ, ժամանակ կը
պահանջէ որ Աստուծոյ արքայութիւնը անի մեր սրտին մէջ եւ
տարածուի մեր կեանքի բոլոր երեսներուն վրայ: Մարդ մէկ անգամէն չի
կրնար Աստուծոյ կամեցածին պէս սուրբ ու մաքուր ըլլալ. ասիկա
ժամանակ ու համբերութիւն կը պահանջէ, աշխատանք կ'ենթադրէ:

2.- Սիրելիս, ոչ միայն Աստուծոյ արքայութիւնը նման է հատիկի,
այլեւ դուն եւս: Ամէն հաւատացեալ կոչուած է հատիկի մը նման անելու
եւ ծառի վերածուելու, որպէսզի ինչպէս որ անած ու միւլաւորուած
ծառը կրնայ հանգիստ տալ յոգնած թռչունին, նոյնպէս ալ, իր հաւա-
տքին եւ Քրիստոսի նմանութեան մէջ անած հաւատացեալը՝ կարենայ
օգտակար դառնալ հոգեւոր ծարաւ ունեցող մարդոց եւ հանգիստի
առաջնորդել հոգեպէս յոգնածները:

ՈՒՌԿԱՆԻՆ ՕՐԻՆԱԿԸ

«Երկինքի արքայութիւնը կը նմանի ծովը նետուած ուռկանի մը, ուր ամէն տեսակ ձուկ կը բռնուի: Երբ լեցուի, ձկնորսները ցամաք կը քաշեն եւ նստելով ձուկերը կը գատեն: Լաւերը կը հաւաքեն ամաններու մէջ, իսկ անպէտները կը թափեն: Ահա, նոյնպէս պիտի պատահի աշխարհի վախճանին: Հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը գատեն արդարներուն մէջէն եւ նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր անոնք պիտի լան եւ կրճտեն իրենց ակռաները» (Մտ 13.47-50):

«Երկինքի արքայութիւնը կը նմանի ծովը նետուած ուռկանի մը, ուր ամէն տեսակ ձուկ կը բռնուի» (Մտ 13.47): Այս համարին վերաբերեալ ներկայացնենք քանի մը մատնանշումներ.–

1.– Յստակ է որ ծովը կը պատկերացնէ աշխարհը, համայն տիեզերքը: Ինչո՞ւ տուեալ օրինակին մէջ աշխարհը կոչուած է «ծով»: Աշխարհը կոչուած է «ծով» հիմնական վեց պատճառներով.–

ա.– Ծովուն մէջ մենք միշտ կը գտնենք փոթորիկը, մրրիկը, անակնկալ փորձութիւնները: Ինչպէս ծովը լեցուն է անակնկալ աղէտներով, այնպէս ալ, աշխարհ լեցուն է ամէն տեսակ փորձութիւններով, որոնց մեծ բաժինը անակնկալ կերպով կը պատահին:

բ.– Ծովուն նման աշխարհը եւս ակնոծ վիճակի մէջ կը գտնուի: Ծովուն խաղաղութիւնը խանգարողը հովն ու փոթորիկն է, իսկ աշխարհի խաղաղութիւնը խանգարողը՝ մեղքն ու անհաւատութիւնը: Ինչպէս հովն ու ալիքները մնայուն կերպով ծովը երերուն վիճակի մէջ կը պահեն, նոյնպէս ալ, մեղքն ու անօրէնութիւնը աշխարհը երերուն կը դարձնեն:

գ.– Ծովուն խորքը կը գտնուին մեզի անծանօթ իրեր, առարկաներ եւ ամէն տեսակ իրականութիւններ: Անոր խորքը մեզի համար մթին է եւ անտեսանելի: Ծովուն խորագոյն տեղերը կը հանգչին անորոշութիւնն ու անյստակութիւնը: Կարծէք ծովը իր խորութեանը մէջն է որ կը պահէ իր իսկութիւնը, իր իսկական ինքնութիւնը: Նո՞յնն է աշխարհի իրավիճակը: Ինչպէս ծովուն մէջ, այնպէս ալ աշխարհի մէջ, բայց մանաւանդ՝ աշխարհի մէջ ապրող մարդոց ներսիդին՝ կան անորոշութիւններ, անյստակութիւններ, ծածուկ մեղքեր, ծածկուած հարցեր, որոնք սակայն ծածուկ պիտի չմնան, այլ հանդէս պիտի գան երբ Տէրը իր հնձուորները (հրեշտակները) դրկէ չարերը արդարներու մէջէն գատելու համար:

դ.- Աշխարհ կոչուած է «ծով», որովհետեւ, ինչպէս ծովուն մէջ կ'ապրին այլազան եւ բազմատեսակ սողուններ, այնպէս ալ սոյն աշխարհին մէջ, կ'ապրին ամէն տեսակ նկարագիր ու բնաւորութիւն ունեցող մարդիկ:

ե.- Դարձեալ, աշխարհ կոչուած է «ծով», որովհետեւ, ինչպէս ծովուն մէջ պզտիկ ձուկերը կեր կը դառնան մեծ ձուկերուն, այնպէս ալ ներկայ աշխարհին մէջ, տկարները գոհ կ'երթան հզօրներուն, աղֆատները կը հարստահարուին հարուստներուն կողմէ, բարձր դիրքի մարդիկ կ'ոտնակոխեն խոնարհ մարդիկը, իրենց իշխանութեան ենթակայ եղողները:

զ.- Տակաւին, աշխարհ կոչուած է «ծով», որովհետեւ, ինչպէս ոմանք երբ դէպի երկիր մը նաւարկեն՝ խաղաղ կը հասնին նաւահանգիստ, իսկ ուրիշներ կրնան հանդիպիլ փոթորիկի եւ ընկղմիլ, այնպէս ալ, աշխարհի այս ծովուն մէջ նաւարկող հաւատացեալներէն ոմանք ապահով կը հասնին փրկութեան նաւահանգիստ, իսկ ուրիշներ՝ կեանքի փոթորիկներուն դիմաց պարտուած կ'իյնան կամ նահանջ կ'արձանագրեն:

2.- Գիտնալէ ետք որ ծովը աշխարհն է որ կը ներկայացնէ, հարց կու տանք թէ ի՞նչ բան կը պատկերացնէ ծովուն մէջ նետուած ուռկանը եւ որո՞նք են աշխարհի ծովուն մէջ ուռկանը նետողները: Ուռկանը Աստուծոյ խօսքն է, Աստուծոյ արքայութեան պատգամն է, փրկութեան աւետիսն է, Քրիստոսի շնորհն է: Իսկ այդ ուռկանը ծովուն մէջ նետողները եղան առաջին հերթին Քրիստոս եւ իր աշակերտները, ապա անոնց յաջորդող եկեղեցական հայրերը, եւ բոլոր դարերու ընթացքին ապրած հաւատացեալները: Երկինքի արքայութեան աւետարանին ուռկանը նետելը աշխարհի ծովածաւալ մարդկութեան կեանքէն ներս այսօր եւս կը շարունակուի եկեղեցւոյ եւ ամէն մէկ հաւատացեալի միջոցաւ:

Քրիստոս «Ուռկանին օրինակով» ցոյց կու տայ որ իւրաքանչիւր հաւատացեալի կոչումն է, բայց յատկապէս եկեղեցւոյ կոչումը, Աստուծոյ խօսքին բարոգութեամբ, երկինքի արքայութեան ուռկանը աշխարհի ծովուն մէջ նետել եւ նետուած պահել: Նոյնը կը հաստատէ Զարեհ Արք. Ազնաւորեան երբ կը խօսի Մտ 4.18-ի մասին, որ կ'ըսէ. «Մինչ Յիսուս Գալիլեայի լիճին եզերքը կը շրջէր, տեսաւ երկու եղբայրներ, որոնք ձկնորս էին. Սիմոնը՝ որ Պետրոս կը կոչուէր եւ անոր եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար»:

Սրբագանը խօսելով «ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար» տողին մասին՝ կ'ըսէ. «Այս բաներով Քրիստոս կը պատկերացնէ հետագայ եկեղեցիին գործունէութեան գլխաւոր առաջին ուղղութիւնը կամ երեսը: Առաջին երեսը ֆարոգութեան երեսն է: Եկեղեցին Աստուծոյ արքայութեան պատգամը մնայուն կերպով պէտք է ուղղէ մարդոց եւ զանոնք հրաւիրէ որ Աստուծոյ արքայութեան մաս կազմեն: Արդ, եկեղեցին որ արքայութեան նախապատկերացումն է, նախադուռն է, մնայուն կերպով կը հրաւիրէ մարդիկը որպէսզի գան եւ արքայութեան ժառանգորդ դառնան: Այդ գործունէութիւնը ուռկանը ծով ձգած ըլլալու վիճակով կ'արտայայտուի: Եկեղեցին իր ֆարոգութեան ուռկանը մնայուն կերպով պէտք է ձգած ըլլայ աշխարհի ծովուն մէջ, որպէսզի անհաւատ եւ հեթանոս աշխարհէն միշտ ալ մարդիկը կանչէ կամ որսայ Աստուծոյ արքայութեան համար»:

3.- Բացատրեցիմք, թէ ուռկանը Աստուծոյ խօսքն է, Աստուծոյ արքայութեան պատգամն է, փրկութեան աւետիսն է, Քրիստոսի շնորհքն է: Արդ, հարց կու տանք թէ ինչո՞ւ «ուռկան» կը կոչուի կամ «ուռկանի» կը նմանցուի Աստուծոյ խօսքը եւ տուեալ միւս իրականութիւնները: Քանի մը պատճառներով.-

ա.- Մենք գիտենք որ ձուկը ուռկան բերողը կամ ֆաշողը՝ նոյնիման ուռկանին մէջ եղող ուտելիքն է, կերն է: Ինչպէս ուտելիքն է որ ձուկը ուռկան կը բերէ, այնպէս ալ, Աստուծոյ խօսքն է որ հոգեւորապէս ծարաւ եղող մարդիկը եկեղեցի կը բերէ, եւ եկեղեցւոյ միջոցաւ՝ Քրիստոսի:

բ.- Մենք գիտենք նաեւ որ ուռկանին մէջ բռնուած ձուկը դժուար թէ կարենայ ազատիլ ուռկանէն: Ինչպէս անգամ որ ձուկը ուռկան իյնայ ալ ազատում չունի, այնպէս ալ, անգամ որ մարդը բռնուի Աստուծոյ խօսքին ուռկանին մէջ ու ցաշակէ ֆաղցրութիւնը Աստուծոյ խօսքին, ալ բնաւ պիտի չուզէ հրաժարիլ անկէ: Հետեւաբար, Աստուծոյ խօսքը, արքայութեան պատգամը, փրկութեան աւետիսը, Քրիստոսի շնորհքը ուռկան կը կոչուին կամ ուռկանի կը նմանցուին, ցոյց տալու համար անոնց ֆաշողական գորութիւնը, եւ թէ՛ անոնց համը առնողը՝ ալ բնաւ չ'ուզեր բաժնուիլ անոնցմէ:

գ.- Մենք գիտենք նաեւ որ ձկնորսներ ուռկանը ափ կամ նաւ չեն ֆաշեր մինչեւ որ լեցուի անիկա: Ինչպէս ձկնորսներ ուռկանը ափ չեն ֆաշեր մինչեւ որ լեցուի, այնպէս ալ Քրիստոսի երկրորդ գալուստն ու դատաստանը տեղի պիտի չունենան, մինչեւ որ Աստուծոյ խօսքին տարածումով՝ ժամանակները լեցուին:

4.- «Ուր ամէն տեսակ ձուկ կը բռնուի»: Վերեւ երկու անգամներ հաստատեցինք թէ ուռկանը՝ Աստուծոյ խօսքն է, բայց միաժամանակ ուռկանը, ինչպէս մեկնիչ հայրեր կ'ըսեն, Եկեղեցին ինքն է: Արդ, ինչո՞ւ Եկեղեցին կը նմանցուի ուռկանի: Մենք գիտենք որ ուռկանին մէջ «ամէն տեսակ ձուկ կը բռնուի», ինչպէս բնագիրն իսկ կը հաստատէ: Արդ, Եկեղեցին ուռկանի կը նմանցուի, որովհետեւ, ինչպէս ծովը նետուած ուռկանին մէջ կրնան մտնել թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր ձուկերը, թէ՛ լաւ եւ թէ՛ անպէտ ձուկերը, այնպէս ալ Եկեղեցի կրնան գալ «ամէն տեսակ ձուկ», այսինքն՝ թէ՛ անհաւատ եւ թէ՛ հաւատացեալ մարդիկ, թէ՛ բարեգործն ու թէ՛ չարագործը, թէ՛ փրկուածն ու թէ՛ կորսուածը, թէ՛ մեծն ու թէ՛ փոքրը: Որովհետեւ առակով, Յիսուս յատկօրէն պարզեց թէ ցորենի կողմին մնայուն կերպով որովհետեւ ներկայ պիտի ըլլայ Եկեղեցւոյ կեանքին մէջ:

«Ամէն տեսակ ձուկ» ըսելով կրնանք հասկնալ նաեւ տարբեր-տարբեր նկարագիր, բնաւորութիւն եւ համոզումներ ունեցող մարդիկը:

Վերջապէս, «ամէն տեսակ ձուկ» ըսելով կրնանք հասկնալ նաեւ տարբեր կրօններու պատկանող մարդիկը:

Քրիստոսի Եկեղեցին որ Աստուծոյ արքայութեան նախադուռն է երկրի վրայ, իր դուռը պէտք է լա՛յն բանայ ամէն խաւի պատկանող մարդոց առջեւ: Աստուծոյ արքայութեան աւետարանին պատգամը ուղղուած աշխարհի բոլոր մարդոց անխտիր:

Եկեղեցին իբրեւ Աստուծոյ արքայութեան մանրանկարը՝ խորութիւն պէտք է չէ դնէ մարդոց միջեւ, այլ բոլորին պէտք է հասնի եւ բոլորին փոխանցէ արքայութեան աւետիսը:

Եկեղեցին իրաւունք չունի մարդոց յաւիտեականութեան վերաբերեալ վճիռ արձակելու: Ան իրաւունք չունի յայտարարելու թէ ո՛վ փրկուած է եւ ո՛վ չէ փրկուած: Ան նոյնիսկ իրաւունք չունի անպէտ «հաւատացեալները» արտաֆսելու Եկեղեցիէն: Արտաֆսելու գործողութիւնը Քրիստոսի երկրորդ գալուստէն ե՛տք միայն տեղի պիտի ունենայ, իսկ Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի պիտի ունենայ միայն այն ատեն երբ ուռկանը լեցուի, ինչ որ բնագիրն ալ կը պարզէ. «Երբ լեցուի, ձկնորսները ցամաք կը ֆաշեն եւ նստելով ձուկերը կը գատեն»:

5.- «Կը բռնուի»: «Կը բռնուի» բառին փոխարէն Հին թարգմանութիւնը ինչպէս նաեւ Գրաբարը ունին «ժողովել» բայը: Այս երկու բառերէն իւրաքանչիւրը ունի իր յատուկ իմաստը եւ նշանակութիւնը: Տեսնենք զանոնք առանձնաբար եւ ամփոփ կերպով.-

ա.- «Կը բռնուի»: Այս բառը կը պարզէ թէ անգամ մը որ մարդը նաշակէ ու ըմբռնէ քաղցրութիւնը Աստուծոյ խօսքին, ջերմութիւնը սուրբ Աւետարանին, «կը բռնուի» անկէ եւ ալ բնաւ չ'ուզեր բաժնուիլ

անկէ, եւ մենք այս մասին խօսեցանք ասկէ առաջ: Պահուած գանձին օրինակն ու թանկագին մարգարիտին օրինակը՝ երկուքն ալ, որոշապէս ցոյց կու տան, թէ Աստուծոյ արքայութեան գանձը կամ մարգարիտը գտնողը՝ «կը բռնուի», կը հմայուի եւ կ'առիմֆնուի անով, եւ ա՛յնքան «կը բռնուի» ու կ'առիմֆնուի՝ որ կ'երթայ իր ամբողջ ունեցածը կը ծախէ, միայն թէ տէրը դառնայ այդ գանձին կամ մարգարիտին:

բ.- «Կը ժողվէ»: Այս բառը կը յիշեցնէ մեզի հոգեւոր հովիւ եղող եկեղեցականին առաքելութեան գլխաւոր երեսը, որ է՝ երթալ դէպի մեղքի անապատները եւ եկեղեցի ժողվել կորսուածները, ցրուածները, վիրաւորները: Ինչպէս երկրագործը ցորեն կամ այլ տեսակի պտուղ ժողվելու համար՝ չի կրնար իր տունը նստած մնալ, այլ պէտք է արտ երթայ, այնպէս ալ, հոգեւոր հովիւներ, ժողվելու համար կորսուած մարդիկը՝ պէտք է դուրս գան իրենց նեղ պատեաններէն, գրասենեակներէն եւ փնտոտուի աշխատանքի նուիրուին: Յիսուս ըսաւ թէ ինք աշխարհ եկաւ կորսուածը փնտոելու ու փրկելու: Հոգեւոր հովիւներ ու առաջնորդներ պէտք է Քրիստոսի հետեւին եւ իրենք եւս կորսուածը փնտոեն եւ գայն փրկութեան առաջնորդեն:

6.- Վերջին կէտ մըն ալ կայ որուն կ'արժէ անդրադառնալ: Բացարեւից թէ ինչո՛ւ Աստուծոյ խօսքը ուղկանի կը նմանցուի, հիմա տեսնենք թէ ինչո՞ւ Աստուծոյ խօսքը, այլ խօսքով՝ Քրիստոսի փրկութեան աւետարանը տարածողները կը կոչուին՝ ձկնորս: Անոնք ձկնորս կը կոչուին քանի մը պատճառներով.-

ա.- Մենք գիտենք որ ձկնորսը այն մարդն է՝ որ իր յոյսը ընդհանրապէս իր ցարտարութենէն աւելի՝ Աստուծոյ վրայ է որ կը դնէ: Ուստի, ան կարծէք Աստուծոյ մօտիկ եղող մարդն է: Ինչպէս ձկնորսին յոյսն ու ապաւէնը Աստուած ինքն է, նոյնպէս ալ Քրիստոսի փրկութեան աւետարանը տարածողներուն յոյսը Աստուած ի՛նք պէտք է ըլլայ: Աստուծոյ խօսքին տարածիչները, իրենց ցարտարութենէն եւ իմաստութենէն աւելի՝ պէտք է Աստուծո՛յ վստահին:

բ.- Քրիստոսի փրկարար աւետարանին ու շնորհիւն փարոզիչները ձկնորսի կը նմանցուին, որպէսզի ցոյց տրուի մեզի, թէ ինչպէս ձկնորսութեան գացող ձկնորսներէն ոմանք ձեռքերնին պարապ կը դառնան, իսկ ուրիշներ՝ ձեռքերնին լեցուն, այնպէս ալ, Քրիստոսի խօսքերուն տարածիչներէն ոմանք հոգիներ չեն վաստկիր արքայութեան համար, իսկ ուրիշներ՝ կը վաստկին: Պատճա՞ռը: Պատճառը վստահաբար հովիւները իրենք են: Եթէ հովիւ մը իր հօտին համար աղօթող ու տփնող է՝ բնականօրէն կրնայ արքայութեան համար հոգիներ շահիլ, իսկ մէկը որ հեռու է աղօթէն ու հաւատէն՝ չի կրնար:

գ.– Երբեմն Քրիստոս բանաւոր հօտի հովիւները կը կոչէ «հովիւ» եւ երբեմն ալ կը կոչէ «ձկնորս»: Յիշենք որ թէ՛ հովիւր եւ թէ՛ ձկնորսը, երկուքն ալ, աշխարհի աղմուկէն հեռու եւ բնութեան մօտիկ կ'ըլլան: Հետեւաբար, Քրիստոս իր խօսքի փարոզիչները հովիւ կամ ձկնորս կոչելով՝ խորքին մէջ, կոչ մըն է որ ուղղած կ'ըլլայ անոնց հեռու ըլլալու եւ հեռու մնալու աշխարհի տաղտուկէն եւ մօտենալու բնութեան, ուր Աստուծոյ ներկայութիւնը աւելի կարելի է զգալ, տեսնել ու ապրիլ քան փաղափ իրարանցումին մէջ:

դ.– Տրուած ըլլալով որ ձկնորսին գործը ծովուն հետ է, ան բնականօրէն քաջ ու անվախ կ'ըլլայ, որովհետեւ վարժ է հանդիպելու մրրկալից փոթորիկներու, ալիքներու, հովերու: Ան այս բոլորը քաջօրէն կը դիմագրաւէ: Յիսուս իր խօսքի տարածիչները «ձկնորս» կոչելով, կոչ ուղղած կ'ըլլայ անոնց քաջ ըլլալու եւ քաջօրէն տանելու կեանքի դժուարին պահերը, փոթորկալից ժամերը:

«Երբ լեցուի, ձկնորսները ցամաք կը քաշեն եւ նստելով ձուկերը կը գտնեն: Լաւերը կը հաւաքեն ամաններու մէջ, իսկ անպէտները կը քափեն» (Մտ 13.48): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Երբ լեցուի»: Զարեհ Ա.րֆ. Ազնաւորեան կը բացատրէ որ «երբ լեցուի» բառերը կը նշեն ժամանակ մը, նշդուած ժամանակ մը: Աստուած աշխարհի կատարածին համար ժամանակ մը նշդած է: «Ուռկանին օրինակով» Քրիստոս ցոյց կու տար որ ուռկանին լեցուիլը իր օրով տեղի ունենալիք բան մը պիտի չըլլար, ատիկա ժամանակ պիտի խլէր: Ուռկանը հետեւաբար, չի կրնար ցամաք քաշուիլ այնքան ատեն երբ տակաւին ձուկերով չէ լեցուած: «Երբ լեցուի» բառերը, կ'ըսէ Սրբազանը, ակնարկութիւն է նաեւ ժամանակի կամ ժամանակներու լեցուելուն, լրումին, կատարումին, աւարտին, վախճանին, որմէ ետք Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի պիտի ունենայ:

Ի՞նչ կը հասկնանք երբ կ'ըսենք. «Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի պիտի ունենայ ժամանակներու աւարտին կամ վախճանին»: Հոս «աւարտ» կամ «վախճան» բառերը անպայման «վերջ» իմաստով չեն ներկայանար, «որովհետեւ “վերջ” մը կրնայ յանկարծօրէն ալ գալ, այս պարագային սակայն, յանկարծ գալու մասին չէ խօսքը, այլ՝ Աստուծոյ կամեցած բաները կատարուելուն մասին», անոր համար կ'ըսուի՝ «երբ լեցուի», այսինքն՝ երբ Աստուծոյ կամեցածը կատարուի, կը հաստատէ Զարեհ Ա.րֆ. Ազնաւորեան: Ուստի, ուռկանը լեցուած եւ ժամանակները իրենց աւարտին կամ վախճանին հասած կրնան նկատուիլ միայն այն ատեն՝ երբ Աստուծոյ ծրագիրը իրականանայ երկրի վրայ, եւ այդ

ծրագիրը իրականացած կ'ըլլայ երբ Աստուծոյ արքայութեան աւետարանը տարածուի ամէն տեղ:

2.- «Զկնորսները ցամաք կը փաշեն եւ նստելով ձուկերը կը զատեն»: Լեցուած ու ցամաք փաշուած ուռկանին օրինակն ու ձուկերը իրարմէ զատելու արարքը գեղեցիկ կերպով կը պատկերացնեն աշխարհի վախճանը: Կարելոր կէտ մը կայ այստեղ որուն պէտք է անդրադառնալ: Ինչո՞ւ Յիսուս ձուկերը ցամաք փաշելու մասին կը խօսի: Ի՞նչ կը պատահի ձուկի մը երբ ցամաք կը փաշուի: Կը մեռնի: Հետեւաբար ի՞նչ է Յիսուսի ըսել ուզածը: Տիրոջ ըսել ուզածը այն է՝ որ դատաստանի օրը, չար մարդոց համար մահուան օ՛ր պիտի ըլլայ, որովհետեւ գեհեմի մէջ պիտի նետուին: Յամաք փաշելը, հետեւաբար, չարութեան ու չարագործութեան վերջ դնել կը նշանակէ: Բայց մէկը անմիջապէս կրնայ մտածել, որ լաւ ձուկերը եւս ցամաք կը փաշուին, ուրեմն անո՞նք եւս մահուան պիտի դատապարտուին: Եթէ երբեք նկատի ունենանք բնագիրին ըսածը, պիտի տեսնենք որ անոնք մահուան պիտի չդատապարտուին: Յիսուս լաւ ձուկերուն համար կ'ըսէ թէ պիտի հաւաքուին «ամաններու մէջ», այդ ամաններուն մէջ կրնայ ջուր ըլլալ, մինչդեռ անպէտ ձուկերուն համար կ'ըսուի՝ «անպէտները կը թափեն»: Թափելը կրնայ աւագին վրայ տեղի ունենալ, պայման չէ որ ջուրին մէջ թափուին, թէպէտ ձկնորսներ սովոր են իրենց չհաւնած ձուկերը ջուրի մէջ նետել: Աւարտին այս մասին պիտի խօսինք երբ անդրադառնանք ձկնորսներուն ու հրեշտակներուն գործելակերպի տարբերութեանց:

3.- «Զկնորսները ցամաք կը փաշեն եւ նստելով ձուկերը կը զատեն»: Որո՞նք են հոս յիշուած ձկնորսները, որոնք ուռկանը ցամաք կը փաշեն: 47-րդ համարին մէջ յիշուած ձկնորսները չշփոթենք ներկայ համարին, այսինքն՝ 48-րդ համարին մէջ յիշուած ձկնորսներուն հետ:

47-րդ համարին մասին խօսած ատեն, բացատրեցինք որ արքայութեան ուռկանը ծովուն մէջ նետողները եղան առաջին հերթին Քրիստոս եւ իր աշակերտները, ապա անոնց յաջորդող եկեղեցական հայրերը, յետոյ դարերու ընթացքին ապրած հաւատացեալները: Իսկ ներկայիս, ըսինք, արքայութեան աւետարանին ուռկանը կը նետուի այս աշխարհի ծովուն մէջ՝ եկեղեցւոյ եւ ամէն մէկ նշմարիտ հաւատացեալի միջոցաւ:

Իսկ 48-րդ համարին մէջ յիշուած ձկնորսները՝ հրեշտակներն են, որոնց Աստուած պիտի վստահի ընտրութեան գործողութիւնը: Իրե՛նց է որ անպէտ ձուկերը՝ լաւ ձուկերէն, այլ խօսքով՝ չար մարդիկը՝ արդար մարդոց մէջէն զատելու պարտականութիւնը պիտի յանձնուի:

Եթէ նկատի ունենանք որ 47-րդ համարը Քրիստոսի եւ իր հետեւորդներուն մասին է որ կը խօսի, իսկ 48-րդ համարը՝ ժամանակներու աւարտին յայտնուելիք հրեշտակներու մասին, յստակ կը դառնայ, որ Քրիստոս Ուոկանին օրինակով եկեղեցւոյ երկու հանգրուաններուն, այլ խօսքով՝ ներկայ ու ապագայ հանգրուաններուն մասին է որ կը խօսի: Զարեհ Ա.ր.ֆ. Ազնաւորեան ճիշդ այս կէտին մասին խօսելով՝ կ'ըսէ. «Ծով նետուած ուոկանի առակը կը պատկերացնէ արքայութիւնը իր ներկայ եւ ապագայ երկու երեսներով: Ներկայ երեսը եկեղեցւոյ կեանքն է: Եկեղեցին ունի իր ձկնորսները՝ առաքելներու հետեւորդ քարոզիչները, որոնք Աստուծոյ խօսքին քարոզութեան ուոկանը նետած են ու կը նետեն աշխարհի ծովուն մէջ, եւ այդ ուոկանով եկեղեցւոյ մէջ կ'առնեն անխտիր ամէն տեսակի ձուկ, այսինքն՝ աշխարհի բոլոր ժողովուրդներէն, թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր, թէ՛ լաւ եւ թէ՛ անպէտ, թէ՛ բարի եւ թէ՛ չար, առանց ընտրութիւն կամ դատաստան ընելու: Ընտրութիւնը կամ դատաստանը՝ ապագայ երեսն է, աշխարհի կատարածին տեղի ունենալիք, երբ ձկնորսները, այս պարագայիս՝ «հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը արդարներուն մէջէն պիտի գտնեն», ճիշդ ինչպէս որովմներու առակով ալ պատկերացուցած է Քրիստոս (Մտ 13.37-43)»:

4.- «Լաւերը կը հաւաքեն ամաններու մէջ, իսկ անպէտները կը թափեն»: Անոնք պիտանի եւ լաւ ձուկերը (մարդիկը) պիտի հաւաքեն «ամաններու մէջ, այսինքն՝ Աստուծոյ ներկայութեան մէջ, իսկ անպէտները պիտի թափեն: Հին թարգմանութիւնը «թափել» բառին փոխարէն ունի յատկանշական բառ մը՝ «դուրս ձգել», որուն կ'արժէ անդրադառնալ: Յատկանշական է այս բառը, անոր համար որ անպէտներուն վերաբերեալ արքայութենէն դուրս ձգուելու գաղափարն է որ կու տայ մեզի, կարծէք ըսելով ուզելով, որ նախապէս բոլորը արքայութեան մէջ էին, սկիզբէն կոչուած ու կանչուած էին արքայութեան ժառանգորդները դառնալու, բայց յետո՛յ է որ ոմանք իրենց մեղքներուն պատճառով «դուրս ձգուեցան» իրենց համար պատրաստուած Աստուծոյ արքայութենէն:

Եւ ասիկա անուրանալի ճշմարտութիւն մըն է: Յիշենք մէկ-երկու օրինակներ որոնք ցոյց կու տան որ սկիզբէն Աստուած մարդիկը արքայութեան համար միայն նկատի առած էր: Յայտնութեան գիրքին 3.5-ին մէջ կը կարդանք. «Ով որ յաղթանակէ... անոր անունը պիտի չջնջեմ կեանքի գիրքէն»: Բնագիրը չ'ըսեր՝ «անոր անունը պիտի գրեմ», այլ՝ «անոր անունը պիտի չջնջեմ», որ կը նշանակէ թէ բոլորիս անունները սկիզբէն գրուած կան կեանքի գիրքին մէջ: Անոնք կրնան

ջնջուիլ միայն այն ատեն՝ երբ չփորձենք կոուիլ մեղքի դէմ ու յաղթել անոր:

Երկրորդ օրինակ մը: Յիսուս որումի առակին մեկնութեան մէջ, կ'ըսէ թէ «իր հրեշտակները պիտի դրկէ, որոնք իր արքայութենէն պիտի հաւաքեն բոլոր անոնք որ գայթակղութեան պատճառ կ'ըլլան եւ չարիք կը գործեն» (Մտ 13.41): Համաձայն այս համարին, արքայութեան մէջ չարիք գործողներ կան: Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն թէ հոս յիշուած արքայութիւնը կը ներկայացնէ աշխարհը, իսկ ուրիշ մեկնիչներ կ'ըսեն, թէ անիկա կը ներկայացնէ եկեղեցին: Հոս յիշուած արքայութիւնը աշխարհը ըլլայ թէ եկեղեցին, մէկ բան որոշ է, որ Յիսուս կը խօսի արքայութեան մէջ եղող չարագործներու մասին, որոնք արքայութենէն դուրս պիտի դուրսին իր գալստեան օրը, եւ սա ինքնին ցոյց կու տայ, թէ բոլոր մարդիկ կոչուած են արքայութեան գաւակներ դառնալու, բայց եթէ երբեք ոմանք անկէ դուրս կը ձգուին՝ ասիկա իրենց չարագործութեանց հետեւանքով կ'ըլլայ:

Այս կէտը կ'եզրակացնենք ըսելով, Աստուած սկիզբէն չնախասահմանեց որ ոմանք գեհեմ երթան եւ ոմանք՝ արքայութիւն: «Աստուած... կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին» (Ա.Տմ 2.3-4) եւ ո՛չ թէ ոմանք միայն: Աստուծոյ ծրագիրը սկիզբէն բարին էր: Ան արքայութիւնը պատրաստեց մարդոց համար (Մտ 25.34): Գեհեմի կրակը մարդոց համար չէ պատրաստուած, այլ՝ Սատանային եւ իր չար հրեշտակներուն համար (Մտ 25.41):

Գալով նոր թարգմանութեան մէջ «դուրս ձգել» բառին փոխարինող «թափել» բառին, ի՞նչ կ'արտայայտէ ասիկա: Մենք ե՞րբ կամ ի՞նչ բանի համար կը գործածենք «թափել» բառը: Ընդհանրապէս «թափել» բառը կը գործածենք բանի մը համար որ այլեւս ոեւէ բանի պիտանի չէ, ոեւէ բանի չի ծառայեր, օգուտ մը չունի: Այս իմաստով, Յիսուսի ըսել ուզածը այն է՝ որ մարդիկ որոնք իրենց երկրաւոր կեանքի ընթացքին, պիտանի ու օգտակար ներկայութիւն չեն եղած, մարդիկ որոնք ուրիշին չեն ծառայած եւ ո՛չ մէկ բարիք կատարած՝ գեհեմի կրակին մէջ պիտի թափուին, միշտ ինչպէս աղբը կողովի մէջ կը թափուի:

5.- «Լաւերը կը հաւաքեն ամաններու մէջ»: Քիչ մը վերել բացատրեցինք թէ ձուկերը «ամաններու մէջ» առնել՝ Աստուծոյ ներկայութեան մէջ առնել կը նշանակէ: Ամանը նաեւ կրնանք խորհրդանշան նկատել ապահովութեան եւ անվտանգութեան: Աստուծոյ արքայութեան, այլ խօսքով՝ ներկայութեան մէջ ապրող մարդը՝ այլեւս յաւիտեանապէս ապահով կ'ըլլայ եւ հեռու ամէն տեսակ վտանգներէ:

6.- «Լաւերը... անպէտները»: Այս երկու բառերը կը պարզեն որ եկեղեցւոյ ուղկանին մէջ կան լաւն ու գէշը, բարեպաշտն ու անհաւատը, պիտանին ու խոտելին, անկեղծն ու կեղծը: Որովմեքու առակը նաեւ ցոյց կու տայ որ հաւատացեալն ու անհաւատը միասնաբար ու միատեղ կ'ապրին: Բայց Քրիստոս կը յայտնէ որ անոնք պիտի չշարունակեն առ յաւէտ միասին գոյատեւել, որովհետեւ աշխարհի վախճանին «հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը զատեն արդարներուն մէջէն եւ նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր անոնք պիտի լան եւ կրճտեն իրենց ակռաները»:

7.- «Կը զատեն..., կը հաւաքեն..., կը թափեն»: Այս երեք բառերը ցոյց կու տան որ աշխարհի վախճանին՝ դատաստանի օրը, Աստուած հրեշտակներուն միջոցաւ ֆննութենէ պիտի անձնէ իր ձուկերը՝ մարդիկը, եւ անոնց վերաբերեալ դատաստան պիտի ընէ, որոշում պիտի առնէ ու վնիռ պիտի արձակէ: Նայինք իրական ձկնորսի մը կեանքին: Կա՞յ ձկնորս մը որ առանց աչքէ անցնելու ուղկանին մէջ հաւաքուած ձուկերը՝ բոլորը կը հաւաքէ ու տուն կը տանի: Ըսել ուզածս այն է, որ Քրիստոս ոեւէ մէկը արժայութիւն պիտի չառնէ առանց ֆննելու անոր գործերն ու հաւատքը:

8.- Վերջին կէտ մըն ալ կայ որուն պէտք է անդրադառնալ արագ ակնարկով մը: Մենք գիտենք որ ձկնորսները մեծ ձուկը մեծին հետ կը դնեն, պզտիկը՝ պզտիկին հետ, միջակը՝ միջակին հետ: Ասիկա մեզի կրնայ յիշեցնել որ դատաստանի օրը իւրաքանչիւր հաւատացեալ իր գործերուն համաձայն վարձատրութիւն պիտի ստանայ: Թէ ի՞նչ պիտի ըլլայ հաւատացեալներուն տրուելիք վարձատրութիւնը՝ մենք այս մասին մանրամասնօրէն խօսած ենք, երբ բացատրեցինք Քանթարներուն եւ Մնասներուն առակները: Տե՛ս Մատթէոսի 25.21 եւ 23 համարներուն, եւ Դուկասի 19.16-19 համարներուն բացատրութիւնները:

«Ահա, նոյնպէս պիտի պատահի աշխարհի վախճանին: Հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը զատեն արդարներուն մէջէն եւ նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր անոնք պիտի լան եւ կրճտեն իրենց ակռաները» (Մտ 13.49-50): Քանի մը հակիրճ հաստատումներ.-

1.- «Նոյնպէս պիտի պատահի աշխարհի վախճանին»: Ի՞նչ պէտք է հասկնալ «աշխարհի վախճան» ըսելով: Ասկէ առաջ տեսանք թէ «աւարտ» կամ «վախճան» բառերը անպայման «վերջ» իմաստով չեն ներկայանար: Այլ խօսքով, «աշխարհի վախճան» ըսելով աշխարհի բնազնչում չենք հասկնար, այլ պարզապէս աւարտը աշխարհի ներկայ իրավիճակին: Աշխարհ իր ներկայ վիճակով վերջ պիտի գտնէ Տիրոջ

երկրորդ գալուստով, եւ նոր երկինք ու նոր երկիր մը գոյութեան պիտի բերուին որոնք պիտի կազմեն երկինքի արքայութիւնը (Բ.Պտ 3.11-13):

2.- Հրեշտակներուն ցուցաբերելիք եւ ձկնորսներուն ցուցաբերած վերաբերմունքին մէջ բացորոշ երկու տարբերութիւններ կան գոր պէտք է մատնանշել.-

ա.- Հրեշտակներուն կատարելիք ընտրութիւնը ամբողջովին տարբեր պիտի ըլլայ ձկնորսներուն կատարած ընտրութենէն: Ընդհանրապէս ձկնորսներուն նախընտրութիւնը մեծ ձուկներուն կ'երթայ, իսկ շատ փոքրերը՝ վերստին ծով կը նետեն: Հրեշտակները սակայն, իրենց ընտրութիւնը կատարած ատեն, մարդոց բարձրագոյն կամ մեծահամբաւ ըլլալը նկատի պիտի չառնեն: Զարեհ Սրբազանը անդրադառնալով այս երեւոյթին կ'ըսէ. «Հրեշտակներու ընտրութեան հիմը մարդոց փոքրութիւնը կամ մեծութիւնը չէ, կամ աշխարհիկ իմաստով հարուստ կամ աղքատ ըլլալը չէ: Ասոնք բնաւ նշանակութիւն չունին: Լաւ ու պիտանի ձուկերը կը պատկերացնեն լաւ նկարագիր ունեցող մարդիկը, իսկ անպէտ ձուկերը՝ վատ նկարագիր ունեցող մարդիկը: Նկարագիրով լաւ պէտք է ըլլալ այդ ընտրութեան մէջ տեղ ունենալու համար»:

բ.- Ձկնորսներ փոքր կամ անպէտ ձուկերը վերստին ծով կը նետեն, իսկ գէշ մարդոց վերաբերեալ, վերստին աշխարհ ձգուելու հարց չկայ, այլ պիտի նետուին «բոցավառ հնոցին մէջ, ուր անոնք պիտի լան եւ կրնան իրենց ակոսները»:

3.- «Հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը գատեն արդարներուն մէջէն»: Ուշագրաւ է որ չարերը իրե՛նք է որ կը գատուին արդարներէն, եւ ո՛չ թէ արդարները՝ չարերէն: Ինչո՞ւ արդեօք եւ ի՞նչ ցոյց կու տայ այս իրողութիւնը: Տոյց կու տայ քանի մը բան.-

ա.- Տոյց կու տայ որ այս աշխարհը չարերունը պիտի չմնայ, այլ անոնք դուրս պիտի դրուին արքայութիւն ըլլալու կոչուած այս աշխարհէն, ու պիտի նետուին գետնի տակ տեղ մը՝ գեհեմի խորերը:

բ.- Ասկէ առաջ բացատրեցինք, որ Աստուծոյ սկզբնական ծրագիրն էր որ բոլոր մարդիկ արդար կեանք ապրին ու փրկուին: Եւ սակայն, անոնք որոնք արդար կեանք չեն ապրիր, անոնք պիտի գատուին արդարներու խումբէն եւ գեհեմ նետուին: Եթէ երբեք արդարները իրենք գատուէին, կրնայինք մտածել, թէ Աստուած ուրեմն սկիզբէն նախասահմանած էր թէ որո՛նք պիտի առնուին ու փրկուին եւ որո՛նք պիտի ձգուին ու կորսուին:

գ.- Զարեհը կը գատուին արդարներուն մէջէն եւ կը նետուին «բոցավառ հնոցին մէջ», որպէսզի արդարները տեսնեն անոնց պատժուիլը եւ փառաբանեն Աստուծոյ արդարութիւնը:

դ.– Չարերուն գատուիլը արդարներուն մէջէն՝ ինքնին պատիժ մըն է չարերուն համար, եւ վարձատրութիւն մը՝ արդարներուն համար: Հետեւաբար, չարերը կը գատուին արդարներուն մէջէն, որպէսզի անոնք տեսնեն արդարներուն վարձատրութիւնը: Յիշեցէ՛ք է երբ Յիսուս խօսեցաւ վերջին դատաստանին մասին, նախ ակնարկութիւն ըրաւ թէ աջ կողմը եղող ոչխարները պիտի վարձատրուին, յետո՛յ է որ ձախ կողմը եղող այծերը կրակի մէջ պիտի նետուին: Սա եւս կը պարզէ որ չարերը ականատես պիտի ըլլան արդարներու վարձատրութեան:

4.– «Հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը գատեն...»: Ինչո՞ւ համար հրեշտակներուն կը վստահուի մարդիկը իրարմէ գատելու գործողութիւնը: Քանի մը պատճառներով.–

ա.– Անոնք հրեղէն մարմիններ են՝ ստեղծուած իրենց թագաւորին՝ Քրիստոսի կամքը կատարելու համար: Քրիստոսի կամքին մաս կը կազմէ չարերուն գատուիլը արդարներուն մէջէն:

բ.– Հրեշտակներուն պարտականութիւնն է ծառայել ու օգնել այն մարդոց որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն (Եբր 1.14): Ուստի, անոնց պարտականութիւնն է գատել չարագործ մարդիկը՝ իրենց օգնութեան արժանացած հաւատացեալներէն:

գ.– Հրեշտակներուն կը վստահուի մարդիկը իրարմէ գատելու գործողութիւնը, որովհետեւ անոնք մարդոց խորունկ նանաչողութիւնը ունին, նկատի ունենալով որ անոնք մարդոց պահապաններն են:

դ.– Քրիստոսի երկրորդ գալուստին՝ Քրիստոսի հետ միասին հրեշտակներուն յայտնուիլը (Մտ 25.31), եւ չարերը բարիներէն գատելու անոնց արարքը, ցոյց կու տայ որ անոնց կոչումն ու պարտականութիւնն է՝ աշխատիլ Քրիստոսի արդարութեան հաստատումին համար:

ե.– Երբ հրեշտակները չարերը կը գատեն արդարներէն՝ ատով իսկ ցոյց տուած կ'ըլլան որ իրենք բարեկամ են բարի մարդոց, ու թշնամի են՝ չար մարդոց, կամ այլ բացատրութեամբ մը, բարեկամ են՝ Քրիստոսի բարեկամներուն, ու թշնամի են՝ Քրիստոսի թշնամիներուն:

զ.– Ինչպէս այս առակին մէջ, նոյնպէս ալ որոմի առակին մէջ, հրեշտակները կոչուած են՝ հնձուոր (Մտ 13.39): Հնձուորները հրեշտակներն են, իսկ հնձուողները՝ բարեպաշտ մարդիկը իրենք: Բոլորս ալ գիտենք որ հնձուորները կ'ուրախանան իրենց հաւաքած հունձին համար: Ուստի, հրեշտակներուն կը վստահուի գործողութիւնը, որովհետեւ անոնք ո՛չ միայն ուրախակից են Աստուծոյ, այլեւ ուրախակից են մեզի: Անոնք մեզմով ու մեր փրկութեան համար ուրախացող արարածներ են:

5.- «Եւ նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր անոնք պիտի լան եւ կրնտեն իրենց ակռաները»: Ասկէ առաջ, տարբեր առիթներով խօսեցանք այս կամ նման հաստատումներու մասին, այստեղ կը բաւարարուիմ պարզապէս ըսելով, թէ «բոցավառ հնոցը» գրկուիլն է «Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր գօրութենէն» (Բ.ԹԿ 1.9): «Լալը» ապրուած դառնագին զոչումի մը պատկերացումն է: Իսկ «ակռաները կրնտելը» ներքին սաստիկ ցաւի մը պատկերացումն է:

ՊԱՀՈՒԱԾ ԳԱՆՁԻՆ ՕՐԻՆԱԿԸ

«Երկինքի արքայութիւնը կը նմանի արտի մը մէջ պահուած գանձի: Երբ մէկը գայն գտնէ՝ կրկին կը ծածկէ հողին մէջ եւ ուրախութենէն կ'երթայ, իր ամբողջ ունեցածը կը ծախէ ու կը գնէ այդ արտը» (Մտ 13.44):

Այս կարն առակին վերաբերեալ հինգ տարբեր եւ սակայն զիրար ամբողջացնող մեկնութիւններ առաջարկուած են .-

1.- ԱՌԱՋԻՆ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: Մեկնիչներէն ոմանք կ'ըսեն, որ այստեղ յիշուած արտը կը ներկայացնէ աշխարհը, գանձը կը ներկայացնէ զՔրիստոս որ մարմնացումն է երկինքի արքայութեան, իսկ այդ գանձը գտնողը կը ներկայացնէ նոյնիմէն մարդ արարածը:

Եթէ գանձը Քրիստոս է, ուրեմն, գանձը գտնել, կը նշանակէ՝ Քրիստոսը գտնել: Իսկ եթէ երբեք գանձը գտնել, կը նշանակէ Քրիստոսը գտնել, այդ պարագային, ի՞նչպէս պէտք է հասկնալ «կրկին (գանձը) կը ծածկէ հողին մէջ» բացատրութիւնը: Ի՞նչ կը նշանակէ հետեւաբար, գտնել Քրիստոսը եւ կրկին գայն ծածկել հողին մէջ: Այս հարցումին պատասխանը գտած կ'ըլլանք եթէ երբեք յիշենք երկու կէտ .-

ա.- Մեղքի մէջ կորսուած մարդ արարածը երբ գտնէ Քրիստոսը, թէպէտ կ'ուրախանայ, բայց այդ ուրախութիւնը կ'ըլլայ ժամանակաւոր: Ներշնչման մէկ պահուն ան կ'որոշէ հետեւիլ Քրիստոսի: Ան սակայն, երբ դժուարութեանց բաղիսի, կամ երբ մտաբերէ աշխարհաբոյր փափաքներն ու ցանկութիւնները, կ'ընկրկի եւ կը նահանջէ իր հաւատքին մէջ եւ Քրիստոսի հետեւելու իր որոշումը կը մոռնայ: Երբ կը դադրի Քրիստոսի հետեւելէ, ձեռով մը իր գտած Քրիստոսագանձն է որ հողին մէջ ծածկած կ'ըլլայ:

բ.- Պէտք է ընդունիլ որ մեղաւոր մարդը երբ գտնէ Քրիստոսը, չի կրնար ընդմիշտ եւ մէկ անգամէն խզել իր կապը աշխարհին հետ եւ սրբութեան կեանքի մը նուիրուիլ: Ո՛չ ոք կրնայ յանկարծ սուրբ ըլլալ: Տարիներու ընթացքին մեր ներսիդին բոյն դրած մեղք մը մէկ ակնթարթի մէջ չենք կրնար դուրս շարժել մեր մէջէն: Անձ մը որուն սրտին մէջ աշխարհի սէրը արմատացած է, դէպի աշխարհ դառնալու ֆամբան միշտ բաց կ'ըլլայ անոր դիմաց: Հետեւաբար, «կրկին կը ծածկէ հողին մէջ» խօսքը, կը նշանակէ, գտնել Քրիստոսը, որոշ ժամանակի մը համար ուրախանալ իրմով եւ հետեւիլ իրեն, յետոյ սակայն, վերստին

հրաժարիլ անկէ եւ գայն ծածկել «հողին մէջ»: Հողը կը պատկերացնէ աշխարհի հրապոյրներն ու ցանկութիւնները: Ուստի, Քրիստոսը «հողին մէջ» ծածկել ուրիշ բան չի նշանակեր եթէ ոչ ուրանալ Քրիստոսը աշխարհի եւ աշխարհասիրութեան պատճառով:

գ.- «Կրկին կը ծածկէ հողին մէջ»: Այս բառերը պէտք է մտածել տան մեզի, թէ արդեօք Քրիստոսը գտնելէ ետք՝ գայն դարձեալ չե՞նք ծածկած «հողին մէջ»: Բացայայտօրէն դաւանելէ ետք Քրիստոսը՝ գայն վերստին չե՞նք ուրացած մեր գործերով: Քրիստոս արտին, այլ խօսքով մեր սրտին ու հոգիին մէջ ծածկուած գա՞նձ է, թէ՛ նառագայթող արեւ: Զգոյշ ըլլանք մեր սիրտը գերեզմանի չվերածելու որուն մէջ Քրիստոսը թաղենք: Մեր ներսիդին գոյութիւն ունեցող Քրիստոսի լոյսը այնպէս պէտք է շողայ մարդոց առջեւ, որ անոնք մեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն մեր Հայրը որ երկինքի մէջ է (Մտ 5.16):

Առաջին երկու կէտերով ցոյց տուինք որ մեղաւոր մարդուն համար Քրիստոսի դառնալը կրնայ ժամանակաւոր հանգամանք մը ներկայացնել: Եւ սակայն, ինչպէս Քրիստոսի դառնալը կրնայ ժամանակաւոր հանգամանք մը ներկայացնել, այնպէս ալ՝ վերստին Քրիստոսէ հեռանալը: Մեղաւոր մարդը գտնելէ ետք Քրիստոսը եւ վերստին անկէ հեռանալէ եւ աշխարհին միանալէ ետք, անպայման վերստին կը դառնայ Քրիստոսի եթէ երբեք իր սրտին մէջ քիչ մը սէր եւ հաւատք կայ հանդէպ Քրիստոսի եւ եթէ մտաբերէ Քրիստոսի հետ իր անցուցած քաղցր եւ ջերմ պահերը: Յիշեցէք անառակ որդիին առակը: Ան հեռացաւ իր հայրէն եւ հորեանական տունէն, բայց դարձեալ վերադարձաւ, որովհետեւ մտաբերեց իր հորը տան մէջ ապրող գործաւորները «որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելի ունին» (Ղկ 15.17): Երբ մեղաւոր մարդը անդրադառնայ որ Աստուած «պէտք եղած կերակուրէն աւելի ունի», եւ հետեւաբար, միայն ի՛նք կրնայ կշտացնել մեզ եւ գոհացնել մեր էութեան մէջ գոյութիւն ունեցող անօթութիւնը, այն ատեն, ամէն ինչ կ'ընէ դառնալու համար Աստուծոյ: Պահուած գանձին օրինակը կը փաստէ մեր ըսածը: Տուեալ օրինակը կը սորվեցնէ մեզի, թէ մեղաւոր մարդը գտնելէ ետք նշմարիտ գանձը՝ Քրիստոսը, կրնայ վերստին հրաժարիլ անկէ ու յարիլ աշխարհին կողմը, բայց անգամ մը որ փորձառաբար տեսնէ թէ աշխարհ ունայն է եւ խաբուսիկ, «ուրախութենէն կ'երթայ, իր ամբողջ ունեցածը կը ծախէ ու կը գնէ այդ արտը», որպէսզի այդ արտին մէջ գոյութիւն ունեցող Քրիստոս-գանձը իր յաւիտեանական ժառանգութիւնը եւ բաժինը դառնայ:

Հոս յիշուած «ուրախութենէն» բառը ցոյց կու տայ երկու բան .-

ա.– Յոյց կու տայ այն ներքին հոգեկան վիճակը որ փրկութիւնը ընդունող մարդը կ'ապրի:

բ.– Յոյց կու տայ թէ երբ մեղաւոր մարդը ինքնագիտակցութեան գայ եւ յայտնաբերէ աշխարհի դատարկութիւնը՝ կ'ուրախանայ: Կ'ուրախանայ անոր համար որ «մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ» (Ղկ 15.24):

Եւ իր ուրախութիւնը կ'արտայայտէ «իր ամբողջ ունեցածը» ծախելով եւ գանձը կրող արտը գնելով: Եթէ «արտը կը ներկայացնէ աշխարհը», որուն մէջ պահուած է արքայութեան գանձը՝ Քրիստոս, ինչպէս վերեւ ըսինք, այդ պարագային, ի՞նչպէս պէտք է հասկնալ «իր ամբողջ ունեցածը կը ծախէ ու կը գնէ այդ արտը» խօսքը: Կարելի՞ քան է նորադարձ մարդուն համար (կամ ընդհանրապէս մարդ արարածին համար) իր ունեցածով ամբողջ աշխարհը գնել, կամ արքայութեան Գանձը «գնել»: Այս հարցումին պատասխանը թէ՛ դրական է եւ թէ՛ ժխտական:

Պատասխանը ժխտական է, եթէ երբեք «իր ամբողջ ունեցածը» ըսելով պիտի հասկնանք մարդուն ունեցած նիւթական կարողութիւնը՝ դրամը, ոսկին, գոհարը եւ այլազան գանձերը, կամ անոր ունեցած կարողութիւնը, գօրութիւնը, իմաստութիւնը, ֆարտարութիւնը, բարեգործութիւնները, եւ այլն: Մենք այս բոլորով չենք կրնար արքայութեան գանձը՝ Քրիստոսը ձեռք ձգել: Մարդ արարածը չի կրնար իր նիւթական հարստութեամբ տէրը դառնալ երկինքի արքայութեան: Արքայութեան ժառանգորդ դառնալու համար պէտք է ունենալ մեր սրտին մէջ հաւատք ու կամք, պատրաստակամութիւն եւ յօժարութիւն, եւ ո՛չ թէ մեր գրպաններուն մէջ՝ դրամ ու ոսկի, արծաթ ու գոհար: Ո՛չ ոք կրնայ իր անձին արժանիքներով կամ գործերով փրկութիւն ձեռք ձգել: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Աստուծոյ շնորհովը փրկուեցաք, քանի հաւատացիք: Փրկութիւնը ձեր արժանիքը չէ, այլ՝ Աստուծոյ պարգեւն է: Ձեր գործերով շահուած չէ անիկա, որպէսզի ոեւէ մէկը չպարծենայ» (Գղ 2.8-9):

Իսկ պատասխանը դրական կ'ըլլայ, եթէ երբեք «իր ամբողջ ունեցածը» ըսելով պիտի հասկնանք մարդուն կամքը, ժամանակը, պատրաստակամութիւնը, հարազատները, բարեկամները, եւ այլն: Բացատրեմ: Տուեալ օրինակով, Յիսուս կ'ուզէ սորվեցնել մեզի որ արքայութեան գանձը ձեռք ձգելու համար, մարդ պէտք է պատրաստ ըլլայ հրաժարելու «իր ամբողջ ունեցած»էն, կամ գոհելու իր «ամբողջ ունեցածը». գոհելու բարեկամներ ու ընկերներ եթէ անոնք մեզ կը հեռացնեն Աստուծոյ արքայութենէն. գոհելու ժամանակ եւ առողջու-

թիւն եթէ անոնք մեզ պիտի մտերմացնեն Յիսուսի. գոհելու հարագատներ եւ այլ մօտիկ պարագաներ եթէ անոնք արգելք կ'ըլլան մեր հաւատքի կեանքին. հրաժարելու նիւթէն ու նիւթականէն եթէ ատոնք խոչընդոտ մըն են դէպի երկինք մեր գնացքին:

Տակաւին, մեր «ամբողջ ունեցածը» ծախել, կը նշանակէ գոհել մեր սեփական կամքն ու կամեցողութիւնը, գոհել մեր փափաքածներն ու ցանկութիւնները, մեր նախասիրութիւններն ու նախընտրութիւնները, մեր փառքն ու փառասիրութիւնը, մեր երագներն ու իղձերը, մեր անձնական տեսիլքները: Եւ այս բոլորը, բնականօրէն ի խնդիր Աստուծոյ արքայութեան եւ Յիսուսի սիրոյն համար է որ տեղի պիտի ունենան:

2.- ԵՐԿՐՈՐԴ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: Այս երկրորդ մեկնութիւնն ալ նոյնքան տրամաբանական եւ միաժամանակ հետաքրքրական է: Կարգ մը մեկնիչներ կը հաստատեն որ արտը աշխարհն է, արտին մէջ պահուած գանձը՝ մեղքի եւ աշխարհի ստրկութեան մէջ պահուած մարդն է, գանձը գտնող մարդը՝ Քրիստոս ինքն է, իսկ գանձը գտնելը՝ մեղաւորը գտնելն է:

Եթէ երբեք ընդունինք որ գանձը գտնել կը նշանակէ մեղաւոր մարդկութիւնը գտնել, այդ պարագային, ի՞նչպէս պէտք է բացատրել գանձը ժամանակաւորապէս վերստին հողին մէջ ծածկելու եւ ապա ամբողջ ունեցածը ծախելու եւ դարձեալ այդ գանձը գնելու երեւոյթը: Բացատրութիւնը պարզ կը դառնայ, եթէ մեր միտքին մէջ ունենանք այն, թէ Քրիստոս իր կենսատու խօսքով կենդանացնել է գտնելէ ետք մարդ արարածը, վերստին ծածկեց գայն, այլ խօսքով մը, պահեց գայն առանց սակայն փրկելու. փրկութիւնը պիտի իրագործուէր միայն ա՛յն ատեն երբ Քրիստոս «իր ամբողջ ունեցածը ծախէր», այսինքն՝ երբ իր կեանքը, իր անձը տար ի խնդիր մարդկային ցեղի փրկութեան: Այս իմաստով, Քրիստոս «կը գնէ այդ արտը» խօսքը, կը նշանակէ որ ան իր արիւնով գնեց ու փրկեց ամբողջ աշխարհը: Բայց ամբողջ արտը (աշխարհը) չէ որ ընդունեց Քրիստոսով իրագործուած փրկութիւնը: Աշխարհի արտին մէջ որոշ մարդիկ միայն ընդունեցին փրկութիւնը: Մարդիկ որոնց կը տրուի «գանձ» անունը եւ որոնք կը կազմեն երկինքի արքայութիւնը երկրի վրայ: Արքայութիւն մը որ Յիսուս իր արիւնով գնեց: Այդ արքայութեան մենք ուրիշ անուն մը եւս կու տանք՝ եկեղեցի: Եկեղեցին Աստուծոյ արքայութեան նախադուռն է աշխարհի արտին մէջ:

3.- ԵՐՐՈՐԴ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: Ըստ այլ մեկնութեան մը, գանձը երկինքի արքայութիւնն է, որուն թագաւորը՝ Քրիստոս, կու գայ զայն հռչակելու եւ մարդիկը հրաւիրելու որ յայտնաբերեն եւ իրենց մէջ ընդունին զայն: Արտը՝ ուր այդ գանձը պահուած է՝ Քրիստոս է, որ մարդացաւ, հողեղէն մարմին եղաւ՝ մարդոց հետ ու մարդոց մէջ ապրելու եւ շրջելու համար, իբրեւ երկնից արքայութեան հոգեղէն անպարունակելի գանձին մարմնաւոր պարունակը:

Արտին մէջ գանձ գտնող մարդը՝ նոյնինքն մարդ արարածն է, եւ ըստ երեւոյթին աղֆատ մարդն է անիկա: Իր աղֆատ ըլլալը կը հետեւցնենք անկէ, որ հողակտոր մը գնելու համար ստիպուած կ'ըլլայ իր ամբողջ ունեցուածքը ծախելու:

Գիտենք որ Քրիստոս առ հասարակ երանի կու տայ աղֆատներուն, որովհետեւ անոնք երկրաւոր ինչքեր չունենալով՝ աւելի դիւրութեամբ ու պատրաստակամութեամբ իրենց սիրտերը կրնան կապել երկինքի արքայութեան, քան անոնք՝ որոնք հոգիով ու սրտով իրենց դիզած հարստութեան կապուած են, անոր մէջ տեսնելով իրենց ապահովութիւնը, իրենց գանձը (Մր 10.17-25: Հմմտ Ղկ 12.16-21): Բայց Քրիստոս մասնաւորաբար երանի կու տայ հոգիով աղֆատներուն (Մտ 5.3), որովհետեւ հոգիով աղֆատները անոնք են՝ որոնք այս աշխարհը եւ անոր հարստութիւնները չունին իրենց սիրտերուն մէջ. հետեւաբար ծանրաբեռնուած չեն աշխարհիկ հոգեբով, թեթեւ են իրենց սիրտով եւ պատրաստ են արքայութեան աւետիսը ընդունելու:

Գանձը գտնելէն ետք, մարդը առժամաբար զայն կը ծածկէ: Ծածկելը նախ կը նշանակէ ամէն ապահովութիւն ձեռք առնել եւ ամէն միջոց ի գործ դնել՝ զայն ձեռքէ չփախցնելու համար, իսկ երկրորդ՝ ծածկելու գործողութիւնը ցոյց կու տայ նաեւ որ արքայութիւնը առայժմ տակաւին ծածկուած կը մնայ իբրեւ ներքին՝ հոգեկան իրականութիւն:

Այն սիրտը ուր Քրիստոս կը թագաւորէ՝ իր մէջ արքայութիւնը ունի, որովհետեւ Արքա՛ն է որ իր մէջ ունի: Բայց ասիկա արքայութեան վերջնական գալուստը չէ, որուն կը սպասենք դեռ՝ միշտ տիրականօրէն խնդրելով. «Եկեցէ արքայութիւն քո»: Եւ սակայն, արքայութիւնը սկսած է արդէն, եւ կը տիրէ հաւատացողներուն հոգիներուն մէջ, Աստուծոյ կամքին հնազանդողներուն սրտին մէջ. ասոր է որ ակնարկեց Յիսուս երբ ըսաւ. «Աստուծոյ արքայութիւնը ձեր ներսիդին է» (Ղկ 17.21):

Երթալ ինչքերը ծախել՝ կը նշանակէ՝ հետեւիլ Քրիստոսի ամէն ինչ ձգելով, ամէն բանէ հրաժարելով: Անհրաժեշտ է դիտել, որ մարդը ուրախութենէն է որ կ'երթայ եւ ամէն ինչ կը ծախէ: Ամէն բան թողուլը,

ամեն բանէ հրաժարիլը ուրախութեամբ յանձն առնուած գոհողութիւններ են՝ մեծագոյն գանձը ձեռք բերելու համար:

Ի վերջոյ, մարդը կը գնէ արտը. եթէ արտը Քրիստոս էր, ինչպէս ըսինք, գայն գնել՝ կը նշանակէ իր վրայ առնել Քրիստոսի օրինակը, անոր նմանիլ, հետգիտել աւելի իր վրայ հագնիլ գայն (Հո 13.14), մինչեւ կատարելապէս իր սեփականը դարձնէ գայն (Զարեհ Ա.րբ. Ազնաւորեան):

4.- ԶՈՐՐՈՐԴ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ: Գանձը՝ Քրիստոս է, «Քրիստոսի փառքին աւետարանին լոյսը», եւ Քրիստոսով յայտնուած «Աստուծոյ փառքին գիտութեան լոյսը» (հմմտ Բ.Կր 4.4, 6):

Արտը այս պարագային Քրիստոսի հաւատացող մարդն է, որ ինքզինքը պահարան դարձուցած է երկնաւոր գանձերուն: «Այս գանձը մենք ունինք կաւէ ամաններու մէջ» կ'ըսէ Պօղոս առաքեալ (Բ.Կր 4.7), ակնարկելով մեր մարմիններուն, որոնք աստուածային գանձը իրենց մէջ կրող կաւեղէն անօթներ են:

Գանձը գտնող մարդը՝ դարձեալ մարդը ինքն է, որ իր անձին մէջ որպէս երկնաւոր գանձը ներպարունակող արտ՝ պիտի յայտնաբերէ գանձը: Հաւատքի ցամաքով այդ անօթներուն մէջ յայտնուած գանձը պէտք է ծածկուած մնայ, այսինքն՝ մարդ գոյշ պէտք է ըլլայ՝ գայն աշխարհին չբանալու եւ չկորսնցնելու: Այնուհետեւ ուրախութենէն պէտք է երթայ իր բոլոր ունեցածը ծախելու, այսինքն՝ «ուրանայ իր անձը եւ խաչը առնէ ու հետեւի» Քրիստոսի (Մտ 16.24): Այս ամբողջական ինքնամոռացումին վրայ կատարեալ նուիրումն է այն գինը՝ որ ենթական պէտք է վնարէ գնելու համար արտը, այսինքն՝ իր անձը: Ատոր համար էր որ Քրիստոս կ'ըսէր. «Ով որ ինձի համար իր անձը կորսնցնէ՝ պիտի գտնէ գայն» (Մտ 16.25) (Զարեհ Ա.րբ. Ազնաւորեան):

5.- ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԵԿՆՈՒԹԻԻՆ: Համաձայն այս վերջին մեկնութեան, գանձը դարձեալ Քրիստոսով երկրի վրայ սկսած երկինքի արքայութիւնն է: Արտը այս պարագային, եկեղեցին է որ իբրեւ մարմին իր մէջ ունի զՔրիստոս եւ Քրիստոսով՝ արքայութեան անկորուստ գանձը:

Այդ գանձը գտնողները եկեղեցւոյ հաւատքի որդիներն են, որոնք արքայութեան աշակերտած դպիրներ իբրեւ՝ կը փութան գայն իրենց սեփականը դարձնել, բայց առաջին հերթին գայն եկեղեցւոյ կեանքին մէջ ծածկուած կը պահեն առժամաբար, այսինքն այս աշխարհի մէջ եւ

ներկայ ժամանակին համար, մինչև Գրիստոսի գալուստը: Մինչայդ կ'ուրախանան այդ գանձին տերը ըլլալու հեռանկարով, մինչև երթան իրենց բոլոր ունեցածը ծախեն, այսինքն՝ այս կեանքի օրերը Աստուծոյ ընծայելէ ետք մահուամբ ելլեն այս աշխարհէն, երթալ գնելու համար արտը, այսինքն՝ ժառանգելու համար երկնաւոր եկեղեցին, վերին Երուսաղէմը, եւ վերջնականապէս տիրանալու գանձին՝ Գրիստոսի յաղթական ու փառաւոր արքայութեան (Զարեհ Արք. Ազնաւորեան):

Յաւելեալ կարեւոր 11 մատնանշումներ. –

1.– Առաջին մեկնութեան մէջ, գանձը՝ Գրիստոս է, իսկ երկրորդ մեկնութեան մէջ, գանձը՝ մարդն է: Գրիստոսի համար կը գործածուի «գանձ» բացատրութիւնը ցոյց տալու համար որ ան իսկական այն գանձն է, որ բնաւ չի մաշիր, չի ժանգոտիր, եւ որուն գողերը բնաւ չեն կրնար մերձենալ: Իսկ մարդուն համար կը գործածուի «գանձ» բացատրութիւնը ցոյց տալու համար որ ան թանկագին արժէք է Աստուծոյ համար: Թանկագին արժէք է՝ ոչ միայն որովհետեւ Աստուծոյ Որդիին արեան գինն է, այլեւ, որովհետեւ Աստուծոյ պատկերն է, նմանութիւնն է:

Տրուած երկու մեկնութեանց մէջ, Արարիչ ու արարած կը ներկայանան գանձ իբրեւ: Ինչպէս Աստուծոյ համար «գանձ» է մարդը, այնպէս ալ մարդուն համար «գանձ» պէտք է ըլլայ Աստուած: Եթէ Աստուած «գանձ» կը կոչէ եւ «գանձ» կը նկատէ մարդը, մարդիկ իրաւունք չունին իրենց նմանները «անպէտք» բռնով կամ այլ ստորացուցիչ բռնով մը բնութագրելու:

2.– Առաջին մեկնութեան մէջ, գանձը գտնողը՝ մարդ արարածն է, իսկ երկրորդ մեկնութեան մէջ, գանձը գտնողը՝ Գրիստոս է: Այլ խօսքով, առաջին մեկնութեան մէջ գտնուողը՝ Գրիստոս ինքն է, իսկ երկրորդ մեկնութեան մէջ գտնուողը՝ մարդը ինքն է: Այս իմաստով, Գրիստոս եւ մարդ, իրար է որ կը փնտռեն. սա իրողութիւնը կը պարզէ որ Աստուած եւ մարդ իրարու կարօտով ու սիրով կը տոչորին. սա նշմարտութիւնը կը բացայայտէ որ Աստուծոյ սրտին մէջ սէր կայ հանդէպ մարդուն եւ մարդուն սրտին մէջ սէր կայ հանդէպ Աստուծոյ. ի վերջոյ, սա կը պարզէ որ Աստուած եւ մարդ կոչուած են մէկ ամբողջութիւն դառնալու, կոչուած են օր մը մէկ ընտանիք կազմելու. եւ այդ «մէկ ընտանիք»ին հիմը դրուեցաւ Գրիստոսի առաջին գալուստով, իր կատարելութեան հասնելու համար անոր երկրորդ գալուստով:

3.- Առաջարկուած երկու մեկնութեանց մէջ ալ «արտ»ը կը ներկայանայ աշխարհը իբրեւ: Ինչո՞ւ Քրիստոս աշխարհ կը նմանցնէ արտի: Արտը այն հողատարածքն է ուր ընդհանրապէս ցորենն ու արմտիք կը ցանուի, եւ կամ այլ սերմնահատիկներ: Այլ խօսքով, արտը անպտուղ եւ անարդիւն տեղ մը չէ, այլ արդիւնք բերելու եւ պտղատու դառնալու կոչուած վայր մըն է: Եթէ այս նշմարտութիւնը նկատի ունենանք, պարզ կը դառնայ թէ ինչու Յիսուս աշխարհը «արտ» կը կոչէ: Այդպէս կը կոչէ՝ նախ ցոյց տալու համար որ Աստուած աշխարհը, այլ խօսքով՝ մարդկութիւնը ստեղծած է պտղաբերելու կարողութեամբ, եւ երկրորդ, ցոյց տալու համար որ ան կ'ակնկալէ, կը սպասէ ու կը պահանջէ մարդոցմէ որ արդիւնաւոր կեանք ապրին եւ անպտուղ ծառի չնմանին:

4.- «Երկինքի արքայութիւնը կը նմանի արտի մը մէջ պահուած գանձի»: Եթէ արտը աշխարհն է, եւ արտին մէջ պահուած գանձը Աստուծոյ արքայութիւնն է, որուն մարմնաւորումը Քրիստոս ինքն է, սա ինքնին ցոյց կու տայ որ Աստուծոյ արքայութիւնը ձեռք կը ձգուի այս աշխարհին մէջ: Մահէն անդին չենք կրնար աշխատիլ Աստուծոյ արքայութեան համար: Ինչ որ պիտի ընենք Աստուծոյ արքայութեան համար՝ մեր երկրաւոր կեանքի ընթացքին է որ պիտի ընենք: Իր երկրաւոր կեանքի միջոցին Քրիստոսը չգտած մարդը՝ գերեզմանէն անդին գայն երբեք ալ պիտի չգտնէ:

5.- «Պահուած գանձ» բացատրութեամբ, Յիսուս ըսել չ'ուզեր որ Աստուծոյ արքայութիւնը պահուած կամ ծածկուած է մարդոցմէ կամ մարդոց որոշ մէկ դասակարգէն: Ըսել ուզուածը այն է, որ մարդիկ պէտք է փնտոեն գանիկա, գայն գտնելու աշխատանք պէտք է տանին, այլապէս ան ծածկուած կը մնայ անոցնմէ: Եւ արդէն բնագիրին մէջ եղող «գտնել» բառը աշխատանք կ'ենթադրէ, որովհետեւ չփնտոողը՝ չի գտներ: «Գտնել» բառը կը պարզէ որ կեանքը փնտոտուի է, բացարձակ ձգմարտութեան փնտոտուի մը:

6.- «Արտի մը մէջ պահուած գանձ»: Եթէ արտը աշխարհն է եւ արտին մէջ պահուած գանձը Քրիստոս, սա կը նշանակէ որ Քրիստոս ինք գա՛նձն է աշխարհին: Ինչպէս ամէն գանձատուն կ'ունենայ իր գանձը, այնպէս ալ այս աշխարհը ունի իր գանձը՝ Քրիստոս: Եւ ինչպէս գանձատունը առանց գանձի իր արժէքը կը կորսնցնէ, այնպէս նաեւ այս աշխարհը առանց Քրիստոսի՝ չունի՛ արժէք, չունի՛ իմաստ:

7.- Բնագիրին մէջ երկու բառեր կան որոնց ետին մենք կը գտնենք հետաքրքրական իմաստ մը. «կը ծախէ» եւ «կը գնէ»: Այստեղ «ծախելը» կը պատկերացնէ այն բոլոր գոհողութիւնները որ մարդ անհատը պէտք է

յանձն առնէ դառնալու համար ժառանգորդը երկինքի արքայութեան: «Ծախել» ապա «գնել». սա բառերը ցոյց կու տան, որ մարդ անհատը պատրաստ պէտք է ըլլայ բան մը գոհելու կամ գոհողութեան կեանք ապրելու որպէսզի կարենայ ուրիշ բանի մը տէրը դառնալ: Ծախելու վախճող մարդը՝ չի կրնար գնել: Այլ բացատրութեամբ մը, ան որ կը վախնայ ներկայ կեանքի փուշերէն՝ չի՛ կրնար հասնիլ գալիք կեանքի վարդերուն: Ան որ կը վախնայ իր ժամանակը «ծախելու»՝ չի կրնար տիրանալ անժամանակ՝ յաւիտենական կեանքին:

Բնագիրը միայն մէկ բան գոհելու մասին չի խօսիր, այլ ամբողջ ունեցածը գոհելու մասին. «Իր ամբողջ ունեցածը կը ծախէ...»: Եթէ արքայութեան զաւակ դառնալու համար կարիքը ունենանք գոհելու համայն աշխարհն ու նոյնիսկ մեր անձերը՝ չվախնանք գոհելու գանձով:

8.– «Կը գնէ այդ արտը»: Ինչո՞ւ համար բնագիրը փոխանակ ըսելու «Կը գնէ այդ գանձը», կ'ըսէ՝ «կը գնէ այդ արտը»: Ըսինք որ գանձը Քրիստոս է, իսկ արտը աշխարհն է. այս իմաստով, արտը կամ արտաշխարհը ունենալ, կը նշանակէ նաեւ Քրիստոսը ունենալ: Կարծէք բնագիրը անուղղակիօրէն մեզի ըսել կ'ուզէ որ Քրիստոս ինքնին աշխարհ մըն է, կամ աշխարհը կ'արժէ, կամ աշխարհէն աւելի կ'արժէ, եւ Քրիստոսը ունեցող մարդը՝ ամբողջ աշխարհը ունեցած կ'ըլլայ: Այո՛, Քրիստոսը շահողը՝ ամբողջ աշխարհը շահած կ'ըլլայ:

Հետեւաբար, արտը (աշխարհը) գնել, կը նշանակէ ունենալ բան մը (Անձ մը) որ աւելի՛ թանկագին է եւ աւելի՛ կ'արժէ քան աշխարհը: Մօր մը համար իր զաւակը աւելի չ'արժէր քան ամբողջ աշխարհը: Զեր մէջ կա՞յ մայր մը կամ հայր մը որ եթէ իրեն տամ ամբողջ աշխարհը, ինծի իր զաւակը տայ: Եթէ երբեք զաւակ մը իր մօրը համար աւելի կ'արժէ քան ամբողջ աշխարհը, որքա՞ն աւելի Քրիստոս ինք պէտք է արժէ իր հաւատացեալներուն համար: Ուստի, ըսել ուզուածը այն է, որ զՔրիստոս իր սրտին մէջ ընդունող մարդը՝ ամբողջ աշխարհը շահած կ'ըլլայ, նախ անոր համար որ աշխարհի արարիչը՝ Քրիստոսը շահեցաւ, եւ երկրորդ, անոր համար որ ինքնիր անձը շահեցաւ: Ոչինչով կ'օգտուինք եթէ ամբողջ աշխարհը շահինք բայց կորսնցնենք մեր անձերը: Մտաբերեցէ՛ք Քրիստոսի խօսքը. «Ի՞նչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ» (Մտ 16.26):

9.– «Կը գնէ այդ արտը»: Ուրիշ կարեւոր գնումարտութիւն մը կայ այստեղ որ մեր ուշադրութենէն պէտք է չէ վրիպի: Եթէ արտը աշխարհն է, ուրեմն «արտը գնել» կը նշանակէ աշխարհը գնել: Ինչո՞ւ Յիսուս աշխարհը գնելու մասին կը խօսի: Աշխարհը գնելու մասին կը խօսի, որովհետեւ ան աշխարհը արժէք կը նկատէ, անպէտք բան չի սեպեր

գայն: Յիշեցէ՛ք որ Յիսուս մեզ գնեց իր արիւնով, եւ ինչո՞ւ, որովհետեւ մեզ արժէ՛ք նկատեց, եւ որովհետեւ ան անտարբեր չէ մեզի հանդէպ: Ինչպէս Յիսուս իր արիւնով մեզ գնեց, այնպէս ալ, ան կ'ուզէ որ մենք եւս մեր կարգին մեր արիւնով ու արցունքով, մեր քրտինքով ու աշխատանքով գնենք այս աշխարհը եւ աշխարհի մարդկութիւնը փրկութեան համար, Աստուծոյ արքայութեան համար: Այլ խօսքով, չենք կրնար գանձը՝ Քրիստոսը «գնել», բայց անտարբեր ըլլալ աշխարհի հանդէպ: Քրիստոսի փրկութիւնը ընդգրկող մարդը եւ այդ փրկութեան համը առնող մարդը՝ անպայման պիտի ուզէ ու պիտի աշխատի որ աշխարհ եւս, այլ խօսքով՝ մարդիկ եւս ճաշակողը ըլլան այդ փրկութեան:

10.- «Կը գնէ այդ արտը»: Այս բառերը մեզի կը յուշեն նաեւ որ մարդ արարածը կարողութիւնը ունի գնելու արտաշխարհը եւ այդ արտաշխարհին մէջ եղող գանձը՝ Քրիստոսը: Ի՞նչ կը հասկնանք «կը գնէ» ըսելով: «Գնել» կը նշանակէ գին վճարել: Հետեւաբար, «գնել» բառը որոշապէս ցոյց կու տայ, որ մարդիկ երբ ուզեն Քրիստոսը ունենալ, Քրիստոսի հետեւիլ, գի՛ն պիտի վճարեն, գոհողութիւններ յանձն պիտի առնեն:

11.- Ի վերջոյ, եթէ արքայութեան գանձը արտին մէջ է եւ եթէ արտը աշխարհն է, ուրեմն «արտը գնել», բացատրութիւնը կը պարզէ որ ամբողջ աշխարհը կոչուած է Աստուծոյ արքայութիւնը ըլլալու, համայն մարդկութիւնը կոչուած է Աստուծոյ արքայութեան ժառանգորդը դառնալու:

ՄԱՐԳԱՐԻՏԻՆ ՕՐԻՆԱԿԸ

«Նմանապես, երկինքի արքայութիւնը կը նմանի այն վաճառականին, որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ: Երբ շատ թանկագին մարգարիտ մը գտնէ՝ կ'երթայ, իր ամբողջ ունեցածը կը ծախէ եւ կը գնէ այդ մարգարիտը» (Մտ 13.45-46):

Մարգարիտին օրինակին վերաբերեալ երեք մեկնութիւններ կան.–

1.– Ըստ առաջին մեկնութեան, հոս յիշուած «վաճառական»ը Քրիստոս ի՛նքն է, «գեղեցիկ մարգարիտներ»ը՝ մեղաւոր մարդիկն են, իսկ «թանկագին մարգարիտ»ը՝ եկեղեցին է: Այս իմաստով, Քրիստոս ի՛նք կը հանդիսանայ այն վաճառականը, «որ գեղեցիկ մարգարիտներ կը փնտռէ»: Ի՞նչ կը հասկնանք «կը փնտռէ» ըսելով: Այստեղ «կը փնտռէ» բառը յատուկ նիւթ մը կ'ենթադրէ. նիւթ մը՝ մարգարիտներէն, այսինքն՝ մեղաւորներէն կազմելու «թանկագին մարգարիտ մը» որ նոյնինքն եկեղեցին է, հաւատացեալներուն ամբողջութիւնն է: Եւ եկեղեցին գնելու կամ շահելու համար, Քրիստոս «իր ամբողջ ունեցածը կը ծախէ», այսինքն՝ իր կեանքը կու տայ, իր արիւնը կը թափէ (Զարեհ Ա.րբ. Ա.գնաւորեան):

Յաւելեալ քանի մը մատնանշումներ.–

ա.– Ինչո՞ւ Քրիստոս կը կոչուի «վաճառական»: Մենք գիտենք որ վաճառականը այն մարդն է որ ապրանք մը առնելու համար, անոր փոխարէն ուրիշ ապրանք մը կու տայ: Ճիշդ նոյն ձեւով, Քրիստոս ինքն է, մեզ գնելու կամ մեր կեանքերը գնելու համար, պէտք էր բան մը տար, եւ այդ «բանը» եղաւ իր սեփական կեանքը:

բ.– «Կը փնտռէ»: Վերեւ տրուած բացատրութեան կողմէն, այս բառը կը պարզէ նաեւ որ եթէ Քրիստոս ինքն անձնապէս չփնտռէ մեղաւոր մարդիկը եւ զանոնք գտնելով դարձի չբերէ՝ անոնք երբեք ալ դարձի չեն գար եւ չեն կրնար գալ: Ինքն իսկ հաստատեց թէ աշխարհ եկաւ մեղաւոր մարդիկը փնտռելու, գտնելու եւ փրկելու (Ղկ 19.10):

գ.– «Կը փնտռէ»: Այս բառը միաժամանակ կը պարզէ որ մեղաւոր մարդիկ, այլ խօսքով՝ մեղքի մէջ ապրող մարդիկ, կորսուած կը սեպուին: Յիշենք որ երբ անառակ որդին իր հօրը տունը դարձաւ՝ հայրը անոր համար վկայեց թէ կորսուած էր (Ղկ 15.24):

դ.– Մեղաւոր մարդոց համար գործածուած «գեղեցիկ մարգարիտներ» կոչումը կը պարզէ որ մարդիկ որքան ալ մեղաւոր ու մեղքի մէջ

կորսուած ըլլան՝ անոնք չեն դադրիր Աստուծոյ համար արժէք ըլլալէ. արժէք մը՝ որուն հանդէպ անտարբեր պէտք չէ ըլլալ, այլ պէտք է փնտոնել գայն, հիշող այնպէս ինչպէս պիտի փնտոնէինք մեր կորսնցուցած ոսկիի մէկ կտորը: Երբեմն կը հանդիպինք մարդոց որոնք ուրիշներուն հանդէպ անարգանքով կը վերաբերին եւ անոնց համար անարգալից խօսքեր կը գործածեն, եւ նոյնիսկ զանոնք փրկութեան կամ ապրելու իսկ արժանի չեն սեպեր: Քրիստոս սակայն մեղաւորները «գեղեցիկ մարգարիտներ» կոչելով՝ սորվեցուցած կ'ըլլայ մեզի որ անպէտք բան չնկատենք մեր նմանը, որքա՛ն ալ անիկա մեղաւոր ըլլայ, որքա՛ն ալ տարբեր ըլլայ մեր անձերէն, կամ հակառակ մեր անձերուն:

Ե.– Մարգարիտներուն համար Յիսուսի գործածած «գեղեցիկ» բնորոշումը կը յիշեցնէ մեզի թէ մեղաւոր մարդիկ իրենց սկզբնաւորութեան մէջ ունեցած են գեղեցիկ հոգիներ, որոնք սակայն մեղքի պատճառով կորսնցուցած են իրենց հոգիի գեղեցկութիւնը:

Գ.– «Գեղեցիկ» բնորոշումը միաժամանակ կը պարզէ որ Յիսուս մեղաւոր մարդոց նախնական գեղեցկութիւնը վերականգնելու եկաւ:

Է.– Ըսինք որ «թանկագին մարգարիտ»ը՝ Քրիստոսի եկեղեցին է: «Մարգարիտ»ը եզակի է, եւ կը պարզէ որ Քրիստոսի կամքն է որ իր եկեղեցին մէկ ըլլայ, մէկ ամբողջութիւն ըլլայ: Երբ կ'ըսեմ թէ Քրիստոսի կամքն է որ իր եկեղեցին մէկ ըլլայ, այս չի նշանակեր որ Տէրը կը կամենայ որ բոլոր ազգերը մէկ լեզու ունենան, մէկ յարկի տակ հաւաքուին: Այս չէ՛ մէկութիւնը: Այս չէ՛ միութիւնը: Հապա ի՞նչ է: Նախ ըսեմ որ մէկութիւն եւ միութիւն նոյն բաները չեն: Ամէն մէկ ազգ կամ ժողովուրդ ունի իր եկեղեցին եւ մենք այդ եկեղեցիին համար «մէկ» կամ «մէկութիւն» բառը կը գործածենք, այն իմաստով որ անիկա մէկ է, այսինքն՝ տուեալ ազգը կամ ժողովուրդը ունի մէկ եկեղեցի: Իսկ «միութիւն»ը, տարբեր-տարբեր ազգերու եւ ժողովուրդներու եկեղեցիներուն միջեւ գոյութիւն ունեցող հաղորդակցութիւնն է, համաձայնութիւնն է, բայց մանաւանդ՝ հաւատքի միութիւնն է:

Հետեւաբար, երբ կ'ըսենք թէ Քրիստոսի կամքն այն է որ եկեղեցիներուն միջեւ միութիւն ըլլայ եւ ո՛չ թէ մէկութիւն, կը հասկնանք որ եկեղեցիներ ո՛չ թէ պէտք է միանան, այլ պէտք է հաղորդակցին, իրարու հետ հաւատքի ու սիրոյ հաղորդակցութեան մէջ ըլլան:

Այլապէս, պէտք չէ մոռնալ որ բոլոր եկեղեցիները կրնան մէկ ըլլալ, առանց սակայն անոր անդամները իրարու հետ սիրոյ կապի մէջ ըլլալու:

Ը.– Եթէ երբեք մարդիկ կը կոչուին «գեղեցիկ մարգարիտներ» եւ եկեղեցին՝ «թանկագին մարգարիտ», այս իրողութիւնը պէտք է մտածել տայ մեզի որ «գեղեցիկ մարգարիտներ»էն իւրաքանչիւրը կոչուած է իր

յատուկ տեղը ունենալու «թանկագին մարգարիտ»ին՝ Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիին մէջ:

2.- Ըստ երկրորդ մեկնութեան, վաճառականը մարդ արարածը ի՛նքն է: Եթէ ընդունինք որ մարդը ի՛նքն է վաճառականը, այդ պարագային հարց կու տանք թէ ի՞նչ բանի ակնարկութիւն է «գեղեցիկ մարգարիտներ կը փնտոէ» խօսքը: Հոս «մարգարիտները» այն պատեհութիւններն ու առիթներն են որ մարդը կը փնտոէ, կը գտնէ եւ կ'օգտագործէ ձեռք բերելու համար ամենէն «թանկագին մարգարիտը», այսինքն՝ իր փրկութիւնը: Փրկութիւնը ձեռք բերելու համար ամէն առիթ կը փնտոէ, ի հարկին «իր ամբողջ ունեցածը կը ծախէ», որ կը նշանակէ իր կեանքը կու տայ այդ փրկութեան տէրը դառնալու համար (Զարեհ Ա.բ. Ազնաւորեան):

Յաւելեալ քանի մը մատնանշումներ.–

ա.– Բնագիրը մեզի կը խօսի «գեղեցիկ մարգարիտներ»ու մասին, ինչպէս նաեւ «թանկագին մարգարիտ»ի մը մասին: Զանազանութիւնը այս երկուքին միջեւ մեզի համար յստակ պէտք է ըլլայ: Զարեհ Արքազանը կը բացատրէ որ «գեղեցիկ» բառը կը գործածուի երբ խօսքը «մարգարիտներ»ու մասին է, իսկ «թանկագին» բառը կը գործածուի երբ խօսքը միակ «մարգարիտ»ի մասին է, եւ այդպէս ալ պէտք է ըլլայ, որովհետեւ միակ ու «թանկագին մարգարիտ»ը կը նոյնանայ փրկութեան հետ, Փրկիչին հետ, իսկ «գեղեցիկ մարգարիտներ»ը Աստուծոյ կողմէ մարդուն ընծայուած գեղեցիկ առիթներն ու պատեհութիւններն են՝ այդ «թանկագին մարգարիտ»ին հասնելու համար: «Թանկագին»ը Փրկիչին տուած առիթները չեն, այլ Փրկիչը ի՛նքն է: Վա՛յ մեզի եթէ երբեք «առիթը» առիթ Տուողէն աւելի փնտոենք, սիրենք կամ պատուենք: Աստուած կ'ուզէ որ մեր ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացնենք եւ ո՛չ թէ իր տուածին վրայ:

Այն մարդը որ չ'օգտագործեր Աստուծոյ կողմէ իրեն ընծայուած «գեղեցիկ մարգարիտներ»ը, այսինքն՝ առիթներն ու պատեհութիւնները, չի կրնար հասնիլ «թանկագին մարգարիտ»ին, այսինքն՝ փրկութեան ու այդ փրկութիւնը պարգեւող Փրկիչին: «Գեղեցիկ մարգարիտներ»ը իրենք է որ կը հարթեն նամբան «թանկագին մարգարիտ»ին:

Ուստի, տարբերութիւնը եւ զանազանութիւնը «գեղեցիկ մարգարիտներ»ուն եւ «թանկագին մարգարիտ»ին միջեւ ակնբախ է: «Գեղեցիկ մարգարիտներ»ը միջոցներ են, իսկ «թանկագին մարգարիտ»ը նպատակն է: Որքան տարբերութիւն կայ միջոցին եւ նպատակին միջեւ, նոյնքան եւ աւելի տարբերութիւն կայ տրուած առիթներուն եւ փրկու-

թեան միջեւ: Փրկութիւնը կամ Փրկիչը մարդուն համար պէտք է նպատակ ըլլայ եւ ո՛չ թէ միջոց կամ առիթ:

բ.– Վերեւ ըսինք որ վաճառականը այն մարդն է որ եթէ ուզէ որոշ ապրանք մը ձեռք ձգել, պէտք է անոր փոխարէն ուրիշ ապրանք մը յանձնէ կամ գումար մը վճարէ: Երկրորդ այս մեկնութեան մէջ տեսանք որ վաճառականը մարդն է: Արդ, այստեղ մարդ արարածը կը կոչուի «վաճառական», ցոյց տալու համար որ Աստուծոյ արքայութիւնը ձեռք ձգելու համար, ան պէտք է գին վճարէ, եւ ա՛յս է որ կը պարզէ՝ «կը գնէ այդ մարգարիտը» բառերը: Պահուած գանձին օրինակին մասին խօսած ատեն, ըսինք, որ «կը գնէ» բացատրութիւնը կը նշանակէ՝ գին կը վճարէ: Առանց գին վճարելու մարդը չի կրնար արքայութիւնը ձեռք ձգել: Երբ հալածանք ու նեղութիւն կը կրենք ու կը համբերենք՝ աստիկա գին վճարել է: Երբ անիրաւութեան կը հանդիպինք եւ դրական դիրք կը բռնենք՝ աստիկա գին վճարել է: Երբ Աստուծոյ արքայութեան ձեռք բերումը կը պահանջէ զոհել ժամանակ, զոհել առողջութիւն ու հանգիստ, զոհել մեր կողմէ նախասիրուած ու նախընտրուած բաներ, զոհել գործեր կամ գործընկերներ, զոհել մօտիկ պարագաներ կամ բարեկամներ՝ աստիկա գին վճարել է:

գ.– «Կը փնտռէ»: Այս բառը մարդուն կողմէ ազատ կամփի գործադրումը կ'ենթադրէ: Այլ խօսքով, մարդը իր ազատ կամքով է որ պէտք է փնտռէ այն գեղեցիկ մարգարիտները, այսինքն՝ առիթներն ու միջոցները, զորս կը հասցնեն Աստուծոյ արքայութիւն: «Կը փնտռէ» խօսքով, Քրիստոս իր արքայութիւնը փնտռելու կոչ մըն է որ կ'ուղղէ մեզի: Արքայութիւնը փնտռուելիք իրականութիւն մըն է: Ան որ չի փնտռեր՝ չի գտներ: Ճիշդ է որ Աստուծոյ արքայութիւնը «աշխարհի սկիզբէն պատրաստուած է», բայց ան որ զանիկա փնտռող, զանիկա փափաքող ու ցանկացող հոգի ու սիրտ չունի՝ չի կրնար հասնիլ անոր: Հետեւաբար, «կը փնտռէ» ըսելով, նաեւ պէտք է հասկնալ՝ կը փափաքի, կը ցանկայ, կ'աշխատի, կը տփնի, կը յոգնի, կը քրտնի: Արքայութեան համար չաշխատող, չյոգնող ու չտփնող մարդը՝ չի կրնար տեղ ունենալ այդ արքայութեան մէջ:

դ.– «Երբ շատ թանկագին մարգարիտ մը գտնէ՝ կ'երթայ, իր ամբողջ ունեցածը կը ծախէ եւ կը գնէ այդ մարգարիտը»: Այս բառերով, Յիսուս կու գայ յիշեցնելու մեզի որ չի բաւեր գտնել Աստուծոյ արքայութեան թանկագին մարգարիտը, այլ պէտք է քայլ մը առջեւ երթալ եւ ծախել մեր «ամբողջ ունեցածը», մեր երկրաւոր դիրքերն ու գահերը, մեր շահերն ու նիւթական հարստութիւնները, որպէսզի կարենանք հասնիլ այդ յաւիտենական թագաւորութեան: Ասկէ առաջ

խօսեցանք «ամբողջ ունեցածը» բառերուն վերաբերեալ երբ բացատրեցինք պահուած գանձին օրինակը, ուստի կարիքը չեմ գգար յաւելեալ բացատրութիւններ տալու:

3.- Համաձայն այս երրորդ մեկնութեան, վաճառականը, դարձեալ մարդ արարածը ինքն է, «գեղեցիկ մարգարիտներ»ը տարբեր-տարբեր հեթանոսական կրօններն են, իսկ «թանկագին մարգարիտ»ը քրիստոնէական կրօնն է, փրկութիւնն է: Մարդ կրնայ ծանօթանալ զանազան կրօններու հետ, որոնցմէ իւրաքանչիւրը կրնայ իրեն յատուկ գեղեցկութիւնն ու գրաւչութիւնը ունենալ, եւ սակայն, անոնք չեն կրնար բաւարարել մարդուն հոգին: Մարդը կը շարունակէ իր փնտոտուի աշխատանքը մինչեւ որ գտնէ այն «թանկագին մարգարիտ»ը՝ քրիստոնէութիւնը, եւ ծանօթանայ անոր հիմնադիրին՝ Յիսուս Քրիստոսի, եւ զայն ընդունի իբրեւ Տէր ու Փրկիչ: Այդ ծանօթութիւնը ձեռք գտնելու համար մարդ պատրաստ պէտք է ըլլայ «իր ամբողջ ունեցածը» ծախելու, այսինքն՝ հրաժարելու միւս բոլոր կրօններէն, անոնց աւանդութիւններէն ու բարքերէն, անոնց կենցաղէն եւ սովորութիւններէն: Աստուծոյ արքայութեան աշակերտողը պէտք է գիտակցութիւնը ունենայ արքայութեան իսկական արժէքին, գիտնայ թէ ինչպիսի մեծ ու թանկագին մարգարիտ մըն է անիկա, եւ ուստի պէտք է իր կեանքի փնտոտուի հետապնդէ եւ ամէն ինչ տալով տիրանայ անոր (Զարեհ Արք. Ազնաւորեան):

Յաւելեալ քանի մը մատնանշումներ.--

ա.- Երբ «մարգարիտներ»ը (տարբեր-տարբեր կրօնները) կը կոչուին՝ գեղեցիկ, իսկ «մարգարիտ»ը (քրիստոնէութիւնը) կը կոչուի՝ թանկագին, ատիկա ինքնին ցոյց կու տայ որ մէկ ու միակ, բացարձակ ու ճշմարիտ կրօնը՝ քրիստոնէութիւնն է:

բ.- Մարդուն կողմէ նախ «գեղեցիկ մարգարիտներ»ու փնտոտուի, ապա «թանկագին մարգարիտ»ին փնտոտուի, կը պարզէ այն իրողութիւնը, թէ՛ մարդը պէտք չէ դադրի փնտոտուի աշխատանք տանելէ, մինչեւ որ իր անձնական փորձառութեամբ հասնի այն բացարձակ ու ճշմարիտ կրօնին, որ Աստուծոյ Որդիին արիւնով հիմնուած կրօնն է, եւ գորս միակն է որ կրնայ կշտացնել Աստուծոյ շունչով օծուն մարդուն հոգին:

գ.- «Գեղեցիկ մարգարիտներ կը փնտոտէ»: Եթէ երբեք գեղեցիկ մարգարիտները տարբեր-տարբեր կրօններն են, հարց կու տանք թէ ինչո՞ւ անոնք կը կոչուին՝ գեղեցիկ: Յիսուս ըսել կ'ուզէ, թէ ամէն կրօն կրնայ իր մէջ որոշ դրական բան մը ունենալ, մենք այդ դրական երեսն է

գորս պէտք է փնտոնենք կամ նկատի առնենք, առանց սակայն այդտեղ կանգ առնելու, այլ պէտք է շարունակենք փնտոնումի աշխատանքը, մինչեւ որ հասնինք «թանկագին մարգարիտ»ին:

դ.– Հաւանաբար նաեւ «գեղեցիկ մարգարիտներ» բացատրութիւնը կը գործածուի տարբեր-տարբեր կրօններու համար, սորվեցնելու համար մեզի թէ անարգալից կամ անտարբեր վերաբերմունք պէտք չէ ունենանք անոնց հանդէպ. պէտք է յարգենք զանոնք, բայց հոն պէտք չէ կանգ առնենք, այլ պէտք է անոնց բայլերը ուղղենք «թանկագին մարգարիտ»ին՝ Քրիստոսի Աւետարանին:

ե.– Վերջապէս, «գեղեցիկ մարգարիտներ»ը փնտոնել, կրնայ նշանակել նաեւ՝ փնտոնել հեթանոս մարդիկը, կորսուած մարդիկը, եւ առաջնորդել զանոնք Քրիստոսի:

Վերջին խօսք մը.–

Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ թէ այս եւ նախորդ, այլ խօսքով՝ «Մարգարիտին օրինակին» եւ «Պահուած գանձին օրինակին» միջեւ թէ՛ նմանութիւն կայ եւ թէ՛ տարբերութիւն: Նմանութիւնը կը կայանայ անոր մէջ որ երկու օրինակներուն մէջ ալ գտնուածը թանկագին գանձ մըն է եւ այդ գանձը ձեռք ազելու համար մարդ պէտք է իր «իր ամբողջ ունեցածը» ծախէ: Իսկ տարբերութիւնը կը կայանայ երկու բանի մէջ.–

1.– Պահուած գանձին օրինակին մէջ մեզի կ'ըսուի թէ գանձը գտնողը «մարդ» մըն է, սովորական մարդ մը, իսկ մարգարիտին օրինակին մէջ թանկագին մարգարիտ մը փնտոնողը «վաճառական» մըն է:

2.– Առաջինին մէջ կը գործածուի «գտնել» բառը, իսկ երկրորդին մէջ՝ «փնտոնել» բառը:

Ի՞նչ ցոյց կու տան այս երկու տարբերութիւնները: Տոյց կու տան թէ փնտոնողը հարուստ մէկն է. «վաճառական» անունը ինք եւս ցոյց կու տայ որ փնտոնողը հարուստ է: Իսկ «Պահուած գանձին օրինակին» մէջ գործածուած «գտնել» բառը ցոյց կու տայ որ գտնող անհատը համեմատաբար փնտոնող անհատին աւելի՛ աղքատ է: Փնտոնողը պիտի չփնտոնէր եթէ երբեք ունեւոր մը չըլլար: Բայց աղքատը դրամ չունի որ փնտոնէ, կարծէք պատահականօրէն «կը գտնէ»:

Գիտնալէ ետք թէ «Պահուած գանձին օրինակին» մէջ գանձ գտնողը աղքատ մէկն է, իսկ «Մարգարիտին օրինակին» մէջ թանկագին մարգարիտ մը փնտոնող «վաճառականը» հարուստ մէկն է, այդ

պարագային հարց կու տանք թէ որո՞նք են կամ որո՞նք կը ներկայացնեն աղֆատներն ու հարուստները: Աղֆատները նիւթականօրէն աղֆատները չեն: Փոխաբերական իմաստով մը, աղֆատները կը ներկայացնեն անուս եւ գիտութիւն չունեցող այն մարդիկը կամ այն հաւատացեալները, սկսեալ Յիսուսի աշակերտներէն, որոնք առհասարակ իր հետ էին իր երկրաւոր կեանքի ընթացքին: Արդարեւ, Քրիստոսի աշակերտները զարգացած եւ ուսեալ մարդիկ չէին, ընդհակառակը անուս ու «աղֆատ» մարդիկ էին, որոնց Քրիստոս պարգեւեց արքայութեան գանձը, եւ անոնք գտան այդ գանձը առանց մասնաւոր կերպով մը փնտոելու գայն:

Իսկ որո՞նք կը ներկայացնեն հարուստները կամ վաճառականները: Դարձեալ փոխաբերական նշանակութեամբ մը, հարուստները կրնան ըլլալ այն գիտունները եւ ուսեալները որոնք առաջին հերթին չընդունեցին զՔրիստոս: Անոնք աւելի վստահեցան իրենց ունեցած գիտութեան եւ ուսումին եւ իրենց յատուկ միջոցներով փնտոեցին նշմարտութիւնը եւ փորձեցին գտնել գայն: Անոնք ունէին որոշ կրօններու ծանօթութիւնը, գիտութիւնը, անոնք ունէին աշխարհի իմաստութիւնը, եւ այս բոլորը պատճառ դարձան որ անոնք չկարենային Աստուծոյ իմաստութեան վստահիլ, ինչպէս վստահեցան միւսները: Բայց անոնք որոնք շարունակեցին փնտոել նշմարտութիւնը, անոնք որոնք նշմարտութիւնը գտնելու մարմաջով բռնուած էին, անոնք բոլոր «գեղեցիկ մարգարիտներուն» մէջէն կրցան գտնել այն «թանկագին մարգարիտը», ամենէն արժեքաւոր մարգարիտը՝ փրկութիւնը:

Վերոյիշեալ երկու բացատրութիւնները կամ փոխաբերական մեկնութիւնները մեր միտքին մէջ ունենալը կարեւոր են: Կարեւոր են անոր համար՝ որ անոնք ցոյց կու տան թէ երկինքի արքայութեան գիւտը ընելը կամ երկինքի արքայութիւնը գտնելու ճամբան բաց է թէ՛ աղֆատին եւ թէ՛ հարուստին առջեւ, թէ՛ անուսին եւ թէ՛ ուսեալին դիմաց: Աստուծոյ արքայութիւնը բոլոր անոնց համար է որոնք կը վստահին Աստուծոյ, կը սիրեն գայն եւ իր կամքը ի գործ կը դնեն:

Սիրելի՛ հայորդի, Քրիստոս մեզ գտնելու համար իր կեանքը տուաւ, իսկ մենք զինք գտնելու համար ի՞նչ կու տանք: Կեանքը մեր առջեւ կը դնէ «գեղեցիկ մարգարիտներ», որոնք կրնան պատճառ դառնալ որ չտեսնենք այն «թանկագին մարգարիտը» որ Յիսուս իր սուրբ արիւնովը կազմեց: Պատրա՞ստ ենք նահատակելու մեր կեանքի «գեղեցիկ մարգարիտները» եւ հրաժարելու մեր «ամբողջ ունեցածէն», ի սէր Յիսուսի եւ ի խնդիր Յիսուսի արիւնով կազմուած այդ «թանկագին մարգարիտին» ձեռք բերումին:

ԱՃՈՂ ՍԵՐՄԻՆ ԱՌԱԿԸ

«Աստուծոյ արքայութիւնը կը նմանի հետեւեալին.– Մարդ մը արտին մէջ սերմ կը ցանէ: Օրեր ու գիշերներ կ'անցնին, կը քնանայ ու կ'արթննայ, մինչ այդ սերմերը կը բուսնին ու կ'աճին, եւ ինք չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան: Այսինքն, հողը ինքնաբերաբար կ'անցնէ սերմը. նախ ցօղունը, ապա հասկը, ապա հասկին մէջ լեցուն ցորենը: Եւ երբ ցորենը հասուննայ, անմիջապէս հնձուորները արտ կը դրկէ, որովհետեւ հունձփի ժամը հասած է» (Մր 4.26-29):

«Մարդ մը արտին մէջ սերմ կը ցանէ» (Մր 4.26): Քանի մը հաստատումներ.–

1.– Մարդ, արտ, սերմ: Մարդը կը ներկայացնէ եկեղեցին, ինչպէս նաեւ իւրաքանչիւր նշմարիտ հաւատացեալ: Արտը բնականօրէն աշխարհն է, իսկ սերմը որ կը ցանուի՝ Աստուծոյ խօսքն է: Սկիզբէն ըսեմ, թէ ոմանք բացատրած են որ արտին մէջ սերմ ցանող մարդը՝ Քրիստոս ինքն է, ասիկա չի կրնար շիտակ ըլլալ, որովհետեւ Յիսուս խօսելով սերմը ցանող անհատին մասին՝ կ'ըսէ. «Ինք չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան»: Եթէ Յիսուս է ցանող մարդը, ան ի՞նչպէս կրնայ չգիտնալ թէ ի՛նչպէս տեղի կ'ունենայ սերմին աճումը:

2.– Ինչո՞ւ Աստուծոյ խօսքը կը նմանցուի սերմի: Քանի մը պատճառներով.–

ա.– Մենք գիտենք որ սերմը թէպէտ շատ փոքր է, բայց եթէ ցանուի՝ կրնայ անիլ եւ մեծ ծառի վերածուիլ: Այս իմաստով, Աստուծոյ խօսքը կը նմանցուի սերմի, որպէսզի ցոյց տրուի մեզի որ եթէ ատիկա տեղ գտնէ մարդուն սրտին ու հոգիին մէջ՝ կրնայ անիլ, զօրանալ, սրբել ու սրբացնել, եւ մարդը դարձնել հաւատքի ախոյեան մը:

բ.– Գիտենք նաեւ որ սերմը իր մէջ կեանք ունի, բայց այդ կեանքը հանդէս չի գար եթէ սերմը հողին չյանձնուի: Ահա նոյնպէս ալ, Աստուծոյ խօսքը թէպէտ կեանքով լեցուն է, եւ թէպէտ կենդանաբար զօրութիւն ունի, բայց ատիկա չի կրնար կենդանացնել ու կեանքով լեցնել մեզ, եթէ չընդունինք եւ չսնուցանենք զանիկա մեր սրտին մէջ:

գ.– Գիտենք որ սերմը որպէսզի բուսնի, անի եւ ծառի վերածուի՝ չի բաւեր զանիկա հողին մէջ նետել. ծառի վերածուելու համար՝ ատիկա մեզմէ աշխատանք կը պահանջէ, ինչպէս ջրել, հերկել, դեղել, յօտել, եւայլն: Ուստի, Յիսուս Աստուծոյ խօսքը կը նմանցնէ սերմի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ չի բաւեր Աստուծոյ խօսքին սերմը սերմանել

մարդոց սրտին մէջ, այլ պէտք է աշխատանք տանիլ, պէտք է աղօթել անոնց համար, հսկել անոնց աճումին, ուղղութիւն տալ, խորհուրդ տալ:

դ.– Տակաւին, սերմը որպէսզի ծառի վերածուի՝ համբերութիւն ու ժամանակ կը պահանջէ: Սա կը պարզէ, որ եկեղեցին պէտք է լայն ժամանակ յատկացնէ եւ համբերութեամբ աշխատի ու տֆնի մարդոց հաւատքի աճման համար: Մենք չենք կրնար մարդոցմէ պահանջել որ շուտ աճին իրենց հաւատքին մէջ: Ինչպէս ծառի մը աճումը ժամանակ կը պահանջէ, այնպէս ալ, մարդուն մէջ հաւատքի ու սիրոյ աճումը նաեւ ժամանակ կը պահանջէ:

ե.– Մեր ուշադրութենէն չի վրիպիր նաեւ որ փուշեր եւ այլ տեսակի վնասակար խոտեր պատրաստ են նեղելու ու խեղդելու իրենց մէջ ինկած սերմը (Մտ 13.7): Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի նմանցնելով, կոչ կ'ուղղէ մեզի քննելու մեր անձերը եւ տեսնելու թէ արդեօք կա՞ն մեր սիրտերուն մէջ մեղքի այնպիսի փուշեր ու խոտեր, որոնք կրնան խեղդել իրենց մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը:

Յ.– Բացատրեցիմք թէ արտը կը ներկայացնէ աշխարհը: Արդ, գիտնալէ ետք թէ ինչո՞ւ Աստուծոյ խօսքը կը նմանցուի սերմի, հիմա պիտի փորձենք գտնել պատասխանը ուրիշ հարցումի մը.– Ինչո՞ւ Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի: Քանի մը պատճառներով.–

ա.– Մենք գիտենք որ արտի մը կամ պարտէզի մը կեանքը կախեալ է երկինքէն, անոր արեւէն ու անձրեւէն, անոր տաքէն ու պաղէն, անոր օդէն ու հովէն: Եթէ երկինքէն անձրեւ չտեղայ ու արեւ չծագի, արտերը կը ցամքին, ծառերը կը թոշին, բոյսերը կը չորնան: Արդ, Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, որպէսզի սորվեցնէ մեզի, թէ ինչպէս արտերուն կեանքը կախեալ է երկինքէն, այնպէս ալ աշխարհի կեանքը կախեալ է երկինքէն, անոր սուրբ Գահակալէն, մեր երկնաւոր Հօրմէն, Տէր Յիսուս Քրիստոսէն, Սուրբ Հոգիէն եւ բոլոր սուրբերուն բարեխօսութենէն: Եւ դարձեալ, ինչպէս արտերը կը ցամքին ու անպտղաբեր կը դառնան առանց երկինքի արեւին ու անձրեւին, այնպէս ալ այս աշխարհը առանց Աստուծոյ կենսատու միջամտութեան՝ հոգեւորապէս կը մեռնի ու կը ցամքի, եւ խոպան դաշտի նման կը դառնայ:

բ.– Կարելոր է գիտնալ որ հողը իր մէջ նետուած սերմը անեցնելու կարողութեամբ ստեղծուած է: Եթէ երբեք Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, կը նմանցնէ՝ ցոյց տալու համար մեզի, թէ ինչպէս հողը իր մէջ նետուած սերմը անեցնելու կարողութեամբ ստեղծուած է, այնպէս ալ աշխարհը Աստուծոյ խօսքին սերմը իր մէջ առնելու եւ զանկա

անեցնելու կարողութեամբ ստեղծուած է: Եթէ Աստուած մարդէն կը պահանջէ հնազանդիլ իր խօսքին, կը պահանջէ՝ անոր համար որ մարդը միշտ ա՛յդ նպատակով ստեղծուած է: Եթէ մարդը անկարող ըլլար հնազանդելու Աստուծոյ խօսքին՝ Աստուած հնազանդութիւն պիտի չպահանջէր անկէ:

գ.– Բոլորս ալ գիտենք որ արտին մէջ փուշն ու վարդը, ծաղիկն ու տատասկը, ցորենն ու որոմը, օգտակար բոյսերն ու վնասակար խոտերը բով–բովի են, միասին ու միատեղ կ’աճին: Ուստի, Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս նոյն արտին մէջ ցորենն ու որոմը միասին կ’աճին, այնպէս ալ այս աշխարհի մէջ բարի ու չար մարդիկը միասին կ’ապրին, արդարն ու անարդարը իրենց գոյութիւնը միասին կը պահեն:

դ.– Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, որպէսզի յիշեցնէ մեզի թէ ինչպէս պարտիզպանը վնասակար փուշերն ու խոտերը կը մաքրէ պարտէզէն, այնպէս ալ, օր մը Աստուած ինք, այս աշխարհէն պիտի հեռացնէ չար մարդիկը եւ դատապարտէ զանոնք յաւիտեանական գեհե–նին:

ե.– Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, որպէսզի բացայայտէ, թէ ինչպէս ցանկապատ չունեցող արտը ոտքի կոխան կը դառնայ կենդանիներուն եւ գազաններուն, այնպէս ալ Սուրբ Հոգիով չցանկա–պատուած աշխարհը՝ ոտքի կոխան կը դառնայ չար ու պիղծ ոգիներուն:

զ.– Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, որպէսզի պարզէ, թէ ինչպէս արտը իր հունձքի ժամանակը ունի, այնպէս ալ աշխարհը իր կատարածը, իր վախճանը պիտի ունենայ:

է.– Յիսուս աշխարհը կը նմանցնէ արտի, որպէսզի յիշեցնէ մեզի, թէ ինչպէս արտը աշխատանքի կը կարօտի որպէսզի պտղաբեր դառնայ, այնպէս ալ այս աշխարհը աշխատանքի կը կարօտի, որպէսզի հոգեւոր պտուղներ բերէ: Եւ դարձեալ, ինչպէս արտ մը առանց հոգատար պարտիզպանի փշալից կը դառնայ, այնպէս ալ այս աշխարհը առանց հոգեւոր պարտիզպանի, այլ խօսքով՝ առանց եկեղեցւոյ, մեղսալից կը դառնայ:

4.– Ինչո՞ւ Յիսուս Աստուծոյ խօսքին սերմնացանը կը նմանցնէ երկրագործի: Քանի մը պատճառներով.–

ա.– Յիսուս Աստուծոյ խօսքին սերմնացանը կը նմանցնէ երկրա–գործի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս երկրագործը համբերու–թեամբ կը կատարէ իր աշխատանքը, այնպէս ալ հոգեւոր հովիւներ համբերութեամբ պէտք է տանին իրենց գործը եւ գործէն յառաջացող դժուարութիւնները:

բ.– Ինչպէս երկրագործը ծառերուն աւելորդ ցիւղերը կը յօտէ, որպէսզի անոնք աւելի՛ գօրանան, այնպէս ալ հոգեւոր հովիւներ պէտք է օգնեն հաւատացեալներուն յօտելու, այլ խօսքով՝ ձերբագատելու իրենց կեանքին մէջ բոյն դրած տեսակ-տեսակ մեղքերէն, վատ բնաւորութիւններէն ու սովորութիւններէն, որպէսզի անոնք առիթը ունենան աւելի՛ գօրանալու իրենց հաւատքին մէջ:

գ.– Ինչպէս սերմ չցանող եւ ծառ չտնկող երկրագործը չի կրնար պտուղ ակնկալել իր արտէն, այնպէս ալ, այն հովիւը որ Աստուծոյ խօսքին սերմը չի ցաներ հաւատացեալներուն մէջ՝ պէտք չէ արդիւնք ակնկալէ անոնցմէ: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ «Ֆարոգութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը փարոգուին» (Հռ 10.17): Այո՛, Քրիստոսի խօսքերը չփարոգող հովիւը, թող չակնկալէ որ հաւատք արթննայ ունկնդիրներուն մէջ:

դ.– Ինչպէս երկրագործը չի բաւարարուիր սերմը ցանելով, այլ մնայուն կերպով կը հսկէ ու հոգ կը տանի սերմանուած հատիկներուն, զանոնք ջրելով եւ անոնց շուրջ մաքրելով, այնպէս ալ հոգեւոր հովիւը պէտք չէ բաւարարուի Աստուծոյ խօսքը փարոգելով, այլ պէտք է հոգ տանի հաւատացեալներուն, եւ իր յորդորներով ու խրատներով օգնէ անոնց անելու իրենց հաւատքին եւ Քրիստոսի հետ իրենց յարաբերութեան մէջ:

ե.– Ինչպէս երկրագործը նիգեր կը դնէ տկար ծառերուն կամ բոյսերուն որպէսզի շիտակ անին, եւ անոնց աւելի՛ պարարտացուցիչ կը դնէ ֆան առողջ ծառերուն, այնպէս ալ հոգեւոր հովիւներ իրենց հաւատքին մէջ տկար եղողներուն հանդէպ աւելի՛ սէր ու գուրգուրանք, աւելի՛ հոգատարութիւն ու խնամք պէտք է ցուցաբերեն:

զ.– Ինչպէս երկրագործը իր արտին շուրջ ցանկապատ կը դնէ, որպէսզի կենդանիներ չկարենան հոն մտնել եւ վնաս հասցնել, այնպէս ալ հոգեւոր հովիւներ պէտք է աղօթքով ցանկապատ դնեն հաւատացեալներուն շուրջ, որպէսզի Սատանան եւ իր չար արբանեակները չկարենան ռոտնագութիւններ կատարել անոնց կեանքին մէջ: Հովիւին աղօթքը ցանկապատի նման պէտք է շրջապատէ ու պաշտպանէ իր հօտի անդամները:

5.– «Մարդ մը արտին մէջ սերմ կը ցանէ»: Բացատրեցինք որ «մարդ»ը՝ կը ներկայացնէ եկեղեցին, ինչպէս նաեւ հաւատացեալ անհատը: «Արտ»ը ըսինք աշխարհն է: Արդ, ուշագրաւ է որ «իր արտին մէջ» ըսելու փոխարէն, պարզապէս կ'ըսուի՝ «արտին մէջ», ինչն^օւ արդեօք այստեղ «իր» բառը չունինք: Եթէ «արտին մէջ» ըսելու փոխարէն, «իր արտին մէջ» ըսենք, արտը, այլ խօսքով՝ աշխարհը կը

դառնայ սեփականութիւնը եկեղեցիին, կամ հաւատացեալ անհատին: Սերմ ցանոդ մարդը՝ մարդը ինքն է, ուստի արտը (աշխարհը) չի կրնար «իր» աշխարհը ըլլալ, որովհետեւ աշխարհ մարդուն չի պատկանիր, այլ՝ Աստուծոյ: Մանանեթի հատիկին օրինակին մէջ տեսանք, թէ մարդ մը մանանեթի հատիկը «առնելով կը ցանէ իր արտին մէջ» (Մտ 13.31): Հոս ունինք «իր» բառը, որովհետեւ ցանոդ մարդը՝ Քրիստոս ինքն է, արտը՝ աշխարհն է, եւ աշխարհ «ի՛ր» աշխարհն է:

6.- «Կը ցանէ»: Բաւական խօսեցանք երկրագործին պաշտօնին մասին, կրկնութեան խուսափելու համար, պարզապէս ըսեմք որ «կը ցանէ» բառերը աշխատանք կ'ենթադրեն: Քրիստոս այս բառերով, կոչ կ'ուղղէ եկեղեցիին եւ ամէն մէկ հաւատացեալի, որ Աստուծոյ խօսքին սերմը ցանէ ամէն տեղ եւ ամէն մարդու արտին մէջ:

«Օրեր ու գիշերներ կ'անցնին, կը քնանայ ու կ'արթնայ, մինչ այդ սերմերը կը բուսնին ու կ'անին, եւ ինք չի գիտեր թէ ինչպէս կը մեծնայ» (Մր 4.27): Քանի մը հաստատումներ.–

1.- «Օրեր ու գիշերներ կ'անցնին»: Ինչո՞ւ արդեօք Յիսուս հաստատել էր թէ «մարդ մը արտին մէջ սերմ կը ցանէ» անմիջապէս կ'աւելցնէ ըսելով. «Օրեր ու գիշերներ կ'անցնին»: Ի՞նչ ցոյց կու տան այս բառերը: Այս բառերը, առաջին հերթին ցոյց կու տան՝ ժամանակի մը տեւողութիւնը: Քրիստոսի խօսքին սերմը որ կը ցանուի ունկնդիրներուն արտին մէջ՝ ժամանակ կը պահանջէ մինչեւ որ բուսնի եւ անի: Ժամանակ կը պահանջէ, նախ, անոր համար որ ունկնդիրը ներքին համոզում մը պէտք է գոյացնէ թէ ինք կարիքը ունի Քրիստոսի, եւ թէ առանց Քրիստոսի չի կրնար ապրիլ: Այդ ներքին համոզումը չգոյացած՝ Քրիստոսի խօսքին սերմը չի բուսնիր ու չ'անիր իր ներսիդին: Եւ երկրորդ, այսօր ֆարոգուած Քրիստոսի խօսքը կրնայ տարիներ ետք իր արդիւնքը տալ: Հետեւաբար, «օրեր ու գիշերներ կ'անցնին» խօսքը, երկար ժամանակամիջոցի մը ակնարկութիւն է: Եւ զուր տեղ չէ որ Քրիստոս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ. մենք գիտեմք որ սերմը ժամանակ կը պահանջէ մինչեւ որ բուսնի, անի եւ ծառ դառնայ: Ինչպէս սերմը ժամանակ կը պահանջէ մինչեւ որ բուսնի, անի եւ ծառ դառնայ, այնպէս ալ, մարդոց արտին մէջ Աստուծոյ արքայութեան սերմանուած խօսքը՝ ժամանակ կը պահանջէ մինչեւ որ ծլի, անի, մեծնայ եւ տոկուն իրականութիւն դառնայ:

2.- «Կը քնանայ ու կ'արթնայ, մինչ այդ սերմերը կը բուսնին ու կ'անին»: «Քնանալ» ու «արթնալ» բառերը կը պարզեն որ հոգեւոր հովիւին մնայուն արթնութեան եւ հսկողութեան հետ կապ չունի Աստուծոյ խօսքի սերմին բուսնիլն ու աճումը մարդոց արտին մէջ: Այո՛,

հոգեւոր արթնութիւնը՝ հովիւին արթուն ըլլալուն հետ երբեք կապ չունի: Հովիւներն ու քարոզիչները գիշերները կը քնանան եւ առաւօտուն դարձեալ կ'արթնան, բայց Աստուծոյ Հոգին գիշեր ու ցերեկ կը ներգործէ ու կ'աշխատի մարդ անհատին սրտին ու հոգիին մէջ: Զուր տեղ չէ որ Քրիստոս Աստուծոյ արքայութեան քարոզութիւնը կը նմանցնէ արտին մէջ ցանուած սերմին: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ հողին մէջ ցանուած սերմը գիշեր ու ցերեկ կեանքով կ'եռայ, երբ անդին զինք արտին մէջ ցանող մարդը քնացած է, եւ անկողինի մէջ: Հոսկէ կը սորվինք թէ Աստուծոյ Հոգին կը գործէ մարդուն սրտին մէջ, թէպէտ այդ մարդուն հովիւը կրնայ այդ պահուն գործի վրայ չըլլալ, այլ կրնայ նոր արթնցած կամ նոր քնացած ըլլալ:

3.- «Կը քնանայ ու կ'արթնայ»: Այս հաստատումով Յիսուս բնականոն կեանքի մը պատկերն է որ կը գծէ, այլ խօսքով, «քնանալ» եւ «արթնալ» բառերով, ան կոչ կ'ուղղէ հովիւներուն շարունակելու իրենց բնական կեանքը, իրենց բնական աշխատանքը, երբ քարոզ պէտք է՝ քարոզ թող տան, երբ յորդոր պէտք է՝ թող յորդորեն, երբ խրատ պէտք է՝ թող խրատեն, երբ այցի կարիքը կայ՝ թող այցելեն, երբ օգնութեան կարիքը կայ՝ թող օգնեն, այլ խօսքով՝ թող իրենց բնական առաքելութիւնը շարունակեն, թող իրենց սահմանուած պարտականութիւնը կատարեն, թող սերմանեն Աստուծոյ խօսքը մարդուն սրտին մէջ, բայց թող չփորձեն զանիկա անեցնել, անեցնելը Աստուծոյ գործն է, Աստուծոյ գործը՝ պէտք է Աստուծոյ ձգել: Մէկ խօսքով, «քնանալ» եւ «արթնալ» բառերով, Յիսուս կոչ կ'ուղղէ հովիւներուն շարունակելու իրենց բնական առաքելութիւնը, եւ թոյլ տալու որ Աստուծոյ խօսքին սերմը իր բնական անը ունենայ մարդոց կեանքին մէջ:

4.- «Մինչ այդ սերմերը կը բուսնին ու կ'անին»: Հոգեւոր հովիւը իր պարտականութիւնը կ'ընէ եւ Աստուծոյ խօսքը կը քարոզէ, բայց կրնայ յոգնիլ եւ հանգիստի պէտք ունենալ, կրնայ երթալ եւ «քնանալ», բայց անդին, Սուրբ Հոգին արթուն կերպով կը հսկէ Աստուծոյ խօսքին սերմերուն վրայ որպէսզի անեցնէ զանոնք:

Կարեւոր է գիտնալ, որ երբ հոգեւորականներ իրենց կոչումին տէր կանգնելով Աստուծոյ խօսքին սերմը կը ցանեն մարդոց սիրտերուն մէջ եւ կը յաջողին անոնցմէ ունենալ փրկութեան մօտեցնել՝ այս չի նշանակեր որ իրե՛նք է որ անոնց փրկութեան պատճառ դարձան: Փրկութեան պատճառ դարձողը կամ փրկութիւն պարգեւողը Փրկիչը ի՛նքն է եւ ո՛չ թէ ուրիշ մարդը: Գործք Առաքելոց գիրքին մէջ կը կարդանք թէ Տէրը ի՛նքն է որ եկեղեցիին մէջ փրկուածներուն թիւը կ'աւելցնէ (Գործ 2.47):

Հոգեւորական մը կրնայ ֆարոգ մը խօսիլ եւ ունկնդիրներէն մէկուն սիրտը կրնայ նմուշիլ եւ դարձի գալ: Քարոզիչը ինք չէ սակայն որ անոր սիրտը նմլած եղաւ, այլ ֆարոգուածը, այսինքն՝ Քրիստոսի խօսքը, կամ Քրիստոս ինք: Պօղոս առաքեալ այս ուղղութեամբ կ'ըսէ. «Հաւատքը ծնունդ կ'առնէ ֆարոգութիւնը լսելէն. իսկ ֆարոգութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը ֆարոգուին» (Հո 10.17):

Ուշագրաւ է որ առաքեալը չ'ըսեր թէ հաւատքը ծնունդ կ'առնէ ֆարոգիչը լսելէն, այլ՝ «հաւատքը ծնունդ կ'առնէ ֆարոգութիւնը լսելէն»: Առաքեալը նաեւ կը շեշտէ որ «ֆարոգութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը ֆարոգուին»: Քարոզիչը ինքնիր խօսքերը չէ որ պէտք է ֆարոգէ, այլ Քրիստոսի խօսքերը, որովհետեւ ինք Քրիստոսի՝ ներկայացուցիչն է, Քրիստոսի՝ դեսպանն է (Մդ 2.7):

Մի՛այն Աստուծոյ խօսքը կրնայ այլակերպել մարդուն սիրտը: Մարդուն խօսքով՝ մարդը չ'առաջնորդուիր այլակերպումի եւ փրկութեան: Համաձայն վերոյիշեալ առակին, ֆարոգիչը Քրիստոսի խօսքերը կը ֆարոգէ եւ աստուածային միջամտութեամբ մը Քրիստոսի կենսատու այդ խօսքերը տեղ կը գտնեն մարդուն սրտին մէջ եւ կը սկսին «բուսնիլ եւ անիլ»:

Քարոզիչը ինք չէ որ Քրիստոսի խօսքը կը բուսցնէ եւ կ'անցնէ հաւատքով ունկնդրողին սրտին մէջ, այլ Աստուած ինք: Առաքեալը Ա.Կր 3.6-ին մէջ կը հաստատէ. «Ես տնկեցի, Ապողոսը ջրեց. բայց Աստուած էր որ անեցուց»: Աստուած կ'առնէ ֆարոգիչին ֆարոգած Քրիստոսի խօսքերը եւ զանոնք կը բուսցնէ եւ կ'անցնէ:

5.- «Եւ ինք չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան»: Քարոզիչը, կամ ըսենք հոգեւոր հովիւր, ո՛չ միայն Աստուծոյ խօսքը բուսցնողն ու անեցնողը չէ, այլ նոյնիսկ ան տեղեակ ալ չ'ըլլար թէ բուսման եւ անեցման ընթացքը ի՛նչպէս է որ տեղի կ'ունենայ: Այս իրողութեան է որ կ'ակնարկէ Յիսուս երբ կ'ըսէ. «Եւ ինք չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան»: Այո՛, ինք՝ Աստուծոյ խօսքը սերմանող ֆարոգիչը «չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան», որովհետեւ ան չի կրնար գիտակ ըլլալ Աստուծոյ Հոգիին գործելակերպին ու աշխատելածեւին: Ան չի գիտեր թէ Սուրբ Հոգին ի՛նչպէս արթնութեան կ'առաջնորդէ մարդիկը: Չի գիտեր թէ մարդոց սրտի այլակերպութիւնը կամ փոփոխութիւնը ի՛նչպէս տեղի կ'ունենայ: Այս նշմարտութիւնը Յիսուս նաեւ Նիկողեմոսին բացայայտեց երբ ըսաւ. «Հովը ո՛ւր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին» (Յհ 3.8): Հոս եւս Յիսուս Նիկողեմոսին կ'ըսէ,

թէ մարդ չի կրնար գիտնալ թէ Սուրբ Հոգին ի՛նչպէս եւ ի՛նչ ձեւերով մարդիկը արթնութեան, նորոգութեան ու զարթօնքի կ'առաջնորդէ:

6.- «Ինձ չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան»: Յիսուսի այս բառերը նաեւ կոչ մըն են հոգեւոր հովիւներուն եւ Աստուծոյ խօսքի փարոզիչներուն, խոստովանելու իրենց անգիտութիւնը Աստուծոյ գործին ու գործելակերպին վերաբերեալ: Հովիւը պէտք է ընդունի, թէ որքան երկինքը երկրէն բարձր է, ա՛յնքան Աստուծոյ ցամբան իր ցամբէն բարձր է, եւ Աստուծոյ խորհուրդը՝ իր խորհուրդէն բարձր ու տարբեր (Ես 55.8-9): Աստուած Եսայի մարգարէին միջոցաւ յայտարարել է տք թէ իր ցամբան մարդոց «ցամբաներէն բարձր են», անմիջապէս կ'աւելցնէ ըսելով. «Ինչպէս անձրեւն ու ձիւնը երկինքէն կ'իջնեն եւ հոն չեն դառնար, հապա երկիրը կ'ոռոգեն ու զանիկա պտղաբեր եւ արգասաւոր կը դարձնեն, ցանողին՝ հունտ, եւ ուտողին հաց կու տան, այնպէս ալ, իմ բերնէս ելած խօսքը ինձի պարապ պիտի չդառնայ: Հապա իմ կամբս պիտի կատարէ» (Ես 55.10-11): Եսայի մարգարէութենէն մէջբերուած այս երկու շարունակական հատուածները երկու բան մեր ուշադրութեան կը յանձնեն.--

ա.- Աստուծոյ խօսքը կրնայ ոռոգել մարդոց խոպանացած սրտերը եւ զանոնք պտղաբեր դարձնել, միշդ ինչպէս անձրեւը կ'ոռոգէ խոպանացած արտերը եւ զանոնք պտղաբեր կը դարձնէ:

բ.- Սրտի այս հոգեւոր ոռոգումը ի՛նչպէս տեղի կ'ունենայ՝ մարդ չի՛ գիտեր եւ չի՛ կրնար գիտնալ, եւ միշդ անոր համար է որ Աստուած մարգարէին կ'ըսէ թէ իր ցամբաներն ու խորհուրդները տարբեր են մարդոց ցամբաներէն ու խորհուրդներէն:

Այս իմաստով, տունալ առակին խօսքերը՝ «ինձ չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան» եւ Եսայի մարգարէին խօսքերը, նոյնն բանն է որ կ'ըսեն, այն՝ որ մարդ չի կրնար գիտնալ թէ Սուրբ Հոգին ի՛նչպէս մարդիկը նորոգութեան կ'առաջնորդէ:

Հետեւաբար, պէտք է խոստովանիլ, թէ ինչպէս սերմնացանը չի գիտեր թէ իր ցանած սերմերը ինչպէս կը բուսնին ու կ'աճին, այնպէս ալ Աստուծոյ խօսքին փարոզիչները երբեք չեն կրնար գիտնալ թէ իրենց փարոգութիւնը ե՛րբ, ի՛նչպէս եւ որո՛նց ներսիդին պիտի գործէ ու տեղ գտնէ:

Չեմ ուզեր նիւթէն հեռանալ: Բայց պարզապէս կ'ուզեմ ըսել, թէ ո՛չ միայն անկարող ենք հասկնալու թէ Սուրբ Հոգին ի՛նչպէս մարդիկը կը նորոգէ ու կը փոխէ, այլեւ, անկարող ենք հասկնալու Աստուծոյ գործը ընդհանրապէս: Օրինակ, Պետրոս չհասկցաւ թէ ինչո՛ւ Յիսուս կ'ուզէր իր ոտքերը լուալ. ա՛յս է որ ցոյց կու տայ Յիսուսի խօսքը ուղղուած

Պետրոսի. «Ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա չես հասկնար, բայց յետոյ պիտի հասկնաս» (Յհ 13.7): Յովհաննէս Մկրտիչ ինք եւս չհասկցաւ թէ ինչո՛ւ Յիսուս կ'ուզէր մկրտուիլ իր ձեռքով, եւ փորձեց արգելք կենալ անոր ըսելով. «Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու, եւ դո՞ւն ինձի կու գաս» (Մտ 3.14): Պետրոս ամբողջ գիշեր մը փորձած էր ձուկ բռնել ու չէր կրցած եւ հիմա չէր հասկնար թէ ինչո՛ւ Յիսուս իրեն կ'ըսէր. «Քիչ մը աւելի խորը տար նաւակը եւ ձուկ որսալու համար ուռկանները նետեցէ՛ք» (Ղկ 5.4): Մարթա չէր կրցած հասկնալ թէ ինչո՛ւ Յիսուս կ'ուշանար Բեթանիա գալու, մանաւանդ որ իրեն ըսուած էր թէ իր սիրելի բարեկամը՝ Ղազարոս հիւանդ ու մահամեծ էր, ահա թէ ինչու անոր ըսաւ. «Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր՝ եղբայրս չէր մեռներ» (Յհ 11.21): Հրեաներ չէին կրցած հասկնալ թէ ի՛նչպէս Յիսուս իր մարմինը ուտելու մասին կը խօսի, անոր համար ալ իրար ըսին. «Ի՞նչպէս կրնայ այս մարդը իր մարմինը մեզի տալ ուտելու համար» (Յհ 6.52): Այս եւ նման օրինակներ կու գան մեզ համոզելու որ մարդ արարածը անկարող է իր սահմանափակ միտքով հասկնալու զԱստուած եւ անոր գործունէութեան կերպը:

«Այսինքն, հողը ինքնաբերաբար կ'անեցնէ սերմը. նախ ցօղունը, ապա հասկը, ապա հասկին մէջ լեցուն ցորենը» (Մր 4.28): Քանի մը հաստատումներ.–

1.– «Հողը ինքնաբերաբար»: Եթէ արտը կը ներկայացնէ աշխարհը, այս պարագայիս, հողը կը ներկայացնէ՝ մարդուն սիրտն ու հոգին: Ինչպէս պարարտ հողին մէջ նետուած սերմը աւելի լաւ կը բուսնի ու կ'անի, այնպէս ալ Յիսուսի սիրով ու հաւատով պարարտացած սրտին մէջ, Աստուծոյ խօսքը աւելի՛ դիւրաւ տեղ կը գտնէ, արմատ կը նետէ եւ կ'անի:

2.– «Ինքնաբերաբար կ'անեցնէ սերմը»: Այս բառերուն վերաբերեալ քանի մը բացատրութիւններ.–

ա.– Այս բառերը ամէն բանէ առաջ կը պատկերացնեն սիրտ մը որ լեցուած է ճշմարտութիւնը քանչնալու փափակով. նման սիրտ մը, Աստուծոյ խօսքին սերմը ընդգրկելուն պէս՝ «ինքնաբերաբար կ'անեցնէ» զայն: Հետեւաբար, «ինքնաբերաբար» բառը կը պատկերացնէ Աստուծոյ ձայնին ու կոչին ընդառաջելու պատրաստ սիրտ մը: Ինչպէս պարարտ հողը ինքնաբերաբար կ'անեցնէ իր մէջ նետուած սերմը, այնպէս ալ պատրաստ սիրտը ինքնաբերաբար կ'անեցնէ իր մէջ նետուած Տիրոջ խօսքը:

բ.– «Ինքնաբերաբար կ'անեցնէ սերմը»: Այս բառերը երբեք ցոյց չեն տար որ ցանուած Քրիստոսի խօսքին սերմը մեքենաբար կը բուսնի ու

կ'անի ամեն մէկ մարդու սրտին մէջ որ կը լսէ Աստուծոյ խօսքին քարոզութիւնը: Մեքենական անու՛մ եւ փրկութիւն չկա՛յ: Քրիստոսի խօսքին սերմը կը բուսնի ու կ'անի միայն ա՛յն սիրտերուն մէջ՝ որոնք Աստուծով անելու ջերմ ու թախանձագին փափաքով կ'եռան: Ինչպէս սերմը կը բուսնի եթէ տեղ գտնէ հողին մէջ, այնպէս ալ, Աստուծոյ խօսքը կ'անի ու կ'անեցնէ, եթէ տեղ գտնէ սրտին մէջ:

Այն մարդը որ կը մերժէ իր սիրտը բանալ Աստուծոյ խօսքին սերմին դիմաց՝ Աստուծոյ Հոգին «անկարող» կը մնայ իր շնորհով այլակերպելու զանիկա: Առաքեալը կ'ըսէ. «Հեզութեամբ ընդունեցէ՛ք ձեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել» (Յկ 1.21): Ան որ հեզութեամբ չ'ընդունիր իր «մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը», այսինքն՝ ան որ կը մերժէ խոնարհիլ Աստուծոյ խօսքին հզօր մուրհին դիմաց՝ չի կրնար արժանի դառնալ փրկութեան: Սերմնացանին առակը կը պարզէ որ մարդիկ չորս տարբեր կերպերով կը վերաբերին Աստուծոյ խօսքին հետ:

գ.- «Հողը ինքնաբերաբար կ'անեցնէ սերմը»: Տարբեր առիթով մը ըսինք թէ հողը իր մէջ նետուած սերմը բուսցնելու եւ անեցնելու կարողութեամբ ստեղծուած է Աստուծոյ կողմէ, եւ միշտ ա՛յս է որ կը պարզէ «ինքնաբերաբար» բառը, այսինքն՝ հողը ինք բնական կերպով իր մէջ նետուած սերմին կեանք կու տայ: Խորքին մէջ այստեղ ըսել ուզուածը այն է՝ թէ ինչպէս հողը իր մէջ նետուած սերմին կեանք տալու բնական կարողութեամբ ստեղծուած է, այնպէս ալ մարդուն սիրտը, Աստուծոյ խօսքը եւ Քրիստոսի հաւատքը իր մէջ ընդունելու կարողութեամբ ստեղծուած է, անոր համար ալ մարդը ոեւէ արդարացում չի կրնար ունենալ Աստուծոյ դիմաց եթէ չընդունի Աստուծոյ խօսքին սերմը իր սրտին մէջ, այլ խօսքով, եթէ չընդունի Յիսուսը իր սրտին մէջ:

Յ.- «Նախ ցօղունը, ապա հասկը, ապա հասկին մէջ լեցուն ցորենը»: Այս հաստատումին վերաբերեալ քանի մը մատնանշումներ.--

ա.- «Ցօղուն», «հասկ», եւ «հասկին մէջ լեցուն ցորեն»: Այս երեք բառերով Յիսուս հաւատացեալ մարդուն կեանքին գլխաւոր երեք հանգրուաններն է որ կը պատկերացնէ: Որո՞նք են այդ գլխաւոր երեք հանգրուանները.--

«Ցօղուն»ը կը պատկերացնէ մարդուն հաւատքի կեանքի սկիզբը, սկզբնաւորութիւնը: Այլ խօսքով, «ցօղուն» ըսելով կրնանք հասկնալ այն մարդիկը որոնք սկսնակ են, նորեկ են իրենց հաւատքի կեանքին մէջ, տակաւին նոր դարձի եկած են, նոր յանձնուած են Քրիստոսի:

«Հասկ»ը կը պատկերացնէ այն մարդիկը որոնք արդէն իսկ որոշատեն մը ի վեր կը գտնուին հաւատքի մէջ: Այլ խօսքով, «հասկ»ը հաւատքի ընթացքի մէջ եղող մարդիկն է որ կը պատկերացնէ:

«Հասկին մէջ լեցուն ցորեն» բացատրութեամբ պէտք է հասկնալ այն մարդիկը որոնք արդէն իսկ հասուն հաւատացեալներն են, որոնք խորունկ գիտակցութիւնը ունին իրենց հաւատքին եւ Քրիստոսի կողմէ իրենց յանձնուած առաքելութեան:

բ.– «Տօղուն», «հասկ», եւ «հասկին մէջ լեցուն ցորեն» բառերուն վերաբերեալ ուրիշ բացատրութիւն մը եւս ներկայացնենք որ երբեք չի հակասեր տրուած առաջին բացատրութեան: «Տօղուն» ըսելով կրնանք հասկնալ այն մարդիկը՝ որոնք ականջ կու տան Աստուծոյ խօսքին: «Հասկ» ըսելով կը հասկնանք այն մարդիկը՝ որոնք ո՛չ միայն ականջ կու տան Աստուծոյ խօսքին, այլեւ կը խորհին ու կը խոկան անոր մասին: Իսկ «հասկին մէջ լեցուն ցորեն» ըսելով կը հասկնանք այն մարդիկը՝ որոնք Աստուծոյ խօսքին ականջ տալուն եւ անոր մասին խոկալուն կողքին, նաեւ անով կ'անին, կը սնանին եւ կը հասունանան:

գ.– «Նախ ցօղունը, ապա հասկը, ապա հասկին մէջ լեցուն ցորենը»: Աստիճանաւորումը որ այստեղ կը գտնենք անուրանալի է: Ինչպէս ո՛չ ոք կը սպասէ որ իր ցանած սերմը մէկ անգամէն եւ շուտով բուսնի, անի ու ատոմանայ, այնպէս ալ քարոզիչներ պէտք չէ ակնկալեն որ մարդիկ Աստուծոյ խօսքը, այլ խօսքով՝ Աստուծոյ արժանութեան քարոզութեան աւետիսը լսածուն պէս ընդառաջեն, ընդունին եւ հոգեւորապէս անին: Ոեւէ մէկը մէկ անգամէն հոգեւորապէս չ'անիր: Ոեւէ մէկը մէկ անգամէն սուրբ չ'ըլլար: Հոգեւոր աճումը աստիճանական կերպով տեղի կ'ունենայ. ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «նախ ցօղունը, ապա հասկը, ապա հասկին մէջ լեցուն ցորենը» խօսքը:

Քրիստոսի ուսուցածը այն է՝ որ Աստուծոյ խօսքին քարոզիչները մշակի համբերութեամբ պէտք է կատարեն իրենց աշխատանքը: Ո՛չ միայն քարոզիչներ պէտք է համբերութեամբ աշխատին ու սպասեն արդիւնքի, այլ ամէն մարդ անհատ որ կ'ուզէ ուրիշը Քրիստոսի բերել եւ օգնել անոր որ Քրիստոսով անի: Յակոբոս առաքեալ հաւատացեալին կը պատուիրէ մշակի համբերութիւն ունենալ (Յկ 5.7):

«Եւ երբ ցորենը հասուննայ, անմիջապէս հնձուորները արտ կը դրկէ, որովհետեւ հունձքի ժամը հասած է» (Մր 4.29): Քանի մը մատնանշումներ.–

1.– Որոշ բառերու առանձին-առանձին անդրադառնալէ առաջ, նախ չորս կէտեր կան որոնց պէտք է անդրադառնալ.–

ա.- «Հասուն ցորեն»: Այս բառերով կը հասկցուին այն հաւատացեալները՝ որոնք հասունցած են իրենց հաւատքին մէջ, Քրիստոսի հանդէպ իրենց ունեցած սիրոյն մէջ, իրենց աղօթական կեանքին մէջ:

բ.- «Հնձուոր»: Հնձուորները այն հաւատացեալներն են՝ որոնք հաւատքի խորո՛ւնկ փորձառութիւն ունին. ա՛յնքան խորունկ՝ որ ալ կարող են զանազանելու իրարմէ հասուն եւ անհասուն ցորենները, եւ ընտրել հասունները եւ զանոնք գործի լծել: Եթէ հաւատքի խորո՛ւնկ փորձառութիւն չունենային՝ բնագիրը զանոնք «հնձուոր» պիտի չկոչէր:

գ.- «Հունձֆ»: Հունձֆը նոյնիմէն «հասուն ցորեններն» են, որոնց մասին խօսեցանք առաջին կէտին մէջ, հետեւաբար, անոնք կը ներկայացնեն իրենց հաւատքին մէջ հասունցած հաւատացեալները: Երբ հաւատացեալներ հոգեւորապէս անին ու հասունան, կը վերածուին «հունձֆ»:

դ.- «Կը դրկէ»: Ո՞վ է դրկողը, որպէսզի հունձֆը հաւաքուի: Դրկողը եկեղեցին ինքն է, հոգեւոր հովիւը ինքն է: Հոգեւոր հովիւներ պէտք է նանչնան իրենց հօտի անդամները, պէտք է գիտնան թէ որո՛նք աղէն իսկ պատրաստ «հունձֆ» են, որոնք կրնան «ֆաղուիլ» եւ աշխատանքի լծուիլ: Քաղելու այս գործողութիւնը կատարելու համար՝ հովիւներ հնձուորներ պէտք է դրկեն, իսկ հնձուորները, ըսինք, հաւատքի խորո՛ւնկ փորձառութիւն ունեցողներն են:

Այս իմաստով, հովիւներ պէտք է գիտնան թէ իրենց հօտին մէջ որո՛նք հաւատքի խորո՛ւնկ փորձառութիւն ունին, եւ որո՛նք հոգեւոր նուազ հասունութիւն ունին, որպէսզի կարենան հաւատքի խորո՛ւնկ փորձառութիւն ունեցողները դրկել հոգեւոր նուազ հասունութիւն ունեցողներուն հոգի, զանոնք լծելու այնպիսի՝ աշխատանքներու որոնք փառք ու պատիւ կը բերեն Քրիստոսի:

2.- Ինչո՞ւ Յիսուս մեզի կը խօսի «հասուն ցորեն»ի, այլ խօսքով՝ հասուն հաւատացեալի մասին, եւ այդ «ցորենը» ֆաղելու ու գործի լծելու մասին: Կը խօսի՝ որպէսզի սորվեցնէ մեզի, թէ ինչպէս պտուղները իրենց հասուննալէն ե՛տք միայն կրնան գործածուիլ, այնպէս ալ, հաւատացեալներ իրենց հաւատքին մէջ հասուննալէ ե՛տք միայն կրնան գործածուիլ, կրնան մարդիկ բերել Քրիստոսի, կրնան նշմարտութեան վկայ դառնալ, սիրոյ վկայ դառնալ: Եւ ինչպէս չհասունցած պտուղը անհամ եւ անօգտակար կ'ըլլայ, այնպէս ալ իր հաւատքին մէջ չհասունցած մարդը՝ անհամ եւ անօգտակար ներկայութիւն կ'ըլլայ:

3.- Մենք բացատրեցինք թէ ի՛նչ պէտք է հասկնալ «հասուն ցորեն», «հնձուոր», «հունձֆ», «կը դրկէ» բառերով: Բայց թոյլ տուէ՛ք հակիրճ

կերպով ըսեմ, թէ ոմանք հնձուորները կը նկատեն հրեշտակները, հնձուորները դրկողը՝ Քրիստոսը, իսկ «հունձի ժամը»՝ աշխարհի կատարածը: Այս բացատրութիւնը կարելի չէ շիտակ ըլլայ գոյգ պատմաններով:–

ա.– Հնձելու դրկողը չի կրնար Քրիստոս ինք ըլլալ, որովհետեւ հնձելու դրկողը՝ արտին մէջ սերմ ցանող մարդն է, իսկ այդ մարդը՝ հոգեւոր հովիւն է որ Աստուծոյ խօսքը սերմանեց, եւ որուն համար կ'ըսուի՝ «կը քնանայ ու կ'արթննայ», ինչպէս նաեւ կը հաստատուի թէ «իմք չի գիտեր թէ ի՛նչպէս կը մեծնան»: Եթէ Յիսուս է սերմը ցանող մարդը, ան ի՞նչպէս կրնայ չգիտնալ թէ ի՛նչպէս տեղի կ'ունենայ սերմին անուր: Կամ եթէ սերմը ցանողը Քրիստոս է, այդ պարագային ի՞նչպէս պէտք է հասկնալ իրեն համար ըսուած «կը քնանայ ու կ'արթննայ» խօսքը:

բ.– Եթէ հնձելու դրկողը Քրիստոս չէ, բնականօրէն հնձուորները հրեշտակները չեն կրնան ըլլալ, եւ ո՛չ ալ «հունձի ժամը»՝ աշխարհի կատարածը: Կարելոր է նկատի առնել, թէ ամէն անգամ երբ Յիսուս խօսեցաւ աշխարհի կատարածին հաւաքուելիք հունձին մասին՝ աւելցուց թէ այդ հունձը իր շտեմարաններուն մէջ պիտի հաւաքուի, իսկ չարերը պիտի դատապարտուին (Մտ 13.30, 49–50): Ներկայ առակին մէջ ո՛չ շտեմարաններու մէջ հաւաքուելու մասին խօսք կայ եւ ո՛չ ալ չարերուն դատապարտութեան մասին ոեւէ խօսք կայ, եւ ասիկա բաւարար պացոյց մըն է, ըսելու համար թէ «հունձի ժամ» ըսելով մենք չենք հասկնար աշխարհի կատարածը, ո՛չ ալ «հնձուոր» ըսելով կը հասկնանք հրեշտակները, եւ նման պարագայի, բնականօրէն դրկողն ալ չի կրնար Քրիստոս ինք ըլլալ:

4.– «Անմիջապէս», այսինքն՝ անյապաղ, իսկոյն, առանց ուշանալու: Այո՛, հոգեւոր հովիւր երբ տեսնէ թէ իր հօտին մէջ պատրաստ «հունձ» կայ, պէտք է իսկոյն գայն Քրիստոսի դաշտին մէջ գործելու դրկէ:

5.– «Կը դրկէ»: Հաւատացեալ մարդը դրկուած պէտք է ըլլայ: Ինքնագլուխ կերպով Քրիստոսի գործին պէտք չէ լծուիլ: Յիսուս կ'ըսէ թէ Տիրոջ Հոգին զինք օծեց եւ դրկեց (Ղկ 4.18): Ան նաեւ կ'ըսէ թէ ինքն է որ իր աշակերտները ընտրեց եւ առաքելութեան դրկեց (Յհ 15.16): Պօղոս առաքեալ կը յիշէ թէ Աստուած զինք իր ծնելէն իսկ առաջ ընտրած եւ առաքելութեան կանչած էր (Գղ 2.15): Աստուած ի՛նքն էր որ Մովսէսը դրկեց Փարաոնին (Ել 3.10): Եսայի մարգարէն կը յիշէ թէ Աստուած ի՛նքն էր որ զինք մօրը արգանդէն կանչեց (Եր 49.1): Մօրը արգանդէն կանչել, կը նշանակէ՝ առաքելութեան կանչել: Արդարեւ Աստուած էր որ

Եսայի մարգարեն առաքելութեան զրկեց՝ ըսելով. «Գնա՛, ըսէ՛ այս ժողովուրդին...» (Ես 6.7-9): Երեմիա նաեւ կը յիշէ թէ Աստուա՛ծ էր որ զինք «ագգերուն մարգարէ» նշանակեց (Եր 1.5):

Ան որ ինքնակամօրէն եւ ինքնաբուխ կերպով Քրիստոսի դաշտը կ'իջնէ աշխատելու, անկախ անկէ թէ իր առաքելութիւնը անպտուղ ու անարդիւնք պիտի մնայ, ան նաեւ դատապարտուած է յոգնելու, ընկրկելու, նահանջ արձանագրելու եւ պարտուած գետին իյնալու:

6.- «Հունձի ժամը հասած է»: «Ժամը հասած է» բառերը կը պարզեն թէ հաւատքի հունձը դառնալու համար, ժամանակ նշդուած է, ուստի ժամանակէն առաջ չենք կրնար առաքելութեան զրկուիլ կամ երթալ: «Հաւատքի հունձ» դառնալ ուզող մարդը պէտք է համբերատար ըլլայ, պէտք չէ աճապարող ըլլայ: Արագ կերպով «հաւատքի հունձ» դառնալը եւ հնձուիլ ու գործի զրկուիլ ուզելը հակասութեամբ լի է: Զմոռնանք որ տուեալ համարը զորս կը քննենք, կը սկսի «եւ երբ ցորենը հասուննայ» բառերով: «Երբ» բառը եւս ժամանակ կամ ժամանակի տեւողութիւն կ'ենթադրէ:

7.- Վերջին խօսք մը «հունձ» բառին վերաբերեալ: Ինչո՞ւ իրենց հաւատքին մէջ աճած հաւատացեալներ կը կոչուին՝ «հունձ»: Քանի մը պատճառներով.-

ա.- «Հունձ» բառը աշխատանք ու քրտինք կ'ենթադրէ: Ինչպէս պտուղներու հունձը թափուած քրտինքի ու համբերութեան արդիւնք է, այնպէս ալ, «հաւատքի հունձ» ըլլալը՝ հետեւանք է քրտինքի, խոկումի, արտասուալից աղօթքի, եւ փորձութեան դիմանալուն:

բ.- Յիսուս «հունձ» բառը կը գործածէ ցոյց տալու համար որ եթէ յարատեւենք մեր հաւատքի կեանքին մէջ՝ անպայման արդիւնքի կը հասնինք: Ինչպէս իր աշխատանքին մէջ յարատեւող երկրագործը արդիւնքի կը հասնի, այնպէս ալ, իր հաւատքի կեանքին մէջ յարատեւող մարդը՝ կը հասնի արդիւնքի: Ոեւէ աշխատանք որ լուրջ կերպով տարուած ու հետապնդուած է՝ անոր արդիւնքը կ'ըլլայ անխուսափելի:

գ.- Մենք գիտենք որ հունձ մը կը պահուի կարիքի ատենուան համար: Ուստի, Յիսուս հաւատացեալները «հունձ» կը կոչէ, ցոյց տալու համար որ անոնք պէտք է օգտակար դառնան հոն ուր իրենց կարիքը կայ:

դ.- Յիսուս «հունձ» բառին գործածութեամբ, կը յիշեցնէ մեզի, թէ ինչպէս հունձը վայելողը առաջին հերթին այդ հունձին համար յոգնող մարդն է, այնպէս ալ, հաւատացեալը առաջին անգամ ինքն է որ իր հաւատքի պտուղը պիտի քաղէ ու վայելէ:

Ե.– Յիսուս «հունձֆ» բառին գործածութեամբ, նաեւ, կը յիշեցնէ մեզի, թէ ինչպէս հունձֆը պարտիզպանին կողմէ կ'ընդունուի միայն այն ատեն երբ հասուն կը դառնայ, այնպէս ալ մենք, Տիրոջ կողմէ կ'ընդունուինք միայն այն ատեն՝ երբ ալ հասունցած ենք մեր հաւատքին մէջ, մաքուր ենք սրտով:

Կամ, ինչպէս պարտիզպանը հունձֆ բառը չի գործածեր տհաս, այսինքն՝ անհասուն պտուղին համար, այնպէս ալ Յիսուս «հաւատքի հունձֆ» չի կոչեր կամ «հաւատքի հունձֆ» չի նկատեր այն մարդիկը որոնք խակ են իրենց հաւատքին մէջ:

ՍԵՐՄՆԱՑԱՆԻՆ ԱՌԱԿԸ

«Սերմանող մը սերմ ցանելու ելաւ: Սերմանած ատեն հատիկներէն ոմանք ինկան ճամբուն եզերքը եւ թռչունները եկան եւ կերան զանոնք: Ուրիշներ ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար, եւ քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան. բայց երբ արելը ելաւ՝ այրեցան, եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորցան: Ոմանք ինկան փուշերու մէջ, եւ փուշերը եկան եւ խեղդեցին զանոնք: Իսկ ուրիշներ ալ ինկան լաւ հողի մէջ եւ պտուղ տուին, ոմանք մէկի տեղ հարիւր, ուրիշներ՝ վաթսուն եւ կամ երեսուն» (Մտ 13.4-8):

Ներածական

Սերմնացանին առակին մեկնութեան սկսելէ առաջ, շահեկան պիտի ըլլայ անդրադառնալ առակը կանխող համարներուն, ուր կանգ պիտի առնենք կարեւոր մտածումի մը վրայ: Մատթէոսի 13-րդ գլխուն առաջին երեք համարներուն մէջ կը կարդանք թէ «Յիսուս տունէն ելաւ եւ գնաց նստաւ լիբնին եզերքը», շուրջը խոնուող բազմութիւնը տեսնելով, «նաւակ մտաւ եւ հոն նստաւ», եւ սկսաւ շարք մը առակներ պատմել անոնց, որոնց առաջինը սերմնացանին առակն է:

«Յիսուս տունէն ելաւ եւ գնաց նստաւ լիբնին եզերքը»: Աստուածաշունչի նորագոյն ժամանակներու մեկնիչ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի կ'ըսէ. «"Տուն" ըսելով հաւանաբար կ'ակնարկուի սուրբ եկեղեցիին, այսինքն՝ հաւատացեալներու հաւաքոյթին: Յիսուս տունէն ելաւ, որպէսզի տունէն դուրս՝ հանդիպի անհաւատ մարդոց որոնք տակաւին տունէն դուրս են, այսինքն՝ եկեղեցիէն դուրս են եւ մաս չեն կազմեր հաւատացեալներու բազմութեան...: "Յիսուս տունէն ելաւ", որպէսզի քարոզէ անոնց Աստուծոյ խօսքը եւ Աստուծոյ խօսքին քարոզութեան միջոցաւ՝ դարձի գալու կոչ ուղղէ անոնց...: Եւ սակայն, երբ պահը գար ուր Յիսուս ուզէր բացատրել իր խօսած առակները եւ Աստուծոյ արքայութեան գաղտնիքները յայտնաբերել՝ ատիկա չէր ըներ տունէն դուրս՝ բազմութեան ներկայութեան, այլ կը ձգէր բազմութիւնը եւ տուն կը մտնէր եւ աշակերտներուն առանձին կը բացատրէր արքայութեան գաղտնիքները»:

Դուն ո՞ւր կը գտնուիս սիրելի՛ ընթերցող, տունէն դուրս, թէ՛ տան մէջ: Տունէն, այլ խօսքով՝ հաւատացեալներու հաւաքոյթէն դուրս մնալով՝ դուն չես կրնար իմանալ գաղտնիքները Աստուծոյ արքայու-

թեան: Յիսուս տունէն դուրս ելաւ, որպէսզի երթար անհաւատներուն եւ Աստուծոյ խօսքին սերմը սերմանէր անոնց սրտին մէջ: Դուն թոյլ տուա՞ծ ես որ Յիսուս տունէն դուրս գալով՝ քեզ տան մէջ առնէ: Թոյլ տուա՞ծ ես որ քու սրտիդ մէջ Յիսուս իր կենդանարար խօսքը սերմանէ:

Սուրբ Որոգիներս խօսելով «Յիսուս տունէն ելաւ» բառերուն մասին՝ կ'ըսէ. «Երբ Յիսուս բազմութեան հետ ըլլայ՝ տունէն դուրս կ'ըլլայ, որովհետեւ բազմութիւնը ինք տունէն դուրս է, եւ ասիկա մարդոց հանդէպ իր ունեցած սիրոյն արտայայտութիւնն է, որովհետեւ ան կ'երթայ հանդիպելու անոնց՝ որոնք չեն կրնար գալ եւ իրեն հանդիպիլ»: Այո՛, Յիսուս ի՛նքն է որ կու գայ մարդոց հանդիպելու: Ան տունը չի մնար կամ չի նստիր երբ անդին անհաշիւ թիւով մարդիկ տունէն դուրս կը գտնուին, տունին նամբան չեն գիտեր: Ի՛նքն է որ մեր երկնային տունին նամբան ցոյց կու տայ մեզի: Ի՛նքն է որ մեզ կ'առաջնորդէ նշմարտութեան երբ կը շեղինք նշմարտութենէն:

Ներկայ եկեղեցւոյ հայրերէն, Աստուածաշունչի մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի կ'ըսէ. «Տունը նաեւ կը խորհրդանշէ երկինքը՝ որ տաճարն է Աստուծոյ: Երբ մարդիկ չկրցան երկինք բարձրանալ որպէսզի իրենց Արարիչին հանդիպէին, այն ատեն Արարիչը ինք, ձգեց երկինքը, ինչպէս մէկը պիտի ձգէր իր տունը, եւ մարդ դառնալով եկաւ ու մարդոց հանդիպեցաւ, որպէսզի չվախնային ու չփախչէին իրմէ ինչպէս դատաւորէ մը պիտի վախնային ու փախչէին, այլ ընդհակառակը, լսէին անոր ձայնը... խաչին ընդմէջէն, որպէսզի իր սիրովը գրաւէր զանոնք եւ երկինք (իրենց տունը) առաջնորդէր...: Եւ հոն՝ երկինքի մէջ, իբրեւ Փեսայ իր գաղտնիքները յայտնէր իր հարսին՝ եկեղեցիին: Այո՛, Փեսան իր գաղտնիքները չի յայտնէր պարզ ժողովուրդին, այլ միայն անոնց՝ որոնք սիրոյ անձնական յարաբերութեան մէջ են իր հետ եւ իրեն հետ միասին կ'ապրին մէկ յարկի տակ: Ուստի, երանի չբաւարարուինք ծովուն եզերքը կենալով մտիկ ընել Տիրոջ պատմած առակները, այլ իրեն հետ միասին եւ իր միջոցաւ մտնենք իր տունը, որպէսզի դառնանք հոգեւոր անդամ իր եկեղեցւոյ, երկինքները մտնենք, իր աստուածային գրկին մէջ հանգչինք, եւ լսենք իր խորհրդաւոր եւ անպատմելի սիրոյն մասին»:

«Սերմանող մը սերմ ցանելու ելաւ: Սերմանած ատեն հատիկներէն ոմանք ինկան նամբուն եզերքը եւ թռչունները եկան եւ կերան զանոնք»
(Մտ 13.4): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Սերմանող մը սերմ ցանելու ելաւ»: Այս առակին մեկնութիւնը Քրիստոս ի՛նքն է որ կու տայ: Թէեւ մեզի չէ ըսուած թէ ո՛վ է սերմանողը

բայց նկատի ունենալով Մտ 13.37 համարը, կրնանք ըսել թե Քրիստոս ի՛նքն է սերմանողը, իսկ սերմը Աստուծոյ խօսքն է (Մր 4.14: Ղկ 8.11):

Արդ, այստեղ ունինք երկու հարցում.–

ա.– Ինչո՞ւ Յիսուս ինքզինք սերմանողի կը նմանցնէ:

բ.– Եւ ինչո՞ւ Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ:

Նախ պատասխանենք առաջին հարցումին: Ինչո՞ւ Յիսուս ինքզինք սերմանողի կը նմանցնէ: Քանի մը պատճառներով.–

ա.– Մենք գիտենք որ սերմանող մարդուն պարտականութիւնը, լոկ սերմերը հողին մէջ նետելը չէ, այլ նաեւ ու մանաւանդ, հողին մէջ նետելէ ետք, անոնց հոգ տանիլն է, զանոնք ջրելն է, անոնց մէջէն վնասակար խոտերը հեռացնելն է: Այս իմաստով, Յիսուս ինքզինք սերմանողի կը նմանցնէ, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինք Աստուծոյ խօսքին սերմը սերմանող մը չէ լոկ, խօսող մը կամ քարոզիչ մը չէ պարզապէս, մարդիկը փրկութեան հրաւիրող կամ կանչող մը չէ պարզապէս, այլ Աստուծոյ խօսքը սերմանելէ ետք մեր սիրտերուն մէջ, հոգ կը տանի եւ կ'աշխատի անցնել այդ սերմերը: Եւ ինչպէս սերմնացանը կը ջրէ այն արտը ուր սերմեր ցանած է, այնպէս ալ Յիսուս իր սիրով եւ Սուրբ Հոգիով կը ջրէ այն սիրտն ու հոգին ուր Աստուծոյ արքայութեան սերմերը ցանած է: Եւ դարձեալ, ինչպէս սերմնացանը վնասակար խոտերը կը հեռացնէ այն հողէն ուր սերմեր ցանած է, այնպէս ալ Յիսուս կը ջանայ մեզմէ հեռացնել մեղքի այն փուշերը՝ որոնք կրնան խեղդել մեր մէջ Աստուծոյ խօսքին սերմը:

բ.– Երկրորդ պատճառը թէ ինչո՞ւ Յիսուս ինքզինք սերմանողի կը նմանցնէ հետեւեալն է.– Ամէն սերմնացան գիտէ թէ ո՛ր սերմը՝ ո՛ր ամսուն կամ ո՛ր շրջանին պէտք է սերմանէ: Եթէ սերմը սխալ ատեն ցանուի, այլ խօսքով, եթէ ձմեռը ցանուելիք սերմը գարնան ցանուի, կամ գարնան ցանուելիքը ամառը ցանուի, կամ ամառը ցանուելիքը աշնան ցանուի՝ սերմերը չեն կրնար ծլիլ: Ի՞նչ կը սորվինք այս իրողութենէն Քրիստոսի գործելակերպին մասին: Կը սորվինք թէ Քրիստոս գիտէ յարմար ժամանակը թէ ե՛րբ Աստուծոյ խօսքը պէտք է սերմանէ: Ան գիտէ նաեւ թէ ո՛ր խօսքը՝ ե՛րբ պիտի ըսուի: Ամէն խօսք ամէն առիթով չ'ըսուիր: Օրինակ, սգաւոր մարդուն իրեն յատուկ խօսք պէտք է խօսուի, ուրախութեան մէջ եղող մարդուն՝ իրեն յատուկ, ապաշխարած մարդուն՝ իրեն յատուկ, չապաշխարած մարդուն՝ իրեն յատուկ, Աստուծոյ խօսքը սիրողին՝ իրեն յատուկ, Աստուծոյ խօսքը չսիրողին՝ իրեն յատուկ: Երբ Աստուծոյ խօսքը անյարմար ատեն ըսուի՝ կրնայ մերժուիլ, կրնայ ծաղրուիլ, կրնայ քննադատուիլ, եւ կրնայ նոյնիսկ գայթակղութեան պատճառ դառնալ: Օրինակ, եթէ մէկուն

զաւակը գէշ հիւանդութեամբ մը բռնուած է եւ մահամերձ վիճակի մէջ է, դուն չե՛ս կրնայ խօսիլ իրեն Քրիստոսի աշխարհ բերած ուրախութեան մասին, կամ Սուրբ Հոգիի պարգեւներուն մասին, նման խօսք մը անկասկած որ գայթակղութեան առիթ պիտի դառնայ: Աստուծոյ խօսքին սերմնացանը, նիշդ Քրիստոսի օրինակով, պէտք է գիտնայ թէ ո՛ր խօսքը՝ ե՛րբ պիտի արտասանէ:

գ.– Բոլորս ալ գիտենք որ մարդոց մէջ ամենէն համբերատարները սերմնացաններն են: Ուստի, Յիսուս ինքզինք սերմանողի կը նմանցնէ, ցոյց տալու համար թէ ինք համբերութեամբ կ'աշխատի մեր փրկութեան համար, եւ համբերատարութեամբ կը տանի մեր կողմէ ցուցաբերուած ամէն կասկած ու կասկածամտութիւն, ամէն նահանջ ու ընկրկում, ամէն տրտունջ ու դժգոհութիւն:

դ.– Յիսուս ինքզինք սերմանողի կը նմանցնէ, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս սերմանողը յոյսով ու ակնկալութեամբ կը սերմանէ, այնպէս ալ ինք՝ Յիսուս, մնայուն կեցողով Աստուծոյ խօսքը կը սերմանէ մարդոց սրտին մէջ, այն վառ յոյսով ու ակնկալութեամբ՝ որ զանոնք դարձի եկած պիտի տեսնէ օր մը: Այլ խօսքով, սերմնացանին նման Յիսուս ի՛նք եւս ակնկալո՛ղ հոգի ունի: Ան կ'ակնկալէ եւ կը սպասէ որ ամէն մարդ դարձի գայ եւ փրկութիւնը ընդունի: Ան քեզի՛ ալ կը սպասէ, ընթերցող բարեկամ:

2.– Հիմա կ'անցնինք պատասխանելու երկրորդ հարցումին: Ինչո՞ւ Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ: «Անող սերմին օրինակ»ին մասին խօսած ատեն բացատրեցի՛նք թէ ինչու Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ: Այստեղ, թոյլ տուէք քանի մը ամփոփ կէտեր յիշեմ, թէպէտ որոշ կրկնութիւններով.–

ա.– Սերմը թէպէտ շատ փոքր է, բայց եթէ ցանուի՝ մեծ բոյսի կամ մեծ ծառի կրնայ վերածուիլ: Յիսուս Աստուծոյ խօսքը կը նմանցնէ սերմի, որպէսզի ցոյց տայ մեզի, որ եթէ Աստուծոյ խօսքը տեղ գտնէ մեր սիրտերուն մէջ՝ կը մեծնայ եւ մեզ ալ հետը կը մեծցնէ, կ'անի եւ մեզ ալ հետը կ'անեցնէ, կը զօրանայ եւ մեզ ալ հետը կը զօրացնէ, կ'արմատանայ եւ մեզ ալ հետը կ'արմատացնէ:

բ.– Սերմը երկրագործին օգտակար չի դառնար եթէ հողին մէջ չցանուի. ահա նոյնպէս ալ, Աստուծոյ խօսքին սերմը մեզի օգտակար չի դառնար եթէ մեր սրտի հողին մէջ չցանուի: Ուստի, Յիսուս Աստուծոյ խօսքը կը նմանցնէ սերմի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս դեղը եթէ չգործածուի օգուտ մը չ'ընէր, կամ ինչպէս սերմը եթէ հողին մէջ չցանուի օգուտ մը չ'ընէր, նոյնպէս ալ, Աստուծոյ խօսքին սերմը օգուտ

մը չ'ընեք մեզի, եթէ ատիկա հաւատֆով չընդունինք մեր սրտի հողին մէջ:

գ.– Սերմին մէջ կեանք կայ: Ուստի Յիսուս Աստուծոյ խօսքը կը նմանցնէ սերմի, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ կեանք կայ Աստուծոյ խօսքին մէջ: Այո՛, սերմին մէջ կեանք կայ, ծլարձակելու կարողութի՛նն կայ, ծառ դառնալու գորութի՛նն կայ, բայց այդ բոլորը սերմին մէջ կը մնան եթէ սերմը հողին չյանձնուի: Ահա նոյնպէս ալ, թէեւ Աստուծոյ խօսքը կենդանարար ազդեցութի՛նն ունի, այլակերպիչ ո՛յժ ունի, կրակի նման մաքրող գորութի՛նն ունի, մարդս վերածնունդի առաջնորդող կարողութի՛նն ունի, բայց այդ բոլորը բանտարկուած կը մնան Աստուծոյ խօսքին գանձատան՝ Աստուածաշունչին մէջ, եթէ երբեք դուրս չբերուին Աստուածաշունչի գանձատունէն ու չցանուին մեր սրտի պարարտ հողին մէջ:

դ.– Սերմը որպէսզի բոյսի կամ ծառի վերածուի՝ ժամանակ կը պահանջէ: Ուստի, Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ, որպէսզի սորվեցնէ մեզի, թէ ան իր խօսքը քարոզիչներու միջոցաւ կը հասցնէ մարդոց եւ կը սպասէ, կը համբերէ, ժամանակ կը տրամադրէ, որպէսզի համոզուին ըսուածին, հաւատան քարոզուածին, ականջին կողմին սի՛րտ ալ տան պատգամուածին: Եւ երբ մարդիկ ընդունին Աստուծոյ խօսքին սերմը իրենց սրտին մէջ, Յիսուս դարձեալ կը սպասէ. այս անգամ կը սպասէ որպէսզի անին, գորանան, մաքրուին, արմատանան: Այս իմաստով, Յիսուս երկու անգամ ժամանակ կը յատկացնէ.– ա) Նախ ժամանակ կը յատկացնէ մինչեւ որ մարդիկ ընդունին իր խօսքը: Բ) Ընդունելէ ետք, դարձեալ ժամանակ կը յատկացնէ որպէսզի այս անգամ առիթը ունենան անելու իրենց հաւատքին մէջ: Ինչպէս երկրագործը չ'աճապարեր որ սերմը անի, այնպէս ալ Յիսուս բնա՛ւ չ'աճապարեր որ Աստուծոյ խօսքը շուտով անի մարդոց մէջ եւ մարդիկ շուտով հաւատքի հսկայ ջահակիրներ դառնան:

ե.– Մենք գիտենք որ բոլոր տեսակի հողերը սերմ չեն ընդունիր իրենց մէջ: Օրինակ, քարացած արտ մը սերմ չ'ընդունիր իր մէջ: Ուստի, Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինչպէս ամէն հող իր մէջ սերմեր չ'ընդունիր, այնպէս ալ մարդկային ամէն սիրտ, դժբախտաբար չ'ընդունիր Աստուծոյ խօսքին կենսատու սերմը իր մէջ:

զ.– Անող սերմին օրինակը բացատրած ատենս ըսի. «Գիտենք որ սերմը որպէսզի բուսնի, անի եւ ծառի վերածուի՝ չի բաւեր գանիկա հողին մէջ նետել. ծառի վերածուելու համար՝ ատիկա մեզմէ աշխատանք կը պահանջէ, ինչպէս ջրել, հերկել, դեղել, յօտել, եւայլն: Գիտենք նաեւ

փուշեր եւ այլ տեսակի վնասակար խոտեր պատրաստ են նեղելու ու խեղդելու իրենց մէջ ինկած սերմը», ուստի զանոնք պէտք է մաքրել: Այս իմաստով, Յիսուս Աստուծոյ խօսքը սերմի կը նմանցնէ, որպէսզի ցոյց տայ մեզի, թէ ինք իր երկրաւոր կեանքի օրերուն ո՛չ միայն Աստուծոյ խօսքը քարոզող մըն էր, այլեւ հոգատար Աստուած էր, ինամատար Արարիչ էր, մարդոց վերհերուն վրայ ձեռք ու գինի դնող բժիշկ էր (Ղկ 10.34): Ինչպէս երկրագործը սերմ ցանելով չի գոհանար, այլ հոգ կը տանի ցանուած սերմին, հեռացնելով անկէ փուշն ու տատասկը, այնպէս ալ Յիսուս, ո՛չ միայն Աստուծոյ խօսքը կը ցանէ մարդոց սրտին մէջ, այլեւ հոգ կը տանի անոնց, ջանալ հեռացնելով անոնցմէ մեղքի վնասակար եւ խեղդող փուշերն ու տատասկները: Յիսուսի քայլերուն պէտք է հետեւին Աստուծոյ խօսքին բոլոր քարոզիչները: Անոնք պէտք չէ լոկ քարոզիչ ըլլան, այլեւ, պէտք է հոգատար ըլլան, ինամածու ըլլան, եւ օգնեն մարդոց ձերբազատելու մեղքի բոլոր տեսակի փուշերէն:

3.- «Սերմանող մը սերմ ցանելու ելաւ»: Խօսեցանք Սերմանողին մասին եւ խօսեցանք սերմին մասին: Կարելոր մատնանշում մը կայ սակայն զոր պէտք է կատարել: Սերմանողը ըսինք՝ Քրիստոս ինքն է, իսկ սերմը՝ Աստուծոյ խօսքը: Խորհին մէջ սակայն, Քրիստոս ինքն է թէ՛ սերմանողը եւ թէ՛ սերմը: Բնական կեանքին մէջ, սերմանողը չի նոյնանար սերմին հետ, բայց երբ Քրիստոսի անձին մասին է որ կը խօսինք, կարելոր է նշել որ Քրիստոս ո՛չ միայն Աստուծոյ խօսքին սերմնացանն է, այլեւ ինքն է Աստուծոյ ԽՕՄՔԸ զոր կը սերմանուի: Այո՛, Քրիստոս Աստուծոյ խօսքին մարմնացումն է, եւ աւելին՝ Ան Աստուծոյ խօսքն է մարդեղացեալ վիճակի մէջ:

Հաստատեցինք որ Քրիստոս ինքն է թէ՛ սերմանողը եւ թէ՛ սերմը: Այս բացատրութեամբ, ըսել կ'ուզենք, թէ Քարոզիչը եւ Քարոզը նոյնն են: Քրիստոս ինքն է քարոզիչը եւ ինքն է քարոզուածը: Ինքն է դէպի կեանք տանող դուռին մասին խօսողը (Մտ 7.14), միաժամանակ ինքն է դէպի կեանք տանող դուռը (Յհ 10.9): Եթէ ինքն է դուռին մասին խօսողը եւ ինքն է դուռը, շատ բնական է ուրեմն որ սերմանողը եւ սերմը նոյն բաները ըլլան: Քրիստոս ի՛ր անձն է որ կը սերմանէ, այլ խօսքով՝ ի՛ր անձն է որ սերմի նման կը նետէ մարդոց սրտին մէջ: Եւ զուր տեղ չէ որ մենք յանախ Քրիստոս'սը մեր սրտին մէջ ընդունելու մասին է որ կը խօսինք եւ ո՛չ թէ Քրիստոսի խօսքը: Եթէ Քրիստոս ի՛ր անձն է որ կը սերմանէ, կամ ինքզինքն է որ կը սերմանէ, այդ պարագային, սերմանուածն ու սերմանողը չե՞ն նոյնանար: Այո՛, կը նոյնանան, որովհետեւ Քրիստոսը իր սրտին մէջ ընդունող մարդը՝ բնականօրէն ընդունած կ'ըլլայ նաեւ Քրիստոսի խօսքը:

Մենք միայն դուռին օրինակը տուինք: Բոլոր օրինակներուն ալ պարագան նոյնն է: Օրինակ, Քրիստոս ի՛նքն է յաւիտենական կեանք խոստացողը, եւ ի՛նքն է խոստացուած յաւիտենական կեանքը: Ի՛նքն է փրկութիւն պարգեւողը եւ ի՛նքն է պարգեւուած փրկութիւնը: Ի՛նքն է նշմարտութիւնը յայտարարողը եւ ի՛նքն է յայտարարուած նշմարտութիւնը: Ի՛նքն է արքայութեան մասին խօսողը եւ ի՛նքն է արքայութիւնը որուն մասին կը խօսուի: Արդարեւ, մեզմէ ո՞վ չի գիտեր որ արքայութիւնը եւ Արքան նոյն բաներն են: Արքայութիւնը Արքայէն տարբեր բան մը չէ: Արքայութիւնը ունեցողը՝ Արքան ունի, եւ Արքան ունեցողը՝ արքայութիւնը ունի:

Աշխարհի մէջ ոեւէ մարդ, իր անձը չէ որ ներկայացուց կամ քարոզեց իր հետեւորդներուն: Քրիստոս եղաւ միակ անձը որ ի՛ր անձը տուաւ, ի՛ր անձը բաշխեց, ի՛ր անձը բաժնեց, ի՛ր անձով մարդիկը փաւելու, մաքրելու, կենդանացնելու, եւ յաւիտենական կեանքի ժառանգորդ դարձնելու համար: Մենք Քրիստոսն ո՞վ սրբուեցանք, թէ՛ Քրիստոսի խօսքով: Խորքին մէջ մենք չենք կրնար այս երկու նշմարտութիւնները գատել իրարմէ: Քրիստոս կը նոյնանայ ինքնիւր խօսքին հետ, որովհետեւ ի՛նքն է խօսուածը, ի՛նքն է պատգամուածը, ի՛նքն է քարոզուածը, ի՛նքն է աւետուածը: Ահա թէ ինչո՞ւ հաստատեցինք որ Քրիստոս ինքն է թէ՛ սերմանողը եւ թէ՛ սերմը:

4.- «Սերմանող մը սերմ ցանելու ելաւ»: Ձեր ուշադրութիւնը կեդրոնացուցէ՛ք վերջին երկու բառերուն վրայ՝ «ցանելու ելաւ»: Այս բառերը կը պարզեն որ Քրիստոս ի՛նքն է որ Աստուծոյ խօսքը ցանելու կ'ելլէ: Եթէ Քրիստոս Աստուծոյ խօսքը ցանելու նախաձեռնութիւնը յանձն չառնէ՝ ոեւէ մարդ չի կրնար իր սրտին մէջ ընդունիլ Աստուծոյ արքայութիւնը: Ի՛նքն է որ արքայութեան յոյսն ու սէրը կը ցանէ մարդոց սրտին մէջ: Ի՛նքն է որ արքայութեան հանդէպ փափաք ու իղձ կը ցանէ մարդոց մէջ:

Եթէ մէջդ սէ՛ր ունիս հանդէպ երկինքին, գիտցիր, որ Յիսուս ի՛նքն է որ այդ սէրը մէջդ ցանած է: Եթէ աղօթելու փափա՛ք ունիս ներսիդիդ, գիտցիր, որ Յիսուս ի՛նքն է որ այդ փափաքը հաստատած է ներսիդիդ: Եթէ բարին գործելու ախորժակով լեցուած ես, գիտցիր, որ Յիսուս ի՛նքն է որ այդ ախորժակով քեզ լեցուցած է: Եթէ սրբութեան կեանք ապրելու կրա՛կ կայ մէջդ, գիտցիր, որ Յիսուս ի՛նքն է որ այդ կրակը դրած է մէջդ:

«Ցանելու ելաւ»: Այս բառերը թող քեզ աղօթքի մղեն. «Տէ՛ր, ելի՛ր ցանելու մէջս սիրոյդ սերմերը: Ցանէ՛ մէջս երկնային առաքինութեանց սերմերը: Մի՛ թոյլ տար որ նմանիմ խոպան դաշտի կամ փշալից արտի:

Ցանկ՝ մէջս ինչ որ կ'ուզես, ինչ որ համելի է քեզի: Եթէ դուն չելլես ցանելու՝ ես կը վերածուիմ տատասկաբեր հողակոյտի մը: Եթէ դուն չցանես՝ ես չեմ կրնար անիլ, ուստի, ցանելու ելիր ո՛վ Տէր, կ'աղաչեմ»:

5.- «Աերմանած ատեն հատիկներէն ոմանք ինկան ցամբուն եգերքը եւ թռչունները եկան եւ կերան զանոնք»: Քանի մը հաստատումներ.-

ա.- «Չամբուն եգերքը» բացատրութիւնը ո՞ր խումբի մարդիկը կը պատկերացնէ, եւ «թռչուններ» բառին ետին որո՞նց ներկայութիւնը կը տեսնենք: Քրիստոս կը բացատրէ թէ «ցամբուն եգերքը գտնուող հողը, ուր կ'իյնայ սերմը, կը նմանի այն մարդուն՝ որ Աստուծոյ արքայութեան քարոզութիւնը կը լսէ եւ սակայն չի հասկնար, չարը կու գայ եւ կը յափշտակէ անոր սրտին մէջ ցանուածը» (Մտ 13.19): Մարկոս եւ Ղուկաս Աւետարանիչներ «չարը» բառին փոխարէն ունին «Սատանայ» բառը (Մր 4.15: Ղկ 8.12): Այս առակին մէջ հետեւաբար, «թռչունները» չարն է որ կը պատկերացնեն: Հարկաւ այստեղ Քրիստոս թռչուններուն չար կամ չարագործ ըլլալուն մասին չէ որ կը խօսի, այլ ան կը փորձէ սորվեցնել մեզի թէ Սատանան եւ անոր չար արբանեակները թռչուններու նման ազատ անկախ կը թռչին ու կը շրջին եւ կլլելու համար մէկը կը փնտոնեն: Նոյն գաղափարը կը գտնենք Պետրոս առաքելի մօտ: Ան խօսելով Սատանային մասին կ'ըսէ. «Ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտոնէ» (Ա.Պտ 5.8): Յիշենք նաեւ որ երբ Աստուծոյ Սատանային կը հարցնէ «ուրկէ՞ կու գաս»: Սատանան կը պատասխանէ. «Երկրի վրայ շրջելէն ու անոր վրայ պտըտելէն» (Յոբ 1.7):

բ.- Ուշադրութեան արժանի բառեր են «կը լսէ եւ սակայն չի հասկնար» բառերը: Այստեղ չհասկնալը կամ հասկնալ չուզելը կամաւորապէս է որ տեղի կ'ունենայ: Որո՞նք են «ցամբուն եգերքը» եղող հողերը որոնք կը լսեն Աստուծոյ խօսքը եւ սակայն կամաւորապէս կը մերժեն հասկնալ, այլ խօսքով՝ իրենց մէջ առնել զայն: Այս հարցումին պատասխանը գտնելու համար պէտք է գիտնալ թէ Յիսուս այս առակը որո՞նց ներկայութեան խօսեցաւ: Յիսուսի առջեւ կանգնած կային երկու խումբ մարդիկ.- ա) Պարզ ու պարզասիրտ մարդիկը, որոնք կ'ունկնդրէին Յիսուսի խօսքերը եւ պատրաստ էին ընդունելու անոր ըսածները եւ հետեւելու անոր. բ) Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, որոնք կը լսէին Յիսուսի խօսքերը եւ սակայն կամաւորաբար կը մերժէին իրենց սիրտը բանալ Աստուծոյ խօսքին սերմին առջեւ, որովհետեւ իրենց սիրտերը «ցամբուն եգերքը» եղող հողին նման ֆարացած ու կարծրացած էին: Այո՛, «ցամբուն եգերքը» եղող հողը կը ներկայացնէր Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, որոնք կամովին եւ

գիտակցօրէն խցած էին իրենց ականջները եւ փակած էին իրենց աչքերը, որպէսզի չըլլայ թէ դարձի գային եւ փրկուէին (Մտ 13.15: Ես 6.9-10):

Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ թէ Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները ունէին իրենց իւրայատուկ մեկնաբանութիւնը, իրենց թէ՛ կրօնական եւ թէ՛ ազգային կեցուածքները, աւանդութիւններն ու հասկացողութիւնները, որոնք այնքան անսխալ կը նկատէին որ կը մերժէին անոնցմէ հրաժարիլ եւ իրենց սիրտերը բանալ Քրիստոսով սերմանուած Աստուծոյ խօսքին դիմաց: Քիչ մը անդին Սրբազան Հայրը կ'ըսէ. «Մեր անհատական կամ աշխարհային հասկացողութիւններն ու համոզումները հակասումն են աստուածային ճշմարտութիւններուն, եւ ինչ որ կը հակասէ աստուածային ճշմարտութիւններուն՝ Աստուծմէ չի կրնար գալ, այլ կու գայ չարէն՝ Սատանայէն: Ահա թէ ինչո՛ւ սերմնացանի առակին մէջ Յիսուս կ'ըսէ, թէ՛ երբ Աստուծոյ խօսքը մենք չենք կրնար մեր համոզումներուն եւ ըմբռնումներուն, մեր սովորութիւններուն եւ աւանդութիւններուն, մեր վիճակին ու պաշտօնին բերումով ընդունիլ, անդին, աշխարհի մէջ կայ ոյժ մը՝ Զարին ոյժը, որ պատրաստ է արգիլելու որ մենք ընդունինք Աստուծոյ խօսքը: Զարը դիտմամբ մեր համոզումներուն մէջ մեզ այնպէ՛ս մը կը կարծրացնէ, որ մենք դառնանք ճիշդ ֆարացած այդ ցամաքուն պէս, որ չ'ընդունիր իր մէջ Աստուծոյ խօսքը եւ թոյլ չի տար որ ներս թափանցէ անիկա. այդ պարագային արդէն յստակ է որ Աստուծոյ խօսքը սահմանուած կ'ըլլայ շուտով կորսուելու»:

գ.- «Ճամբուն եզերքը»: Զարեհ Արք. Ազնաւորեան խօսելով այս բաներուն մասին՝ կ'ըսէ. «Ճամբայ ըսուածը այսօրուան իմաստով շինուած ցամաքն է. գիտենք որ արտերուն մէջ միշտ անցքեր կ'ըլլային մէկուն եւ միւսին բաժինը անջատող, որ նաեւ երթելի տեղ իբրեւ կը ծառայէին, եւ որովհետեւ մնայուն կերպով ոտքի կոխան դարձող բաժին էին, այդ բաժինները աստիճանաբար ֆարացած կ'ըլլային: Սերմանումի ժամանակ դեռ անձրեւը սկսած չէր ըլլար: Հետեւաբար նետուած սերմը երբ կարծր հողի վրայ կ'իյնար, միջոց չունէր հողին մէջ մտնելու եւ ծածկուելու, կը մնար մակերեսին: Իսկ մակերեսը մնացած հատիկները շատ պարզ է որ անմիջապէս կեր կը դառնային թոչուններուն»: Ինչպէս հողին մակերեսին մնացող սերմերը կեր կը դառնան թոչուններուն, այնպէս ալ իրենց հաւատքի կեանքին մէջ, անոնք որոնք մակերեսի վրայ կը մնան, այլ խօսքով՝ չեն խորանար իրենց հաւատքին մէջ՝ «կեր» կը դառնան Սատանային եւ անոր չար ու պիղծ ոգիներուն:

դ.- «Մեկնութիւն չորից աւետարանչաց» գործին հեղինակը խօսելով այն մարդոց մասին որոնք կը նմանին ցամաքուն եզերքը

գտնուող հողին՝ կ'ըսէ. «Ինչպէս քամբան երբ անդադար ոտքի կոխան կ'ըլլայ մարդոց եւ անասուններու՝ կը կարծրանայ, նոյնպէս ալ մեր սիրտերը, եթէ թոյլ տանք որ կոխան ըլլան աշխարհային խորհուրդներու եւ գործերու՝ կը խստանան նշարտութեան դէմ: Համբուն եզերքները յարմար տեղ չեն ցանելու համար: Եւ ապահով վիճակի մէջ չէ այն մարդը որ կ'ապրի միշտ փողոցները եւ մարդոց մէջ: Մարդ պարտի երբեմն առանձին ըլլալ եւ խոկալու պահ ունենալ, մանաւանդ լսելէ ետք Աստուծոյ խօսքին մեծասքանչ նշարտութիւնները»:

ե.- «Համբուն եզերքը»: Սիրելի՛ ընթերցող, եկուր քննենք մեր անձերը: Զրկւայ որ մենք եւս կը նմանինք քամբուն եզերքը գտնուող հողին ուր երբ իյնայ Աստուծոյ խօսքին սերմը՝ տեղ չի գտնուարմատանալու: Թոյլ չտա՛նք որ մեղքը մեզ քամբուն եզերքը գտնուող հողին նման կարծրացնէ: Թոյլ չտա՛նք որ չար մտածումները մեզ հեռացնեն նշարտութեան քամբէն ու մեզ քամբուն եզերքը գտնուող կարծր հողի վերածեն, ուր միայն կրնանք ոտքի կոխան դառնալ մարդոց ու անասուններուն, եւ կեր դառնալ Սատանային ու անոր չար արքանեակներուն:

գ.- Մեկնիչ մը բացատրած է թէ «քամբուն եզերքը» կամ քամբուն եզերքը գտնուող հողը կը ներկայացնէ հպարտ ու գոռոզ սիրտ ունեցող մարդիկը, որովհետեւ արտերու մէջ քամբուն եզերքները աւելի բարձր կ'ըլլան քան արտերը ուր կարելի է ոտէ քան ցանել: Նման մարդիկ, միշտ վերերը ու բարձրերը թոչոյ թոչուններուն կը նային ու կը ցանկան, այլ խօսքով՝ իրենք զիրենք ուրիշէն տարբեր եւ ուրիշէն բարձր կը նկատեն: Այսպիսիներ «վերէն կը նային մարդոց», «վերէն կու գան մարդոց»:

է.- Ըսուեցաւ թէ արտերուն միջեւ գոյութիւն ունեցող քամբաները որոնք արտերը իրարմէ գատելու կը ծառայեն՝ քարացած ու կարծր վիճակի մէջ կ'ըլլան: Հետեւաբար, կրնանք ըսել թէ այս արտերը իրարմէ բաժնող քամբաները որոնք «քամբուն եզերքը» կը կոչուին, կը ներկայացնեն նաեւ իրենց կարծիքին յամառօրէն կառչող մարդիկը, որոնք քարի նման կարծր են եւ պատրաստ չեն լսելու ուրիշը: Բնական է որ այսպիսի մարդիկ դժուար թէ կարենան սիրով ընդունիլ Աստուծոյ խօսքին քարոզութիւնը: Երբ Աստուծոյ խօսքը լսեն՝ Սատանան անմիջապէս կը մօտենայ իրենց եւ ամենայն դիւրութեամբ կը կարծրացնէ անոնց սիրտը եւ կը փակէ զայն Աստուծոյ խօսքին սերմին դիմաց:

ը.- «Համբուն եզերքը» գտնուող հողը որ քարացած կ'ըլլայ եւ ուստի կը մերժէ իր մէջ նետուող հատիկները, կը ներկայացնէ նաեւ այն

մարդիկը՝ որոնք այլամերժ մարդիկ են: Այլամերժ ըսելով, կը հասկնանք ուրիշը մերժող, ուրիշին համոզումներն ու կարծիքները մերժող, ուրիշին չհանդուրժող, ուրիշին գոյութիւնը ուրացող: Ուշադիր ըլլանք մեր անձերուն: Չըլլայ որ մենք ալ այլամերժ ըլլանք: Մենք կոչուած ենք նմանելու պարարտ հողին որ իր մէջ կ'ընդունի ամէն սերմ, եւ ո՛չ թէ նմանելու ֆարացած ցամբու մը որ կը մերժէ ոեւէ տեսակի սերմ:

թ.- «Ճամբուն եզերքը» գտնուող հողը նաեւ կը ներկայացնէ ուրիշներուն հետ չգործակցող մարդիկը: Ինչպէս կարծրացած հողը «չի գործակցիր» իր մէջ նետուած սերմերուն հետ, այլ խօսքով՝ տեղ չի տար անոնց իր գրկին մէջ, այնպէս ալ իրենց սովորութեանց ու բնաւորութեանց մէջ կարծրացած մարդիկ երբեք չեն գործակցիր ու չեն կրնար գործակցիլ իրենց նմաններուն հետ: Իր անձին սովորութիւններուն ստրուկը դարձած մէկը՝ չի կրնար եղբայր դառնալ ուրիշին եւ գործակցիլ անոր հետ:

ժ.- Աստուածաշունչի մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի մեր ուշադրութեան կը յանձնէ որ արտերը իրարմէ գատող նամբաները առանց ցանկապատի կ'ըլլան ու բաց բոլորին դիմաց: Այս իմաստով, կրնանք ըսել որ «նամբուն եզերքը» կը ներկայացնէ նաեւ այն մարդիկը՝ որոնք իրենց սիրտը մնայուն կերպով բաց կը պահեն ամէն տեսակ չար մտածումներու ու խորհուրդներու դիմաց, չար գործերու ու գործակիցներու դիմաց: Անոնք անպաշտպան են, միշտ ինչպէս ցանկապատ չունեցող ցամբուն եզերքները անպաշտպան են անցորդներուն դիմաց:

ժա.- «Թոշունները եկան եւ կերան զանոնք»: Թոշունները Սատանան է որ կը պատկերացնեն (Մր 4.15: Ղկ 8.12): Անգամ մը եւս յիշենք Յիսուսի տուած բացատրութիւնը: Ան կը հաստատէ թէ «նամբուն եզերքը գտնուող հողը, ուր կ'իյնայ սերմը, կը նմանի այն մարդուն՝ որ Աստուծոյ արքայութեան ֆարոգութիւնը կը լսէ եւ սակայն չի հասկնար, չարը կու գայ եւ կը յափշտակէ անոր սրտին մէջ ցանուածը» (Մտ 13.19): Ուշագրաւ է որ Սատանան շատ անհանգիստ կ'ըլլայ երբ ականջ կու տանք Աստուծոյ խօսքին: Երբ տեսնէ ականջ կու տանք Աստուծոյ խօսքին՝ անմիջապէս կը յարձակի եւ կը յափշտակէ մեր մէջէն Աստուծոյ խօսքին սերմերը, միշտ ինչպէս անօթի թոշունները պիտի յարձակէին ցանուած սերմերուն վրայ, կամ ինչպէս անօթի առիւծը պիտի յարձակէր իր որսին վրայ:

Ինչպէս թոշուններուն համար շատ դիւրին է ֆարացած հողերուն վրայ ինկած հատիկները ուտել, այնպէս ալ Սատանային համար շատ դիւրին է ֆարացած սիրտերէն դուրս շարտել Աստուծոյ արքայութեան

սերմերը որոնք կը ցանուին Քրիստոսի կամ ֆարոգիչներուն կողմէ: Ասիկա գիտնալէ ետք, մեզի կը մնայ որոշում առնել եւ հեռացնել մեզմէ քար սիրտը, եւ անոր փոխարէն կակուղ եւ Աստուծոյ խօսքին ընդառաջող սի'րտ խնդրել Տիրոջմէն: Այո՛, պէ՛տք է խնդրել Տիրոջմէն որ ֆարեղէն սրտի փոխարէն մտեղէն սիրտ տայ մեզի, որովհետեւ ատիկա իր խոստումն է մեզի. «Ձեզի նոր սիրտ պիտի տամ ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ եւ ձեր մարմիններէն ֆարեղէն սիրտը պիտի հանեմ ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ» (Եզ 36.26): Առանց Տիրոջ տալիք մարմնեղէն սրտին մենք չենք կրնար մեր մէջ առնել Աստուծոյ արքայութեան սերմերը, չենք կրնար ապրիլ Աստուծոյ կամքին համաձայն կեանք մը, ո՛չ ալ կրնանք հնազանդիլ իր պատուիրաններուն: Զուր տեղ չէ որ Աստուած խոստանալէ ետք որ մեր մարմիններէն ֆարեղէն սիրտը պիտի հանէ ու մեզի մարմնեղէն սիրտ պիտի տայ, անմիջապէս կ'աւելցնէ ըսելով. «Իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ ու դուք իմ օրէնքներուս մէջ պիտի ֆալէք ու իմ իրաւունքներս պիտի պահէք ու գործադրէք» (Եզ 36.27): Աստուած շատ լաւ գիտէ ու մենք ալ պէտք է գիտնանք, որ առանց մարմնեղէն սիրտ ունենալու, այլ խօսքով՝ առանց Աստուծոյ խօսքին ընդառաջող սիրտ ունենալու, եւ առանց Աստուծոյ Հոգիով լեցուած ըլլալու, մենք չենք կրնար կատարել Աստուծոյ կամքը եւ ի գործ դնել անոր պատուիրանները: Ահա թէ ինչո՞ւ մեր փրկութեան թշնամին՝ Սատանան, ամէն բան կ'ընէ մեր սիրտը կարծրացնելու համար, որպէսզի անկարող ըլլանք լսելու Տէր Յիսուսի ձայնը:

Ժբ.– Ուղղակի թէ անուղղակի ըսինք արդէն, թէ քամբուն եզերքը գտնուող հողը ուր սերմերէն ումանք կ'իյնան, կը ներկայացնէ մարդուն սիրտը: Արդ, ինչո՞ւ մարդուն սիրտ հողի կը նմանցուի: Հողի կը նմանցուի, ցոյց տալու համար մեզի, թէ ինչպէս հողը կարողութիւնը ունի իր մէջ նետուած սերմը ընդունելու եւ կեա՛նք տալու անոր, այնպէս ալ մարդուն սիրտը կարողութիւնը ունի իր մէջ նետուած Աստուծոյ խօսքին սերմերը ընդունելու եւ զանոնք պտղաբերելու: Մեզմէ ո՞վ կրնայ ըսել թէ իր սիրտը անատակ է Յիսուսի սիրոյ ու գթութեան սերմերը ընդունելու: Կամ ո՞վ կը համարձակի ըսելու թէ ինք չէ ստեղծուած եւ չէ օժտուած Աստուծոյ խօսքը իր մէջ առնելու կարողութեամբ:

Ես կը հաւատամ, թէ ինչպէս սերմին տեղը հողին մէջ է, այնպէս ալ Աստուծոյ խօսքին տեղը մարդուն սրտին ու հոգիին մէջ է:

«Ուրիշներ ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար, եւ քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան. քայց երբ արեւը ելաւ՝ այրեցան, եւ

որովհետեւ արմատ չունէին՝ չորցան» (Մտ 13.5-6): Քանի մը հաստա-
տումներ.–

1.– Քրիստոս կ'ըսէ թէ «ժայռոտ հողը կը նմանի այն մարդուն, որ
հագիւ Աստուծոյ խօսքը լսած՝ ուրախութեամբ կ'ընդունի գայն: Սակայն
սերմը արմատ չունի իր մէջ, այսինքն՝ ժամանակուան մը համար կը
հաւատայ, եւ երբ նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հալածանքի
ենթարկուի՝ անմիջապէս իր հաւատքը կը կորսնցնէ» (Մտ 13.20-21):
Քրիստոս այստեղ ո՛չ ժայռի նման կարծր սիրտ ունեցող մարդոց մասին
կը խօսի եւ ո՛չ ալ հողի նման կակուղ սիրտ ունեցողներուն մասին, այլ
կը խօսի «ժայռոտ հողի մասին»: Եթէ անոնք ժայռի նման կարծր
ըլլային՝ երբեք ականջ պիտի չտային Աստուծոյ խօսքին: Իսկ եթէ հողի
նման կակուղ ու պարարտ ըլլային՝ Աստուծոյ խօսքը տեղ պիտի գտնէր
իրենց սրտին մէջ եւ խորունկ արմատ նետէր:

2.– Սերմնացանի առակը կը խօսի չորս տարբեր դասակարգի
մարդոց մասին, որոնց վերաբերեալ հակիրճ հաստատումներ պիտի
կ'ատարենք աւարտին: Հոս յիշուած երկրորդ դասակարգի մարդիկը
որոշ չափով մը տարբեր են վերեւ յիշուած առաջին դասակարգի
մարդոցմէն: Անոնց տարբերութիւնը կը կայանայ քանի մը կէտերու
մէջ.–

ա.– Առաջին դասակարգին պատկանող մարդուն վերաբերեալ
Յիսուս կ'ըսէ, թէ «Աստուծոյ արքայութեան քարոզութիւնը կը լսէ եւ
սակայն չի հասկնար», մինչդեռ տարբեր է հոս յիշուած երկրորդ
դասակարգի պատկանող մարդուն պարագան: Հոս կը տեսնենք որ
ժայռոտ հողին նմանող մարդը ո՛չ միայն կը լսէ Աստուծոյ խօսքը, այլեւ
կը հասկնայ եւ կ'ընդունի գայն:

բ.– Առաջինին մէջ, մեզի չ'ըսուիր թէ «նամբուն եզերքը» գտնուող
հողին նմանող մարդը «ուրախութեամբ» կ'ընդունի իր մէջ սերմնուած
հատիկը, մինչդեռ երկրորդին մէջ, «ժայռոտ հող»ին նմանող մարդուն
համար կ'ըսուի, թէ երբ լսէ Աստուծոյ խօսքը՝ «ուրախութեամբ
կ'ընդունի գայն»:

գ.– Առաջինին մէջ, կը տեսնենք թէ «նամբուն եզերքը» գտնուող
հողին նմանող մարդը բնա՛ւ իր մէջ չ'առնէր Աստուծոյ խօսքին սերմը,
մինչդեռ երկրորդին մէջ, «ժայռոտ հող»ին նմանող մարդը իր մէջ
կ'առնէ՛ Աստուծոյ խօսքին սերմը, թէպէտ այդ խօսքը մէջը
չ'արմատաւորուիր:

դ.– Առաջինին մէջ Աստուծոյ խօսքին սերմին կեանքը խլողը՝
Սատանան է, իսկ երկրորդին մէջ, Աստուծոյ խօսքին սերմին կեանքը
խլողը՝ նեղութիւններն ու հալածանքներն են:

բ.- Առաջինին մէջ Աստուծոյ խօսքին համար հալածուելու հարց չկայ, մինչդեռ երկրորդին մէջ, Աստուծոյ խօսքին համար յարուցուած հալածանքն է որ մարդը կը հեռացնէ իր հաւատքէն:

գ.- Առաջինին մէջ կը տեսնենք թէ «նամբուն եզերքը» գտնուող հողին նմանող մարդը բնա՛ւ չի հաւատար Աստուծոյ խօսքին եւ բնա՛ւ ժամանակ չի յատկացներ մտածելու Աստուծոյ խօսքին մասին, մինչդեռ երկրորդին մէջ, «ժայռոտ հող»ին նմանող մարդը գտնէ «ժամանակուան մը համար կը հաւատայ»:

3.- «Ուրիշներ ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար»: Քրիստոս այստեղ կը խօսի ա՛յնպիսի մարդոց մասին որոնք թէեւ ժայռի նման կարծր են, եւ սակայն, անոնց մօտ քիչ մը հող կայ, այսինքն՝ քիչ մը պատրաստակամութիւն կայ: Անոնք պատրաստ են լսելու նշմարտութիւնը բայց պատրաստ չեն հալածանք կրելու նշմարտութեան համար: Այսպիսի մարդիկ շուտով կ'այրին երբ արեւը ծագի: Այստեղ «արեւը» փորձութեանց ու նեղութեանց պատկերացումն է, իսկ «այրիւր»՝ նոյնինքն կործանիլն է: Այսպիսիներ կ'ուրախանան երբ լսեն նշմարիտ հաւատքին մասին, բայց հաւատքը չ'արմատաւորուի եւ ներքին համոզումի չի վերածուիր իրենց սրտին մէջ: Ինչպէս հողին մէջ արմատ չնետած ծառը շուտով կը տապալի փոթորիկին դիմաց, այնպէս ալ իր հաւատքի կեանքին մէջ չարմատացած մարդը՝ նեղութեանց դիմաց իսկոյն կ'ընկրկի ու կը նահանջէ:

4.- «ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար»: Մեկնիչ մը կը բացատրէ թէ ժայռոտ տեղը որ թեթեւ հողով մը ծածկուած է, կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք կը ծածկեն իրենց նշմարիտ ինքնութիւնը, քարեղէն ինքնութիւնը: Այսպիսիներ կը ձեւացնեն որ ուրախ են Աստուծոյ խօսքին քարոզութեամբ. այդպէս կը ձեւացնեն, որպէսզի մարդոց կողմէ փառքի ու գովասանքի արժանանան. բայց այսպիսիներ չեն կրնար երկա՛ր ժամանակ իրենց իսկական ինքնութիւնը, իրենց կեղծիքն ու ստութիւնը ծածկել. երբ արեւը ծագի, այլ խօսքով՝ երբ փորձութիւններն ու նեղութիւնները սկսին, անոնք անմիջապէս կը խախտին իրենց հաւատքին մէջ, որովհետեւ հաւատքը խորունկ արմատ չունի իրենց սրտին մէջ, քիչ ինչպէս սերմը ինք չի կրնար խորունկ արմատ ունենալ թեթեւ հող ունեցող ժայռին վրայ. այսպիսիներ թէպէտ կը փորձեն ծածկել իրենց քարեղէն ինքնութիւնը, բայց փորձութիւններ կու գան հանդէս բերելու իրենց նշմարիտ ինքնութիւնը:

Գալով մեզի, այն հողը ուր դրած ենք մեր հաւատքի արմատները՝ թեթեւ է, թէ՛ խորունկ: Այլ խօսքով՝ մեր սրտի հողը՝ ժայռո՞տ հող է, թէ պարարտ հող է: Եթէ մեր սրտի հողը պարարտ չէ եւ սակայն մենք կը

ջանանք ուրախ ձեւանալ, քրիստոնեայ ձեւանալ, հաւատացեալ ձեւանալ, արդէն կը նշանակէ թէ կեղծաւոր ենք, եւ կը փորձենք մեր նշմարիտ ինքնութիւնը ծածկել: Բայց ինչպէս տկար արմատ ունեցող բոյսը չի դիմանար արեւի գօրաւոր տաքին այլ կ'այրի ու կը չորնայ, այնպէս ալ տկար ու անարմատ հաւատք ունեցող մարդը՝ չի դիմանար փորձութեանց տաքին, այլ անմիջապէս կը նահանջէ ու կը տապալի:

5.- «Քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան»: Քանի մը կէտեր ձեր ուշադրութեան կը յանձնեմ.-

ա.- «Անմիջապէս բուսան» ըսելով պէտք է հասկնանք՝ «անմիջապէս Աստուծոյ խօսքը լսեցին»: Յիսուս ինք այդպէս բացատրեց երբ ըսաւ. «Հագիւ Աստուծոյ խօսքը լսած՝ ուրախութեամբ կ'ընդունի գայն»: Աստուծոյ խօսքը լսելը՝ շատ լաւ բան է, բայց երբեք լաւ բան չէ շուտով խանդավառուիլը, եւ ինչո՞ւ, որովհետեւ խանդավառութեան պահերուն կրնանք շուտով որոշումներ առնել եւ խոստումներ կատարել, եւ անոնք կրնան սխալ որոշումներ ըլլալ: Զգո՛յճ ըլլանք հետեւաբար, որ «հագիւ Աստուծոյ խօսքը լսած»՝ «անմիջապէս» չբուսնինք: Ինչպէս հողին մէջ նետուած սերմը իսկոյն չի բուսնիր, նոյնպէս ալ մենք, Աստուծոյ խօսքին փարոգութիւնը լսածնուս պէս՝ չխանդավառուինք, որովհետեւ մարդկային խանդավառութիւնը՝ Աստուծոյ կամքը կատարել չի տար մեզի:

Աստուծոյ խօսքը լսելուն մէջ արա՛գ ըլլանք, բայց արագ չըլլանք որոշումներ ու խոստումներ կատարելուն մէջ: Աստուածաշունչը լեցուն է օրինակներովը այն անձերուն որոնք խանդավառութեան մէկ պահուն որոշումներ առին բայց յետոյ զղջացին եւ իրենց անձերուն կործանման պատճառ եղան: Անանիայի եւ Սափիրայի օրինակը լաւագոյն օրինակն է: Անոնք երբ տեսան թէ ինչպէս «արտ կամ տուն ունեցողները զանոնք կը ծախէին եւ ծախուածներուն դրամը կը յանձնէին առաքեալներուն...» (Գրծ 4.34-35), խանդավառուեցան եւ խանդավառութեան մէկ պահուն որոշում առին ու խոստացան իրենք ալ նոյնը ընել. բայց երբ տուն գացին, իրենց խանդավառութիւնը վերջ գտած էր, բայց որովհետեւ խոստում տուած էին, ստիպուած ծախեցին իրենց կալուածը բայց բոլոր գումարը չյանձնեցին առաքեալներուն, եւ ատիկա պատճառ եղաւ իրենց մահուան, քանի իրենց ըրածը «Սուրբ Հոգին խաբել» եւ «զԱստուած փորձել» նկատուեցաւ (Գրծ 5.1-10):

բ.- Երկրորդ դասակարգի այս մարդիկը Աստուծոյ խօսքը լսող եւ Աստուծոյ արքայութեան փարոգութեան ականջ տուող մարդիկ են. հակառակ այս իրողութեան, Յիսուս կ'ըսէ թէ այդպիսիներ կը լքեն իրենց հաւատքը երբ հալածանքի հանդիպին: Հոսկէ կը սորվինք թէ

Աստուծոյ խօսքին փարոզութիւնը լսելը՝ մեզ չի կրնար փրկել: Լսուածը եթէ կեանքի չվերածուի, ո՛չ միայն մեզ չի փրկեր, այլ ընդհակառակը, մեր դատապարտութիւնը կը սաստկացնէ: Եթէ երբեք փարոզիչ ըլլալը մեզ չի փրկեր, հապա ի՞նչպէս փարոզ լսելը մեզ կրնայ փրկել: Յուդա Իսկարիոտացին չփարոզե՞ց որ «երկինքի արքայութիւնը մօտեցած է» (Մտ 10.5-7): Կամ Դեմաս որ «այս աշխարհը նախընտրելով» լքեց Պօղոս առաքեալը՝ Աստուծոյ խօսքին փարոզիչ չէ՞ր (Բ.Տմ 4.10):

գ.– «Քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան»: Խորունկ հողի մէջ ինկող սերմը՝ ուշ կը բուսնի, մինչդեռ թեթեւ հողի մէջ ինկող սերմը՝ շուտ կը բուսնի: Շուտ բուսնողը՝ շուտ ալ կը չորնայ, իսկ ուշ բուսնողը՝ երկար ժամանակ կը մնայ եւ արդիւնք կու տայ: Արդ, որո՞նք կը ներկայացնեն շուտ բուսնող սերմերը, եւ որո՞նք կը ներկայացնեն ուշ բուսնող սերմերը:

Շուտ բուսնող սերմերը կը ներկայացնեն այն մարդիկը՝ որոնք երբ կը լսեն Աստուծոյ խօսքը՝ անմիջապէս «ուրախութեամբ կ'ընդունին զայն» առանց մտածելու կամ խոկալու ըսուածին մասին, առանց այդ խօսքին սերմը թաղելու իրենց սրտի խորերը եւ ջրելու զանիկա իրենց աղօթքով: Այսպէս ընելը ունի իր վտանգը, որովհետեւ մենք կրնանք սխալ փարոզներ կամ ուսուցումներ ալ լսել, ուստի պէտք է մեր լսածին կամ մեզի փոխանցուածին շուտով հաւատանք, եւ «շուտով բուսնինք», այսինքն՝ շուտով մեր լսածը համոզումի վերածենք, եւ զայն ուրիշին փոխանցենք:

Իսկ ուշ բուսնող եւ արդիւնք տուող սերմերը կը ներկայացնեն այն մարդիկը՝ որոնք երբ կը լսեն Աստուծոյ խօսքը՝ թէպէտ անմիջապէս «ուրախութեամբ կ'ընդունին զայն», եւ սակայն, շուտով բուսնելու, այլ խօսքով՝ շուտով արդիւնք տալու մասին չեն մտածեր. այլ ընդհակառակը, կը նստին ու կը մտածեն իրենց լսած Աստուծոյ խօսքին մասին, կը խոկան ու կ'աղօթեն անոր համար, եւ կը սպասեն յարմարատեան, որպէսզի կարենան արդիւնք տալ:

դ.– Յիսուս խօսելով ժայռոտ հողին մասին՝ կ'ըսէ. «Ժայռոտ հողը կը նմանի այն մարդուն, որ հագիւ Աստուծոյ խօսքը լսած՝ ուրախութեամբ կ'ընդունի զայն»: Բաւական բան ըսինք արդէն այս համարին մասին: Այստեղ կ'ուզեմ կանգ առնել կարեւոր կէտի մը վրայ: Հոս Յիսուս կը խօսի այնպիսի՝ մարդոց մասին՝ որոնք ուրախութեամբ կը լսեն եւ ուրախութեամբ կ'ընդունին Աստուծոյ խօսքը: Այսօր որքա՛ն մարդիկ կան որոնք ուրախութեամբ կը լսեն եւ կ'ընդունին Աստուծոյ խօսքը, եւ սակայն, այդ խօսքը ոեւէ ձեռով զիրենք չի՛ փոխեր, չի՛ տաշեր, չ'այլակերպեր, չի՛ սրբեր, չի՛ սրբացներ, չի՛ զօրացներ: Որքա՛ն

մարդիկ կան որոնք կ'ուրախանան երբ լսեն Աստուծոյ խօսքը, եւ սակայն, այդ խօսքին կրակով չեն մաքրուիր: Ես ինչո՞վ կ'օգտուիմ եթէ ականջէս մտած Աստուծոյ խօսքը պիտի ուրախացնէ ականջս միայն, առանց մտնելու սիրտս եւ ուրախացնելու սիրտս: Եթէ ականջէս մտածը սրտիս պիտի չերթայ՝ ես կը մնամ ականջի մարդ եւ ո՛չ սրտի մարդ:

Ե.– Նախորդ բաժինը աւարտեցի ըսելով. «Եթէ ականջէս մտածը սրտիս պիտի չերթայ՝ ես կը մնամ ականջի մարդ եւ ո՛չ սրտի մարդ»: Եթէ միայն մեր ականջը պիտի բանանք Աստուծոյ խօսքին դիմաց առանց մեր սիրտը բանալու, մենք չենք կրնար «նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հալածանքի» դիմանալ: Մենք «նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հալածանքի» կրնանք դիմանալ միայն այն ատեն՝ երբ Աստուծոյ խօսքին սերմը տեղ կը գտնէ մեր սրտին մէջ եւ տոկուն ծառի կը վերածուի: Բայց Աստուծոյ խօսքին սերմը տոկուն ծառի չի վերածուիր մեր սրտին մէջ, եթէ երբեք ժայռոտ հող ենք, այլ խօսքով՝ եթէ առատ հող չկայ մեր սրտին մէջ, իսկ առատ հող ունենալ մեր սրտին մէջ, կը նշանակէ, Աստուծոյ խօսքին դիմաց պատրաստ ու պատրաստակամ սի՛րտ ունենալ, ամուր կամք ու կամեցողութի՛ւն ունենալ, վառ փափաք ու բորբոքած հոգի՛ ունենալ: Թեթեւ հողը հետեւաբար, կը ներկայացնէ տկար կամք ու հաւատք ունեցող մարդիկը, իսկ խորունկ հողը՝ կը ներկայացնէ խորո՛ւնկ կամք ու հաւատք ունեցող մարդիկը:

Գ.– «Հագիւ Աստուծոյ խօսքը լսած՝ ուրախութեամբ կ'ընդունի գայն»: Ասկէ առաջ տեսանք որ առաջին դասակարգի մարդիկը կը լսեն Աստուծոյ խօսքը բայց չեն ընդունիր գայն եւ այդ չընդունելու արարքը կամաւորապէս տեղի կ'ունենայ, իսկ այս երկրորդ դասակարգի մարդիկը ո՛չ միայն կը լսեն Աստուծոյ խօսքը, այլեւ՝ կ'ընդունին գայն: Ասոնց վերաբերմունքը քիչ մը աւելի դրական է քան առաջիններուն վերաբերմունքը: Աւելի դրական է այն իմաստով, որ անոնք չեն ընդդիմանար Աստուծոյ խօսքին, կամ չեն մերժեր գայն, այլ ուրախութեամբ կ'ընդունին: Բայց առակը ցոյց կու տայ որ լոկ ընդունիլը չի բաւեր, լոկ հանոյքով մտիկ ընելը չի բաւեր, այլ պէտք է գո՛րծնապէս փաստել որ ընդունած ենք Աստուծոյ խօսքին սերմը մեր սրտին մէջ: Ինչո՞վ կ'օգտուինք երբ կ'ընդունինք լսել Քրիստոսի հաւատքին մասին, բայց չենք ընդունիր Քրիստոսի հաւատքը մեր սրտին մէջ: Ինչո՞վ կ'օգտուինք երբ կը խանդավառուինք Աստուծոյ արքայութեան մասին քարոզ լսելով, բայց Աստուծոյ արքայութեան հանդէպ կրակ չկայ մեր սիրտերուն մէջ:

6.- «Բայց երբ արեւը ելաւ՝ այրեցան, եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորցան»: Յիսուս այս տողը կը բացատրէ եւ կ'ըսէ. «Սակայն սերմը արմատ չունի իր մէջ, այսինքն՝ ժամանակուան մը համար կը հաւատայ, եւ երբ նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հալածանքի ենթարկուի՝ անմիջապէս իր հաւատքը կը կորսնցնէ» (Մտ 13.21): Համարը եւ համարին մեկնութիւնը միասին նկատի առնելով քանի մը մատնանշումներ կ'ընենք.-

ա.- Յիսուս ժայռոտ հողին նմանող մարդուն վերաբերեալ կը հաստատէ թէ «ժամանակուան մը համար կը հաւատայ», եւ ինչո՞ւ, որովհետեւ «արմատ չունի իր մէջ»: Հաւատքի արմատ չունեցող մարդը՝ չի կրնար մինչեւ վերջը դիմանալ: Արքայութիւնը մինչեւ վերջը դիմացողներուն տեղն է, ինչպէս Յիսուս ըսաւ. «Ով որ մինչեւ վերջը դիմանայ, անիկա պիտի փրկուի» (Մտ 10.22):

Հարց տանք մենք մեզի: Աստուծոյ խօսքը իր արմատները ունի՞ մեր սրտին մէջ: Մեր Տիրոջ հաւատքը արմատաւորուած է մեր հոգիին մէջ: Յաւատնական կեանքի սէրը արմատականօրէն ներկայ է մեր կեանքին մէջ: Ունի՞նք արմատ, թէ՛ անարմատ մարդիկ ենք: Ինչպէս արմատ չունեցող բոյսը չի կրնար դիմանալ փոթորիկին, կամ արեւի կիզիչ տաքին, նոյնպէս ալ, մենք չենք կրնար դիմանալ կեանքէն եկող դժուարութիւններուն եթէ երբեք մեր արմատները չունինք Քրիստոսի մէջ եւ Քրիստոսի արմատները մեր մէջ: Հոն ուր արմատաւորուած հաւատք չկայ՝ հոն հալածանքը գգետնող իրականութիւն կը դառնայ:

բ.- «Երբ արեւը ելաւ՝ այրեցան»: Ե՞րբ ելաւ «արեւը»: Արեւը ելաւ Աստուծոյ խօսքին սերմանումէն ետք: Ասկէ առաջ ըսինք, թէ արեւը, ինչպէս Յիսուս ինքն իսկ ցոյց տուաւ, կը պատկերացնէ նեղութիւններն ու հալածանքները: Ինչո՞ւ Յիսուս խօսել է ետք Աստուծոյ խօսքին սերմանումին մասին, անկէ անմիջապէս ետք կը խօսի նեղութեանց ու հալածանքներու մասին: Ի՞նչ կ'ուզէ սորվեցնել մեզի: Տէրը կ'ուզէ սորվեցնել մեզի, թէ երբ լսենք Աստուծոյ խօսքին քարոզութիւնը, անկէ անմիջապէս ետք Սատանան կրնայ յարձակիլ մեր վրայ ոեւէ ձեւով, նպատակ ունենալով հեռացնել մեզմէ Աստուծոյ խօսքին սերմերը: Ինչո՞ւ: Որովհետեւ Սատանան շատ լաւ գիտէ որ եթէ Աստուծոյ խօսքին սերմը տեղ գտնէ մեր սրտին մէջ ու արմատաւորուի՝ անկէ ետք իրեն համար դժուար պիտի ըլլայ խախտել մեզ մեր հաւատքին մէջ. ահա թէ ինչու կը յարձակի երբ տակաւին սկսնակ ենք մեր հաւատքի կեանքին մէջ, որպէսզի արմատախիլ ընէ մեր մէջէն հաւատքի նորածիլ ծաղիկները:

գ.– Յիսուս պատահական նեղութեան ու հալածանքի մասին չէ որ կը խօսի, այլ Աստուծոյ խօսքին սերմանումին յաջորդող նեղութեան ու հալածանքի մասին: Հոսկէ կը սորվինք, թէ երբ ականջ կու տանք Աստուծոյ խօսքին եւ ուրախութեամբ կ'ընդունինք գայն, Աստուած թոյլ կու տայ որ որոշ փորձութիւններու ենթարկուինք, որպէսզի տեսնէ թէ հաւատարիմ պիտի մնանք մեր մէջ սերմանուած իր խօսքին թէ ոչ:

դ.– Երբ Աստուծոյ խօսքին օրհնաբեր սերմերը մեր մէջ առնենք՝ պատրաստ պէտք է ըլլանք Չարի յարակումին: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ ամէն օրհնութեան ետին՝ Չարին մէկ հարուածն է որ մեզի կը սպասէ: Ո՞վ չի գիտեր որ հոգեւոր կեանքի մէջ ամէն մէկ վերելքին ետին՝ քանի մը քայլ ետեւ երթալ կը պատրաստէ մեզի Չարը: Շատ կարեւոր է որ հաւատացեալ մարդը նկատի առնէ այս իրողութիւնը, որպէսզի մնայուն կերպով պատրաստ եւ արթուն վիճակի մէջ ըլլայ, կարենայ ետ մղել Չարին հարուածները, եւ ամէն ինչ ընէ՝ կանգուն մնալու համար (Ես 6.13): Երբ կ'ըսեմ թէ հաւատացեալ մարդը պէտք է նկատի առնէ այս իրողութիւնը, այս չի նշանակեր թէ ան մնայուն կերպով չարիքի հանդիպելու ակնկալութեամբ պէտք է ապրի: Ըսելիքս այն է՝ որ հաւատացեալ մարդը պէտք է միշտ պատրաստ եւ արթուն ըլլայ, ինչպէս Պետրոս առաքեալ ինքն իսկ կ'ըսէ. «Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ» (Ա.Պտ 5.8):

ե.– «Բայց երբ արեւը ելաւ՝ այրեցան, եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորցան»: Matthew Henry կ'ըսէ. «Նոյն արեւն է որ կը տաքցնէ եւ կեանք կու տայ արմատ ունեցող բոյսերուն, բայց կը չորցնէ եւ կ'այրէ արմատ չունեցողները: Ինչպէս Քրիստոսի խօսքը, նոյնպէս ալ Քրիստոսի խաչը, ոմանց կեանք կու տայ եւ ոմանց՝ մահ: Միեւնոյն փորձութիւնը ոմանց կ'առաջնորդէ դէպի ուրացում ու կործանում, եւ ոմանց ալ՝ դէպի աւելի հաւատքի գօտեպնդում եւ վարձատրութիւն»:

Այո՛, փորձութիւնները ոմանց հաւատքը կը զօրացնեն, իսկ ուրիշներունը՝ կը տկարացնեն: Եթէ մեր հաւատքը զօրաւոր է՝ փորձութիւնը մեզ աւելի՛ կը զօրացնէ, իսկ եթէ մեր հաւատքը տկար է՝ փորձութիւնը մեզ աւելի՛ կը տկարացնէ: Փորձութիւնը մեզի համար անէ՛ծք կը դառնայ եթէ մենք չենք ձերբազատած մեղքի անէ՛ծքէն, եւ օրհնութիւն կը դառնայ՝ եթէ Աստուծոյ օրհնեալ ներկայութեան մէջ կ'ապրինք:

զ.– «Երբ արեւը ելաւ՝ այրեցան, եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորցան»: Գրիչ մը ըսած է. «Արեւին ելլելը՝ Փորձիչին ելլելն է, Փորձիչին յարձակիլն է: Այրիլը՝ փորձութեանց դիմաց տանջուիլն է,

տառապիլն է: Չորնալը՝ հաւատփին կորսուիլն է, մեռնիլն է»: Հարկաւ հեղինակը մեկնութիւն է որ կ'ընէ, եւ ո՛չ թէ ըսել կ'ուզէ թէ փորձութիւնը տանջանք է, կամ փորձութիւնը՝ հաւատփի կորուստի կ'առաջնորդէ: Փորձութիւններ կրնան յարակիլ մեր վրայ, բայց չեն կրնար տապալել մեզ, եթէ երբեք հաստատուած ենք Քրիստոսի վրայ: Կրնան տանջել մեզ, բայց չեն կրնան չորցնել, եթէ Քրիստոսով կենդանացած ենք:

Է.- «Երբ նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հալածանքի ենթարկուի՝ անմիջապէս իր հաւատքը կը կորսնցնէ»: Քրիստոս այստեղ պատահական նեղութեան ու հալածանքի մասին չէ որ կը խօսի, այլ «Աստուծոյ խօսքին համար» յարուցուած նեղութեան ու հալածանքի մասին: Եթէ մեր գործած մեղքերուն ու սխալներուն պատճառով հալածուէինք եւ մեր հաւատքը կորսնցնէինք՝ մեր պատիժը շատ աւելի թեթեւ պիտի ըլլար, քան եթէ երբեք Աստուծոյ խօսքին համար հալածուէինք եւ ուրանայինք Աստուծոյ խօսքն ու մեր հաւատքը:

Զըլլա՛յ որ «երբ նեղութեան եւ Աստուծոյ խօսքին համար հալածանքի» ենթարկուինք՝ լքենք մեր հաւատքը: Զըլլա՛յ որ երբ մարդիկ հարցնեն մեզի մեր հաւատքին մասին՝ ամչնանք ու քաշուինք պատասխանելու: Ամչնալը՝ հաւատփի ուրացո՛ւմ է: Քաշուիլը՝ վախկոտութի՛ւն է: Իսկ վախկոտներ չեն կրնար Աստուծոյ վկաները ըլլալ: Աստուծոյ վկաները քա՛ջ մարդիկ պէտք է ըլլան:

«Ոմանք ինկան փուշերու մէջ, եւ փուշերը ելան եւ խեղդեցին գանձով» (Մտ 13.7): Քանի մը հաստատումներ.-

1.- Քրիստոս կը հաստատէ թէ «փուշերով ծածկուած հողը կը նմանի այն մարդուն, որ Աստուծոյ խօսքը կը լսէ, սակայն երկրաւոր կեանքի հոգերը եւ հարստութեան հրապոյրը կը խեղդեն Աստուծոյ խօսքը, որ անպտուղ կը դառնայ իր մէջ» (Մտ 13.22): Հոս յիշուած երրորդ դասակարգի մարդիկը չափով մը տարբեր են վերեւ յիշուած երկրորդ դասակարգի մարդոցմէն: Անոնց տարբերութիւնը կը կայանայ քանի մը կէտերու մէջ.-

ա.- Երկրորդ դասակարգի մարդիկը իրենց հաւատքը կը լքեն Աստուծոյ խօսքին համար իրենց կրած հալածանքին պատճառով, մինչդեռ հոս յիշուած երրորդ դասակարգի մարդիկը, իրենց հաւատքը կը լքեն երկրաւոր կեանքի հոգերուն ու հարստութեան հրապոյրին պատճառով:

բ.- Երկրորդ դասակարգին պատկանող մարդոց համար կ'ըսուի թէ երբ լսեն Աստուծոյ խօսքը՝ ուրախութեամբ կ'ընդունին գայն, մինչդեռ այս երրորդ դասակարգի պատկանող մարդոց համար չ'ըսուի թէ երբեք ուրախութեամբ կ'ընդունին Աստուծոյ խօսքը երբ կը լսեն գայն:

Ինչո՞ւ արդեօք: Չմոռնանք որ երրորդ այս դասակարգի մարդիկը հարստութիւն ունեցող մարդիկը կը ներկայացնեն եւ անոնք բնականօրէն ունին իրենց հոգերը, որոնք յատուկ են հարուստներուն: Եթէ նկատի առնենք այս իրողութիւնը, պարզ կը դառնայ թէ ինչո՞ւ ուրախութեամբ չեն լսել Աստուծոյ խօսքը: Հարուստներ ընդհանրապէս չեն սիրել շատ լսել Աստուծոյ խօսքը: Օրինակ, հարուստ մարդիկ կը սիրեն լսել՝ «Ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղփատներուն տուր» խօսքը (Մտ 19.21): Կամ կը սիրեն լսել թէ քաղկեդոնի ժամանակ աղփատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը պէտք է հրաւիրել (Ղկ 14.13): Կամ կը սիրեն լսել՝ «Զեր հարստութիւնը մի դիզէ՛ք երկրի վրայ» կոչը (Մտ 6.19):

գ.– Երկրորդ դասակարգին պատկանող մարդիկը թէպէտ իրենց մէջ կ'առնեն Աստուծոյ խօսքին սերմը, եւ սակայն այդ սերմը արմատ չունի իրենց մէջ, մինչդեռ երրորդ դասակարգի մարդոց սրտին մէջ Աստուծոյ խօսքը ունի իր արմատները, թէպէտ անոնք շրջապատուած են փուշերու արմատներով:

դ.– Երկրորդ դասակարգին պատկանող մարդոց համար կ'ըսուի թէ «Ժամանակուան մը համար» կը հաւատան, որ կը նշանակէ՝ կարն ժամանակուան մը համար, մինչդեռ երրորդ դասակարգին պատկանող մարդիկ աւելի երկար ժամանակուան մը համար կը հաւատան: Թէպէտ այս կէտը բացայայտօրէն չի յիշուիր, բայց եթէ նկատի առնենք որ երրորդ դասակարգի մարդոց մէջ Աստուծոյ խօսքին սերմը արմատ ունի որ սակայն փուշերով ծածկուած է, իսկ երկրորդ դասակարգի մարդոց մէջ Աստուծոյ խօսքին սերմը արմատ չունի՝ պարզ կը դառնայ որ արմատ ունեցող երրորդ դասակարգի մարդիկը քիչ մը աւելի երկար ժամանակուան մը համար կը հաւատան, քան երկրորդ դասակարգին պատկանող մարդիկը: Եւ ասիկա գարմանալի չէ: Վերել ըսինք թէ երրորդ այս դասակարգի մարդիկը հարստութիւն ունեցող մարդիկը կը ներկայացնեն: Շատ հարուստներ կան որոնք չեն ուզեր ո՛չ երկինքը կորսնցնել եւ ո՛չ ալ իրենց հարստութիւնը: Ներքին պայքար մը կ'ապրին այդպիսիները, եւ մնայուն կերպով իրենք գիրենք ընտրութեան մը դէմ յանդիման կը գտնեն, ո՞ր քամբան ընտրել, Աստուծո՞յ քամբան, թէ՛ դրամի քամբան: Եւ այս ներքին պայքարը շատերու համար կը շարունակուի մինչեւ իրենց կեանքին վերջը, ահա թէ ինչու ըսի որ երրորդ այս դասակարգի մարդիկը աւելի երկար ժամանակուան մը համար «կը հաւատան» քան երկրորդ դասակարգի մարդիկը, որոնք ո՛չ հարստութիւն ունին եւ ո՛չ ալ հարուստներուն յատուկ հոգեր, որոնք

սակայն աւելի կանուխ կրնան լքել իրենց հաւատքը նեղութեանց ու հալածանքներու պատճառով:

Ե.– Երկրորդ դասակարգին պատկանող մարդիկ «հագիւ Աստուծոյ խօսքը լսած՝ ուրախութեամբ» կ'ընդունին գայն, այլ խօսքով՝ շուտով կ'ընդունին, շուտով կը խանդավառուին. մինչդեռ երրորդ դասակարգին պատկանող մարդիկ այդպէս չեն: Անոնք հարուստ են, անոնք հոգեր ունին, շուտով չե՛ն խանդավառուիր, շուտով չե՛ն ընդունիր իրենց խօսուածը, շուտով չե՛ն համոզուիր:

2.– «Ոմանք ինկան փուշերու մէջ, եւ փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք»: Տեսանք արդէն Քրիստոսի բացատրութիւնը, թէ՛ «փուշերով ծածկուած հողը կը նմանի այն մարդուն, որ Աստուծոյ խօսքը կը լսէ, սակայն երկրաւոր կեանքի հոգերը եւ հարստութեան հրապոյրը կը խեղդեն Աստուծոյ խօսքը, որ անպտուղ կը դառնայ իր մէջ»: Յիսուս այստեղ յստակօրէն կը խօսի երկու տարբեր իրականութեանց մասին՝ Աստուծոյ խօսքին մասին, եւ երկրաւոր կեանքի հոգերուն ու հարստութեան հրապոյրին մասին, այլ խօսքով՝ աստուածսիրութեան եւ աշխարհասիրութեան մասին:

Փուշերով ծածկուած հողը այն մարդն է որ կը փորձէ հաշտեցնել իրարու հետ աստուածսիրութիւնն ու աշխարհասիրութիւնը: Այսպիսի մարդու մը սիրտը կը նմանի պարարտ հողի: Հողի մը՝ որ տեղ ունի թէ՛ ցորենին եւ թէ՛ փուշին, թէ՛ երկինքին եւ թէ՛ երկրին, թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ դրամին: Այսպիսի մարդիկ կը մոռնան որ «մարդ չի կրնար երկու տէրերու ծառայել», Աստուծոյ եւ դրամին (Մտ 6.24): «Փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք»: Քրիստոս տուեալ բառերով կ'ուզէ ցոյց տալ մեզի, թէ աստուածսիրութեան եւ աշխարհասիրութեան միջեւ տատանող մարդուն մէջ, աշխարհային բաժինը աւելի շուտ կրնայ անիլ եւ խեղդել անոր մէջ Աստուծոյ խօսքին սերմը, հաւատքի տունկը:

Տորեն ու փուշ իր վրայ ունեցող հողը կը նմանի այն մարդուն որ կը սիրէ Աստուծոյ հետեւիլ, բայց միւս կողմէ չ'ուզեր աշխարհը կորսնցնել: Ան կարծէ կ'ուզէ երկուքին ալ տէրը դառնալ, երկուքն ալ վայելել: Մեծահարուստ երիտասարդին պարագան նոյն բանը ցոյց կու տայ: Ան մէկ կողմէ կ'ուզէր յաւիտենական կեանքը ժառանգել, իսկ միւս կողմէ՝ կը մերժէր բաժնուիլ զինք արքայութենէն բաժնող իր հարստութենէն: Որքան յանապա մենք եւս նոյնը կ'ընենք: Մէկ կողմէ կ'ուզենք հետեւիլ Աստուծոյ, միւս կողմէ սակայն, չենք ուզեր բաժնուիլ որոշ բաներէ որոնց սիրոյն ստրուկները դարձած ենք:

Մեր դիմաց երկու ընտրութիւն ունինք: Կամ պէտք է ընտրենք նիւթական հարստութեան նամբան, որ փշալից է եւ մութ, եւ կամ՝ պէտք է ընտրենք աննիւթական Հարստութիւնը՝ զԱստուած:

3.- «Ոմանք ինկան փուշերու մէջ»: Այս խօսքը ցոյց չի տար որ Աստուծոյ խօսքին սերմանուելէն յետո՛յ է որ փուշերը մէջտեղ ելան, որպէսզի խեղդեն սերմանուած խօսքը: Ընդհակառակը, փուշերը գոյութիւն ունէին Աստուծոյ խօսքին սերմանուելէն առաջ, եւ Աստուծոյ խօսքը անո՛նց մէջ է որ սերմանուեցաւ: Սա ցոյց կու տայ թէ Յիսուս Աստուծոյ խօսքին սերմը կը ցանէ նոյնիսկ ամենէն փշալից, այլ խօսքով՝ ամենէն մեղաւոր, եւ ամենէն շատ երկրաւոր կեանքի համար հոգ ընող մարդոց սրտին մէջ:

4.- «Ոմանք ինկան փուշերու մէջ, եւ փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք»: Նայինք մեր սիրտերուն: Չկա՞ն մեր սիրտերուն մէջ փուշեր, հարստասիրութեան փուշեր, դրամասիրութեան փուշեր, ագահութեան փուշեր՝ որոնք պատնառ կը դառնան որ մեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքին կենսատու սերմերը խեղդուին: Չկա՞ն արդեօք մեր մէջ ատելութեան ու նախանձի փուշեր, բամբասանքի եւ զրպարտութեան փուշեր, անհանդուրժողութեան եւ աններողամտութեան փուշեր՝ որոնք պատնառ կը դառնան որ մեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքին սերմերը չորնան: Չկա՞ն արդեօք մեր մէջ գահասիրութեան եւ փառամոլութեան փուշեր, ինքնահաւանութեան եւ գոռոգութեան փուշեր՝ որոնք թոյլ չեն տար որ Աստուծոյ խօսքին սերմը մեր մէջ բոյն դնէ եւ արմատ ունենայ:

5.- «Փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք»: Ի՞նչ ցոյց կու տայ հոս յիշուած «ելան» բառը: «Ելան» բառը առաջին հերթին կը պարզէ Չարին կարողութիւնը յարձակելու մարդոց վրայ: Երկրորդ, «ելան» բառը ցոյց կու տայ որ «երկրաւոր կեանքի հոգերը եւ հարստութեան հրապոյրը» դէպի մարդուն սիրտը ելլելու, մագլցելու ու հասնելու գորութիւնը ունին, եթէ երբեք մարդը ինքզինք չպաշտպանէ աղօթքի ցանկապատով: Երրորդ, «ելան» բառը կը բացայայտէ մեղքին մնայուն կերպով պատրաստ ըլլալը. պատրաստ՝ յարձակուիմ գործելու անմիջապէս որ անպաշտպան տեսնէ մարդը. պատրաստ՝ արագ կերպով զգետնելու աղօթքէն հեռացած մարդը. պատրաստ՝ գրաւելու մարդուն սիրտը երբ անիկա բացուի Աստուծոյ սուրբ խօսքին սրբարար սերմերուն դիմաց:

6.- «Փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք»: Ի՞նչ ցոյց կու տայ «խեղդեցին» բառը: Տոյց կու տայ որ Սատանային բուն նպատակը մեզ խեղդելն է, սպաննելն է, մեռցնելն է: Սատանան եւ աշխարհ, կ'ուզեն մեզ խեղդամահ տեսնել: Անոնք երբեք ուրախ չեն այնքան ատեն երբ մենք կը

շնչեմք ու կ'ապրինք երկինքի տեսիլքով ու յոյսով: Անոնք կ'ուզեն խեղդել մեր մէջ դէպի Աստուած բացուելու ամէն փափաք, խեղդել մեր մէջ ամէն բարի տրամադրութիւն, խեղդել մեր մէջ սիրոյ եւ կարեկցութեան ամէն զգացում:

7.- «Երկրաւոր կեանքի հոգերը եւ հարստութեան հրապոյրը կը խեղդեն Աստուծոյ խօսքը, որ անպտուղ կը դառնայ իր մէջ»: Որքան ցաւալի է որ թոյլ կու տանք որ երկրաւոր կեանքի հոգերը սպաննեն մեր մէջ՝ երկնաւոր կեանքի երանութեան հասնելու փափաքը: Որքան տխուր երեւոյթ է, որ թոյլ կու տանք որ մեր հարստութիւնը մեր թշնամին դառնայ: Հոգ կ'ընենք եւ թոյլ կու տանք որ հոգը մեր հոգին սպաննէ: Կը սիրենք աշխարհը եւ յետոյ մեր սիրած աշխարհը պատճառ կ'ըլլայ որ մենք դժոխք նետուինք: Կը կապուինք ժամանակաւորին եւ ժամանակաւորը մեզ կը կապէ ու կապուած վիճակի մէջ գեհեմ կը նետէ:

8.- Ինչո՞ւ Յիսուս «փուշ» կ'անուանէ «երկրաւոր կեանքի հոգերը»: Յիշեմք որ Ադամին ու Եւային համար «երկրաւոր կեանքի հոգերը» սկիզբ առին իրենց մեղանշումով, որովհետեւ այլեւս իրե՛նք էր որ իրենց աշխատանքով ու նակտի քրտինքով պէտք էր ապահովէին իրենց օրուայ ապրուստը, եւ յիշեմք նաեւ որ անոնց մեղանշումին հետեւանքով էր որ փուշն ու տատասկը եւ ամէն տեսակի վնասակար խոտերը գոյութեան եկան, երբ Աստուած Ադամի ու Եւայի պատճառով երկիրը անիծեց (Ծն 3.18): Ուստի, փուշը մեղքի՛ արդիւնք է, անէծքի՛ արդիւնք է: Հետեւաբար, Յիսուս «փուշ» կ'անուանէ «երկրաւոր կեանքի հոգերը», որպէսզի ցոյց տայ մեզի երկրաւոր կեանքի համար հոգ ընելը՝ մեղք է, անէ՛ծք է:

9.- Տակաւին, Յիսուս «փուշ» կ'անուանէ «երկրաւոր կեանքի հոգերը», որովհետեւ երկրաւոր կեանքի համար հոգ ընելը՝ Աստուծոյ հանդէպ անվստահութի՛ւն է, Աստուծոյ ամենակարողութիւնը ուրանա՛լ է, Աստուծոյ ձեռնհասութիւնը ժխտե՛լ է, Աստուծոյ ամենակալութիւնը չնանչնալ է: Եթէ մենք կը հաւատանք որ Աստուած ամենակարող է՝ ինչո՞ւ երկրաւոր կեանքի համար հոգ պիտի ընենք: Հոգ ընելը՝ մեր մէջ կը սպաննէ Աստուծոյ նախախնամութեան եւ հոգատարութեան հանդէպ վստահութեան ամէն զգացում, միշտ ինչպէս փուշերը կը սպաննեն սերմին մէջ անելու եւ պտղաբերելու ամէն կարողութիւն:

10.- Յիսուս կ'ուզէ ուսուցանել մեզի թէ փուշերը, այլ խօսքով՝ «երկրաւոր կեանքի հոգերը» թոյլ չեն տար որ Աստուծոյ խօսքին սերմը մեր մէջ տեղ գտնէ եւ արմատ ունենայ: Այո՛, «երկրաւոր կեանքի հոգերը» կը ջլատեն մեր մէջ Աստուծոյ խօսքին հաւատալու ամէն կարողութիւն: «Երկրաւոր կեանքի հոգերը» կը մեղցնեն մեր մէջ Աստուծոյ կամքին հնազանդելու ամէն պատրաստակամութիւն:

«Երկրաւոր կեանքի հոգերը» կը ցամփեցնեն մեր մէջ Աստուծոյ եւ մեր նմաններու ծառայութեան նուիրուելու ամէն ախորժակ: «Երկրաւոր կեանքի հոգերը» կը շիջեցնեն մեր մէջ աղօթքի ու սիրոյ ամէն կրակ: «Երկրաւոր կեանքի հոգերը» մեզ կը հեռացնեն Աստուծմէ ու աստուածայինէն, երկինքէն ու երկնայինէն, բարիէն ու բարութենէն:

11.– Երբ Յիսուս փուշերը կը ներկայացնէ Աստուծոյ խօսքին սերմը խեղդող իրականութիւն իբրեւ, կարծէք նաեւ կ'ուզէ յիշեցնել մեզի, թէ դիւրին բան չէ ձերբազատիլ երկրաւոր կեանքի հոգերէն, դիւրին բան չէ կռուիլ մեղքին դէմ: Պարտիզպանին համար դիւրի՞ն է մաքրել փուշերն ու տատասկները իր պարտէզէն: Երկրագործին համար դիւրի՞ն է որոմը գտնել ցորենէն: Ո՛չ: Նման աշխատանք գգուշաւորութիւն կը պահանջէ, աշխատանք, ջանք ու բրտիւնք կ'ենթադրէ: Ժամանակ, համբերութիւն ու յարատեւութիւն կ'ուզէ:

12.– Բացատրեցիմք թէ ինչպէս «երկրաւոր կեանքի հոգերը» կը սպաննեն մեր մէջ Աստուծոյ խօսքին սերմը: Հիմա երկու խօսք ըսեմք «հարստութեան հրապոյր»ին մասին: Նախ ըսեմ, թէ Յիսուս երբ կը խօսի փուշերու մասին, չ'ըսեր թէ այդ փուշերը կը ներկայացնեն «երկրաւոր կեանքն ու հարստութիւնը»: Յիսուս «երկրաւոր կեանք» ըսելու փոխարէն, կ'ըսէ՝ «երկրաւոր կեանքի հոգեր»: Եւ «հարստութիւն» ըսելու փոխարէն, կ'ըսէ՝ «հարստութեան հրապոյր»: Ան ըսել կ'ուզէ, թէ փուշը՝ երկրաւոր կեանքը չէ, այլ երկրաւոր կեանքի համար հոգեր ընելն է: Փուշը՝ հարստութիւնը չէ, այլ՝ հարստութեան հրապոյրն է:

Արդարեւ, «երկրաւոր կեանք»ը Աստուծոյ պարգեւն է մեզի տրուած, բայց «երկրաւոր կեանքին հոգերը» մարդոց կողմէ ստեղծուած են: Հարստութիւնն ալ Աստուծոյ պարգեւն է, բայց «հարստութեան հրապոյրը»՝ Սատանային խաբէութիւնն է:

Յիսուս կը հաստատէ թէ «հարստութեան հրապոյրը» կը խեղդէ մարդուն սրտին մէջ նետուած «Աստուծոյ խօսքը, որ անպտուղ կը դառնայ իր մէջ»: Ինչո՞ւ Յիսուս հարստութիւնը կը կոչէ «հրապոյր» կամ «հրապուրիչ»: Բանի մը պատճառներով.–

ա.– Նախ ըսեմ, թէ հարստութիւն ունենալը մեղք չէ. մեղքը՝ թոյլ տալն է որ հարստութիւնը մեզ հրապուրէ, խաբէ, եւ մտածել տայ մեզի, թէ մենք կրնանք իր միջոցաւ մեր ուզածին հասնիլ, մեր ուզածը ընել: Այսպէս մտածողին մէջ, Աստուծոյ խօսքին սերմը չի կրնար տեղ ունենալ եւ պտղաբերիլ:

բ.– Հարստութիւնը «հրապոյր» կը կոչուի, որովհետեւ կրնայ հրապուրել ու խաբել մեզ, եւ մտածել տալ մեզի, որ մենք կրնանք վստա-

հիլ իրեն: Ան որ իր վստահութիւնը կը դնէ հարստութեան վրայ՝ Աստուծոյ խօսքը չի կրնար ներգործել իր մէջ:

գ.– Երբեմն հարստութեան հրապոյրը պատմաւ կ'ըլլայ որ կարծենք թէ մենք երբեք պիտի չսասանինք: Նման մտածում մը, մեր սիրտը կը փակէ Աստուծոյ խօսքին սերմին դիմաց:

դ.– Մեծն Գրիգորիոս կը բացատրէ թէ հարստութիւնը խաբուսիկ բան է, քանի յաւիտեանս մեզի հետ չի մնար: Խաբուսիկ է՝ որովհետեւ չի կրնար յագեցնել կարիքները մեր սրտին: Իսկական հարուստը Քրիստոս ինքն է որ կրնայ մեզ առաքիւնութիւններով հարուստ դարձնել, ուստի սիրելիներ, եթէ կ'ուզէք հարուստ ըլլալ՝ սիրեցէք իսկական հարուստը՝ Քրիստոսը...:

13.– Վերեւ ըսուածին լոյսին տակ, հետեւաբար, կրնանք ըսել, թէ՛ հարստութիւնը չէ որ մարդս կը խաբէ, այլ հարստութեան հրապոյրը ինք: Հարստութիւնը գէշ բան մը չէ, բայց մեզի համար գէշ բան մը կ'ըլլայ, երբ մեր յոյսը անոր վրայ կը դնենք: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Մեղադրելին իրերը չեն, այլ փտած միտքն է: Դուրս կրնաս հարուստ ըլլալ, առանց սակայն հարստութեան հրապոյրը ունենալու սրտիդ մէջ: Կրնաս այս աշխարհին մէջ ըլլալ, առանց որ այս աշխարհի հոգեբը քեզ խեղդեն»: Այլ գրիչ մը ըսած է. «Պէտք չէ մեղադրել դրամը, այլ՝ դրամի սխալ գործածութիւնը»:

«Իսկ ուրիշներ ալ ինկան լաւ հողի մէջ եւ պտուղ տուին, ոմանք մէկի տեղ հարիւր, ուրիշներ՝ վաթսուն եւ կամ երեսուն» (Մտ 13.8):
Քանի մը մատնանշումներ.–

1.– Որո՞ւ կը նմանի «լաւ հողը»: Յիսուս կը պատասխանէ այս հարցումին ըսելով. «Լաւ հողը կը նմանի այն մարդուն, որ կը լսէ Աստուծոյ խօսքը եւ կը հասկնայ ու պտուղ կու տայ, մէկի փոխարէն հարիւր, ուրիշ մը՝ վաթսուն, եւ ուրիշ մը՝ երեսուն» (Մտ 13.23):

Տոյց տուինք առաջին եւ երկրորդ դասակարգի մարդոց տարբերութիւնը, ապա ցոյց տուինք երկրորդ եւ երրորդ դասակարգի մարդոց տարբերութիւնը, իսկ հիմա, ոեւէ բացատրութիւն տալէ առաջ, նախ կ'անցնինք ցոյց տալու երրորդ եւ չորրորդ դասակարգի մարդոց տարբերութիւնը, որ կը կայանայ քանի մը կէտերու մէջ.–

ա.– Երրորդ դասակարգի մարդիկը կը նմանցուին «փուշերով ծածկուած հող»ի, իսկ չորրորդ դասակարգի մարդիկը «լաւ հող»ի:

բ.– Երրորդ դասակարգի մարդոց համար կ'ըսուի թէ կը լսեն Աստուծոյ խօսքը, իսկ չորրորդ դասակարգի մարդոց համար կ'ըսուի թէ կը լսեն եւ կը հասկնան:

գ.– Երրորդ դասակարգի մարդոց համար կ'ըսուի թէ անպտուղ կը մնան, իսկ չորրորդ դասակարգի մարդոց համար կ'ըսուի թէ պտուղ կու տան:

դ.– Երրորդ դասակարգի մարդոց համար Աստուծոյ խօսքին հնագանդելու արգելքները՝ «եքկրաւոր կեանքի հոգեք»ն ու «հարստութեան հրապոյր»ն են, իսկ չորրորդ դասակարգի մարդոց համար այդպիսի արգելքներ չկան:

2.– «Լաւ հողը կը նմանի այն մարդուն...»: Ինչո՞ւ համար այս վերջին դասակարգի մարդիկը կը կոչուին «լաւ հող»: Քանի մը պատճառներով.–

ա.– «Լաւ հող» ըսելով Քրիստոս չ'ակնարկեր ի բնէ բարի մարդոց, այլ կ'ակնարկէ նշմարտութիւնը սիրայօժար կերպով ունկնդրող եւ ընդունող մարդոց: Բոլոր անոնք որոնք կը սիրեն նշմարտութիւնը լսել, բայց մանաւանդ ապրիլ այդ նշմարտութիւնը՝ «լաւ հող» են, այսինքն՝ լաւ նկարագրի, լաւ հոգիի ու լաւ սրտի տէր մարդիկ են Քրիստոսի հայեացքով:

բ.– Հաւատացեալներ «լաւ հող» կը կոչուին, ո՛չ միայն որովհետեւ Աստուծոյ խօսքին սերմերը կ'ընդունին իրենց մէջ, այլեւ՝ որովհետեւ իրենց նմանները եւս կ'ընդունին: Արդարեւ, ինչպէս պարարտ հողը կ'ընդունի իր մէջ նետուած ամէն սերմ՝ մեծ թէ պզտիկ, տկար թէ զօրաւոր, այնպէս ալ մենք՝ հաւատացեալներս, պէտք է ընդունինք բոլոր մարդիկը՝ իրենց բոլոր տկարութիւններով, իրենց բոլոր խեղճութիւններով եւ թերութիւններով:

գ.– Հաւատացեալներ «լաւ հող» կը կոչուին, որովհետեւ Աստուծոյ խօսքին սերմերը անոնց մէջ լաւապէս կ'արմատաւորուին եւ առատ սնունդ ու աւիշ կը ստանան, ճիշդ ինչպէս բնական սերմերը պարարտ հողի մէջ կ'արմատաւորուին եւ առատ սնունդ ու աւիշ կը ստանան:

դ.– Վերջապէս, հաւատացեալներ «լաւ հող» կը կոչուին, որովհետեւ պտուղ կու տան, այլ խօսքով՝ արդիւնաբեր կեանք կ'ապրին:

3.– «Կը լսէ Աստուծոյ խօսքը եւ կը հասկնայ»: Համբուն եզերքին նմանող մարդուն համար կ'ըսուի թէ «չի հասկնար» Աստուծոյ խօսքը. ժայռոտ հողին նմանող մարդուն համար կ'ըսուի թէ «ուրախութեամբ կ'ընդունի» Աստուծոյ խօսքը. փուշերով ծածկուած հողին նմանող մարդուն համար կ'ըսուի թէ «Աստուծոյ խօսքը կը լսէ» բայց այդ խօսքը մէջը կը խեղդուի. իսկ լաւ հողի նմանող մարդուն համար կ'ըսուի թէ «կը լսէ Աստուծոյ խօսքը եւ կը հասկնայ»:

Միայն չորրորդ դասակարգի մարդոց համար է որ կը գործածուի «կը հասկնայ» բառերը: Ի՞նչ պէտք է հասկնալ «կը հասկնայ»

բացատրութեամբ: «Կը հասկնայ» չի նշանակեր՝ կը գիտնայ իմաստը կամ նշանակութիւնը իրեն ըսուած Աստուծոյ խօսքին: «Կը հասկնայ» չի նշանակեր՝ կ'ունենայ Աստուծոյ խօսքին գիտութիւնը: Այստեղ «կը հասկնայ» ըսելով, պէտք է հասկնալ թէ հաւատացեալ մարդը կ'իմանայ կամ կը հասկնայ իրեն ըսուած Աստուծոյ խօսքին նպատակը, գորութիւնը, իմաստութիւնը, գեղեցկութիւնը: Այո՛, հաւատացեալ մարդը կը հասկնայ բուն նպատակը Աստուծոյ խօսքին: Կը ներթափանցէ անոր ողն ու ծուծը եւ կ'ըմբռնէ հոն թաքնուած ամբողջ սնունդը:

4.- «Ու պտուղ կու տայ»: Հաւատացեալներ «լաւ հող» կը կոչուին, ո՛չ թէ որովհետեւ փուշ ու տատասկ չկայ անոնց կեանքին մէջ, ո՛չ թէ որովհետեւ քար ու ժայռ չկայ անոնց կեանքի քամբուն վրայ, այլ «լաւ հող» կը կոչուին, որովհետեւ պտուղ կը բերեն, արդիւնք կու տան: Արդիւնաբեր կեանք ունենալն է որ հաւատացեալը կը գատորոշէ անհաւատներէն կամ կեղծ հաւատացեալներէն:

Հաւատացեալներ իրե՛նք նաեւ իրենց կեանքին մէջ ունին զիրենք խեղդել ուզող փուշեր, իրե՛նք նաեւ ունին զիրենք ցաւցնող տատասկներ, իրե՛նք նաեւ ունին զիրենք վիրաւորող քարեր ու ժայռեր, բայց անոնք չեն ընկնուիր անոնց հարուածներուն տակ, տեղի չե՛ն տար, նահանջ չե՛ն արձանագրեր, այլ կը շարունակեն ապրիլ Քրիստոսի՝ հետ ու Քրիստոսի՝ համար, մինչեւ որ պտո՛ւղ տան, առա՛տ պտուղ:

Գրիչ մը կը բացատրէ, թէ նշմարիտ հաւատացեալներ չեն կրնար ազատիլ մեղքի քարկծումներէն, բայց անոնք բնականօրէն ազատ են մեղքի տիրապետութենէն:

5.- «Մէկի փոխարէն հարիւր, ուրիշ մը՝ վաթսուն, եւ ուրիշ մը՝ երեսուն»: Այս բառերուն կապակցութեամբ քանի մը հակիրճ հաստատումներ.–

ա.– 4-րդ դարու հեղինակ՝ Սուրբ Յերոնիմոս, կը բացատրէ թէ թիւ 30-ը կը ներկայացնէ ամուսնացեալ զոյգերը որոնք մաքուր սիրոյ յարաբերութեան մէջ են իրարու եւ Աստուծոյ հետ, թիւ 60-ը կը ներկայացնէ այրին եւ որբեւարին որ ուրախութեամբ կը տանի այրիութեան ու որբեւարութեան տառապանքը, իսկ թիւ 100-ը կը ներկայացնէ կոյսերը, որոնք իրենք զիրենք ամբողջութեամբ նուիրած են Աստուծոյ:

բ.– Ուրիշ հեղինակ մը ըսած է. «Թիւ 30-ը կը ներկայացնէ մարդուն պատանութեան շրջանը՝ ուր մարդ կոչուած է որոշ չափով պտուղ բերելու Քրիստոսի փառքին համար, թիւ 60-ը կը ներկայացնէ մարդուն չափահասութեան շրջանը՝ ուր մարդ կոչուած է քիչ մը աւելի արդիւնաբեր կեանք մը ունենալու, իսկ թիւ 100-ը կը ներկայացնէ

մարդուն ամենէն հասուն տարիքը՝ յառաջացեալ տարիքը՝ ուր մարդ կրնայ առատ պտուղ տալ եւ օրհնութիւն դառնալ շատ շատերու»:

Տուեալ բացատրութիւնը հարկաւ միեւնոյն անձին կը վերաբերի եւ ո՛չ թէ երեք տարբեր անձերու: Ինչպէս միեւնոյն հողն է որ կեանք կու տայ իր մէջ նետուած տարբեր-տարբեր սերմերուն, այնպէս ալ միեւնոյն անձն է, որ 30 պտուղ կու տայ երբ տակաւին իր հաւատքի առաջին ֆայլերն է որ կ'ապրի, 60 պտուղ կու տայ երբ չափահաս կը դառնայ իր հաւատքին մէջ, եւ 100 պտուղ կու տայ երբ արդէն կատարելապէս հասունցած է իր հաւատքի կեանքին մէջ:

գ.- Ըստ ուրիշ մեկնութեան մը, թիւ 30-ը կը ներկայացնէ այն մարդիկը որոնք անգամ մը ընդունելէ ետք Քրիստոսի հաւատքը՝ կը սկսին իրենց սեփական ոյժին վստահիլ պտուղ բերելու համար, թիւ 60-ը կը ներկայացնէ այն մարդիկը որոնք մէկ կողմէ Աստուծոյ զօրութեան եւ առաջնորդութեան կը վստահին, իսկ միւս կողմէ՝ իրենց սեփական իմաստութեան եւ կարողութեան, իսկ թիւ 100-ը կը ներկայացնէ այն մարդիկը որոնք ամբողջութեամբ Աստուծոյ վստահած ու նուիրուած են եւ իրենք գիրենք ամբողջութեամբ Աստուծոյ կամքին ենթակայ դարձուցած են:

դ.- Թիւերուն տարբերութիւնը կը պարզէ որ բոլոր հաւատացեալները նոյն չափով եւ նոյն արագութեամբ չէ որ կ'անին ու արդիւնք կու տան, բայց հարկաւ չկա՛յ հաւատացեալ մը որ անպտուղ կեանք ունենայ: «Այգիի մշակներուն առակը», կամ «Քանգարներու» առակը բացատրած ատեն, մանրամասնօրէն խօսեցանք թէ ինչպէս հաւատացեալներ տարբեր-տարբեր վարձատրութիւններ պիտի ունենան երկինքի մէջ եւ բացատրեցինք թէ ի՛նչ պիտի ըլլան այդ վարձատրութիւնները: Հոս կրկնութիւն չընելու համար, պարզապէս կ'ուզեմ ըսել, թէ քանի տարբեր-տարբեր վարձատրութիւններ պիտի ըլլան, բնականօրէն տարբեր-տարբեր մակարդակներ կան եւ պիտի ըլլան հաւատացեալներուն մէջ:

Բոլոր հաւատացեալները նոյնչափ չեն անիր իրենց հաւատքին մէջ, իրենց սրբութեան մէջ, իրենց աղօթական կեանքին մէջ, Աստուծոյ հետ իրենց յարաբերութեան մէջ: Քիչ անողները կարծէք թիւ 30-ը կը ներկայացնեն, միջակ կերպով անողները թիւ 60-ը կը ներկայացնեն, իսկ շատ անողները թիւ 100-ը կը ներկայացնեն:

Պօղոս առաքեալ երբ կը խօսի հաւատացեալներուն յարուցեալ մարմիններուն մասին, ակնարկութիւն կ'ընէ արեւուն շփեղութեան, լուսինին շփեղութեան, եւ աստղերուն շփեղութեան (Ա.Կր 15.41): Ան ըսել կ'ուզէ (ասկէ առաջ այս մասին խօսած ենք), թէ որոշ հաւատացեալներու

փառքը երկինքի մէջ արեւո՛ւ նման պիտի ըլլայ, ուրիշ հաւատաց-
եալներու փառքը՝ լուսինի՛ նման, եւ ուրիշ հաւատացեալներու փառքը՝
աստղերու նման: Կրնանք ըսել թէ արեւու նման ճառագայթող հաւա-
տացեալները կը ներկայացնեն թիւ 100-ը, լուսինի նման փայլողները կը
ներկայացնեն թիւ 60-ը, իսկ աստղերու նման պսպղացողները կը
ներկայացնեն թիւ 30-ը:

Ե.- 30 60 եւ 100 թիւերը, ցոյց կու տան նաեւ թէ ամէն մէկ
հաւատացեալ իր կարողութեան համաձայն արդիւնք կու տայ կամ պէտք
է տայ: Յիսուս կ'ըսէ. «Որուն որ շատ տրուած է՝ շատ աւելի պիտի
պահանջուի, իսկ որուն որ աւելի շատ տրուած է՝ շատ աւելի պիտի
պահանջուի» (Ղկ 12.48): Եթէ մէկուն 30 պտուղ բերելու կարողութիւնը
տրուած է՝ երեսո՛ւ պտուղ կ'ակնկալուի անկէ: Եթէ մէկուն 60 պտուղ
բերելու կարողութիւնը շնորհուած է՝ վաթսո՛ւն պտուղ պէտք է բերէ: Իսկ
եթէ մէկու մը 100 պտուղ բերելու կարողութիւնը տրուած է՝ թող հարիւր
բերէ:

Եթէ 30 պտուղ բերելու կարողութիւն ունեցող անձը 30 բերէ՝ աւելի՛
պիտի գնահատուի ու վարձատրուի քան այն անձը որ 100 բերելու
կարողութիւն ունի եւ սակայն 80 պտուղ կը բերէ:

Սերմնացանին առակին կապակցութեամբ մեր խօսքը եզրակաց-
նենք հետեւեալ քանի մը կէտերը ձեր ուշադրութեան յանձնելով.-

1.- Չորս տարբեր հողերը՝ կը ներկայացնեն տարբեր-տարբեր
նկարագիր ունեցող մարդիկը: Հետեւաբար, տուեալ առակով Յիսուս
չորս տարբեր դասակարգի մարդոց մասին կը խօսի.-

Առաջին դասակարգի մարդիկը՝ իրենց ականջները Աստուծոյ
խօսքին դիմաց բոլորովին փակողներն են: Ասոնք ո՛չ բանալիք սիրտ
ունին եւ ո՛չ ալ տալիք ականջ ունին Աստուծոյ խօսքին: Ասոնք
գիտակցօրէն եւ կամաւորաբար Աստուծոյ խօսքը մերժողներն են:

Երկրորդ դասակարգի մարդիկը՝ թէպէտ իրենց ականջները չեն
փակած Աստուծոյ խօսքին դիմաց, եւ սակայն իրենց սիրտերը չեն
բացած: Ասոնք ականջի մարդիկ են, բայց ո՛չ սրտի:

Երրորդ դասակարգի մարդիկը՝ իրենց սիրտը Աստուծոյ խօսքին
դիմաց բացողներն են. բայց անոնց սիրտը բացուած է նաեւ
աշխարհային հրապոյրներու եւ կեանքի հոգերուն դիմաց:

Չորրորդ դասակարգի մարդիկը՝ իրենց սիրտը ամբողջութեամբ
Աստուծոյ խօսքին այլակերպիչ գօրութեան դիմաց բացողներն են:

2.- Միեւնոյն սերմերն են որ չորս տարբեր հողերու մէջ կը նետուին: Այո՛, միեւնոյն սերմերն են որ կը նետուին, եւ ո՛չ թէ ամէն մէկ հողի վրայ տարբեր սերմի տեսակ մը: Սա ցոյց կու տայ, թէ Քրիստոս Աստուծոյ միեւնոյն խօսման է, միեւնոյն աւետիսն է, միեւնոյն փրկութիւնն է, միեւնոյն արքայութիւնն է, որ կը պատգամէ, կը տարածէ եւ կը փարոզէ: Մարդկային ամէն դասակարգ իրեն յատուկ պատգամ չունի: Հարուստ կամ բարձր պաշտօն ունեցող մարդիկ իրենց յատուկ պատգամ չունին, ո՛չ ալ աղքատ կամ հասարակ մարդիկ՝ իրենց յատուկ: Բոլոր մարդիկը միեւնոյն պատգամը ունին իրենց ուղղուած: Եւ այս իրողութիւնը ուրիշ բան ցոյց չի տար, եթէ ոչ այն՝ որ Աստուած խտրութիւն չի դնէր մարդոց միջեւ, ոմանց գրաւիչ պատգամներ տալով, ուրիշներուն՝ անհրապոյր պատգամներ, ոմանց համար շատ աշխատելով, ուրիշներուն համար՝ քիչ աշխատելով:

3.- Երբ նկատի առնենք առաջին երեք դասակարգի մարդիկը, անոնք յատկօրէն ցոյց կու տան, թէ մէկը կրնայ ուրիշէ մը լաւ ըլլալ, բայց այդ չի նշանակեր որ պիտի ժառանգէ Աստուծոյ արքայութիւնը: Երկրորդ դասակարգի մարդիկը առաջին դասակարգի մարդոցմէն աւելի լաւ չե՞ն, եւ երրորդ դասակարգի մարդիկը երկրորդ դասակարգի մարդոցմէն աւելի լաւ չե՞ն: Վստահաբար: Ուրեմն, պարզ է որ մէկը միւսէն աւելի լաւ կրնայ սեպուիլ, բայց եւ այնպէս կրնայ դուրս մնալ արքայութենէն: Ասիկա օրինակ թող ըլլայ մեզի, որպէսզի մենք գմեզ չբաղդատենք իրարու հետ: Եթէ մենք ուրիշէն քիչ մը աւելի հաւատացեալ ենք՝ չի՛ նշանակեր որ պիտի փրկուինք: Եթէ մենք փորձութեանց դիմաց ուրիշէն քիչ մը աւելի համբերատար ենք՝ չի՛ նշանակեր որ արքայութիւն պիտի մտնենք:

4.- Նախորդ բաժնին մէջ ըսինք, թէ առաջին երեք դասակարգի մարդիկը ցոյց կու տան որ ոմանք ուրիշներէն կրնան տարբեր ըլլալ կամ աւելի լաւ ըլլալ: Երկրորդ դասակարգի մարդիկը՝ առաջին դասակարգի մարդոցմէն աւելի լաւ են, հակառակ այս իրողութեան, անոնք դատապարտութեան արժանի են: Երրորդ դասակարգի մարդիկն ալ երկրորդ դասակարգի մարդոցմէն աւելի լաւ են, բայց իրենք եւս դատապարտութեան ենթակայ պիտի ըլլան: Այս իրողութիւնը մեզի կը յիշեցնէ որ գեհե՛նի մէջ մակարդակներ կան: Գեհե՛ն նետուող բոլոր մարդիկը նոյն պատիժը պիտի չստանան, նոյնքան պիտի չտառապին: Ինչպէս արքայութեան մէջ վարձատրութեան տարբեր-տարբեր

աստիճաններ կան, նոյնպէս ալ գեհեհնի մէջ պատիժի տարբեր-տարբեր աստիճաններ կան:

5.- Սերմերուն նետուիլը թէ՛ ցամբուն եզերքը, թէ՛ ժայռոտ տեղ, թէ՛ փուշերուն մէջ, եւ թէ՛ պարարտ հողի մէջ, մէկ բան ցոյց կու տայ, այն՝ որ Քրիստոս Աստուծոյ փրկարար խօսքն ու շնորհքը փոխանցեց բոլոր դասակարգի մարդոց անխտիր, անոնք ըլլան «փշալից» թէ առաքինազարդ, ամբարիշտ թէ հաւատացեալ, հարուստ թէ աղքատ, բարի թէ չար, գիտուն թէ անգէտ, մեծ թէ պոտիկ, աննշան թէ նշանաւոր, հասարակ թէ բարձրաստիճան:

Ամենէն առաքինազարդ եւ ամենէն պղծալից մարդիկ նոյնքան եւ հաւասարապէս պէտք ունին Քրիստոսի փրկարար խօսքին ու շնորհքին:

6.- Տուեալ առակով Յիսուս կոչ կ'ուղղէ մեզի նմանելու պարարտ հողին, որպէսզի կարենանք պտուղ բերել, սիրոյ պտուղներ՝ անոնցմով փաղցրացնելու դառնացած սիրտերը. հեզութեան պտուղներ՝ անոնցմով հպարտները խոնարհութեան բերելու. ազնուութեան պտուղներ՝ անոնցմով կոպիտները ուղղութեան բերելու. համբերութեան պտուղներ՝ անոնցմով ուրիշներուն տոկալ սորվեցնելու. վկայութեան պտուղներ՝ անոնցմով օրինակ ըլլալու ուրիշներուն, որպէսզի իբրեւ ֆաջ վկաներ ոտքի կանգնին Տէր Յիսուսի փառքին համար:

ԱՆՊՏՈՒՂ ԹՉԵՆԻԻՆ ԱՌԱԿԸ

«Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թգենի մը տնկած էր: Թուզ ֆաղելու գնաց, բայց թգենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. "Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ ֆաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ": Այգեպանը պատասխանեց. "Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն"» (Ղկ 13.6-9):

Առակին մէջ յիշուած մարդը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը: Այգին՝ աշխարհն է, իսկ թգենին՝ հրեայ ժողովուրդը: Մեր երկնաւոր Հայրը ընտրեց հրեայ ժողովուրդը եւ գայն դրաւ այս աշխարհի այգիին մէջ եւ երեք տարիներ, այլ խօսքով՝ երկա՛ր ժամանակ տրամադրեց անոր, որպէսզի հաւատքի պտուղ բերէ: Բայց երբ տեսաւ որ հրեաներ պտուղ չեն բերեր, այգեպանին պատուիրեց որ ծառի մը նման կտրէ զանոնք որպէսզի անիմաստ կերպով տեղ չգրաւեն: Այգեպանը՝ որ Յիսուս ինքն է, ուզեց որ թգենին, այլ խօսքով՝ հրեայ ժողովուրդը տարի մըն ալ մնայ: Յաւելեալ տարին ակնարկութիւն է ամբողջ ժամանակաշրջանի մը, եւ ատիկա շնորհիք ժամանակաշրջանն է, ուր հրեաներ կրնային ընդունիլ Քրիստոսի փրկութիւնը եւ պողաբեր դառնալ:

Հիմա անցնինք ընդարձակ մեկնութեան:

«Մարդ մը կար, որ իր այգիին մէջ թգենի մը տնկած էր» (Ղկ 13.6): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Մարդ մը կար...»: Ո՞վ էր այս մարդը: Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն թէ յիշեալ «մարդը» Քրիստոս ի՛նքն է, իսկ այգեպանը՝ հոգեւոր հովիւներն են, որոնց պարտականութիւնն է բարեխօսել եւ աշխատանք տանիլ որ անապաշխար մեղաւորներ դարձի գան եւ պտուղ բերեն: Եւ սակայն, մեկնիչներուն ջախջախիչ մեծամասնութիւնը կը հաստատէ որ յիշեալ «մարդը» նոյնիման մեր երկնաւոր Հայրն է, իսկ այգեպանը՝ Քրիստոս ինք: Մենք այս երկրորդ մեկնութեան է որ համաձայն ենք:

2.– «Որ իր այգիին մէջ թգենի մը տնկած էր»: Ի՞նչ կը ներկայացնեն այգին եւ թգենին: Երեք բացատրութիւններ տրուած են.–

ա.– Ըստ Իգնատիոս Վարդապետին, այգին ուր կը տնկուի թգենին՝ եկեղեցին (հաւատացեալներու բազմութիւնը) ի՛նքն է: Եթէ այգին

առնենք «եկեղեցի» իմաստով, կը հասկնանք այն՝ որ Աստուած ունէր իրեն հաւատացողներու խումբ մը, որուն մէջ թգենին, այլ խօսքով՝ հրեայ ժողովուրդը իրեն յատուկ տեղը կը գրաւէր:

բ.– Ըստ ուրիշ մեկնիչներու այգին կը ներկայացնէ աշխարհը: Եթէ այգին ըմբռնենք «աշխարհը» իբրեւ, կը հասկնանք այն՝ որ Աստուած այս աշխարհը կը նմանցնէ այգիի մը, որուն մէջ կը տնկէ իր կողմէ ընտրուած թգենին, այինքն՝ հրեայ ժողովուրդը, որպէսզի այս ընտրեալ ժողովուրդին միջոցաւ, բոլոր հեթանոս ժողովուրդները դարձի բերէ նշմարիտ աստուածաշտուութեան:

գ.– Եւ տակաւին կան ուրիշ մեկնիչներ որոնք կ'ըսեն թէ այգին հրեայ ժողովուրդն է (Ես 5.7): Եթէ այգին ըմբռնենք «հրեայ ժողովուրդը» իբրեւ, կրնանք հասկնալ այն՝ որ Աստուած հրեայ ժողովուրդը կը նմանցնէ այգիի մը որ սակայն գուրկ չէ ծառերէն, այլ անոր մէջ ունի թգենի մը, եւ այդ թգենին կը ներկայացնէ ամէն մէկ հրեայ անհատ որ կոչոււմը ունի պտուղ բերելու: Այս իմաստով, ամէն մէկ հրեայ թգենի մը կը սեպուի, իսկ բոլոր հրեաները միասնաբար՝ այգի կը սեպուին: Եւ կամ՝ կրնանք մտածել, որ եթէ այգին հրեայ ժողովուրդն է, անոր մէջ տնկուած թգենին ուրեմն, կրնայ ակնարկութիւն ըլլալ հրեայ դեկավարներուն, որոնցմէ Աստուած պտուղ կ'ակնկալէր:

Յիշենք, որ Մեծն Կիւրեղ, Ամբրոսիոս եւ ուրիշներ, իրենք եւս կը հաստատեն թէ թուզի ծառը կը ներկայացնէ հրեական ժողովարանը, այլ խօսքով՝ հրեայ ժողովուրդը: Ամբրոսիոս կ'ըսէ, թէ ինչպէս ինքզինք խոշոր տերեւներով ծածկող թգենին խաբեց իր տէրը որ ի գուր պտուղի սպասած էր, ճիշդ նոյնպէս ալ, ժողովարանի մէջ Օրէնքի ուսուցիչները ունկնդիրներուն կը փոխանցեն խօսքեր ու օրէնքներ, որոնք անպտուղ թգենիի տերեւներու նման են:

Յ.– Ընդհանուր իմաստով եւ հոգեւոր մեկնութեամբ մը, կրնանք ըսել նաեւ որ այգին կը ներկայացնէ աշխարհը, իսկ թգենին՝ իւրաքանչիւր մարդ արարած, ինչպէս Ինգնատիոս Վարդապետ կը հաստատէ: Կրնանք աւելի ապահով կերպով գիտնալ, որ բոլոր իմաստներուն առընթեր, «թգենին» կ'ակնարկէ մարդ անհատին, եթէ երբեք նկատի առնենք համար մը վեր Յիսուսի արտասանած խօսքը. «Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք» (Ղկ 13.5): Յիսուս այս խօսքը յիշելէ անմիջապէս ետք է որ պատմեց անպտուղ թգենիին առակը, որպէսզի ցոյց տայ որ իւրաքանչիւր մարդ արարած թգենի մըն է որ պարտի պտուղ բերել: Պօղոս առաքեալ կը յիշէ թէ ի՛նչ են այն պտուղները զոր պարտին փրկութեան կոչին ընդառաջողներ բերել (Գղ 5.22-23):

4.- «Որ իր այգիին մէջ թօգնի մը տնկած էր»: Այս տողին վերաբերեալ երկու հակիրճ բացատրութիւններ եւս.-

ա.- «Իր» անձնական դերանունը կը պարզէ որ այգին Աստուծոյ այգին է, ինչ ալ ըլլայ անիկա, բերրի թէ խոպան, պտղատու թէ անպտուղ: Աստուած ի՛նքն է անոր տէրն ու տիրականը:

բ.- «Տնկած»: Այս բառը յստակօրէն ցոյց կու տայ որ Աստուած ի՛նքն է թօգնին տնկողը, այլ խօսքով՝ ի՛նքն է հրեայ ժողովուրդը ընտրողը, ի՛նքն է գայն հաստատողը, խնամողը, կենսաւորողը: Հրեայ ժողովուրդը ինք չէր որ ընտրեց զԱստուած, այլ Աստուած ի՛նքն էր որ գայն ընտրեց: Ինք չէր որ ինքզինք տնկեց Աստուծոյ այգիին մէջ, այլ Աստուած ի՛նքն էր որ գայն տնկեց իր այգիին մէջ:

5.- «Թօգնի մը տնկած էր»: Ինչո՞ւ Քրիստոս թօգնիի ծառին օրինակը կու տայ եւ ո՛չ թէ այլ ծառի մը օրինակը: Քանի մը պատճառներով.-

ա.- Պաղեստինը թօգնիներով հարուստ շրջան մըն էր: Թօգնիի օրինակը առնելով՝ Յիսուս կրնար իր ուսուցումը աւելի յստակ դարձնել:

բ.- Թօգնիի ծառը Պաղեստինի բնակիչներուն համար իր յատուկ իմաստը ունէր. պատուական ծառ մը կը սեպուէր, որովհետեւ ատիկա խաղաղութեան եւ ապահովութեան նշան էր (Գ.Թգ 4.25: Մբ 4.4):

գ.- Թօգնիի ծառը ունի առաւելութիւններ որ ուրիշ ծառեր չունին, ինչպէս օրինակ, թօգնիի տերեւները լայն եւ խոշոր կ'ըլլան, եւ ասիկա պատճառ կ'ըլլայ որ մարդիկ անոր շուքին տակ ապաստան գտնեն: Ամառ ատեն երբ արեւը կիզիչ ըլլար, Պաղեստինցիներ սովորութիւն ունէին թօգնիներու տակ նստելու որպէսզի գովանային: Ինչպէս արեւէն կիզուած մարդիկ շուք տեղ կը փնտոտեն, այնպէս ալ մեղքի արեւէն կիզուած մարդիկ՝ կարիք ունին Քրիստոսով մեղքի բոցը շիջեցուցած մարդոց: Սիրելի՛ ընթերցող, դուն կրնա՞ս հոգեկան խոռովութենէ տառապող մարդոց համար խաղաղաբեր եւ ապահովութիւն ներշնչող թօգնի մը ըլլալ:

դ.- Պէտք է յիշել նաեւ որ հրեայի մը համար սովորական բան մըն էր թօգնիի տակ նստիլ եւ ընթերցում կամ աղօթք կատարելը (Յն 1.48):

ե.- Ամբոստիոս գեղեցկօրէն ցոյց կու տայ թօգնիին տարբերութիւնը ուրիշ ծառերէ: Ան կ'ըսէ թէ թօգնին իր պտղաբերութեամբ տարբեր է ուրիշ ծառերէ: Ուրիշ ծառերու պարագային, ծաղիկը պտուղէն առաջ կ'երեւի, եւ ծաղիկին երեւումը՝ պտուղին գալուստն է որ կը ծանուցէ. բայց այդպէս չէ թօգնիի ծառը: Թօգնիի ծառը առանց ծաղիկներ յայտնաբերելու՝ ուղղակիօրէն պտուղը հանդէս կը բերէ:

Դարձեալ, ուրիշ ծառերու պարագային, ծաղիկը կ'իյնայ երբ պտուղը գայ անոր տեղը գրաւելու, բայց թզենիի պարագային, առաջին պտուղը կը թափի եւ անոր տեղ ուրիշ պտուղ կը գրաւէ... առաջին պտուղը կը թափի եւ կը չորնայ տկար ցօղունը, տեղ տալով ուրիշ ցօղունի մը որպէսզի առաւել եւս օգտուի ծառէն եկած հիւթէն. բայց առաջին անգամ երեւցած, այլ խօսքով՝ սկզբնական պտուղներէն ոմանք չեն թափիր, որովհետեւ անոնք հաստատուած կ'ըլլան կարն ցօղուններու վրայ...:

Հրեաներուն մեծ բաժինը կը նմանէին առաջին պտուղներուն, որոնք տկար էին, եւ որոնք ինկան՝ տեղ տալու համար մեզի, այլ խօսքով՝ որպէսզի մե՛նք գրաւենք անոնց տեղը: Այո՛, անոնք անօգտակար պտուղներու նման ինկան որովհետեւ հաւատքի գործեր չունէին, եւ անոնց տեղը եկանք առնելու մենք՝ Քրիստոսի նոր եկեղեցին...: Իսկ սկզբնական պտուղներէն անոնք որոնք չինկան՝ կը ներկայացնեն այն հրեաները որոնք հաւատացին Յիսուսի: (Իմաստային թարգմանութիւն):

6.-- «Իր այգիին մէջ թզենի մը տնկած էր»: Ուշագրաւ են «այգիին մէջ» բառերը: Սովորաբար թզենիներ այգիներուն մէջ չէր որ կը տնկուէին, այլ անոնց եզերքները (Մտ 21.19): Եթէ սա՛ է իրողութիւնը, հապա ինչո՞ւ Քրիստոս կը խօսի այգիի՛ն մէջ տնկուած թզենիի մասին, փոխանակ խօսելու այգիին եզերքը՝ քամբուն վրայ տնկուած թզենիի մը մասին: Ան թզենին կը ներկայացնէ այգիին մէջ տնկուած, ցոյց տալու համար որ իւրաքանչիւր մարդ Աստուծոյ այգիին մէջ իր յատուկ տեղը ունի: Ան եզերքը չէ թողուած, այսինքն, չէ անտեսուած, չէ մոռցուած: Թզենիին այգիի մէջ կամ մէջտեղ ըլլալը, կը պարզէ որ մարդը Աստուծոյ սիրոյն ու հոգատարութեան մէջ կեդրոնական տեղ կը գրաւէ:

«Թուզ ֆաղելու գնաց, բայց թզենիին վրայ պտուղ չգտաւ» (Ղկ 13.6): Մի ֆանի նշումներ. --

1.-- Ինչո՞ւ թզենիին տէրը թուզ ֆաղելու գնաց: Ան չէ՞ր գիտեր որ թուզ չկար անոր վրայ: Այո՛, գիտէր: Բայց պտուղ ֆաղելու գնաց, որպէսզի ցոյց տար, թէ հասած էր ժամանակը պտուղ տալու: Պէ՛տք էր այլեւս ծառը պտուղ տար: Ամբրոսիոս անդրադառնալով այս կէտին՝ կ'ըսէ. «Տէրը պտուղ ֆաղելու գնաց, ո՛չ թէ որովհետեւ չէր գիտեր թէ թզենին առանց պտուղի էր, այլ որպէսզի ցոյց տար թէ հասած էր պտուղ հաւաքելու ժամանակը, եւ որպէսզի ցոյց տար թէ ինք ժամանակէն առաջ չէր եկած»:

2.-- Տէրը ինք թզենին տնկեց եւ իր իրաւունքն էր անկէ պտուղ ակնկալել: Ինչպէս պարտիզպանը պտուղ ստանալու նպատակով ծառ կը

տնկե՛ եւ ո՛չ թէ աննպատակ կերպով, այնպէս ալ Աստուած յատուկ նպատակով մը ընտրեց հրեաները: Ջանոնք ընտրեց ու թգենիի նման տնկեց անցեալի հեթանոս աշխարհի գրկին մէջ, որպէսզի անոնց միջոցաւ միաստուածութեան եւ նշմարիտ աստուածաշտուութեան հաւատքը տարածուէր ամէն տեղ: Իսկ դուն, սիրելի՛ ընթերցող, մտածե՞ր ես թէ Աստուած ինչո՛ւ քեզ «տնկած» է քու շրջապատիդ մէջ. մտածե՞ր ես թէ Տէրը ի՛նչ կ'ուզէ տարածել քու միջոցաւ միջավայրիդ մէջ:

3.- Թուզ չունեցող բայց առատ տերեւներ ունեցող թգենին կը նմանի հրեայ ժողովուրդին որ օրէնքներ ունէր բայց հաւատքի գործեր չունէր: Մեկնիչներ յանախ թգենիի տերեւները նմանցուցած են Մովսիսական օրէնքներուն, որոնք կարող չեն մարդուս կեանքը պողաբեր դարձնելու:

Ամբրոսիոս խօսելով Ադամին ու Եւային մասին, որոնք «թգենիի տերեւներ կարեցին ու իրենց ծածկոցներ ըրին» (Ծն 3.7), կը բացատրէ թէ անոնք կը ներկայացնեն Քրիստոսի ժամանակակից հրեաները, որոնք գործէն աւելի՛ խօսքի՛ն արժէք տուին, եւ փորձեցին իրենք գիրքներ ծածկել խօսքերու առատութեան մէջ: Արդ, ինչպէս Ադամ ու Եւա փորձեցին ծածկուիլ թգենիի տերեւներով ու պահուրտիլ պարտեզի ծառերուն ետին, այնպէս ալ, հրեաները փորձեցին լոկ Օրէնքի խօսքերուն տերեւներով ծածկուիլ, այլ խօսքով՝ հպարտանալ Մովսիսական Օրէնքով, առանց սակայն պտուղ բերելու: Այն հրեաները որոնք խօսքի կողմին նաեւ գործ չունեցան, կամ Օրէնքի կողմին՝ առաքինութիւններ չունեցան, Ամբրոսիոս գիրքներ կը նմանցնէ Ադամին ու Եւային որոնք թգենիի տերեւներ առին առանց թուզ առնելու, այլ խօսքով՝ փորձեցին ծածկուիլ Աստուծոյ հայեացքէն, փոխանակ գործնական քայլի դիմելու եւ իրենց գործած մեղքը խոստովանելու:

4.- Վերեւ ըսինք թէ ընդհանուր իմաստով մը թգենին կընայ ներկայացնել իւրաքանչիւր մարդ արարած, որ կոչուած է հաւատքի պողաբեր կեանք ապրելու եւ Աստուծոյ փառքին համար պտուղ բերելու: Այս ընելը դժուար էր այնքան ատեն երբ տակաւին Աստուծոյ Որդին չէր մարդեղացած: Բայց անգամ մը որ մարդեղացաւ, մենք կընանք յանձնուիլ իրեն եւ թոյլ տալ որ իր Հոգիով փորէ մեր սրտին հողը եւ իր շնորհներով պարարտացնէ զայն, որպէսզի իրմով պողառատ կեանք մը ապրինք, ինչպէս ինքն իսկ ըսաւ. «Ով որ ինձի միացած է եւ ես անոր՝ անիկա առատ պտուղ պիտի տայ, որովհետեւ առանց ինձի դուք ոչինչ կընաք ընել» (Յհ 15.5):

Իբրեւ Աստուծոյ կողմէ աշխարհի այգիին մէջ դրուած, այլ խօսքով՝ ստեղծուած մարդիկ, մենք պարտաւորութիւն ունինք Աստուծոյ

հանդէպ, եւ Աստուած մեզմէ առնելիք իրաւունք ունի, ահա թէ ինչո՛ւ ինք անձնապէս կու գայ թուզ քաղելու եւ ո՛չ թէ ուրիշ մը կը դրկէ. «Թուզ քաղելու գնաց, բայց թգեմիին վրայ պտուղ չգտաւ»: Մարդ անհատը պարտաւոր է գանազան առաքինութիւններով զարդարուիլ: Ան քանի որ Աստուծոյ այգիին մէջտեղ տնկուած՝ կը վայելէ Աստուծոյ գուրգուրանքն ու սէրը, պէտք է Պօղոս առաքեալի յիշած բոլոր պտուղները ունենայ իր անձին վրայ, այլապէս «պիտի կտրուի եւ կրակ նետուի» (Մտ 3.10):

«Այգեպանին ըսաւ.– Այս երբորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ» (Ղկ 13.7): Քանի մը բացատրութիւններ.–

1.– «Այգեպան»: Գրեթէ բոլոր մեկնիչները միաձայնութեամբ կը հաստատեն որ այգեպանը Քրիստոս ինքն է: Ինչո՞ւ Յիսուս ինքզինք կը կոչէ՝ «այգեպան»: Մեր Տէրը ինքզինք կը կոչէ՝ «այգեպան» որպէսզի ցոյց տայ մեզի թէ ինք հոգատար եւ խնամածու Փրկիչ է: Արդ, ինչպէս պարտիզպանը կը փորէ իր արտը եւ սերմեր կը սերմանէ անոր մէջ, այնպէս ալ Յիսուս իր քաղցրութեամբ կը փորէ մարդոց կարծրացած սիրտերը եւ իր խօսքին սերմերը հոն կը սերմանէ: Դարձեալ, ինչպէս պարտիզպանը վնասակար խոտերը կը հեռացնէ պարտէզէն որպէսզի սերմերը չխեղդուին, այնպէս ալ Յիսուս կը հեռացնէ մարդոցմէ ամէն տեսակի վնասակար մեղքեր, բնաւորութիւններ, սովորութիւններ, հաւատալիքներ, համոզումներ որոնք կրնան կասեցնել մեր հաւատքի անուամն ու պտղաբերումը: Դարձեալ, ինչպէս պարտիզպանը կը ջրէ արեւի տաքութենէն չորցած հողը որպէսզի կակուղցնէ գանիկա եւ ընդունակ դարձնէ իր մէջ սերմ կամ ծառ ընդունելու, այնպէս ալ Յիսուս իր սիրով ու Սուրբ Հոգիով կը փորձէ ջրել չորցած սիրտերը, որպէսզի կակուղցնէ գանոնք եւ ընդունակ դարձնէ Աստուծոյ բնակարան եւ Սուրբ Հոգիին տաճար դառնալու: Դարձեալ, ինչպէս պարտիզպանը ցանկապատ կը դնէ իր պարտէզին շուրջ որպէսզի անասուններ հոն մտնելով աւեր չգործեն, այնպէս ալ Յիսուս իր պաշտպանարար ներկայութեամբ ցանկապատի մը նման կը շրջապատէ մեզ, միշտ ինչպէս լեռները Նրուսադէմը կը շրջապատեն (Սղ 125.2), որպէսզի թոյլ չտայ որ չար ոգիները իրենց չար մտածումներով մտնեն մեր սրտէն, հոգիէն ու մտքէն ներս եւ աւերներ գործեն:

2.– Այգեպանը ըսինք կը ներկայացնէ Յիսուսը: Բայց վստահաբար կը ներկայացնէ նաեւ բոլոր արդար ու սուրբ մարդիկը որոնք կ'աղօթեն կորուստի քամբուն մէջ եղողներուն համար, եւ ո՛չ միայն կ'աղօթեն, այլեւ կը խնդրեն Աստուծմէ որ համբերատարութիւն ցուցաբերէ

անպտուղ մարդոց հանդէպ: Օգոստինոս կը հաստատէ թէ «բարեխօսող այգեպանը կը ներկայացնէ ամէն մէկ սուրբ որ կ'աղօթէ եկեղեցւոյ մէջ. կ'աղօթէ անոնց համար՝ որոնք դուրս են եկեղեցիէն»:

3.- Մեծն Գրիգորիոս կը հաստատէ թէ այգեպանը կը ներկայացնէ եպիսկոպոսներու դասը որոնք կոչուած են հոգ տանելու եւ հովուելու Տիրոջ այգին եկեղեցւոյ ցամբով:

4.- «Այգեպանին ըսաւ...»: Ո՞վ է ըսողը: Հայրն Աստուած ինք: Հայրը ինքն է որ Որդիին հետ կը խօսի, ճիշդ ինչպէս այլուր Որդին ինք Հայր Աստուծոյ հետ կը խօսի (Եբր 10.5-7): Ուշագրաւ է աստուածութեան երեք անձերուն գործակցութիւնը մարդ արարածին փրկութեան համար. եւ բնական է որ գործակցին, քանի անոնք մէկ կամք ունին, եւ նոյն կամքը ունին: Տեսէ՛ք հոս, օրինակ, Հայրը պտուղ կը սպասէ թգենիէն (մարդէն), Որդին ինքն ալ թգենին պողաբեր դարձնելու համար միջոցներ կը փնտռէ ու կ'առաջարկէ: Իսկ թգենին (մարդը) պողաբեր դարձնելու համար՝ Սուրբ Հոգին ի՛նքն պէտք է միջամտէ, որովհետեւ Սուրբ Հոգին ի՛նքն է որ կը փոխակերպէ մարդուն կեանքը:

Աստուածութեան երեք անձերը կը գործեն մարդը հաւատքի ու փրկութեան բերելու համար: Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրը մեր փրկութեան մէջ իր բաժինը ունի, ինչպէս թգենիին առակն իսկ ցոյց կու տայ: Օրինակ, Որդին ինքն է որ կը փորէ թգենիին շուրջ, բայց զանիկա կը փորէ Սուրբ Հոգիին հպումներով ու թակումներով: Իսկ Սուրբ Հոգիով փորուելէ եւ պողաբեր դառնալէ ետք՝ մարդը իր պտուղներով միասին կը յանձնուի կամ կը բերուի Հայր Աստուծոյ:

Աստուածաշունչին մէջ բազմահարիւր են այն օրինակները որոնք ցոյց կու տան թէ աստուածութեան անձերէն իւրաքանչիւրը իր դերը ունի մեր փրկութեան մէջ: Նիւթէն շատ չհեռանալու համար, կը բաւարարուիմ միայն մէկ օրինակ յիշելով: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Յաւիտեանական Հոգիին միջոցաւ Քրիստոս ինքզինքն որպէս անարատ զոհ Աստուծոյ մատուցանեց, որպէսզի իր արիւնով մաքրէ ձեր խղճմտանքը մեղքական գործերէ, եւ դուք կարենաք կենդանի Աստուածը պաշտել» (Եբր 9.14): Տուեալ համարին համաձայն, մեզ մաքրելու համար՝ Որդին ինքզինքն Հօր Աստուծոյ կ'ընծայէ Սուրբ Հոգիին միջոցաւ: Աւելի յստակացնելու համար, կրնանք հետեւեալ ձեւով դնել հարցը. այստեղ ունինք մէկը որ ինքզինքն կ'ընծայէ՝ որ Որդին է. ունինք մէկը որուն միջոցաւ ընծայոււմը տեղի կ'ունենայ՝ որ Սուրբ Հոգին է. եւ ունինք մէկը որ ընծան ընդունողն է՝ որ Հայրն է: Ահա թէ ի՛նչպէս Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրը իրեն յատուկ ընելիք մը ունի ի խնդիր մեր մաքրութեան ու փրկութեան:

5.- «Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ ֆաղելու, բայց չեմ գտներ»: Քանի մը բացատրութիւններ.-

ա.- «Այս երրորդ տարին է...»: Ամէն բանէ առաջ, այս բառերը մատնանիշ կ'ընեն այն լայն համբերատարութիւնն ու ներողամտութիւնը որ Աստուած կը յայտնաբերէ մարդոց հանդէպ:

բ.- Ուրիշ մեկնիչներ կ'ըսեն թէ «երեք տարի» բացատրութիւնը ակնարկութիւն է մարդուն կեանքին գլխաւոր երեք հանգրուաններուն՝ մանկութեան, երիտասարդութեան եւ ծերութեան: Աստուած մարդուն փրկութիւնը կը հետապնդէ իր մանկութենէն սկսեալ մինչեւ անոր ծերութիւնը եւ վերջին շունչը:

գ.- Սուրբ Գիրքի ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի դիտել կու տայ որ մեկնիչ հայրեր յիշեալ երեք տարիները ակնարկութիւն կը նկատեն երեք տարբեր ժամանակաշրջաններու: Առաջին ժամանակաշրջանը դրախտին մէջ մարդուն անկման ժամանակաշրջանն է. երկրորդ ժամանակաշրջանը Մովսէսի միջոցաւ Օրէնքի տրուելունը կանխող ժամանակաշրջանն է. իսկ երրորդ ժամանակաշրջանը նոյնիման Օրէնքի ժամանակաշրջանն է: Յիշեալ երեք ժամանակաշրջաններուն ալ, ընդհանրապէս մարդը եւ մասնաւորաբար հրեայ ժողովուրդը մնաց անպտուղ:

դ.- Եկեղեցւոյ հայրերէն՝ Ամբրոսիոս, խօսելով յիշեալ «երեք տարիներ»ուն մասին, որոնց ընթացքին Աստուած եկաւ մարդուն եւ զանիկա անպտուղ գտաւ, կը հաստատէ, թէ Աստուած առաջին անգամ եկաւ Աբրահամին (որուն հետ թլփատութեան ուխտ մը կնքեց): Երկրորդ անգամ եկաւ Մովսէսին (Օրէնքը տալով անոր): Երրորդ անգամ եկաւ Մարիամին (մարդեղանալով անոր որովայնին մէջ՝ որպէսզի Շնորհքը պարգեւէ): Այլ բացատրութեամբ, Տէրը եկաւ ՈՒԽՏՈՎ (Աբրահամի միջոցաւ), ՕՐԷՆՔՈՎ (Մովսէսի միջոցաւ), եւ ՄԱՐՄԻՆՈՎ (Մարիամի միջոցաւ): Եկաւ ՈՒԽՏՈՎ՝ որպէսզի մաքրէ, եկաւ ՕՐԷՆՔՈՎ՝ որպէսզի սրբէ, եւ եկաւ ՄԱՐՄԻՆՈՎ՝ որպէսզի արդարացնէ: Ուստի, թլփատութիւնը կը մաքրէ, Օրէնքը կը սրբէ եւ Շնորհքը կ'արդարացնէ...: Բայց հրեայ ժողովուրդը չկրցաւ մաքրուիլ որովհետեւ հոգիի թլփատութիւնը չընդգրկեց, այլ միայն մարմնաւոր թլփատութիւնը: Ո՛չ ալ կրցաւ սրբուիլ, որովհետեւ մարմնաւորին, այլ խօսքով՝ Օրէնքի տառին կառչեցաւ, թէպէտ Օրէնքը ինք «հոգեւոր է» (Հո 7.14): Ո՛չ ալ կրցաւ արդարանալ Քրիստոսի շնորհքով, որովհետեւ չզոյգաց իր մեղքերուն համար..., ասոր համար ալ զինք կտրելու հրամանը արձակուեցաւ: Բայց Այգեպանը (Յիսուս), որ եկած էր ինչպէս հրեաներուն համար, այնպէս ալ հեթանոսներուն համար, միջամտեց որ ծառը չկտրուի, քանի վստահ

էր որ հրեայ ժողովուրդը կրնայ փրկուիլ (եթէ երբեք ընդունի Փրկիչը): Ահա թէ ինչու ըսաւ. «Թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ»: (Ագատ եւ իմաստային թարգմանութիւն):

ե.- Եկեղեցւոյ հայրերէն ուրիշ մը, խօսելով յիշեալ «երեք տարիներ»ուն մասին կը բացատրէ թէ Աստուած երեք անգամ պահանջեց մարդէն որ պտուղ տայ բայց մարդը չտուաւ: Առաջին անգամ դրախտին մէջ պահանջեց հնազանդութիւն Ադամէն ու Եւայէն բայց անոնք անհնազանդ գտնուեցան: Երկրորդ անգամ պահանջեց կուռքեր չչինել բայց Ահարոն շինեց Ոսկի Հորթը: Իսկ երրորդ անգամ պահանջեց որ հրեաներ ընդունին իր Որդին իբրեւ խոստացեալ Փրկիչը բայց անոնք մերժեցին:

զ.- Համաձայն Մեծն Կիւրեղի, «երեք տարիներ»ը որոնք անպտղաբերութեամբ յատկանշուած են, կը ներկայացնեն հրեայ ժողովուրդին կեանքին ու պատմութեան հիմնական երեք շրջանները, որոնց ընթացքին հրեաներ հաւատքի պտուղ չտուին: Առաջին շրջանը, Մովսէսի, Ահարոնի եւ իր զաւակներուն ժամանակաշրջանն էր, որոնք քահանայութեան նամբով ծառայեցին Աստուծոյ, Օրէնքին համաձայն: Երկրորդ շրջանը, Յեսուի եւ Դատաւորներուն ժամանակաշրջանն էր: Իսկ երրորդ շրջանը, երանելի մարգարէներուն ժամանակաշրջանն էր մինչեւ Յովհաննէս Մկրտիչ: Այս երեք ժամանակաշրջաններուն ալ ընթացքին հրեայ ժողովուրդը անպտուղ մնաց:

6.- «Ուստի կտրէ՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Քանի մը մատնանշումներ.-

ա.- «Կտրէ՛ գայն»: Այս երկու բառերը պէտք է լուրջ կերպով մտածել տան մեզի մեր անձերուն մասին եւ պէտք է սարսափով լեցնեն մեզ եթէ երբեք անպտուղ թգեմիի նման ենք: Եւ ո՞վ է պտուղ չունեցող մարդը եթէ ոչ ան՝ որ Յիսուսը չունի իր սրտին մէջ: Յիսուս ինքն իսկ ըսաւ թէ մենք առանց իրեն չենք կրնար պտուղ տալ (Յհ 15.4):

բ.- «Կտրէ՛ գայն»: Այս բառերը նաեւ կը յիշեցնեն մեզի որ միայն Աստուած ինք իրաւունք եւ իշխանութիւն ունի կտրել տալու հրամանը արձակելու, այլ խօսքով՝ դատաստան ընելու, ուստի մենք պէտք է զգոյշ ըլլանք դատելու մեր նմանները:

գ.- Մեծն Կիւրեղ կը հաստատէ թէ երբ Աստուած տեսաւ որ հրեայ ժողովուրդը անպտուղ մնաց երեք տարիներուն, այլ խօսքով՝ Մովսէսի ու Ահարոնի, Յեսուի ու Դատաւորներուն, երանելի մարգարէներուն ու Յովհաննէս Մկրտիչի ժամանակաշրջաններուն, ստիպուած եղաւ այգեպանին ըսելու. «Կտրէ՛ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ

գրաւէ»: Տուեալ բառերով, կարծէ՛ք այգիին տէրը ըսել կ'ուզէ որ անպտուղ թօքնին պէտք է հանուի որպէսզի ուրիշ մը անոր տեղը տնկուի: Եւ ալ այդպէս եղաւ: Ռոմվիեաւսի հեթանոսներ կանչուեցաւ գրաւելու Իսրայէլացիներուն տեղը եւ անոնց ժառանգութեան տիրանալու: Այո՛, հեթանոսներ իրե՛նք եղան Աստուծոյ նո՛ր ժողովուրդը, որոնք լաւ սերմերու նման ցանուեցան Աստուծոյ պարտեզին մէջ, եւ որոնք պտուղ բերին...:

դ.- «Ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Զգարմանանք Աստուծոյ այս խօսքին վրայ: Օրինակը առնենք մեր անձերէն: Եթէ մեզմէ մէկը պարտեզ մը ունենար, պիտի ընդունէ՞ր իր պարտեզին մէջ թողուլ ծառ մը որ երբեք տարիներէ ի վեր պտուղ չի տար: Եթէ այդպիսի անպտուղ ծառ մը ըլլար, գանիկա արմատէն պիտի չվերցնէի՞նք որպէսզի ուրիշ մը անոր տեղը տնկէինք:

ե.- «Անիմաստ կերպով տեղ գրաւէ» բառերը ցոյց կու տան որ ամէն մարդ իր յատուկ տեղը եւ իրեն յատուկ գործ մը ունի կատարելիք Աստուծոյ ծրագիրին մէջ: Մարդ «անիմաստ կերպով տեղ» գրաւած կ'ըլլայ եթէ երբեք անիմաստ եւ աննպատակ կեանք մը ապրի: Առանց Աստուծոյ ապրուած կեանք մը՝ անիմաստ կեանք է:

«Այգեպանը պատասխանեց.- Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ» (Ղկ 13.8): Քանի մը մատնանշումներ.-

1.- Աստուած կտրել կը հրամայէ ծառը, բայց Յիսուս տարի մը եւս ժամանակ տալ կը պահանջէ: Այստեղ կը տեսնենք թէ ինչպէս Յիսուս փաստաբանի մը նման կը պաշտպանէ մեր ու բոլոր մեղաւորներուն դատը մեր երկնաւոր Հօր դիմաց: Այո՛, հոս Քրիստոս իր բարեխօսի ու միջնորդի հանգամանքով է որ հանդէս կու գայ (Ա.Տմ 2.5: Ա.Յե 2.1) ինչպէս դիտել կու տայ Մեծն Կիւրեղ: Բայց Քրիստոս միայն չի բարեխօսեր ու չի միջնորդեր, ո՛չ ալ մեր երկնաւոր Հօրմէն տարի մը եւս համբերութիւն պահանջելով կը գոհանայ, այլ կը շարունակէ ամէն նիգ ու ջանք թափել մեզ պողատու ծառի վերածելու համար, եւ այդ մէկը կ'ընէ ինք անձամբ, ինչպէս կ'ըսէ. «Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ»: Մարդիկ իրենց փրկութիւնը Քրիստոսի կը պարտին եւ ո՛չ թէ այսինչ կամ այնինչ բարոգիչին, այսինչ կամ այնինչ հոգեւոր կեանք ապրող անհատին: Եթէ Յիսուս մեր սրտին հողը չփորէ եւ մեզ չնորոգէ, մարդիկ որքան ալ կ'ուզեն թող խօսին, անոնք չեն կրնար մեզ նորոգութեան առաջնորդել:

2.- «Թող այս տարի ալ մնայ»: Զորբորդ տարին է ասիկա: Ի՞նչ կը պատկերացնէ չորբորդ կամ յաւելեալ այս տարին: Տեսանք թէ որոշ

մեկնիչներ «երեք տարիներ»ը ակնարկութիւն կը նկատեն գլխաւոր երեք ժամանակաշրջաններու: Առաջինը՝ դրախտին մէջ մարդուն անկման ժամանակաշրջանն է: Երկրորդը՝ Մովսէսի միջոցաւ Օրէնքի տրւելութիւնը կանխող ժամանակաշրջանն է: Իսկ երրորդը՝ Օրէնքի ժամանակաշրջանն է: Մեկնիչներ կը հաստատեն թէ մարդ արարածը դրախտին մէջ իր անկումէն ետք՝ չկրցաւ վերականգնիլ, ո՛չ ալ կրցաւ վերականգնիլ հետագային՝ երբ տակաւին Օրէնքը չէր տրուած, եւ ո՛չ ալ կրցաւ վերականգնիլ Օրէնքի ժամանակաշրջանին: Ահա թէ ինչո՛ւ տարի մը եւս իբրեւ առիթ տրուեցաւ իրեն, եւ վերջին այս տարին ակնարկութիւն է ՇՆՈՐՀՔԻ ժամանակաշրջանին որ Քրիստոսով յայտնուեցաւ: Եթէ մարդ մերժէ ընդունիլ Քրիստոսի փրկարար շնորհքը, այլեւս ուրիշ միջոց չի մնար փրկութեան, այլ պարզապէս կը կտրուի եւ կրակ կը նետուի:

3.- «Թող այս տարի ալ մնայ»: Փառք չտա՞նք Յիսուսին այս բառերուն համար: Ահա ան մեր երկնաւոր Հօրմէն տարի մը եւս, ժամանակ մը եւս, առիթ մը եւս, պատեհութիւն մը եւս կը խնդրէ մեզի համար: Ինչպէս Յիսուս ամէն անգամ երբ մեղանչեմք ու գղջանք՝ կը ներէ ու առիթ մըն ալ կը շնորհէ, այնպէս ալ մենք, ամէն անգամ երբ մարդիկ վշտացնեն մեզ ու գղջան (կամ չգղջան), ներե՛մք անոնց, որպէսզի առիթ տուած ըլլանք անոնց ցանկնալու Յիսուսի սէրն ու փաղցրութիւնը եւ դարձի գալու: Կրնա՞նք մեզ չարչարողներուն համար աղօթել ըսելով. «Ո՛վ Տէր, այս տարի եւս զինք պահէ: Պահէ զինք շնորհքի ժամանակաշրջանին: Թոյլ տուր որ մնա՛ն մեղաւորները, թոյլ տուր որ մնա՛ն անհաւատները, թոյլ տուր որ մնա՛ն ամուլները որոնք պտուղ չեն բերեր. ես անոնց շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ. գուցէ պտուղ տան...» (Օգոստինոս):

4.- Թէեւ Աստուծոյ համբերատարութեան մասին կը կարդանք առակին մէջ, բայց առակը միաժամանակ կը պարզէ որ Աստուծոյ համբերութիւնը չափ ու սահման ունի: Ա՛յս է որ կը պարզէ այգեպանին խօսքը ուղղուած այգիին տիրոջ. «Տէր, թող այս տարի ալ մնայ»: Այո՛, տարի մը եւս, եւ եթէ դարձեալ պտուղ չտայ ծառը՝ կը կտրուի եւ կրակ կը նետուի:

5.- «Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ»: Ի՞նչ պէտք է հասկնալ տուեալ խօսքով: Կամ՝ ի՞նչպէս կը փորուի «շուրջի հողը»: Քանի մը կերպերով.–

ա.– Յիսուս առաջին անգամ հրեաներուն սրտի կարծրացած հողը փորեց իր փարոզութեամբ, իր կենսատու խօսքերով:

բ.– Անոնց սրտի հողը փորեց իր կատարած հրաշքներով: Եթէ Յիսուս միայն խօսէր առանց երբեք հրաշքներ գործելու՝ հաւանաբար իրաւունք ունենային մերժելու գինք:

գ.– Անոնց սրտի հողը փորեց սուրբ առաքեալներուն կատարած քարոզութեանց միջոցաւ (գաղափարը Ամբրոսիոսէն):

դ.– Անոնց սրտի հողը փորեց Սուրբ Հոգիին միջոցաւ: Այսօր ալ Սուրբ Հոգիին միջոցաւ է որ Աստուած կը փորէ մեր սրտին հողը: Մեզմէ ո՞վ իր ամենօրեայ կեանքին ընթացքին չէ գգացած Սուրբ Հոգիին հոծիւններն ու հպումները իր սրտին մէջ. ասիկա մեր սիրտը փորել չի՞ նշանակեր:

ե.– Այսօր Աստուած մարդոց սիրտը կը փորէ փորձութեանց, նեղութեանց, հիւանդութեանց եւ այլ տեսակի պատահարներու միջոցաւ: Յաճախ փորձութիւնները չե՞ն որ մարդիկը դարձի կը բերեն Աստուծոյ:

զ.– Աստուած կրնայ մարդուն սրտին հողը փորել, այլ խօսքով՝ մարդուն սրտին խօսիլ իր նմաններուն միջոցաւ, հիւանդի մը միջոցաւ, անտեսուածի մը միջոցաւ, մանուկի մը միջոցաւ, սիրելիի մը կամ թշնամիի մը միջոցաւ, ուսեալի մը կամ անուսի մը միջոցաւ:

է.– Աստուած այսօր ամենէն շատ մարդոց սիրտը կը փորէ Աստուծոյ խօսքին՝ Աստուածաշունչին միջոցաւ:

6.– «Ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ»: Ամփոփ կերպով բացատրեցինք թէ ի՞նչ են այն կերպերը որոնց միջոցաւ Յիսուս կը փորէ մարդուն սրտին հողը: Հիմա հարց կու տանք թէ ի՞նչ կը նշանակէ փորել մարդուն սրտին հողը: Քանի մը նշումներ.–

ա.– Եթէ հոս յիշուած հողը մարդուն սիրտն է, ուստի, «հողը փորել» կը նշանակէ՝ դպնալ մարդուն սրտին եւ հրահրել զանիկա դէպի նշմարիտ վերածնունդ եւ կենդանութիւն: Արդարեւ, հողը փորելը՝ մարդուն սիրտը կենդանացնել է, նորոգել է:

բ.– «Հողը փորել» կը նշանակէ՝ կակուղցնել եւ բերրի դարձնել մարդուն քարացած սիրտը, որպէսզի ատակ ըլլալ առաքիլութեանց տունկեր անեցնելու իր մէջ:

գ.– Հողը փորելը, կ'ըսէ Օգոստինոս, խոնարհութեան եւ ապաշխարութեան ուսուցումն է: Արդարեւ, ինչպէս խոպանացած ու քարացած հողը կը փորուի, այնպէս ալ մեղքով խոպանացած ու քարացած սիրտերը պէտք է փշրուին ու փորուին, այլ խօսքով՝ խոնարհութեան եւ ապաշխարութեան հրաւիրուին:

դ.– Յիսուս ինքն է որ մարդուն սրտին հողը կը փորէ եւ այդտեղ կը սերմանէ Աստուծոյ կենդանարար խօսքին սերմերը որոնք կրնան մեր հոգիները փրկել (Յկ 1.21):

7.– «Կրկին կը փորեմ»: Հակիրճ նշումներ.–

ա.– «Կրկին»: Այս բառը ցոյց կու տայ որ Աստուած կրկին ու կրկին առիթ ընծայեց հրեայ ժողովուրդին ընդունելու զինքն եւ հետեւելու իրեն:

բ.– «Կրկին» բառին մէջ միաժամանակ կը կարդանք Աստուծոյ համբերութեան մասին, ինչպէս նաեւ անոր կողմէ հրեաներուն ընծայուած առիթին ու պատեհութեան մասին:

գ.– «Կրկին» բացատրութիւնը կը պարզէ որ Աստուած բազմատեսակ միջոցներ ու կերպեր կը փնտռէ մարդ արարածը փրկելու համար:

8.– «Պարարտացուցիչ կը դնեմ»: Ի՞նչ ձեռով պէտք է հասկնալ այս խօսքը: Քանի մը ձեւերով.–

ա.– Պարարտացուցիչ դնելը՝ մարդուն պարգեւուած գորութիւնն է՝ պայքարելու մեղքին դէմ: Մենք ունի՞նք այդ պարարտացուցիչը, այլ խօսքով՝ ունի՞նք մեղքին դէմ պայքարելու կամքն ու գորութիւնը:

բ.– Պարարտացուցիչը միաժամանակ, Քրիստոսի կողմէ մարդուն ընծայուած առիթներն են դարձի գալու եւ պտուղ տալու:

գ.– Իգնատիոս Վարդապետ կ'ըսէ. «Փորելն ու պարարտացուցիչ դնելը շնորհքի այն միջոցներն են որ Քրիստոս կը գործածէ մեր փրկութեան համար»:

դ.– Պարարտացուցիչ դնել, կը նշանակէ՝ գորացնել հողին պտղաբերելու կարողութիւնը: Ինչպէս տկար հողը առանց պարարտացուցիչի չի կրնար պէտք եղած պտուղը բերել, այնպէս ալ, մարդիկ որոնք տկար են բնութեամբ, չեն կրնար հաւատքի պտուղներ բերել, եթէ Քրիստոսի փրկարար շնորհքով չպարարտացուին: Կարն բացատրութեամբ մը, պարարտացուցիչ դնելը՝ օգնելն է անպտուղ մարդուն որ դարձի գայ եւ պտուղ բերէ:

ե.– Պարարտացուցիչ դնելը՝ տկարին գորավիզ կանգնիլն է: Եւ դեռ, պարարտացուցիչ դնելը՝ ընդունիլն է մեր տկար բնութիւնը եւ Աստուծոյ միջամտութիւնը խնդրելն է:

զ.– Պարարտացուցիչ դնելը՝ մեր անպտուղ սիրտը Տիրոջ խնամքին յանձնելն է, վստահիլն է:

է.– Պէտք է առանց ֆաշուելու, աշխատասէր պարտիզպաններու նման, պարարտացուցիչով կշտացնենք մեր (սրտի) արտերը... որպէսզի առա՛տ պտուղ բերեն անոնք: (Իսկ պարարտացուցիչով կշտացնել մեր

արտի արտերը, կը նշանակէ՝ մեր մեղքերը խոստովանիլ: Արդարեւ, ով որ իր մեղքերը կը խոստովանի՝ պարարտացուցած, այլ խօսքով՝ զօրացուցած կ'ըլլայ իր սիրտն ու հոգին եւ գանձնի պտղաբերելու կարողութեամբ օժտած կ'ըլլայ): Աբրահամ խոստովանեցաւ թէ «հող ու մոխիր» էր (Մն 18.27): Յոբի համար կ'ըսուի թէ «մոխիրի մէջ նստաւ» (Յոբ 2.8): Դաւիթ կը վկայէ որ Աստուած «աղփատը փոշիէն վեր կը վերցնէ ու տնանկը աղբանոցէն կը բարձրացնէ» (Սղ 113.7): (Այս բոլոր խօսքերը ուրիշ բան ցոյց չեն տար եթէ ոչ՝ մեր բնութեան տկարութիւնը: Աստուածաշնչական դէմքեր խոստովանեցան այս իրողութիւնը): Ճիշդ է որ մարդ ամօթխածութեամբ կը լեցուի երբ իր մեղքերը կը խոստովանի, բայց մեղքերը խոստովանելով է որ արտը կը հերկուի ու կը փորուի..., փուշերէն կը մաքրուի, եւ յառաջ կու գան այն պտուղները որոնք նախապէս գոյութիւն չունէին (Ամբրոսիոս: Իմաստային թարգմանութիւն):

ը.-- Պարարտացուցիչին տեսակները կան: Բնական պարարտացուցիչը նոյնիման թրիքն է, այսինքն՝ իշու, գոմէշի, ձիու, կովու կամ եզի աղբը: Հին Թարգմանութեան մէջ նաեւ ունինք «թրիք» բառը: Հարկաւ հոգեւոր իմաստով պէտք է հասկնալ «աղբ» բառը: Եւ այդ հոգեւոր իմաստը «խոնարհութիւնն» ու «զղջումն» է: Այս իմաստով, աղբ դնել մարդուն շուրջ, կը նշանակէ զինք հրաւիրել խոնարհութեան ու զղջումի: Ամբրոսիոս կ'ըսէ թէ Յոբ աղբի կամ մոխիրի վրայ նստաւ (Յոբ 2.8), ինչ որ կը նշանակէ թէ ինքզինք խոնարհեցուց Աստուծոյ եւ անոր սուրբ կամփին դիմաց: Պօղոս առաքեալ նաեւ խոնարհեցաւ Յիսուսի առջեւ երբ ինքզինք ոչնչութիւն սեպեց (աղբի նման) որպէսզի Յիսուսը շահի (Փլպ 3.8)...: Դաւիթ կ'ըսէ թէ Տէրը «աղփատը փոշիէն վեր կը վերցնէ ու տնանկը աղբանոցէն կը բարձրացնէ» (Սղ 113.7): Ի՞նչ կը նշանակէ աղփատը փոշիէն կամ տնանկը աղբանոցէն վեր բարձրացնել եթէ ոչ դուրս բերել զիրենք իրենց խոնարհ վիճակէն, իրենց անտեսուած վիճակէն:

թ.-- Պարարտացուցիչ կը նկատուին նաեւ Աստուծմէ մեզի տրուած բոլոր պարգեւներն ու շնորհքները: Եթէ մենք գանձնի գործածենք իմաստութեամբ, կրնանք պտղաբեր կեանք ունենալ:

Չ.-- «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն»: Մեր Տիրոջ այս բառերը կը պարզեն որ ան ֆաղցրութեամբ կը վերաբերի մարդուն հետ: Բառեր՝ որոնք ցոյց կու տան որ Յիսուս անպտուղ մարդ մը գտնելուն պէս՝ վրան չի յարձակիր, գանիկա չի՝ ֆննադատեր, գանիկա մէջտեղէն չի՝ վերցնէր,

այլ ընդհակառակը, միջոցներ կը փնտոէ անպտուղ մարդը՝ պողատու դարձնելու համար, եւ ատիկա ընելու համար, բնաւ չ'անապարեր: Մենք ալ պէտք է նոյնը ընենք եւ նոյնը ըլլանք: Սուրբ Գրիգոր Նագիանգացի կ'ըսէ. «Երանի (կացինով) շուտով չգարնենք, այլ քաղցրութեամբ յաղթենք, որպէսզի չըլլայ թէ կտրենք թգենիի ծառ մը որ կրնայ պտուղ բերել եթէ երբեք վարպետ այգեպան մը հոգ տանի անոր»:

«Այս ձեռով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն»
(Ղկ 13.9): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Այս ձեռով»: Այսինքն՝ ամէն միջոցի դիմելէ ետք, հողը փորելէ ու պարարտացուցիչ դնելէ ետք, հաւանական ու կարելի է որ մարդը դարձի գայ ու հաւատքի պտուղ բերէ:

2.– «Թերեւս պտուղ տայ»: Այս բառերը կը բացայայտեն որ Յիսուս միշտ յոյսով եւ ակնկալութեամբ կը մօտենայ անպտուղ մարդոց: Ինչպէս Յիսուս յոյսով կը մօտենայ անպտուղ մարդոց, այնպէս ալ մենք, յոյսով մօտենանք անապաշխար մարդոց: Երբ աղօթենք անապաշխար մարդոց ապաշխարութեան համար՝ զիրենք ապաշխարութեան մէջ տեսնելու յոյսով աղօթենք, այն քաջ վստահութեամբ որ «յոյսը երբեք ամօթով չի ձգեր» (Հո 5.5):

3.– «Ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն»: Երկու նշումներ.–

ա.– «Գալ տարի» բացատրութիւնը կրնայ ակնարկութիւն ըլլալ Տիրոջ երկրորդ գալուստին: Անգիղջ մեղաւորը, Քրիստոսի երկրորդ գալուստին է որ վերջնականապէս պիտի կտրուի եւ կրակի մէջ նետուի:

բ.– «Գալ տարի» բացատրութիւնը կրնայ նաեւ ակնարկութիւն ըլլալ Աստուծոյ համբերութեան հատումին: Աստուծոյ համբերութիւնը կը հատնի⁶: Այո՛, կը հատնի, եթէ երբեք վերջնական որոշում առնենք մեր սիրտը փակելու իր Որդիին փրկարար շնորհքին դիմաց:

Աստուծոյ համբերութիւնը չհատնած, եկէք դադրիմք այգեպանին կողմէ մեզի տրուած պարարտացուցիչները, այսինքն՝ շնորհքներն ու առիթները գուր տեղ վատնելէ եւ իրեն յանձնուինք ինամբի կարօտ եղող ծառի մը նման:

ԱՆՄԻՏ ՀԱՐՈՒՍՏԻՆ ԱՌԱԿԸ

«Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Անիկա կը մտածէր ու կ'ըսէր.— "Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձֆս ամբարելու համար շտեմարաններուս մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտե՛մ ինչ պիտի ընեմ: Պիտի ֆակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ.— Ով մարդ, ֆանի երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ. կե՛ր, իմէ եւ վայելէ": Բայց Աստուած իրեն ըսաւ.— "Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ ֆեզմէ պիտի առնեն. որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ": Եւ Յիսուս եգրակացուց.— Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու» (Ղկ 12.16-21):

Ի՞նչ բան պատճառ եղաւ որ Քրիստոս պատմէր անմիտ հարուստին առակը: Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին, քանչեւ լուծուած էր իբրեւ Աստուծոյ մարգարէ, նշմարտութեան Վարդապետ, բայց մանաւանդ իբրեւ մէկը որ իշխանութեամբ կ'ուսուցանէր: Ուստի, զինք ունկնդրողներէն մէկը, օգտագործեց Տիրոջ այս հանգամանքը, եւ իր անձնական մէկ հարցին լուծում բերելու համար՝ ըսաւ անոր. «Վարդապետ, ըսէ՛ եղբօրս, որ մեր հօր ձգած ժառանգութենէն իմ բաժինս տայ ինծի»: Յիսուս անոր պատասխանեց. «Ո՛վ Մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ» (Ղկ 12.13-14):

Քրիստոս իր եւ երիտասարդին միջեւ տեղի ունեցած երկխօսութիւնը առիթ դարձուց այս առակը պատմելու: Առակին մասին խօսելէ առաջ, նախ անդրադառնանք երիտասարդի խնդրանքին եւ Քրիստոսի պատասխանին:

Ոմանք կը կարծեն որ երիտասարդին եղբայրը ո՛չ միայն առած էր իրենց հօր ձգած ժառանգութենէն իր բաժինը, այլեւ առած էր իր եղբօր բաժինը, եւ այս ձեւով զինք իրաւագրկած էր: Եւ ահա՛ իրաւագրկուած եղբայրը կը մօտենար Քրիստոսի եւ անոր միջամտութիւնը կը հայցէր: Մարդկային պատմութեան ընթացքին այս երեւոյթը միշտ կրկնուած է: Մարդիկ միշտ իրաւագրկած են իրար: Իրաւագրկուած մարդուն կը յիշեցնեմ որ ունի իր Պաշտպանը երկինքի մէջ, բայց իրաւագրկող մարդը ո՛չ պաշտպան ունի եւ ո՛չ ալ իրեն համար բարեխօս մը:

Ուրիշներ մեկնելով Բ.Օր 21.17-էն, որ կը հրահանգէ անդրանիկ գալկին կրկնապատիկ ժառանգութիւն տալ, կ'ենթադրեն որ Քրիստոսի միջամտութիւնը խնդրող երիտասարդը կրտսեր եղբայր մըն էր, որ եկած էր Քրիստոսի եւ անկէ կը պահանջէր վերացումը այս «անարդար» օրէնքին: Ասիկա չի կրնար գիշդ ըլլալ որովհետեւ ոչինչ կ'ըսէ Քրիստոս որ կրնայ կապ ունենալ վերոյիշեալ օրէնքին հետ: Քրիստոս պարզապէս ագահութենէ է որ կը զգուշացնէ. «Զգուշացէ՛ք ագահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ՛ իր ամբարած հարստութենէն» (Մտ 12.15): Ի՞նչ է ագահութիւնը եթէ ոչ «կոռպաշտութիւն» ինչպէս Պօղոս առաքեալ կը հաստատէ (Կղ 3.5): Իսկ ո՞վ է ագահ մարդը եթէ ոչ ան՝ որ կը ցանկայ աւելի՛ն ունենալ, ամէ՛ն ինչ ունենալ, աչքին տեսածը ունենալ:

Ասկէ մեկնելով, կարելի է հաստատել թէ երիտասարդը ունէր իրեն անհրաժեշտ եղածը, եւ սակայն, ան կը ցանկար աւելի՛ն ունենալ, աւելի՛ն տիրանալ: Առակին մէջ արձանագրուած «առատ բերք» բառերը իրենք նաեւ ցոյց չեն տար որ երիտասարդը պէտք եղածը ունէր, բայց աւելի՛ն կը ցանկար: Սխալ չէ հարստութիւն ունենալը, բայց սխալ է առատ հարստութեան տէր դառնալ ցանկալը: Ինչո՞ւ չսորվինք մեր առօրեայ հացով գոհանալ: Ինչո՞ւ Սողոմոնի նման չըսենք. «Իմ սովորական հացովս զիս կերակրէ...» (Առ 30.8): Մեզմէ ո՞վ չի գիտեր թէ «անոնք որ հարստանալ կ'ուզեն՝ փորձութեան եւ թակարդի մէջ կ'իյնան» (Ա.Տմ 6.9):

«Ո՛վ Մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ» (Ղկ 12.14):

Յիսուսի բերնին մէջ գտնուող այս բառերը հարկաւ ցոյց չեն տար որ ան անտարբեր է մարդոց կեանքին մէջ գոյութիւն ունեցող տագնապներուն ու անարդարութիւններուն նկատմամբ: Բազմաթիւ ու այլազան են պատճառները թէ ինչո՞ւ Քրիստոս չուզեց կատարել երիտասարդին խնդրանքը: Թուենք անոնցմէ տասը հատը. –

1.– Ընդհանրական եկեղեցւոյ հայրերէն՝ Ամբրոսիոս, դիտել կու տայ որ Յիսուս զգուշացաւ միջամուխ ըլլալու երկրաւոր հարցերու, ինք՝ որ երկինքնէ իջած էր աստուածային հարցերու համար:

2.– Ամբրոսիոս կը հաստատէ նաեւ որ Յիսուս չուզեց իբրեւ դատաւոր միջամտել երկու եղբայրներու միջեւ, որովհետեւ ինք Սէ՛ր էր եւ իբր այդպիսին, ան կ'ուզէր եղբայրները, այլ խօսքով՝ բոլոր մարդիկը, սիրո՛վ քով-քովի բերել եւ ո՛չ թէ իր դատաւորական հանգամանքը գործածելով:

3.- Ան ուզեց սորվեցնել իր հետեւորդներուն որ իր թագաւորութիւնը հոգեւոր թագաւորութիւն մըն է, եւ իբր այդպիսին, ատիկա կրնայ տրուիլ միայն անոնց՝ որոնք հոգեւոր կեանք կ'ապրին: Լոկ նիւթականով հետաքրքրուող մարդը չի կրնար ժառանգորդը դառնալ Քրիստոսի աննիւթական թագաւորութեան: «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ» յայտարարեց Քրիստոս (Յհ 18.36): Ուստի, աշխարհը սիրող ու աշխարհով գոհացող մարդը երբեք չի կրնար անդամ դառնալ Քրիստոսի թագաւորութեան:

4.- Քրիստոս չընդառաջեց երիտասարդին խնդրանքին, սորվեցնելու համար մեզի, որ ինք մեր երկրաւոր իրաւունքներուն պաշտպան չի կանգնիր եթէ երբեք մենք երկինքով չենք հետաքրքրուած: Եթէ հարուստ մարդը Քրիստոսի մօտենար եւ ըւէր, «Վարդապետ, ի՞նչպէս կրնամ ձեռք ձգել երկինքէն ինծի ինկած բաժինը, ի՞նչ կրնամ ընել ժառանգորդ դառնալու համար երկնայինին», վստահաբար Քրիստոս լուծում պիտի հայթայթէր իրեն: Բայց երբ ան մօտեցաւ երկնառաք Վարդապետին առանց հետաքրքրութիւն ցուցաբերելու երկինքի հանդէպ, երբ հարցուց նիւթականին մասին ու անտեսեց աննիւթականը, երբ խօսեցաւ իր երկրաւոր հօր իրեն ձգածին մասին առանց խօսելու մեր երկնաւոր Հօր տուածին ու տալիքին մասին, Քրիստոս մերժեց միջամտել եւ ըսաւ. «Ո՞վ գիտաւոր... կարգեց ձեր վրայ»:

Որքա՞ն մարդիկ կան աշխարհի մէջ որոնք երկրաւոր զանազան հարցերու վերաբերեալ կը խնդրեն Աստուծոյ միջամտութիւնը, առանց երբեք Աստուծով հետաքրքրուած ըլլալու: Գործերու յաջողութիւն կը խնդրեն երկինքէն եւ երբ գործերու յաջողութիւն չգտնեն՝ կը սկսին երկինքը բամբասել: Աստուած սակայն պարտաւոր չէ կատարելու մարդոց կամքը եւ գործերու յաջողութիւն պարգեւելու անոնց, այնքան ատեն երբ անոնք իր սուրբ կամքին մասին հարցուցած չունին: Աստուած «պարտաւոր» է միայն իր զաւակներուն նկատմամբ:

5.- Քրիստոս չկատարեց երիտասարդին խնդրանքը, որպէսզի ցոյց տար աշխարհասէր մարդոց թէ ինք չի վերցնէր ընկերութեան կեանքին մէջ գոյութիւն ունեցող անարդարութիւնները: Ճիշդ է որ Աստուած ի՞նքն է որ պատմութեան անիւր կը դարձնէ, բայց կը դարձնէ ի նպաստ իր սիրելիներուն ու զինք սիրողներուն միայն (Հո 8.28):

6.- Քրիստոս չուզեց ընդառաջել երիտասարդին փափաքին, որովհետեւ երկրաւոր դատաւոր մը չէր, ինչպէս ինքն իսկ հաստատեց. «Ո՞վ գիտաւոր... կարգեց ձեր վրայ»: Պաղեստինի մէջ իւրաքանչիւր քաղաք ունէր իր դատաւորը որ նշանակուած կ'ըլլար Հրէական Ատեանին կողմէ: Մարդոց միջեւ նիւթական հարստութիւն բաժնելը

դատաւորի մը իրաւասութեան սահմաններէն ներս կ'իյնար: Քրիստոս չուզեց ուրիշի մը իրաւասութեան սահմաններէն ներս ոտնձգութիւն ընել: Ահա թէ ինչո՛ւ ան ըսաւ. «Ո՞վ զիս դատաւոր... կարգեց ձեր վրայ»: Արդարեւ, Քրիստոս դատաւոր չէր կարգուած կամ նշանակուած Հրէական Ատեանին կողմէ: Հետաքրքրական է այս գետնի վրայ նկատի առնել Քրիստոսի խոնարհութիւնը: Ան իր երկրաւոր կեանքի ընթացքին մերժեց այլ մարդոց իրաւասութեան սահմաններէն ներս մտնել: Ան ընդունեց միայն այն՝ ինչ որ տրուած էր իրեն Աստուծոյ կողմէ: Պօղոս առաքեալ Եբրայեցիներուն նամակին 5-րդ գլխուն մէջ կ'ըսէ. «Քրիստոս ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պաշտօնը, այլ զայն ստացաւ Աստուծմէ»:

7.- Քրիստոս մերժեց երիտասարդին իրաւունքը պահանջել իր եղբօրմէն, որպէսզի քաջալերած չըլլար զինք եւ իր միւս հետեւորդները, դառնալու հետապնդիչները նիւթական հարստութեանց: Հաւանաբար հարուստ երիտասարդը որ Քրիստոսի հետեւորդ մըն էր, կը յուսար որ Քրիստոսի միջոցաւ պիտի կարենար իր նիւթական վիճակը բարելաւել: Ան ակնկալութիւն մը ունէր Քրիստոսէ որ սակայն չգոհացուեցաւ: Հոսկէ կը սորվինք այն՝ որ Քրիստոսի հետեւորդներս, զգոյշ պէտք է ըլլանք կրօնքը շահու աղբիւրի չվերածելու: Թէեւ Քրիստոս կրնայ նիւթական հարստութեամբ վարձատրել մեզ, բայց Քրիստոսի կողմէ մեզի տրուելիք իսկական վարձատրութիւնը տարբեր բնոյթ կը կրէ:

8.- Քրիստոս չկատարեց երիտասարդին խնդրանքը, որովհետեւ անոր մօտ տեսաւ դրամասիրութեան եւ ագահութեան ախտ: Եթէ Քրիստոս նիւթական հարստութեան բաժանումը կատարէր երկու եղբայրներուն միջեւ, անուղղակիօրէն քաջալերած ու հրահրած պիտի ըլլար դրամասիրութիւնն ու ագահութիւնը անոնց եւ բոլոր զինք ունկնդրող մարդոց մօտ: Թէ երիտասարդը դրամասէր մըն էր, կամ աւելին՝ ագահ մը, յայտնի է նոյնիմէն Քրիստոսի խօսքէն. «Նայեցէք եւ զգուշացէ՛ք ագահութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ՛ իր ամբարած հարստութենէն»:

9.- Քրիստոս գոհացում չտուաւ երիտասարդին փափաքին որպէսզի ցոյց տայ մեզի թէ ինք համաձայն չէ որ հարագատ եղբայրներ կամ Իրմով իրարու եղբայր դարձած անհատներ դրամի համար իրարու հետ խնդիր ունենան: Իրական եղբայր եղողը պէտք է պատրաստ ըլլայ երբեմն զիջելու իր իրաւունքէն: Քրիստոս իր վերաբերմունքով կարծէք անուղղակիօրէն երիտասարդին եւ անոր ընդմէջէն մեզմէ իւրաքանչիւրին զիջում ընելու կոչ մըն է որ կ'ուղղէ:

10.- Ի վերջոյ, Քրիստոս չմիջամտեց երիտասարդին կեանքէն ներս, որպէսզի իբրեւ քահանայապետ օրինակ դառնար ու սորվեցնէր բոլոր եկեղեցականներուն՝ միջամուխ չըլլալ աշխարհային հարցերու մէջ: Պօղոս առաքեալ կը պատուիրէ Տիմոթէոսի հետոյ մնալ քաղաքացիական զբաղումներէ որպէսզի կարենայ ապրիլ իբրեւ հաւատարիմ զինուոր մը Յիսուս Քրիստոսի (Բ.Տմ 2.3-4): Հոգեւորականներս այս կէտը պէտք է կարեւորութեամբ նկատի առնենք, որպէսզի աշխարհի մարդոց յատուկ խնդիրներու ետեւէն վազելով՝ չմոռնանք մեր առաքելութեան իսկական նպատակը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ՝ Աստուծոյ թագաւորութիւնը տարածելը եւ մարդոց հոգեւոր փրկութեան համար աշխատիլը:

«Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Անիկա կը մտածէր ու կ'ըսէր.-- Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարեւու համար շտեմարաններուս մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտե՛մ ինչ պիտի ընեմ: Պիտի ֆակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեւ գործես եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինձի պիտի ըսեմ.-- Ով մարդ, քանի երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ. կե՛ր, իմէ եւ վայելէ» (Ղկ 12.16-19): Քանի մը հաստատումներ.--

1.- «Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին»: Վերջին երեք բառերը՝ «առատ բերք տուին», ցոյց կու տան որ Աստուած առատօրէն իր օրհնութիւնները կը պարգեւէ աշխարհի մարդոց, բայց մարդիկ իրենք է որ գայն Աստուծոյ փառքին համար ու կամքին համաձայն գործածել չեն գիտեր կամ չեն ուզեր:

Աստուած կ'ուզէ որ մենք վայելեմք իր տուած բարիքները, բայց երբեք չ'ուզեր որ մեր կեանքի վայելքը տեսնենք իր կողմէ մեզի տրուածին մէջ, ինչպէս էր պարագան հարուստ երիտասարդին: Կեանքի վայելքը նոյնիման կեանքի Տուրիչին հետ ապրիլն է: Երջանկութիւնը Տուողին մէջն է եւ ոչ թէ տրուածին մէջ: Եւ եթէ տրուածը կրնայ մեզ երջանկացնել որոշ չափով, որքա՛ն աւելի անհունօրէն Տուողը ինք կրնայ մեզ երջանկացնել:

2.- Յիշեալ հարուստ մարդը կը ներկայացնէ ռեւէ անձ որ իր յոյսը կը դնէ իր ունեցած «առատ» հարստութեան վրայ: Զակերտներու մէջ առի առատ բառը, որովհետեւ Յիսուս այստեղ կը խօսի հարստութեան առատութիւն ունեցող անձի մը մասին, որ ո՛չ թէ մէկ արտ ունի, այլ բազմաթիւ արտեր: Արտ բառին յոգնակիով յիշուիլը մէկ կողմէ ցոյց կու տայ մարդուն շատ հարուստ ըլլալը, միւս կողմէ սակայն, կը պարզէ որ հարուստ մարդը ինքնիր համար որոշ իշխանութիւն մը ստեղծած էր իր շրջապատին մէջ եւ ինքզինք հաստատած այդ իշխանութեան մէջ:

Այսօր, ան կը ներկայացնէ բոլոր այն մարդիկը որոնք իրենց ունեցած դիրքով կամ նիւթական հարստութեամբ կը փորձեն իրենք գիրենք հաստատել ու ամրացնել այս երկրի վրայ:

3.- «Անիկա կը մտածէր ու կ'ըսէր...»: Երկու հաստատում.-

ա.- Այս բառերը ցոյց կու տան որ Աստուած գիտէ մեր մտածումները, կը ցանչնայ մեր մտածելակերպը, ծանօթ է մեր խորհուրդներուն եւ ծրագիրներուն: Ուստի, կը սխալինք եթէ երբեք կարծենք որ Աստուած չի կրնար մեր միտքերը կարդալ: Եւ կը սխալինք նաեւ եթէ խորհինք թէ Ժիտական մտածում ունենալը եւ սակայն զանիկա ի գործ չդնելը մեղանչում չէ:

բ.- «Կը մտածէր» ըսելով կրնանք նաեւ հասկնալ՝ կը մտահոգուէր: Ուստի, այս բառերը կը պարզեն որ հարուստ մարդիկ միշտ մտածումի ու մտահոգութեան մէջ կ'ըլլան: Աղփատներէն աւելի հարուստ մարդիկն են որ կը մտածեն: Ի՞նչ կը մտածեն: Կը մտածեն թէ ի՞նչպէս իրենց ունեցածը ապահով կերպով պիտի պահեն: Կը մտածեն թէ ո՛ր է լաւագոյն տեղը որ կրնան պահել: Կը մտածեն թէ ի՞նչպէս իրենց ունեցածը կրնան աւելցնել ու կրկնապատկել: Նոյնիսկ կը մտածեն թէ իրենց մահէն յետոյ որո՞ւ պիտի մնայ իրենց հաւաքածը:

4.- «Ի՞նչ ընելու եմ»: Երեք կէտեր.-

ա.- Ուշագրաւ է որ առատ հարստութիւնը չկրցաւ փարատել մտահոգութիւնը երիտասարդին, այլ աւելի՛ մտահոգեց զինք: Մտահոգութեամբ որովհետեւ սկզբնական հանգրուանին չգիտցաւ իր ընելիքը: Արդարեւ, մարդիկ որքան հարստանան, այնքան աւելի մտահոգ կը դառնան: Ուստի, թող ոչ ոք կարծէ որ եթէ հարստութեան տէր դառնայ՝ իր բոլոր մտահոգութիւնները պիտի փարատին:

բ.- Երիտասարդին հարցումը՝ «Ի՞նչ ընելու եմ», կը պարզէ որ ան Աստուծմէ անկախօրէն կ'ապրէր: Արդարեւ, երբ առատ բերք ունեցաւ, Աստուծոյ կարծիքը առնելու մասին չմտածեց, այլ ինք անձնապէս մտածեց թէ ի՞նչ կրնար ընել: Եւ այս քայլը ուրիշ բան ցոյց չէր տար եթէ ոչ այն՝ որ ան իր սեփական իմաստութեան կը վստահէր փոխանակ Աստուծոյ վստահելու: Եթէ երիտասարդը Աստուծոյ հարցներ՝ «Ի՞նչ ընելու եմ», զինք հաւատփի մա՛րդ պիտի կոչէինք, բայց ան այս հարցումը Աստուծոյ չհարցուց, այլ՝ ինքնիր անձին: Երբ մենք ուզենք բան մը ընել, մենք մեր տրամաբանութեա՞ն կը վստահինք, ինչպէս երիտասարդը ըրաւ, թէ՛ Աստուծոյ կը վստահինք:

գ.- Մենք մեզի չուղղենք հարուստ երիտասարդին հարցումը՝ «Ի՞նչ ընելու եմ», այլ գայն ուղղենք Աստուծոյ. «Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ»: Թող Աստուած ի՞նք ըսէ մեզի մեր ընելիքը: Երբ Յիսուս յայտնուեցաւ

Սօդոսին՝ Սօդոս կորսնցուց իր տեսողութիւնը: Յիսուս իրեն ըսաւ. «Հիմա ոտքի՛ ել ու քաշու՛ր մտի՛ր. հոն քեզի պիտի ըսուի ինչ որ պիտի ընես» (Գրծ 9.6): Այո՛, Յիսուս ի՛նքն էր որ այլեւս Սօդոսի պիտի ըսէր իր ընելիքը: Սօդոս Պօղոսի վերածուելէ ետք, ալ իր սեփական կամքը չփնտոնեց, այլ՝ կամքը Տիրոջ: Ոեւէ մէկը որուն Տէրը կը հանդիպի, եւ ոեւէ մէկը որ կ'ընդունի Տէրը իր սրտին մէջ՝ պէտք է մէկդի դնէ իր սեփական կամքն ու փափաքը եւ հետապնդէ Տիրոջ կամքը:

5.- «Որովհետեւ հունձֆա ամբարեյու համար շտեմարաններու մէջ տեղ չմնաց»: Իր բոլոր շտեմարանները լեցուած էին բայց տակաւին գոհ չէր: Աւելի՛ն կ'ուզէր: Աւելի՛ն կը ցանկար: Որքա՛ն մարդիկ կան այսօր որոնք գոհ չեն իրենց ունեցածով եւ որոնք աւելի՛ն կ'ուզեն ունենալ: Մէկը գոհ չըլլալով իր դիրքէն՝ աւելի բարձր դիրքերու կը ջանայ հասնիլ: Ուրիշ մը չբաւարարուելով իր ունեցած իրաւասութիւններով՝ կը փորձէ այլոց իրաւասութիւնները եւ խլել: Երբորդ մը որ իշխանութեան գլուխ կը գտնուի՝ կ'աշխատի նգմել այլ գլուխներ, որպէսզի ի՛նքն երեւի ու մնայ միակ գլուխը:

6.- «Այո՛, գիտե՛մ ինչ պիտի ընեմ»: Սովորաբար աշխարհի մարդը միշտ կը յայտարարէ թէ գիտէ՛ ինչ պիտի ընէ: Աշխարհի մարդը երբեք ինքզինքն տգէտ չի սեպեր, ընդհակառակը՝ ան Աստուծոյ գաւակներն է որ տգէտ կը սեպէ: Իրականութեան մէջ սակայն, իսկական տգէտ մարդը՝ Աստուծոյ գիտութիւնը չունեցող մարդն է: Եւ յիշեալ հարուստը չունէր Աստուծոյ գիտութիւնը: Աշխարհի մարդը համարձակօրէն կը յայտարարէ. «Գիտե՛մ ինչ պիտի ընեմ»: Իր ընելիքը իրեն նիշդ ու շիտակ կը թուի, եւ չ'անդրադառնար որ իր նիշդ սեպածն է որ կրնայ զինք կործանումի տանիլ, ինչպէս Սողոմոն կ'ըսէ. «Ճամբայ կայ որ մարդուն շիտակ կ'երեւնայ, բայց անոր վերջաւորութիւնը մահուան նամբան է» (Առ 14.12):

7.- «Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ»: Երկու մատնանշումներ. --

ա.- Աստուծոյ նախախնամութեան հանդէպ վստահութիւն չունեցող մարդու իս՛ոսք է ասիկա: Ի՞նչ պէտք ունի քակելու իր շտեմարանները եւ աւելի ընդարձակները շինելու: Ան պէտք է մտածէր որ եթէ Աստուած առատօրէն պարգեւեց այս տարի՝ գա՛լ տարի ալ կրնայ նոյն առատութեամբ պարգեւել: Բայց ան այսպէս չմտածեց ու չտրամաբանեց: Ան մտահոգ էր ապագային համար: Ան կը մտածէր իր ապագան ապահով դարձնելու մասին: Այսօր, մեր իրականութեան մէջ անհաշիւ են այն մարդիկը որոնք նիշդ հարուստ երիտասարդին նման, մտահոգ են իրենց ապագային համար, եւ կը փորձեն միջոցներ գտնել իրենց

ապագան աւելի ապահով եւ աւելի փայլուն դարձնելու համար, փոխանակ վստահելու Աստուծոյ որ տէ՛րն է ապագային, իշխանն է գալիքին, թագաւորն է անձանօթին:

բ.– Աւելի ընդարձակ շտեմարաններ շինելով, հարուստ երիտասարդը կը կարծէր որ իր մտահոգութիւններուն լուծում բերած պիտի ըլլար: Լուծումը սակայն ընդարձակ շտեմարաններ ունենալուն մէջ չէր կայանար, այլ Աստուծոյ վստահող սի՛րտ ունենալուն մէջ: Ո՞վ չի գիտեր թէ որքան ընդարձակեմք մեր շտեմարանները այնքան աւելի վախն ու մտահոգութիւնը կը կլանեն մեզ: Ո՞վ չի գիտեր թէ որքան մեծ ըլլայ մեր հարստութիւնը այնքան աւելի մեծ կ'ըլլայ մեր հոգն ու նեղութիւնը: Դրամասէր մարդը որքան ալ հարստութիւն ունենայ միշտ կը ցանկայ աւելի՛ն ունենալ: Ժողովողի գրքին մէջ կը կարդանք. «Արծաթ սիրողը արծաթէն չի կշտանար, ո՛չ ալ հարստութիւն սիրողը՝ երկրի բերքէն» (Ժղ 5.10):

Ց.– «Պիտի ընեմ..., պիտի ֆակեմ..., պիտի շինեմ..., պիտի ըսեմ...» (12.18-19): Ուշագրաւ են հարուստին արտասանած պիտի-ներու շարքը: Ի՞նչ ցոյց կու տայ «պիտի» բառը: «Պիտի» բառին մէջ յանձնապաստանութի՛ն կայ, հպարտութի՛ն կայ, ամբարտաւանութի՛ն կայ, իր ունեցածով չգոհանալու ոգի՛ կայ, ինքզինք հաստատելու եւ անսասան դարձնելու միտո՛ւմ կայ: Նոյնն էր պարագան Արուսեակ քերովբէին արտասանած «պիտի»ներուն որ զինք Սատանայի վերածեցին. «...Պիտի ելլեմ..., ...պիտի բարձրացնեմ..., ...պիտի բնակիմ..., ...պիտի ելլեմ..., ...պիտի նմանիմ...» (Յս 14.13-14):

Գ.– «Եւ հոն ամբարեմ ցորեմս եւ ամբողջ բերքերս»: Քանի մը նշումներ.–

ա.– Հարուստ երիտասարդը երբ առատ բերք ունեցաւ, փոխանակ փառք տալու եւ շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ, առաջին բանը որուն մասին մտածեց՝ իր շտեմարանները ընդարձակելն ու իր ցորեմնն ու ամբողջ բերքը անոնց մէջ ամբարելն էր: Շատ մը մարդոց վերաբերմունքը նոյնն է այսօր: Շատ մարդիկ կան որոնք երբ առատ բերք ունենան, այլ խօսքով՝ երբ իրենց ուզած դիրքին, գահին, փառքին, հանգամանքին, պաշտօնին ու կարգին հասնին, փոխանակ փառք տալու Աստուծոյ, եւ փոխանակ իրենց իշխանութիւնը գործածելու Աստուծոյ փառքին համար, կը սկսին իրե՛նք փառք փնտոնել եւ կը սկսին աւելի ու աւելի բարձր դիրքերու նուաճման մասին մտածել:

բ.– Ան երբ առատ բերք ունեցաւ, փոխանակ առատաձեռն դառնալու եւ մտածելու իր ունեցածէն բաժին հանել աղֆատին ու որբին, դարձաւ աւելի՛ ժլատ եւ աւելի՛ եսակեդրոն: Իր ունեցած առատ բերքը

անէ՛ծֆ դարձաւ իրեն համար փոխանակ օրհնութիւն դառնալու: Ոնեւ մարդ որ Աստուծմէ իր ունեցածը միայն ի՛ր անձին համար կը պահէ առանց բաժին հանելու ուրիշին՝ իր ունեցուածքը իրեն համար կը դառնայ դատապարտութեան առիթ: Ինչո՞ւ երբ Յիսուս գաւաթ մը պաղ ջուրի փոխարէն արփայութիւն կը խոստանայ՝ մենք այնքան ժլատ կը գտնուինք որ գաւաթ մը պաղ ջուր անգամ չենք ուզեր ուրիշին տալ:

գ.– Հարստութիւնը պատճառ եղաւ որ հարուստ մարդը դառնար յանձնապաստան եւ զգար ինքնաբաւ: Պատճառ եղաւ որ աւելի՛ հեռանար երկինքէն: Շատեր կը կարծեն որ եթէ անհրաժեշտ եղած հարստութիւնը ունենան՝ այլեւս պիտի չտրտնջան Աստուծոյ դէմ, ընդհակառակը, անոր կամքը պիտի կատարեն: Եւ սակայն, մեր աստուածաիրութիւնը կախեալ չէ Աստուծոյ կողմէ մեզի տրուածով: Հարուստ երիտասարդը սէր ցոյց տուա՞ւ Աստուծոյ հանդէպ կամ կատարե՞ց անոր կամքը երբ պէտք եղածէն աւելի հարստութիւն ձեռք ձգեց: Հոսկէ կը սորվինք, թէ անոնք որոնք կը փորձեն հարստանալ՝ կրնան զԱստուած մոռնալու փորձութեան մէջ իյնալ (Ա.Տմ 6.9):

դ.– Ի՞նչ ցոյց կու տան «ցորենս» եւ «բերքերս» բառերը: Տոյց կու տան որ հարուստ մարդը զանոնք կը դաւանէր իբրեւ ի՛րը, ի՛ր սեփականութիւնը: Անմտութիւն էր հարուստին համար իր արտերուն բերքերը կոչել ի՛ր բերքերը եւ ի՛ր ցորենը: Ան խոնարհութիւնը պէտք էր ունենար զանոնք նկատելու Աստուծոյ պարգեւը իրեն տրուած, որովհետեւ առանց երկինքի անձրեւին ու արեւին իր արտերը չէին կրնար բերք տալ: Այս իմաստով, իր հարստութիւնը եւ աշխարհի բոլոր հարստութիւնները Աստուծոյ սեփականութիւնն են եւ Աստուած ինք է որ զանոնք կը բաշխէ մարդոց: Աստուած խօսելով Իսրայէլի ժողովուրդին մասին, Ովսեայ մարգարէին միջոցաւ կ'ըսէ. «Մայրդ չգիտցաւ որ ցորենը, գինին եւ իւղը ե՛ս էի որ կու տայի իրեն: Իրեն արծաթն ու ոսկին ե՛ս էի որ կը շատցնէի» (Ովս 2.8-9):

Երկիր երկինքի հովանովորութիւնն ու օրհնութիւնն է որ կը վայելէ: Ուստի, չնմանիմք հարուստ մարդուն որ երկնաէջ անձրեւով ու արեւով, տաքութեամբ ու պաղութեամբ հարստանալէ ետք՝ դաւանանք երկինքին, ուրացաւ երկինքը, եւ երկինքով իր ստացածները փորձեց լոկ ի՛ր անձին համար պահել, լոկ ի՛ր անձին սեփականութիւն նկատել: Իր անձին ապահովութեան երաշխիքը տեսաւ երկինքի ցամաքով իր ստացած առատ բերքերուն մէջ, փոխանակ զանիկա տեսնելու նոյնիման երկինքին մէջ, այսինքն, այն Անձին մէջ որ կը բնակի բոլոր երկինքներէն վեր եւ կը լեցնէ բոլոր երկինքները:

ե.- Կարելոր է նշել որ «ցորենս եւ ամբողջ բերքերս» բառերուն փոխարէն, Յունարէն բնագիրին մէջ մենք ունինք՝ «ցորենս եւ բարիքնե-րըս» բառերը: Յովհաննէս Ոսկեբերան անդրադառնալով «բարիքնեքս» բացատրութեան, կը հաստատէ թէ հարուստ երիտասարդը մե՛ղք գործեց ու սխալ ըրաւ երբ իր հարստութիւնը «բարիքնեք» կոչեց, որովհետեւ հարստութիւնը բարիք մը չէ ինքնին եւ ոչ ալ չարիք մը: Բարիք կարելի է նկատել առափնութիւնները, ինչպէս օրինակ՝ ողջախոհութիւնը, խոնարհութիւնը եւ այլ առափնութիւններ:

10.- «Ապա ես ինձի պիտի ըսեմ.- Ով մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս...»: Երկու ամփոփ նշումներ.-

ա.- Հարուստ երիտասարդը որոշած էր երկար տարիներ ապրիլ: Ան մոռցած էր որ եթէ Տէրը իրեն համար չորոշէր երկար ապրիլ՝ պիտի չկրնար երկար ապրիլ (Յկ 4.15): Ան մոռցած էր որ Աստուած ի՛նքն էր «մեղցնողն ու կենդանացնողը, գերեզման իջեցնողն ու վեր հանողը» (Ա.Թ.գ 2.6): Մեր կեանքի տարիները Աստուծոյ ձեռքին մէջն են: Աստուած է որ կ'որոշէ անոնց տեսողութիւնը:

բ.- Հարուստը բացարձակ վստահ էր որ իր ամբարած հարստութիւնը երկար տարիներու համար բաւարար պիտի ըլլար: Ան երբեք չմտածեց որ կրնար իր կեանքի անիւր ծուռ դառնալ եւ յանկարծ աղֆատանալ ու դժբախտանալ: Մենք պէտք է խոնարհութիւնը եւ խոհեմութիւնը ունենանք մտածելու որ պատահար մը կրնայ յանկարծ մեզ ապերջանիկ դարձնել ժամանակէն առաջ:

11.- «Հանգիստ ըրէ, կե՛ր, իմէ եւ վայելէ՛»: Երկու նշումներ.-

ա.- Այս բառերը կը պարզեն որ հարուստ երիտասարդին համար իր երկրաւոր կեանքին նպատակը՝ նոյնիմէն երկրաւոր կեանքն էր: Ան կ'ապրէր լոկ երկրաւորին համար: Ան կորսնցուցած էր իր կեանքին նպատակը: Կեանքին նպատակը ուտելն ու իմելը չէ, ո՛չ ալ աշխարհը վայելելը կամ մեր հանգիստը աշխարհի մէջ փնտոելը: Ճշմարիտ վայելիքը Աստուծոյ հետ ըլլալն է, իր սիրոյն մէջ անիլն է:

բ.- Տուեալ բառերը նաեւ ցոյց կու տան որ երիտասարդը իր ապահովութիւնն ու ուրախութիւնը կը տեսնէր իր ունեցած հարստութեան մէջ: Առակը սակայն կու գայ բացայայտելու որ մեր ապահովութիւնն ու ուրախութիւնը կախեալ չէ մեր ունեցած կամ ամբարած նիւթական հարստութենէն: Փաստօրէն շատ մարդիկ կան որոնք գոհ են, ուրախ են եւ միփփարուած, հակառակ որ հարստութեան տէր մարդիկ չեն, իսկ անդին, կան մարդիկ որոնք մեծ հարստութիւն

ունին, եւ սակայն, իրենց կեանքին մէջ ուրախ չեն, գոհ չեն, միտքար-
լած չեն եւ ապահով չեն զգար:

Հարուստ երիտասարդին սխալը հարստութիւն ունենալը չէր, այլ
իր ապահովութիւնն ու ուրախութիւնը իր ունեցած հարստութեան մէջ
տեսնելն էր:

**«Բայց Աստուած ըսաւ իրեն.– Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ
ֆեզմէ պիտի առնեն. որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ» (12.20):** Բանի
մը հաստատումներ.–

1.– Աստուծոյ դատաստանական այս խօսքը ինծի կը յիշեցնէ
նարպիկ տնտեսին ուղղուած իր տիրոջ խօսքը. «Քեզի յանձնուած բոլոր
ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»
(Ղկ 16.2): Տուեալ երկու հաստատումներն ալ ցոյց կու տան թէ Աստուած
դատաստանի օ՛ր նշդած է, թէ Աստուած հաշի՛ւ պիտի պահանջէ
մարդոցմէ:

2.– Առակը մեզի կը խօսի հարուստին ուրախ կեանքին եւ դժբախտ
մահուան մասին: Յստակ է ուրեմն, թէ այն անձը որ իր ուրախութիւնը
կը գտնէ այս աշխարհին մէջ, այն անձը որ այս աշխարհը կը նկատէ իր
ուրախութեան առական ու պատճառը, մահուան պահուն, երբ իր
ուրախութեան առարկան՝ այս աշխարհը, խլուի իր ձեռքէն՝ ան կը
դառնայ դժբախտ:

3.– Հարստութիւնը չէր պատճառը իր մահուան ու կորստեան, այլ
իր ազատութիւնը: Ան առատ բերք ունենալով լայնօրէն առիթը ունէր
օգտակար դառնալու աղբատներուն եւ իրեն համար վարձատրութիւն
ապահովելու երկինքի մէջ, բայց չըրաւ այդպիսի բան:

4.– «Անմիտ»: Այս բառը ցոյց կու տայ որ «անմիտ» մարդ է այն
մարդը որ կ'ապրի առանց Աստուծոյ: Այո՛, անմտութիւն է ապրիլ
առանց Աստուծոյ: Յիսուս «յիմար» կը կոչէ այն կոյսերը որոնք «իրենց
հետ պահեստի ձեռք չառին» (Մտ 35.3): Երբ տակաւին Յիսուսը չէր
նանչցած՝ «անմիտ» մըն էր Պօղոս առաքեալ (Տիտ 3.3): Մովսէս «յիմար
ու անմիտ ժողովուրդ» կը կոչէ Աստուծոյ անհաւատարիմ ու
անհնազանդ Իսրայէլացիները (Բ.Օր 32.6): Դաւիթ մարգարէն «յիմար
ու անմիտ» կ'անուանէ այն մարդիկը որոնք չեն անդրադառնար թէ
որքան մեծ են Աստուծոյ գործերը եւ խորունկ՝ անոր խորհուրդները (Սղ
92.5-6):

5.– «Այս գիշեր իսկ հոգիդ ֆեզմէ պիտի առնեն»: Այս բառերը ցոյց
կու տան ֆանի մը բաներ.–

ա.– Ցոյց կու տան թէ մեղաւորին մահը անակնկալօրէն տեղի
կ'ունենայ:

բ.– «Գիշեր»ին կամ «մութ»ին մէջ միշտ անակնկալներ կան: Ուստի, հոս արձանագրուած «գիշեր» բառը ցոյց կու տայ թէ մահուան պահուն մեղաւորը ինքզինք սարսափելի անակնկալներու դիմաց կը գտնէ:

գ.– «Այս» ցուցական դերանունը ցոյց կու տայ թէ Աստուած պիտի չուշանայ դատաստան ընելու:

դ.– «Այս» ցուցական դերանունը նաեւ ցոյց կու տայ որ մահն ու կործանումը յա՛նկարծ վրայ կը հասնին եւ մեղաւոր մարդը առիթ չունենար ապաշխարութեան:

ե.– Աստուածաշունչին մէջ դատապարտուած մարդիկը «գիշերի որդիներ» կոչուած են, իսկ արդար մարդիկը՝ «ցերեկի որդիներ»: Ուստի, այստեղ տեղ գտած «գիշեր» բառը կը բացայայտէ հարուստ մարդուն դատապարտուած ըլլալու իրողութիւնը:

զ.– «Գիշեր» բառը ցոյց կու տայ թէ հաւատացեալներուն համար մահուան վայրկեանը լոյս է ու լուսաւոր, իսկ անհաւատներուն համար՝ գիշեր է ու մթին:

6.– «Այս գիշեր իսկ հոգիդ ֆեզմէ պիտի առնեն»: Տուեալ բառերուն վերաբերեալ երեք նշումներ եւս.–

ա.– Այն պահուն որ երիտասարդը կը խորհէր թէ ինք ամէն իմաստով ապահով է, նիշդ այն պահուն էր որ Աստուած յայտնեց անոր իր վերահաս կործանումը: Աստուած «գորաւորին վրայ յանկարծ կորուստ կը բերէ (Ամս 5.9): «Զօրաւոր» ըսելով կ'ակնարկուի այն մարդուն որ դիրքի ու դրամի տէր դարձեր է այս աշխարհին մէջ, եւ ատոր համար ալ ինքզինք գորաւոր կը զգայ: Այնպիսիին վրայ Աստուած «յանկարծ կորուստ կը բերէ ու կորուստը մինչեւ ամբողջ կը հասցնէ»: Ի՞նչն է ամբողջը: Մարդ ինչ բանի որ կ'ապաւինի, այդ բանը իրեն համար «ամբողջ» կը դառնայ: Եթէ դրամի կ'ապաւինի՝ կը սկսի դրամը իր ամբողջը նկատել: Եթէ աթոռի կ'ապաւինի՝ կը սկսի աթոռը իր ամբողջը նկատել: Աստուած ո՛չ միայն անձը կը կորսնցնէ, այլ նաեւ անոր «ամբողջը», այսինքն՝ այն բոլոր բաները որոնց ան ապաւինած է:

բ.– Երիտասարդը կարծեց որ իր ամբողջ բերքերը նորակառոյց շտեմարաններուն մէջ գետեղելէ ետք, «այս գիշեր» պիտի կարենայ հանգիստ ֆնանալ: Հանգիստի գիշերը իրեն համար եղաւ սրտադողի գիշեր. «Իմ ուրախութեանս գիշերը ինծի սրտադողի գիշեր ըրաւ» (Ես 21.4): Ան կարծեց թէ երկար տարիներու համար պաշար հաւաքած էր, բայց հիմա ան ստիպուած էր «այս գիշեր» բաժնուելու անոնցմէ: Ան կարծեց թէ ինքնիր անձին համար էր որ հարստութիւն հաւաքած էր, բայց «այս գիշեր» հանդէս եկաւ որ ուրիշին համար հաւաքած էր: Նոյնը

պիտի ըլլայ «պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու» (Ղկ 12.21):

գ.- «Հոգիդ քեզմէ պիտի առնեն»: Այո՛ «պիտի առնեն» եւ ո՛չ թէ իր ազատ կամքով պիտի տայ: Աշխարհասէր մարդուն պատիժը մահն է: Ան իր հոգին իր ազատ կամքովը չի յանձներ, քանի ան կապուած է այս աշխարհին եւ կը սիրէ հո՛ս մնալ: Երբ Աստուծոյ արտօնութեամբ ան իր հոգին փչէ, չար ոգիներ պիտի մօտենան եւ «պիտի առնեն» իր հոգին ու դժոխք տանին:

7.- «Որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ»: Շատ տեղին է այս հարցումը: Հարուստ մարդը չէ՞ր գիտեր թէ որո՞ւն պիտի մնայ իր պատրաստածը: Ոեւէ հարուստ մարդ գիտէ թէ իր պատրաստածը բնականօրէն իր զաւակներուն կամ իր մօտիկ հարազատներուն ու սիրելիներուն պիտի մնայ: Բայց այստեղ Յիսուս ըսել կ'ուզէ, թէ ոեւէ հարուստ մարդ չի կրնար գիտնալ թէ իր մահէն ետք ի՞նչ ձեւով պիտի գործածուի իր հարստութիւնը, ե՞րբ պիտի գործածուի, ի՞նչ պարագաներու տակ, ի՞նչ բանի համար եւ ի՞նչ նպատակով պիտի գործածուի, եւ արդե՞օք պիտի գործածուի:

Տակաւին, հարուստ մարդը չի կրնար գիտնալ թէ իր մահէն ետք՝ իր հարազատները պիտի կրնա՞ն վայելել իր ձգած հարստութիւնը. արդե՞օք գողներ պիտի չգողնա՞ն զայն. աւագակներ պիտի չյափշտակե՞ն զայն. հարստահարողներ պիտի չօգտուի՞ն անկէ:

«Որո՞ւն պիտի մնայ պատրաստածդ»: Այս հարցումը նաեւ ցոյց կու տայ թէ այս աշխարհին կապուած հարուստ մարդիկ չեն մտածեր թէ մահէն յետոյ ի՞նչ պիտի ըլլայ իրենց հոգիին, այլ կը մտածեն թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց դիզած հարստութեան, որո՞ւն պիտի մնայ, ո՞վ զայն պիտի գործածէ, ի՞նչպէս պիտի գործածէ:

Հարուստներ ալ կան որ նոյնիսկ իրենց մահէն ետք անգամ չեն ուզեր իրենց հարստութենէն բաժին հանել Քրիստոսի: Բարսեղ Մաշկե-լորցի Վարդապետ, խօսելով Քրիստոսի առաջին եկեղեցին կազմող հաւատացեալներուն մասին՝ կ'ըսէ. «Անոնք իրենց կենդանութեան կը ծախէին իրենց ամբողջ ունեցածը եւ կը բերէին առաքեալներու ոտներուն առջեւ կը դնէին (Գրծ 4.34-35), մինչդեռ դուն չես ուզեր մահուրէնդ ետք իսկ ունեցածդ Քրիստոսի բաժին հանուի»:

Շատ հարուստներ ալ կան որոնք կը նախընտրեն իրենց հարստութիւնը իրենց հետ գերեզմանուի, միայն թէ չտեսնեն անոր առնուիլը ուրիշին կողմէ: Բարսեղ Մաշկելորցին այսպիսիները կը կոչէ «չար» եւ կ'ըսէ. «Անոնք չեն ուզեր իրենց ժառանգութիւնը նոյնիսկ

այլոց ձգել: Անոնք կը նախընտրեն ու կը փափափին որ գետինը բացուէր եւ կուլ տար իրենց հարստութիւնը, քան թէ տեսնեն որ ուրիշներ իրենց հարստութեան կը տիրանան»:

«Եւ Յիսուս եզրակացուց.– Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու» (Ղկ 12.21): Ամփոփ մտածումներ.–

1.– «Նոյնն է պարագան բոլոր անոնց...»: Այս բառերը կը պարզեն որ ոեւէ մարդ որ հարուստ երիտասարդին նման լոկ նիւթական հարստութեան մասին կը մտածէ՝ իր կործանումը յաճկարձ վրայ պիտի հասնի, ինչպէս «այս գիշեր իսկ» բառերը ցոյց կու տան: Յիսուս տուեալ առակով արթուն ըլլալու եւ նիւթական աշխարհէն չխաբուելու կոչ մըն է որ կ'ուղղէ մեզի:

2.– Զերծ մնալու համար յանկարծական կործանումի վտանգէն՝ պէտք է աշխատիլ «Աստուծոյ աչքին հարստանալ»: Իր գրպանը դրամով լեցնելու մասին մտածողը՝ չի՛ կրնար լեցնել իր սիրտը Յիսուսի սիրով: Իսկ սիրտ մը որ կը բաժնուի այս աշխարհէն առանց իր մէջ ունենալու Յիսուսի սէրը՝ գեհեմի ամենէն մութ տեղերը կը տարուի:

3.– «Միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիզեն»: Աստուած մեզ չէ ստեղծած որպէսզի միայն մեր անձերուն համար հարստութիւն դիզենք: Մեզ չէ ստեղծած որպէսզի միայն մեր անձերուն համար ապրիմք ու գործենք, մտածենք ու ծրագրենք, աշխատինք ու տփնիք: Ոեւէ մարդ որ միայն իր անձին համար կ'ապրի՝ ենթակայ պիտի ըլլայ Աստուծոյ պատիժին, որովհետեւ Աստուած զայն ստեղծած է իրե՛ն համար, ի՛ր փառքին համար, ի՛ր գործին համար: Հեղինակ մը ըսած է. «Ոեւէ մէկը որ միայն իր անձին համար կ'ապրի՝ կը նշանակէ թէ բնա՛ւ չ'ապրիր»:

Աստուած ամէն մէկ մարդու համար յատուկ ծրագիր մը ունի եւ այդ ծրագիրը ամէն բանէ առաջ փրկութեան ծրագիրն է որ Յիսուսով իրագործուեցաւ: Մարդ չի կրնար Աստուծոյ փրկութեան այս ծրագիրը անտեսել եւ անպատիժ մնալ:

4.– «Հարստութիւն կը դիզեն»: Հարստութիւն ունենալը սխալ չէ, բայց մեր կեանքին նպատակը հարստութիւն դիզել դարձնելը՝ սխալ է: Աստուած կը բարկանայ երբ կը տեսնէ որ ամէն ինչ կ'ընենք դրամ դիզելու համար երկրի վրայ, բայց ոչինչ կ'ընենք մեզի համար փառք ու վարձատրութիւն «դիզելու» երկինքի մէջ: Ի՞նչպէս կ'ուզենք որ Աստուած երկինքը տայ մեզի՝ երբ մենք անտարբեր ենք երկինքի հանդէպ:

5.- «Փոխանակ Աստուծոյ աչփին հարստանալու»: Ոեւէ անձ որ չ'ուզեր, չի փափափիր եւ չ'աշխատիր «Աստուծոյ աչփին հարստանալու»՝ տեղ պիտի չունենայ Աստուծոյ արքայութեան մէջ:

«Աստուծոյ աչփին հարստանալ», կը նշանակէ հարստանալ առաքինութիւններով, բարի գգացումներով, աղօթող սրտով, ներող հոգիով: Տակաւին, «Աստուծոյ աչփին հարստանալ», կը նշանակէ հարստանալ ու խորանալ մեր հաւատփին մէջ, մեր սիրոյն մէջ, մեր ծառայական հոգիին մէջ, մեր հաւատարմութեան փափափին մէջ, մեր հնազանդութեան պատրաստակամութեան մէջ:

«Աստուծոյ աչփին հարստանալու» համար պէտք է յանձնուիլ Աստուծոյ Որդիին, որովհետեւ Աստուծոյ Որդին է որ մեզ Աստուծոյ աչփին կը հարստացնէ: Եւ պէտք է բացուիլ Աստուծոյ Հոգիին, որովհետեւ Աստուծոյ Սուրբ Հոգին է որ մեզ Աստուծոյ կը հարստացնէ:

Վերջապէս, առակին բացատրութիւնը կ'աւարտեմ, յիշեցնելով որ առակը պէտք է մեզի այն տպաւորութիւնը տայ որ նիւթական հարստութիւնը չարիք մըն է, քանի մարդս կ'առաջնորդէ կործանումի: Յովհաննէս Ոսկեբերան կը բացատրէ թէ հարստութիւնը ո՛չ չարիք է եւ ո՛չ ալ բարիք, եւ սակայն, եթէ գայն գործածենք ողորմութեան համար՝ բարիք կը դառնայ, իսկ եթէ ագահ ըլլանք՝ հարստութիւնը մեզի համար չարիք կը դառնայ: Մարդ չի կրնար վնասել մարդուն եթէ մարդը չվնասէ ինքնիրեն: Ըսել կ'ուզեմ, թէ ո՛չ հարստութիւնը եւ ո՛չ ալ աղփատութիւնը կրնան վնասել մարդուն: Մարդուն վնասողը՝ նոյնիման մարդուն սրտին չարութիւնն է, հարստութեան կամ աղփատութեան սխալ գործածութիւնն է, կ'եզրակացնէ Ոսկեբերան:

ԵՐԵՔ ՀԱՑԵՐՈՎ ՕԳՆՈՂ ԲԱՐԵԿԱՄԻՆ ԱՌԱԿԸ

«Ենթադրենք որ ձեզմե մեկը բարեկամ մը ունի, որուն կը դիմէ գիշեր ատեն եւ կ'ըսէ. "Բարեկամ, ինձի երեք հաց փոխ տուր, որովհետեւ նամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ": Անիկա ներսէն կը պատասխանէ, ըսելով. "Մի՛ յոգնեցնէր զիս. դոները արդէն իսկ գոցած եմ եւ փոքրիկներս բոլոր անկողինին մէջ են. հետեւաբար չեմ կրնար ելլել տալ քեզի": Վստահ եղէք, որ նոյնիսկ եթէ բարեկամութեան սիրոյն չելլէ եւ անոր ուզածը չտայ, սակայն թախանձանքներուն տեղի տալով՝ պիտի կատարէ անոր խնդրանքը» (Ղկ 11.5-8):

«Ենթադրենք որ ձեզմե մեկը բարեկամ մը ունի, որուն կը դիմէ գիշեր ատեն» (Ղկ 11.5): Քանի մը մատնանշումներ.–

1.– Այստեղ յիշուած բարեկամը Քրիստոս ինքն է, կ'ըսէ Ամբրոսիոս: Ինչո՞ւ մեր Տէրը այս առակին մէջ ինքզինք «բարեկամ» կը կոչէ: Քանի մը պատճառներով.–

ա.– Իսկական բարեկամը ուրիշին խնդրանքը լսող մարդն է, երբ անիկա նեղութեան մէջ է: Այստեղ Քրիստոս ինքզինք «բարեկամ» կը կոչէ, որովհետեւ ինքն է այն իսկական բարեկամը որ յանձն կ'առնէ գիշեր ատեն ելլել եւ երեք հաց տալ՝ հացի կարիքը ունեցող մարդուն:

բ.– Ճշմարիտ բարեկամը ան է որ իր նմանը կ'առաջնորդէ կեանքի Հացին, այլ խօսքով՝ փրկութեան: Արդարեւ, Յիսուս ինքզինք «բարեկամ» կը կոչէ, ո՛չ թէ որովհետեւ իր մօտ ունի կեանքի Հաց, այլ որովհետեւ ինքն է կեանքի Հացը (Յհ 6.35): Ան իրեն դիմող եւ կեանքի Հաց խնդրող ոեւէ մարդու չի զլանար շնորհել իր անձը՝ իբրեւ Հաց կեանքի:

գ.– Ան ինքզինք «բարեկամ» կը կոչէ, որովհետեւ Աստուծոյ բարի կամքը կատարելու համար է որ աշխարհ եկաւ, որովհետեւ բարի՛ն կը ցանկայ մեզի համար, բարի՛ն կ'ուսուցանէ, բարի՛ն կը գործէ, բարի՛ն կը ֆաշալերէ, բարի՛ն կը հետապնդէ, բարի՛ն կը զօրակցի:

2.– «Որուն կը դիմէ գիշեր ատեն»: Տեսա՛նք թէ ինչու Յիսուս ինքզինք «բարեկամ» կը կոչէ, հիմա տեսնենք թէ ինչո՞ւ «գիշեր ատեն» իրեն դիմելու մասին կը խօսի: Արդ, ի՞նչ ցոյց կու տայ «գիշեր ատեն» բացատրութիւնը: Քանի մը բան.–

ա.– Յոյց կու տայ թէ ոեւէ ատեն մենք կրնանք դիմել Քրիստոսի եւ կեանքի «Հաց» խնդրել իրմէ: Յիսուս չի նմանիր այն մարդոց՝ որոնց հանդիպելու համար սկիզբէն ժամադրութիւն պէտք է առնենք: Ո՛չ ալ կր նմանի այն հեռաձայններուն որոնց երբ հեռախօսենք, յանկարծ մեզի ըսեն. «Հիմա տունը չեմ, կրնաս պատգամդ ձգել»: Յիսուս միշտ «տունն է», այլ խօսքով՝ մի՛շտ պատրաստ է լսելու մեր խնդրանքը, ցերեկ թէ գիշեր, նեղութեան թէ հանգիստի մէջ եղած ատեննիս:

բ.– «Գիշեր ատեն» բառերը ցոյց կու տան որ նոյնիսկ եթէ մէկը իր ամբողջ կեանքը ապրած ըլլայ առանց Քրիստոսի, եւ միայն իր կեանքի աւարտին (գիշերին) դիմէ անոր խոր գոջումով՝ իր խնդրածը պիտի ստանայ: Ապաշխարութեամբ Քրիստոսի գալու դուռը միշտ բաց է: Այդ դուռը կը փակուի միայն այն ատեն՝ երբ փակենք մեր աչքերը այս աշխարհին մէջ:

գ.– «Գիշեր» բացատրութիւնը կը յիշեցնէ մեզի թէ մեր Տէրը՝ Յիսուս, միշտ արթուն է եւ կը հսկէ մեր փրկութեան համար ու կը լսէ մեր աղօթքները: Անոր քնացած ըլլալուն մասին խօսք չկայ առակին մէջ, այլապէս՝ մարդը անոր պիտի չդիմէր հաց խնդրելու համար: Ան մշտարթուն կերպով կը հսկէ՝ մեզ պահելու եւ պահպանելու համար (Սղ 121.3-8):

դ.– «Գիշեր» բառը կը բացայայտէ մեղքին ինչութիւնը, եւ կը սորվեցնէ թէ մեղքի կեանքը սիրող ու ապրող մարդուն հոգին՝ խաւարի մէջ է որ կը բնակի:

ե.– «Գիշեր» բառին ետին կը տեսնենք նաեւ այն նեղ ու դժուարին պահերը որոնց իբրեւ հետեւանք մարդը կը դիմէ Աստուծոյ: Օգոստինոս կ'ըսէ. «Գիշերը՝ նեղութիւններն են որ մարդս կը մղեն Երրորդութիւնը (երեք հացը) փնտռելու»: Մարդիկ կրնան մերժել մեզ երբ միայն նեղութեան ատեն դիմենք իրենց: Աստուած սակայն չի մերժեր, թէպէտ կը տրտմի եթէ տեսնէ որ միայն նեղութեան ատեն կը դիմենք իրեն, որովհետեւ ինք ուրախութեան Աստուած է (Սղ 16.11), եւ իբր այդպիսին՝ կ'ուզէ մեր ուրախութիւններով ուրախանալ:

«Եւ կ'ըսէ.– Բարեկամ, ինձի երեք հաց փոխ տուր, որովհետեւ նամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ» (Ղկ 11.5-6): Բանի մը մատնանշումներ.–

1.– «Բարեկամ»: Ասկէ առաջ տեսանք թէ ինչո՛ւ Յիսուս ինքզինք «բարեկամ» կը կոչէ: Այստեղ իրեն դիմող եւ երեք հաց խնդրող մարդն ալ զինք «բարեկամ» կը կոչէ: Ի՞նչ ցոյց կու տայ այս իրողութիւնը: Յոյց կու տայ որ Յիսուսի դիմող եւ երեք հաց խնդրող մարդը՝ հաւատացեալ մարդ է, Յիսուսի հետ բարեկամ դարձած մարդ է: Անոնց միջեւ

մտերմութի՛ւն կայ, բարեկամութի՛ւն կայ, ինչ որ ցոյց կու տայ «բարեկամութեան սիրոյն» բառերը (8-րդ համար):

2.- Մենք կրնանք դիմել Քրիստոսի եւ խնդրել իրմէ Զինք ունենալ իբրեւ կենսատու Հաց (Յհ 6.48). բայց առակը կը սորվեցնէ մեզի որ միայն մեր անձերուն համար չէ որ կեանքի Հաց պէտք է խնդրենք, այլ նաեւ ուրիշին համար: Առակին մէջ յիշուած մարդը իր անձին համար չէր որ հաց խնդրեց Քրիստոսէ, այլ բոլոր եկող ցամբորդին համար:

3.- Հացը կեանքի նշան է, ուստի, հաց խնդրել ուրիշին համար, կը նշանակէ կեանք խնդրել, իսկ կեանք խնդրել, կը նշանակէ նոյնիման Քրիստոսը խնդրել ուրիշին համար, քանի որ կեանքը Քրիստոս ի՛նքն է (Յհ 11.25, 14.6): Քրիստոս ինքզինքով միայն կրնայ մարդիկը կշտացնել: Զուր տեղ չէ որ այստեղ ուզուածը հացն է եւ ո՛չ ուրիշ բան, քանի որ հացը իբրեւ կեանքի նշան գՔրիստոս է որ կը ներկայացնէ (Յհ 6.51):

4.- «Ինձի երեք հաց փոխ տուր»: Քանի մը նշումներ.–

ա.– Օգոստինոս կը բացատրէ որ «երեք հաց»ը Սուրբ Երրորդութիւնն է որ կը պատկերացնէ: Այս իմաստով՝ երեք հաց խնդրել, կը նշանակէ՝ ուղղափառ հաւատք ունենալ հանդէպ Սուրբ Երրորդութեան, առանց որուն չենք կրնար ակնկալուած փրկութեան Հացը ձեռք ձգել: Բայց «երեք հաց»ը ուրիշին համար է որ մենք կը խնդրենք: Հոսկէ կը սորվինք, թէ ոեւէ անձ որ կ'ուզէ մեր միջոցաւ Աստուծոյ գալ՝ պէտք է խօսինք իրեն Սուրբ Երրորդութիւնը ցանկնալու բացարձակ անհրաժեշտութեան մասին:

բ.– Ուշագրաւ է որ մեզի կ'ըսուի՝ «երեք հաց» եւ ո՛չ թէ «երեք հացեր»: Ըսինք որ «երեք հաց»ը ակնարկութիւն է Սուրբ Երրորդութեան: Սուրբ Երրորդութիւնը մէկ աստուածութիւն է եւ ո՛չ թէ երեք աստուածներ, ահա թէ ինչու «հաց» կ'ըսուի եւ ո՛չ թէ «հացեր»: Աստուծոյ եկողը՝ պէտք է Աստուծոյ մէկութեան հաւատայ որպէսզի ուղղափառ հաւատքի մէջ ըլլայ եւ չվտանգէ իր փրկութիւնը: Մտաբերեցէք որ երբ Յիսուս իր աշակերտները առաքելութեան դրկեց, անոնց չըսաւ. «Մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անուններով», այլ ըսաւ՝ «Մկրտեցէ՛ք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով» (Մտ 28.19): Սուրբ Երրորդութիւնը երեք անուններ չունի՛, այլ՝ մէկ անուն: Պէտք է հաստատել որ կան որոշ բնագիւրներ որոնք «երեք հաց» ըսելու փոխարէն «երեք հացեր» կ'ըսեն: «Հաց» բառին յոգնակիով յիշուիլը՝ ոչինչ կը փոխէ մեկնութենէն: Եթէ եզակիով «հաց» ըսելը՝ կ'ակնարկէ Երրորդութեան աստուածութեան մէկութեան, ապա ուրեմն «հացեր» ըսելով՝ մենք կրնանք հասկնալ Սուրբ Երրորդութեան երեք անձերը: Պարզ բացատրութեամբ մը, «հաց»ը Աստուծոյ մէկ ըլլալը ցոյց կու

տայ, իսկ «հացեր»ը՝ Աստուծոյ երեք անձեր ըլլալը: Եւ այդպէս չէ՞ Աստուած՝ մէկ իր աստուածութեանը մէջ, եւ երեք՝ իր անձնաւորութեանը մէջ:

գ.- Ինչո՞ւ մարդը «երեք հաց» կը խնդրէ բոլը իջեւանող բարեկամին համար: Մէկ կամ երկու հացը բաւարար չէ՞: Աստուածաշունչի մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալղի եւ ուրիշ մեկնիչներ, կը հաստատեն թէ մարդը «երեք հաց» ուզեց՝ որպէսզի երեք հացերով թէ՛ իր եւ թէ՛ բոլը եկող բարեկամին հոգին, միտքը եւ մարմինը կշտացնէ: Այս իմաստով, կրնանք ըսել որ «երեք հաց»ը կը ներկայացնէ մարդուն հոգին, միտքը եւ մարմինը: Ուստի, «երեք հաց» խնդրել, կը նշանակէ՝ խնդրել Տիրոջմէն որ լիացնէ ու կշտացնէ, փոխէ ու փոխակերպէ մեր հոգին, մեր միտքը եւ մեր մարմինը, այլ խօսքով՝ մեր համակ էութիւնը: Օգոստինոս կ'ըսէ. «Մեր հոգին, մեր միտքը եւ մեր մարմինը չեն կրնար կշտանալ ներքնապէս եթէ ոչ միայն Սուրբ Երրորդութեամբ»:

դ.- «Փոխ տուր» բառերը հարկաւ ցոյց չեն տար որ փրկութիւնը կամ կեանքի Հացը մեզի փոխ տրուած բան մըն է եւ հետագային ատիկա վերստին մեզմէ պիտի պահանջուի կամ խլուի: Ըսել ուզուածը այն է՝ որ մենք փրկութիւնը կամ կեանքի Հացը ուրիշէն՝ Քրիստոսէ ստացանք, ատիկա մեր սեփականութիւնը չէ, այլ մեզի «փոխ տրուած» բան մըն է, եւ հետեւաբար, կեանքի Հացին մասին խօսած ատեննիս կամ գայն ներկայացուցած ատեննիս, պէտք չէ այնպէս մը խօսինք որ մեր ունկնդիրները այն տպաւորութիւնը ունենան, որ մե՛նք ենք որ կու տանք կեանքի Հացը, եւ կու տանք որու որ ուզենք:

ե.- Օգոստինոս կը բացատրէ որ «երեք հաց»ը ունենալ, կը նշանակէ՝ Սուրբ Երրորդութեան գիտութիւնը ունենալ: Ան կ'ըսէ. «Երբ ստանաս երեք հաց, այլ խօսքով՝ Երրորդութեան գիտութիւնը, ատիկա մեզի համար պիտի ըլլայ աղբիւր կեանքի ու կերակուրի. ալ չես վախնար, ալ կանգ չես առներ, որովհետեւ այս կերակուրը վերջ չունի, ընդհակառակը անկա վերջ կը դնէ կարիքներու...»:

զ.- «Տուր»: «Երեք հաց» խնդրող մարդուն մօտ մենք կը գտնենք վստահութեան շունչ մը: Ան վստահ էր որ Քրիստոս պիտի պատասխանէր իր աղօթքին: Այդ վստահութիւնն էր որ իրեն համարձակութիւն տուած էր յարատեւելու իր աղօթքին մէջ: Երբ կ'աղօթենք՝ վստահութեամբ եւ ակնկալութեամբ պէտք է աղօթենք: Այն վստահութեամբ եւ այն ակնկալութեամբ՝ որ Աստուած պիտի պատասխանէ մեր խնդրանքին, եթէ իր կամքին համաձայն է: Յիսուս երբ մեր մօտ վստահութիւն տեսնէ՝ չ'անտեսեր մեզ ու մեր աղօթքը:

է.– Ճամբորդին համար հաց ուզելը՝ ցամբորդը Քրիստոսի խնամքին յանձնել կը նշանակէ, անոր համար աղօթել ու բարեխօսել կը նշանակէ: Յիսուս կ'ուրախանա՛յ երբ իր փրկութիւնը կը խնդրենք ուրիշին համար: Աստուծոյ համար խնկաբոյր պատարա՛գ մըն է կորսուածներուն համար մատուցուած աղօթքը:

ը.– Սուրբ Օգոստինոս «երեք հաց»ը խորհրդանիշ կը նկատէ նաեւ Աստուծոյ մեծագոյն երեք պարգեւներուն՝ սիրոյ, հաւատքի եւ յոյսի: Ուստի «երեք հաց» խնդրել, կը նշանակէ խնդրել Աստուծմէ որ մեզի պարգեւէ՛ սէր, հաւատք եւ յոյս:

5.– «Որովհետեւ ցամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ»: Ո՞վ է այս «ցամբորդ բարեկամը»: Երկու մատնանշումներ.–

ա.– Ան կրնայ ըլլալ ոեւէ մարդ որ կ'անդրադառնայ իր կորուսեալ վիճակին, կը գիտակցի թէ հեռո՛ւ է Քրիստոսէ, եւ ուստի, կը սկսի «ցամբորդի» մը նման ցամբաները իյնալ եւ փնտրել զինք իր կորուսեալ վիճակէն ազատող մը: «Ճամբորդ» բառը ցոյց կու տայ որ ան երկնագուրկ (երկինքէն զրկուած) է եւ տակաւին չէ դարձած բնակարան ու բնակիչ Քրիստոսի:

բ.– Ինչո՞ւ Յիսուս ուրիշին տունը իջեւանող ցամբորդ մարդը կը կոչէ՛ բարեկամ: Յիսուս կոչէ կ'ուղղէ մեզի պատրաստ ըլլալու նոյնիսկ իրմէ հեռու եղողները, նոյնիսկ կեանքի Հացը չունեցողները «բարեկամ» կոչելու, մանաւանդ եթէ երբեք անոնք գան եւ փափաք յայտնեն կեանքի Հացը ունենալու: Այլապէս, ի՞նչպէս կրնանք Քրիստոսէ հեռու եղողները՝ Քրիստոսի՛ բերել, եթէ երբեք բարեկամի աչքով պիտի չնայինք անոնց, կամ եթէ երբեք թշնամի պիտի սեպենք զանոնք:

6.– «Տունս իջեւանեցաւ»: Քանի մը հակիրճ մտածումներ.–

ա.– «Տուն» բացատրութիւնը ցոյց կու տայ որ հաց խնդրող մարդը ունի իր սեփական կամ անձնական տունը, այլ խօսքով՝ ան անձնական յարաբերութեան մէջ է Տէր Յիսուսի հետ, եւ կրնա՛յ օգնել ուրիշներուն որ գտնեն կենսատու Հացը:

բ.– «Իջեւանեցաւ» բառը ցոյց կու տայ որ ցամբորդ բարեկամը տուեալ ֆաղափին մէջ չունի իր սեփական տունը: Հաւատացեալին պարտականութիւնն է օգնել անոր որ ունենայ իր սեփական տունը կամ բնակութիւնը Յիսուսի սրտին մէջ: Ոեւէ մարդ որ չէ ընդունած Տէրը իր սրտին մէջ՝ ցամբորդ ու թափառական կը սեպուի:

գ.– Ճամբորդ մը ինչո՞ւ ուրիշին տունը կ'իջեւանի եթէ ոչ հանգիստ ընելու համար: «Իջեւանեցաւ» բառն ալ ցիշո՞ այդ հանգիստն է որ կը պատկերացնէ: Յիսուս կ'ուզէ որ իր հետեւորդները ըլլան այնպիսի՛

մարդիկ՝ որոնց մօտ երբ մէկը իջնէ՝ հոգեկան հանգստութիւն ու խաղաղութիւն գտնէ:

դ.- «Իշեւանեցաւ» բառը նաեւ կը յիշեցնէ մեզի որ մեղքի կեանք ապրող մարդիկ, ոեւէ ատեն կրնան յոգնիլ ու զգուիլ մեղքի կեանքէն եւ հանգիստ գտնելու համար դիմեն Աստուծոյ մօտիկ եղող մարդոց, անոնց խորհուրդը հարցնելու համար:

7.- «Եւ ես հրամցնելիք բան չունիմ»: Խնդրոյ առարկան «ճամբորդ բարեկամն է» եւ ո՛չ թէ հաց խնդրող անձը: Երբ հաց խնդրող անձը կ'երթայ իր բարեկամին՝ Քրիստոսի մօտ եւ «երեք հաց» կը խնդրէ անկէ, այս չի նշանակեր թէ ինք անձնապէս կեանքի Հացը չունի, այլ կը նշանակէ թէ ինք կը խոստովանի որ ոչինչ կրնայ ընել իրեն դիմող «ճամբորդին» հոգեւոր յագեցում տալու համար. ահա թէ ինչո՛ւ կը դիմէ Քրիստոսի եւ անոր միջնորդութիւնն ու միջամտութիւնը կը խնդրէ խոստովանելով. «Ես հրամցնելիք բան չունիմ»: Այս բառերը կը փաստեն որ մենք ոչինչ կրնանք ընել կամ տալ յագեցնելու համար մեզի դիմողներուն հոգեւոր ծարաւը: Ո՛չ մէկ ֆարոգիչ պէտք է կարծէ որ կրնայ միտքարել հոգի մը որ կը տանջուի մեղքի պատճառով: Մենք հրամցնելիք բան չունի՛մք, աւելցնելիք բան չունի՛մք: Չկարծե՛մք կամ չմտածե՛մք որ մե՛նք ենք որ փրկութիւնը կը հրամցնենք ուրիշին, մե՛նք ենք որ ուրիշներուն հաւատքը կ'աւելցնենք մեր ֆարոգներով ու խրատներով: Այս բոլորը ընողը Քրիստոս ի՛նքն է: Ի՛նքն է փրկուածներուն շարքը խտացնողը (Գրծ 2.47): Եթէ մեզմէ մէկը յաւակնի ըսելու. «Ե՛ս էի որ այսինչ անձին փրկութեան պատճառ եղայ», ինքզինք է որ փառաւորած կ'ըլլայ եւ ո՛չ թէ զՔրիստոս:

«Անիկա ներսէն կը պատասխանէ, ըսելով.- Մի՛ յոգնեցնեք զիս. դոները արդէն իսկ գոցած եմ եւ փոքրիկներս քովս անկողինին մէջ են. հետեւաբար չեմ կրնար ելլել տալ քեզի» (Ղկ 11.7): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Մի՛ յոգնեցնեք զիս. դոները արդէն իսկ գոցած եմ»: Եթէ Քրիստոս ի՛նքն է բարեկամը որուն կը դիմենք գիշեր ատեն, այդ պարագային, ի՞նչպէս պէտք է բացատրել իսկոյն դուրը չբանալու եւ չօգնելու անոր կեցուածքը: Ինչո՞ւ Քրիստոս կը մերժէ ընդառաջել մեր խնդրանքին երբ ուրիշ «ճամբորդ բարեկամի» մը համար է որ կ'աղաչենք իրեն: Քրիստոս չի մերժեր կատարել մեր խնդրանքը: Ան կը կատարէ մեր խնդրանքը բայց ո՛չ մեր ակնկալած ձեւով եւ արագութեամբ: Հոս Քրիստոս կ'ուզէ ստրկեցնել մեզի քանի մը նշմարտութիւններ.-

ա.- Ան կ'ուզէ որ ուրիշներուն համար մեր կատարած աղօթքներուն մէջ ո՛չ միայն յարատեւող ըլլանք, այլեւ՝ թախանձող: Անոր կամքն է որ միևնչեւ վերջ հետապնդենք մեր նմաններուն փրկութիւնը:

բ.- Ան կ'ուզէ որ ամբարիշտը, որուն համար մենք կեանքի Հաց փնտռելու եկեր ենք իր մօտ, ի՛նքն եւս Աստուծոյ դառնալու անկեղծ փափաք յայտնէ: Աստուած չի պատասխաներ մեր աղօթքին եթէ երբեք կ'աղօթենք մէկու մը համար որ չ'ուզեր ու չի փափաքիր Աստուծոյ դառնալ: Իգնատիոս Վարդապետ, կ'ըսէ. «Քրիստոս թէեւ կ'ուզէ դուռը բանալ եւ տալ մարդոց իրենց խնդրածը, բայց զայն կը փակէ ամբարիշտներուն պատճառով. սակայն եթէ ամբարիշտները իրենք եւս դառնան Աստուծոյ եւ խնդրեն՝ դուռը պիտի բացուի եւ իրենց խնդրանքները պիտի կատարուին»:

գ.- Օգոստինոս կը հաստատէ թէ «Աստուած երբեմն որոշ բաներ շուտ չի տար մեզի, ո՛չ թէ որովհետեւ չ'ուզեր տալ, այլ որպէսզի գիտցնէ մեզի անոնց արժէքը: Այն բաները որոնց շատ կը փափաքինք, երբ երկա՛ր ժամանակ ետք զանոնք ստանանք՝ մեծապէս կ'ուրախանանք, բայց այն բաները որոնք շուտով կը պարգեւուին մեզի՝ կը կորսցնեն իր արժէքը»:

դ.- Աստուած կ'ուզէ պատասխանել ուրիշներուն համար մեր կատարած աղօթքներուն, բայց այդ ուրիշները երբեմն իրե՛նք է որ պատրաստ չեն ըլլար ընդունելու Աստուծոյ պատասխանը:

ե.- Օգոստինոս կ'ըսէ. «Մե՛ծ են պարգեւները Աստուծոյ, բայց մե՛նք է որ փոքր ենք մեր կարողութիւններուն մէջ զանոնք ստանալու համար»: Ասիկա ալ պատճառներէն մէկն է թէ ինչո՛ւ Աստուած յաճախ չի պարգեւեր մեր խնդրածը: Որպէսզի Աստուած տայ մեզի մեր ուզածը, մեր խնդրած պարգեւներն ու շնորհքները՝ ան մեզմէ կը սպասէ որ հասունանք մեր հաւատքին մէջ: Պարգեւ մը կրնայ կործանումի առաջնորդել մեզ եթէ երբեք տհաս ենք մեր հաւատքին մէջ եւ անմտերիմ Աստուծոյ:

2.- «Դո՛ւները արդէն իսկ գոցած են»: Զորս նշումներ.-

ա.- Իգնատիոս Վարդապետ կը վկայէ որ դրան գոց ըլլալը՝ Աստուծոյ կողմէ մեղաւորին ընծայուած ապաշխարութեան ժամանակամիջոցն է: Ան երբ տեսնէ որ զղջացեալ մեղաւորը անկեղծ ու յարատեւող է իր ապաշխարութեան մէջ՝ ա՛յն ատեն է որ կը բանայ անոր առջեւ իր փրկութեան ու պարգեւներուն դուռը: Այլ բացատրութեամբ մը, Քրիստոս իր փրկութեան դուռը գո՛ց կը պահէ եւ երբեք չի բանար պատահականօրէն թակողներուն դիմաց, այլ կը բանայ միայն անոնց

դիմաց՝ որոնք ամբողջ սրտով ու հոգիով կը փնտոեն ու կը խնդրեն փրկութիւնը:

բ.– Կարգ մը մեկնիչներ, դռներուն գոց ըլլալը՝ կը հասկնան իբրեւ մարդոց միտքերուն գոց ըլլալը՝ հանդէպ աստուածային նշմարտութեանց: Պօղոս առաքեալ հրեաներուն մասին խօսելով՝ կ'ըսէ. «Անոնց միտքերը փակուեցան»: Ե՞րբ կը բացուի գոցուած կամ փակուած միտքը: Առաքեալը կը վկայէ որ մարդոց միտքին վրայ եղած ինքնազգացումը «կը վերնայ միայն այն ատեն՝ երբ Քրիստոսի հաւատան» (Բ.Կր 3.14): Այս իմաստով, գոցուած դռները կը բացուին՝ երբ հաւատանք Քրիստոսի: Սիրելի՛ ընթերցող, ունի՞ս անհրաժեշտ այն հաւատքը որ կրնայ դիմացդ բանալ երկինքի արքայութեան դուռը:

գ.– Օգոստինոս խօսելով «դռները...գոցած են» բառերուն մասին, կը բացատրէ, թէ՛ ժամանակը որուն կ'ակնարկուի այստեղ՝ Աստուծոյ խօսքին սովի ժամանակն է երբ կը փակուի մարդուն հասկացողութիւնը, երբ կը դադրի Աւետարանին իմաստութեան բաշխումը իբրեւ հաց: Պարզ բացատրութեամբ մը, գոց դուռը՝ գոց միտքն է ուր Աստուծոյ խօսքը չի կրնար թափանցել: Հեռու կենանք յամառութենէն, կասկածամտութենէն եւ անհաւատութենէն, որովհետեւ ընդհանրապէս յամառութիւնը, կասկածամտութիւնը եւ անհաւատութիւնն են որ կը փակեն մեր միտքը Աստուծոյ խօսքին լոյսին դիմաց:

դ.– Այլ հեղինակ մը կ'ըսէ. «Եթէ աշխարհ իր անհնազանդութեամբ փակեց դուռը, եկեղեցւոյ պարտականութիւնն է խնդրել Տիրոջմէն որ բանայ այս դուռը Աւետարանիչներուն դիմաց, որպէսզի առաջնորդեն հոգիները հոն՝ ուր հանգիստ ու յագեցում կայ Տիրոջմով»: Ո՛չ միայն եկեղեցւոյ (այս պարագայիս՝ եկեղեցականներուն) պարտականութիւնն է խնդրել Տիրուէն որ բանայ դուռը, այլեւ՝ պարտականութիւնն է ամէն մէկ հաւատացեալի: Իւրաքանչիւր անձ որ աշակերտ դարձած է Յիսուսի, պէտք է խնդրէ իրմէ որ լայնօրէն բանայ իր սրտին դուռը, իր խօսքին դուռը, իր փրկութեան դուռը, իր ողորմութեան դուռը, իր գթութեան եւ արքայութեան դուռը բոլոր մարդոց դիմաց անխտիր:

Յ.– «Փոքրիկներս բովս անկողինին մէջ են»: Հոս յիշուած փոքրիկները կասկած չկայ որ Աստուծոյ հետեւորդները իրենքն են: Սակայն Աստուծոյ ո՞ր հետեւորդներուն մասին է խօսքը: Երկու մեկնութիւններ կան այս ուղղութեամբ: Ոմանք կը կարծեն որ այս փոքրիկները յաղթական եկեղեցիին անդամներն են, այսինքն անոնք՝ որոնք, Պօղոս առաքեալին իսկ բառերով, Քրիստոսի բարի պատերազմը մղած, իրենց կեանքի ընթացքը աւարտած, հաւատքին պահած եւ այդպէս աշխարհէն մեկնած են: Իսկ ուրիշներ, «փոքրիկներ» բառին

ետին կը կարդան ներկայութիւնը զինուորագրեալ եկեղեցիին, այսինքն անոնց՝ որոնք տակաւին կ'ապրին այս աշխարհի մէջ, կը պայքարին մեղքի դէմ, կ'աշխատին Քրիստոսի փառքին ու անոր թագաւորութեան տարածման համար: Երկրորդ այս մեկնութիւնը աւելի ընդունուած է:

4.- «Քովս անկողինին մէջ են»: Ի՞նչ պէտք է հասկնալ այս խօսքով: Անոնք որոնք «փոքրիկները» ակնարկութիւն կը նկատեն յաղթական եկեղեցիին, կ'ըսեն, թէ՛ անկողինը կը պատկերացնէ այն կատարեալ միութիւնն ու մէկութիւնը որ գոյութիւն ունի Քրիստոսի եւ իր զաւակներուն միջեւ երկինքի մէջ, իսկ անոնք որոնք «փոքրիկները» ակնարկութիւն կը նկատեն զինուորագրեալ եկեղեցիին, կ'ըսեն, թէ՛ անկողինը կը պատկերացնէ այն փոխադարձ մտերմութիւնն ու սէրը որ կայ Քրիստոսի եւ իր հետեւորդներուն միջեւ երկրի վրայ:

5.- «Անկողին» բառին վերաբերեալ քանի մը նշումներ եւս .-

ա.- Մենք գիտենք որ անկողին կ'երթայ այն մարդը որ հանգիստի պէտք ունի: Հետեւաբար, Տիրոջ հետ անկողինին մէջ ըլլալ՝ կը նշանակէ Տիրոջ մօտ հանգիստ գտնել: Եւ Յիսուս ինքն իսկ ըսաւ թէ ով որ յոգնած ու բեռնաւորուած կը գգայ, թող բովը գայ եւ ինք հանգիստ պիտի տայ իրեն (Մտ 11.28):

բ.- Գիտենք նաեւ որ սովորաբար օրուան աւարտին է որ մարդ անկողին կ'երթայ: Արդ, ինչպէս մարդ օրուան աւարտին անկողին կ'երթայ, այնպէս ալ հաւատացեալ մարդը իր կեանքի աւարտին՝ Յիսուսի բնակարանը կ'երթայ, գիտելով որ Յիսուսի գի'րկը կ'երթայ, ճիշդ ինչպէս Ղազարոսի հոգին տարուեցաւ իր վախճանումէն ետք (Ղկ 16.22):

գ.- Ո՞վ աւելի հանգիստ կրնայ քան ինքն իր անկողինը երթայ, աշխատող ու տփնո՞ղ մարդը, թէ՛ ծոյլ ու ծալապատիկ նստած մարդը: Վստահաբար աշխատող մարդը ի՛նք: Աշխատող մարդը անկողինին մէջ հանգիստ կը քննարկէ ո՛չ միայն մարմինով, այլ նաեւ ինքնով, սիրտով ու միտքով: Չաշխատող մարդը՝ չի կրնար հանգիստ քննարկել:

6.- «Հետեւաբար չեմ կրնար ելլել տալ բեգի»: Արդէն բացատրեցինք թէ ինչո՞ւ Յիսուս անմիջապէս չ'ելլեր եւ դուր չի բանար: Բայց այստեղ յաւելեալ մատնանշում մը ընելը՝ կարեւոր է: Հոս արձանագրուած «չեմ կրնար» բառերը պէտք է հասկնալ «չեմ ուզեր» իմաստով: Յիսուս ո՛չ թէ չի կրնար ոտքի ելլել եւ կեանքի Հաց տալ, ո՛չ թէ չի կրնար փրկել, այլ չ'ուզեր փրկել. որո՞նց չ'ուզեր փրկել: Անոնց՝ որոնք չեն ուզեր փրկուիլ, որոնք կամովին կը մերժեն փրկութիւնը, որոնք գիտակցաբար կ'ընդդիմանան Աստուծոյ սուրբ կամքին: Յիսուս մարդը ազատ կամքով ստեղծած է եւ անոր դիմաց դրած է կեանքի ու մահուան նամբան, անէծքի ու օրհնութեան նամբան եւ պատուիրած է կեանքի՛ նամբան

ընտրել (Բ.Օր 30.19): Յիսուս կը պատուիրէ՝ բայց չ'ըստիպեր. կո՛չ կ'ուղղէ բայց չի պարտադրեր: Ան չի փրկեր մարդը իր կամքէն անկախ կամ հակառակ իր կամքին: Յիսուս արժայութիւն պիտի չմտցնէ մէկը որ չ'ուզեր արժայութիւն մտնել: Ան եթէ մեզի Հա՛ց պիտի տայ եւ մեզ պիտի փրկէ՝ պէտք է մեր մօտ՝ երկինքի հանդէպ փափա՛ք տեսնէ, յաւիտեանական կեանքին հանդէպ վառ ցանկութի՛ւն տեսնէ, իր անձին հանդէպ ծարա՛ւ տեսնէ, սէ՛ր ու կարօ՛տ տեսնէ, հետաքրքրութի՛ւն ու կապուածութի՛ւն տեսնէ:

«Վստահ եղէք, որ նոյնիսկ եթէ բարեկամութեան սիրոյն չելլէ եւ անոր ուզածը չտայ, սակայն թախանձանքներուն տեղի տալով՝ պիտի կատարէ անոր խնդրանքը» (Ղկ 11.8): Քանի մը նշումներ. –

1.– «Վստահ եղէք»: Այս բառերով մեր Տէրը կ'ուզէ վստահութիւն ներշնչել մեզի, որ ան պիտի կատարէ մեր խնդրանքը, եթէ երբեք ատիկա կորսուած մարդոց փրկութեան համար մատուցուած խնդրանք մըն է:

2.– «Բարեկամութեան սիրոյն» բառերը որոշապէս ցոյց կու տան որ հաց խնդրող անձը արդէն իսկ բարեկամական սիրալիւր յարաբերութեան մէջ է Քրիստոսի հետ: Այս մասին ասկէ առաջ անդրադարձանք:

3.– «Եթէ բարեկամութեան սիրոյն չելլէ եւ անոր ուզածը չտայ...»: Այս հաստատումը կը յիշեցնէ մեզի, որ մենք թէպէ՛տ կրնանք Յիսուսի հետ բարեկամ ըլլալ, բայց այս չի նշանակեր թէ ան մեր բոլոր խնդրանքներուն ու աղօթքներուն պիտի պատասխանէ: Կրնանք բան մը խնդրել եւ ատիկա իր կամքին հակառակ ըլլայ: Ամենէն հաւատացեալ մարդն անգամ առանց անդրադառնալու՝ կրնայ Տիրոջ կամքին հակառակ բան պահանջել Տիրոջմէն:

4.– «Սակայն թախանձանքներուն տեղի տալով՝ պիտի կատարէ անոր խնդրանքը»: Երբեք նշումներ. –

ա.– Հետաքրքրական է որ Քրիստոս կը պատասխանէ խնդրողին ո՛չ թէ անոր բարեկամութեան սիրոյն, այլ անոր թախանձանքներուն սիրոյն: Սա մէկ կողմէ ցոյց կու տայ որ Քրիստոս հաճոյք կ'առնէ ու կը հրճուի երբ կը տեսնէ մեր թախանձանքը մարդոց փրկութեան համար, իսկ միւս կողմէ, ցոյց կու տայ թէ Յիսուս իսկական բարեկամ կը սեպէ այն մարդը՝ որ կը թախանձէ, կ'աշխատի ու կը տփնի այլոց փրկութեան համար:

բ.– Երբ բան մը թախանձագին կերպով կը խնդրենք Աստուծմէ, նոյնիսկ եթէ մեր խնդրանքը չստանանք՝ գուր անցած չըլլար մեր թախանձանգին աղօթքը, որովհետեւ կը բաւէ որ աղօթք ըրինք եւ ատիկա արդէն մեզ կ'անեցնէ: Միայն պատասխանուած աղօթքները չեն որ մեզ կ'անեցնեն, այլ նաեւ չպատասխանուած աղօթքները: Եւ յաճախ

չպատասխանուած կամ գոնէ շուտով չպատասխանուած աղօթքները, մեզ աւելի՛ կ'անեցնեն քան շուտով պատասխանուած աղօթքները: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ չպատասխանուած աղօթքներուն մէջ է որ մենք կը յարատեւե՛նք, երկարատե՛ւ շունչի վրայ կ'աղօթենք, արցունքով կը պահանջենք, կը թախանձե՛նք, կը հայցե՛նք ու կը տագնապի՛նք, կ'եռա՛նք ու կ'եփի՛նք. եւ աղօթքի այս տա՛ք ու յամա՛ն հոգին է որ մեզ կ'անեցնէ՛ ու կը զօրացնէ՛, կը լեցնէ՛ ու կը սրբէ՛: Օգոստինոս կ'ըսէ. «Աղաչէ՛, խնդրէ՛ ու թախանձէ՛, որովհետեւ աղաչելով ու խնդրելով դուն ինքդ է որ կ'անիս եւ աւելի՛ն կը ստանաս»:

գ.– «Պիտի կատարէ անոր խնդրանքը»: Առակին վերջին այս բառերը անգամ մը եւս կու գան յիշեցնելու մեզի որ Յիսուս պիտի կատարէ մեր խնդրանքը, միայն թէ յարատեւող ու թախանձող ըլլանք մեր աղօթքներուն մէջ: Յիսուս կրնայ ուշացնել պատասխանը, բայց բնաւ չի մոռնար պատասխանել: Սուրբ Բասիլիոս կ'ըսէ. «Յիսուս կրնայ գիտակցաբար ուշացնել խնդրանքդ, որպէսզի կրկնապատկուի նախանձախնդրութիւնդ եւ իրեն գալու փափաքդ, եւ որպէսզի գիտնաս Աստուծոյ պարգեւին արժէքը եւ հսկես անոր վրայ զգուշութեամբ երբ գայն ստանաս: Ինչ որ մարդը յոգնութեամբ ու տփնութեամբ ձեռք կը ձգէ՝ կ'աշխատի գայն պահել, որպէսզի չկորսցնէ գայն, եւ գայն կորսնցնելով՝ զուր անցած չըլլայ իր ամբողջ յոգնութիւնը»:

Կ'աւարտեմ խորհրդածութեամբ.–

Իգնատիոս Վարդապետ կը հաստատէ, թէ «այս առակը ինչպէս նաեւ դատաւորին առակը կը յորդորեն եւ կը սորվեցնեն մեզի թէ յարատեւ պաղատանքով պէտք է փնտոենք զԱստուած: Արդ, քանի որ Աստուած է Տէրն ու տուողը բոլոր պարգեւներուն՝ ան կարելոր նկատեց սորվեցնել մեզի այս իրողութիւնը, այսինքն այն՝ որ ինք բնութեամբ տուող է...: Մենք կը բարկանանք եւ կը դժուարանանք երկար ժամանակ տրամադրել թախանձագինս բան մը խնդրելու համար, իսկ ինք կը բարկանայ երբ աղաչանքներով չենք բաղիսեր եւ թախանձանքով չենք փնտոեր: Սա իր բնութեան մաս կը կազմէ, որովհետեւ ան առատաձեռն է եւ բոլորին առջեւ կը դնէ իր պարգեւները եւ կ'ուզէ որ բոլորը յափշտակեն իր պարգեւները. եւ կը բարկանայ անոնց՝ որոնք մեծ յօժարութեամբ չեն փափաքիր առնել իրմէ իր պարգեւները, ընդհակառակը, անտարբեր կը մնան աստուածային բաներուն նկատմամբ, եւ դատարկ՝ երկնային բարութիւններէն»:

«Ճամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ»: Նայի՛նք մեր անմիջական միջավայրին: Որքա՛ն «ճամբորդ բարեկամներ» կան որոնք հոգեւորապէս աղքատ են, եւ ուստի՝ հոգեւոր հացի կարօտ: Անոնք կրնան դիմել մեզի եւ խնդրել մեզմէ որ օգնենք իրենց գՔրիստոս ընդունելու իբրեւ Փրկիչ: Բայց մենք չենք կրնար օգնել իրենց «գտնելու» գՔրիստոս եթէ մենք անձնապէս չենք գտած գայն: Սուրբ Հոգիով չառաջնորդուող մարդ մը չի կրնար ուրիշները Աստուծոյ առաջնորդել: Հոգեւորապէս թշուառացած մը չի կրնար հոգեւոր պայծառութեան ֆամբան ցոյց տալ ուրիշներուն: Անուղղակիօրէն Քրիստոս հոս մեզի կը սորվեցնէ որ դիմենք իրեն եւ իրմէ ստանանք կեանքի Հացը, կամ աւելի միշտ զինք ստանանք իբրեւ կեանքի Հաց, որովհետեւ ոեւէ ատեն «ճամբորդ» մը կրնայ մօտենալ մեզի եւ խնդրել մեզմէ ցոյց տալ իրեն կեանքի Հացին ֆամբան:

«Ճամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ»: Սիրելի՛ ընթերցող, եթէ ճամբորդ բարեկամ մը ֆովդ գայ եւ տունդ իջեւանի, դուն կը դառնաս պատասխանատու անոր կեանքին ու հանգիստին, անոր ապահովութեան եւ բարօր կեանքին: Սա ճշմարիտ է նաեւ հոգեւոր գետնի վրայ: Եթէ հոգեւորապէս կորսուած մը տունդ իջեւանի, այսինքն՝ ֆեզի դիմէ եւ առաջնորդութիւնդ խնդրէ ֆաֆաֆ յայտնելով ագատագրուիլ իր իրավիճակէն՝ կը դառնաս պատասխանատու Աստուծոյ առջեւ եթէ երբեք օգտակար չդառնաս իրեն եւ ուղղութիւն չտաս:

Ոեւէ ատեն ոեւէ մարդ կրնայ տունդ իջեւանիլ: Եթէ երբեք նկատի առնենք որ անձը որուն մօտ կ'իջեւանի ճամբորդ բարեկամը հաւատացեալ մըն է, սա ինքնին խօսուն վկայութիւն մըն է, թէ Աստուծոյ գաւակները վստահելի եւ ուրիշը ընդունելու պատրաստակամ մարդիկ կ'ըլլան, այլապէս ճամբորդ բարեկամներ ինչո՞ւ անոնց տունները պիտի իջեւանին: Աշխարհասէր մարդիկ վստահելի չեն ըլլար: Անոնց տունը իջնողը կրնայ անօթի եւ նոյնիսկ կողոպտուած մեկնիլ անոնց տունէն: Անոնք իրենց հանգիստը խանգարելով ֆամբաները պիտի չիյնան իրենց ֆովը եկող ճամբորդներուն համար հաց ֆնտոտելու: Նոյնիսկ եթէ ֆնտոտելու երթան, շուտով ձեռնունայն պիտի դառնան, պատրուակելով որ չգտան կամ լուրջ դժուարութիւններու հանդիպեցան:

Հաւատացեալ մարդուն վերաբերմունքը սակայն ամբողջովին տարբեր է: Ան չ'ընկրկիր ու չի նահանջեր դժուարութեանց դիմաց, մինչեւ որ ձեռք ձգէ կեանքի Հացը իրեն դիմողներուն համար: Առակին մէջ յիշուած հաւատացեալ մարդը եթէ ուզէր կրնար պատՆառաբանել թէ հաց ֆնտոտելու գնաց բայց բոլոր տուններուն դռները ֆակուած էին, անոնց լոյսերը մարած էին եւ տանտէրերը իրենց գաւակներուն հետ

միասին անկողինի մէջ էին, բայց այդպիսի բան չըրաւ: Չըրաւ, որովհետեւ իսկական հաւատացեալը անտարբեր չ'ըլլար ուրիշին հոգեւոր անօթութեան նկատմամբ: Ան փողոցէ փողոց կ'երթայ ու տունէ տուն կը պտրտի եւ բոլորին դռները գօրեղապէս կը բաղիւէ եւ հաց չգտած տուն չի դառնար: Ան հարկաւ այս բոլորը կ'ընէ, որովհետեւ գօրեղապէս կ'անդրադառնայ թէ ինք անձնապէս տալիք չունի, ուստի կը դիմէ այն երկնային Տունին որուն լոյսը մի'շտ վառ է եւ որուն դուռը մի'շտ բաց է եւ կ'ըսէ. «Ճամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ»:

«Եւ ես հրամցնելիք բան չունիմ»: Օ. Chambers կը հաստատէ ըսելով. «Երբ հանդիպիս մէկու մը որ հոգեկան տառապանքի մէջ է, խօսե՛ անոր Տէր Յիսուս Քրիստոսի խաչին մասին: Եթէ այդ հոգին կրնայ զԱստուած գտնել ուրիշ մամբով մը՝ այդ կը նշանակէ որ Քրիստոսի խաչը ամբողջովին պարապ բան է: Եթէ դուն կը կարծես որ քու տրամաբանութեամբդ եւ միջոցներովդ կրնաս օգնել մարդոց հոգեւորապէս անելու, վստահ եղի՛ր, որ Քրիստոսի խաչին թշնամի մըն ես: Քու ընելիքդ պարզապէս Աստուծոյ հետ շիտակ յարաբերութեան մէջ եղող խողովակ մը ըլլալ է, որպէսզի ան կարենայ քու միջոցաւդ հոսիլ, իրե՛ն յատուկ կերպերով եւ ո՛չ թէ քու անձնական մամբովդ կամ առանց Քրիստոսի խաչին պատգամովը»:

Սիրելի՛ ընթերցող, պիտի չկրնաս ուրիշին օգտակար դառնալ հոգեւորապէս մինչեւ որ սորվիս ըսել. «Ես հրամցնելիք բան չունիմ»: Առակին պատգամն է քեզի, որ վստահութեամբ, համարձակութեամբ եւ յարատեւութեամբ աղօթես քու եւ ուրիշներու պակասութեանց համար՝ կեանքի Հացին համար:

ՈՐՈՄԻՆ ԱՌԱԿԸ

«Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ, որով ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը անեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որոմն ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր.– "Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա եկաւ որոմը": Անիկա պատասխանեց.– "Ասիկա թշնամի մարդու գործ է": Ծառաները ըսին.– "Կ'ուզե՞ս որ երթանք եւ որոմը քաղենք": "Ո՛չ", – պատասխանեց տէրը.– "Որպէսզի չըլլայ թէ որոմը քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէք: Զգեցէ՛ք որ երկուքն ալ միասին անին մինչեւ հունձփ ժամանակ. այն ատեն հնձուորներուն կ'ըսեմ.– "Նախ որոմը քաղեցէ՛ք, խուրճեր կազմեցէ՛ք այրելու համար, եւ ապա քաղեցէ՛ք ցորենը եւ ամբարեցէ՛ք շտեմարաններու մէջ"» (Մտ 13.25–30):

«Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ»: (Մտ 13.25): Քանի մը հաստատումներ.–

1.– Յիսուս ինք կը բացատրէ տուեալ համարը ըսելով. «Լաւ սերմեր ցանողը Մարդու Որդին է, եւ արտը աշխարհն է: Լաւ սերմերը այն մարդիկն են, որոնք արքայութեան հետեւորդներն են» (Մտ 13.37–38):

2.– «Մարդ մը»: Այս մարդը «Մարդու Որդին է», այսինքն՝ Յիսուս: Ինչո՞ւ Յիսուս այս առակին մէջ ինքզինք կը կոչէ «մարդ» կամ «Մարդու Որդի»: Երկու պատճառներով.–

ա.– Զմոռնանք որ առակը կը խօսի աշխարհի կատարածին մասին, երբ Քրիստոսի երկրորդ գալուստը տեղի պիտի ունենայ: Յիսուս ինքզինք «մարդ» կամ «Մարդու Որդի» կը կոչէ, ցոյց տալու համար թէ ինք աշխարհ պիտի դառնայ իբրեւ «Մարդու Որդի», այլ խօսքով՝ իբրեւ մարդ, իբրեւ տեսանելի՝ մարդ: Յիշեմք երկու հրեշտակներուն խօսքերը ուղղուած Յիսուսի աշակերտներուն, երբ անոնք զարմացած կը դիտէին Յիսուսի համբարձումը երկինք. «Ո՛վ Գալիլեացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք» (Գրծ 1.11): Հրեշտակներուն այս բառերը յստակօրէն կը պարզեն որ Յիսուս իբրեւ մարդ պիտի դառնայ, եւ անոր վերադարձը մարդկային աչքին համար տեսանելի կերպով տեղի պիտի ունենայ:

բ.– Ինքզինք «Մարդու Որդի» կը կոչէ, ցոյց տալու համար թէ իր երկրորդ գալուստին, դատաստանի օրը, ինք՝ Յիսուս, իբրեւ «Մարդու

Որդի» պիտի դատէ մարդկութիւնը: Ճիշդ է որ ան Աստուծոյ Որդին է, բայց մեզի համար դարձաւ «Մարդո՛ւ Որդի», որպէսզի իր արիւնը թափելով մեզ փրկէ: Անոնք որոնք չընդունեցին եւ չեն ընդունիր իր քաւարար գոհագործութիւնը, դատաստանի օրը Յիսուս մա՛րդն է որ գիրենք պիտի դատէ:

3.- «Լաւ սերմեր ցանեց»: 27-րդ համարին մէջ եւս կը հանդիպինք «լաւ սերմեր» բառերուն: Սերմնացանին առակին մէջ սերմերը «լաւ» սերմեր իբրեւ չեն բնութագրուած. ինչո՞ւ այս առակին մէջ «լաւ սերմեր» բացատրութիւնը կը գործածուի: Կարելոյ է գտնել ինչո՞ւ-ին պատասխանը: Ըստեցաւ որ լաւ սերմը առաջին հերթին մարդը ինքն է: Այս ցոյց կու տայ որ Աստուած լաւ ու բարի ստեղծեց մարդը: Հոս մարդուն համար գործածուած «լաւ սերմ» բնութագրումը կու գայ հերքելու այն մտածողութիւնը, թէ՛ Աստուած մարդը մեղանշական բնութեամբ ստեղծած է:

Եթէ Աստուած մարդը մեղանշական բնութեամբ ստեղծած ըլլար մենք հոս պէտք չէր գտնէինք «լաւ» բառը: «Լաւ» բառին կողմին կու գայ աւելնալու ուրիշ բառ մը եւս, «ուղիղ» բառը, որ դարձեալ կ'պացուցանէ թէ Աստուած մարդը մեղանշական բնութեամբ չէ ստեղծած: Ժողովողի գրքին մէջ կը կարդանք. «Աստուած մարդը ուղիղ ստեղծեց...» (Ժղ 7.29): Աստուած անարդար պիտի ըլլար եթէ երբեք մեզ անուղիղ ստեղծած ըլլար եւ մեզմէ ուղիղ ըլլալ պահանջէր:

«Լաւ» եւ «ուղիղ» բառերուն շարքին կու գան աւելնալու ուրիշ երկու բառեր եւս՝ «ընտիր» եւ «բոլորովին մաքուր» բառերը: Աստուած կ'ըսէ. «Ես քեզ իբր ընտիր որթատունկ եւ բոլորովին մաքուր սերմ տնկեր էի...» (Եր 2.21): Մարդուն համար գործածուած «լաւ», «ուղիղ», «ընտիր» եւ «մաքուր» բառերը չեն արտօսեր մեզի հաստատելու թէ Աստուած մեզ (Ադամն ու Եւան) մեղանշական բնութեամբ ստեղծած է: (Այս նիւթին վերաբերեալ յաւելեալ մանրամասնութեանց համար, տե՛ս «Մեղանշական բնութեա՞մբ ստեղծուած ենք» վերնագրուած յօդուածը, «Ճշմարիտ Վերածնունդը» խորագրուած մեր գրքին մէջ):

4.- «Լաւ սերմեր ցանեց»: Ինչո՞ւ մարդը բնորոշուած է իբրեւ «լաւ (καλον) սերմ»: Քանի մը պատճառներով. –

ա.– Արդէն ըսի թէ մարդուն համար կը գործածուի «լաւ» սերմ բացատրութիւնը, ամէն բանէ առաջ ցոյց տալու համար որ Աստուած մարդը իբրեւ «լաւ» արարած ստեղծեց, այլ խօսքով՝ մեղանշական բնութեամբ չստեղծեց զանիկա: Եթէ ըսենք որ Աստուած մարդը մեղանշական բնութեամբ ստեղծեց, ըսած կ'ըլլանք այն՝ որ Աստուած մարդը մեղք գործելու համար ստեղծեց, եւ ուստի, եթէ մարդը մեղք

չգործէ՝ կը նշանակէ թէ ինքնիր բնութեան հակառակ է որ կը գործէ: Կրնա՞նք ըսել թէ մարդեղացած Աստուծոյ Որդին, քանի մեղք չգործեց՝ ինքնիր բնութեան հակառակ է որ գործեց: Քա՛լ լիցի որ այդպիսի բան ըսենք: Եթէ մեղք գործելը բնական ու մարդկային է, ուրեմն Յիսուս բնական ու մարդկային չէ՞ր: Ուստի, զգո՛յճ ըլլանք ըսելու թէ Աստուած մարդը մեղանչական բնութեամբ ստեղծեց:

բ.– Տակաւին, Յիսուս մարդը «լաւ սերմ» կ'անուանէ, ցոյց տալու համար թէ մարդիկ կրնան լա՛ւ մարդիկ ըլլալ եւ ո՛չ թէ չար մարդիկ: Յիսուսի բերնին մէջ գործածուած «լաւ» բառը կոչ մըն է մեզմէ իւրաքանչիւրին, լա՛ւ մարդիկ ըլլալու, առաքինի՛ մարդիկ ըլլալու, աստուածահաճո՛յ մարդիկ ըլլալու, աստուածասէր ու մարդասէր մարդիկ ըլլալու, հաւատքի ու աղօթքի՛ մարդիկ ըլլալու:

գ.– «Լաւ» բնութագրումը տակաւին, ցոյց կու տայ որ Աստուած մարդիկը իբրեւ լաւ արարածներ կը դիտէ, անոնց մէջ լաւը կը տեսնէ, անոնցմէ լաւը կ'ակնկալէ: Փորձենք մենք եւս Յիսուսի նման մարդիկը դիտել իբրեւ լաւ արարածներ. որքան ալ չար ըլլան անոնք, փորձենք անոնց մէջ տեսնել լաւը կամ լաւ բաժինը. եւ որպէսզի կարենանք անոնց մէջ տեսնել լաւ բաժինը, պէտք է մեզմէ հեռացնենք նախանձը, ատելութիւնը, մրցակցութեան ոգին, որովհետեւ այսպիսի մեղքերն են որ թոյլ չեն տար որ մեր նմանները «լաւ» մարդիկ կոչենք, կամ անոնց մէջ լաւ բաժինը տեսնենք:

Տ.– «Լաւ սերմեր ցանեց»: Խօսեցանք «լաւ» բառին մասին, հիմա խօսինք «սերմ» բառին մասին: Սերմնացանին առակին եւ անող սերմին առակին մէջ «սերմ»ը՝ Աստուծոյ իսոսքն է: Այստեղ (որոմի առակին մէջ) սերմը մարդիկը իրենք են, յատկապէս այն մարդիկը՝ «որոնք արքայութեան հետեւորդներն են», Յիսուսի իսկ բացատրութեամբ (Մտ 13.38): Արդ, ինչո՞ւ Յիսուս մարդիկը, յատկապէս իր հետեւորդները կը կոչէ «լաւ սերմեր»: Քանի մը պատճառներով.–

ա.– Մարդուն համար կը գործածուի «սերմ» բառը, սորվեցնելու համար մեզի որ մարդուն կեանքը մնայուն անումի եւ զարգացումի ընթացք մըն է: Ինչպէս սերմը ամէն օր կ'անի, այնպէս ալ մարդը, ամէն օր քիչ մը աւելի պէտք է անի իր աղօթական կեանքին մէջ, իր հաւատքին եւ աստուածսիրութեան մէջ:

բ.– Մարդը սերմի կը նմանցուի, ցոյց տալու համար, թէ ինչպէս սերմը ինքնիր մէջ անելու կարողութիւնը ունի, այնպէս ալ մարդը ինք, անելու կարողութեամբ օժտուած է: Բայց կարելորդ ուշադիր պէտք է ըլլալ որ սխալ կերպով չանինք, մեղքի մէջ չանինք, անհաւատութեան մէջ չանինք, այլ մեր հոգեւոր կեանքի՛ն մէջ անինք, մեր հաւատքի՛ն մէջ

անինք: Եթէ երբեք կան մարդիկ որոնք չեն անիր իրենց հաւատքի կեանքին մէջ՝ պիտի դատապարտուին անոնք, բայց անդին, կան այն մարդիկը՝ «որոնք արքայութեան հետեւորդներն են», եւ որոնք ցորենի նման պիտի հաւաքուին եւ ամբարուին Աստուծոյ արքայութեան շտեմարաններուն մէջ, ինչպէս առակին վերջին տողը ցոյց կու տայ:

6.- «Ցանեց իր արտին մէջ»: Ինչո՞ւ «ցանեց» ըսելու փոխարէն, չ'ըսուիր՝ «տնկեց»: Ե՞րբ կը գործածենք «տնկեց» բառը: Կը գործածենք երբ պզտիկ կամ մեծ ծառ մը պիտի տնկենք հողին մէջ: Սերմը ծառ չէ, այլ հատիկ մըն է, ուստի անիկա չի տնկուիր, այլ կը ցանուի: Ուստի, «տնկեց» բառը չի գործածուիր, որովհետեւ երբ ըսեմք որ Աստուած մարդը ծառի մը նման տնկեց, կը նշանակէ թէ ան մարդը որոշ փորձառութեամբ ու գիտութեամբ ստեղծեց: Բայց այդպէ՞ս է: Ո՛չ: Աստուած մարդը ծառի նման չստեղծեց, այլ սերմի՛ նման, այլ խօսքով՝ առանց փորձառութեան, առանց գիտութեան. մարդը ինքն էր որ կամաց-կամաց ամէն ինչ իր անձնական փորձառութեամբ պիտի սորվէր ու գիտնար:

7.- «Իր արտին մէջ»: Ի՞նչ ցոյց կու տայ «իր» ստացական դերանունը: Քանի մը բան.–

ա.- Տեսեմք որ «ցանողը Մարդու Որդին է, եւ արտը աշխարհն է»: Ուստի, «իր» բառը կը սորվեցնէ մեզի որ արտը, այսինքն՝ աշխարհը, Քրիստոսի՛ աշխարհն է եւ ո՛չ թէ Չարին:

բ.- «Իր» բառը նաեւ ցոյց կու տայ որ Քրիստոս ինքն է ստեղծիչը աշխարհին, եւ ո՛չ միայն ստեղծիչը, այլեւ՝ հոգատարը:

գ.- «Իր» բառը կը պարզէ որ Յիսուս իր արիւնը թափելով աշխարհի համար, զանիկա «իր»ը, այսինքն՝ իր սեփականութիւնը պիտի դարձնէր:

դ.- «Իր» բառը կը բացայայտէ թէ Յիսուս ինքն է տէրն ու տիրականը աշխարհին:

ե.- Վերջապէս, երբ Յիսուս աշխարհը կը կոչը «ի՛ր» աշխարհը, ասիկա մեզի պէտք է յիշեցնէ, թէ Սատանան չէ տէրը այս աշխարհին, ո՛չ ալ մարդիկը իրենք տէրերն են այս աշխարհին, ո՛չ ալ հրեշտակները իրենք տէրերն են այս աշխարհին:

8.- «Լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ»: Տակաւին, այս հաստատումը կը պարզէ որ Յիսուսի նպատակն է որ «լաւ սերմեր», այլ խօսքով՝ լա՛ւ մարդիկ, սո՛ւրբ մարդիկ, արդա՛ր մարդիկ, աղօթ՞ող մարդիկ, հաւատքով լեցո՛ւն մարդիկ ցանուին, այսինքն՝ ապրին այս աշխարհի մէջ, գործեն ու աշխատին այս աշխարհի մէջ: Ինչպէս

հողագործը լաւ սերմեր կը ցանէ իր արտին մէջ, այնպէս ալ Աստուած սուրբ ու արդար մարդիկ կը տարածէ համայն աշխարհի մէջ:

«Գիշեր մը, երբ ամէն մարդ ֆնացած էր, անոր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց» (Մտ 13.25): Քանի մը հաստատումներ.–

1.– Ո՞ր մարդիկը կը ներկայացնէ որոմը եւ ո՞վ է որոմ ցանող թշնամին: Յիսուս կը հաստատէ թէ որոմը «չարին հետեւորդներն են» իսկ «թշնամին որ ցանեց որոմը՝ Սատանան է» (Մտ 13.38–39):

2.– «Գիշեր մը, երբ ամէն մարդ ֆնացած էր»: Ինչո՞ւ Յիսուս կ'ըսէ թէ Սատանան «գիշեր» ատեն եկաւ եւ որոմ ցանեց. ի՞նչ ցոյց կու տայ ասիկա: Քանի մը բաներ.–

ա.– Յոյց կու տայ թէ Սատանան եւ սատանայութիւն ընող մարդիկ միշտ գիշերն է որ աւելի գործի կը լծուին: «Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին» (Յհ 3.20): Լոյսը ամէն բանի ինֆնութիւնը կը յայտնէ: Լոյսը նշմարտութիւնը կը բացայայտէ: Ահա թէ ինչո՞ւ Չարն ու չարագործները կ'ատեն լոյսը, որովհետեւ ատիկա իրենց նշմարիտ ինֆնութիւնն է որ հանդէս կը բերէ: Չարագործներ օր ցերեկով իրենց չարութիւնները չեն ըներ:

բ.– Չարեհ Արք. Ազնաւորեան «գիշեր» բառին ետին կը տեսնէ Սատանային գործելակերպը՝ ծածուկ կամ ֆողարկուած կերպով գործելու, եւ կ'ըսէ. «Մարդիկ երբ չարը կը գործեն, առհասարակ տեսանելի կերպով չեն գործեր: Ընդհանրապէս ֆողարկուած է նենգութիւնը, դաւը, խարդախութիւնը, գրպարտութիւնը, գողութիւնը: Այս բոլորը առհասարակ մարդոց կողմէ կը կատարուին ծածուկ կերպով...: Սատանան ինքն ալ աշխարհի մէջ կը գործէ առանց ինֆզիմֆ տեսանելի դարձնելու»:

գ.– Սատանային գործելը գիշեր ատեն, ցոյց կու տայ անոր խաւար ու խաւարասէր ըլլալը: Իսկ մարդիկ որոնք գիշեր ատեն չարիք կը գործեն՝ ատով ցոյց տուած կ'ըլլան թէ իրենք խաւարի գաւակներ են:

դ.– Գիշեր ատեն գործելը՝ գալիք յաւիտենական դատապարտութիւնն է որ կը պատկերացնէ: Հարկաւ դատապարտութիւնը անոնց՝ որոնք գիշեր ատեն կը գործեն, խաւարի գործեր կը գործեն:

3.– «Երբ ամէն մարդ ֆնացած էր»: Ի՞նչ ցոյց կու տան այս բառերը: Քանի մը բաներ.–

ա.– Մարդոց ֆնանալը՝ մարդոց անգիտութեան ակնարկութիւնն է: Հետեւաբար, այս բառերը կը պարզեն որ Սատանան եւ անոր չար արբանեակները կը գործեն առանց մարդոց գիտութեան, այլ խօսքով՝

առանց որ մարդիկ գիտնան թե Սատանան ի՛նչ ձեւերով կը մօտենայ իրենց, առանց որ զգան թե Սատանան ո՛ր կողմէն կը մօտենայ իրենց, առանց որ տեսնեն անոր լարած ծուղակները: Իրենց հոգեւոր կեանքին մէջ ամենէն փորձառու մարդիկն անգամ երբեմն չեն զգար թե Սատանան ինչ ձեւերով կը մօտենայ իրենց՝ մեղքի մէջ ձգելու համար:

բ.- «Երբ ամէն մարդ ֆնացած էր»: Նախադասութենէն յստակ կ'երեւի որ ցանոզը չէ որ ֆնացած էր, այլ՝ մարդիկը իրենք: Ցանոզը չի կրնար ֆնանալ, որովհետեւ ցանոզը Յիսուս ինքն է, Աստուած ինքն է: Սաղմոսագիրը կը վկայէ որ Աստուած չի մրափեր ու չի ֆնանար (Սղ 121.3-4): Այստեղ ֆնանալը կապ չունի մարմնաւոր բունի հետ: Խօսքը հոգեւոր բունի մասին է: Երբ մարդիկ հոգեւորապէս ֆնացած են, այլ խօսքով, երբ հոգեւոր արթնութիւն չեն ապրած՝ Սատանան շատ դիւրաւ կրնայ գալ եւ մեղքի որոմներ ցանել անոնց սրտին մէջ:

գ.- «Երբ ամէն մարդ ֆնացած էր» խօսքը, կրնանք նաեւ հասկնալ՝ «երբ ամէն մարդ պաղած էր» իմաստով: Այս բացատրութիւնը աւելի առնչուած է հոգեւոր կեանքի ապրող մարդոց քան պարզ մարդոց: Հոգեւոր կեանքի ապրող ամէն մարդ գիտէ որ երբեմն կու գան ժամանակներ երբ հոգեւոր մարդը պաղութիւն մը կը զգայ եւ աղօթելու իր կրակը կը մեղմանայ: Ասիկա բնական երեւոյթ է: Կարելորդ սակայն, երբ նման պաղութեան մէջ ենք, չդադրեցնենք մեր աղօթքը, որպէսզի հոգեւոր բունի չմտնենք, եւ Սատանան առիթէն օգտուելով՝ կասկածաւարտութեան որով չցանէ մեր մէջ:

դ.- Տակաւին, «երբ ամէն մարդ ֆնացած էր» խօսքը, պէտք է հասկնալ՝ «երբ ամէն մարդ թուլցած էր» իմաստով: Բոլոր հաւատացեալները նո՛յն եռանդով եւ նո՛յն ոգիով չեն շարունակեր իրենց հաւատքի կեանքը. ոմանք կը թուլնան, ոմանք կը տկարանան, ոմանք նոյնիսկ նահանջ կ'արձանագրեն: Երբ Սատանան նշմարէ որ մենք սկսած ենք թուլնալ մեր հաւատքի կեանքին մէջ, կը սաստկացնէ իր յարձակումները, որպէսզի կարենայ մեզ ամբողջովին տապալել: Գիտնալով այս իրողութիւնը, արթն'ւն ըլլանք եւ ինդրենք Տիրոջմէն որ մեզ զօրացնէ, որովհետեւ ի՛նքն է «յոգնածին ոյժ տուողը ու կարողութիւն չունեցողին շատ զօրութիւն հասցնողը», եւ ի՛նքն է որ իրեն ապաւինողներուն ոյժը կը նորոգէ, որպէսզի «վագեն ու չթուլնան... , քալեն ու չյոգնին» (Ես 40.29, 31):

ե.- Աստուածաշունչի մեկնիչ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի կը բացատրէ թէ այստեղ ֆնացած մարդիկը կը ներկայացնեն այն հովիւները՝ որոնք իրենց սեփական ոյժին վստահած կը գործեն հօտին համար: Այսպիսիներուն մէջ «ես»ը զօրաւոր կ'ըլլայ, որովհետեւ կը

կարծեն որ իրե՛նք են արտին պատասխանատուները, փոխանակ ընդունելու որ Քրիստո՛ս է տէրը արտին:

գ.- Ըստ Յովհաննէս Ոսկեբերանի, իր միտքով երկնաւոր Փեսային չկապուած անձր՝ միտքով քննարկ կը սեպուի. եւ ուստի, Սատանան կրնայ մագլցիլ անոր միտքը եւ հոն որով ցանել: Հետեւաբար, ամէն հաւատացեալ, եկեղեցական թէ աշխարհական, պէտք է միշտ հոգեւորապէս արթո՛ւն եւ Աստուծոյ կապուած ըլլայ, որպէսզի Աստուած պաշտպանէ արտը թշնամիին յարձակումներէն, եւ որպէսզի չկարենայ իր որովները նետել եկեղեցւոյ մէջ կամ եկեղեցւոյ անդամ հաւատացեալին սրտին մէջ:

4.- «Անոր թշնամին եկաւ»: Որո՞ւն թշնամին եկաւ եւ ո՞վ էր թշնամին: Տեսանք որ թշնամին Սատանան ինքն է (Մտ 13.39), իսկ թէ որո՞ւն թշնամին է Սատանան. յստակ որ Քրիստոսի՛ թշնամին է, քանի որ ցորենի սերմերը ցանողը Քրիստոս ինքն է: Այլ խօսքով՝ Սատանան ո՛չ միայն ցորենին թշնամին է, այլ նաեւ ու մանաւանդ՝ ցորենը Յանդիին թշնամին, այս է ինչ որ ցոյց կու տայ «անոր» ցուցական դերանունը:

Ուշագրաւ է որ Քրիստոս իր հետեւորդներուն թշնամիները՝ ի՛ր անձին թշնամի կը նկատէ: Յիշեցէ՛ք որ երբ Քրիստոս երեւցաւ Սոդոսի անոր չըսաւ. «Ինչո՞ւ կը հալածես քրիստոնեաները», այլ՝ «Ինչո՞ւ կը հալածես զիս» (Գրծ 9.4): Քանի Քրիստոս մեր դէմ յարուցուած հալածանքը՝ նոյնինքն իրե՛նք դէմ յարուցուած կը սեպէ, ասիկա պէտք է վստահութիւն տայ մեզի, թէ ան տէր ու պաշտպան պիտի կենայ մեզի, ընդդէմ մեր թշնամիներուն:

5.- «Անոր թշնամին եկաւ»: Ինչո՞ւ Յիսուս Սատանան կը կոչէ՛ թշնամի: Քանի մը պատճառներով.-

ա.- Ամէն բանէ առաջ, պէտք է նկատի առնել որ Յիսուս Սատանան կը կոչէ ի՛ր թշնամին: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ Սատանան Արուսեակ անունով քերովքէ մըն էր որ գլուխ ցցեց Աստուծոյ դէմ եւ փորձեց անոր գահը գրաւել, բայց չյաջողեցաւ ու տապալեցաւ: Ճիշդ ասոր համար ալ, Աստուած Սատանան ուղղակիօրէն ի՛ր թշնամին կը սեպէ, եւ Սատանան ալ զԱստուած՝ ի՛ր թշնամին: Այս իմաստով, կրնանք ըսել որ Սատանան Քրիստոսի աստուածութեա՛ն եւ աստուածային փառքին ու պատիւին թշնամին է:

բ.- Սատանան «թշնամի» կը կոչուի, ո՛չ միայն որովհետեւ մեր Փրկիչին թշնամին է, այլեւ որովհետեւ մեր փրկութեան թշնամին է, մեր յաւիտենականութեան թշնամին է:

բ.– Ան «թշնամի» կը կոչուի, որովհետեւ թշնամի է ամէն բանի որ լաւ ու բարի է, ամէն բանի որ երկնային ու աստուածային է: Ան բարիներուն, բարեգործներուն ու բարութեան ռիսերիմ հակառակորդն է:

դ.– Վերջապէս, «թշնամի» բառը պէտք է մեզ գգուշութեան եւ արթնութեան հրաւիրէ: «Թշնամի» բառը պէտք է մնայուն կերպով յիշեցնէ մեզի որ մենք գորաւոր ընդդիմադիր եւ ռիսակալ թշնամի մը ունինք: Սատանան այնպիսի ընդդիմադիր մըն է, որ նահանջ չ'արձանագրեր եթէ երբեք կատաղի ընդդիմութեան չհանդիպի: Ահա թէ ինչո՞ւ Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Դէմ դրէ՛ք չարախօսին՝ Սատանային, եւ հեռու պիտի փախչի ձեզմէ» (Յկ 4.7):

6.– «Անոր թշնամին եկաւ»: Ի՞նչ ցոյց կու տայ հոս արձանագրուած «եկաւ» բառը: Քանի մը բաներ.–

ա.– «Եկաւ» բառը կը պարզէ որ Սատանան առիթ ու պատճառ կը փնտռէ, յարձակելու հաւատացեալ մարդոց վրայ, միշտ անոր համար ալ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բնաւ առիթ մի՛ տա՛ք Սատանային» (Եփ 4.27):

բ.– «Եկաւ» բառը կը բացայայտէ որ ամէն անգամ երբ Յիսուս լաւ սերմ մը, հաւատքի սերմ մը, յոյսի սերմ մը, սիրոյ սերմ մը ցանէ մեր սրտին մէջ, Սատանան կու գայ եւ կը փորձէ որո՞մ ցանել մեր մէջ, կասկածամտութեան եւ թերահաւատութեան որո՞մը:

գ.– «Եկաւ» բառը ցոյց կու տայ որ Սատանան միշտ պատրաստ է մարդուն վնաս հասցնելու:

7.– «Որո՞մ ցանեց ցորենին մէջ եւ գնաց»: Նախ խօսինք «որո՞մ» բառին մասին: Երեք մատնանշումներ.–

ա.– «Որո՞մ ցանեց»: Ինչո՞ւ Յիսուս Սատանային կողմէ ցանուող որո՞մի մասին կը խօսի եւ ո՛չ թէ տարբեր տեսակի փուշի մը, տատասկի մը, կամ վնասակար խոտի մը մասին: Գիտնալու համար այս հարցումին պատասխանը, պէտք է գիտնալ հետեւեալը.– Տորենի հասկերը եւ որո՞մի հասկերը շատ կը նմանին իրարու. այնքան կը նմանին, որ դժուար կ'ըլլայ զանոնք իրարմէ զանազանել: Իրարմէ կը զանազանուին միայն այն ատեն՝ երբ ցորենի հասկը սկսի ցորենով լեցուիլ: Ուստի, Յիսուս կը խօսի որո՞մ ցանուելու մասին, որպէսզի ցոյց տայ մեզի թէ Սատանան երբեմն կը սորվեցնէ իր հետեւորդներուն ցորեն՝ ձեւանալ, այլ խօսքով՝ հաւատացեալ՝ ձեւանալ, քրիստոնեայ՝ ձեւանալ, լոյսի որդի՝ ձեւանալ: Պօղոս առաքեալ հաստատել է սոք որ Սատանան «լուսաւոր հրեշտակի կերպարանքով կը ներկայանայ», անմիջապէս կ'աւելցնէ ըսելով. «Հետեւաբար, երբեք տարօրինակ չէ, որ անոր ծառայողները իրենք ալ արդարութեան ծառաներու կերպարանքով կը ներկայանան» (Բ.Կր 11.14–15):

Ջարեհ Ա.բ. Բ.գնաւորեան խօսելով որումի մասին՝ կ'ըսէ. «Որումը վնասակար բոյսի տեսակ մըն է, որ իր սկզբնական երեւոյթով միշտ ցորենին կը նմանի: Սկիզբը երբ տակաւին ցորենը մանր կ'ըլլայ գայն որումէն զանազանելը դժուար կ'ըլլայ. ժամանակի ընթացքին սակայն, ցորենի հասկերը թէ՛ աւելի կը մեծնան եւ թէ՛ աւելի կը լեցուին, եւ ուստի, գայն որումէն գատորոշելը աւելի դիւրին կ'ըլլայ: Որումին եւ ցորենին իրարու նմանելուն կամ իրարու հետ շփոթուելուն իրողութիւնը ցոյց կու տայ մեզի կարեւոր բան մը, այն՝ որ երբեմն բարին ու չարը իրարու հետ կը շփոթենք, երբեմն չարը կը գործէ բարիին երեւոյթով, եւ ասիկա պատճառ կ'ըլլայ որ մենք առաջին հայեացքով դժուար գիտնանք երեւոյթի մը, մարդու մը կամ մարդկա-յին արարքի մը ետին կանգնող դիտումը, թէ իսկապէս բարի⁶ է, թէ՛ չար: Յանախ ամենէն չար գործերը բարի երեւոյթներու տակ կը ծածկուին եւ ատոր համար է որ մենք շուտ կը խաբուինք: Ժամանակը սակայն ամէն բան կը յայտնէ, ժամանակը որ կ'անցնի, ինքնաբերաբար չարին գործու-նէութեան որոշ երեսները կը բացայայտուին եւ մենք հնարաւորութիւնը կ'ունենանք զինք մանչնալու իր գործելակերպէն, իր գործունէութենէն, իր արդիւնքէն»:

բ.- Որոշ մեկնիչներ նկատի առնելով որ որումը ցորենին կը նմանի եւ սակայն ցորեն չ'ունենար իր մէջ, գայն կոչած են «սուտ ցորեն»: Յովհաննէս Երզնկացի Մատթէոսի իր մեկնութեան մէջ, կը հաստատէ թէ որումը կը ներկայացնէ սուտ մարգարէները, սուտ առաքեալները, հակաՔրիստոսները, ինչպէս նաեւ հերձուածողները, որոնք Սատանա-յին կողմէ գաղտագողի կերպով սերմանուեցան հաւատքի ուղղափառ սերմերուն մէջ: Չմոռնանք որ Աստուածաշունչը բազմաթիւ առիթներով խօսեցաւ սուտ առաքեալներու ու մարգարէներու մասին եւ զգուշացուց անոնցմէ (Մտ 24.24: Ա.Յհ 4.1: Բ.Կր 11.13):

Յովհաննէս Երզնկացիի նման, Յերոնիմոս ինք եւս որումի վերաբերեալ գրեթէ նոյն բանը կ'ըսէ. «Եկեղեցւոյ եպիսկոպոսը պէտք չէ քննայ, որպէսզի իր անտարբերութեան պատճառով, թշնամի մարդիկ չգան եւ որում, այլ խօսելով՝ հերետիկոսներու ուսուցումներ չցանեն եկեղեցւոյ մէջ»:

գ.- Ըսինք, որ որումը հացագգիներու ընտանիքին պատկանող վնասակար բոյսի տեսակ մըն է: Սովորաբար որումը կը բուսնի ցորենի եւ գարիի արտերու մէջ եւ կը մագլցի ու կը փաթթուի անոնց շուրջ: Արդ, ինչպէս որումը կը մագլցի ու կը փաթթուի գարիին ու ցորենին, այնպէս ալ մեղքը ինք, կրնայ մագլցիլ դէպի մեր սիրտը եւ փաթթուիլ մեզի, եթէ երբեք մենք զմեզ աղօթքով չպաշտպանենք:

8.- «Որո՞ւմ ցանեց ցորենին մէջ»: Տեսանք որ որո՞ւր «չարին հետեւորդներն են»: Ուստի, որո՞ւին ցանուիլը ցորենին մէջ՝ մեզի կը յիշեցնէ չար մարդոց ներկայութիւնը՝ բարի մարդոց կողմին, անհաւատներու ներկայութիւնը՝ հաւատացեալներու շարքին: Եւ հետաքրքրական է, ինչպէս քանի մը տող վեր ըսի, որո՞ւր ցորենի եւ գարիի արտերու մէջ է որ կը բուսնի: Արդ, ինչպէս որո՞ւր ցորենի եւ գարիի արտերու մէջ է որ կը բուսնի, այնպէս ալ, ամբարիշտ մարդիկ հաւատացեալներու կեանքին մէջ է որ «կը բուսնին»:

Ամէն անգամ երբ Սատանան տեսնէ ցորեններու, այլ խօսքով՝ հաւատացեալներու խումբ մը քով-քովի եկած են Տէրը պաշտելու ու փառաբանելու համար, անմիջապէս իր հետեւորդներէն ոմանց կը սորվեցնէ կեղծ քրիստոնեայ ձեւանալ եւ երթալ ու մտնել այդ խումբէն ներս եւ աւեր գործել այդտեղ: Պօղոս առաքեալ խօսելով այս կեղծ քրիստոնեաներուն մասին՝ կ'ըսէ. «Հաւատացեալներու շարքերուն սպրդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու... համար» (Գղ 2.4):

9.- Ինչո՞ւ Յիսուս Չարին հետեւորդները որո՞ւի կը նմանցնէ: Բազմաթիւ պատճառներով: Յիշեմք անոնցմէ քանի մը հատը.-

ա.- Տեսանք ասկէ առաջ որ որո՞ւր կը նմանի ցորենի եւ սակայն իր մէջ պարապ կ'ըլլայ: Ուստի, Յիսուս Չարին հետեւորդները որո՞ւի կը նմանցնէ, ցոյց տալու համար որ անոնք պարպուած են հաւատքէ, սէրէ եւ բոլոր տեսակի առաքինութիւններէ:

բ.- Որո՞ւր ցորենի կը նմանի բայց ցորեն չէ. ուստի, Չարին հետեւորդները որո՞ւի կը նմանցուին, բացայայտելու համար որ անոնք հաւատացեալներու կը նմանին, այլ խօսքով՝ հաւատացեալ կը ձեւանան կամ կ'երեւին, բայց հաւատացեալ չեն, այլ՝ կեղծաւոր մարդիկ:

գ.- Ոեւէ երկրագործ որո՞ւր հաւաքելէ ետք՝ կ'այրէ գայն, որով-հետեւ ոչ մէկ բանի կրնայ օգտակար դառնալ: Մեր Տէրը Չարին հետեւորդները որո՞ւի կը նմանցնէ, որպէսզի յիշեցնէ մեզի թէ անոնք դատաստանի օրը գեհեների կրակին մէջ պիտի նետուին:

դ.- Որո՞ւին «պարտականութիւնը» նեղելն է ցորենը եւ հողէն անոր եկած աւիշը իւրացնելն է: Հետեւաբար, Չարին հետեւորդները որո՞ւի կը նմանցուին, որպէսզի ցոյց տրուի մեզի թէ անոնց գործը հաւատացեալներուն նեղութիւն տալն է, զանոնք հալածելն է:

ե.- Որո՞ւր լեցուն կը ձեւանայ, բայց երբ մօտենանք իրեն, կը տեսնենք որ դատարկ է, այս իմաստով, որո՞ւր կը խաբէ: Յիսուս Չարին հետեւորդները որո՞ւի նմանցնելով՝ կ'ուզէ զգուշացնել մեզ որ

չխաբուիմք անոնցմէ, եւ ո՛չ ալ մենք խաբենք կամ խաբուսիկ կեանք մը ապրինք:

10.- «Ցանեց»: Այս բառին վերաբերեալ երկու մատնանշումներ.–

ա.– Մեկնիչներ կը հաստատեն որ որոմը չի ցանուիր, այլ ինքնիրեն կը բուսնի: Արդ, ինչո՞ւ Քրիստոս այստեղ որոմը ցանուած կը ներկայացնէ: Երբոր «ցանուած» բառը կը գործածենք, յստակ է որ ցանող մը կայ: Ցանողը Սատանան է: Կը ցանէ որոշ նպատակ մը հետապնդելով: Ան կը հետապնդէ Աստուծոյ գործունէութիւնը մարդուն կեանքին մէջ: Ամէն անգամ երբ տեսնէ որ Աստուած իր օրհնութիւնը կը թափէ որոշ անհատի մը վրայ՝ կը ջանայ ինքն ալ իր անէծքը թափելու անոր վրայ: Որոմի առակին մէջ թէ՛ Քրիստոս եւ թէ՛ Սատանան երկուքն ալ կը ներկայանան որպէս սերմնացաններ: Քրիստոս բարին կը սերմանէ, իսկ Սատանան՝ չարը: Այս իրողութիւնը կը պարզէ թէ Սատանան հակառակորդ մըն է Քրիստոսի եւ իր կատարած գործերուն:

բ.– «Ցանեց» բացատրութիւնը աշխատանք կ'ենթադրէ, միգ ու ջանք կ'ենթադրէ: Հետեւաբար, այս բառը կը պարզէ որ Սատանան աշխատանք կը տանի մարդուն կործանումին համար: Ինչպէս Աստուած մնայուն կերպով կը գործէ մեր փրկութեան համար, նոյնպէս ալ Սատանան մնայուն կերպով կը գործէ մեր կորուստին համար:

11.- «Ցորենին մէջ»: Որոմը «ցորենին մէջ» է որ կը ցանուի եւ ո՛չ թէ քովը կամ քիչ մը անդին: Այս ցոյց կու տայ թէ Չարը «ինքզինք կ'ուզէ հակադրել բարիին, կ'ուզէ բարիին տեղը առնել, կ'ուզէ անոր դիրքը գրաւել» այս աշխարհին մէջ, կ'ըսէ Չարեհ Արք. Ազնաւորեան: Քննե՛նք մեր անձերը, տեսնելու համար թէ արդեօք չարը բարիին տեղը չէ՞ գրաւած մեր կեանքերուն մէջ, խօսքը գործին տեղը չէ՞ առած: Քննե՛նք մեր անձերը, տեսնելու համար թէ արդեօք թոյլ չե՞նք տուած որ Սատանան մեր սրտի ցորենին մէջ որոմ ցանէ, այլ խօսքով՝ մեր հաւատքին մէջ անհաւատութիւն խառնէ, մեր վստահութեան մէջ՝ կասկած, մեր սիրոյն մէջ՝ քիչ մը ատելութիւն:

12.- «Ցորենին մէջ»: Սկիզբը մեզի չ'ըսուիր թէ ցանուած սերմերը ի՞նչ սերմեր են. հոս սակայն յայտնի կ'ըլլայ թէ անոնք ցորենի սերմեր են: Արդ, ի՞նչ կը ներկայացնէ ցորենը: Քանի մը բան.–

ա.– Վերեւ տեսանք որ ցորենի լաւ սերմերը «արժայութեան հետեւորդներն են»:

բ.– Ցորենի լաւ սերմեր են նաեւ Աստուծոյ կողմէ մարդուն տրուած պարգեւներն ու շնորհքները: Յակոբոս առաքեալ կը հաստատէ որ ամէն լաւ ու բարի բան Աստուծմէ է որ կու գայ (Յկ 1.17):

գ.– Յորենի լաւ սերմ մըն է նաեւ Աստուծոյ խօսքը, որ Քրիստոսի կողմէ կը ցանուի աշխարհի արտին մէջ եւ կարողութիւնը ունի մեր հոգիները փրկելու (Յկ 1.21):

դ.– Յորենի լաւ սերմ մըն է մանաւանդ Սուրբ Հոգիին հպումը մեր սրտին, մեզ դարձի բերելու նպատակով:

13.– Ինչո՞ւ Յիսուս արքայութեան հետեւորդները կը մմանցնէ ցորենի: Քանի մը պատճառներով.–

ա.– Յորենի հասկը լեցուն կ'ըլլայ ցորենով: Ան որովի մման դատարկ չէ: Արդ, Յիսուս իր հետեւորդները կը մմանցնէ ցորենի, ցոյց տալու համար որ անոնք պէտք է լեցո՛ւն ըլլան հաւատքի կրակով:

բ.– Որումը լեցուն կը ձեւանայ բայց մէջը պարապ կ'ըլլայ, ուստի՝ կը խաբէ, բայց ցորենը չի խաբեր, որովհետեւ մէջը լեցուն կ'ըլլայ: Յիսուս արքայութեան հետեւորդները ցորեն անուանելով՝ կոչ ուղղած կ'ըլլայ անոնց հեռո՛ւ մնալու խաբէութենէն եւ չմմանելու ամպի մը որ ջուր չունի, կամ աղի մը որ համ չունի:

գ.– Եթէ մտաբերենք որ հացը ցորենի հատիկներէն կը պատրաստուի, եւ եթէ մտքէ չհանենք թէ Քրիստոս ի՛նքն է կեանքի հացը (Յհ 6.48), յստակ եղած կ'ըլլայ, թէ Քրիստոս մեզ ցորենի մմանցնելով, կ'ուզէ մմանութիւն մը գտնել իր եւ մեր միջեւ, աւելի միշտ, կ'ուզէ որ իրեն մմանելու աշխատանք տանինք:

դ.– Աշխարհի մէջ ամենէն շատ ցանուածը ցորենն է, որովհետեւ մարդկութիւնը անկէ է որ կ'ուտէ իր ամենօրեայ հացը: Առանց ցորենի՝ աշխարհ ո՛չ միայն անօթութեան կը մատնուի, այլեւ՝ սովի: Յիսուս մեզ ցորենի կը մմանցնէ, որպէսզի յիշեցնէ մեզի թէ մենք մարդիկը հոգեւորապէս կշտացնելու առաքելութիւնը ունինք այս աշխարհին մէջ: Ինչպէս առանց ցորենի աշխարհի մէջ կրնայ սով տիրել, այնպէս ալ առանց Քրիստոսի հետեւորդներուն բերելիք վկայութեան՝ աշխարհ դատապարտուած է հոգեւորապէս սովամահ ըլլալու:

14.– «Եւ գնաց»: «Գնաց» ըսելով Քրիստոս ըսել չ'ուզեր թէ Չարը մեր մէջ իր սերմը ցանելէ ետք՝ կը լքէ մեզ: Ան մնայուն կերպով կը հետաքրքրուի մեզմով որպէսզի կործանէ մեզ: Հոս «գնաց» բացատրութիւնը կը պարզէ թէ որումը մարդուն սրտին մէջ ցանուելէ ետք, ինքնաբերաբար տեղ կը գտնէ այդտեղ, եւ հետեւաբար, Սատանան կարիքը չզգար հոն կենալու, «հողը մշակելու ու ջրելու համար»:

«Երբ սերմերը անեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որումն ալ երեւցաւ» (Մտ 13.26): Քանի մը մատնանշումներ.–

1.– Տեսանք որ Տիրոջ կողմէ ցանուած սերմերը ակնարկութիւն են արքայութեան հետեւորդներուն, աստուածատուր պարգեւներուն, եւ

Աստուծոյ կենսատու խօսքին: Այս իմաստով, երբ Քրիստոս կը հաստատէ թէ «սերմերը անեցան եւ սկսան հասկ կազմել», ըսել կ'ուզէ թէ Աստուծոյ մարդիկը իրենց հոգեւոր կեանքին մէջ տեղեւոր չեն ընել, այլ սերմի նման կ'անհետնան եւ ատոմ հասկի կը վերածուին:

Ինչպէս հասկը ցորենով կը լեցուի, այնպէս ալ հաւատացեալները Աստուծոյ Հոգիով կը լեցուին եւ աստուածատուր պարգեւներով կը հարստանան, եւ ժամանակի ընթացքին Աստուծոյ խօսքն ալ խորունկ արմատներ կը նետէ անոնց սրտին մէջ:

2.- Աստանան լուր չի մնար երբ տեսնէ որ հաւատացեալներ կ'անհետնան իրենց հաւատքին մէջ եւ կը խորանան Քրիստոսի հետ իրենց յարաբերութեան մէջ, այլ անմիջապէս գործի կը լծուի: Ահա թէ ինչո՞ւ Քրիստոս խօսելէ ետք սերմերուն անելուն եւ հասկ կազմելուն մասին, անմիջապէս կ'աւելցնէ ըսելով. «Այն ատեն որումն ալ երեւցաւ»:

Թէեւ ցորենի սերմերն ու որումը միաժամանակ կ'անհետնան, բայց հոս Քրիստոս կարծէ՛ք գիտակցօրէն որումին երեւումը կը ներկայացնէ հասկին կազմուելէն ետք. «Այն ատեն որումն ալ երեւցաւ»: Որումը չէր կրնար երեւիլ երբ տակաւին ցորենի հասկեր մէջտեղ չկային: Ըսել կ'ուզեմ, թէ Չարը մեր կեանքերուն մէջ հանդէս կու գայ միայն այն ատեն՝ երբ յառաջխաղացք արձանագրենք մեր հոգեւոր կեանքին մէջ:

3.- Կարգ մը մեկնիչներ կը հաստատեն թէ «այն ատեն որումն ալ երեւցաւ» բառերը մասնաւոր ժամանակի մը ակնարկութիւն են: Որումի նմանող մարդիկը կրնան ծածկել իրենց ճշմարիտ ինքնութիւնն ու նկարագիրը մինչեւ որոշ ատեն մը: Երբ փորձութիւններու հանդիպին, անոնց իսկական ինքնութիւնն ու նկարագիրը հանդէս կու գայ: Ո՞վ չի գիտեր որ փորձութիւններն են որ մարդոց իրական նկարագիրը կը յայտնաբերեն: Փորձութիւնները կարեւոր են, իրարմէ զատորոշելու համար Աստուծոյ եւ Սատանային հետեւորդները:

4.- Ե՞րբ երեւցաւ որումը: Երեւցաւ հասկին կազմուելէն ետք: Ինչո՞ւ չերեւցաւ հասկին ցորենով լեցուելէ ետք: Գտնելու համար պատասխանը այս հարցումին, պէտք է գիտնալ հետեւեալը.- Ցորենին կեանքը չորս մասի կը բաժնուի.- ա) սերմ, բ) ցօղուն, գ) հասկ, դ) ցորեն: Նախ սերմը կը սերմանուի հողին մէջ, ապա սերմը կը ծլի եւ ցօղունի կը վերածուի, անկէ ետք ցօղունը հասկի կը վերածուի, որմէ ետք հասկը ցորենով կը լեցուի եւ պատրաստ կ'ըլլայ ֆաղուելու: Հաւատացեալ մարդուն կեանքն ալ նոյն այս փուլերէն կ'անցնի: Ա) Նախ իր մէջ կը սերմանուի Աստուծոյ խօսքը, այլ խօսքով՝ կը լսէ կամ ականջ կու տայ Աստուծոյ խօսքին: Բ) Աստուծոյ խօսքը լսելէ ետք՝ պէտք է խորհրդածէ ու խոկայ անոր մասին, որպէսզի մէջը արմատ նետէ եւ ծլի ու ցօղուն կազմէ, այլ խօսքով՝

որոշում անէ Յիսուսի հետեւելու: Գ) Յիսուսի հետեւելու իր որոշումը պէտք է ի գործ դնէ, որպէսզի այս անգամ հասկի վերածուի, այսինքն՝ պարզ հաւատացեալներու խումբին մաս կազմէ: Դ) Պարզ հաւատացեալներու շարքին մաս կազմելէ ետք՝ պէտք չէ բաւարարուի, այլ պէտք է աշխատի ցորենով լեցուիլ, այլ խօսքով՝ հաւատով լեցուիլ, աղօթքի կրակով լեցուիլ, Սուրբ Հոգիով լեցուիլ, սրբութեամբ լեցուիլ:

Որոմնացան Սատանան ուշի ուշով կը հետեւի մարդու կեանքին այս չորս հանգրուաններուն, եւ թէպէտ միշտ (բոլոր հանգրուաններուն) կը յարձակի մարդուն վրայ, բայց ամենէն շատ՝ երրորդ հանգրուանին է որ կը յարձակի, երբ մարդը այլեւս Քրիստոսի հետեւելու իր որոշումը կը սկսի գործադրել: Ինչո՞ւ Սատանան յարձակում կը գործէ երրորդ այս հանգրուանին: Յարձակում կը գործէ, որպէսզի չանցնի չորրորդ հանգրուանին, որ ցորենով, այսինքն՝ հաւատով ու Սուրբ Հոգիով լեցուելու հանգրուանն է: Ըստ մեր ուսումնասիրած համարին, Սատանան երրորդ այս հանգրուանին է որ մարդուն վրայ յարձակում կը գործէ: Անգամ մը եւս տողը յիշեմք եւ ուշադրութեամբ կարդանք. «Երբ սերմերը անեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որոմն ալ երեւցաւ»: Որոմին երեւումը՝ հասկին կազմուելէն ետք է որ տեղի կ'ունենայ, իսկ հասկին կազմուելը, ինչպէս տեսնեմք, երրորդ հանգրուանն է որ կը ներկայացնէ:

5.- «Որոմն ալ երեւցաւ»: Երեւցաւ բառը պէտք է մեզի յիշեցնէ որ Սատանան մինչեւ որոշ ատեն ծածուկ կերպով կը յարձակի մեր վրայ: Ան վարպետօրէն ինքզինք կը ծածկէ մեզ շրջապատող իրադարձութեանց ետին: Բայց երբ հասնինք երրորդ հանգրուանին (որ հասկի վերածուելու հանգրուանն է), ան կը սկսի «երեւիլ» այսինքն՝ բացայայտօրէն պատերազմիլ մեզի դէմ, որպէսզի չհասնինք չորրորդ հանգրուանին, որ ցորենով լեցուելու հանգրուանն է, այլ խօսքով՝ հաւատով ու հաւատքի գործերով լեցուելու հանգրուանն է:

«Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր.-- "Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա եկաւ որոմը": Անիկա պատասխանեց.-- "Ասիկա թշնամի մարդու գործ է"» (Մտ 13.27-28): Գանի մը մատնանշումներ.-

1.- «Տանտիրոջ ծառաները»: Հոս յիշուած ծառաները հրեշտակները չեն, այլ բոլոր այն մարդիկն են (եկեղեցական թէ աշխարհական) որոնք Աստուծոյ պաշտամունքին, ծառայութեան ու գործին նուիրուած են, եւ որոնց պարտականութիւնն է, նախ, հսկել իրենց սիրտերուն վրայ, եւ ապա հսկել բանաւոր հօտին անվթար եւ անարատ

պահպանութեան, որպէսզի Սատանան առիթ չունենայ իր որոմները, այսինքն՝ մեղքի տեսակներն ու սխալ ուսուցումները ցանել իրենց մէջ:

2.- Ինչո՞ւ Յիսուս «ծառայ» կ'անուանէ իր հետեւորդները, անոնք ըլլան հոգեւորական թէ հոգեւոր: Քանի մը պատճառներով.-

ա.- «Ծառայ» բառին գործածութեամբ, Յիսուս ցոյց կու տայ մեզի որ մենք մատուցանելիք ծառայութիւն ունինք ուրիշին:

բ.- «Ծառայ» բացատրութիւնը կը պարզէ որ մենք կատարելիք պարտականութիւն ունինք աշխարհի այս արտին մէջ:

գ.- Ծոյլ մարդուն «ծառայ» կոչումը չի տրուիր, ուստի, Յիսուս իր հետեւորդները «ծառայ» կոչելով, հրաւիրած կ'ըլլայ զիրենք հեռո՛ւ մնալու ծուլութենէն, եւ գործի մա՛րդ ըլլալու:

դ.- Ծառան ինքնիր սեփական կամքը կատարող արարածը չէ, այլ՝ իր տիրոջ կամքը կատարողն է: Այս իմաստով, Յիսուս մեզ «ծառայ» կը կոչէ, ցոյց տալու համար որ մենք մեր սեփական կամքը չէ որ պէտք է կատարենք, այլ կամքը մեր երկնաւոր Տիրոջ:

ե.- Յիշենք որ անցեալին ծառաները դրամով կը գնուէին, եւ զայն գնող մարդը կը դառնար անոր տէրն ու տիրականը. այնուհետեւ, ծառային կեանքը կախեալ կ'ըլլար իր տիրոջմէն: Անոր տէրը բացարձակ իրաւունքը ունէր զինք քովը պահելու, կամ ոեւէ ատեն տունէն արտաքսելու, կամ նոյնիսկ անոր կեանքին վերջ դնելու: Յիսուս «ծառայ» բառը կը գործածէ, յիշեցնելու համար մեզի թէ մեզ իր արիւնով գնած է եւ մենք իր սեփականութիւնն ենք: Ինչպէս գնուած ծառան իր սեփական կամքը չէր որ կը կատարէր, այլ կամքը իր տիրոջ, այնպէս ալ, մենք որ Յիսուսի արիւնով գնուած ենք, մեր սեփական կամքն ու փափաքները մէկ կողմ պէտք է դնենք եւ աշխատինք միայն Յիսուսի կամքը կատարել:

3.- Երբ տանտիրոջ ծառաներուն ուշադրութիւնը գրաւեց թէ արտին մէջ ցորենի կողքին որոմ ալ կայ, եկան իրեն եւ ըսին. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա եկաւ որոմը»: Ծառաներուն այս արտայայտութիւնը ցոյց կու տայ երկու բան.-

ա.- Նախ ցոյց կու տայ իրենց բժախնդրութիւնը Տիրոջ արտին նկատմամբ: Անոնք կ'ուզեն Տիրոջ արտը (աշխարհը) մաքրուած տեսնել ամէն տեսակի չարիքներէ: Ամէն իսկական հաւատացեալ պէտք է փափաքը ունենայ այս աշխարհը որոմի (մեղքի) ներկայութենէն մաքրուած տեսնել: Ամէն գիշարիտ քրիստոնեայ պէտք է ցանկութիւնը ունենայ արդարութեան յաղթանակն ու տիրապետութիւնը տեսնել այս աշխարհի մէջ:

բ.– «Ուրկէ՞ հապա եկաւ որումը»: Ծառաներուն այս հարցումը ցոյց կու տայ որ զարմացած էին որումի ներկայութեան համար. զարմացած էին, որովհետեւ գիտէին թէ իրենց Տէրը միայն լաւ սերմեր ցանած էր: Անոնք չէին գիտեր թէ ո՞վ եւ ե՞րբ ցանած էր որումը: Մեզմէ որո՞ւն հետ չէ պատահած որ հաւատքի գործ մը կատարենք, եւ յանկարծ տեսնենք չարին ներկայութիւնը մեր կատարած գործին մէջ եւ ատիկա մեզ զարմանա՞նք լեցնէ: Ատիկա կրնայ ուղղակիօրէն Սատանային կողմէ կատարուած ըլլալ, եւ կամ կրնայ իր կամակատար մարդոց ձեռքով եղած ըլլալ:

4.– «Ասիկա թշնամի մարդու գործ է»: Երեք կէտեր.–

ա.– «Թշնամին որ ցանեց որումը՝ Սատանան է» ըսաւ Յիսուս (Մտ 13.39): Սատանան ինքն էր այն թշնամին որ որում ցանեց մեր նախածնողներուն՝ Եւայի ու Ադամի կեանքին մէջ: Յիսուս տուեալ հաստատումով ցոյց կու տայ թէ աշխարհի մէջ պատահող չարիքներուն ետին կանգնողն ու զանոնք կազմակերպողը Սատանան ինքն է եւ ո՛չ թէ Աստուած: Ուստի գգո՛յ՛լ պէտք է ըլլալ մեզի պատահող չարիքները Աստուծոյ վերագրելու: Աստուած կ'ըսէ. «Ահա անշուշտ քեզի դէմ ժողով պիտի ընեն, բայց ինձմէ չէ» (Ես 54.15): Երբ մարդիկ Չարին կողմէ դրդուած ինքն-ինքն գան ու ծրագրեն մեզ կործանել, չանպարե՛նք ըսելու թէ Աստուած է որ կը փորձէ մեզ կործանել: Մեր կործանումին համար աշխատողները՝ Սատանան եւ սատանայութիւն ընող մարդիկն են:

բ.– «Ասիկա թշնամի մարդու գործ է»: Եթէ երբեք որում ցանողը Սատանան է, այդ պարագային, ինչո՞ւ Յիսուս կը գործածէ «թշնամի մարդ» (Յունարէն՝ *Εχθρος ανθρωπος*) բացատրութիւնը: Պատասխանը շատ պարզ է: Ո՛չ միայն Սատանան «թշնամի» կը կոչուի, այլեւ բոլոր անոնք՝ որոնք Սատանայի ձեռքին մէջ գործիք դարձած են, եւ կը պայքարին հաւատքի կեանք ապրող անհատներուն դէմ: Ոեւէ մարդ որ կ'ընդդիմանայ Աստուծոյ գործին՝ թշնամի է թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ Աստուծոյ զաւակներուն:

գ.– «Թշնամի մարդ»: Ի՞նչ ահաւոր բան է երբ Սատանային ու մարդուն նոյն անունը կը տրուի՝ թշնամի: Մարդիկ կոչուած են միանալու Աստուծոյ եւ անոր հետ միասին դէ՛մ դնելու իրենց հոգիի թշնամիին՝ Սատանային, բայց աւա՛ղ, փոխանակ միանան Աստուծոյ եւ դէմ դնեն Սատանային, ընդհակառակը, կը միանան Սատանային եւ դէմ կը դնեն Աստուծոյ եւ անոր զաւակներուն: Փոխանակ գործակցելու Աստուծոյ հետ եւ տարածելու անոր արքայութիւնը, Սատանային հետ է որ կը գործակցին՝ խափանելու համար Աստուծոյ արքայութիւնը:

5.- Երբ տանտիրոջ ծառաները եկան եւ իրենց տիրոջ պատմեցին որոմներու գոյութեան մասին, ուշագրաւ է որ իրենց տէրը չմեղադրեց զիրենք որոմի ներկայութեան համար: Տանտէրը կրնար յանդիմանել զիրենք եւ հարց տալ թէ ինչո՞ւ ֆնացած էին: Ինչո՞ւ չյանդիմանեց: Որովհետեւ ան գիտէր որ ո՛չ հոգեւորականները եւ ո՛չ ալ հոգեւոր մարդիկը կրնային արմատախիլ ընել չարիքները այս աշխարհէն կամ կասեցնել անոնց անման ընթացքը: Ճիշդ է որ Յիսուս կ'ըսէ թէ թշնամին եկաւ եւ որոմ ցանեց երբ ամէն մարդ ֆնացած էր, բայց խորքին մէջ, Յիսուս շատ լաւ գիտէ, թէ մենք որքան ալ արթուն ըլլանք՝ չենք կրնար արգիլել մեղքին մուտքը մարդկային կեանքէն ներս: Մեղքին գալուստը անխուսափելի իրականութիւն է, բայց մեղքին դատաստանն ալ անխուսափելի իրականութիւն է: Այո՛, չենք կրնար արգիլել մեղքին գալուստը, բայց կրնանք արգիլել անոր տիրութիւնը մեր անձերուն վրայ. ինչպէս Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Մենք չենք կրնար արգիլել որ թոչունները թոչին մեր գլուխին վրայ, բայց կրնանք արգիլել որ անոնք բոյն հաստատեն մեր գլուխին վրայ»: Ոսկեբերան «թոչուն» ըսելով Սատանային եւ Սատանայէն եկած մեղքին մասին է որ կը խօսի:

«Ծառաները ըսին.- "Կ'ուզե՞ս որ երթանք եւ որոմը ֆաղեմք": "Ո՛չ", - պատասխանեց տէրը,- "Որպէսզի չըլլայ թէ որոմը ֆաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէք"» (Մտ 13.28-29): Քանի մը մատնանշումներ.-

1.- Առաջին կէտը որ մեր ուշադրութիւնը պէտք է գրաւէ հետեւեալն է.- Ինչպէս տանտէրը չդատապարտեց իր ծառաները ֆնացած ըլլալուն համար, այնպէս ալ, ան չուզեց որ ծառաները երթալով եւ որոմը ֆաղելով՝ դատապարտած ըլլան որոմները:

2.- «Կ'ուզե՞ս»: Ծառաները ինքնագլուխ կերպով չգացին որոմները ֆաղելու, այլ եկան հրաման առնելու իրենց տիրոջմէն եւ անոր կամքը իմանալու, այս է ինչ որ ցոյց կու տայ «կ'ուզե՞ս» հարցումը: Բայց տէրը չուզեց, եւ անոնք յարգեցին իրենց տիրոջ կամքը: Ծառաներուն այս վերաբերմունքը թող մեզի օրինակ ըլլայ: Երբ Քրիստոսի այգիին մէջ յատուկ աշխատանք մը կ'ուզեմք կատարել, այս ծառաներուն նման նախ գանք Տիրոջ եւ հարցնենք՝ «կ'ուզե՞ս»: Ոեւէ գործ կատարելէ առաջ, նախ պէտք է աղօթեմք եւ փորձեմք գիտնալ եթէ երբեք ատիկա Աստուծոյ կամքն է: Իսկ երբ իմանանք թէ այն գործը որ կ'ուզեմք կատարել՝ Աստուծոյ կամքն է, պէտք է հնազանդիմք Տիրոջ կամքին ինչպէս ծառաները հնազանդեցան:

3.- Ծառաներուն, այլ խօսքով աշխարհի արտին մէջ ապրող Աստուծոյ զաւակներուն պարտականութիւնը չէ փորձել արմատախիլ

ընել աշխարհի մէջ գոյութիւն ունեցող որոմները, այլ խօսով՝ չարիքները: Արմատախիլ ընողը Աստուած ի՛նքն պիտի ըլլայ, որովհետեւ որոմի ու ցորենի բաղխումը՝ Աստուծոյ եւ Սատանային բաղխումն է: Մեր կոչումը՝ օգնելն է որոմի նման մարդոց որ ցորենի նման ըլլան:

4.- Տէրը կ'արգիլէ իր ծառաներուն արմատախիլ ընել որոմի նմանող մարդիկը ո՛չ միայն որովհետեւ ատիկա ընելը իրենց պարտականութիւնը չէ, այլ նաեւ ու յատկապէս անոր համար՝ որ անոնք չե՛ն քանչնար մարդոց սիրտերը, եւ ուստի, չե՛ն կրնար գիտնալ թէ ո՞վ որոմ է եւ ո՞վ ցորեն: Անոնք կրնան անմեղը դատապարտել եւ դատապարտութեան արժանին անմեղադրելի հոչակել: Յովհաննէս Երզնկացի կ'ըսէ թէ Տէրը արգիլեց ծառաներուն որ որոմը քաղեն, որպէսզի «չըլլայ թէ (սխալմամբ) ցորենին դէմ մեղանչեն»: Ինչպէս որոմն ու ցորենը կրնանք իրարու հետ շփոթել, այնպէս ալ հաւատացեալն ու անհաւատը կրնանք իրարու հետ շփոթել: Եւ քանի այդ շփոթը ի գօրու է, զգո՛յժ պէտք է ըլլանք դատաստան ընելու:

5.- Քրիստոս երբ կ'արգիլէ իր ծառաներուն քաղել որոմը, խորքին մէջ անոնց արգիլած կ'ըլլայ դատաստան ընել մարդոց վերաբերեալ: Մենք չենք կրնար մարդոց սիրտը քանչնալ: Անոնք որ մարդիկը լաւապէս կը քանչնան, անոնք միայն կրնան զանոնք իրարմէ քաժնել: Իսկ որոմն են անոնք որ մարդիկը լաւապէս կը քանչնան եթէ ոչ հնձուորները, այսինքն՝ հրեշտակները (Մտ 13:39): Քանի որ հնձուորներ կան, ուրեմն հունձի ժամանակ ալ կայ: Ուստի, խոնարհ ըլլանք եւ հնձուորներուն դերը մեր վրայ չառնենք:

6.- Ինչո՞ւ Յիսուս կը հաստատէ թէ «որոմը քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ» կրնայ ըլլալ: Արդե՞օք ըսել կ'ուզէ թէ պէտք է թոյլ տանք որ չարն ու բարին միասին ապրին: Կամ արդե՞օք ըսել կ'ուզէ թէ կեղծաւորն ու անկեղծը միասին պէտք է աշխատին: Արդէն բացտրեցինք թէ ինչո՞ւ ծառաները պէտք չէ փորձեն որոմը արմատախիլ ընել, եւ ըսինք, որ անոնք կրնան ցորենին ալ վնաս հասցնել:

Բայց ուրիշ կարեւոր պատճառ մը եւս կայ թէ ինչո՞ւ Յիսուս չ'ուզեր որոմը քաղուի: Յիսուս չ'անապարեք քաղելու, այլ կ'ուզէ որ առիթ ու ժամանակ տրուի որոմին (մեղաւոր մարդուն) որ դարձի գայ: Եկեղեցւոյ հայրերէն՝ Յերոնիմոս կ'ըսէ. «Աստուած ապաշխարութեան համար ժամանակ տուաւ: Աստուած այստեղ մեզ կը զգուշացնէ որ ժամանակէն առաջ չկտրենք (ու մէկ կողմ չնետենք) եղբայր մը, որովհետեւ այսօր թունաւոր ուսուցումներով զարնուած մէկը, վաղը կրնայ գիտակցութեան գալ եւ դատնալ պաշտպան նշմարտութեան»:

Շատ մարդիկ սկիզբը մեղքի կեանք ասած են եւ յետոյ դարձի եկած: Օգոստինոս կ'ըսէ. «Շատե՛ր սկիզբը որում կ'ըլլան, բայց յետոյ կը փոխուին եւ ցորեն կ'ըլլան: Եթէ համբերատարութիւն չցուցաբերենք անոնց հանդէպ մեղաւոր եղած ատեննին՝ անոնք չեն կրնար հասնիլ այս փոփոխութեան...»:

7.- «Զըլլայ թէ որումը քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէք»: Այս տողին վերաբերեալ, Յովհաննէս Երզնկացի հետաքրքրական բացատրութիւն մը կու տայ ըսելով. «(Յիսուս կ'արգիլէ ծառաներուն որ քաղեն որումները) որպէսզի դեւերու փորձութիւնները խափանելով՝ չդադրի բարեգործութիւնը, որովհետեւ օդի (մէջ բնակող) չար դեւերուն պատերազմներուն պատճառով է որ կը գործնայ բարեպաշտներուն աղօթական կեանքը»: Իսկապէս ալ երբեմն որումները իրենք պատճառ կ'ըլլան որ գործնայ մեր հաւատքը, մեր աղօթական կեանքը: Եթէ այս հաւատքով մօտենանք մեր կեանքը լեցնող փորձութիւններուն՝ անոնք կը դադրին տրտունջի առիթներ ըլլալէ, եւ կը վերածուին մեզ մեր հաւատքին մէջ առաւել եւս խորացնող առիթներ:

8.- Տանտիրոջ ծառաներուն առաջարկը երթալու եւ որումը քաղելու, խորքին մէջ առաջարկ մըն է նոյնիման Տիրոջ՝ վերջ դնելու աշխարհի մէջ գոյութիւն ունեցող չարիքներուն: Որքա՛ն յանախ մենք եւս յոգնած մեղքերով լեցուն այս աշխարհէն, մեր աղօթքը բարձրացուցած ենք Տիրոջ ըսելով. «Տէ՛ր, եկուր եւ վերջ դիր այլեւս մեղքին»: Բայց ինչպէս տանտէրը ծառաներուն խօսքին մտիկ չըրար, այնպէս ալ Յիսուս մտիկ չ'ըներ մեր աղօթքին երբ կը խնդրենք իրմէ որ գայ, նախ որովհետեւ ի՛նք պէտք է որոշէ աշխարհ վերադարձի իր օրն ու ժամը եւ ո՛չ թէ մենք, եւ երկրորդ, որպէսզի սորվեցնէ մեզի աշխատիլ ու աղօթել «որումներուն» համար, եւ ո՛չ թէ պարզապէս անոնց մէջտեղէն վերցուիլը ցանկալ:

«Զգեցէք որ երկուքն ալ միասին անին մինչեւ հունձի ժամանակ. այն ատեն հնձուորներուն կ'ըսեմ.՝ "Նախ որումը քաղեցէք, խորձեր կազմեցէք այրելու համար, եւ ապա քաղեցէք ցորենը եւ ամբարեցէք շտեմարաններուս մէջ"» (Մտ 13.30): Քանի մը մատնանշումներ.՝

1.- Նախ յիշենք մեր Տիրոջ բացատրութիւնը այս համարին վերաբերեալ: Ան կ'ըսէ. «Հունձը աշխարհի վախճանն է եւ հնձուորները հրեշտակներն են: Արդ, ինչպէս որ որումը կը հաւաքեն եւ կրակին մէջ կ'այրեն, այդպէս ալ պիտի պատահի աշխարհի վախճանին: Այսինքն, Մարդու Որդին իր հրեշտակները պիտի դրկէ, որոնք իր արքայութենէն պիտի հաւաքեն բոլոր անոնք որոնք գայթակղութեան պատճառ կ'ըլլան եւ չարիք կը գործեն, ու գանոնք պիտի նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր

պիտի լան եւ կրճտեն իրենց ակոսները: Այն ատեն արդարները արեւու պէս պիտի փայլին երկինքի արքայութեան մէջ» (Մտ 13.39-43): Մեր Տիրոջ կատարած այս մեկնութիւնը մեկնելը՝ մեր ծրագիրին մաս չի կազմեր, բայց քիչ ետք հպանցիկ մատնանշումներ պիտի կատարենք:

2.- «Ձգեցէք որ երկուքն ալ միասին անին»: Երկու կէտեր.-

ա.- Ինչո՞ւ Քրիստոս թոյլ կու տայ «որ երկուքն ալ միասին անին», այսինքն՝ բարիին նման չարագործը ինք եւս մեծնայ եւ արմատանայ իր չարագործութեան մէջ: Քրիստոս խօսքը ուղղելով Փարիսեցիներուն կ'ըսէ. «Գացէք ամբողջացուցէ՛ք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը» (Մտ 23.32): Այս համարը, ինչպէս նաեւ «անին» բառը, կը պարզեն թէ չարասէր մարդիկ պիտի յառաջանան իրենց չար ընթացքին մէջ:

բ.- Յիսուս թոյլ կու տայ «որ երկուքն ալ միասին անին», որպէսզի հաւատացեալը աւելի՛ գորանայ իր հաւատքին մէջ, իսկ անհաւատը՝ դարձի գալու առիթ ունենայ: Յերոնիմոս նաեւ գրեթէ նոյն բանը կ'ըսէ: Ան «ձգեցէք» բառին մէջ կը տեսնէ Աստուծոյ կողմէ մարդոց հանդէպ ցուցաբերուած համբերութիւնն ու քաղցրութիւնը, որպէսզի անոնք ապաշխարեն: Այո՛, Աստուծոյ համբերութիւնը պէտք է առիթ մը դառնայ որ ապաշխարենք մեր գործած մեղքերուն համար, եւ ո՛չ թէ յաւելեալ մեղքեր գործենք:

3.- «Մինչեւ հունձի ժամանակ»: Երկու կէտեր.-

ա.- Այս բառերը բացորոշ կերպով ցոյց կու տան թէ Քրիստոս աշխարհի մէջ եղած չարիքներուն եւ ապրող չարագործներուն համար հունձի օր, այլ խօսքով՝ դատաստանի օր նշդած է (Մտ 13.39): Քրիստոս չ'ուզեր որ ժամանակէն առաջ դատաստան ընենք: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ոեւէ մէկը մի դատէ՛ք ժամանակէն առաջ» (Ա.Կր 4.5):

բ.- Այս բառերը նաեւ կը պարզեն թէ որոմի նմանող մարդիկն ու ցորենի նմանող մարդիկը յաւիտենապէս իրարու հետ պիտի չմնան: Անոնք իրենց գոյութիւնը իրարու հետ պիտի պահեն «մինչեւ հունձի ժամանակ», որմէ ետք յաւերժապէս իրարմէ պիտի գատուին:

4.- «Այն ատեն հնձուորներուն կ'ըսես...»: Հնձուորները հրեշտակներն են: Մարդիկ որքան ալ սուրբ ըլլան՝ չեն կրնար հնձուոր ըլլալ, նախ որովհետեւ չեն կրնար գիտնալ թէ որո՞նք պէտք է դատապարտուին եւ որո՞նք արքայութիւն առնուին, եւ երկրորդ, իրենք ալ բոլորին նման դատաստանին ներկայ պիտի ըլլան ու դատուին:

Արդ, ինչո՞ւ Յիսուս հրեշտակներուն պիտի վստահի մարդիկը իրարմէ գատելու այնքան կարեւոր գործողութիւնը: Քանի մը պատճառներով.-

ա.- Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ «հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14): Արդ, ինչպէս հրեշտակները կը դրկուին օգնելու համար մարդոց, նոյնպէս ալ, Տիրոջ գալստեան ժամանակ պիտի դրկուին գատելու մարդիկը իրարմէ:

բ.- Առաքեալը հրեշտակները կը կոչէ «Աստուծոյ ծառայող հոգիներ»: Ինչպէս ծառաներ պարտին միշտ իրենց տէրերուն կամքը կատարել, այնպէս ալ հրեշտակները պարտաւոր են Աստուծոյ կամքը կատարել: Եւ ի՞նչ պիտի ըլլայ Աստուծոյ կամքը դատաստանին օրը, եթէ ոչ գատել չարերը բարիներէն, եւ չարերը նետել գեհեմի մէջ, իսկ բարիները առնել արքայութիւն:

գ.- Աստուած չ՛ուզեր իր ձեռքով՝ իր ձեռքին գործը եղող մարդիկը գեհեմ նետել, միշդ անոր համար ալ թոյլ պիտի տայ որ հրեշտակները իրենք կատարեն այդ գործը:

դ.- Յիսուս ըսաւ թէ մարդիկ «երկինքի հրեշտակներուն նման պիտի ըլլան» (Մտ 22.30): Հրեշտակներ իրե՛նք պիտի դրկուին հաւաքելու համար իրենց նմանակիցները, որոնք դասակից ու փառաբանակից պիտի ըլլան իրենց:

ե.- Ամէն մեղաւոր որ դարձի կու գայ, ո՛չ միայն Աստուած ինք կ'ուրախանայ, այլ նաեւ՝ հրեշտակները (Ղկ 15.10): Քանի հրեշտակները կ'ուրախանան մարդոց դարձի գալովը, Աստուած զիրենք կը դրկէ որպէսզի անարդարները գատեն արդարներէն, եւ իրենք ուրախանան արդարներուն համար:

զ.- Երբ Աստուած հրեշտակներուն կը վստահի մարդիկը իրարմէ բաժնելու գործողութիւնը, ատիկա ցոյց կու տայ Աստուծոյ վստահութիւնն ու սէրը իրենց հանդէպ:

է.- Հրեշտակները մարդոց համար մնայուն կերպով կը բարեխօսեն, հոգատարութիւն կը ցուցաբերեն անոնց հանդէպ, կը ծառայեն, եւ տեւականօրէն կը պաշտպանեն ու կը պահպանեն զանոնք: Այս իմաստով, իրենց կատարածին փոխարէն, կարծէք Աստուած իրենց իրաւունք եւ իրաւասութիւն կու տայ որ իրե՛նք մարդիկը գատեն իրարմէ:

ը.- Բազմաթիւ անգամներ կը կարդանք թէ հրեշտակները Յիսուսի հետ միասին պիտի յայտնուին (Մտ 16.27, 25.32 եւ այլն): Յիսուս զօրավարն է երկինքին, եւ երկնային բոլոր մարմինները՝ իր զինուորներն են: Երբ Զօրավարը վար իջնէ երկինքէն՝ իր զինուորներն ալ հետը պիտի իջնեն եւ ասիկա ամենէն բնական երեւոյթն է: Արդ, ինչպէս երբ զօրավար մը իր զինուորներուն հետ տեղ մը երթայ, զինուորները պատրաստ կ'ըլլան իր հրամանները կատարելու, այնպէս

ալ, Յիսուսի հետ եկող հրեշտակները՝ իրե՛նք է որ Յիսուսի կամքը պիտի կատարեն: Այո՛, Յիսուսի կամքը, եւ ոչ թէ իրե՛նց կամքը, որովհետեւ հրեշտակները իրենց անձնական կամքով չէ որ այդ գատելու գործողութիւնը կը կատարեն: Ատիկա իրենց տրուած պարտականութիւն մըն է:

5.- «Նախ որոմը քաղցե՛ք...»: Աշխարհի վախճանին Քրիստոս հնձուորներուն, այսինքն՝ իր հրեշտակներուն պիտի հրամայէ նախ որոմը քաղցի եւ խուրճեր կազմել այրելու համար, եւ անկէ ետք քաղցի ցորենը եւ ամբարել արքայութեան շտեմարանին մէջ: Արդ, ինչո՞ւ Դատաւորը նախ որոմը քաղցի կու տայ: Չար մարդոց դատապարտութիւնը բարի մարդոց վարձատրութենէն առաջ պիտի ըլլայ, որպէսզի Քրիստոսի ծառաները տեսնեն իրենց խնդրանքին կատարումը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ չարիքներուն ամբողջական վերացումը այս աշխարհէն:

Ոեւէ շփոթի առաջքը առած ըլլալու համար, այստեղ պէտք է յիշել, թէ Աստուածաշունչին մէջ ուրիշ տեղեր կը կարդանք թէ նախ բարի մարդոց վարձատրութիւնն է որ տեղի պիտի ունենայ: Օրինակ, Յիսուս խօսած ատեն վերջին դատաստանին մասին, կ'ըսէ թէ նախ իր աջ կողմը եղող իր ոչխարները պիտի հրաւիրէ Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու (Մտ 25.34), եւ «ապա իր ձախ կողմը կեցողներուն պիտի ըսէ.- Անիծեալնե՛ր, հեռացե՛ք ինձմէ, գացե՛ք յաւիտեանական կրակին մէջ...» (Մտ 25.41):

Հետեւաբար, հարց կու տանք, նախ բարիներո՞ւն դատաստանը տեղի պիտի ունենայ, թէ՛ չարերուն: Խորքին մէջ երկուքին դատաստանը միաժամանակ տեղի պիտի ունենայ: Օրինակ, եթէ յանկարծ հաւատացեալները երկինք յափշտակուին, անոնց եւ երկրի վրայ մնացողներուն դատաստանը նոյն վայրկեանին եղած չի՞ սեպուիր: Մէկուն առնուիլն ու միւսին ձգուիլը՝ դատաստան մը չէ՞ երկուքին համար նոյն վայրկեանին:

Բայց կարեւոր երկու պատճառներ կան թէ ինչո՞ւ Մատթէոսի 25-րդ գլուխին մէջ, նախ արդարներուն վարձատրութիւնն է որ կը ներկայացուի.-

ա.- Որպէսզի ցոյց տրուի մեզի թէ Աստուած հաճոյք չ'առնէր չարերը պատժելով:

բ.- Որպէսզի ցոյց տրուի մեզի թէ Աստուծոյ սկզբնական ծրագիրը բարին էր եւ մի՛այն բարին, ինչ որ արքայութեան համար գործածուած «աշխարհի սկիզբէն պատրաստուած» բառերը ցոյց կու տան (Մտ 25.34):

Այստեղ կ'ուզեմ դիտել տալ, թէ դժոխքին կամ գեհեմին համար Աստուածաշունչը երբեք չ'ըսեր թէ «սկիզբէն» պատրաստուած է, ո՛չ ալ

կ'ըսէ թէ մարդուն համար պատրաստուած է, այլ կ'ըսէ թէ ատիկա «Սատանային եւ անոր հրեշտակներուն համար պատրաստուած է» (Մտ 25.41):

6.- «Խուրճեր կազմեցէ՛ք այրելու համար»: Քանի մը կէտեր.-

ա.- Յիսուս չի խօսիր մէկ խուրճի մասին, այլ՝ բազմաթիւ խուրճերու մասին: Ինչո՞ւ արդեօք: Յիսուս «խուրճ» բառը յոգնակիով կը յիշէ՝ խուրճեր, որպէսզի ցոյց տայ մեզի թէ դժոխքին մէջ, կամ անլի միշտ՝ գեհեմին մէջ, տարբեր-տարբեր աստիճանաւորումներ պիտի ըլլան: Այլ խօսքով, ոմանք շատ պիտի տանջուին, ուրիշներ՝ քիչ: Տանջանքի հազար ու մէկ չափ կայ հոն: Իւրաքանչիւրը իր կատարած գործերուն եւ չկատարած գործերուն համաձայն պիտի տանջուի: Ինչպէս արքայութեան մէջ բոլոր հաւատացեալները նոյն փառքն ու նոյն շքեղութիւնը պիտի չունենան, նոյնպէս ալ, գեհեմին մէջ բոլոր դատապարտուողները նոյն տառապանքը չէ որ պիտի ապրին:

բ.- Մենք գիտենք որ խուրճերը կը կապուին: Արդ, դատապարտուողները խուրճերու կը նմանցուին, սորվեցնելու համար մեզի թէ գեհեմ նետուողները կապուած, այլ խօսքով՝ իրենց ազատութիւնը կորսնցուցած՝ գեհեմ պիտի ձգուին:

գ.- Որոմը եւ այլ տեսակի վնասակար խոտերը երբ խուրճերու վերածուին, յստակ է որ անոնք կամ այրուելու կը պատրաստուին եւ կամ անասունի կերակուր դառնալու: Նոյնը պիտի ըլլայ պարագան գեհեմ նետուողներուն: Անոնք մէկ կողմէ պիտի այրին կրակներուն մէջ (Մտ 3.12), իսկ միւս կողմէ՝ «կերակուր» պիտի դառնան որդերու՝ որոնք չեն մեռնիր (Մր 9.48): Զիրենք տանջող կրակը՝ Աստուծոյ բացակայութիւնն է, իսկ զիրենք ուտող որդը՝ իրենց խղճահարութիւնը:

7.- «Այրելու համար»: Երբ Յիսուս կը կատարէ մեկնութիւնը որովի առակին, կ'ընդարձակէ այս երկու բառերը ըսելով. «Զանոնք պիտի նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր պիտի լան եւ կրճտեն իրենց ականները»: Քանի մը նշումներ.-

ա.- Ի՞նչ պէտք է հասկնալ «բոցավառ հնոցին մէջ» ըսելով: Իսկական կրակը, մահը կամ դժոխքը, Քրիստոսի ներկայութենէն զրկուիլն է (Բ.Թս 1.9): Աստուած մարդը ստեղծած է ի'ր ձեռքով (Յոր 10.8), ի'ր հոգիով (Ծն 2.7), ի'ր նմանութեամբ (Ծն 1.26), ի'ր պատկերով (Ծն 1.27), իրե՛ն համար (Յս 43.21), ի'ր փառքին համար (Յս 43.7), մէկ խօսքով, մարդը ստեղծուած է յաւիտենապէս Աստուծոյ հետ ապրելու համար: Երբ յաւիտենականութեան մէջ Աստուած բացակայ է մարդուն կեանքէն՝ մարդը կը մատնուի յաւիտենական տառապանքի, եւ այդ տառապանքը զինք կրակի նման կ'այրէ: Քրիստոս այդ տառապանքին

անտանելիութիւնը պատկերացնելու համար է որ կը գործածէ «բոցավառ հնոցին մէջ» բացատրութիւնը: (Տե՛ս նաեւ Ղկ 16.24: Մտ 25.41: Բ.Թս 1.8: Մտ 3.12: Եբր 10.27: Յյտ 20.15, եւայլն):

բ.– Ումանք կ'ըսեն թէ գեհեմի կրակը նիւթական հասկացողութիւն չունի, այլ խօսքով՝ մեր գիտցած կրակը չէ: Այս առարկութիւնը կ'ընեն հիմնուելով այն տրամաբանութեան վրայ, որ եթէ կրակը նիւթական ըլլայ, գեհեմն նետուած մարդիկը կը սպառին եւ վերջ կը գտնեն, մինչդեռ գեհեմն նետուողը յաւիտեանապէս պէտք է չարչարուի, ինչպէս կ'ուսուցանէ Աստուածաշունչը (Մտ 18.8, 25.41: Յյտ 20.10): Թէ կրակը նիւթական է կամ ոչ՝ ես չեմ գիտեր եւ ոեւէ մէկը չի կրնար գիտնալ, բայց մէկ բան գիտեմք, որ եթէ Աստուած ուզէ կրակը նիւթական ընել առանց թոյլ տալու որ անոր մէջ նետուողը սպառի՝ կրնա՛յ, քանի որ ամենակարող է: Ինչպէս Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով «բորբոքած կրակի հնոցին մէջ» նետուեցան եւ ոչինչ եղաւ անոնց (Դն 3.21-27), կամ, ինչպէս մորեմիս կրակներու մէջ էր բայց մնաց անկէզ եւ անսպառ, նոյնպէս ալ, եթէ Աստուած ուզէ գեհեմի կրակը այնպէս ընել որ չսպառէ ու չբնաջնջէ իր մէջ նետուողները՝ կրնա՛յ ընել, քանի կարո՛ղ Աստուած է:

գ.– «Ուր պիտի լան»։ Լացողները այժմ խնդացողները պիտի ըլլան (Ղկ 6.25): «Լալ»ը գոչում է բոլոր այն առիթներուն ու պատեհութիւններուն համար զորս մարդ արարածը կորսնցուցած է իր երկրաւոր կեանքի ընթացքին: Մարդ իր երկրաւոր կեանքի ընթացքին քանի՞ անգամ Քրիստոսի գալու հրաւեր կը ստանայ, եւ սակայն կը փակէ իր սրտին դուռը փրկութեան պատգամին դիմաց:

դ.– «Կրնտեն իրենց ակռաները»։ Ակռաները կրնտելը կը պատկերացնէ ներքին սաստիկ խղահարութիւնն ու մտատանջութիւնը զորս գեհեմն նետուողները պիտի ապրին:

Յ.– Անդրադառնամ կարելոր կէտի մը: Քիչ առաջ տեսնեմք որ Յիսուս խօսած ատեն հնձուորներուն մասին, ըսաւ թէ «իր հրեշտակները պիտի դրկէ, որոնք իր արքայութենէն պիտի հաւաքեն բոլոր անոնք որոնք... չարիք կը գործեն, ու զանոնք պիտի նետեն բոցավառ հնոցին մէջ» (Մտ 13.41-42): Արդ, ինչո՞ւ Յիսուս մեզի կը խօսի արքայութեան մէջ չարիք գործողներու մասին: Արքայութեան մէջ չարիք գործողներ կա՞ն: Պատասխանը տալէ առաջ, կարելոր է գիտնալ թէ այստեղ «արքայութիւն» ըսելով ի՞նչ ըսել կ'ուզուի: Հոս արքայութիւն ըսելով աշխարհը պէտք է հասկնալ: Ինչո՞ւ Յիսուս աշխարհը կը կոչէ «արքայութիւն»: Երեք պատճառներով.–

ա.– Նախ ցոյց տալու համար թէ Աստուծոյ սկզբնական ծրագիրը այս աշխարհը արքայութեան վերածելն էր: Այլ խօսքով, Աստուած

չստեղծեց աշխարհը որպէսզի մեղքով լեցուի եւ դժոխքի վերածուի, այլ՝ որպէսզի իր սուրբ կամքը կատարուի աշխարհի մէջ եւ արդարութիւն տիրէ այդտեղ:

բ.– Յոյց տալու համար որ այս աշխարհը կոչուած է արքայութեան վերածուելու, որուն Արքան Քրիստոս ի՛նքն պիտի ըլլայ, եւ ասիկա իրականութիւն պիտի դառնայ իր երկրորդ գալստեան ժամանակ:

գ.– Յոյց տալու համար թէ անոնք որոնք Քրիստոսի կամքին կը հնազանդին ու կ'ենթարկուին, արդէն սկսած են արքայութիւնը երկրի վրայ ապրիլ:

Ըսի, հոս «արքայութիւն» ըսելով աշխարհը պէտք է հասկնալ: Ճիշդ է որ եկեղեցին (մեր հայրերու իսկ բացատրութեամբ) Աստուծոյ արքայութեան մանրանկարն է, նախագաւիթն է, նախադուռն է, շուքն է, բայց հոս յիշուած «արքայութիւնը» չի կրնար ակնարկութիւն ըլլալ եկեղեցիին, որովհետեւ չարագործները միայն եկեղեցիին մէջէն չէ որ պիտի հաւաքուին, այլ ամբողջ աշխարհի մէջէն, որ կոչուած է Աստուծոյ արքայութիւնը ըլլալու:

9.– «Քաղեցէ՛ք ցորենը եւ ամբարեցէ՛ք շտեմարաններու մէջ»: Քանի մը հպանցիկ նշումներ.–

ա.– Տորենը ամբարել շտեմարաններու մէջ, կը նշանակէ՝ հաւատացեալները հաւաքել արքայութեան մէջ: Ահա թէ ինչու Յիսուս բացատրած ատեն այս տողը կ'ըսէ. «Այն ատեն (երբ չարագործները վերցուին այս աշխարհէն) արդարները արեւու պէս պիտի փայլին երկինքի արքայութեան մէջ» (Մտ 13.43):

բ.– Յիշեմք որ շտեմարաններու մէջ կը պահուին միայն այն բաները (հացահատիկներ, պաշար, պիտոյժ, կամ ոեւէ ապրանք) որոնք օգտակար են ուրիշին: Անպէտք բաներ չեն դրուիր շտեմարաններու մէջ: Արդ, «շտեմարան» բառին գործածութեամբ, Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի, թէ ինչպէս միայն օգտակար բաները կը դրուին շտեմարաններու մէջ, այնպէս ալ միայն իրական հաւատացեալները պիտի առնուին արքայութիւն:

գ.– Շտեմարանը կրնանք նմանցնել Աստուծոյ ափին: Այս իմաստով, շտեմարաններու մէջ ամբարուիլ, կը նշանակէ Աստուծոյ ափին մէջ մէկտեղուիլ: Արդարեւ, Աստուած իր գաւակները իր ձեռքերուն մէջ պիտի առնէ, իր ձեռքերով՝ զանոնք պիտի պաշտպանէ ու պահպանէ ամբողջ յաւիտենականութեան ընթացքին: Այո՛, ցորենը շտեմարաններու մէջ դնել, կը նշանակէ՝ հաւատացեալները Աստուծոյ տրամադրութեան տակ դնել, Աստուծոյ պահպանութեան յանձնել:

դ.– Եթէ շտեմարանները երկինքի արքայութիւնն է որ կը պատկերացնեն, այդ պարագային, ինչո՞ւ Յիսուս «շտեմարաններ» բառը եզակիով յիշելու փոխարէն՝ յոգնակիով կը յիշէ: «Շտեմարաններ» բառին յոգնակիով յիշուիլը ցոյց չի տար որ քանի մը արքայութիւններ կան, այլ պարզապէս արքայութեան անսահմանութեան ու անհունութեան կ'ակնարկէ: Երկինքի արքայութեան մէջ բոլորին համար տեղ կայ: Յիսուս ինքն իսկ ըսաւ. «Հօրս տան մէջ շատ տեղ կայ» (Յհ 14.2):

Երբ «երկինքի արքայութիւն» կ'ըսենք, երկինք բառը մեզ պէտք չէ շփոթի մատնէ: Արքայութիւնը միայն երկինքի մէջ պիտի չըլլայ: Արքայութիւնը թէ՛ երկինքի մէջ եւ թէ՛ երկրի վրայ պիտի ըլլայ: Աստուածաշունչը կը խօսի թէ՛ երկիրը ժառանգելու մասին (Մտ 5.5) եւ թէ՛ երկինքը ժառանգելու մասին (Մտ 5.3), թէ՛ նոր երկինք ստեղծելու մասին եւ թէ՛ նոր երկիր ստեղծելու մասին (Բ.Պտ 3.13: Յյտ 21.1: Ես 65.17): Եթէ երկիրը արքայութեան մաս պիտի չկազմէ, հապա ինչո՞ւ Աստուած նոր երկիր մը ստեղծելու մասին կը խօսի: Քանի Աստուած ամէն տեղ է, ուրեմն, իր թագաւորութիւնն ալ ամէն տեղ պիտի ըլլայ՝ թէ՛ երկինքի մէջ եւ թէ՛ երկրի վրայ: Այս նիւթին վերաբերեալ այլ առիթով խօսած ենք: Ուստի այսֆանով կը բաւարարուինք այստեղ:

ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻՆ ԱՌԱԿԸ

«Մեծահարուստ մարդ մը կար, որ բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագներ եւ ամէն օր փառաւոր խննոյժ կ'ըներ: Ղազարոս անունով աղֆատ մըն ալ կար, որ անոր դրան առջեւ կը նստէր եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստի սեղանին աւելցուցներով: Ղազարոս վերբերով ծածկուած էր, եւ շուներ կու գային իր վերբերը կը լզէին: Աղֆատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր ղով: Մեծահարուստը աղաղակեց.- Հա՛յր Աբրահամ, ողորմէ՛ ինծի եւ դրկէ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթիտ եւ գովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ: Աբրահամ ըսաւ անոր.- Որդեա՛կ, յիշէ՛ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա անիկա հոս կը հանգստանայ, մինչ դուն հող կը տառապիս: Գիտցի՛ր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ: Մեծահարուստը ըսաւ.- Կ'աղաչեմ հա՛յր, Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախագգուշացնէ՝ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան: Աբրահամ ըսաւ անոր.- Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն: Մեծահարուստը ըսաւ.- Ատիկա բաւական չէ, հա՛յր Աբրահամ, բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց՝ պիտի ապաշխարեն: Աբրահամ պատասխանեց.- Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել զիրենք» (Ղկ 16.19-31):

Աղֆատ Ղազարոսին առակը Աստուածաշունչ մատենանին մէջ այն միակ առակն է, որ պատասխանը կու տայ դարերու ընթացքին մարդուն միտքը յուզող ամենէն հետաքրքրական հարցումներուն: Օրինակ, ո՞ր կ'երթայ մարդուն հոգին մարմինէն բաժնուելէ ետք: Ի՞նչ կը պատահի կամ ի՞նչ վիճակի կը մատնուին հաւատացեալ եւ անհաւատ մարդոց հոգիները երբ բաժնուին այս աշխարհէն: Ի՞նչ է դժոխքը: Արքայութեան մէջ պիտի ֆանչնա՞նք իրար: Պիտի գա՞յ ժամանակ երբ Աստուած պիտի գթայ գեհեհնի մէջ տանջուող մեղաւոր մարդուն եւ զինք արքայութիւն

աննէ: Պէ՞տք է սպասեմք հրաշքի մը պատահումին որպէսզի դարձի գանք: Ահաւասիկ այս եւ նման հարցումներու պատասխանն է որ կու տայ այս առակը: Փորձենք համար առ համար երթալ եւ յայտնաբերել հոն գտնուող գեղեցիկ մտածումները եւ ուղղորտութիւնները:

«Մեծահարուստ մարդ մը կար, որ քեցիկ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր եւ ամէն օր փառաւոր խնոյժ կ'ընէր» (Ղկ 16.19): Քանի մը հաստատումներ.–

1.– Հետաքրքրական է որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, մեծահարուստ մարդուն անունը չի յիշեր, իսկ աղքատ մարդուն անունը կը յիշէ: Յիսուս կարծէ՛ք չ'ուզեր իր շրթներուն վրայ առնել հարուստին անունը: Դաւիթ մարգարէն անհաւատներուն մասին խօսած ատեն՝ ըսաւ. «Անոնց անունները շրթներու վրայ պիտի չ'առնեմ» (Սղ 16.4):

Ինչո՞ւ հարուստին անունը չէ յիշուած: Ս. Օգոստինոս կ'ըսէ. «Մեծահարուստին անունը չէ յիշուած, ցոյց տալու համար որ անգիղջ մեղաւորներուն անունը, այլ խօսքով՝ անոնց յիշատակը առ յաւէտ պիտի բնաջնջուի»: Աստուածաշունչը եւս նոյն բանը կը հաստատէ: Օրինակ, Սղ 9.5-ին մէջ կը կարդանք. «Հեթանոսները յանդիմանեցիր, ամբարիշտը կորսնցուցիր, անոնց անունները ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից»:

Յոր եւս խօսելով ամբարիշտ մարդուն մասին՝ կ'ըսէ. «Անոր յիշատակը երկրէն պիտի կորսուի ու անոր անունը հրապարակներուն մէջ պիտի չ'տրուի» (Յոր 18.17): Սողոմոն իմաստուն կը վկայէ որ «արդարներուն յիշատակը օրհնեալ կ'ըլլայ, բայց ամբարիշտներուն անունը կը փտտի» (Առ 10.7): Այս եւ նման բացատրութիւններ մէկ բան կը պարզեն, այն՝ որ անհաւատ մարդիկ դատապարտուած են յաւերժապէս կորսուելու, այսինքն՝ մոռցուելու Աստուծոյ կողմէ, դատաստանէն ետք, երբ արդէն անոնք գեհեմի կրակին մէջ նետուած պիտի ըլլան:

2.– Քանի որ առակը կը խօսի փրկուած աղքատի մը եւ կորսուած մեծահարուստի մը մասին, հաւանաբար լաւ կ'ըլլայ սկիզբէն հաստատել, որ աղքատութիւնը չէ որ մեզ փրկութեան կ'առաջնորդէ, եւ ո'չ ալ հարստութիւնը՝ կորուստի: Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. «Աղքատութիւնը ըստ ինքեան բարիք մը չէ եւ ո'չ ալ հարստութիւնը չարիք մը: Մարդուն կեանքն է որ արժէքի կը վերածէ աղքատութիւնը կամ հարստութիւնը, եւ կամ ուղիղ հակառակը, կործանարար իրականութեանց կը վերածէ գանոնք»: Երբ հարուստը իր ունեցածէն բաժին կը հանէ աղքատին՝ իր հարստութիւնը իրեն համար օրհնութեան կը վերածուի, եւ երբ աղքատը ամէն բանի համար շնորհակալ կ'ըլլայ

Աստուծոյ եւ տրտունջֆի արտայայտութիւններ չեն լսուիր անոր բերնէն՝ իր աղֆատութիւնը իրեն համար օրհնութեան կը վերածուի:

Հետեւաբար, հարստութիւնը չէ որ կը կորսնցնէ, կամ աղֆատութիւնը չէ որ կը փրկէ, այլ մարդուն վերաբերմունքը անոնց հանդէպ: Ս. Յովհաննէս Ոսկեբերան կը հաստատէ թէ «մէկը չի կրնար վնասել մարդուն եթէ մարդը չվնասէ ինքզինքին»: Ոսկեբերան Հայրապետին ըսել ուզածը այն է՝ որ մարդուն վնաս հասցնողը իր վերաբերմունքն է, իր կենցաղակերպն է, իր կեանքն է, եւ ո՛չ թէ իր աղֆատութիւնը կամ հարստութիւնը:

3.- Անցեալին թագաւորներ բեհեզ եւ ծիրանի հագնելու սովորութիւն ունէին: Բայց հարկաւ այս չի նշանակեր որ առակը թագաւորի մը կամ թագաւորի մը գաւակին մասին է որ կը խօսի: Մեծահարուստը կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք հանգստաւէտ կեանքի մը հետեւորդներն են եւ որոնց կեանքին նպատակը հանոյճներով եւ զուարճութեամբ լեցուն կեանք մը ապրիլն է. ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «խնոյճ կ'ընէր» բացատրութիւնը:

4.- «Բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր»: Այս բառերը պէտք է լուրջ կերպով մտածել տան մեզի որոշ նշմարտութեան մը մասին: Ի՞նչն է այդ նշմարտութիւնը: Այս հարուստը արտաքինապէս «բեհեզ եւ ծիրանի հագուստներ կը հագնէր», այլ խօսքով՝ արտաքինապէս թագաւորի նման կ'երեւէր, փառաւոր ու շքեղ կ'երեւէր, բայց ներքինապէս մեղքի բորոտութեամբ լեցուն էր, անողորմութեամբ եւ անգթութեամբ լեցուն էր: Զգո՛յշ ըլլանք մեր անձերուն: Զըլլայ որ մենք եւս արտաքինապէս բեհեզաւոր եւ ծիրանաւոր ըլլանք կամ երեւինք, իսկ ներքինապէս լեցուն ըլլանք մեղքի գարշահոտութեամբ:

5.- Հանոյճի եւ հեշտութեան ստրուկը դարձած մարդիկ, երբեմն-երբեմն չէ որ հանոյճն ու հեշտութիւնը կը փնտոեն, այլ՝ ամէն օր: Մեծահարուստին համար կ'ըսուի թէ «ամէն օր փառաւոր խնոյճ կ'ընէր» եւ ո՛չ թէ շաբաթը անգամ մը կամ ամիսը անգամ մը: Հոս Քրիստոս կը խօսի այնպիսի մարդոց մասին՝ որոնք ամենօրեայ մեղքի կեանք մը կ'ապրին: Մեղքի կեանքը սիրողը՝ Սատանային կողմէ ամէն օր մեղքէ մեղք կ'առաջնորդուի:

6.- Վերջին հետաքրքրական բան մը եւս: Մեկնիչ հայր մը հետեւեալը ըսած է. «Հայրերէն ոմանք Ղազարոսը կը նկատեն խորհրդանիշ հեթանոս աշխարհին, իսկ մեծահարուստը՝ խորհրդանիշ Հրէութեան կամ հրեաներուն: Գոռոզ հարուստը կը ներկայացնէ հրեաները, որոնց վրայ Աստուած առատօրէն իր հարստութիւնը թափեց, անոնց տալով իր խոստումները, օրէնքները, մարգարէութիւնները, ելլն, եւ անոնք

պարտէին, հոգեւոր իմաստով մը, այս հարստութենէն տալ աշխարհին, դառնալով քարոզիչները նշմարտութեան եւ տարածիչները Աւետարանին. բայց անոնք Աստուծոյ կողմէ իրենց տրուած հարստութիւնը (խոստումները, օրէնքները, մարգարէութիւնները) օգտագործեցին իրենց անձնական հաճոյքին եւ փառքին համար եւ հաւատքի դռնէն դուրս ձգեցին հեթանոսները, որոնք լեցուն էին վերքերով:

Հրեաներ անարգեցին իսեղն Ղազարոսը (հեթանոս աշխարհը) եւ գրկուեցան հաւատքի օրհնութենէն եւ Աստուծոյ արքայութեան հաճոյքէն, մինչ Աստուած արքայութեան դուռը բացաւ հեթանոսներուն դիմաց, որպէսզի սրբէ անոնց արցունքը, կշտացնէ անոնց հոգիները եւ բուժէ անոնց երեսելի եւ աներեսելի վերքերը:

Հրեաներ նման էին այս հարուստ մարդուն, որ կը գարշէր Ղազարոսի վերքերէն եւ չէր հանդուրժեր զինք սեղանակից տեսնել իրեն, որպէսզի իր վերքերուն հոտով չգարշահոտեցնէր մթնոլորտը, ինչպէս պիտի ըսէր Ս. Ամբրոսիոս: Հրեաներ իրենց հաճոյքն ու ուրախութիւնը կը տեսնէին աղֆատներուն դժբախտութեան մէջ, բայց Աստուած օգնեց աղֆատին (հեթանոս աշխարհին) եւ բացաւ արքայութեան դուռը անոր դիմաց»:

Հարուստին համար կ'ըսուի թէ «ամէն օր փառաւոր խննոյք կ'ընէր»: «Փառաւոր խննոյքը պատկերացումն է Աստուծոյ փառաւոր օրէնքներուն», պիտի ըսէր գրիչ մը: Յիսուսի ըսել ուզածը, հետեւաբար, այն է՝ որ հրեաները ունէին «փառաւոր խննոյքը», այսինքն՝ Աստուծոյ փառաւոր օրէնքները, եւ սակայն զանոնք կ'օգտագործէին միայն իրենց փառքին եւ հանգիստին համար, եւ բնա՛ւ չէին մտածեր օգտագործել զանոնք իրենց փրկութեան համար, եւ ո՛չ ալ կը մտածէին անոնցմէ բաժին հանել կամ զանոնք փոխանցել Ղազարոսներուն, այլ խօսքով՝ հեթանոսներուն: Հրեաներ, Աստուծոյ կողմէ իրենց տրուած «փառաւոր խննոյքը» (օրէնքները) պէտք էր ուրիշներուն ալ փոխանցէին, ինչ որ չըրին: Ա՛յս է որ ցոյց կու տայ հարուստին անկարեկից եւ անտարբեր վերաբերմունքը հանդէպ Ղազարոսին:

«Ղազարոս անունով աղֆատ մըն ալ կար, որ անոր դրան առջեւ կը նստէր» (Ղկ 16.20): Քանի մը մատնանշումներ. –

1.– Ղազարոսի անունին յիշատակութիւնը ցոյց կու տայ, որ Քրիստոս կը ճանչնայ իր հետեւորդները իրենց անուններով: Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք. «Ան որ դռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովին է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք» (Յհ 10.2-3): Հովիւը Քրիստոս

ինքն է, իսկ դոնապանը՝ մեր երկնաւոր Հայրը: Քրիստոս այն իսկական հովիւն է որ կը ֆանչնայ իր հետեւորդները իրենց անուններով, իսկ զանոնք ֆանչնալ իրենց անուններով, կը նշանակէ՝ ֆանչնալ անոնց ինքնութիւնը, անոնց անձն ու անձնական փափաքները, անոնց սիրտն ու սրտի իղձերը, անոնց հոգին եւ հոգիի ապրումները:

Տակաւին, երբ կ'ըսենք թէ Քրիստոս կը ֆանչնայ իր հետեւորդները իրենց անուններով, կը նշանակէ՝ կը ֆանչնայ զանոնք իբրեւ ի'րը, իր սեփականութիւնը, իր ժառանգութիւնը, կը ֆանչնայ անոնց կեանքն ու կեանքի խորքը, անոնց կրած նեղութիւններն ու տառապանքները, մէկ խօսքով, կը ֆանչնայ զանոնք լաւապէս, խորապէս, իրապէս եւ գիտէ անոնց մասին ամէն բան՝ ամէն իմաստով:

Ի վերջոյ, Աստուածաշնչական հասկացողութեամբ, ֆանչնալ մէկու մը անունը, կը նշանակէ՝ ընդունիլ զանիկա, իշխանութիւն ունենալ անոր վրայ, պատասխանատուութիւն զգալ անոր նկատմամբ, պարտաւորութիւն ունենալ անոր հանդէպ, տէր կենալ անոր, պաշտպան ըլլալ անոր, օգնական եւ նեցուկ կենալ անոր: Հետեւաբար, Ղազարոսի անունին յիշատակութիւնը, որոշապէս ցոյց կու տայ, որ Քրիստոս տէր եւ պաշտպան է իր հետեւորդներուն՝ ներկայիս, եւ տէր ու պաշտպան պիտի կենայ իր հետեւորդներուն՝ իր երկրորդ գալուստին՝ դատաստանի օրը, միանգամընդմիջտ ազատելով զանոնք Չարին ձեռքէն եւ իր իշխանութեան ենթակայ դարձնելով:

2.- Եթէ մեծահարուստին անունին չիշուիլը կը պարզէ գեհե՛ն նետուող մարդոց յաւերժապէս կորսուիլը եւ Աստուծոյ կողմէ մոռցուիլը, ապա միւս կողմէ, աղֆատին անունին յիշուիլը, ցոյց կու տայ, որ արդար մարդիկ յաւիտեան պիտի ապրին: Սաղմոսագիրը խօսելով արդար մարդուն մասին՝ կ'ըսէ. «Յիրաւի անիկա յաւիտեան պիտի չսասանի եւ արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ» (Սղ 112.6): Դասը գորս հոսկէ կը սորվինք այն է՝ որ պէտք է ջանանք արդար կեանք մը վարել եթէ երբեք կ'ուզենք յաւիտեան յիշուիլ եւ ապրիլ:

3.- Մեկնիչ հայրեր մեր ուշադրութեան կը յանձնեն որ «Ղազարոս» անունը Եբրայերէն լեզուին մէջ «Էլ-Ազար» բառն է, որ բառացիօրէն կը նշանակէ՝ Աստուծմէ օգնութիւն գտած: Հետեւաբար, Քրիստոս իրական անձի մը մասին չէ որ կը խօսի, այլ կը խօսի ոեւէ անձի մասին, որ կ'ապաւինի եւ կը վստահի Աստուծոյ օգնութեան եւ օգնութիւն կը գտնէ անկէ:

4.- Ղազարոս մեծահարուստին «դրան առջեւ կը նստէր»: Դրան առջեւ նստիլը, մէկ կողմէ ցոյց կու տայ որ հարուստը ամէն օր կը տեսնէր Ղազարոսը եւ ո'չ թէ ժամանակ առ ժամանակ, իսկ միւս կողմէ,

ցոյց կու տայ որ մեծահարուստը անտեղեակ չէր Ղազարոսին իրավիճակին, անոր թշուառութեան ու կարիքներուն, եւ ուստի, իր անկարեկից վերաբերմունքին համար, ան ոեւէ արդարացում չի կրնար ունենալ Աստուծոյ առջեւ:

Յիսուս Ղազարոսը կը ներկայացնէ մեծահարուստին «դրան առջեւ» նստած, սորվեցնելու եւ յիշեցնելու համար մեզի, որ մեր անմիջական շրջապատին մէջ կան եւ կ'ապրին թշուառներ, աղֆատներ, տառապածներ, կը բաւէ որ աչք ու կամեցողութիւն ունենանք, եւ մենք պիտի տեսնենք զանոնք: Անոնք մեր դուռին բովն են, այսինքն՝ մեզի մօտիկ են, մեզի ծանօթ են, մեր անմիջական շրջապատին մէջ են, եւ մենք պարտաւորութիւն ունինք անոնց նկատմամբ. եւ «դրան առջեւ կը նստէր» բացատրութիւնը, միշդ այդ պարտաւորութիւնն է որ կը բացայայտէ:

Այսօր մեր անմիջական շրջապատին մէջ կան թէ՛ աղֆատը եւ թէ՛ հարուստը: Հարուստ մարդիկ պէտք չէ նմանին այս առակին մէջ յիշուած մեծահարուստին՝ որպէսզի ֆակտագրակից չըլլան անոր, իսկ աղֆատ մարդիկ պէտք է նմանին առակին մէջ յիշուած աղֆատ Ղազարոսին՝ որպէսզի ֆակտագրակից ըլլան անոր: Առակը երբեք չ'ըսեր թէ Ղազարոս կը տրտնջար կամ կը դժգոհէր: Տրտնջացող եւ ամէն բանի համար դժգոհող աղֆատը՝ թէ՛ հոս կը չարչարուի եւ թէ՛ յաւիտենականութեան ընթացքին պիտի չարչարուի:

«Եւ կը յուսար իր փորը լեցնել մեծահարուստի սեղանին աւելցումներով» (Ղկ 16.21): Քանի մը նշումներ.--

1.- «Կու յուսար» բառերը կը պարզեն որ Ղազարոսը եւ կեանքի բոլոր Ղազարոսները, այլ խօսքով, բոլոր դժբախտները, բոլոր նեղեալները, բոլոր աղֆատները, յոյսով կ'ապրին, ակնկալութեամբ կ'ապրին, բայց անոնց մեծ բաժինը յուսախաբ կ'ըլլան, միշդ ինչպէս ինք Ղազարոս յուսախաբ եղաւ:

Դժբախտութիւն է երբ գութի կարօտ մարդը գութ կը փնտոռէ եւ չի գտներ, եւ ստիպուած կ'ըլլայ ըսելու. «Գոթացող մը փնտոռեցի, բայց չկար: Միտիթարիչ մը փնտոռեցի, բայց չգտայ» (Սղ 69.20):

2.- «Կը յուսար իր փորը լեցնել»: Ղազարոսին ուզածը հարստանալը չէր, ո՛չ ալ հանգիստ ընելու մը համար տեղ մը, այլ պարզապէս իր փորը լեցնելը, բայց այդքանին ալ չտիրացաւ:

3.- «Սեղանին աւելցումներով»: Հետաքրքրականը այն է, որ Ղազարոս չուզեց իր փորը լեցնել սեղանէն, այլ՝ սեղանին աւելցումներէն: Ան չպահանջեց մեծահարուստին սեղանակից դառնալ, այլ

պարզապէս ուզեց անոր «սեղանին աւելցուցնելով» կերակրուիլ եւ անոնցմով գոհանալ:

Յանկալ սեղանին աւելցուցին եւ սակայն չհասնիլ անոր, ցոյց կու տայ թէ աշխարհ կը զլանայ նուագագոյն չափով իսկ օգնել Աստուծոյ զաւակներուն: «Սեղանին աւելցուցնել» բացատրութիւնը յստակօրէն կը պարզէ որ աշխարհ բնա՛ւ երբեք չի փորձեր եւ չ՛ուզեր օգնել անօգնականին, տէր կենալ անտէրին, տուն տալ տնագուրկին, կերակուր տալ անօթիին:

Մէկը որ չի մտածեր Աստուծոյ մասին՝ չի կրնար մտածել նաեւ դժբախտ ու չարչարուող մարդոց մասին: Այդպիսին էր հարուստ մարդը: Ան ո՛չ Աստուծոյ մասին հարցուցած ունէր եւ ո՛չ ալ աղփատ Ղազարոսին մասին: Մէկը որուն փորը միշտ կուշտ է, որուն սիրտն ու հոգին միշտ լեցուն են աշխարհով՝ չի կրնար տեղ տալ Աստուծոյ եւ իր նմանին իր սրտին մէջ, այլ ամբողջութեամբ կը մոռնայ զանոնք:

Մովսէս մարգարէն կ'ըսէ. «Իսրայէլ գիրնալով ափացեց (գիրցար, հաստցար, իւղ կապեցիր.) ու իր Արարիչ Աստուածը թողուց եւ իր փրկութեան Վե՛մը արհամարհեց» (Բ.Օր 32.15): Յովհաննէս Ոսկեբերան կը հաստատէ որ հոս գործածուած «ափացեց» բառը կը պարզէ Իսրայէլի գոռոզութիւնը եւ անգուսպ դարձած ըլլալը:

Գոռոզութիւնը յաճախ ծնունդ կ'առնէ մարդուն մէջ երբ մարդը հարստանայ եւ ինքնաբաւ դառնայ: Եւ ինքնաբաւութիւնը յաճախ մոռցնել կու տայ մեզի մեր Փրկիչ Աստուածը: Մովսէս կ'ըսէ. «Երբ ուտես ու կշտանաս, երբ գեղեցիկ տուններ շինես եւ անոնց մէջ բնակիս, երբ արջառներդ եւ հօտերդ շատնան, երբ արծաթդ ու ոսկիդ եւ ամբողջ ունեցուածքդ շատնայ, թող սիրտդ չհպարտանայ եւ ինչ Տէր Աստուածդ չմոռնաս» (Բ.Օր 8.12-13):

Ոսկեբերան Հայրապետը խորհրդածելով Մովսէս մարգարէին այս խօսքին մասին՝ կ'ըսէ. «Կշտանալը կ'առաջնորդէ մոռացումի, ուստի սիրելիներ, երբ սեղանին շուրջ բոլորուիք չմոռնա՛ք աղօթել: Զափաւորութեամբ լեցուր փորդ, որպէսզի չծանրանայ մարմինդ եւ Աստուծոյ դիմաց ծնրադրելու կարողութիւնդ չկորսնցնես...»:

Ընթրիքէն անմիջապէս յետոյ անկողին մի՛ երթա՛ք, այլ՝ աղօթքի, որպէսզի անբան անասուններէն աւելի անմիտ չըլլանք:

Մենք չենք ծնած եւ չենք ապրիր որպէսզի ուտենք եւ խմենք, այլ կ'ուտենք որպէսզի ապրինք: Սկիզբէն կեանքը կերակուրի համար չէր, այլ կերակուրը կեանքի համար, իսկ մենք այնպէս մը կ'ապրինք, կարծէք աշխարհ եկած ըլլանք միայն ուտելու»:

4.- Քիչ մը վերել մատնանշեցինք որ մեկնիչ հայրերէն ոմանք Ղազարոսը խորհրդանիշ կը նկատեն հեթանոս աշխարհին: Կեսարիոս Եպիսկոպոսը կ'ըսէ. «Ղազարոս բառը կը նշանակէ՝ "օգնութիւն գտած"». Հետեւաբար, հոս Յիսուս կը խօսի հեթանոսներուն մասին որոնք Աստուծմէ օգնութիւն գտան...: Հեթանոսները (կամ Ղազարոսը) կը ցանկային սեղանէն ինկած աւելցումներուն, այլ բացատրութեամբ մը, անոնք կը փափաքէին ցանցնալ հոգեւոր օրէնքները իբրեւ երկնային հանոյքներ: Սեղանէն ինկած աւելցումները՝ Աստուծոյ Օրէնքին խօսքերն են որոնք գետին ինկան հրեայ ժողովուրդին հպարտութեան եւ գոռոզութեան պատճառով, իսկ Ղազարոսին մարմինը լեցնող վերքերը՝ խոստովանութիւնն է այն մեղքերուն, որ ներսէն դէպի դուրս ժայթքեցաւ իբրեւ գարշահոտ արիւն»: Շատ հետաքրքրական է այս պատկերացումը կամ նմանութիւնը: Կեսարիոս Եպիսկոպոսին ըսել ուզածը այն է՝ որ ինչպէս վերքը մարմինին վրայ կ'երեւի, մարմինէն դուրս է կարծէք, այնպէս ալ, խոստովանութիւնը՝ մեղքը մեզմէ դուրս կը բերէ, մեզմէ կը հեռացնէ:

«Ղազարոս վերքերով ծածկուած էր, եւ շունք կու գային իր վերքերը կը լզէին» (Ղկ 16.21):

Այստեղ Յիսուս կու տայ «շուն»ի մը օրինակը, ցոյց տալու համար մեզի որ աղփատին ու թշուառին հանդէպ անկարեկից, անողորմ եւ անտարբեր եղող մարդիկ՝ շունէն տարբեր չեն, անբան անասունէն տարբեր չեն:

Անբան կենդանին անգամ, այս պարագայիս շունը, գթութիւն կը ցուցաբերէ Ղազարոսին նկատմամբ եւ կը ջանայ իր լզելովը անոր վերքերը՝ մեղմել անոր ցաւերը: Կարծէք Յիսուս ըսել կ'ուզէ.– «Ո՛վ մարդ, շո՞ւնը պէտք էր բու նմանիդ վերքերուն ցաւերը մեղմէր թէ դուն: Շո՞ւնը եղբօրդ վերքերը պէտք էր լզէր, թէ դո՞ւն գանոնք պէտք էր փաթաթէիր եւ անոնց վրայ բալասան դնէիր»:

Մեծն Կիրեոյ խօսելով այս «ազնիւ ու կարեկցող շուններուն մասին» կ'ըսէ. «Շունները կը լզէին Ղազարոսի վերքերը. անոնք վնաս չէին հասցներ անոր, ընդհակառակը, կը կարեկցէին եւ կը գթային անոր. իրենց լեզուներով կը թեթեւցնէին անոր յոգնութիւնը եւ կը վերցնէին անոր ցաւերը: Բայց հարուստը գազաններէն աւելի բիրտ եւ անգութ էր, որովհետեւ բնաւ չկարեկցեցաւ Ղազարոսին»:

«Ղազարոս վերքերով ծածկուած էր», իսկ մեծահարուստը՝ փարթամ հագուստներով: Ղազարոս «դրան առջեւ կը նստէր», գետնի վրայ, իսկ մեծահարուստը՝ բարձր գահերու եւ հանգստաւէտ բազմոցներու վրայ: Ղազարոսը ցնցոտիներ կը հագնէր, իսկ

մեծահարուստը՝ «բեհեզ եւ ծիրանի հագուստներ»։ Մեծահարուստը ամէն օր առատօրէն կ'ուտէր, բայց չէր յիշեր իր անօթի դրացին՝ իր դրան առջեւ նստած։

«Աղքատը մեռաւ եւ հրեշտակները գինֆ տարին Աբրահամի մօտ։ Մեծահարուստն ալ մեռաւ եւ քաղութեացաւ» (Ղկ 16.22)։ Քանի մը մատնանշումներ․-

1.- «Հրեշտակները գինֆ տարին Աբրահամի մօտ»։ Երեք նշումներ․-

ա.- Երբ Ղազարոսը մեռաւ՝ հրեշտակները եկան իր դիմաւորութեան։ Ասիկա ցոյց կու տայ որ երբ հաւատացեալ մարդիկ իրենց հոգին աւանդեն՝ կը դիմաւորուին Աստուծոյ հրեշտակներուն կողմէ։ Եւ ինչո՞ւ։ Որովհետեւ «հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14)։

բ.- Ղազարոսին տարուիլը հրեշտակներուն կողմէ, կը յուշէ մեզի կարեւոր նշմարութիւն մը, այն՝ որ հաւատացեալ մարդուն հոգին ինքնիշխան չի կրնար դրախտ երթալ, մէկը պէտք է գինֆ հոն առաջնորդէ։

գ.- Մէկ հրեշտակ բաւարար չէ՞ր Ղազարոսը տանելու Աբրահամին մօտ։ Վստահաբար բաւարար էր։ Բայց «հրեշտակ» բառին յոգնակիով յիշուիլը, մէկ կողմէ կրնայ ցոյց տալ մեզի թէ անոնք խմբովին կը գործակցին եւ ո՛չ թէ անհատաբար եւ իրարմէ անկախօրէն, իսկ միւս կողմէ կը բացայայտէ թէ փրկուած անձի մը համար անոնք ամբողջ խումբերով, ամբողջ գունդերով կ'ուրախանան։ Ճիշդ է որ իւրաքանչիւր անձ իր պահապան հրեշտակը ունի (Ղազարոսի հրեշտակներուն կողմէ դիմաւորուիլը կը փաստէ այս իրողութիւնը), բայց երբ մէկը ընդունի փրկութիւնը՝ միայն իր պահապան հրեշտակը չէ որ կ'ուրախանայ, այլ Աստուծոյ բոլոր հրեշտակները կ'ուրախանան, ինչպէս Յիսուս ինքն իսկ ըսաւ. «Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեռով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ» (Ղկ 15.10)։

2.- Ըսի, թէ Պօղոս առաքեալ կը հաստատէ «որ հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14)։ Հրեշտակներուն ծառայութիւնը հաւատացեալներուն չի դադրիր երբ անոնց երկրաւոր կեանքը իր աւարտին կը հասնի։ Հրեշտակները կը շարունակեն ծառայել հաւատացեալներուն նաեւ եւ յատկապէս մահուան վայրկեանին։ Իրե՛նք է որ իրենց ձեռքերուն մէջ կ'առնեն անոնց հոգիները, նախ որպէսզի պաշտպանեն զանոնք երկինքի մթնոլորտը լեցնող չար ոգիներու յարձակումներուն դէմ, որոնք կ'ուզեն հաւատացեալներու

հոգիները անգամ բռնել եւ դժոխք տանիլ, երկրորդ, որպէսզի երկրէն երկինք իրենց գնացին մէջ անապարհորդակից ու խնդակից ըլլան անոնց:

3.- Մեծահարուստին համար չ'ըսուիր թէ որո՛նց կողմէ դիմաւորուեցաւ, բայց բոլորս ալ գիտեմք որ անհաւատ կամ անապաշխար մարդուն հոգին կը դիմաւորուի չար ու պիղծ ոգիներուն կամ դեւերուն կողմէ եւ կը տարուի դժոխք: Այո՛, Սատանան կը դրկէ իր արբանեակներէն քանի մը հատ որպէսզի «դիմաւորեն» եւ ձերբակալեն իր «գաւակները» որոնք իր կամքը կը կատարէին իրենց երկրաւոր կեանքի ընթացքին: Ի՛նչ ցաւալի բան է Աստուծոյ գաւակները ըլլալու համար ստեղծուած մարդիկը տեսնել Սատանայի գաւակ դարձած: Քրիստոս ինքն իսկ խօսքը ուղղելով կեղծաւոր մարդոց՝ ըսաւ. «Սատանային գաւակներն էք» (Յհ 8.44):

4.- Հետաքրքրական է որ մեծահարուստ մարդուն համար կը գործածուի «թաղուեցաւ» բառը, «Յունարէն՝ εταφη (էթաֆի)», իսկ Ղազարոսին համար նման բառ չի գործածուիր: Հոս «թաղուիլը» մեղքերուն եւ անհաւատութեան մէջ թաղուած ըլլալ կը նշանակէ: Նո՛յն իմաստը ունի Յիսուսի ուրիշ մէկ խօսքը. «Զգէ՛ որ մեռելները թաղեն իրենց մեռելները, իսկ դուն գնա՛ եւ Աստուծոյ թագաւորութիւնը փարոզէ» (Ղկ 9.60): Խօսքը հոգեւորապէս մեռած մարդոց մասին է: Յիսուսի ըսել ուզածը այն է՝ որ Աստուծոյ թագաւորութեան փարոզութեան կանչուած մարդը՝ իր կապը պէտք է խզէ մեռելոտի գործերու հետ, աշխարհի մեղքին հետ: Հարուստ մարդը իր կապը չէր խզած մեղքին հետ, եւ ցիշող անոր համար ալ, իր մահէն ետք, իր հոգին «թաղուեցաւ» դժոխքին խորունկ վիհերուն մէջ: «Թաղուեցաւ» բացատրութեամբ կարելի է հասկնալ նաեւ «կորսուեցաւ»: Մէկը որ կորսուած է իր մեղքերուն մէջ, մահէն ետք, իր մեղքերն են որ զինք պիտի կորսնցնեն:

5.- Հրեշտակներուն կողմէ դիմաւորուիլը, մեր հոգիները պաշտպանելու եւ դէպի երկինք առաջնորդելու նպատակներուն կողմին, երրորդ կարեւոր նպատակ մըն ալ կը հետապնդէ, որ է՝ հաւատացեալ մարդուն հոգին պատուել: Արդարեւ, մարդու մը համար պատիւ չէ՞ դիմաւորուիլ, պաշտպանուիլ եւ առաջնորդուիլ երկնային եւ հրեղէն մարմինի մը կողմէ: Հաւատացեալներուն հոգիները (մանաւանդ տառապած հոգիները) արժանի են ամէն պատիւի, յարգանքի եւ փառքի: Եւ ուշագրաւ է որ մէկ հրեշտակ չէ որ կու գայ Ղազարոսի դիմաւորութեան, այլ քանի մը հրեշտակներ: Եւ ասիկա պիտի նշանակէր զինք անելի՛ն՝վ պատուել:

6.- Հրեշտակները պատահական տեղ մը չէ որ տարին Ղազարոսին հոգին, այլ «զինք տարին Աբրահամի մօտ»: Ոմանք հիմնուելով այս բառերուն վրայ, եւ նկատի ունենալով որ հրեաներ իրենք զիրենք Աբրահամի գաւակները կը սեպեն, ենթադրած են որ Ղազարոսը հրեայ անձ մըն էր եւ կամ հրեաները կը ներկայացնէ: Առակը սակայն նման բան ո՛չ կը հաստատէ եւ ո՛չ ալ կ'օգնէ կամ թոյլ կու տայ որ հաստատենք:

7.- Բոլորիս ծանօթ ուրիշ կէտ մը կայ որ սակայն կարելոր է գայն մատնանշելը: Կարգ մը աղանդաւորական հոսանքներ կը հաստատեն որ հոգին բաժնուելէ ետք մարմինէն՝ քնածութեան եւ թմրութեան կը մատնուի, այլ խօսքով՝ կը քնանայ, տակաւին, որոշ հերետիկոսական մտածողութիւններ կը հաստատեն թէ հոգին ամբողջութեամբ կը փնանայ ու կը բնաջնջուի մարմինէն բաժնուելէ ետք: Բայց «աղբատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ» խօսքը, կը հերքէ աղանդաւորական ու հերետիկոսական այս մտածողութիւնները: Ղազարոսի հոգին ո՛չ քունի կը մտնէ, ո՛չ կը թմրի եւ ո՛չ ալ կը բնաջնջուի, այլ կը տարուի Աբրահամին մօտ, կը տարուի գիտակցաբար եւ իր կատարեալ գիտակցութեանը մէջ:

8.- «Զինք տարին Աբրահամի մօտ»: Հին թարգմանութիւնը կ'ըսէ. «Զինք տարին Աբրահամի գոգը»: Գոգ, պարզապէս կը նշանակէ՝ գիրկ, ծոց: Յունարէն բնագիրին մէջ ալ գործածուած է «գիրկ» կամ «գիրկը» բառը «ΚΟΛΠΟΝ (ֆոլփոն)»: Ուզեցի մատնանշել այս իրողութիւնը, որովհետեւ հետաքրքրական ճշմարտութիւն մը կը բացայայտուի մեր դիմաց, այն՝ որ Աստուած եւ իր գաւակներն ու իր հրեշտակները գրկաբաց կ'ընդունին այս աշխարհէն բաժնուող տառապած Ղազարոսեան հոգիները: Աստուած իր գրկին մէջ կ'առնէ իր գրկին ջերմութեան ցանկացողները:

9.- Ինչո՞ւ «Աբրահամի մօտ» կը տարուի Ղազարոս եւ ո՛չ թէ ուրիշին մօտ: Հրեաները Աբրահամը կ'ընդունին իբրեւ հաւատքի հայր, միշտ ինչպէս մենք Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը կ'ընդունինք իբրեւ հաւատքի հայր: Աստուածաշունչին մէջ Աբրահամ հայրը կը կոչուի հաւատացեալներուն (Հո 4.11-12), ուստի, Ղազարոսին անոր ֆով տարւիլը, ցոյց կու տայ «Ղազարոսին հաւատացեալ ըլլալը», այլ բացատրութեամբ մը, Յիսուս մեզի կը սորվեցնէ որ միայն հաւատացեալները պիտի կարենան ժառանգել յաւիտենական կեանքը:

Ղազարոս Աբրահամի մօտ չտարուեցաւ պարզապէս որովհետեւ աղբատ ու տառապած մէկն էր, այլ որովհետեւ հաւատքի տէր մարդ էր: Արքայութիւնը աղբատ ու տառապած մարդոց տեղը չէ անպայման, այլ՝ հաւատացեալ ու հաւատարիմ մարդոց տեղը: Մէկը կրնայ աղբատ բայց

անհաւատ ըլլալ: Ուրիշ մը կրնայ տառապած բայց տրտնջացող եւ ամէն բանի համար դժգոհող մարդ ըլլալ: Այսպիսի մարդիկ չեն փրկուիր: Փրկուողները Յիսուսի համար տառապող եւ համբերող մարդիկը պիտի ըլլան: Ամէն մարդ կրնայ տառապիլ, բայց արքայութիւնը Աստուծոյ անունին ու փառքին համար տառապողներունը պիտի ըլլայ միայն:

«Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը քարճրացուց եւ հեռուն Արքահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր բով» (Ղկ 16.23): Քանի մը մատնանշումներ.---

1.- «Դժոխքին մէջ»: Մենք ընդհանրապէս երբ կը խօսինք դժոխքին մասին, գայն կը պատկերացնենք կամ կը ներկայացնենք իբրեւ տանջարան, այլ խօսքով, տեղ մը, ուր գացող մարդը կը տանջուի, կը տառապի, կ'այրի եւ կ'ողբայ: Եւ ասիկա շիտակ է, բայց շիտակ է միայն անոնց համար՝ որոնք դատապարտուած կը մեկնին այս աշխարհէն, ինչպէս էր պարագան մեծահարուստին:

Կարելոյ է գիտնալ սակայն, որ Աստուածաշունչին մէջ «դժոխք» բառը անպայման դատապարտութեան վայրը չի նշեր եւ «տանջատեղի» չի նշանակեր: Դժոխքը, ինչ որ Աստուածաշունչը ցոյց կու տայ եւ ինչ որ Հրէական մտածողութիւնը կը պարզէ, պարզապէս կը նշանակէ՝ «մեռելներու տեղ», այսինքն՝ տեղ մը (ո՛չ նիւթական) ուր բոլոր հոգիները կ'երթան իրենց մարմիններէն բաժնուելէ ետք:

Այս իմաստով, (ինչպէս Ռաբբիական մտածողութիւնն էր) «դժոխքը» կը բաժնուի երկու մասի.--- Մէկ մասը արդարներուն համար էր, իսկ միւս մասը՝ մեղաւորներուն համար: Արդարը հոն կ'այրի Աստուծոյ ներկայութեան մէջ եւ Աստուծոյ ներկայութիւնը, իսկ մեղաւորը ինքզինք գրկուած կը զգայ այդ երանելի ներկայութենէն:

Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Աստուածաշունչին մէջ "դժոխք" բառը երկու տարբեր բաներ կը նշանակէ.---

ա.- **Մեռելներու աշխարհը** կամ բնակավայրը, ուր արդար թէ մեղաւոր մարդոց հոգիները կ'երթան եւ կը սպասեն մինչեւ դատաստանի օրը (Յյտ 6.8, 21.12-14): Ասոր համապատասխան բառերն են, Յունարէն՝ Hades, եւ Եբրայերէն՝ Sheol (տե՛ս Մտ 11.23, 16.18: Ղկ 10.15: Գրծ 2.31 եւլն):

բ.- Մեղաւոր հոգիներուն **պատիժի վայրը** (հմմտ Ղկ 16.23): Այս երկրորդ իմաստին հոմանիշներն են՝ **գեհեն, անդունդ, գուր, կրակի լիճ** բացատրութիւնները»¹:

¹ Նոր Կտակարան, «Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն»: էջ 862:

Յունարէնի մէջ գեհենի համար գործածուած բառը՝ *γεεννης* (կէիննիս), տառադարձութիւնն է Եբրայերէն՝ *Գե-Հիննոմ* բառին, որ կը նշանակէ՝ Հիննոմի Ձոր: Այս ձորը կը գտնուէր Երուսաղէմի հարաւը եւ այս ձորին մէջ էր որ անցեալին հրեաներ իրենց երեխաները գոհ կը մատուցանէին Մողոբին (*Դ.Թգ 23.10: Եր 7.31-32*):

Քրիստոսի ժամանակ, Երուսաղէմի բնակիչները այս ձորին մէջ էր որ կը թափէին իրենց աղբերը եւ կ'այրէին զանոնք: Ի՞նչ կ'ըլլայ ձորի մը մէջ, ուր ամբողջ ֆաղափի մը աղբերը կը թափուին եւ կրակով կ'այրին: Նման ձորի մը մէջ որդը անպակաս կ'ըլլայ եւ կրակը անմար: Յիշեցէ՛ք որ Քրիստոս ինք դժոխքին մասին խօսած ատեն ըսաւ որ այդտեղի կրակը չի մարիր եւ որդը չի մեռնիր (*Մր 9.48*): Հետեւաբար, երբ Քրիստոս գեհեն բառը կը գործածէր, խորքին մէջ, հրեաներուն ամենօրեայ կեանքին հետ կապ ունեցող պատկեր մըն էր որ կը գործածէր, եւ ուստի՝ լաւապէս ծանօթ եւ հասկնալի հրեաներուն համար: Բայց մեր սերտած համարին՝ *Ղկ 16.23*-ին մէջ գործածուած բառը՝ գեհեն (*γεεννης*) բառը չէ, այլ Յունարէն՝ դժոխք (*αδη* ատի) բառն է:

Դժոխքը ուր մեծահարուստը գնաց վերեւ յիշուած առաջին իմաստը ունեցող դժոխքն է: Մենք գիտենք որ մեղաւոր մարդիկ գեհեն պիտի նետուին եւ հոն տանջուին Քրիստոսի երկրորդ գալուստէն եւ վերջին դատաստանէն ետք միայն: Եթէ ա՛յս է իրողութիւնը, այդ պարագային հարց կու տանք թէ ինչո՛ւ մեծահարուստը գեհեն չնետուած «կը տանջուէր»: Պատասխանը շատ պարզ է: Վերեւ ըսինք որ բոլոր հոգիները միեւնոյն տեղը կ'երթան: Բայց բնականօրէն միեւնոյն տեղը գացող հոգիներէն իւրաքանչիւրը գիտէ թէ ի՛նչ կը սպասէ իրեն: Եթէ ննջեցեալը հաւատացեալ է, անսահմանօրէն ուրախ վիճակի մէջ կ'ըլլայ, քանի գիտէ որ անպատմելի ուրախութիւն մը կը սպասէ իրեն, իսկ եթէ անհաւատ է, տրտում ու սգաւոր կ'ըլլայ, քանի գիտէ թէ անողորմ դատաստան եւ գեհենի կրակ կը սպասէ իրեն:

Մեծահարուստը ճիշդ այսպիսի վիճակի մը մէջ կը գտնուի հիմա: Ան դժոխքին կամ մեռելոց աշխարհին ա՛յն բաժինին մէջ է՝ որ դատապարտուած է յաւիտենական կորուստի: Մեծահարուստին նման, իրենց նմաններուն հանդէպ անողորմ եւ անկարեկից եղող բոլոր մարդիկ հո՛ն է որ պիտի երթան, սպասելով վերջին դատաստանին որուն պտուղը պիտի ըլլայ գեհենը:

2.- «Մեծահարուստը կը տանջուէր»: Ոեւէ մէկը որ կը բաժնուի այս կեանքէն առանց հաւատքի եւ առանց Աստուծոյ՝ տանջանքն ու տառապանքն է որ կը սպասէ իրեն: Մահէն ետք մեղաւոր մարդուն

տանջուիլը ցոյց կու տայ որ մարդ արարածը ստեղծուած է Աստուծոյ կողմէ եւ Աստուծոյ համար, եւ ուստի երբ մէկը առանց Աստուծոյ կը մեկնի այս կեանքէն, Աստուծոյ մօտ չի տարուիր իր հոգին, այլ՝ դժոխք:

3.- «Կը տանջուէր»: Հարուստը իր ունեցած հարստութեան պատճառով չէր որ կը տանջուէր, այլ՝ իր անողորմութեան, իր անգթութեան, իր գոռոզութեան, իր անաստուածսիրութեան եւ անմարդասիրութեան համար: Աստուած չ'ուզեր որ իր զաւակները տառապին աղֆատութեան միրաններուն մէջ: Ան կ'ուզէ որ անոնք բարօր կամ բարեկեցիկ կեանք մը ապրին, պայմանաւ սակայն որ զինք չմոռնան:

4.- «Աչքերը բարձրացուց»: Այս բացատրութիւնը ցոյց կու տայ երկու բան. նախ, ցոյց կու տայ որ մեծահարուստին աչքերը նախապէս փակ էին ճշմարտութեան, բայց հիմա անոնք ամէն ինչ յստակութեամբ կը տեսնեն: Իր երկրաւոր կեանքի ընթացքին, հարուստը բնաւ իր աչքերը չբարձրացուց երկինք: Հիմա արդէն ուշ էր: Աչքերնիս երկինք բարձրացնելու եւ մեր նայուածքը Աստուծոյ ուղղելու պահը հիմա՛ է: Այս կեանքէն բաժնուելէ ետք՝ ողբալը եւ Աստուծոյ աղաղակելը օգուտ պիտի չընեն: Երկրորդ, «բարձրացուց» բառը միաժամանակ կը պարզէ Ղազարոսին վեր եւ վերնայիններուն հետ ըլլալու իրողութիւնը, իսկ մեծահարուստին վար եւ վարիներուն հետ ըլլալու իրողութիւնը:

Ս. Յովհաննէս Ոսկեբերան հայրապետ խօսելով «աչքերը բարձրացուց» բառերուն մասին կ'ըսէ. «Մեծահարուստը աչքերը բարձրացուց տեսնելու համար Ղազարոսը, ո՛չ թէ որպէսզի անարգէր զայն, (քանի արդէն Ղազարոս իրմէ վեր էր, իսկ ինք վար էր)..., այլ որպէսզի տեսնէր Ղազարոսին վայելած ուրախութիւնն ու հանգիստը եւ ատիկա զինք տանջէր, քանի ինք զրկուած էր ատոնցմէ»:

5.- «Եւ հեռուն»: Շատ հետաքրքրական են այս երկու բառերը: Հարուստը կը տեսնէ Ղազարոսը իրմէ հեռու: Մեր եկեղեցւոյ տեսակէտը այն է՝ որ բոլոր ննջեցեալներուն հոգիները (փրկուած թէ կորսուած) միեւնոյն տեղը կ'երթան: Այո՛, անոնք միեւնոյն տեղը կ'երթան բայց «հեռու» կ'ըլլան իրարմէ, այսինքն՝ կապ եւ հաղորդակցութիւն չեն ունենար իրարու հետ:

Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Հողեղէն ամէն գոյութիւն մահկանացու է: Մարդը ինք ալ հողեղէն է: Եւ թէպէտ իրեն շնորհուած էր կարելիութիւնը կենաց ծառէն քաշակելով անմահ մնալու, բայց իր անհնազանդութեամբ մարդը կորսնցուց այդ վիճակը եւ իբրեւ մարմին՝ սահմանուեցաւ մահուան: Բայց մարդը նաեւ հոգի է, եւ հոգին ինք անմահ է: Մահը հոգիին անջատումն է մարմինէն: Արդ, ի՞նչ կ'ըլլայ եւ ո՞ր կերթայ մարմինէն անջատուած հոգին:

Արեւելի բոլոր եկեղեցիները, ինչպէս նաեւ Հայոց եկեղեցին, իւրաքանչիւր մարդու վերջնական հատուցումը կապուած կը տեսնեն ընդհանրական այն միակ դատաստանին, որ կապուած է Քրիստոսի 2րդ գալուստին եւ մեռելներու յարութեան (Յյտ 20.11-15): Ո՞ւր են հոգիները մինչ այդ: Անոնք բոլորը միատեղ կը մնան աննիւթական «վայր»ի մը մէջ, որ քրիստոնէական գրականութեան մէջ կը կոչուի «հոգիներու կայան»: Անոնք թեպէտ այժմ դատաստանին սպասման վիճակի մէջ են, բայց իրենց սպասող արդար հատուցումին գիտակ են հիմակուրնէ, եւ ըստ այնմ ալ կը նախանշակեն իրենց յաւիտենական երանութիւնը կամ տանջանքը:

Հայաստանեայց եկեղեցին առանձնական դատաստան եւ անմիջական հատուցում չի ցանցնար, որովհետեւ Աստուածաշունչը յայտնապէս հակառակը կ'ուսուցանէ (Եբր 11.39-40: Յյտ 6.9-11): Իսկ Քաւարանի մը մասին Աստուածաշունչը ո՛չ մէկ խօսք ունի»:

Հետեւաբար, «հեռուն» բառը երբեք ցոյց չի տար որ Ղազարոսի եւ հարուստ մարդուն հոգիները տարբեր տեղեր են, այլ ցոյց կու տայ որ անոնք տարբեր վիճակներու մէջ են: Փաստը որ փրկուած կամ կորսուած հոգիները միեւնոյն տեղը կ'երթան՝ նոյնիմֆն առակը ցոյց կու տայ: Առակը կը պարզէ որ մեծահարուստն ու Ղազարոս կը տեսնէին իրար: Դարձեալ, թող Աստուծոյ մարդը՝ Զարեհ Արք. Ազնաւորեան ի՛նք խօսի. «Մեր եկեղեցւոյ տեսակէտը այն է՝ որ բոլոր հոգիները մէկ «տեղ» կը հաւաքուին: Ասոր պատկերացումը կ'առնենք Ղուկասու Աւետարանին մէջ յիշուած աղփատ Ղազարոսին եւ մեծահարուստին առակէն (Ղկ 16.19-31): Մեծահարուստը դժոխքի մէջ էր եւ կը տանջուէր, իսկ Ղազարոս՝ Աբրահամի մօտ էր (Ղկ 16.23): Առակը ցոյց կու տայ որ մեծահարուստն ու Ղազարոսը իրար կը տեսնեն, եւ հետեւաբար, իրարմէ անջատուած չեն «տեղով», այնպէս որ իրար չկարենան տեսնել: Այս իրողութիւնը որոշապէս կը պարզէ որ մինչեւ դատաստանի օրը հոգիները միասին ու միատեղ պիտի ըլլան:

Երբ կ'ըսենք հոգիները միատեղ են՝ չի նշանակեր նոյն վիճակին մէջ են: Տարբեր բան է «տեղի» հասկացողութիւնը եւ տարբեր բան՝ վիճակի հասկացողութիւնը: Երբ «տեղ» բառը կը գործածենք, պէտք չէ մտածենք նիւթական տեղի մը կամ վայրի մը մասին: Յատուկ նիւթական վայր մը չկայ ուր հոգիները կը հաւաքուին իրենց մարմիններէն բաժնուելէ ետք:

Յիշենք նաեւ որ մէկ «տեղ» հաւաքուած հոգիները որոշ յարաբերութեան ու հաղորդակցութեան մէջ կ'ըլլան իրարու հետ: Հարկաւ իրարու հետ անմիջական հաղորդակցութեան մէջ կրնան ըլլալ միայն անոնք՝ որոնք վիճակակից ու բաժնեկից են իրարու»:

«Աստուածաշունչին պատասխանները ժողովուրդին հարցումներուն» խորագիրը կրող մեր գիրքին մէջ, խօսելով հոգիներուն միեւնոյն տեղը երթալու իրողութեան մասին եւ բացատրելով թէ ի՞նչպէս միեւնոյն տեղը կ'երթան եւ սակայն միեւնոյն վիճակին մէջ չեն ըլլար՝ ըսած ենք։-

«Երբ մէկ կողմէ կը հաստատենք որ հաւատացեալ մարդուն հոգին դրախտ կը տարուի եւ անհաւատ մարդուն հոգին՝ դժոխք, եւ միւս կողմէ կ'ըսենք որ անոնք միեւնոյն «տեղը» կը տարուին, հակասութեան մէջ եղած չե՞նք ըլլար: Ի՞նչպէս միեւնոյն «տեղն» են, բայց մէկը դրախտ, եւ միւսը դժոխք: Պատասխանը շատ պարզ է: Հաւատացեալին եւ անհաւատին հոգիները նոյն «տեղն» են բայց նոյն վիճակին մէջ չեն: Կարելի՞ է երեւակայել նման բան: Վստահարար:

Օրինակը առնենք մեր կեանքէն: Ենթադրենք պահ մը որ միեւնոյն դասարանին մէջ չորս աշակերտներ կան, երկուքը ծոյլ, եւ երկուքը՝ աշխատասէր: Հիմա դուք ըսէք, ծոյլ աշակերտներուն համար դասարանը դժոխքի պէս չ'ըլլար, եւ աշխատասէր աշակերտներուն համար դրախտի պէս չ'ըլլար: Ինչպէս միեւնոյն դասարանին մէջ եղող աշխատասէր աշակերտը ուրախ եւ հանգիստ կ'ըլլայ, իսկ ծոյլ աշակերտը՝ տխուր եւ անհանգիստ, այնպէս ալ, միեւնոյն «տեղը» հաւաքուած հաւատացեալ հոգիները ուրախ ու երջանիկ կ'ըլլան, իսկ անհաւատ հոգիները՝ տրտմալից եւ ապերջանիկ:

Առնենք երկրորդ օրինակ մը: Չկա՞ն ընտանիքներ որոնց անդամներէն ոմանք Քրիստոսի ներկայութիւնը կը գգան, եւ ոմանք ալ՝ ոչ: Ան որ ընդունած է Քրիստոսը իր սրտին մէջ՝ ներքին ուրախութիւն մը կ'ապրի, իսկ ան որ չէ ընդունած՝ չ'ապրիր: Ինչպէս միեւնոյն տունին մէջ ապրող անդամներէն ոմանք ներքին ուրախութիւն մը կ'ապրին եւ ոմանք ալ ոչ, այնպէս ալ, մահէն յետոյ, միեւնոյն «վայրը» հաւաքուած հոգիներէն ոմանք խաղաղութեան մէջ կ'ըլլան եւ ոմանք ալ՝ խռովութեան մէջ»:

Եզրակացնենք ըսելով, «հեռուն» բառը ո՛չ թէ տեղով իրարմէ հեռու ըլլալը ցոյց կու տայ, այլ վիճակով իրարմէ հեռու ըլլալը, իրարու անհաղորդակից ըլլալը:

6.- «Եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր քով»: Խօսեցանք «եւ հեռուն» բառերուն մասին: Հիմա խօսինք տողին երկրորդ բաժնին մասին, քանի մը նշումներ ընելով։-

ա.- Առաջին հետաքրքրական կէտը գոր կը նշմարենք այս համարին մէջ Աբրահամին եւ Ղազարոսին քով-քովի ըլլալու իրողութիւնն է: Հոսկէ կը սորվինք այն՝ որ Աստուծոյ բոլոր գաւակները «տեղ մը» իրարու կը հանդիպին երբ կը մեկնին այս աշխարհէն: Աբրահամ

հարուստ եւ երեւելի անձնաւորութիւն մըն էր, իսկ Ղազարոս՝ աղքատ եւ աննշան: Հակառակ ասոր, անոնք հանդիպեցան իրարու: Սա ցոյց կու տայ որ Աստուծոյ բոլոր զաւակները, անոնք ըլլան հարուստ թէ աղքատ, երեւելի թէ աննշան, այլ խօսքով՝ բոլոր տեսակի խաւերուն պատկանող հաւատացեալներ, իրարու կը հանդիպին եւ կը տեսնեն, իրարմով կ'ուրախանան եւ կը մխիթարուին, երբ կը բաժնուին այս կեանքէն:

բ.– Երկրորդ նշմարտութիւնը գոր կը բացայայտուի մեր դիմաց, Աբրահամին եւ Ղազարոսին տեսնուիլն է հարուստին կողմէ: Երբ բնագիրը կը հաստատէ թէ հարուստը «Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը՝ անոր բով», պարզ տեսնելու արարքի մը մասին չէ որ կը խօսի, այլ ըսել ուզուածը այն է՝ որ հարուստը տեսաւ զանոնք փառքի՛ մէջ, լոյսի՛ մէջ, պատիւ ու յարգանք ստացած վիճակի՛ մէջ: Այս իրողութիւնը մեզի կը յիշեցնէ որ հաւատացեալներ երբ բաժնուին այս կեանքէն ո՛չ միայն կը դիմաւորուին Աստուծոյ հրեշտակներուն եւ սուրբերուն կողմէ, այլեւ պատիւի ու փառքի կ'արժանանան:

գ.– Երրորդ, «Ղազարոսը՝ անոր բով» բառերուն փոխարէն, հին թարգմանութեան մէջ ունինք՝ «Ղազարոսը անոր գոգը հանգիստ նստած»: 22-րդ համարին մասին խօսած ատեն, բացատրեցինք թէ ի՛նչ կը նշանակէ Աբրահամին գոգը ըլլալ, ինչպէս նաեւ բացատրեցինք թէ ինչո՛ւ Ղազարոս Աբրահամի՛ն բով տարուեցաւ եւ ո՛չ թէ ուրիշի մը բով: Բայց հիմա անդրադառնանք ուրիշ կարեւոր հարցի մը, որ յանախ կը հարցուի: Հարցումը հետեւեալն է.– Արքայութեան մէջ պիտի քանչնա՞նք իրար թէ ոչ: Մեր ուսումնասիրած առակը ցոյց կու տայ որ այո՛, պիտի քանչնանք իրար: Մեծահարուստը քանչցաւ Աբրահամն ու աղքատ Ղազարոսը: Աբրահամը քանչցաւ հարուստն ու Ղազարոսը: Յիշենք այլակերպութեան դրուագը նաեւ: Պետրոս առաքեալ քանչցաւ Մովսէսն ու Եղիան որոնք երեւցան Յիսուսի երբ ան այլակերպուեցաւ (Մտ 17.3-4): Դժբախտութիւն պիտի ըլլար եթէ երբեք արքայութեան մէջ չքանչնայինք իրար: Դժբախտութիւն չէ՞ արդեօք չգիտնալ թէ այն անձերը որոնց համար երկա՛ր տարիներ աղօթած ենք՝ փրկուած են կամ ոչ: Ո՞վ կրնայ ըսել թէ արքայութեան մէջ սուրբերը իրար պիտի չքանչնան: Աբրահամ եւ Ղազարոս իրար չքանչցա՞ն: Սուրբերը ո՛չ միայն իրար պիտի քանչնան, այլեւ պիտի գիտնան թէ որո՞նք արքայութեան ժառանգորդ չդարձան: Ղազարոս չէ՞ր գիտեր որ հարուստը դրախտին մէջ չէ: Աբրահամ ինք եւս նոյն բանը չէ՞ր գիտեր:

«Մեծահարուստը աղաղակեց.– Հա՛յր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ որկէ՛ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթիտ եւ գովացնէ լեզուս,

որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ» (Ղկ 16.24): Քանի մը հաստատումներ.–

1.– «Մեծահարուստը աղաղակեց»: Մեծահարուստը չիօսեցաւ, այլ՝ աղաղակեց: Յունարէն բնագիրին մէջ «աղաղակեց» բառին համար գործածուած բառը $\phi\omega\nu\eta\sigma\alpha\zeta$ (ֆոնիսաս) բառն է, որ խորքին մէջ, ինչպէս սուրբգրային մասնագիտական բառարաններ կը հաստատեն, ցաւի ու տանջանքի իբրեւ արտայայտութիւն արձակուած աղաղակի մը կամ օգնութեան կանչի մը պատկերացումն է: Ասիկա գիտնալը կարեւոր է, որովհետեւ մեզի ցոյց կու տայ թէ ի՛նչ վիճակի մէջ էր մեծահարուստը, եւ կը յիշեցնէ մեզի թէ դժոխքին տանջանքը աղաղակեցնող տանջանք է:

2.– «Հա՛յր Աբրահամ»: Ինչո՞ւ հարուստը Աբրահամին կը դիմէ փոխանակ Ղազարոսին դիմելու: Հարցումը ունի երկու պատասխան.–

ա.– Հարուստ մարդն ու աղքատ Ղազարոսը իրարու հետ չէին կրնար հաղորդակցութեան կամ յարաբերութեան մէջ ըլլալ, որովհետեւ մին կորսուած էր, իսկ միւսը՝ փրկուած: Մեր եկեղեցւոյ տեսակէտը որ Աստուածաշունչով կը հիմնաւորուի, այն է՝ որ մահէն ետք իրարու վիճակակից եղողները միայն կրնան իրարու հետ հաղորդակցութեան կամ յարաբերութեան մէջ ըլլալ: Պարզ բացատրութեամբ մը, դատապարտուած մարդու մը հոգին չի կրնար յարաբերիլ եւ խնդակից ըլլալ փրկուած մարդու մը հոգիին հետ, եւ ոչ ալ հակառակը: Մէկը անմիջապէս կրնայ մտածել, որ եթէ իրարու վիճակակից ու «նակատագրակից» եղողները միայն կրնան իրարու հետ հաղորդակցութեան կամ յարաբերութեան մէջ ըլլալ, այդ պարագային, ի՞նչպէս հարուստը կրցաւ հաղորդակցութեան մէջ ըլլալ Աբրահամին հետ: Նախ ըսեմ որ անոնց միջեւ եղածը հաղորդակցութիւն մը չէր, այլ պարզապէս երկխօսութիւն մը:

բ.– Հարուստը Աբրահամին անունը կը կանչէ եւ զանիկա «հայր» կը կոչէ, ատով ցոյց տալու համար որ ինք հրեայ մըն է որ ինքզինք Աբրահամի որդի կը դաւանի, Աբրահամի սերունդ իբրեւ կը ցանչնայ, եւ ուստի՝ փրկութիւնը իր սեփականութիւնը կը նկատէ: Հարուստը մոռցած էր որ Աբրահամի իսկական որդիները Աբրահամին «նոյն հաւատքին հետքերով» ընթացողներն են (Հո 4.12): Հաւա՛տքն է որ մարդս Աբրահամի զաւակ կը դարձնէ եւ ո՛չ թէ Աբրահամի մարմնաւոր սերունդէն սեռիլը: «Աստուած... քարերէն ալ կրնայ Աբրահամի որդիներ հանել» (Մտ 3.9) վկայեց Յովհաննէս Մկրտիչ:

3.– Մեծահարուստը նախապէս չէ՛ր վերաբերեր Աբրահամին հետ ինչպէս պիտի վերաբերէր հօր մը հետ, չէ՛ր հետեւեր անոր հաւատքի փայլերուն, չէ՛ր պահեր Աստուծոյ պատուիրանները ինչպէս Աբրահամ

կը պահէր, բայց հիմա ան Աբրահամը «հայր» կը կոչէ եւ անոր ողորմութիւնն ու գթութիւնը կը հայցէ: Հոսկէ կը սորվինք, թէ բոլոր այն մարդիկը որոնք կ'ուրանան իրենց իսկական հայրերուն իսկական հաւատքը, ժամանակ պիտի գայ երբ պիտի անդրադառնան իրենց սխալին եւ իրենց հայրերուն անունները կանչելով՝ անոնց միջամտութիւնը պիտի խնդրեն, բայց անպատասխան պիտի մնան:

4.- Մեծահարուստին բերնին մէջ գտնուող «ողորմէ ինծի» բառերը, նախ կը պարզեն որ փրկուողները իրենք, Աստուծոյ ողորմութեամբ փրկուած են, իսկ երկրորդ, յստակ կը դարձնեն որ դժոխք նետուած մարդիկը Աստուծոյ ողորմութեան կարօտ պիտի ըլլան եւ անդադար պիտի թակեն Աստուծոյ ողորմութեան դուռը, սակայն այդ դուռը պիտի չբացուի իրենց դիմաց:

5.- «Եւ դրկէ Ղազարոսը»: Մեծահարուստին կողմէ Ղազարոսին անունին գործածութիւնը, ցոյց կու տայ որ ան երկրի վրայ կը ցանցնար Ղազարոսը բայց կամաւորապէս ուրացած էր զինք: Ինչո՞ւ մեծահարուստը Ղազարոսին դրկուիլը պահանջեց եւ ո՛չ թէ ուրիշ անձի մը: Ղազարոսին դրկուիլը պահանջեց, որովհետեւ ինք Ղազարոսի՛ն դէմ մեղանչած էր: Հիմնական ցշմարտութիւնը գոր հոսկէ կը սորվինք, այն է՝ որ ժամանակ պիտի գայ երբ անգիղջ եւ ամբարիշտ կեանք ապրող մարդիկը Աստուծոյ գաւակներուն գթութիւնը պիտի հայցեն, մանաւանդ գթութիւնը անոնց՝ որոնց հալածած, չարչարած եւ անիրաւած են:

6.- «Որ մատին ծայրը ջուրին թաթիւ եւ գովացնէ լեզուս»: Ղազարոսին ուզածը պատահ մը հաց էր եւ մեծահարուստը զլացաւ իրեն տալու, իսկ հիմա մեծահարուստին ուզածը կաթիլ մը ջուրն է, բայց Աբրահամ կը զլանայ գայն իրեն շնորհելու: «Մատին ծայրը» բառերը ցոյց կու տան, որ դժոխք նետուած մարդը նուազագոյն օգնութիւնն անգամ պիտի չգտնէ եւ չստանայ:

7.- Ինչո՞ւ մեծահարուստը ջուր կը խնդրէ եւ ո՛չ թէ ուրիշ բան: Քրիստոս յայտարարեց թէ իրեն հաւատացող մարդուն «սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին» (Յհ 7.38): Մեծահարուստ մարդուն սիրտէն կենսատու ջուրի գետեր չէին բղխած, ուստի անոր սիրտը կարօտ մնաց կենսատու այդ ջուրին: Խնդրեց այդ ջուրէն բայց չտրուեցաւ իրեն: Աստուած այդ ԶՈՒՐԸ կու տայ հիմա՝ մեր երկրաւոր կեանքի ընթացքին: Այս կեանքէն մեկնելէ ետք այդ ԶՈՒՐԸ չի՛ տրուիր եւ չի՛ կրնար տրուիլ ոեւէ մէկուն: Ինչպէս ջուրը մարդուն մարմինին ծարաւը կը յագեցնէ, այնպէս ալ Քրիստոսի ներկայութիւնը եւ Սուրբ Հոգիին օծութիւնը միայն կրնան յագեցնել մարդուն հոգեւոր ծարաւը:

8.- «Եւ գովացնէ լեզուս»: Ինչո՞ւ մեծահարուստը իր հոգիին ծարաւը յագեցնել մտածելու փոխարէն, իր լեզուին ծարաւը յագեցնելու մասին կը մտածէ: Կարծէ՛ք Յիսուս անուղղակիօրէն կը յիշեցնէ մեզի որ ոեւէ լեզու որ չէ դաւանած գԱստուած, ոեւէ լեզու որ չէ բացուած փառաբանութեամբ ու օրհներգութեամբ, այդ լեզուն յաւերժապէս ծարաւ պիտի մնայ, յաւերժապէս պիտի տանջուի: Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ ամէն ծունկ պիտի խոնարհի Քրիստոսի առջեւ եւ ամէն լեզու պիտի դաւանի անոր աստուածութիւնը (Հո 14.10-11): Քանի մը գլուխ առաջ առաքեալը ըսած էր. «Եթէ բերանովդ խոստովանիս թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց՝ կը փրկուիս: Այսինքն՝ ոեւէ մէկը որ իր սրտին մէջ կը հաւատայ՝ կ'արդարանայ, եւ երբ բերանով խոստովանի՝ կը փրկուի» (Հո 10.9): Մեծահարուստը ո՛չ սրտով հաւատացած էր եւ ո՛չ ալ բերանով խոստովանած:

9.- «Որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ»: Ընդհանրապէս երբ կը խօսինք դժոխքի (ուր կը տարուին անհաւատները իրենց մահէն ետք) կամ գեհեմի (ուր պիտի նետուին անհաւատները վերջին դատաստանէն ետք) մասին, առաջին բանը որ մեր մտքին առջեւ կու գայ կրակն է, եւ հարց կը ծագի մեր միտքերուն մէջ, որ արդեօք այդտեղի կրակը նիւթակա՞ն կրակ է:

Ոմանք կ'առարկեն ըսելով. «Կրակը նիւթական չի կրնար ըլլար, որովհետեւ եթէ նիւթական ըլլար, հոն նետուող մարդը բնականօրէն շուտով պիտի սպառէր եւ բնաջնջուէր, եւ հետեւաբար յաւիտենապէս պիտի չտանջուէր»: Նախ ըսեմ որ Աստուծոյ համար անկարելի բան չկայ: Եթէ Աստուած կամենայ որ կրակը նիւթական կրակ ըլլայ եւ հոն նետուող մարդը մնայուն կերպով այրի առանց սպառելու՝ այդ մէկը կրնայ ամենայն դիւրութեամբ կատարել: Ասոր մեծագոյն ապացոյցը նոյնինքն Աստուածաշունչը կու տայ: Մովսէս «տեսաւ որ ահա մորենին կրակով կը վառէր, բայց մորենին չէր սպառեր» (Ել 3.2): Ինչպէս Աստուած կարգադրեց որ մորենին վառի առանց սպառելու, կրնայ նաեւ կարգադրել որ մարդը դժոխքին մէջ վառի առանց սպառելու: Կամ ինչպէս Սեդրաքը, Միսաքն ու Աբեղնագովը կրակի հնոցին մէջ նետուեցան բայց ոչինչ պատահեցաւ իրենց (Դն 3.27), նոյնպէս ալ եթէ Աստուած ուզէ մեղաւորները գեհեմի կրակին մէջ նետել առանց զանոնք սպառելու՝ կրնայ, քանի ամենակարող Աստուած է:

Հաւանաբար արդէն իսկ այն տպաւորութիւնը ունեցա՛ք որ գեհեմին կրակը նիւթական կրակ իբրեւ կը փորձեմ ներկայացնել: Եւ սակայն, ես պարզապէս եղած առարկութեան էի որ կը փորձէի պատասխանել,

որովհետեւ առարկութիւնը, թէ՛ «կրակը չի կրնար նիւթական ըլլալ, այլապէս հոն նետուողը պիտի սպառի» Աստուծոյ ամենակարողութիւնն է որ կը սահմանափակէ:

Իրականութիւնը այն է, որ կրակը նիւթական չէ, ինչպէս կ'ըսէ Ս. Օգոստոս եւ շատ մը ուրիշներ, միշտ ինչպէս մեծահարուստին կողմէ պահանջուած ջուրը նիւթական չէ: Անգամ մը եւս եւ ուշադրութեամբ կարդանք թէ ինչ կ'ըսէ մեծահարուստը. «Որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ»: Ի՞նչն է որ կը տառապեցնէ զինք: Զինք տառապեցնողը կրակը չէ, այլ՝ կրակին պատճառած ծարաւը: Ի՞նչն է որ ընդհանրապէս ամառը «կը տառապեցնէ» մեզ: Արե՞ւը, թէ արեւին պատճառած ծարաւը: Յստակ է որ արեւը չէ, այլ արեւին պատճառած ծարաւը:

Հիմա հարց կու տանք թէ ի՞նչ կրակի մասին է խօսքը, այլ խօսքով՝ ի՞նչ է այն կրակը որ ծարաւ կը յառաջացնէ մարդուն մէջ: Այդ կրակը մեղքի կրակն է, խղճահարութեան կրակն է: Ինչպէս չհրապարակուած հիւանդութիւնը կը տանջէ մարդը, այնպէս ալ չխոստովանուած մեղքը կը տառապեցնէ մարդը: Մեղքը կրակ մըն է որ կրնայ շիջիլ երկու բանով միայն՝ Տէր Յիսուսի արիւնով եւ մեր արցունքով: Եթէ առանց Տիրոջ արիւնին եւ մեր արցունքին շիջեցնելու մեղքի կրակը մեկնինք՝ այս աշխարհէն, այդ կրակը յաւերժապէս վառ պիտի մնայ եւ վառէ մեր սիրտն ու հոգին:

10.- Ինչո՞ւ Յիսուս նիւթական տարրերու՝ «ջուրի» եւ «կրակի» մասին կը խօսի: Յիսուս գուր տեղ չէ որ նիւթական տարրեր կ'առնէ իբրեւ օրինակ: Ան կ'ուզէ սորվեցնել մեզի որ պատիժին մէջ որոշ նիւթականութիւն մը պիտի ըլլայ: Ո՛չ գեհեներն մէջ եւ ո՛չ ալ արքայութեան մէջ ամէն բան պէտք է հոգեւորացնել կամ աննիւթականացնել: Աստուած ի՛նք ստեղծած է նիւթը կամ մարմինը եւ ատոնք իրենց արժէքը ունին, եւ իրենց տեղը պիտի ունենան փրկութեան մէջ: Աստուածաշունչը կ'ուսուցանէ եւ մեր եկեղեցին ալ կը հաւատայ որ Տիրոջ գալստեան ժամանակ մեռելները մարմիններով յարութիւն պիտի առնեն (Ա.Կր 15.35-54): Ինչո՞ւ: Այս «ինչու»ին պատասխանը Պօղոս առաքեալ կու տայ ըսելով. «Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որպէսզի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն» (Բ.Կր 5.10): Առաքեալը մարմինով հատուցում ստանալու մասին է որ կը խօսի: Եւ Քրիստոս ալ Ղազարոսն ու մեծահարուստը մարմին ունեցող անձեր իբրեւ կը ներկայացնէ, ցոյց տալու համար, ինչպէս ըսի,

որ պատիժը իր մէջ որոշ նիւթականութիւն մը պիտի ունենայ, ինչպէս նաեւ վարձատրութիւնը:

11.- Ինչո՞ւ Յիսուս կ'առնէ կրակին եւ ջուրին օրինակները: Կրակն ու ջուրը իրար ներհակ տարրեր են: Ջուրը կը խորհրդանշէ փրկութիւնը, իսկ կրակը՝ մեղքը եւ մեղքին իբրեւ հետեւանք՝ պատիժը: Ըսել ուզուածը, հետեւաբար, այն է՝ որ անոնք որոնք կը մերժեն Քրիստոսի փրկութիւնը, պատիժի ենթակայ պիտի ըլլան:

Փրկութեան ջո՞ւր, թէ՛ դժոխքի կրակ: Պէտք է ճշդել թէ ո՞ր մէկը պէտք է ընտրել: Իր սիրտը փրկութեան ջուրին դիմաց փակողը, գայն բացած կ'ըլլայ դժոխքին կրակին դիմաց: Փրկութեան ջուրը՝ Քրիստոսի արիւնով գնուած բայց ճրի պարգեւուած փրկութիւնն է: Փրկութեան ջուրը՝ Սուրբ Հոգիին բերած զովութիւնն է մեղքով այրած սիրտերուն: Փրկութեան ջուրը՝ Սուրբ Հոգիին շնորհած խաղաղութիւնն է աշխարհայինէն խոռված հոգիներուն:

«Աբրահամ ըսաւ անոր.՝ Որդեա՛կ, յիշէ՛ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա անիկա հոս կը հանգստանայ, մինչ դուն հող կը տառապիս» (Ղկ 16.25): Քանի մը հաստատումներ.՝

1.- Ուշագրաւ է որ յաւիտենական կեանքին պատկերը ներկայ կեանքին գիշդ հակառակն է: Օրինակ, յաւիտենական կեանքին մէջ հեզ ու խոնարհ մարդիկն են որ պիտի յիշատակուին, իսկ մեր ներկայ երկրաւոր կեանքին մէջ հեզ ու խոնարհ մարդոց անունները չէ որ կ'արձանագրուին այս ու այդ պատին վրայ, այս ու այդ թերթին մէջ, այլ՝ հարուստ մարդոց անունները, բարերար մարդոց անունները, մեծապաշտօն մարդոց անունները:

Բարերարը դրամ տուողը չէ անպայման: Ղազարոս դրամ չբաժնեց: Յիսուս եւս դրամ չբաժնեց, այլ՝ բժշկութիւն եւ օրհնութիւն: Իսկական բարերարը կոտրած սիրտեր ուրախացնողն է, ուրիշին համար բարին կամեցողն է, ուրիշին փրկութեան համար աղօթողն ու աշխատողն է:

Մեծապաշտօն մարդիկը միշտ ալ բարի կամ մեծ մարդիկ չեն ըլլար: Կրնայ մէկը մեծ պաշտօն ունենալ բայց շատ պզտիկ սիրտ ու հոգի: Մեծ մարդիկը մեծ աստիճաններ եւ հանգամանքներ ունեցողները չեն, այլ՝ մեծ սիրտ ու մեծ սէր ունեցողներն են, մեծ հոգի եւ մեծ հաւատք ունեցողներն են:

2.- «Որդեա՛կ յիշէ՛»: Աբրահամ մեծահարուստին կը պատուիրէ յիշել իր անցեալի կեանքն ու կենցաղակերպը, կարծէք անուղղակիօրէն իրեն հասկցնելու համար, որ ներկայ տանջանքը որուն մէջն է ինք, արդիւնքն է երկրի վրայ իր ապրած մեղսալից կեանքին:

3.- «Յիշէ՛»: Մեղաւոր մարդիկ երբ անապաշխար կերպով կը բաժնուին այս աշխարհէն՝ դժոխքին մէջ, ամենա՛յն յստակութեամբ, ամենա՛յն պարզութեամբ եւ ամենա՛յն մանրամասնութեամբ կը յիշեն իրենց գործած մեղքերը, իրենց կատարած անօրէնութիւնները, ուրիշին պատճառած խոցոտումները: Եւ այդ յիշողութիւնն է որ զիրենք պիտի տանջէ ու այրէ: Մեղքը մահուան կ'առաջնորդէ բայց ինք անմահ կը մնայ: Անմահ կը մնայ՝ յաւերժօրէն տանջելու համար իր ստրուկները:

4.- «Յիշէ՛»: Մահէն յետոյ դժոխք նետուած կամ Գալուստէն յետոյ Գեհեն նետուած մարդոց ուղղուած հրաւեր մը պիտի ըլլայ՝ «Յիշէ՛»: Յիշէ՛ գործած մեղքերդ: Յիշէ՛ քեզի ուղղուած ապաշխարութեան կոչերը եւ քու մերժումներդ: Յիշէ՛ աղօթելու պատուէրները եւ քու անհնազանդութիւնդ: Յիշէ՛ Յիսուսի մահը քեզի համար եւ քու անտարբերութիւնդ: Յիշէ՛ Աստուծոյ հոգատարութիւնը եւ քու անհոգութիւնդ: Յիշէ՛ Աստուծոյ համբերութիւնը եւ քու ցուցաբերած յամառութիւնդ: Դատապարտուածին դժոխքը իր յիշողութիւնը պիտի ըլլայ:

5.- «Քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր»: Կեանքի վայելքն ու երջանկութիւնը չեն կայանար համադամ կերակուրներ ուտելուն մէջ, ո՛չ ալ փառաւոր ու շողո՞ղուն զգեստներ հագուելուն մէջ: «Ամէն բարիք վայելեցիր» բառերը ցոյց կու տան, որ մեծահարուստը իր կեանքին վայելքը փառաւոր խննդակներուն եւ շքեղ հագուածքներուն մէջ կը տեսնէր: Այսպիսի մարդոց համար է որ Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Զեր հարստութիւնը փտութիւն է, եւ ձեր հագուստները ցեցերու կեր են: Զեր արծաթն ու ոսկին ժանգոտ են, եւ անոնց ժանգը ձեզի դէմ վկայութիւն պիտի ըլլայ եւ կրակի պէս լափէ ձեր մարմինները (ինչպէս հիմա կը լափէ մեծահարուստին մարմինը), քանի շուտով իր վախճանին մօտեցող այս աշխարհին մէջ դուք միայն ա՛յս գանձերը դիզեցիք» (Յկ 5.2-3):

6.- «Մինչ Ղազարոս չարչարուեցաւ»: Աբրահամ տեղեակ էր երկրի վրայ Ղազարոսին կրած տառապանքէն ու չարչարանքներէն: Այս բառերը կը պարզեն որ Աստուած ամէն բանէ տեղեակ է, ոչինչ կը վրիպի իր ուշադրութենէն, կը տեսնէ նեղութեան մէջ եղողները եւ գիտէ ու կը մանչնայ թէ՛ իրաւագրկողները եւ թէ՛ իրաւագրկուածները, թէ՛ տառապողները եւ թէ՛ տառապեցնողները:

7.- «Հիմա անիկա հոս կը հանգստանայ»: Ղազարոս նախապէս կը տառապէր, իսկ հիմա «կը հանգստանայ»: Հոս գործածուած «հանգստանայ» բառը կը յիշեցնէ մեզի որ Քրիստոս իսկական եւ յաւիտենական հանգիստ մը վերապահած է իր սիրելիներուն համար, յատկապէս իր սիրոյն տառապողներուն ու չարչարողներուն համար:

8.- «Մինչ դուն հող կը տառապիս»: Ուր որ տարուեցաւ մեծահարուստը՝ տանջանքի վայր էր հոն, նեղութեան վայր էր: Կարելոր մշմարտութիւն մը կայ հոս որուն պէտք է անդրադառնալ: Ղազարոսի համար կ'ըսուի թէ Աբրահամի ճովն էր, իսկ մեծահարուստը առանձին էր, ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «դուն» անձնական դերանունը: Ի՞նչն է այն մշմարտութիւնը զոր կը պարզուի մեր դիմաց այստեղ: Մահէն յետոյ դրախտ գացող կամ Քրիստոսի գալուստէն յետոյ արքայութիւն մտնող հաւատացեալները իրարու հետ պիտի ըլլան, իրարու հետ հաղորդակցութեան եւ անոյշ յարաբերութեան մէջ պիտի ըլլան, նոյնը չէ պարագան դժոխք կամ գեհե՛ն նետուած մարդոց: Անոնք թէպէտ իրարու հետ պիտի ըլլան, բայց իւրաքանչիւրին տանջանքը ա՛յնքան սաստիկ պիտի ըլլայ, որ ինքզինք առանձին պիտի կարծէ այդ տառապանքին մէջ, եւ պիտի չկրնայ ու պիտի չուզէ հաղորդակցիլ կամ յարաբերիլ իրեն վիճակակից եղող այլ մարդոց հետ:

«Գիտցի՛ր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ» (Ղկ 16.26): Երկու նշումներ. --

1.- Կարելոր մշմարտութիւնը զոր այս համարը կը բացայայտէ, այն է՝ որ գեհե՛նէն արքայութիւն, կամ արքայութե՛նէն գեհե՛ն անցնիլ չկայ եւ պիտի չըլլայ: Այս իրողութիւնը շեշտելը կարելոր է, որովհետեւ, երբեմն մարդիկ զգացականութե՛նէ տարուելով՝ կ'ըսեն. «Ժամանակ պիտի գայ երբ Աստուած պիտի խղնայ գեհե՛ն նետուածներուն վրայ եւ զիրենք գեհե՛նէն դուրս բերելով՝ արքայութիւն պիտի մտցնէ»: Աբրահամին խօսքը սակայն ուղղուած մեծահարուստին՝ «ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ», ամենայն յստակութեամբ ցոյց կու տայ որ գեհե՛ն նետուած մարդը՝ գեհե՛ն պիտի մնայ յաւերժապէս, եւ մեծահարուստը մնաց:

Դատաստանէն ետք թէ՛ յաւիտենական կեանքը եւ թէ՛ յաւիտենական պատիժը անփոփոխական եւ յաւիտենական պիտի ըլլան: Քրիստոս խօսելէ ետք վերջին դատաստանին մասին, խօսքը կ'եզրակացնէ ըսելով. «Անոնք (անարդարները) պիտի երթան յաւիտենական պատիժի, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքի» (Մտ 25.46): Հոս թէ՛ պատիժը կոչուած է յաւիտենական եւ թէ՛ կեանքը: Եթէ մերժենք անոնցմէ մէկուն յաւիտենական ըլլալը, պէտք է նաեւ մերժենք միւսին յաւիտենական ըլլալը: Եթէ դժոխքը կամ գեհե՛նը յաւիտենական չէ, արքայութիւնն ալ ուրեմն յաւիտենական չէ: Արքայութիւնը սակայն յաւիտենական է, որովհետեւ հոն մտնող հաւատացեալին մեղքերը յաւիտենապէս ջնջուած

են, եւ դժոխքը յաւիտենական է, որովհետեւ հոն նետուողներուն մեղքերը յաւիտենականօրէն պիտի մնան:

Ս. Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Երբ ժամանակաւորէն յաւիտենականին անցնինք՝ ապաշխարութեան առիթ պիտի չըլլայ: Մեծահարուստը շատ բաներու համար տրտմեցաւ բայց իր տրտմութիւնը ոչինչով օգտեց իրեն»:

Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. «Մեծ անդունդ մը կայ Ղազարոսին եւ մեծահարուստին միջեւ, ուստի կարելի չէ անոնց վարձատրութիւնները փոփոխութեան ենթարկել»:

Ս. Օգոստինոս կ'ըսէ. «Աստուածային դատավիճակը պիտի չփոխուի, եւ արդարները նոյնիսկ եթէ ուզեն կարեկցիլ դատապարտուածներուն՝ պիտի չկրնան»:

2.- «Մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ»: Ի՞նչ անդունդի մասին է խօսքը եւ ինչո՞ւ ասիկա կը կոչուի՝ մեծ: Երեք նշումներ.-

ա.- Կարելի է ըսել որ յիշեալ անդունդը նոյնինքն Աստուծոյ ԿԱՄՔՆ է: Աստուծոյ ԿԱՄՔԸ իբրեւ «մեծ անդունդ մը», իբրեւ մեծ պատնէշ մը, իբրեւ մեծ պատուար մը, կը կանգնի արքայութեան եւ դժոխքին միջեւ: Ըսել կ'ուզեմ այն՝ որ Աստուած չի կամենար որ կորուստի արժանի մարդը փրկուի կամ փրկութեան արժանի մարդը կորսուի: Ասիկա Աստուծոյ ԿԱՄՔԻՆ հակառակ է:

բ.- Կարելի է նաեւ ըսել որ այդ «մեծ անդունդը» Աստուծոյ ԽՕՍՔՆ է: Եթէ Քրիստոս իր գալստեան ժամանակ պիտի փրկէ բոլոր մարդիկը, կամ եթէ դժոխք նետուածներուն պիտի խղճայ եւ զանոնք՝ քովը՝ արքայութիւն առնէ, ինքնիր Սուրբ Խօսքին՝ Աստուածաշունչին հակասած պիտի ըլլայ: Մենք Աստուածաշունչը կը դաւանինք իբրեւ անսխալական գիրք, ո՛չ միայն որովհետեւ ատոր մէջ սխալներ չկան, այլեւ որովհետեւ ասիկա Աստուծոյ Գիրքն է: Աստուծոյ այդ Գիրքն է, Աստուծոյ այդ Խօսքն է, որ «մեծ անդունդ» իբրեւ, այլ խօսքով՝ մեծ արգելք եւ մեծ անցարգել իբրեւ պիտի կանգնի արքայութեան եւ դժոխքին եւ անոնց զաւակներուն միջեւ: Քանի Աստուած իր ԽՕՍՔԻՆ մէջ թէ՛ դժոխքը եւ թէ՛ արքայութիւնը յաւիտենական կոչած է, մենք առանց առարկութիւն ընելու պէտք է ընդունինք զանոնք:

գ.- Կարելի է ըսել նաեւ որ այդ «մեծ անդունդը» Աստուծոյ դատաստանական վիճակն է որ անփոփոխ ու անդադնալի է, ճիշդ անոր համար է որ կ'ըսուի. «Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ»: Աստուած անգամ մը որ դատաստանով վնոէ ով արքայութիւն պիտի առնուի եւ ով գեհե՞ն պիտի նետուի, ա՛լ այդ վիճակը չի փոխուիր. այդ վիճակը կը վերածուի

«մեծ անդունդի» մը որ ո՛չ ոք կրնայ լեցնել, ո՛չ ոք կրնայ կամրջել, ո՛չ ոք կրնայ փակել:

«Մեծահարուստը ըսաւ.– Կ'աղաչեմ հա՛յր, Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախագգուշացնէ՝ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան: Աբրահամ ըսաւ անոր.– Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն» (Ղկ 16.27-29): Քանի մը հաստատումներ.–

1.– Տուեալ համարներէն կարելի է փառել պատասխան մը այն հոսանքին կամ այն մտածողութեան, ըստ որուն, այս կեանքէն բաժնուողները՝ անոնք ըլլան փրկուած թէ կորսուած, չեն եւ չեն կրնար տեղեակ ըլլալ երկրի վրայ պատահածներէն: Այլ խօսքով, աշխարհէն մեկնողը ալ չի տեսներ թէ ինչ տեղի կ'ունենայ այս աշխարհին մէջ:

Աստուածաշունչը կը հերքէ նման մտածողութիւն: Կը տեսնենք որ մեծահարուստը տեղեակ էր իր հինգ եղբայրներուն երկրի վրայ ապրած ամբարիշտ կեանքէն, այլապէս ան Աբրահամին պիտի չըսէր. «Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը, ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախագգուշացնէ՝ որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան»: Կը տեսնենք նաեւ որ Աբրահամը իբրեւ արդար մարդ, իրագեկ էր եւ լաւապէս գիտէր թէ մեծահարուստը երկրի վրայ եղած ատեն հանգիստ կեանք մը վարած էր, իսկ Ղազարոսը՝ տառապած ու չարչարուած էր:

Աբրահամին եւ մեծահարուստին երկրի վրայ պատահածներէն տեղեակ ըլլալը, ինքնին ապացոյց մը չէ՞ որ արդարներն ու անարդարները իրագեկ են երկրային իրականութեանց: Թէպէտ անմիջապէս պէտք է ըսել, թէ՛ ո՛չ արդարները եւ ո՛չ ալ անարդարները ամէն բանէ տեղեակ կ'ըլլան, կամ ամէն բան կը տեսնեն, կամ ամէն բան գիտեն: Ամէն բան տեսնելն ու գիտնալը՝ յատուկ է Աստուծոյ:

Նոյն ձեւով կարելի է բացատրել կամ դիտել Աբրահամին պատասխանը մեծահարուստին ուղղուած. «Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Աբրահամ ի՞նչպէս գիտէր որ մեծահարուստին եղբայրները իրենց տրամադրութեան ներքեւ ունէին «Մովսէսի Օրէնքն ու մարգարէները», մանաւանդ երբ Աբրահամ Մովսէսէն շուրջ 600 տարի առաջ ապրած էր:

Քրիստոս տարբեր առիթով մը եւս անուղղակիօրէն ցոյց տուաւ որ մահուամբ այս աշխարհէն բաժնուող արդար մարդիկը կը տեսնեն երկրի վրայ պատահածը: Յիշեցէք հրեաներուն ուղղուած իր հետեւեալ խօսքը.

«Աբրահամ» ձեր հայրը, ցանկաց աշխարհ գալստեսնելու տեսաւ եւ ուրախացաւ» (Յե 8.56): Եթէ աշխարհէն բաժնուող արդար մարդիկը չեն տեսներ աշխարհին մէջ պատահածը, այդ պարագային, Աբրահամ ի՞նչպէս տեսաւ Քրիստոսի ծնունդը, երբ ինք Քրիստոսէ շուրջ 2100 տարի առաջ ապրած է:

Պէտք է ըսել նաեւ որ այն հոսանքները որոնք կ'ըսեն թէ մահուամբ այս աշխարհէն հեռացող փրկուած ու կորսուած հոգիները տեղեակ չեն երկրի վրայ պատահածներէն, նոյն այս հոսանքները, միաժամանակ, կ'ըսեն թէ հրեշտակները իրե՛նք եւս տեղեակ չեն եւ չեն կրնար ըլլալ, եւ իբր այդպիսին, անոնք բնականօրէն չեն կրնար բարեխօսել մեզի համար կամ ոեւէ հարցի գծով օգնել մեզի:

Բարեխօսութեան մասին պիտի չխօսիմ, քանի որ տարբեր-տարբեր առիթներով ընդարձակ կերպով անդրադարձած եմ ատոր: Բայց այս մասին միայն մէկ բան կ'ուզեմ ուշադրութեան յանձնել: Այն հոսանքները որոնք կը մերժեն սուրբերու կամ հրեշտակներու բարեխօսութիւնը, կը հիմնուին նոյն այս աղփատ Ղազարոսի առակին վրայ՝ եւ կ'ըսեն. «Մեծահարուստը խնդրեց Աբրահամին բարեխօսութիւնը եւ Աբրահամ չպատասխանեց. ասիկա ինքնին ապացոյց մըն է որ անդեմական կեանքին պատկանողները չեն բարեխօսեր կամ անընդունելի է անոնց բարեխօսութիւնը»: Նման տրամաբանութիւն կամ բացատրութիւն հարիւր տոկոսով սխալ է, որովհետեւ մենք կը խօսինք դժոխք նետուած մէկու մը մասին: Դժոխք նետուած ու դատապարտուած մէկը չի կրնար սուրբի մը բարեխօսութիւնը խնդրել: Նոյնիսկ եթէ խնդրէ՝ իր խնդրանքը բնական է որ անպատասխան պիտի մնայ:

Հիմա փորձենք Աստուածաշունչէն նաեւ ցոյց տալ որ հրեշտակները իրե՛նք եւս կը տեսնեն երկրի վրայ պատահածները: Մտ 4.11-ին մէջ կը կարդանք. «Այն ատեն Սատանան ձգեց զինք ու հեռացաւ, եւ ահա հրեշտակները մօտեցան եւ կը ծառայէին Յիսուսի»: Այս հաստատումէն յստակ կ'երեւի որ հրեշտակները կը տեսնէին Սատանային կողմէ Յիսուսի առաջարկուած փորձութիւնները եւ Յիսուսի յաղթանակը: Երբ Յիսուս յաղթեց Չարին՝ հրեշտակները եկան եւ սկսան ծառայել իրեն: Հոսկէ կը սորվինք որ մենք եւս երբ կը պայքարինք մեղքին դէմ եւ կը յաղթենք անոր՝ կը վայելենք հրեշտակներուն ընկերակցութիւնն ու ծառայութիւնը:

Մեր ուսումնասիրած առակը ինքնին կը փաստէ որ հրեշտակները կը տեսնեն մեր քաջած նեղութիւնները եւ կը փանչնան մեզ: Ասկէ առաջ տեսանք որ «աղփատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամի մօտ» (Ղկ 16.22): Այս հաստատումը ցոյց չի՞ տար որ հրեշտակները

գիտէին Ղազարոսը եւ անոր քաջած նեղութիւններն ու տառապանքը: Ի՞նչպէս կրնան Աքրահամի գիրկը տանիլ մէկը որուն չեն ցանչնար:

Ուրեմն, հրեշտակները լաւապէս կը ցանչնան մեզ եւ գիտեն թէ որո՞նք Աստուծոյ զաւակներն են եւ որո՞նք ոչ: Այլապէս, Քրիստոս անոնց պիտի չվատահէր աշխարհի աւարտին մարդոց ընտրութիւնը: Քրիստոս ըսաւ թէ աշխարհի կատարածին «իր հրեշտակները պիտի դրկէ, որոնք իր արքայութենէն պիտի հաւաքեն բոլոր անոնք որ գայթակորութեան պատճառ կ'ըլլան եւ չարիք կը գործեն, ու զանոնք պիտի նետեն բոցավառ հնոցին մէջ, ուր պիտի լան եւ կրնտեն իրենց ատամները» (Մտ 13.41-42): Եթէ հրեշտակները լաւապէս չցանչնան մեզ՝ անոնք ի՞նչպէս կրնան բարի մարդը գտել չար մարդէն: Անոնց վատահուած գտելու գործողութիւնը, ինչպէս նաեւ մահուան ժամանակ անոնց գալը եւ հաւատացեալներուն հոգիները դիմաւորելը կենդանի ապացոյց են որ անոնք մեզ շատ լաւ կը ցանչնան:

Ղկ 15.10-ին մէջ կը կարդանք. «Աստուծոյ հրեշտակները պիտի ուրախանան մեղաւորի մը համար որ կ'ապաշխարէ»: Հրեշտակներուն ուրախանալը դարձի եկող մեղաւորներուն համար, ցոյց չի՞ տար որ անոնք կը տեսնեն մեղքին դէմ մղած մեր պայքարը, Աստուծոյ հաւատարիմ մնալու մեր ջանքը, եւ փրկութեան մեր փափաքը: Բայց անոնք ո՛չ միայն փրկութեան մեր փափաքին ակնատեսներն են, այլեւ՝ մեր փրկութեան համար աշխատանք տանողներն են: Ասոր փաստը կը գտնենք Եբրայեցիներուն նամակին մէջ, ուր Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14): Կարելի՞ քան է որ անոնք օգնեն մեզի առանց ցանչնալու մեզ: Յստակ է որ կը ցանչնան մեզ, որովհետեւ անոնք բոլորին չէ որ կ'օգնեն, այլ միայն «անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն»: Տակաւին շատ համարներ կարելի է մէջբերել եւ անոնց մասին խօսիլ. համարներ՝ որոնք ցոյց կու տան թէ հրեշտակներ տեղեակ են երկրաւոր իրադարձութեանց, (տե՛ս օրինակ՝ Ղկ 2.11-12: Յյտ 8.3-4: Ղկ 22.43: Յհ 5.4):

2.- Որո՞նք են հոս յիշուած հինգ եղբայրները որոնք կարիքը ունին Մովսէսի եւ մարգարէներուն: Ս. Գրիգոր Նարեկացի կը հաստատէ թէ այս հինգ եղբայրները կը ներկայացնեն մարդ արարածին հինգ զգայարանքները: Նոյն կարծիքին է Ս. Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետ. ան կ'ըսէ. «Հինգ եղբայրները կը խորհրդանշեն հինգ զգայարանքները որոնք տակաւին չեն սրբացած քանի որ այս աշխարհին մէջ կ'ապրին հաճոյքներով լի կեանք մը: Եթէ այդ հինգ զգայարանքները

մեռնին Քրիստոսի հետ՝ Քրիստոսով կը սրբանան: Հինգ զգայարանքները մարդուն հինգ եղբայրներն են: Ան որ աշխարհային ցանկութիւններու եւ հաճոյքներու մէջ կ'ապրի, կը կորսնցնէ իրեն ամենէն մօտիկ հինգ եղբայրները, այլ խօսքով՝ իր հինգ զգայարանքները»:

Ս. Օգոստինոս եւս հետաքրքրական բացատրութիւն մը կու տայ «հինգ եղբայրներ» բառերուն վերաբերեալ: Ան կ'ըսէ. «Հինգ եղբայրները կը ներկայացնեն հրեաները, որովհետեւ ապրեցան Մովսէսի հինգ գիրքերուն օրէնքներուն տակ. անոնք չեն կրնար ընդունիլ մեռելներէն յարութիւն առած Յիսուսը, այնքան ատեն երբ չեն ընդունիր Մովսէսի Օրէնքն ու մարգարէութիւնները հոգեւոր իմաստով մը»:

3.- Մեծահարուստը Աբրահամէն կը խնդրէ որ Ղազարոսը դրկէ իր հօրը տունը նախագգուշացնելու համար իր հինգ եղբայրները, որպէսզի անոնք ալ տանջանքի նոյն վայրը չգան: Հետաքրքրական է իր ունեցած գութը իր եղբայրներուն նկատմամբ, թէպէտ անգութիւն մէկն էր Ղազարոսի նման աղատ ու թշուառ մարդոց հանդէպ: Ս. Ամբրոսիոս կ'ըսէ. «Մեծահարուստը անգութ եւ ժլատ մէկն էր, որովհետեւ ան իր հարստութենէն բաժին չհանեց աղատներուն, հակառակ ասոր, սակայն, ան որոշ գորով մը ունէր իր հինգ եղբայրներուն հանդէպ, եւ այս գորովը մնաց նոյնիսկ իր մահէն ետք, բայց անկարողութեամբ յատկանշուած գորով մըն էր, գործնական գետնի վրայ ոչինչ կրնար ընել, որովհետեւ գործի ժամանակը այլեւս խլուած էր իր ձեռքէն: Ան կ'ուզէր իր եղբայրներուն փրկութիւնը, բայց անգամ մը որ իր փրկութիւնը կորսնցուց, ալ չէր կրնար Աստուծոյ ներկայութեան կանգնելով աղօթել: Այլ խօսքով, մէկը որ իր փրկութիւնը կորսնցուցած է, ի՞նչպէս կրնայ փրկութիւն խնդրել ուրիշներուն համար»:

4.- Մեծահարուստին դժոխք նետուելէ ետք յանկարծ եղբայրներուն մասին մտածելը եւ անոնց հանդէպ գութ ու գորով ցուցաբերելը կարեւոր բան մը կը սորվեցնէ մեզի: Մեծահարուստը հիմա կը պատժուէր բայց չէր ուզեր հետագային իր եղբայրները նոյն այս պատիժին ենթակայ ըլլան: Եթէ առիթը ընծայուէր իրեն՝ վստահաբար շատ բան պիտի պատմէր իր եղբայրներուն, պիտի խրատէր անոնց, եւ պիտի յորդորէր փոխել իրենց կեանքի ընթացքը: Որքան յաճախ փորձութիւններու մէջ ինկած ու դժուարութիւններէ անցած մարդիկ, հիմնուելով իրենց փորձառութեան վրայ, կը խրատեն, կը յորդորեն ու կը զգուշացնեն իրենց նմանները, բայց քիչեր միայն ուշադրութիւն կը դարձնեն անոնց ըսածին: Խոհեմութիւն եւ իմաստութիւն է ուրիշներու փորձառութենէն օգտուիլը:

5.- Հիմա որ մեծահարուստը պատիժի ենթակայ է՝ կ'անդրադառնայ իր սխալին, բայց ի գուր, ոչինչ կրնայ ընել, ոչինչ կրնայ կացութենէն փոխել: Ժողովուրդը կ'ըսէ. «Բանը բանէն անցաւ»: Երբ «բանը բանէն» անցնի՝ ողբալը օգուտ մը չ'ընէր: Զսպասեմք տապալիլ եւ յետոյ գիտակցութեան գալ: Մեծն Գրիգորիոս կ'ըսէ. «Երբեմն չար մարդիկ երբ պատիժի ենթակայ ըլլան՝ իրենց սրտին մէջ որոշ սէր մը յառաջ կու գայ, բայց գուր սէր մը կ'ըլլայ ատիկա..., քանի որ կապուած են իրենց մեղքերուն եւ չեն սիրեր իրենք զիրենք»: Յաւիտենական պատիժի ենթարկուելէ ետք՝ զոչումի, սիրոյ եւ գթութեան զգացումով լեցուիլը մեզ չեն կրնար փրկել:

6.- «Ղազարոսը դրկէ իմ հօրս տունը»: Ինչո՞ւ մեծահարուստը Աբրահամէն խնդրեց որ Ղազարոսը դրկէ իր եղբայրներուն մօտ որպէսզի վկայութիւն տար անոնց, փոխանակ խնդրելու որ զինք դրկէ: Այս հարցումին կը պատասխանէ Ս. Օգոստինոս եւ կ'ըսէ. «Մեծահարուստը չխնդրեց Աբրահամէն զինք դրկել իր եղբայրներուն մօտ, որովհետեւ զգաց եւ անդրադարձաւ որ ինք արժանի չէր նշմարտութեան վկան ըլլալու: Մէկը որ իր խնդրած կաթիլ մը ջուրը չկրցաւ ձեռք ձգել, բնականօրէն պիտի չակնկալէր որ իրեն արտօնուէր դուրս գալու դժոխքի խորխորատէն՝ նշմարտութիւնը քարոզելու համար ուրիշներուն»:

7.- «Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Մեծահարուստը կը խնդրէ Աբրահամէն Ղազարոսը դրկել իր եղբայրներուն մօտ, իսկ Աբրահամ շեշտը կը դնէ Աստուծոյ խօսքին վրայ ըսելով. «Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին»: Ի՞նչ ցոյց կու տայ կամ ի՞նչ կը պարզէ Աբրահամին այս խօսքը: Քանի մը նշմարտութիւններ. .-

ա.- Առաջին հերթին ցոյց կու տայ որ Աստուծոյ մարդուն համար Աստուծոյ խօսքը՝ Աստուածաշունչը, առաջնահերթ պէտք է ըլլայ: Պէտք չէ խնդրել Աստուծմէ կամ պէտք չէ սպասել որ Աստուած մեռելներու աշխարհէն մէկը դրկէ՝ վկայութիւն տալու համար մեզի՝ որպէսզի հաւատանք: Որքան յաճախ լսած ենք մարդոցմէ հետեւեալ արտայայտութիւնը. - «Ո՞վ դժոխքէն կամ դրախտէն եկած ու պատմած է, որպէսզի հաւատանք»: Հաւատացեալ մարդը այսպիսի բան չի կրնար ըսել կամ հարցնել: Հաւատացեալ մարդը պէտք է կուրօրէն հաւատայ Աստուածաշունչին մէջ գրուածին եւ չսպասէ կամ չպահանջէ որ Աստուած դրախտէն կամ դժոխքէն մէկը դրկէ իրեն՝ վկայութիւն տալու: Վկայութիւն տուողը Աստուածաշունչը ի՞նք պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մեռելներու աշխարհէն եկող մէկը: Յիսուսի խօսքին չհաւատացողը՝ ի՞նչպէս պիտի

հաւատայ դրախտէն կամ դժոխքէն դարձող մէկու մը խօսքին: Ինչ որ Աստուածաշունչը ըսած է դրախտին կամ արքայութեան, դժոխքին կամ գեհեմնին մասին, պէտք է ընդունիլ առանց առարկութիւններ ընելու: Աստուածաշունչը չէ գրուած որպէսզի սրբագրուի մեր կողմէ, այլ որպէսզի ի՛նք մեզ սրբագրէ:

բ.– Ի՞նչ ըսել ուզեց Աբրահամ երբ ըսաւ. «Թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն»: Ան ըսել ուզեց, որ Աստուածաշունչին պատուիրանները գործադրող մարդը, այդ պատուիրաններուն մասին խոկացող ու մտածող մարդը, պէտք չունի տեսնելու մեռելներէն յարութիւն առնող մէկը որպէսզի հաւատքի գայ: Աստուածաշունչը ինք կրնայ հաւատք արթնցնել մեր ներսիդին եթէ մենք փնտոտողն ենք այդ հաւատքին: Նոյն վկայութիւնը կու տայ հաւատքի առաքեալը՝ Պօղոս. «Հաւատքը ծնունդ կ'առնէ փարոգութիւնը լսելէն. իսկ փարոգութիւնը հաւատք կ'արթնցնէ՝ երբ Քրիստոսի խօսքերն են որ կը փարոգուին» (Հո 10.17): Հետեւաբար, մեր ներսիդին հաւատք արթնցնողը, մեզ դարձի բերողը, մեր ֆայլերը ուղղողը՝ Աստուծոյ ԽՕՄՔՆ է եւ ո՛չ թէ անդենական կեանքէն եկող մը:

գ.– Մեծահարուստին խնդրանքը՝ Ղազարոսը իր եղբայրներուն մօտ դրկելու որպէսզի «զանոնք նախագգուշացնէ», եւ Աբրահամին յորդորը՝ թող Աստուածաշունչին պատուիրանները գործադրեն, ամենայն յստակութեամբ կը ցուցնեն թէ Աստուածաշունչը մեզ նախագգուշացնող Գիրք մըն է, արթնցնող Գիրք մըն է, գգաստացնող Գիրք մըն է:

Ո՛չ մէկ անհաւատ կրնայ արդարանալ Աստուծոյ առջեւ այնքան ատեն երբ Աստուածաշունչը գոյութիւն ունի: Ո՛չ ոք ո՛չ մէկ հարցի գծով պիտի կարենայ առարկութիւն ընել երբ Աստուծոյ ներկայութեան կանգնի, քանի որ Աստուածաշունչը ամէն տեսակ հարցի գծով ըսելիք ունի ուղղակի թէ անուղղակի կերպով, կը բաւէ որ կամեցողութիւնը ունենանք գայն բանալու, կարդալու, սերտելու, եւ մանաւանդ, ապրելու: Անոնք որոնք կը ջանան ապրիլ Աստուածաշունչը, անոնք որոնք կը սիրեն զԱստուած եւ Աստուածաշունչը, անոնք որոնք կը փնտոտեն Տէրը եւ Տիրոջ նշմարտութիւնը՝ անոնք վերահասու կ'ըլլան նշմարտութեան եւ «ամէն բան կը հասկնան» (Առ 28.5) եւ կարիքը չեն գգար հանդիպելու եւ լսելու անդենական կեանքէն անձի մը՝ որպէսզի գօտեպնդուին իրենց հաւատքին մէջ:

«Մեծահարուստը ըսաւ.– Ատիկա քաւական չէ, հա՛յր Աբրահամ, բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց՝ պիտի ապաշխարեն»: Աբրահամ պատասխանեց. «Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ

պիտի չկարենայ համոզել գիրենք» (Ղկ 16.30-31): Քանի մը մատնանշումներ.–

1.– Մեծահարուստը կը շարունակէ պնդել որ «եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց՝ պիտի ապաշխարեն»: Աբրահամ իր նոյն կարծիքին վրայ կը մնայ՝ ընդգծելով «Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն» մտիկ ընելու անհրաժեշտութիւնը, եւ կը հաստատէ որ եթէ մէկը «Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ» չ'ըներ, «մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել» գայն: Աբրահամին ըսել ուզածը այն է՝ որ մարդուն կեանքը փոխողը հրաշքը չէ անպայման, այլ՝ Աստուծոյ Խօսքը, Աստուծոյ սէրը:

Մէկը որ չի հաւատար «Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն» մէջ Յիսուսի մասին գրուածին, չի կրնար հաւատքի գալ երբ մեռելներէն յարութիւն առնող անձի մը հանդիպի: Ասոր փաստը կը գտնենք Յովհաննէսի Աւետարանին մէջ: Երբ քահանաներն ու Փարիսեցիները լսեցին որ Յիսուս Մարիամի եւ Մարթայի եղբօր՝ Ղազարոսին յարութիւն տուած է, դարձի չեկան, ընդհակառակը «որոշեցին սպաննել Յիսուսը» (Յհ 11.53): Անոնք բացայայտ եւ անուրանալի հրաշքի մը դէմ յանդիման գտնուեցան, այլ խօսքով, անոնք մեռելներու աշխարհէն բերուած անձի մը դիմաց կանգնեցան, բայց չուզեցին հաւատալ, չուզեցին ընդունիլ Յիսուսը իբրեւ Խոստացեալ Մեսիան եւ Փրկիչը, մէկ բան ուզեցին՝ սպաննել յարութիւն Տուողն ու յարուցեալը: Եթէ երբեք հրեաներ դարձի չեկան նոյնիսկ երբ Յիսուս յարութիւն առաւ մեռելներէն, արդե՞օք դարձի պիտի գային եթէ յարութիւն տրուէր Ղազարոսին եւ իրենց զրկուէր:

2.– Աբրահամ գիտէր որ մեռելներէն յարութիւն առնող մը աւելի զօրութիւն չի կրնար ունենալ քան Սուրբ Գիրքը: Ս. Յովհաննէս Ոսկեբերան կ'ըսէ. «Ոեւէ մարդ որ յարութիւն կ'առնէ չի դադրիր ծառայ ըլլալէ, բայց այն ինչ որ Սուրբ Գիրքը կ'ըսէ՝ ատիկա Աստուծոյ կողմէ խօսուած կը սեպուի: Ուստի, թող մեռել մը յարութիւն առնէ, թող հրեշտակ մը երկինքէն իջնէ, Սուրբ Գիրքը սակայն անոնցմէ աւելի՛ մշմարիտ կը մնայ, որովհետեւ հրեշտակներուն Տէրը եւ կենդանիներուն ու մեռելներուն Տէրը, իր պատգամը յստակ դարձուցած է Սուրբ Գիրքին մէջ: Եթէ Աստուած գիտնար որ մեռելներէն յարութիւն առնող մը օգտակար պիտի դառնար ապրողներուն, վստահաբար թոյլ պիտի տար որ ատիկա ըլլար, եւ ոեւէ բան պիտի չխնայէր մարդոց փրկութիւնը իրագործելու համար»:

3.– Աբրահամին եւ մեծահարուստին միջեւ կրկնուող երկխօսութիւնը կը բացայայտէ հարուստ մարդուն ամուր կապուածութիւնը իր

եղբայրներուն: Եթէ դժոխք գացած մէկը այսֆան գօրեղ կերպով կը ցանկայ իր սիրելիները չտեսնել դժոխքին մէջ, որքա՛ն աւելի դրախտ գացած անձ մը, պիտի ուզէր իր մօտ, իր բով, իր կողքին տեսնել իր սիրելիները, իր բարեկամները, իր հարազատները:

Դժոխք նետուած անձ մը կը տեսնէ թէ ի՛նչպիսի կեանք մը կ'ապրին իր հարազատները. իր տառապանքը աւելի՛ կը սաստկանայ եթէ զանոնք տեսնէ անզոյք եւ Աստուծմէ հեռու վիճակի մէջ: Իսկ դրախտ գացողները, միշդ հակառակը, կ'ուրախանան երբ կը տեսնեն իրենց հարազատները Աստուծոյ ցամբուն մէջ կը յարատեւեն, բայց բնականօրէն անոնք եւս կը տրտմին երբ զանոնք կը տեսնեն անապաշխար վիճակի մէջ, եւ կը բարեխօսեն անոնց համար:

4.- Կարելոյ եւ հետաքրքրական հոգեւոր դաս մը կարելի է սորվիլ կամ քաղել հարուստին վերաբերմունքէն, որ հետեւեալն է.- Եթէ դժոխքի դատապարտուած հարուստին հոգին կ'այրէր ու կը տանջուէր իր եւ իր եղբայրներուն մեղքերուն համար, եթէ կը տառապէր զանոնք կորուստի ցամբուն մէջ տեսնելուն համար, որքա՛ն աւելի մեծ՝ Աստուծոյ զաւակներս, փրկութեան ցամբուն մէջ եղողներս, պէտք է տառապինք եւ աշխատինք մարդոց փրկութեան համար, մարդիկը Քրիստոսի բերելու համար:

5.- Երբեմն մարդիկ փրկութեան տարբեր-տարբեր միջոցներ կը փնտոեն եւ «կը ստեղծեն» ինչպէս ըրաւ հարուստ մարդը, փոխանակ ընդգրկելու այն միջոցները կամ այն միջոցը՝ որ Աստուած արդէն մշտած է: Աբրահամ հարուստին ուզեց հասկցնել որ Աստուածաշունչին հաւատալը եւ անոր մէջ գրուածին հնազանդիլը մեզ վստահաբար կ'առաջնորդէ փրկութեան: Հարուստը սակայն փրկութեան տարբեր կերպ մը կ'առաջարկէ Աբրահամին՝ մեռելներէն մէկը դրկել իր եղբայրներուն:

Ըստ երեւոյթին Աստուածաշունչը սովորական գիրքերու շարքին այլ գիրք մը դարձած էր իր հինգ եղբայրներուն համար, պարպուած իր իմաստէն ու արժէքէն, իր փրկարար եւ սրբարար գօրութենէն, ահա թէ ինչու հարուստը տարբեր ձեւի մը մասին կը մտածէր: Զգո՛յշ ըլլանք սիրելիներ, որ Աստուածաշունչը մեզի համար չդառնայ սովորական գիրք մը: Գիրք մը՝ ամէն գիրքերու պէս: Աստուածաշունչը մէկ կողմ դրած՝ Աստուծոյ հասնելու նոր ձեւեր չփնտոենք: Մտիկ ընենք Աբրահամին ըսածը: Աբրահամ մեզի կը սորվեցնէ մեր ուշադրութիւնը կեդրոնացնել Աստուածաշունչին վրայ:

«Հինգ եղբայրները», այլ խօսքով՝ հրեաները, չհաւատացին Մովսէսի հինգ գիրքերուն մէջ Քրիստոսի մասին գրուածին: Անոնք

չհաւատացին Աստուծոյ կողմէ դրկուած մարգարէներուն եւ ականջ չտուին անոնց խօսքերուն, յորդորներուն եւ պատգամներուն, ընդհակառակը, հալածեցին Եւ նախատեցին զանոնք: Այսօր ալ քիչ չէ թիւը այն մարդոց՝ որոնք չեն հաւատար Աստուածաշունչին մէջ գրուածին ու ըսուածին: Աստուածաշունչը կը հաստատէ Սատանային գոյութիւնը, իսկ մարդիկ հակադրուելով Աստուծոյ անսխալական խօսքին՝ կը մերժեն անոր գոյութիւնը: Աստուածաշունչը կը խօսի Քրիստոսի երկրորդ գալուստին մասին, իսկ որոշ մարդիկ բնա՛ւ չեն փաշտիք ըսելու. «Երկրորդ գալուստ չկա՛յ: Դրախտն ալ հոս է, դժոխքն ալ հոս է»: Պէտք չկայ բազմացնելու օրինակները: Աբրահամի կոչը կամ խօսքը հարուստին՝ ուղղուած է բոլորիս՝ հաւատալ Աստուածաշունչին եւ հնազանդիլ հոն գրուածին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1.- Ներսէս Շնորհալի եւ Յովհաննէս Երզնկացի, «Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի», Կոստանդնուպոլիս, 1825:

2.- Ստեփանոս Սիւնեցի, «Մեկնութիւն Զորից Աւետարանչաց», Էջմիածին, 1997:

3.- Իգնատիոս Վարդապետ, «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու», Կոստանդնուպոլիս, 1824:

4.- Բարսեղ Շնորհալի Վարդապետ, «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի», Կոստանդնուպոլիս, 1826:

5.- Գրիգոր Նարեկացի, «Նարեկ», Անթիլիաս, 2005:

6.- Զարեհ Արք. Ազնաւորեան, «Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին», 1992-1993, անտիպ:

7.- Matthew Henry, «A Commentary on the Whole Bible», Vol. V. U.S.A.

8.- Աստուածաշունչը ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի, («Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին», Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն ֆաղուած բացատրութիւններ), Եգիպտոս, 1983:

9.- Աստուածաշունչը ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի, («Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին», Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն ֆաղուած բացատրութիւններ), Եգիպտոս, 1985:

10.- Աստուածաշունչը ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի, («Մեկնութիւն Մարկոսի Աւետարանին», Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն ֆաղուած բացատրութիւններ), Եգիպտոս, 1984:

պարապ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.– Անառակ որդիին առակը	9
2.– Բարի Սամարացիին առակը	86
3.– Կորսուած ոչխարին առակը	131
4.– Կորսուած դրամին առակը	149
5.– Թթխմորին օրինակը	165
6.– Փարիսեցիին եւ Մաքսաւորին առակը	176
7.– Մանանեխի հատիկին օրինակը	191
8.– Ուռկանին օրինակը	201
9.– Պահուած գանձին օրինակը	214
10.– Մարգարիտին օրինակը	224
11.– Անող սերմին առակը	231
12.– Սերմնացանին առակը	246
13.– Անպտուղ թփնիին առակը	278
14.– Անմիտ հարուստին առակը	293
15.– Երեք հացերով օգնող բարեկամին առակը	308
16.– Որումին առակը	321
17.– Աղբատ Ղազարոսին առակը	347

Հեղինակին ամբողջական գործերը

- 1.– Ճշմարիտ վերածնունդը
- 2.– Բա՛ց արտիդ դուռը, Յիսուս կը սպասէ
- 3.– Ես եմ Ճամբան, Ճշմարտութիւնը եւ Կեանքը
- 4.– Մանուկներուն Արքայութիւնը
- 5.– Ամենօրեայ անում Աստուծոյ Հոգիով եւ Խօսքով
- 6.– Աստուածաշունչին պատասխանները
ժողովուրդին հարցումներուն
- 7.– Աստուածաշունչին պատգամը
այսօրուան մարդուն
- 8.– Գիտնանք պատասխանները որոշ հարցումներու
- 9.– Ամենօրեայ հոգեւոր ուսուցում
- 10.– Մեր հոգը Աստուծոյ ձգել
- 11.– Հաւատացեալները վարդերն են արքայութեան
- 12.– Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի
առակներուն բացատրութիւնը (Ա. հատոր)